

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2012 թվական

**Հատոր IV**

ԵՐԵՎԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
CEELI inc.-ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅՈՒՆ,  
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

2013

ՀՏԴ 343 (479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ)8  
Հ 247



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**Մույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել  
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության  
ֆինանսավորմամբ**

Կազմեցին՝  
**Աննա Վարդապետյան**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական,  
իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս  
**Մուսաննա Գզոդյան**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի ավագ օգնական  
**Արթուր Սկրտչյան**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական  
**Էլեն Վարդապետյան**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական

Հ 247 ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու. 2012թ., -  
Եր.: Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI inc.-ի հայաստան-  
յան ներկայացուցչություն, ՀՀ վճռաբեկ դատարան, 2013, Հատոր 4. - 616 էջ:

ՀՏԴ 343 (479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ)8

ISBN 978-99941-2-830-3

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	V
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում .....	VII
Աղբյուրների ցանկ թիվ 1. ՀՀ Սահմանադրության դրույթներ .....	XVIII
Աղբյուրների ցանկ թիվ 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ .....	XVIII
Աղբյուրների ցանկ թիվ 3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ .....	XX
Աղբյուրների ցանկ թիվ 4. ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր .....	XXI
1. Շ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0014/01/11 .....	1
2. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0121/01/11 .....	16
3. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0106/01/08 .....	28
4. Ս.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/12 .....	35
5. Լ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0093/11/11 .....	41
6. Կ.Ստենգաչուի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0094/01/09 .....	50
7. Ա.Բարեղամյանի վերաբերյալ որոշում, Ե-ԶՐԳ/0205/01/08 .....	58
8. Ա.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0118/01/11 .....	64
9. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0088/01/11 .....	71
10. Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/11 .....	82
11. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0326/01/09 .....	96
12. Ա.Առուստամյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0145/01/11 .....	110
13. Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0113/06/11 .....	121
14. «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/1133/07/11 .....	126
15. Գ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0043/01/11 .....	132
16. Գ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0040/01/11 .....	147
17. Զ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0102/01/11 .....	157
18. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0666/10/11 .....	170
19. Ա.Խուրշուդյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0065/01/11 .....	182
20. Կ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0184/06/11 .....	190
21. Ս.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0157/11/11 .....	196
22. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0025/01/11 .....	202
23. Վ.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0037/01/11 .....	212

24. Վ.Բարդղասարյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0002/01/11.....	226
25. Կ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0070/01/11 .....	238
26. Թ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0203/01/11 .....	248
27. Ա.Արամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0287/01/11.....	257
28. Ա.Մաղաքյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0171/01/11.....	266
29. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0024/06/11.....	274
30. Ս.Սուլյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0026/12/12 .....	284
31. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0022/11/12.....	290
32. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0001/11/12.....	308
33. Է.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0201/01/11 .....	318
34. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0002/01/11 .....	328
35. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 .....	349
36. Հ.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0067/01/12.....	367
37. Ա.Սեկոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0185/11/11.....	376
38. Հ.Մակարյանի վերաբերյալ որոշում, ՍԳ3/0019/01/11 .....	385
39. Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0176/01/11 .....	400
40. Ս.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0109/01/12 .....	416
41. Ա.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0034/01/12 .....	440
42. Ժ.Պարոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0185/06/12.....	448
43. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0110/01/11 .....	455
44. Դ.Ղասաբողյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0158/01/11 .....	462
45. Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0004/11/12.....	468
46. Ս.Թադևոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ3/0006/01/12.....	479
47. Վ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0078/06/12.....	485
48. Ա.Խոջայանի և Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0219/01/11 .....	494
49. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0093/01/12 .....	506
50. Տ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0066/11/12.....	516
51. Ն.Մուսայելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ1/0007/06/12.....	528
52. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/15/12.....	534
53. Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0174/01/11 .....	542
54. Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0063/13/12.....	559
55. Գ.Ճոլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0112/11/12 .....	568
56. Դ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0138/06/12.....	573
57. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0030/01/12 .....	580



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2012 ԹՎԱԿԱՆ

### ՆԱԽԱԲԱՆ

Քրեական գործերով արդարադատություն իրականացնող բարձրագույն դատական ատյանը՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2012 թվականի ընթացքում կայացրել է նախադեպային նշանակություն ունեցող մի շարք որոշումներ, որոնք առնչվում են քրեական արդարադատության տարբեր ոլորտներին և հիմնարար նշանակություն են ունեցել քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար: Նշված որոշումների կայացմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ուղղորդել է դատական պրակտիկան՝ ձգտելով ոչ միայն պաշտպանել կոնկրետ անձի իրավունքները և պատասխանել քրեական գործով ներկայացված բողոքում բարձրացված կոնկրետ հարցին, այլև հիմք դնել մեր երկրում քրեական գործերով կանխատեսելի արդարադատության ձևավորմանը:

Կանխատեսելի, հետևաբար նաև վստահելի արդարադատություն ձևավորելու փուլերից առաջինը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացումն է, որին հաջորդում է երկրորդ, ոչ պակաս կարևորություն ունեցող փուլը՝ կայացված նախադեպային որոշումների կիրառությանն ապահովումը:

Մույն ժողովածուն ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների չորրորդ հատորն է և ընդգրկում է 2012 թվականին կայացված 57 որոշում, որոնք վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Նյութական իրավունքի նորմերի հետ կապված հատկանշական է խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի վերաբերյալ որոշումը, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է վերոնշյալ քրեաիրավական դրույթը և ձևավորել իրավական դիրքորոշումներ՝ հաշվի առնելով օրենքի բուն իմաստը, ինչպես նաև միջազգային փորձը: Նշված որոշման կայացումից հետո նկատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով դատապարտված անձանց թվի կտրուկ նվազում: Մասնավորապես, 2012 թվականին խուլիգանության համար դատապարտված անձանց թիվը նվազել է 40,4 տոկոսով՝ 502-ից հասնելով 299-ի:

Նյութական իրավունքի նորմերի վերաբերյալ որոշումների թվում են նաև ստորադատության հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու, ծեծի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս

պատճառելու համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմների, ինչպես նաև սպանության փորձն առողջությամբ դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուց տարանջատելու վերաբերյալ նախադեպային որոշումները: Նշված որոշումների կայացումը ևս պայմանավորված է եղել նշված հանցակազմերին ոչ ճիշտ, իսկ երբեմն նաև տարածական մեկնաբանություն տալու պրակտիկայի առկայությամբ:

Դատավարական իրավունքի նորմերի հետ կապված հատկանշական է Գևորգ Ճաղարյանի և այլոց գործով որոշումը, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, որ դատարան ուղարկվող մեղադրական եզրակացության մեջ երբեմն հստակեցված չեն լինում հանցակիցներից յուրաքանչյուրի գործողությունները, և հետևաբար անհատականացված չի լինում նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունը: Արդյունքում, խախտվում է հանցակիցների՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքը:

Դատավարական իրավունքի նորմերի վերաբերյալ որոշումների թվում են նաև մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքից հրաժարվելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված՝ մրցակցության սկզբունքի վերաբերյալ որոշումները, որոնցով քրեական պալատը փոփոխել է պրակտիկայում ձևավորված, սակայն քրեական դատավարության օրենսգրքից չբխող մոտեցումները:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին, դրանում ինչպես և նախորդ հատորներում սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, ՄԻԵԳ-ի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որի վրա մույնությամբ ձայնագրված են գրքում ներառված դատական ակտերը, ինչը ևս հնարավորություն է տալիս հեշտացնել ժողովածուից օգտվողների աշխատանքը:

Ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առաջին և երկրորդ ժողովածուները, այնպես էլ սույն հատորը հնարավոր է դարձել հրատարակել Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.–ի հայաստանյան ներկայացուցչության հետ մեր երկարատև և արդյունավետ գործակցության շնորհիվ:

## **Դ.Ձ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*ՀՀ վճռաբեկ դատարանի  
քրեական պալատի նախագահ,  
իրավագիտության թեկնածու, դոցենտ,  
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ**  
**ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

**Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

**Ն<sup>1</sup>-I. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ անձնական պատասխանատվության սկզբունքը, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը (ՀՀ քրեական օրենսգրքի 8-9-րդ հոդվածներ)**

Ն-I-1. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0002/01/11 (34<sup>2</sup>, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Գ-XVII-1, Գ-XVIII-1, Գ-XXIII-1)..... 328

**Ն-II. Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10, 48, 61-62-րդ հոդվածներ)**

Ն-II-1. Ա.Արամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0287/01/11 (27)..... 257  
Ն-II-2. Է.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0201/01/11 (33, նույն որոշումը, տե՛ս նաև Ն-V-1, Ն-XII-1, Ն-XXI-1)..... 318  
Ն-II-3. Ս.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0109/01/12 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XII-2)..... 416

**Ն-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)**

Ն-III-1. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0030/01/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-X-1, Գ-XXXI-1, Գ-XXXII-1)..... 580

**Ն-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների համակցությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված)**

Ն-IV-1. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0030/01/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-X-1, Գ-XXXI-1, Գ-XXXII-1)..... 580

**Ն-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքն անգզությունյանը կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդված)**

Ն-V-1. Է.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0201/01/11 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-XII-1, Ն-XXI-1)..... 318

---

<sup>1</sup> Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Ն» տառով:  
<sup>2</sup> Սույն ժողովածուում ընդգրկված որոշման հերթական համարը:

**Ն-VI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավորձը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)**

Ն-VI-1. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0025/01/11 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1)..... 170

Ն-VI-2. Կ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0070/01/11 (25)..... 238

**Ն-VII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակիցների պատասխանատվությունը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդված)**

Ն-VII-1. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0002/01/11 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Գ-XVII-1, Գ-XVIII-1, Գ-XXIII-1)..... 328

**Ն-VIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակցի սահմանազանցումը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդված)**

Ն-VIII-1. Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0174/01/11 (53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-1) ..... 542

**Ն-IX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)**

Ն-IX-1. Ս.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-0109/01/12 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-XII-2) ..... 416

**Ն-X. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)**

Ն-X-1. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0030/01/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Գ-XXXI-1, Գ-XXXII-1)..... 580

**Ն-XI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդված)**

Ն-XI-1. Ա.Թադևոսյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-3/0006/01/12 (46) ..... 479

**Ն-XII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)**

Ն-XII-1. Է.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0201/01/11 (33, նույն որոշումը, տե՛ս նաև Ն-II-2, Ն-V-1, Ն-XXI-1) ..... 318

Ն-XII-2. Ս.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-0109/01/12 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-IX-1)..... 416

Ն-XII-3. Ս.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ-0034/01/12 (41, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-2)..... 440

Ն-XII-4. Ա.Ակրտչյանի վերաբերյալ որոշում, ԼԳ-0093/01/12 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-VIII-2)..... 506



**Ն- XIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված)**

Ն- XIII-1. Ս.Սուլյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0026/12/12 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XIV-4) ..... 284

**Ն- XIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)**

Ն- XIV-1. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0088/01/11 (9, նույն որոշումը տե՛ս նաև Գ- I-4) ..... 16

Ն- XIV-2. Գ.Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0040/01/11 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XXIII-1)..... 147

Ն- XIV-3. Թ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0203/01/11 (26, նույն որոշումը տե՛ս նաև Գ- X-2) ..... 248

Ն- XIV-4. Ս.Սուլյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0026/12/12 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն- XIII-1) ..... 284

Ն- XIV-5. Հ.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/12 (36)..... 367

Ն- XIV-6. Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/13/12 (54) ..... 559

**Ն- XV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելի անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդված)**

Ն- XV-1. Ա.Թորոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0118/01/11 (8) ..... 64

**Ն- XVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծեծը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված)**

Ն- XVI-1. Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0176/01/11(39)..... 400

**Ն- XVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված)**

Ն- XVII-1. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0025/01/11 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն- VI-1) ..... 202

**Ն- XVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)**

Ն- XVIII-1. Վ.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0037/01/11 (23) ..... 212

**Ն- XIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ կեղծ ձեռնարկատիրությունը**

**(ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդված)**

Ն- XIX-1. Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0174/01/11 (53, նույն որոշումը տե՛ս նաև Ն- VIII-1) ..... 542

<b>Ն-XX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վաշխառությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդված)</b>	
Ն-XX-1. Զ. Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0102/01/11 (17) .....	157
<b>Ն-XXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)</b>	
Ն-XXI-1. Է. Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0201/01/11 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-V-1, Ն-XII-1).....	318
<b>Ն-XXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիզանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված)</b>	
Ն-XXII-1. Շ. Հախվերյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0014/01/11 (1).....	1
<b>Ն-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդված)</b>	
Ն-XXIII-1. Գ. Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0040/01/11 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-2) .....	147
<b>Ն-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերու- թյունների բացակայության դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդված)</b>	
Ն-XXIV-1. Ս. Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0204/01/11 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIX-1) .....	82
<b>Ն-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդված)</b>	
Ն-XXV-1. Դ. Բարսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0043/01/11 (15, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-1, Դ-X-1).....	132
<b>Ն-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդված)</b>	
Ն-XXVI-1. Ա. Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0093/01/12 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-4, Դ-VIII-2).....	506

## **Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

### **Դ-I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարական օրենքի ներգործությունը ժամանակի մեջ**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդված)**

Դ-I-1. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0106/01/08 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIV-1).....	28
Դ-I-2. Ս.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/12 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIV-2).....	35
Դ-I-3. Ա.Բարեղամյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԴ/0205/01/08 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIV-3).....	58
Դ-I-4. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0088/01/11 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1).....	16

### **Դ-II. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերջնական որոշումը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետ)**

Դ-II-1. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0022/11/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXXVII-4).....	290
---	-----

### **Դ-III. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10<sup>1</sup>-րդ կետ)**

Դ-III-1. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0022/11/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-XXXVII-4).....	290
---	-----

### **Դ-IV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամանակավոր կալանավորումը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38<sup>1</sup>-րդ կետ)**

Դ-IV-1. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0024/06/11 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1).....	274
Դ-IV-2. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0001/11/12 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2).....	308

### **Դ-V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանձնելու համար կալանավորումը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38<sup>2</sup>-րդ կետ)**

Դ-V-1. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0024/06/11 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1).....	274
Դ-V-2. Ա.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0001/11/12 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2).....	308

### **Դ-VI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)**

Դ-VI-1. Լ.Բարայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0093/11/11 (5, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1).....	41
---	----

**Գ-VII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)**

Գ-VII-1. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 (35,  
նույն որոշումը տե՛ս նաև Գ-IX-1, Գ-XIII-1, Գ-XXXV-1, Գ-XXXVI-1) ..... 349  
Գ-VII-2. Ա.Ամիրխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԳԳ/0034/01/12 (41,  
նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-3)..... 440

**Գ-VIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անզամ դատվելու անթույլատրելիությունը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)**

Գ-VIII-1. Դ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0043/01/11 (15,  
նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-X-1)..... 132  
Գ-VIII-2. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0093/01/12 (49,  
նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-4, Ն-XXV-1) ..... 506

**Գ-IX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական դատավարության  
ընթացքում**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)**

Գ-IX-1. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 (35,  
նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-XIII-1, Գ-XXXV-1, Գ-XXXVI-1)..... 349

**Գ-X. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական  
հետապնդումը բացառող հանգամանքները**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)**

Գ-X-1. Դ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0043/01/11 (15,  
նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-VIII-1)..... 132  
Գ-X-2. Թ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0203/01/11 (26,  
նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-3) ..... 248  
Գ-X-3. Դ.Ղասաբողյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0158/01/11 (44) ..... 462

**Գ-XI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական պատասխանողը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդված)**

Գ-XI-1. 11. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0326/01/09 (11,  
նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-1)..... 96

**Գ-XII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարությանը մասնակցող անձանց  
իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց  
իրականացման հնարավորության ապահովումը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված)**

Գ-XII-1. Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի վերաբերյալ որոշում,  
ԵԱԳԳ/0004/11/12 (45)..... 468

**Գ-XIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերը**

**(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)**

Գ-XIII-1. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 (35,  
նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-IX-1, Գ-XXXV-1, Գ-XXXVI-1) ..... 349

<b>Գ-XXIV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)</b>	
Գ-XXIV-1. Վ.Բարսեղյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0078/06/12 (47) .....	485
Գ-XXIV-2. Դ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0138/06/12 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-1) .....	573
<b>Գ-XXV. Սեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)</b>	
Գ-XXV-1. Դ.Ալիխանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0138/06/12 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-2) .....	573
<b>Գ-XXVI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)</b>	
Գ-XXVI-1. Լ.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0093/11/11 (5, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-1) .....	41
Գ-XXVI-2. Ս.Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0157/11/11 (21) .....	196
<b>Գ-XXVII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդված)</b>	
Գ-XXVII-1. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0002/01/11 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-VII-1, Գ-XXVIII-1, Գ-XXIII-1) .....	328
<b>Գ-XXVIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրանք առաջադրելու կարգը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդված)</b>	
Գ-XXVIII-1. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0002/01/11 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-VII-1, Գ-XXVII-1, Գ-XXIII-1) .....	328
<b>Գ-XXIX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ առգրավում և խուզարկություն կատարելու կարգը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդված)</b>	
Գ-XXIX-1. «Սեզո Գոլդ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/1133/07/11 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVII-2) .....	126
<b>Գ-XX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդված)</b>	
Գ-XX-1. Ա.Սեկոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0185/11/11 (37, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXI-1) .....	376
<b>Գ-XXI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելու հիմքերը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդված)</b>	
Գ-XXI-1. Ա.Սեկոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0185/11/11 (37, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-1) .....	376
<b>Գ-XXII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը և հեռախոսային խոսակցությունները լսելը</b>	

<b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ և 241-րդ հոդվածներ)</b>	
Գ-XXII-1. Վ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0666/10/11 (18) .....	170
<b>Գ-XXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդված)</b>	
Գ-XXIII-1. Գ.Ճաղարյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0002/01/11 (34, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-VII-1, Գ-XVII-1, Գ-XXVIII-1).....	328
<b>Գ-XXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)</b>	
Գ-XXIV-1. Վ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, Գ-Գ4/0002/01/11 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIX-1, Գ-XXXVI-1).....	226
<b>Գ-XXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդված)</b>	
Գ-XXV-1. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-IX-1, Գ-XIII-1, Գ-XXVI-1).....	349
<b>Գ-XXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի որոշմամբ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդված)</b>	
Գ-XXVI-1. Մ.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0081/01/11 (35, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-1, Գ-IX-1, Գ-XIII-1, Գ-XXV-1) .....	349
<b>Գ-XXVII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդված)</b>	
Գ-XXVII-1. Ժ.Պարոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0185/06/12 (42).....	448
<b>Գ-XXVIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինակակառուցության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)</b>	
Գ-XXVIII-1. Ն.Մուսայելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0007/06/12 (51, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XL-1).....	528
<b>Գ-XXIX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետաքննության մարմնի աշխատակիցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիննե- րի անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)</b>	
Գ-XXIX-1. Վ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, Գ-Գ4/0002/01/11 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-1, Գ-XXXVI-1).....	226

<b>Դ-XXX. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի մասնակցությունը դատական քննությանը և նրա չներկայանալու հետևանքները</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդված)</b>	
Դ-XXX-1. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0121/01/11 (2, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLI-1).....	71
Դ-XXX-2. Ա.Մաղաբյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0171/01/11 (28).....	266
<b>Դ-XXXI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)</b>	
Դ-XXXI-1. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0030/01/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Ն-X-1, Դ-XXXII-1).....	580
<b>Դ-XXXII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XXXII-1. Ս.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0030/01/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-1, Ն-X-1, Դ-XXXI-1).....	580
<b>Դ-XXXIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցը լուծելը դատավճիռ կայացնելիս</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդված)</b>	
Դ-XXXIII-1. Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0326/01/09 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1).....	96
<b>Դ-XXXIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգի կիրառման հիմքերը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XXXIV-1. Ա.Առուստամյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0145/01/11 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXV-1).....	110
Դ-XXXIV-2. Ա.Խոջայանի և Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0219/01/11 (48).....	494
<b>Դ-XXXV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>3</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XXXV-1. 12. Ա.Առուստամյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0145/01/11 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIV-1).....	110
<b>Դ-XXXVI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը</b> <b>(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376<sup>1</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XXXVI-1. Վ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԳԴ4/0002/01/11 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIV-1, Դ-XXIX-1).....	226

**Գ-XXXVII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)**

Գ-XXXVII-1. Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0113/06/11 (13) .....	121
Գ-XXXVII-2. «Մեզո Գուլդ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/1133/07/11 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIX-1) .....	126
Գ-XXXVII-3. Կ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0184/06/11 (20) .....	190
Գ-XXXVII-4. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0022/11/12 (31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-III-1).....	290
Գ-XXXVII-5. Տ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0066/11/12 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-1).....	516
Գ-XXXVII-6. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/15/12 (52, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-2).....	534
Գ-XXXVII-7. Գ.Ճոլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0112/11/12 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-3).....	568

**Գ-XXXVIII. Սեկնաբանվող իրավադրույթ՝ բողոքարկման ժամկետը  
վերականգնելու կարգը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդված)**

Գ-XXXVIII-1. Տ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0066/11/12 (50, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVII-5).....	516
Գ-XXXVIII-2. Ֆ.Ոսկանյանի և այլոց վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0025/15/12 (52, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVII-6).....	534
Գ-XXXVIII-3. Գ.Ճոլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0112/11/12 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVII-7).....	568

**Գ-XXXIX. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի  
քննության սահմանները  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)**

Գ-XXXIX-1. Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/11 (10, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1) .....	82
Գ-XXXIX-2. Ա.Խուրշուդյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0065/01/11 (19).....	182

**Գ-XL. Սեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդված)**

Գ-XL-1. Ն.Մուսայելյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0007/06/12 (51, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-1).....	528
---	-----

**Գ-XLI. Սեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտ կայացնելը  
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)**

Գ-XLI-1. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0121/01/11 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1) .....	71
Գ-XLI-2. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0110/01/11 (43).....	455



<b>Դ-XLII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)</b>	
Դ-XLII-1. Հ.Մակարյանի վերաբերյալ որոշում, ՍԴ-3/0019/01/11 (38).....	385
<b>Դ-XLIII. Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր հանգամանքով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XLIII-1. Կ.Ստենզաչուի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0094/01/09 (6).....	50
<b>Դ-XLIV. Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդված)</b>	
Դ-XLIV-1. Ա.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0106/01/08 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-1).....	28
Դ-XLIV-2. Ս.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ՎԼԲ-04/12 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2).....	35
Դ-XLIV-3. Ա.Բարեղայանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԴ/0205/01/08 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-3).....	58

**Աղբյուրների ցանկ թիվ 1**  
**ՀՀ Սահմանադրության դրույթներ**

1. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված (45), (50)
2. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված (19), (42), (54)
3. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված (11), (37)
4. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված (13), (20), (29), (32), (34), (56)
5. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված (13), (20),(24), (45), (50)
6. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված (50), (52), (55)
7. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդված (35), (41)
8. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդված (15)
9. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված (18), (35)
10. ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված (11), (37)
11. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդված (18)
12. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված (5)

**Աղբյուրների ցանկ թիվ 2**  
**Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ**

- 1. Էնզելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների*  
1976թ. հունիսի 8 (15)
- 2. Դևեերն ընդդեմ Բելգիայի*  
1980թ. փետրվարի 27 (34)
- 3. Այրտիկոն ընդդեմ Բուլղարիայի*  
1980թ. մայիսի 13 (34)
- 4. Էկլեն ընդդեմ Գերմանիայի*  
1982թ. հունիսի 15 (34)
- 5. Գորդլին ընդդեմ Բուլղարիայի*  
1984թ. ապրիլի 9 (34)
- 6. Կորցան ընդդեմ Բուլղարիայի*  
1985թ. փետրվարի 12 (34)
- 7. Բրոզանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*  
1988թ. նոյեմբերի 29 (20)
- 8. Բարբերան, Մեսսեզը և Յարարդոն ընդդեմ Իսպանիայի*  
1988թ. դեկտեմբերի 6 (41)
- 9. Փելիսիերն ու Սասին ընդդեմ Ֆրանսիայի*  
1999թ. ապրիլի 25 (34)
- 10. Գրասուպիսն ընդդեմ Լիտվայի*  
2000թ. հոկտեմբերի 10 (20)
- 11. Օնեյրիլոյիզն ընդդեմ Թուրքիայի*  
2004թ. նոյեմբերի 30 (11)
- 12. Գալստյանն ընդդեմ Հայաստանի*  
2007թ. նոյեմբերի 15 (15)
- 13. Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի*  
2009թ. հունվարի 22 (37)
- 14. Ջոլտտոխինն ընդդեմ Ռուսաստանի*  
2009թ. փետրվարի 9 (15)
- 15. Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի*  
2010թ. մարտի 16 (50)
- 16. Ջանդրեբզան ընդդեմ Լատվիայի*  
2011թ. դեկտեմբերի 20 (29)
- 17. Վուլպար և այլոք ընդդեմ Ռուսաստանի*  
2012թ. հունվարի 10 (35)

**Աղբյուրների ցանկ թիվ 3**  
**ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ**

1. ՍԳՈ-690, 2007 թվականի ապրիլի 9 (50), (52)
2. ՍԳՈ-818, 2009 թվականի հուլիսի 28 (4)
3. ՍԳՈ-849, 2009 թվականի դեկտեմբերի 22 (4)
4. ՍԳՈ-872, 2010 թվականի ապրիլի 2 (3)
5. ՍԳՈ-923, 2010 թվականի նոյեմբերի 9 (7)
6. ՍԳՈ-926, 2010 թվականի նոյեմբերի 23 (35)
7. ՍԳՈ-930, 2010 թվականի դեկտեմբերի 21 (31)
8. ՍԳՈ-943, 2011 թվականի փետրվարի 25 (3), (4), (7)
9. ՍԳՈ-947, 2011 թվականի ապրիլի 5 (17)
10. ՍԳՈ-983, 2011 թվականի հուլիսի 12 (6)
11. ՍԳՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16 (50), (52)

**Աղբյուրների ցանկ թիվ 4**  
**ՀՀ վճարելի դատարանի դատական ակտեր**

1. *Ա.Խաչատրյանի* վերաբերյալ գործով  
2006թ. հոկտեմբերի 24-ի որոշում (1)
2. *Ա.Հարությունյանի* վերաբերյալ գործով  
2007թ. հունիսի 1-ի որոշում (3), (4), (7), (9)
3. *Հ.Հարությունյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հունիսի 13-ի որոշում (5), (21)
4. *Ա.Հակոբյանի* վերաբերյալ գործով  
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (8)
5. *Վ.Ավետիսյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (9), (16), (36), (54)
6. *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի* վերաբերյալ գործով  
2010 թ. փետրվարի 12-ի որոշում (9)
7. *Գ.Մադաթյանի* վերաբերյալ գործով  
2009թ. փետրվարի 17-ի որոշում (10), (27)
8. *Ն.Մարգարյանի* վերաբերյալ գործով  
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (10), (27), (33), (40)
9. *Ա.Հայրապետյանի* վերաբերյալ գործով  
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (11), (37),
10. *Տ.Քամայանի* վերաբերյալ գործով  
2010թ. մարտի 26-ի որոշում (12)
11. *Շ.Անիրխանյանի և Գ.Ֆարմանյանի* վերաբերյալ գործով  
2011 թ. փետրվարի 24-ի որոշում (12), (48)
12. *Ա.Պասյանի* վերաբերյալ գործով  
2010 թ. նոյեմբերի 5-ի որոշում (15), (34), (35), (40), (57)
13. *Ա.Ստեփանյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (15)
14. *Գ.Ղազարյանի* վերաբերյալ գործով  
2012 թ. մարտի 30-ի որոշում (16), (28), (43)
15. *Լ.Ավետիսյանի* վերաբերյալ գործով  
2011թ. փետրվարի 24-ի որոշում (17), (23), (25)
16. *Մ.Էրոյանի և այլոց* վերաբերյալ գործով  
2011թ. հունիսի 13-ի որոշում (19), (26)
17. *Ս.Հունիկյանի* վերաբերյալ գործով  
2008 թ. փետրվարի 29-ի որոշում (27)

18. *Ա.Բարդղասարյանի* վերաբերյալ գործով  
2011 թ. դեկտեմբերի 22-ի որոշում (22)
19. *Ն.Միսակյանի* վերաբերյալ գործով  
2009թ. ապրիլի 10-ի որոշում (24), (31)
20. «*Նարեկ*» ՄՊԸ-ի վերաբերյալ գործով  
2008 թ. նոյեմբերի 28-ի որոշում (24)
21. *Կ.Կիրակոսյանի* վերաբերյալ գործով  
2010թ. մայիսի 4-ի որոշում (31)
22. *Ա.Սահակյանի* վերաբերյալ գործով  
2010թ. օգոստոսի 27-ի որոշում (33)
23. *Ա.Ավետիսյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հունիսի 13-ի որոշում (33), (40)
24. *Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի* վերաբերյալ գործով  
2011թ. դեկտեմբերի 22-ի որոշում (34), (35), (41)
25. *Ս.Նալբանդյանի* վերաբերյալ գործով  
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (34), (57)
26. *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* վերաբերյալ գործով  
2008թ. հունիսի 25-ի որոշում (34), (53)
27. *Հ.Սարգսյանի* վերաբերյալ գործով  
2011թ. մայիսի 11-ի որոշում (34)
28. *Վ.Խաչատրյանի* վերաբերյալ գործով  
2012թ. հունիսի 8-ի որոշում (35)
29. *Ա.Սարգսյանի* վերաբերյալ գործով  
2009թ. սեպտեմբերի 16-ի որոշում (35)
30. *Ա.Կարախանյանի* վերաբերյալ գործով  
2009թ. հունիսի 29-ի որոշում (38)
31. *Ռ.Արշարուսյանի* վերաբերյալ գործով  
2009թ. փետրվարի 17-ի որոշում (38)
32. *Ֆ.Գալստյանի* վերաբերյալ գործով  
2010թ. մարտի 26-ի որոշում (38)
33. *Ա.Գոդյանի* վերաբերյալ գործով  
2010թ. փետրվարի 12-ի որոշում (39), (45)
34. *Գ.Ճաղարյանի և այլոց* վերաբերյալ գործով  
2012թ. օգոստոսի 24-ի որոշում (39)
35. *Թ.Տեր-Գրիգորյանի* վերաբերյալ գործով  
2007թ. հոկտեմբերի 26-ի որոշում (40)

36. *Կ. Հայրապետյանի* վերաբերյալ գործով  
2009թ. հունիսի 2-ի որոշում (40)
37. *Հ. Հարությունյանի* վերաբերյալ գործով  
2007թ. մարտի 30-ի որոշում (40)
38. *Պ. Բայրամյանի* վերաբերյալ գործով  
2007թ. հունիսի 1-ի որոշում (40)
39. *Հ. Պետրոսյանի* վերաբերյալ գործով  
2009 թ. հունիսի 29-ի որոշում (40)
40. *Կ. Հարությունյանի* վերաբերյալ գործով  
2007թ. նոյեմբերի 30-ի որոշում (40)
41. *Գ. Ազատյանի* վերաբերյալ գործով  
2007թ. հոկտեմբերի 26-ի որոշում (40)
42. *Ա. Անտոնյանի* վերաբերյալ գործով  
2010թ. մարտի 26-ի որոշում (40)
43. *Գ. Մարտիրոսյանի* վերաբերյալ գործով  
2008թ. փետրվարի 1-ի որոշում (40)
44. *Ռ. Խաչատրյանի* վերաբերյալ գործով  
2010թ. մայիսի 4-ի որոշում (41)
45. *Ա. Սաղաթելյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (44)
45. *Լ. Ջարյանի* վերաբերյալ գործով  
2010թ. փետրվարի 12-ի որոշում (45)
46. *Մարատ և Կարեն Սարգսյանների* վերաբերյալ գործով  
2011թ. փետրվարի 24-ի որոշում (45)
47. *Ա. Ավետիսյանի* վերաբերյալ գործով  
2008թ. հոկտեմբերի 31-ի որոշում (47), (56)
48. *Վ. Գևորգյանի* վերաբերյալ գործով  
2011թ. փետրվարի 24-ի որոշում (47), (56)
49. *Գ. Միքայելյանի* վերաբերյալ գործով  
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (47)
50. *Է. Ասատրյանի* վերաբերյալ գործով  
2012թ. օգոստոսի 24-ի որոշում (49)
51. *Դ. Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով  
2009թ. դեկտեմբերի 18-ի որոշում (49)
52. *Դ. Բաբայանի* վերաբերյալ գործով  
2012թ. հունիսի 8-ի որոշում (49)

53. *Ա. Դավթյանի և Ս.Սկրտչյանի* վերաբերյալ գործով  
2012թ. նոյեմբերի 1-ի որոշում (50)
54. *Ֆ.Ոսկանյանի և այլոց* վերաբերյալ գործով  
2012թ. օգոստոսի 24-ի որոշում (50)
55. *Ա. Ղարիբյանի* վերաբերյալ գործով  
2011թ. հոկտեմբերի 20-ի որոշում (51)
56. *Տ. Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով  
2012թ. դեկտեմբերի 5-ի որոշում (52), (55)
57. *Ա. Ծոտրոյանի* վերաբերյալ գործով  
2007թ. օգոստոսի 30-ի որոշում (56)



1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՎԴ/0014/01/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

*նախագահությամբ՝*  
*մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝*  
*մասնակցությամբ մեղադրող՝*  
*պաշտպան՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ  
Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշման դեմ ամբաստանյալ Շահեն Նշանի Հախվերդյանի և նրա պաշտպան Գ.Վարդանյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2010 թվականի փետրվարի 16-ին Արևշատ գյուղի բնակիչ Վարդան Սպարտակի Մելքոնյանը ոստիկանության Արտաշատի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19-ի սահմաններում, Գիտակ գյուղի բնակիչ Շահեն Նշանի Հախվերդյանն իրենց տան մոտ լինգով հարվածել է իր ձեռքին և պատճառել մարմնական վնասվածք:

Նախաքննության մարմնի 2010 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ Վ.Մելքոնյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է դիմողի բողոքի բացակայության, ինչպես նաև հաշտության պատճառաբանությամբ:

ՀՀ գլխավոր դատախազի 2010 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ նախաքննության մարմնի 2010 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը վերացվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 16-ի որոշմամբ Վ.Մելքոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածներով քրեական հետապնդում չի իրականացվել բողոքի բացակայության հիմքով:

Սուսաննա Բաղդյանի և Վ.Մելքոնյանի միջև տեղի ունեցած միջադեպի դրվագով Վ.Մելքոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Շ.Հախվերդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Վ.Մելքոնյանի և Շ.Հախվերդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Վ.Մելքոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 19-ի որոշմամբ Շ.Հախվերդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2011 թվականի մարտի 25-ին Վ.Մելքոնյանի և Շ.Հախվերդյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 6-ի որոշմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա՝ Վարդան Սպարտակի Մելքոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի վարույթը կարճվել է:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 24-ի դատավճռով Շ.Հախվերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա՝ Շ.Հախվերդյանի նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով:

3. Ամբաստանյալ Շ.Հախվերդյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 24-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշման դեմ վճռարեկ բողոք են ներկայացրել ամբաստանյալ Շ.Հախվերդյանը և նրա պաշտպան Գ.Վարդանյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի հունվարի 19-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Շ.Հախվերոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2010 թվականի ամռանը Շ.Հախվերոյանի կինը՝ Ս.Բադալյանը, գյուղում տարածել է, թե իբր Վ.Մելքոնյանի կնոջ՝ Ս.Մելքոնյանի և իր ամուսնու՝ Շ.Հախվերոյանի միջև սիրային կապ կա: 2010 թվականի օգոստոսի 15-ին Վ.Մելքոնյանն այդ մասին հայտնել է Շ.Հախվերոյանին ու խնդրել կարգի հրավիրել կնոջը: Վերջինս հերքել է այդ հանգամանքն ու խոստացել այդ հարցի շուրջ կնոջ հետ խոսել:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 16-ին, Շ.Հախվերոյանը սգո արարողության ընթացքում մի քանի բաժակ օղի խմելուց հետո, որդու՝ Ն.Հախվերոյանի հետ միասին գնացել են նույն գյուղում բնակվող իրենց ազգական Գ.Գասպարյանի տուն, և ժամը 19-ի սահմաններում վերջինս որդու միջոցով Վ.Մելքոնյանին հրավիրել է դուրս՝ նախորդ օրվա հարցի շուրջ գրուցելու: Վ.Մելքոնյանը Շ.Հախվերոյանից նրա ու իր կնոջ սիրային հարաբերությունների մասին պարզաբանում ստանալու նպատակով Շ.Հախվերոյանին հայտնել է, որ նրա կինն իրեն լուսանկար է ցույց տվել, որտեղ Շ.Հախվերոյանն ու իր կինը մտած են կողք-կողքի: Շ.Հախվերոյանը կրկին պնդել է, որ իր ու Վ.Մելքոնյանի կնոջ միջև սիրային որևէ կապ չկա, այդ խոսակցությունները զրպարտանք են Վ.Մելքոնյանի կնոջ հասցեին: Շ.Հախվերոյանի հետ ունեցած այս խոսակցությունը վերածվել է վեճի, որի ընթացքում Վ.Մելքոնյանը նախապես իր հետ տանից վերցրած դանակով փորձել է հարվածել Շ.Հախվերոյանին, վերջինիս հաջողվել է ձախ ձեռքով բռնել դանակի շեղբը, սակայն Վ.Մելքոնյանի կողմից դանակը հետ քաշելու պահին Շ.Հախվերոյանի ձախ ափը վնասվել է, ինչից հետո Վ.Մելքոնյանը դանակը թաքցրել է: Այնուհետև Շ.Հախվերոյանն ու Վ.Մելքոնյանը, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով հասարակության նկատմամբ, փողոց դուրս եկած քաղաքացիների ներկայությամբ շուրջ 5-10 լուպե տևողությամբ հայհոյանքներ են տվել միմյանց հասցեին, ինչը գուցորովել է բռնության գործադրմամբ, մասնավորապես, Շ.Հախվերոյանն ու Վ.Մելքոնյանը ձեռքերով հարվածել են միմյանց, իսկ Շ.Հախվերոյանը բռնության սպառնալիքով, որը գուցորովել է որպես զենք օգտագործվող առարկայի՝ իր ավտոմեքենայի սրահից վերցված մետաղյա լինգի գործադրմամբ, հարվածել է Վ.Մելքոնյանի ձախ ձեռքին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջեր 184-185):

6. Նախաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2010 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) Նկատի ունենալով, որ Շահեն Հախվերոյանը և Վարդան Մելքոնյանն արարքը կատարել են ոչ խուլիգանական մղումներից ելնելով, կռվի առիթը հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքը չէ, նրանց վարքը մարտահրավեր չէ՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված չէ շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ

արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ, Շ.Հախվերդյանի և Վ.Մելքոնյանի արարքը պետք է որակել որպես անձի դեմ ուղղված արարք:

Այսպիսով՝ նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ Վարդան Մելքոնյանը ձեռքով հարվածներ է հասցրել Մուսաննա Բաղայանին, որոնք առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ չեն պարունակում, այսինքն՝ կատարել է ՀՀ քր.օր.-ի 118 հոդվածով նախատեսված հանցագործություն, դանակով դիտավորությամբ հարվածել է Շ.Հախվերդյանի ձախ ձեռքին և առողջությունը կարճատև քայքայող թեթև մարմնական վնասվածք է պատճառել, այսինքն՝ կատարել է ՀՀ քր.օր.-ի 117 հոդվածով նախատեսված հանցագործություն, Շահեն Հախվերդյանը մետաղյա լինգով դիտավորությամբ հարվածել է Վ.Մելքոնյանի ձախ թևին և առողջությանը կարճատև քայքայող թեթև մարմնական վնասվածք է պատճառել, այսինքն՝ կատարել է ՀՀ քր.օր.-ի 117 հոդվածով նախատեսված հանցագործություն, (...)» (տես քրեական գործ, հատոր 1-ին, էջ 65):

7. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2010 թվականի նոյեմբերի 17-ի որոշման համաձայն՝ «(...), նյութերի նախապատրաստման ընթացքում Շ.Հախվերդյանը չի ժխտել Վ.Մելքոնյանի հետ վիճաբանելու հանգամանքը և բացատրություն է տվել այն մասին, որ 16.02.2010թ. վիճաբանության ընթացքում Վ.Մելքոնյանը փորձել է դանակով հարվածել իրեն, ինքը դանակի շեղբը ձեռքով բռնելու միջոցով կասեցրել է հարվածը, ինչի հետևանքով վնասվել է ձեռքի ափը:

Շահեն Հախվերդյանի տղան՝ Նշան Հախվերդյանը, բացատրությամբ նշել է, որ իր հոր և Վ.Մելքոնյանի միջև տան առջև ծագած նախնական վիճաբանությունից հետո վերջինս մտել է տուն և վերադարձել՝ ձեռքին ունենալով դանակ ու փայտ և հարձակվել է հոր վրա: Փորձել է դանակով հարվածել հորը, սակայն հայրը կարողացել է բռնել դանակի շեղբից և կասեցնել հարվածը, ինչից հոր ձեռքի ափը կտրվել է:

Վ.Մելքոնյանի կողմից դանակի գործադրման հանգամանքը հաստատվել է նաև այլ ակնաստեսների կողմից, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ, համաձայն որի Շ.Հախվերդյանի ձախ ձեռքի ափի և 3-րդ մատի կտրած վնասվածքները հասցվել են սուր գործիքով՝ դանակով:

Վ.Մելքոնյանը ժխտել է վեճի ընթացքում դանակ գործադրելու հանգամանքը և բացատրություն է տվել այն մասին, որ վեճի ընթացքում ինքը քաշելու միջոցով փորձել է խլել Շ.Հախվերդյանի ձեռքում եղած լինգը, ինչի հետևանքով նրա ձեռքի ափը կտրվել է:

Շ.Հախվերդյանը լրացուցիչ բացատրությամբ պնդել է Վ.Մելքոնյանի կողմից դանակ գործադրելու հանգամանքը և նշել է, որ իր ձեռքին եղած լինգը չէր կարող վնասել իր ձեռքը, քանի որ այն գլանաձև է եղել:

Նման պայմաններում նախաքննական մարմինը միջոցներ չի ձեռնարկել պարզելու համար Վ.Մելքոնյանի դիտավորությունը:

Բացի այդ, որոշման մեջ, անդրադառնալով Վ.Մելքոնյանի և Շ.Հախվերդյանի արարքներում խուլիգանության հանցակազմի առկայությանը, նշվել է, որ վերջիններիս եղած վիճաբանության պատճառ է հանդիսացել Շ.Հախվերդյանի կնոջ կողմից Վ.Մելքոնյանի կնոջ բարոյականության վերաբերյալ տարածած լուրերը, և նրանց գործողություններն ուղղված չեն եղել հասարակական կարգի խանգարմանը:

Մինչդեռ նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Շ.Հախվերդյանը և Վ.Մելքոնյանը վերջինիս տան բակում հարևանների ներկայությամբ շուրջ 10 րոպե կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը՝ վիճաբանել են, միմյանց հասցեին տվել սեռական բնույթի հայհոյանքներ:

Այսպես՝ Շ.Հախվերդյանի որդին՝ Նշան Հախվերդյանը իր բացատրությունում նշել է, որ դեպքը տեղի է ունեցել փողոցում, Վարդանն իր հոր հասցեին տվել է հայհոյանքներ, դեպքին ներկա են եղել բազմաթիվ բնակիչներ:

Վ.Մելքոնյանի կինը՝ Սուսան Մելքոնյանը իր բացատրությունում նշել է, որ դեպքը տեղի է ունեցել իրենց տան դիմացի փողոցում, տևել է 10 րոպե, որի ընթացքում Շահենը և իր ամուսինը հարվածել են միմյանց և իրար հասցեի տվել են հայհոյանքներ: Դեպքին ներկա են եղել Միլվան և Գրիգորը: Նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև Գ.Գասպարյանը, Ա.Հակոբյանը: (...» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջեր 1-2):

8. Նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2011 թվականի մարտի 16-ի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Այսպիսով, քրեական գործով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Վարդան Մելքոնյանը Շահեն Հախվերդյանին դանակով հարվածել է միմյնև նրանց կողմից խուլիգանություն կատարելը, հետևաբար Վարդան Մելքոնյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշները և նրա նկատմամբ նշված հոդվածով չի կարող քրեական հետապնդում իրականացվել, քանի որ ՀՀ Քր. օր. 258 հոդվածի 4-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված արարքները գեներ կամ որպես գեներ օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելու դեպքում, հետևաբար Վարդան Մելքոնյանի կողմից դանակով Շահեն Հախվերդյանի առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս պատճառելու դրվագում Վարդան Մելքոնյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 117 հոդվածով նախատեսված հանցակազմ: Այդ կապակցությամբ Շահեն Հախվերդյանը հայտնել է, որ Վարդան Մելքոնյանի դեմ բողոք չունի:

Ինչ վերաբերում է Շահեն Հախվերդյանի կողմից Վարդան Մելքոնյանին սպանելու սպառնալիք տալուն, ապա քրեական գործով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ Շ.Հախվերդյանը Վ.Մելքոնյանին վախեցնելու, սարսափեցնելու, նրա հոգեկանի վրա ազդելու, նրա մոտ տագնապ առաջացնելու կամ անվտանգության համար անհանգստության զգացում առաջացնելու նպատակ չի ունեցել, Վ.Մելքոնյանն իրական չի ընկալել Շ.Հախվերդյանի տված սպառնալիքները, այլ հասկացել է, որ սպառնալիքները տրվում են կոնֆլիկտի ընթացքում զայրույթի պահին, բացի այդ, Շահեն Հախվերդյանը ունենալով սպառնալիքները կատարելու ռեալ հնարավորություն, որևէ գործողություն չի կատարել՝ ուղղված այդ սպառնալիքների իրականացմանը, հետևաբար Շահեն Հախվերդյանի նկատմամբ ՀՀ քր. օր. 137 հոդվածով չի կարող քրեական հետապնդում իրականացվել՝ նրա արարքում նշված հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 177):

#### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 25-րդ, 183-րդ հոդվածի 1-ին մասի, 395-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջները, ինչի արդյունքում կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, և չի կիրառել կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը:

Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ սույն գործով խանդի հողի վրա առաջացած անբարեհաճ փոխհարաբերության արդյունքում Շ.Հախվերդյանի և Վ.Մեղրոնյանի միջև տեղի է ունեցել կենցաղային վեճ, որը կրել է անձնական բնույթ, Շ.Հախվերդյանի արարքի հետևանքով հասարակական կարգի կոպիտ խախտում տեղի չի ունեցել: Ավելին, Շ.Հախվերդյանի դիտավորությունն ուղղված չի եղել հասարակական կարգի խախտմանը, հետևաբար, նրա արարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն՝ դրանում խուլիգանության հանցակազմի բացակայության պատճառով:

10. Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի, 395-րդ հոդվածի 4-րդ կետի և 399-րդ հոդվածի պահանջները, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ, 70-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերները նշել են, որ Շ.Հախվերդյանն անառողջ է, տառապում է մի շարք ծանր հիվանդություններով, ներկայումս կարիք ունի ստացիոնար բուժման, հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, նրա խնամքի տակ են անաշխատունակ, հիվանդ կիներ ու հաշմանդամ որդիներ, բացի այդ, Շ.Հախվերդյանը մասնակցել է Արցախյան պատերազմի մարտական գործողություններին:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Շ.Հախվերդյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանակաճանդան չկիրառել, կամ գործի վարույթը կարճել, կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմի ճիշտ մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քրեաիրավական վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը՝ նպատակ ունենալով ապահովել դրա միատեսակ կիրառությունը:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Շ.Հախվերդյանի արարքում առկա են խուլիգանության հատկանիշներ և հետևաբար, նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ որպես ծանրացնող հանցամանքներում կատարված խուլիգանություն:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խուլիգանությունը դիտարկությանը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտել[ն է], որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (...):

2. Նույն արարքը, որը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով (...):

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

2) գուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,

(...)

4) գուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

5) գուգորդվել է բացառիկ ջինիզմով՝

(...):

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է գեների կամ որպես գեներ օգտագործվող առարկաների գործադրմամբ (...):»:

Մեջբերված հոդվածի վերլուծությունից երևում է, որ խուլիգանությունը հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է, որի հիմնական, անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտն անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

15. Խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ, իսկ որակյալ հանցակազմը՝ երկու օբյեկտ: Մասնավորապես, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա է որակման որպես հասարակ խուլիգանություն, մինչդեռ նույն արարքը, որը գուգորդվում է անձի առողջությանը, գույքային իրավունքներին և այլին վնաս պատճառելով, ենթակա է որակման խուլիգանության որակյալ հանցակազմով:

Խուլիգանության հիմնական հանցակազմի վերոշարադրյալ վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանցակազմի օբյեկտի մեկնաբանման համար էական նշանակություն ունի «հասարակական կարգ» հասկացության պարզաբանումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հասարակական կարգն ընկալվում է երկու իմաստով՝ լայն և նեղ:

Լայն իմաստով հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի և հարաբերությունների համակցությունն է, որը ձևավորվում է սոցիալական, իրավական և բարոյական նորմերի գործողության արդյունքում, և յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ այլ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում է դրա խախտման:

Խուլիգանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են նեղ իմաստով հասարակական կարգի բովանդակությունը:

Նեղ իմաստով հասարակական կարգն ընկալվում է որպես հասարակական նշանակության վայրերում, այն է՝

- 1) տրանսպորտային միջոցների կայանատեղիներում,
- 2) օդանավակայաններում,
- 3) շուկաներում,
- 4) պուրակներում,
- 5) այգիներում,
- 6) կինոթատրոններում,
- 7) ցուցասրահներում,
- 8) մարզադաշտերում,
- 9) փողոցներում,
- 10) հիմնարկ-ձեռնարկություններում,
- 11) ուսումնական հաստատություններում,
- 12) հասարակական տրանսպորտում,
- 13) հասարակական սննդի սպասարկման վայրերում,
- 14) հասարակական նշանակության այլ վայրերում

այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը, ինչպես նաև այդ վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը:

16. Խուլիգանության հիմնական հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հասարակական նշանակության վայրերում, ինչպես նաև հասարակական նշանակություն չունեցող այլ վայրերում, որտեղ առկա է հանրություն, սահմանված կարգի կոպիտ խախտման մեջ, որն արտահայտվում է այդ վայրերում գտնվող հասարակության անդամների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Խուլիգանության որակյալ հանցակազմի պարագայում վերոնշյալ արարքները գուգորդում են բռնությամբ, գույքը վնասելով կամ ոչնչացնելով և այլն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը խուլիգանության հանցակազմով որակելու համար անհրաժեշտ է նախևառաջ հիմնավորել խուլիգանության հիմնական հանցակազմի առկայությունը:

17. Խուլիգանության հիմնական և որակյալ հանցակազմերի օբյեկտների և օբյեկտիվ կողմը կազմող արարքների՝ սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծությունից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հասարակական կարգի ոչ կոպիտ խախտումը, որը թեև արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով: Նույն կերպ, վկայակոչված հոդվածով ենթակա չէ որակման հասարակական կարգի այն կոպիտ խախտումը, որը չի դրսևորվել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը ենթակա է որակման որպես խուլիգանություն միայն այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցներով կհիմնավորվի հասարակական կարգի խախտման կոպիտ լինելը և միաժամանակ, հասարակության նկատմամբ այդ խախտմամբ արտահայտված անհարգալից վերաբերմունքի բացահայտ լինելը:



18. Կոպիտ խախտումը՝ որպես խուլիգանության հանցակազմի հատկանիշ, բնութագրական է հասարակական կարգի կազմալուծման կամ խախտման գործընթացի արդյունքներին (հետևանքին): Այն արտահայտվում է նրանում, որ անձի կատարած գործողությունների հետևանքով հասարակության անդամների մեջ առաջանում է զայրույթ, վրդովմունք, կամ նրանց անհարմարություն կամ լուրջ անհանգստություն է պատճառվում, կամ առաջանում է վախի զգացում իրենց կյանքի, առողջության, գույքի պահպանության կապակցությամբ: Բացի այդ, կոպիտ խախտումն արտահայտվում է նաև աշխատանքային և այլ գործունեության կամ հասարակական նշանակության արարողության կազմալուծմամբ:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ խախտումը որպես կոպիտ գնահատելիս անհրաժեշտ է ելնել հասարակական կարգի վրա այդ խախտման ունեցած ազդեցությունից: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակական կարգը կոպիտ կերպով կարող է խախտվել ցանկացած արարքի կատարման պարագայում, մինչդեռ խուլիգանության առկայության մասին է վկայում այնպիսի արարքի կատարումը, որը միտված է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն և որպես այդպիսին, հանդիսացել է խուլիգանություն կատարող անձի դիտավորության մեջ ընդգրկված նպատակի իրականացման միջոց:

19. Հիմք ընդունելով սույն որոշման մատուցող կետում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում արարքը խուլիգանություն որակելու համար, ի թիվս սույն որոշման մեջ նշված այլ հանգամանքների, անհրաժեշտ է քննության առնել նաև այն, թե արդյոք այդ արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պատճառվել: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքի առկայությունը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել՝ ելնելով նեղ իմաստով հասարակական կարգի նկատմամբ դրա ուղղվածությունից: Այլ խոսքով՝ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքն առկա է, եթե հանցավորի արարքի հետևանքով խախտվում է հասարակական նշանակության վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, կամ էականորեն խաթարվում է կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը:

20. Խուլիգանության օբյեկտիվ կողմը կազմող արարքի՝ հասարակական կարգի կոպիտ խախտման հարցը քննարկելիս Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է նաև, որ կոպիտ խախտումը կատարվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակով: Այլ խոսքով՝ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությամբ՝ հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում: Նշված հատկանիշներից որևէ մեկի բացակայության պարագայում արարքը խուլիգանություն որակվել չի կարող:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի մեկնաբանման համար էական նշանակություն ունի նաև «բացահայտ անհարգալից վերաբերմունք» հասկացության պարզաբանումը:

Այսպես՝ անձի գործողություններում հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումն արտահայտվում է մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելու, հասարակական վայրերում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելու, շրջապատի մարդկանց և կոլեկտիվին հակադրվելու ձևով: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորող անձը դիտավորյալ կերպով խախտում է հասարակության նկատմամբ հարգանքի դրսևորման տարրերը (պարկեշտություն, պատշաճ վարքագիծ, բարեկրթություն և այլն): Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման եղանակները տարբեր են՝ արարք, խոսք, ժեստ, մարմնաշարժում և այլն:

21. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհարգալից վերաբերմունքը բացահայտ է ոչ թե այն պատճառով, որ կատարվում է հասարակական վայրերում կամ հասարակության անդամների ներկայությամբ, այլ այն պատճառով, որ կատարվում է հենց հասարակության նկատմամբ հանցավորի անհարգալից վերաբերմունքը ցուցադրելու նպատակով: Այլ խոսքով՝ կոնկրետ դեպքում խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքների՝ հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման առկայությունը կամ բացակայությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը, այն է՝ հասարակական կարգը կոպիտ խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հանցավորի դիտավորությունը, նպատակը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը, ժեստը, բառը, մարմնաշարժումը և այլն չի կարող գնահատվել որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, եթե ուղղված է կոնկրետ անձին և չի հետապնդում հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ, թեկուզ հանցավորը հասկանում է, իսկ որոշ դեպքերում պարտավոր է հասկանալ, որ կոնկրետ անձին ուղղված իր արարքը տեսանելի և ընկալելի է հասարակության համար: Հակառակ դրան՝ անձի արարքը կարող է գնահատվել որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, եթե կոնկրետ անձը, ում դեմ ուղղված է հանցավորի արարքը, ընտրվել է պատահաբար, և այդ անձի դեմ ուղղված արարքի միջոցով հանցավորը ցանկանում է բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ:

22. Խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ իրավական դիրքորոշում Վճռաբեկ դատարանը ձևավորել է *Ա.Խաչատրյանի* գործով որոշման մեջ, որտեղ արձանագրել է, որ «Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլ ցանկանում է կատարել այդ գործողությունները:

Խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիգանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է լինում շրջապատին

հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիգանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիգանություն:

Մեղադրյալի կողմից տուժողին վիրավորանքներ, մարմնական վնասվածքներ հասցվելու կամ նման այլ բռնարարքների կատարման դեպքում խուլիգանական մղումները և խուլիգանության հանցակազմը կարող է բացակայել, եթե նշված գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, քիչ թե շատ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում:

Խուլիգանական մղումների առկայությունը գնահատելու համար էական նշանակություն կարող է ունենալ նաև տուժողի վարքագիծը: (...)» (տե՛ս Արման Սիերի Խաչատրյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՎԲ-223/06 որոշումը):

23. Վերահաստատելով *Ա.Խաչատրյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ խուլիգանություն կատարող անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորում հասարակության նկատմամբ, այլև ցանկանում է դա: Այլ խոսքով՝ խուլիգանության օբյեկտիվ կողմը կազմող արարքները կատարող անձը ցանկանում է կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել, այլ ոչ թե գիտակցաբար թույլ է տալիս վերոնշյալ հետևանքների՝ հասարակական կարգի խախտման և բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ այլ հանցակազմի հատկանիշներ պարունակող արարք կատարելը, որն իրենում բովանդակում է նաև հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման տարրեր (օրինակ՝ կենցաղային հողի վրա, անձնական դրոշմատեղանքներով հասարակական վայրերում առաջացած ծեծկռտուքն ու վիճաբանությունը, որոնք արտաքինապես ընկալվում են որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք) կարող է որակվել խուլիգանություն:

24. Սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Ա.Խաչատրյանի* գործով որոշման մեջ շարադրված դիրքորոշումների հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ արարքը խուլիգանություն որակելու համար էական նշանակություն ունի դրա բնույթն ու կատարման շարժառիթը:

Չարգացնելով *Ա.Խաչատրյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ խուլիգանությունը կարող է կատարվել խուլիգանական դրդումներով, որը դրսևորվում է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտմամբ: Խուլիգանական դրդումների հիմքում ընկած են նաև անձի անգուսպ եսամոլությունը, սեփական անձի առավելությունն ընդգծելու միջոցով ներքին բավականություն ստանալու, գվարճանալու ձգտումը:

Խուլիգանություն կատարող անձն ինքնահաստատվում է, ձգտում հակահասարակական վարքագծով ապացուցել իր անկախությունը հասարակության մեջ ընդունված

վարքագծի կանոններից, իր անձը հակադրելով հասարակությանը՝ ցույց տալ իր գերակայությունը և այլն:

25. Ինչպես նշվել է սույն որոշման 21-րդ և 23-րդ կետերում, անձը կարող է սույն որոշման 24-րդ կետում նշված նպատակներին հասնել տարբեր արարքներով, որոնք կարող են նույնիսկ համընկնել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որոշակի հանցակազմների օբյեկտիվ կողմը կազմող արարքների հետ, սակայն արարքը խուլիզանություն կամ այլ հանցագործություն որակելու հարցի լուծումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է արարքի շարժառիթից, ինչպես նաև հանցավորի հետապնդած նպատակից:

26. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ խուլիզանական դրդումներն անհրաժեշտ է սահմանազատել արարքը կատարելու պահին անձի մոտ առկա հուզական վիճակից, որն անձի մոտ առաջացնում է լարվածություն, էնոցիոնալ բռնկվածություն և այլն: Մասնավորապես, եթե արարքն սկսվել է կենցաղային հողի վրա առաջացած վեճի կամ տուժողի հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծի հետևանքով, ապա անհրաժեշտ է պարզել՝ արդյոք անձի արարքը (հալիոյանքներ տալը կամ այլ վարքագիծը) ստեղծված իրավիճակին համարժեք հուզական դրսևորում է, թե ուղղված է դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հանցավորի վարքագիծն ուղղված է կոնկրետ անձի, պայմանավորված է նրա հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով և հանդիսանում է հանցավորի հուզական վիճակի արտահայտություն, խուլիզանության հանցակազմը բացակայում է:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 14-26-րդ կետերում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը խուլիզանություն կարող է որակվել այն դեպքում, երբ անձի մոտ առկա են խուլիզանական դրդումներ: Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արարքը խուլիզանություն կարող է որակվել նաև այն դեպքերում, երբ անձի մոտ առկա են հանցանքի կատարման այլ դրդումներ, սակայն հանցանքի կատարման ընթացքում ձևավորվում են խուլիզանական դրդումներ, այլ խոսքով՝ արարքը կվերաճի խուլիզանության՝ հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

28. Ինչպես նշվել է սույն որոշման 22-րդ և համապատասխանաբար նաև *Ա.Խաչատրյանի* գործով որոշման մեջ, խուլիզանության վերաբերյալ գործերով անհրաժեշտ է հաշվի առնել նաև տուժողի վարքագիծը: Չարագնացելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ խուլիզանական գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վեճի արդյունքում, ապա նախ անհրաժեշտ է պարզել, թե ով է հանդիսացել վեճը նախաձեռնողը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը չի կարող որակվել որպես խուլիզանություն, եթե վիճարանությունն առաջանում է տուժողի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով և, հետևաբար, հանցանք կատարած անձի մոտ բացակայում են խուլիզանական դրդումները: Նման պարագայում արարքը կարող է խուլիզանություն որակվել միայն այն դեպքում, երբ խուլիզանական դրդումներն առաջանան հետագայում և արարքը վերաճի խուլիզանության (տե՛ս սույն որոշման 27-րդ կետը):

29. Ելնելով սույն որոշման 14-28-րդ կետերում շարադրված վերլուծությունից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) այն դեպքերում, երբ՝

ա) արարքը կատարվում է ոչ հասարակական վայրում և (կամ) հասարակության անդամների բացակայությամբ,

բ) արարքի հետևանքով հասարակությանը լուրջ անհանգստություն չի պատճառվել,

գ) հանցավորի գործողությունները պայմանավորված են տուժողի հակաօրինական, հակաբարոյական վարքագծով և ուղղված են նրա, այլ ոչ թե հասարակության դեմ,

դ) բացակայում են խուլիգանական դրդումները, իսկ անձի արարքները պայմանավորված են նրա հուզական վիճակով,

ե) հասարակական կարգի կոպիտ խախտման նկատմամբ դրսևորվել է անգուշություն,

զ) հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող արարքը հանրնկնում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի հատկանիշների հետ, սակայն դրա կատարմամբ հանցավորը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ չունի,

է) այլ դրդումներով կատարված հանցանքը չի վերաճել հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

30. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խուլիգանության վերաբերյալ գործեր քննելիս և լուծելիս ստորադաս դատարանները պետք է հիմք ընդունեն սույն որոշման 14-29-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները և յուրաքանչյուր դեպքում, ելնելով գործի փաստական հանգամանքներից, քննության առարկա դարձնեն այն հարցը, թե արդյոք անձի արարքում առկա են խուլիգանության հատկանիշներ:

31. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Մելքոնյանի և Շ.Հախվերոյանի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի պատճառը եղել է Վ.Մելքոնյանի կնոջ և Շ.Հախվերոյանի միջև առկա սիրային հարաբերությունների պարզումը: Վիճաբանության ընթացքում Վ.Մելքոնյանը (տուժողը) նախապես իր հետ տանից վերցրած դանակով փորձել է հարվածել Շ.Հախվերոյանին: Շ.Հախվերոյանին հաջողվել է ձախ ձեռքով բռնել դանակի շեղբը, սակայն Վ.Մելքոնյանի կողից դանակը հետ քաշելու պահին Շ.Հախվերոյանի ձախ ափը վնասվել է: Այնուհետև Շ.Հախվերոյանն ու Վ.Մելքոնյանը փողոց դուրս եկած քաղաքացիների ներկայությամբ 5-10 լուրջ տևողությամբ հայիոյանքներ են տվել միմյանց հասցեին, ձեռքերով հարվածել են միմյանց, որից հետո Շ.Հախվերոյանը, իր ավտոմեքենայի սրահից վերցնելով մետաղյա լինգը, հարվածել է Վ.Մելքոնյանի ձախ ձեռքին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ

1) Շ.Հախվերոյանն ու Վ.Մելքոնյանը միմյանց հասցեին հայիոյանքներ են տվել, ձեռքերով միմյանց հարվածել են կենցաղային հողի վրա առաջացած անձնական դրոպ-

պատճառներով, որոնք ձևավորվել են նրանց միջև առաջացած վիճարանության հետևանքով:

2) Շ.Հախվերոյանի և Վ.Մելքոնյանի արարքները թեև բովանդակում են հասարակական կարգի կոպիտ խախտման տարրեր և արտաբուստ հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունք են ներկայացնում, սակայն պայմանավորված են եղել Վ.Մելքոնյանի (տուժողի) հակաօրինական վարքագծով (նախապես իր հետ տանից վերցրած դանակով Շ.Հախվերոյան ձախ ափը վնասելը) և ուղղված են եղել Վ.Մելքոնյանի և ոչ թե հավաքված քաղաքացիների դեմ: Այլ խոսքով՝ Շ.Հախվերոյանի ու Վ.Մելքոնյանի արարքներում բացակայում են խուլիգանական դրոշմները, իսկ հասարակության անդամների ներկայությամբ նրանց միջև տեղի ունեցած փոխադարձ կռիվն ու միմյանց տրված հայհոյանքները պայմանավորված են եղել նրանց հուզական վիճակով և նպատակ չեն ունեցել խախտել հասարակական կարգը, ինչպես նաև բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության՝ հավաքված քաղաքացիների նկատմամբ:

3) Կենցաղային հողի վրա առաջացած անձնական դրոշմապատճառներով կատարված՝ Շ.Հախվերոյանի և Վ.Մելքոնյանի արարքները (փոխադարձ հայհոյանքներն ու կռիվը) չեն վերաճել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով դրսևորված՝ հասարակական կարգի կոպիտ խախտման:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, սակայն, որ վերոշարադրյալ հանգամանքները հաշվի չեն առնվել ստորադաս դատարանների կողմից, և Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 24-ի դատավճռով Շ.Հախվերոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով: Առաջին ատյանի դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից թողնվել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը):

32. Սույն որոշման 31-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-30-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Շ.Հախվերոյանի արարքում առկա են խուլիգանության հատկանիշներ և հետևաբար, նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ որպես ծանրացնող հանգամանքներում կատարված խուլիգանություն:

33. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, Շ.Հախվերոյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 24-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի դատական ակտերը բեկանելու և գործը Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

34. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Շ.Հախվերոյանի և նրա պաշտպան Գ.Վարդանյանի բողոքում առկա՝ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 70-րդ հոդվածների պահանջների չկիրառման փաստարկին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրան հնարավոր է

անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված նյութական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Մ Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Շահեն Նշանի Հախվերդյանի վերաբերյալ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 24-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐԴ/0121/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ամբաստանյալ՝</i>	Գ.ՂԱԶԱՐՅԱՆԻ
<i>մեղադրող՝</i>	Ն.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Գեղամ Միսակի Ղազարյանի պաշտպան Լ.Ավագյանի և մեղադրող Ն.Հակոբյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2010 թվականի դեկտեմբերի 31-ին հարուցվել է թիվ 48119010 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ Գեղամ Միսակի Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2011 թվականի փետրվարի 4-ի մեկ այլ որոշմամբ թիվ 48119010 քրեական գործից անջատվել է Գ.Ղազարյանի և մյուսների մասը և քրեական գործին շնորհվել է թիվ 48119010/1 համարը:



2011 թվականի օգոստոսի 23-ին թիվ 48119010/1 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Գ.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 1 տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ամբաստանյալ Գ.Ղազարյանի պաշտպան Լ.Ավագյանը և մեղադրող Ն.Հակոբյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Ղազարյանի պաշտպան Լ.Ավագյանի և մեղադրող Ն.Հակոբյանի վճարելի բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Գ.Ղազարյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Եղեգնուտ-Երասխահուն ավտոճանապարհին մի խումբ անձանց՝ Մարգար Մարգարյանի, Վահագն Ավետիսյանի, Հովհաննես և Արա Մարգարյանների, Արթուր Մանուկյանի և մյուսների հետ միասին վիճաբանության մեջ է մտել Եղեգնուտ գյուղի բնակիչներ՝ Հովհաննես Ներսիսյանի, Ռուբիկ Սկրտչյանի, Հովհաննես Սկրտումյանի, Գարիկ Ներսիսյանի և Արա Եղիազարյանի հետ, որի ընթացքում կատարել է խուլիգանություն՝ վերջիններիս հասցեին տվել է հայհոյանքներ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և գուգորդվել նրանց նկատմամբ բռնություն գործադրելով, սպառնալիքներ տալով ու Հ.Ներսիսյանի նկատմամբ բռնություն գործադրելով (տե՛ս *քրեական* գործ, հատոր 2-րդ, էջ 163):

6. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրողը մեղադրական եզրակացության մեջ չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, իսկ Առաջին ատյանի դատարանում միջնորդել է ամբաստանյալ Գ.Ղազարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրան դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով (տե՛ս *քրեական* գործ, հատոր 2-րդ, էջեր 92 և 154):

7. Վերաքննիչ բողոք ներկայացրել է միայն ամբաստանյալ Գ.Ղազարյանը և խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել (տե՛ս *քրեական* գործ, հատոր 3-րդ, էջեր 2, 3):

Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն. «Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում մեղադրող Ն.Հակոբյանը վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների համապատասխան դրույթները և պատճառաբանելով, որ սույն գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ մեղադրական դատական ակտ կայացնելու համար, հայտարարեց ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործի ներկա փուլում և շրջանակներում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքն ինքնին չի կարող բավարար հիմք հանդիսանալ սույն քրեական գործի վարույթը կարճելու և ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար» (տե՛ս *քրեական* գործ, հատոր 3-րդ, էջ 37):

8. Վերաքննիչ դատարանում մեղադրող Ն.Հակոբյանը մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ հետևյալ հայտարարությունն է արել. «Սույն քրեական գործի շրջանակներում առկա են չվարատված կասկածներ այն մասին, որ ամբաստանյալ Գեղամ Ղազարյանը կատարել է իրեն վերագրվող հանցավոր արարքը, դրանք պետք է մեկնաբանել ի օգուտ ամբաստանյալի, քանի որ տուժողներն իրենց ցուցմունքները դատաքննության ընթացքում չեն պնդել, իսկ լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությունը կազմելիս տուժողներին ներկայացվել է Գեղամ Ղազարյանի բավականին երիտասարդ տարիքի լուսանկարը» (տե՛ս *քրեական* գործ, հատոր 3-րդ, էջ 38):

9. Վերաքննիչ դատարանի դատական ակտի՝ «Գործի դատավարական նախապատմություն» հատվածում ներառվել են հետևյալ պարբերությունները. «Քրեական գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ Արմեն Վոլոդյայի Սահակյանն իրականում Արմեն Գազիկի Սարգսյանն է՝ ծնված 11.06.1978թ., բնակվող՝ ք.Երևան, Բագրատունյաց փ., 26-րդ շենքի 21-րդ բնակարանում:

Միաժամանակ պարզվել է, որ.

Գործով վկա Վիդեա Սարգսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2011-ի հուլիսի 03-ին իր որդին Գազիկ Սարգսյանը եկել է տուն ծեծված վիճակում, սակայն իրեն ոչինչ չի պատմել: Ինքն այդ մասին հայտնել է իր ամուսնուն՝ Արմեն Սարգսյանին, որը տեսնելով որդուն ծեծված վիճակում՝ դուրս է եկել բնակարանից: Որոշ ժամանակ անց իր բնակարանի պատուհանից տեսել է իրենց շենքի բակում կանգնած սև գույնի «տոյոտա» և սպիտակ գույնի «տոյոտա ջիպ» մակնիշի ավտոմեքենաներ: Այնուհետև, տեսել է, որ «ջիպ» ավտոմեքենայից իջել են 3 հոգի, որոնցից մեկի ձեռքում եղել է ատրճանակ:

Նրանցից մեկը հայիոյել է ամուսնուն, իսկ մյուսը ատրճանակով կրակել է ամուսնու ուղղությամբ:

Այնուհետև, Վիդեա Սարգսյանն իրեն ճանաչման ներկայացված լուսանկարներում պատկերված անձանցից ճանաչել է Վահագն Հրաչիկի Խաչատրյանին և հայտնել, որ դա այն անձն է, ով կրակել է իր ամուսնու վրա:

2011 թ-ի օգոստոսի 20-ին որոշում է կայացվել Վահագն Հրաչիկի Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով, 258 հոդվածի 4-րդ մասով և 235 հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այն բանի համար, որ նա 2011 թ-ի հուլիսի 03-ին՝ ժամը 21-ից 21:30-ի սահմաններում, նախնական համաձայնության գալով Էդուարդ Ալբերտի Հակոբյանի և քննությանը դեռևս չպարզված ևս երեք

անձանց հետ, Երևան քաղաքի Բազրատունյաց փողոցի 26 շենքի բակում վեճի է բռնվել նույն շենքի 21 բնակարանի բնակիչ Արմեն Գագիկի Սարգսյանի հետ՝ վերջինիս կողմից իր ընկերոջ՝ Էդուարդ Հակոբյանի հորեղբոր որդուն՝ Հրանտ Գրիգորի Հակոբյանին, հարվածելու պատճառով պարզելու համար, որի ընթացքում, դիտավորությամբ, կուպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով Ա.Սարգսյանի և նշված շենքի բակում գտնվող անձանց նկատմամբ, հրագենի գործադրմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ սեռական բնույթի հայհոյանքներ է տվել Ա.Սարգսյանի հասցեին, այնուհետև Արմեն Սարգսյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ իր մոտ ապօրինի պահվող, գործով չպարզված հրագենից կրակոցներ է արձակել Ա.Սարգսյանի ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել՝ դեպքի վայրից դիմել է փախուստի:

Նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

24.10.2011թ. Վահագն Խաչատրյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին: 25.10.2011թ-ին վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով, 258 հոդվածի 4-րդ մասով և 235 հոդվածի 1-ին մասով:

ՀԿԳ ավագ քննիչ Վ.Մուրադյանը, նկատի ունենալով, որ առաջադրված մեղադրանքում Վահագն Խաչատրյանը իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2011թ. հուլիսի 3-ին՝ ժամը 17.00-ից մինչև 00:30-ը գտնվել է Երևան քաղաքի Պուշկինի փողոցի 50 հասցեում գտնվող «Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ին պատկանող գրասենյակում և մասնակցել գործնական քննարկման, նրա այլուրեքությունն ստուգելու նպատակով հարցաքննված վկաները՝ «Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ի աշխատակիցներ Դավիթ Բաղդասարյանը, Հրաչ Եղիազարյանը և Տիգրան Գավուրմաջյանը նույնպես ցուցմունքներ են տվել այն մասին, որ 2011թ. հուլիսի 3-ին՝ ժամը 17-ից մինչև 23-ը գտնվել»:

Վերաքննիչ դատարանի դատական ակտի՝ «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» հատվածում ներառվել են հետևյալ պարբերությունները. «վերծանումներ ստանալու միջնորդության մեջ հիմնավորված կերպով պատճառաբանել դատավարական գործողության կատարման անհրաժեշտությունը: Ընդ որում, մինչև հեռախոսագանգերի վերծանումները ստանալու միջնորդություն ներկայացնելը նախաքննական մարմնի կողմից մեղադրյալ Վ.Խաչատրյանի այլուրեքությունը ներկայացված պատճառաբանությունները ստուգելու առումով կատարվել են բազմաթիվ քննչական գործողություններ, սակայն դրանք բավարար չեն գործի հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու առումով, որի հիման վրա դատարան ներկայացվել հիշյալ միջնորդությունը:

Դատարանը միջնորդությունը մերժելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական մասում ներկայացնելով միջնորդությունը հարուցած նախաքննական մարմնի պատճառաբանությունները, ըստ էության ընդունել է հեռախոսային վերծանումների մուտքային և ելքային վերծանումները ստանալու և հետազոտելու անհրաժեշտությունը, սակայն յուրովի մեկնաբանելով քրեադատավարական նորմը՝ խորհուրդ է տվել այն ստանալ վկաներ Դավիթ Բաղդասարյանից, Հրաչ Եղիազարյանից և Տիգրան Գավուրմաջյանից, այսինքն փորձել է ուղորդել նախաքննական մարմնի գործողությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննիչը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, քննուճնել անհրաժեշտ որոշումներ, իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ:

Սույն քրեական գործի տեսանկյունից նախաքննական մարմինը՝ ելնելով քրեական գործի քննության առանձնահատկություններից, որոշել է պարզաբանման ենթակա հանգամանքները ստուգել առանց այդ մասին վկաներին տեղեկացնելու, այսինքն՝ կիրառել է քրեական գործի հանգամանքները բացահայտելու հատուկ մարտավարություն:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ԵԿԴ/0586/10/11 գործով կայացված որոշմամբ արտահայտել է իր դիրքորոշումը, որի համաձայն՝ «դատարանի կողմից վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը մերժելու պարագայում, տվյալ դեպքում հնարավոր չէ ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով ամրագրված պահանջների կատարումը, ինչը հանգեցրել է դատավարական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է դատական ակտը բեկանելու և բողոքը մասնակի բավարարելու առումով նոր դատական ակտ կայացնելու համար»:

Այսպիսով ներկայացված պատճառաբանություններից ակնհայտ է, որ գործով բացահայտման ենթակա հանգամանքների պարզաբանման համար մեղադրյալ Վ.Խաչատրյանի պատճառաբանությունները ստուգելու առումով վկաներ Դավիթ Բաղդասարյանին, Հրաչ Եղիազարյանին և Տիգրան Գավուրմաջյանին պատկանող հեռախոսահամարների վերծանումները ստանալու հանգամանքը պարտադիր է:

Բողոք բերած անձը նշել է, որ հեռախոսագրերի վերծանումները ստանալու թույլտվություն տալու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումն անհիմն է և զրկում է վարույթն իրականացնող մարմնին՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ապահովելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բողոքը բավարարել և վարույթն իրականացնող մարմնին թույլատրել ստանալ վկաներ Դավիթ Բաղդասարյանին պատկանող 096-00-00-97, Հրաչ Եղիազարյանին պատկանող՝ 093-43-39-76 և Տիգրան Գավուրմաջյանին պատկանող՝ 093-71-17-71 բջջային» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջեր 41-42):

### **Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Ամբաստանյալ Գ.Ղազարյանի պաշտպան Լ.Ավագյանը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

11. Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ճիշտ չի մեկնա-

բանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերը:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ մեղադրանքից հրաժարվելը մեղադրողի բացարձակ իրավունքն է, հետևաբար, եթե մեղադրողը դատարանում հրաժարվում է մեղադրանքից, դատական ակտը չի կարող թողնվել անփոփոխ: Բողոքաբերը նշել է նաև, որ սույն գործով մեղադրողը մեղադրանքից հրաժարվել է հանցակազմի բացակայության հիմքով, ինչը բավարար հիմք է դատարանի կողմից Գ.Ղազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն այն մասին, որ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Հետևաբար, մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը, անկախ արագացված դատաքննության կարգ կիրառելու հանգամանքից, Վերաքննիչ դատարանի համար հանդիսանում է նոր երևան եկած հանգամանք:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը, կայացնել արդարացման դատավճիռ և հռչակել Գ.Ղազարյանի անմեղությունն առաջադրված մեղադրանքում:

13. Մեղադրող Ն.Հակոբյանը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

14. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ Սահմանադրության 6-րդ, 19-րդ, 21-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ մեղադրող կողմն է կրում մեղադրանքն ապացուցելու պարտականությունը, մինչդեռ մեղադրողի կողմից մեղադրանքն ապացուցված լինելու կապակցությամբ հիմնավոր կասկած հայտնելու և մեղադրանքից հրաժարվելու պարագայում, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր իրավասության շրջանակից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված մրցակցության սկզբունքի խախտմամբ իրականացրել է մեղադրողի պարտականություններ, այն է՝ մեղադրանքի բացակայության պարագայում Գ.Ղազարյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

15. Վերոգրյալից բացի բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 19-րդ, 21-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 9-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման նկարագրական-պատճառաբանական մասում, մասնավորապես, «Գործի դատավարական նախապատմությունը» և «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» մասերում անհիմն ու չպատճառա-

քանված կերպով գետեղել է Գ.Ղազարյանի վերաբերյալ գործի հետ առնչություն չունեցող, այլ անձանց վերաբերյալ, այլ քրեական գործով կայացված դատական ակտերից վերցված՝ թվով 16 պարբերություն:

16. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքից հրաժարվելու իրավասության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Վերաքննիչ դատարանի դատական ակտի կառուցվածքը.*

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում գործի փաստական հանգամանքներից տարբերվող և մեղադրանքի հետ առնչություն չունեցող փաստական հանգամանքներ բովանդակելու պայմաններում օրինակա՞ն է արդյոք Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավճռի ներածական մասում ցույց է տրվում՝

1) որ դատավճիռը կայացվել է Հայաստանի Հանրապետության անունից.

2) դատավճիռը կայացնելու ժամանակը և վայրը.

3) դատավճիռը կայացնող դատարանի անունը, դատարանի կազմը, դատական նիստի քարտուղարը, մեղադրողը, պաշտպանը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը, նրանց ներկայացուցիչները.

4) ամբաստանյալի անունը, հայրանունը, ազգանունը, նրա ծննդյան թվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, ընտանեկան դրությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, կրթությունը և ամբաստանյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի համար.

5) այն քրեական օրենքը, որով նախատեսված հանցանքի կատարման համար մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝  
«Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

1) մեղադրանքի բովանդակությունը.

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս:

Եթե դատավճռի կայացնելիս դատարանը կիրառել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը, ապա նշվում է նաև համապատասխան պայմանագիրը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են՝

1) դատարանի որոշումները.

2) դատարանի դատավճռի բողոքարկման կարգը:

Եթե առկա է դատավճռում նշված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը, ապա դատավճռում նշվում են նաև համապատասխան պայմանագիրը և դրանից բխող այն իրավունքը (իրավունքները), որից (որոնցից) կարող է օգտվել դատապարտյալը կամ արդարացվածը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բողոքը քննելու արդյունքում՝ վերաքննիչ դատարանը կայացնում է դատական ակտ, որն ամբողջությամբ կամ մասամբ փոխարինում է առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

2. Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 370-372-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը ևս պետք է կազմված լինեն ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնց ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատավճռին:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատական ակտի կառուցվածքին և բովանդակությանը որոշակի պահանջներ ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտը պետք է ամբողջական տեղեկություն պարունակի քննված գործի վերաբերյալ, ինչպես նաև ներառի դատարանի կողմից լուծման ենթակա

քոլոր հարցերի պատասխանները: Բացի այդ, դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, այդ թվում՝ վերաբերի միևնույն քրեական գործին, հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, իր դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում, մասնավորապես՝ «Գործի դատավարական նախապատմությունը» և «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները» հատվածներում շարադրել է սույն գործի՝ Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված փաստական հանգամանքներից տարբերվող և սույն գործին չվերաբերող, այլ անձանց վերաբերյալ փաստական հանգամանքներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

22. Սույն որոշման 19-20-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 21-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված՝ օրինականության սկզբունքի խախտում այն առումով, որ դատարանի կողմից չեն պահպանվել վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին քրեադատավարական օրենքով ներկայացվող պահանջները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտն անօրինական է, քանի որ դրա նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված են գործի փաստական հանգամանքներից տարբերվող և մեղադրանքի հետ առնչություն չունեցող փաստական հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Զրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված օրինականության սկզբունքի խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտում, հետևաբար Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

## *II. Մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու իրավասության սահմանները.*

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ վերաքննության փուլում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքը բավարար հիմք չէ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը «իրավասու է քննելու



բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ քրեական գործն ըստ էության քննվում է միայն առաջին ատյանի դատարանում: Առաջին ատյանում են ընդհանրապես և դատական քննության փուլում են մասնավորապես հետազոտվում մեղադրանքի հիմքում դրված ապացույցները և, ի թիվս այլոց, պատասխան է տրվում ամբաստանյալի մեղավորության հարցին: Այլ կերպ՝ անձին (անձանց) ներկայացված մեղադրանքի օրինականության և հիմնավորվածության ստուգումը բացառապես առաջին ատյանի դատարանի դատական քննության առարկան է:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

(...)

9) հրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց.

10) դատարանում հրապարակել մեղադրական եզրակացությունը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով, իսկ վճռաբեկ դատարանում՝ ներկա գտնվել նիստին:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատախազը, դատական քննության ընթացքում օգտվելով սույն օրենսգրքով սահմանված իր իրավունքներից, դատարանում պաշտպանում է մեղադրանքը:

(...)

3. Դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում:

4. Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարծում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատաքննությունն սկսվում է նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ»:

26. Սույն որոշման 24-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո վերլուծելով սույն որոշման 25-րդ կետում մեջբերված քրեադատավարական նորմերը՝ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողը մեղադրանքը պաշտպանելու, մեղադրանքի ծավալները փոփոխելու, ինչպես նաև մեղադրանքից հրաժարվելու իրավասությամբ օժտված է բացառապես առաջին ատյանի դատարանում: Առաջին ատյանի դատարանի դատական ակտի՝ դատավճռի կայացմամբ ավարտվում է մեղադրանքի հիմնավորվածության և օրինականության ստուգումը և, հետևաբար, սահմանափակվում է նաև մեղադրողի՝ մեղադրանքից հրաժարվելու իրավասությունը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 377-րդ հոդվածի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներով գործերը քննում է քրեական վերաքննիչ դատարանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 45<sup>1</sup> գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:

Վերոշարադրյալ քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ վերաքննիչ դատարանում գործը քննվում է բացառապես վերաքննիչ բողոքի առկայության պարագայում և բացառապես դրա հիմքերի ու հիմնավորումների սահմաններում: Այլ կերպ՝ վերաքննության առարկան ոչ թե գործի ըստ էության քննությունն է, այլ առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը: Դրանով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանում դատաքննությունն սկսվում է ոչ թե մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրավակիչ մասի հրապարակմամբ, այլ նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ:

28. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանում մեղադրանքի պաշտպանություն չի իրականացվում, հետևաբար նաև՝ մեղադրողն օժտված չէ մեղադրանքից հրաժարվելու լիազորությամբ: Այլ կերպ՝ եթե մեղադրողը մեղադրանքից հրաժարվելու իր լիազորությունը չի իրացնում առաջին ատյանի դատարանում, որտեղ իրականացվում է գործի՝ ամբողջ ծավալով քննություն, ապա քրեական գործի հետագա քննությունների ընթացքում, այսինքն՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, որտեղ ստուգվում են ստորադաս դատարանների կողմից կայացված ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, զրկվում է նման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից:

29. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ այն դեպքերում, երբ գործի ըստ էության քննության արդյունքում դատական ակտի կայացումից հետո մինչ այդ դատական ակտն ուժի մեջ մտնելն ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հիմք են հանդիսանում դատախազի կողմից մեղադրանքի վերաբերյալ իր կարծիքը փոխելու համար, դատախազն իրավասու է համապատասխան հիմնավորումներով բողոք ներկայացնել վերադաս դատարան: Համանման կերպով, այն դեպքում, երբ վերոնշյալ հանգամանքներն ի հայտ են եկել այն ժամանակ, երբ քրեական գործը գտնվում է վերաքննիչ դատարանի վարությամբ, դատախազն իրավասու է մեղադրանքի վերաբերյալ իր կարծիքը փոխելու վերաբերյալ հիմնավորված միջնորդություն ներկայացնել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան:

Վերոնշյալ բողոքի կամ միջնորդության բավարարումը վերաքննիչ դատարանի համար պարտադիր բնույթ չի կրում և դատարանը որոշում է կայացնում ընդհանուր հիմունքներով:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրողը մեղադրական եզրակացության մեջ չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, իսկ Առաջին ատյանի դատարանում միջնորդել է ամբաստանյալ Գ.Ղազարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրան դատապարտել 3 տարի ժամկետով ազատազրկման (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Գ.Ղազարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտել է 1 տարի ժամկետով ազատազրկման (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Վերաքննիչ դատարանը գործը վերանայել է միայն ամբաստանյալ Գ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու սահմաններում: Մեղադրողը վերաքննիչ բողոք չի ներկայացրել, մինչդեռ Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում հանդես է եկել մեղադրանքից հրաժարվելու հայտարարությամբ՝ նշելով, որ առկա են չփարատված կասկածներ Գ.Ղազարյանին վերագրվող հանցավոր արարքի վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Վերանայման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

31. Սույն որոշման 24-29-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 30-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ վերաքննության փուլում մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքը բավարար հիմք չէ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գեղամ Սիրսակի Ղազարյանի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝  
Դատավորներ՝*

*ստորագրություն  
ստորագրություններ*

3.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0106/01/08**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ՂՈՒԿԿԱՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ներկայացուցիչ՝</i>	Ա.ԶԵՅՆԱԼՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ Աշոտ Սարգսի Մամուկյանի ներկայացուցիչներ Ա.Զեյնալյանի և Ա.Ղազարյանի վճարելի բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

2008 թվականի մարտի 2-ին թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 62202608 համարով:

2008 թվականի մարտի 4-ին Աշոտ Սարգսի Մամուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի հունիսի 10-ին թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Ա.Մանուկյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը, և անջատված մասով նախաքննությունը շարունակվել է 62212308 համարով:

2008 թվականի հունիսի 13-ի որոշմամբ Ա.Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 316-րդ հոդվածի 1-ին մասերով:

2008 թվականի հունիսի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ բավարարվել է անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու և Ա.Մանուկյանին նոր մեղադրանք առաջադրելու համար դատաքննությունը մեկ ամսով հետաձգելու վերաբերյալ մեղադրողի նույն օրվա միջնորդությունը:

2008 թվականի հուլիսի 30-ին Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ Ա.Մանուկյանի վերաբերյալ գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկվել է Երևանի քրեական դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով Ա.Մանուկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անպարտ և արդարացվել է: Ա.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով:

4. Ա.Մանուկյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2009 թվականի մարտի 10-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը:

5. 2009 թվականի ապրիլի 10-ին Ա.Մանուկյանի պաշտպանը վճարել է բերել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի մարտի 10-ի որոշման դեմ, որը Վճարելի դատարանի 2009 թվականի մայիսի 19-ի որոշմամբ վերադարձվել է:

6. 2010 թվականի ապրիլի 30-ին Ա.Մանուկյանի ներկայացուցիչները վճարել է բողոք են բերել խնդրելով նոր հանգամանքի՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՄԳՈ-872 որոշման հիման վրա վերանայել Վճարելի դատարանի 2009 թվականի մայիսի 19-ի որոշումը:

Ա.Մանուկյանի ներկայացուցիչների վճարելի բողոքը Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշմամբ վերադարձվել է:

7. Քաղաքացիներ Ս.Ասատրյանի և Ա.Մանուկյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել:

Ելնելով այն բանից, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԳՈ-943 որոշումը հիմք է վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի

որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար, Ա.Մանուկյանի ներկայացուցիչները 2012 թվականի հունվարի 30-ին բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

8. ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի ապրիլի 2-ի ՍԳՌ-872 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ի և 2-րդ մասերի դրույթներն այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Նույն որոշման 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր են ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

9. Վճռաբեկ դատարանը 2010 թվականի հունիսի 7-ի որոշմամբ արձանագրել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել: Ինչպես երևում է «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 2010 թվականի ապրիլի 2-ին կայացված որոշումից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Նույն որոշման 2-րդ կետով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր են ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

Նկատի ունենալով, որ Ա.Մանուկյանի նկատմամբ կիրառված օրենքը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, Սահմանադրությանը հակասող և անվավեր չեն ճանաչվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին համապատասխան ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ապրիլի 2-ի որոշումը նոր հանգամանքի հիման վրա Վճռաբեկ դատարանի դատական ակտը վերանայելու հիմք չէ»:

10. ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մատով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման

արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) որոշման հրապարակման պահին ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ սահմանադրական դատարանն այդ դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

### **Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերները փաստարկել են, որ Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնված դատական ակտով խախտվել է Ա.Մանուկյանի՝ արդար դատաքննության, այդ թվում՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Գտնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-943 որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի իմաստով նոր հանգամանք է՝ բողոք բերած անձինք խնդրել են հարուցել Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել այդ որոշումը, վարույթ ընդունել և քննել Վճարելի դատարանի 2009 թվականի մայիսի 19-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու մասին 2010 թվականի ապրիլի 28-ի վճարելի բողոքը:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-943 որոշումն արդյոք Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի դատական ակտը վերանայելու հիմք է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի կապակցությամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել *Ա.Հարությունյանի* վերաբերյալ որոշման մեջ: Նշված որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետա-

քննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

(...)

Իսկ դատարանում գործի քննությունը սկսում է այն պահից, երբ անձը համապատասխան դատավարական փաստաթուղթը (բողոքը, միջնորդագիրը) ներկայացնում է դատարան (տե՛ս Աշոտ Հարությունյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

14. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ 943 որոշման հիման վրա՝ 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխություն է տեղի ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում: Փոփոխության արդյունքում վերոնշյալ դրույթը շարադրվել է հետևյալ կերպ. «Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են [այն դեպքում, երբ] Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Սույն գործով Ա.Մանուկյանի ներկայացուցիչները 2012 թվականի հունվարի 30-ին նոր հանգամանքի հիմքով վճարելի բողոք են ներկայացրել: Վճարելի դատարանը 2012 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

15. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտը Վճարելի դատարանում վերանայելու ժամանակ Վճարելի դատարանը պետք է ղեկավարվի 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, քանի որ Վճարելի բողոքը ներկայացնելու ժամանակ արդեն իսկ գործում էր հիշյալ նորմը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վճարելի դատարանը 2010 թվականի հունիսի 7-ի որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի որոշումից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ի և 2-րդ մասերի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Նույն որոշումից երևում է, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր են ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

Նկատի ունենալով, որ Ա.Մանուկյանի նկատմամբ կիրառված օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, Սահմանադրությանը հակասող և անվավեր չեն ճանաչվել՝ Վճարելի դատարանը եզրակացրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի որոշումը Վճարելի դատարանի դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու հիմք չէ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվա-



ծի 1-ին մասի 1-ին կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Վերոնշյալ որոշումից երևում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի որոշումը հիմք է Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար՝ Վճարելի դատարանը 2012 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՄԳՈ-872 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ի և 2-րդ մասերի դրույթներն այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՄԳՈ-872 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի ուսումնասիրությունից երևում է, որ դրանում բացահայտված չէ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը և չի գտել, որ այդ դրույթները կիրառվել են այլ մեկնաբանությամբ: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 2-ի ՄԳՈ-872 որոշման եզրափակիչ մասում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

18. Սույն որոշման 13-15-րդ և 17-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԳՈ-943 որոշումը Վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի դատական ակտը վերանայելու հիմք չէ:

19. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426<sup>1</sup>-րդ, 426<sup>2</sup>-րդ, 426<sup>4</sup>-րդ, 426<sup>7</sup>-րդ և 426<sup>9</sup>-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ Աշոտ Սարգսյի Մանուկյանի ներկայացուցիչներ Ա.Զեյնալյանի և Ա.Ղազարյանի վճարելի բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով վճարելի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

4.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՎԲ-04/12

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ներկայացուցիչ՝</i>	Կ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վճարելի դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի որոշման դեմ Սիլվա Վարազդատի Ասատրյանի և նրա պաշտպան Կ.Մեծլումյանի վճարելի բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2001 թվականի դեկտեմբերի 29-ին ավտոմեքենան պայթեցնելու միջոցով Մելիք Գասպարյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

2005 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Սիլվա Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով:

2006 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ Ս.Ասատրյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական

օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով և 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

2. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2007 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Ս.Ասատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով և 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով Ս.Ասատրյանը դատապարտվել է ազատազրկման 8 (ութ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ս.Ասատրյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 9 (ինը) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Յուրի Գրիգորիի Վոլֆսոնը:

3. Ամբաստանյալ Ս.Ասատրյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռով Ս.Ասատրյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ պաշտպանի բողոքը՝ առանց բավարարման:

4. 2008 թվականի նոյեմբերի 21-ին Ս.Ասատրյանը հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հուլիսի 28-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու համար, Ս.Ասատրյանը և նրա պաշտպանը 2009 թվականի օգոստոսի 11-ին բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան. որով խնդրել են հարուցել վերանայման վարույթ, նոր հանգամանքի հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը, փոփոխել այն և Վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ:

2009 թվականի սեպտեմբերի 25-ին Վճռաբեկ դատարանը կայացրել է «Նոր հանգամանքով վերանայելու և վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

6. 2010 թվականի մարտի 22-ին Ս.Ասատրյանը և նրա պաշտպանը կրկին նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք են ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ վերադարձվել է:

7. 2011 թվականի մայիսի 24-ին Ս.Ասատրյանը և նրա պաշտպանը նոր հանգամանքի հիմքով կրկին վճռաբեկ բողոք են բերել, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հունիսի 30-ի որոշմամբ վերադարձվել է:

8. Քաղաքացիներ Ս.Ասատրյանի և Ա.Մանուկյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել, որի համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշումը հիմք է վճարելի դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար, Ս.Ասատրյանը և նրա պաշտպանը 2012 թվականի փետրվարի 1-ին բողոք են ներկայացրել վճարելի դատարան, որով խնդրել են հարուցել վերանայման վարույթ, նոր հանգամանքի հիմքով վերանայել վճարելի դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի որոշումը, փոփոխել այն, 2009 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ նոր հանգամանքի հիմքով բերված վճարելի բողոքն ընդունել վարույթ և բավարարել: Արդյունքում՝ վարույթ ընդունել վերաբերյալ դատարանի 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռի դեմ բերված վճարելի բողոքը:

2012 թվականի մարտի 6-ին վճարելի դատարանը որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

9. ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի հուլիսի 28-ի ՍԳՌ-818 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2.1-րդ մասի դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

10. ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԳՌ-849 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

11. Վճարելի դատարանը 2010 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, Սահմանադրությանը հակասող և անվավեր չի ճանաչվել՝ վճարելի դատարանը եզրահանգել է, որ սույն գործով հիմնավորված չէ նոր հանգամանքի առկայությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 16, 516-517 էջեր):

12. ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու

հնարավորություն չի ընձեռում, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)՝ որոշման հրապարակման պահին ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ սահմանադրական դատարանն այդ դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

**Քողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Գտնելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի իմաստով նոր հանգամանք է՝ բողոք բերած անձինք խնդրել են հարուցել վերանայման վարույթ, նոր հանգամանքի հիմքով վերանայել Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի որոշումը, փոփոխել այն, 2009 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և բավարարել: Արդյունքում՝ վարույթ ընդունել Վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքը:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշումն արդյոք Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի դատական ակտը վերանայելու հիմք է:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել *Ա.Հարությունյանի* վերաբերյալ որոշման մեջ: Նշված որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

(...)

Իսկ դատարանում գործի քննությունը սկսում է այն պահից, երբ անձը համապատասխան դատավարական փաստաթուղթը (բողոքը, միջնորդագիրը) ներկայացնում է

դատարան (տե՛ս Աշոտ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

16. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԳՌ 943 որոշման հիման վրա՝ 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխություն է տեղի ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում: Փոփոխության արդյունքում վերոնշյալ դրույթը շարադրվել է հետևյալ կերպ. «Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են [այն դեպքում, երբ] Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Սույն գործով Ս.Ասատրյանը և նրա պաշտպանը 2012 թվականի փետրվարի 1-ին նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք են ներկայացրել: Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

17. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտը Վճռաբեկ դատարանում վերանայելու ժամանակ Վճռաբեկ դատարանը պետք է ղեկավարվի 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, քանի որ Վճռաբեկ բողոքը ներկայացնելու ժամանակ արդեն իսկ գործում էր հիշյալ նորմը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ արձանագրել է, որ բողոքում հիմնավորված չէ գործով նոր հանգամանքի առկայությունը, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասը, հակասահմանադրական չի ճանաչել (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Վերոնշյալ որոշումից երևում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հունիսի 7-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար՝ Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

19. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի ՄԳՌ-849 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի

404-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԳՈ-849 որոշման եզրափակիչ մասի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը դրանում չի բացահայտել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը և չի գտել, որ այդ դրույթները կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

20. Սույն որման 15-17-րդ և 19-րդ կետերում շարադրված վերլուծության և համապատասխանաբար նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը բավարարման ենթակա չէ:

Ինչ վերաբերում է 2009 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ նոր հանգամանքի հիմքով (քաղաքացի Սիլվա Ասատրյանի դիմումի հիման վրա 2009 թվականի հուլիսի 28-ի ՍԳՈ-818 որոշում) բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և բավարարելու վերաբերյալ բողոքաբերների պահանջին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 25-ին կայացրել է «Նոր հանգամանքով վերանայելու և վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» պատճառաբանված որոշում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426<sup>1</sup>-րդ, 426<sup>2</sup>-րդ, 426<sup>4</sup>-րդ, 426<sup>7</sup>-րդ և 426<sup>9</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 30-ի որոշման դեմ Սիլվա Վարազդատի Ասատրյանի և նրա պաշտպան Կ.Մեծլումյանի վճռաբեկ բողոքի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*



5.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0093/11/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ՝</i>	Ա.ՍԵՓՈՅԱՆԻ
<i>դիմողի ներկայացուցիչ՝</i>	Ա.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Լուսինե Բարայանի ներկայացուցիչ Արմեն Սողոմոնյանի բողոքը բավարարելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Ա.Սեփոյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության քաժնի ավագ քննիչ Մ.Սուրադյանը 2011 թվականի ապրիլի 12-ին կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Վերը նշված որոշումը դիմողի ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանի կողմից բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, այն ՀՀ գլխավոր դատախազության կողմից ուղարկվել է Երևան քաղաքի դատախազին և 2011 թվականի մայիսի 30-ին Երևան քաղաքի դատախազի տեղակալ Ս.Խաչատրյանը դիմողի ներկայացուցչին գրավոր պատասխա-

նել է, որ բողոքարկված որոշումն օրինական է և հաստատվել է Երևան քաղաքի դատախազության կողմից:

Դիմողի ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանը վերը նշված որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ դիմող Լ.Բաբայանի ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանի բողոքը մերժվել է:

Վերոնշյալ դատական ակտի դեմ դիմողի ներկայացուցիչ Ա.Սողոմոնյանը բերել է վերաքննիչ բողոք:

3. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը վերացնելու, «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 2011 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտավորություն սահմանելու մասին:

Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Ա.Սեփոյանը բերել է վճարելի բողոք:

4. Դատախազի վճարելի բողոքը Վճարելի դատարանի 2012 թվականի հունվարի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության ճՏՀ քննության բաժնի ավագ քննիչ Մ.Մուրադյանի 2011 թվականի ապրիլի 12-ի որոշման համաձայն՝ «2011թ. մարտի 13-ին, ժամը 02.00-ի սահմաններում, Երևան քաղաքի Աբովյան և Թումանյան փողոցների խաչմերուկում, Վլադիմիր Կարապետի Հովսեփյանը Դայմլեր-Կրայսլեր (Մերսեդես) մակնիշի 82 TT 888 պ/հ ավտոմեքենայով ընդհարվել է Լուսինե Սասունի Բաբայանի վարած Մագդա մակնիշի 25 LL 806 պ/հ ավտոմեքենային, որից հետո վերջինս ընդհարվել է Հարություն Ժիրիկի Ստեփանյանի՝ արդեն իսկ կանգնած վիճակում գտնվող, ՎԱԶ-21074 մակնիշի Լ 08-73 պ/հ ավտոմեքենային, որի հետևանքով Մագդա մակնիշի ավտոմեքենայի վարորդը և ուղևորներ Մարիամ Արթուրի Դուկասյանը և Նարինե Վաչիկի Խաչատրյանն ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել «Թիվ 1-ին համալսարանական հիվանդանոց» բ/կ, ստացել են բուժօգնություն և գնացել» (տե՛ս Նյութեր, էջ 17-20):

6. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ դիմողի ներկայացուցիչ բողոքը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) նկատի ունենալով, որ թիվ 297 նյութերով ձեռք բերված դատաբժշկական փորձաքննությունների թիվ 610, 611 և 612 եզրակացությունների համաձայն Մ.Դուկասյանի, Ն.Խաչատրյանի և Լ.Բաբայանի ստացած մարմնական վնասվածքները առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում, այսինքն՝ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում վթարի մասնակից մարդկանց առողջությանն անգոյություն բերող վնաս կամ միջին ծանրության վնաս չի պատճառվել, այսինքն՝ առկա չեն ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին

մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, դատարանը գտնում է, որ «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 12.04.2011թ. որոշումը ենթակա չէ վերացման, նկատի ունենալով նաև, որ այն վերացնելու դեպքում պարտադիր է դառնում դատախազի կողմից գործի հարուցումը, ինչը բացառվում է օրենսդրությամբ:

Հետևաբար, դատարանը գտնում է, որ դիմողի ներկայացուցչի բողոքը պետք է մերժվի:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ դիմողը, դատարան բողոք ներկայացնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ և խնդրելով վերացնել վիճարկվող որոշումը, ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջներով, դատարանը, հաշվի առնելով ՀՀ վճռարեկ դատարանի՝ 13.07.2011թ. թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, գտնում է, որ դիմողի բողոքի քննության և լուծման համար կիրառելի է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը, այլ դրա համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը» (տե՛ս Նյութեր, էջ 48-49):

7. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ դիմողի ներկայացուցչի բողոքը բավարարել է՝ պատճառաբանելով, որ քրեական հետապնդման մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության պահանջները չկատարելը և նշված հանգամանքները Առաջին ատյանի դատարանի կողմից համապատասխան իրավական գնահատականի չարժանացնելը սահմանափակել են Լ.Բարայանի՝ իր շահերին առնչվող գործի արդարացի քննության իրավունքը, և բացի այդ, ըստ ընդհանուր իրավասության դատարան հասցեագրված բողոքի՝ ավագ քննիչ Մ. Մուրադյանը բացատրություն չի վերցրել երկու սկանառես վկա քաղաքացիներից, որոնց տվյալները քննիչին հայտնել է Լ.Բարայանը, սակայն քննիչը նրանց չի կանչել և չի հարցաքննել:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը վերը նշված հանգամանքներին իրավական գնահատական չի տվել, բավարար ուշադրություն չի դարձրել նյութերով ձեռք բերված բացատրությունների միջև եղած հակասություններին, այլ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ գտել է, որ առկա չեն ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշները:

Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումներ, որոնք էլ հանգեցրել են անհիմն, չպատճառաբանված որոշման կայացման:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործի նոր քննությամբ նախաքննության մարմինը պետք է վերացնի նշված խախտումները և արդյունքներով գա համապատասխան եզրահանգման:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ որոշումը կայացնում է՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, 376-1, 385-րդ, 386-րդ, 390-րդ, 391-րդ, 393-րդ հոդվածներով, 394-րդ հոդվածի 2-րդ մասով, 402-րդ հոդվածով (տե՛ս Նյութեր, էջ 110-115):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը, նշել է, որ քննարկվող ավտոմեքարի փաստի առթիվ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ավտոմեքարի արդյունքում ավտոմեքարող Լ.Բաբայանի, ուղևորներ Մ.Ղուկասյանի և Ն.Խաչատրյանի առողջությանը պատճառվել են թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, որի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները բացակայում են, ուստի վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը՝ հիմնավոր են:

Վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պետք է ղեկավարվեր տվյալ իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմով, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով, այլ ոչ թե նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ արդյունքում կայացնելով դատական ակտ, որն առերևույթ հակասում է Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմանը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Վերաքննիչ դատարանի որոշման առերևույթ հակասությունը Վճարելի դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը.*

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է արդյոք Վճարելի դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը հակասող որոշում:

11. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հաստատանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճարելի դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճարելի դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի (...) դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

(...)

2) վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին,

(...)»:

Վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Այս ընդհանուր կանոնից բացառություն են այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերլուծությունից երևում է, որ ստորադաս դատարանի դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք է բողոքարկվող դատական ակտը Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին հակասելու հանգամանքը: Նշված հիմքով բողոքը վարույթ ընդունելու պարագայում Վճռաբեկ դատարանը, ընդհանուր կանոնի համաձայն, բեկանում է ստորադաս դատարանի դատական ակտը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի նախկին որոշումներին հակասելու հիմքով ստորադաս դատարանի դատական ակտի վերանայումը ոչ բոլոր դեպքերում է հանգեցնում դատական ակտի բեկանման: Բացառիկ դեպքերում, երբ առկա է իրավական տարբերակման կամ դիրքորոշման փոփոխության արդարացված և օբյեկտիվ անհրաժեշտություն, Վճռաբեկ դատարանն անփոփոխ է թողնում ստորադաս դատարանի դատական ակտը՝ փոփոխելով իր նախկին դիրքորոշումները:

13. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկին որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների փոփոխությունը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում պետք է բխի օրենքի միատեսակ կիրառության ապահովման բովանդակությունից: Մասնավորապես, օրենքի միատեսակ կիրառությունն օրենքի իմաստի բացահայտումն է մեկնաբանման տարբեր հնարքների միջոցով, հետևաբար, օրենքի յուրաքանչյուր փոփոխություն, որը հանգեցնում է օրենքի իմաստի փոփոխության, ենթադրում է մաս օրենքի միատեսակ կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխություն:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների փոփոխության հիմք կարող են հանդիսանալ իրավունքի զարգացումը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորումը, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային-իրավական ակտերի և ՀՀ Սահմանադրության պահանջների ներդրումը իրավակիրառ պրակտիկա, դրանց նորմերի և սկզբունքների անմիջական գործողությունն ապահովելը և այլն:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը դիմողի ներկայացուցչի բողոքը մերժել է՝ հիմք ընդունելով Վճռաբեկ

դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը վերացրել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ բավարարելով դիմողի ներկայացուցչի բողոքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները մեկնաբանելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերացնելով Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը համապատասխանող՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ չի հիմնավորել, որ Առաջին ատյանի դատարանի կողմից կիրառված՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը:

*II. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը.*

16. Վճռաբեկ բողոքում բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու դեպքում կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (...):

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հարողած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով (...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները և ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանի կողմից մեկնաբանվել են Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ, որտեղ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանդումներ, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

(...) ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

(...) շարադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը» (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշումը, կետեր 20-21-րդ):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ հիմք ընդունելով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դիմողի բողոքի քննության և լուծման համար կիրառելի է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը, այլ դրա համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի որոշման վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանը դիմողի ներկայացուցչի բողոքը բավարարել է և Առաջին ատյանի դատարանի որոշումը վերացրել՝ ի թիվս այլոց ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

19. Սույն որոշման 17-րդ կետում և համապատասխանաբար նաև Հ.Հարությունյանի գործով կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը չի պահպանել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը: Վերաքննիչ դատարանը դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական

վերահսկողության իր լիազորությունների շրջանակից, ինչի արդյունքում թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 92-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածների խախտումներ:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 10-15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, վերացնելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը, Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ անտեսել է Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշման հիմնավորումները՝ առանց ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորելու, որ դրանք կիրառելի չեն սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքի հեղինակի փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պետք է ղեկավարվեր տվյալ իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմով, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով, այլ ոչ թե նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով, և որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կիրառման արդյունքում կայացված Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշմանը:

21. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ հիմնավոր է բողոքի հեղինակի փաստարկն այն մասին, որ սույն գործով քննարկվող ավտովթարի փաստի առթիվ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ավտովթարի արդյունքում ավտովարորդ Լ.Բաբայանին, ուղևորներ Մ.Դուկասյանին և Ն.Խաչատրյանին պատճառվել են թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, որի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները բացակայում են, ուստի վարույթն իրականացնող մարմինը իրավացիորեն է որոշում կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, իսկ Առաջին աստիճանի դատարանն էլ իրավացիորեն մերժել է այդ որոշման դեմ բերված բողոքը:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Հիմք ընդունելով սույն որոշման 10-21 կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը



## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Լուսինե Բաբայանի ներկայացուցիչ Արմեն Սողոմոնյանի բողոքը բավարարելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

6.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԿԴ/0094/01/09

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

*մասնակցությամբ տուժողի ներկայացուցիչ՝* Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ տուժողներ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ալքրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել. ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝

ազատազրկման 6 տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 64.142.000 ՀՀ դրամից, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 8 տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենդաչուի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 12 տարի ժամկետով՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 64.142.000 ՀՀ դրամից, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ:

Անդրադառնալով հարուցված քաղաքացիական հայցերին՝ Առաջին ատյանի դատարանը որոշել է.

Քաղաքացիական հայցվոր «Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության հայցը բավարարել՝ ամբաստանյալ Կ.Ստենդաչուից հոգուտ տուժող «Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերության բռնագանձել 6.400.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Քաղաքացիական հայցվոր «Ակրա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ» ՓԲ ընկերության հայցը բավարարել՝ ամբաստանյալ Կ.Ստենդաչուից հոգուտ տուժող «Ակրա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 1.500.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Քաղաքացիական հայցվոր «Արցախբանկ» ՓԲ ընկերության հայցը բավարարել՝ ամբաստանյալ Կ.Ստենդաչուից հոգուտ տուժող «Արցախբանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 2.270.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Քաղաքացիական հայցվոր «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության հայցը բավարարել մասնակիորեն. ամբաստանյալ Կ.Ստենդաչուից հոգուտ տուժող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 15.287.000 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, իսկ մնացած մասով հայցը մերժել:

Առաջին ատյանի դատարանը որոշել է նաև իրեղեն ապացույցներ ճանաչված 25.200 ելրոն և 4.040.000 ՀՀ դրամ գումարները, բջջային հեռախոսները և ակնոցը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, որպես ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք, բռնագրավել:

Դատավճռով որոշվել է նաև ամբաստանյալ Կ.Ստենդաչուից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 477.300 ՀՀ դրամ գումար՝ որպես դատական ծախսեր:

2. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունվարի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Կ.Ստենդաչուի, նրա պաշտպան Անժելա Հոբոսյանի և մեղադրող Հովսեփ Մարգարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Կոռնել Կոնստանտին Ռոմիկայի Ստենդաչուի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

3. Վճարելի դատարանի 2010 թվականի մարտի 23-ի որոշմամբ ամբաստանյալ Կ.Ստենդաչուի և վերջինիս պաշտպան Ա.Հոբոսյանի վճարելի բողոքները վերադարձվել են:

4. Դատավճռի կատարման փուլում քաղաքացիական հայցվորներ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչները դիմումներ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ քաղաքացիական հայցի մասով դատավճռում առկա անհատակությունը մեկնաբանելու խնդրանքով:

Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով անհատակությունը մեկնաբանելու վերաբերյալ վերոնշյալ դիմումները, 2010 թվականի հունիսի 3-ին որոշում է կայացրել դատավճռի անհատակությունը մեկնաբանելու վերաբերյալ:

5. Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի որոշման դեմ քաղաքացիական հայցվորներ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վերաքննիչ բողոքները Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ մերժվել են:

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ քաղաքացիական հայցվորներ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վճարել բողոքները Վճարելի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ վերադարձվել են՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ:

6. «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչները 2011 թվականի մարտի 2-ին դիմում են ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳՌ-983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

7. «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչները 2011 թվականի հոկտեմբերի 14-ին նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ բողոք են ներկայացրել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռի դեմ՝ խնդրելով քաղաքացիական հայցի մասով վերանայել այն:

Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

8. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ տուժողների «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչները բերել են վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2012 թվականի հունվարի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները.**

9. Բողոքի հեղինակները վերաքննիչ բողոքում խնդրել են Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը (այդ դատավճռի անհատակությունը մեկնաբանելու մասին նույն դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի որոշմամբ տրված մեկնաբանությամբ) մասնակիորեն բեկանել՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն առաջնահերթ կարգով տուժողներին վերադարձնելու երաշխիքներ չնախատեսելու պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 11, էջ 6-15):

10. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Ինչպես երևում է գործի նյութերից, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը, այդ դատավճռի անհատակությունը մեկնաբանելու մասին որոշումը բողոքարկվել են վերաքննիչ դատարան և այդ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանը կայացրել է համապատասխան որոշումներ, որոնք մտել են օրինական ուժի մեջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝

1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ Վճարելի դատարանը:

Ելնելով վերոգրյալներից և նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի հեղինակների կողմից մատնանշված դատական ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանը կայացրել է համապատասխան որոշումներ, որոնք մտել են օրինական ուժի մեջ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայում է Վճարելի դատարանը, գտնում են, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը պետք է մերժել» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, էջ 37-43):

## **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակների պնդմամբ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի դատական ակտն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված,

կայացվել է ՀՀ սահմանադրության, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի խախտումներով:

12. Ի հիմնավորումն վերոնշյալ պնդման՝ բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման մեջ արձանագրված է, թե Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը բողոքարկված է եղել վերաքննության կարգով, ուստի նոր հանգամանքով վերանայման խնդրանքը պետք է ներկայացվեր Վճարելի դատարան: Մինչդեռ, բողոք բերած անձանց համար իրավական հետևանքներ առաջացրել է Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառվել է հենց այդ դատական ակտով: Այս կապակցությամբ բողոքաբերները վկայակոչել են ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 2011 թվականի մարտի 18-ի ՍԴԴԿՈ/1-9 որոշումը, ըստ որի՝ «դիմողների նկատմամբ իրավական հետևանքներ առաջացրել է 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը, իսկ մնացած դատական ակտերը ուղղված են նշյալ դատավճռի մեկնաբանմանը»:

Բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկումը չի նշանակում դատավճռի բողոքարկում: Անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ որոշման օրինակաչության և հիմնավորվածության դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կարող բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քանի որ կխախտվի դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու օրենսդրական պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները գտել են, որ վերաքննության կարգով բողոքարկված է եղել միայն Առաջին ատյանի դատարանի դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ 2010 թվականի հունիսի 3-ի որոշումը, այլ ոչ թե վերոնշյալ դատավճիռը: Հետևաբար, դատավճիռը բողոքարկված չլինելու պարագայում անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու բողոքը պետք է ներկայացվեր ոչ թե Վերաքննիչ, այլ Վճարելի դատարան:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակները խնդրել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

14. Մույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված՞ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դատավճիռը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են [այն դեպքում, երբ] Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրափրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ «(...) դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրափրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»:

Վերոշարադրյալ իրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ նոր հանգամանքի հիմքով վերանայման ենթակա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով քաղաքացիական հայցվորների հայցերը բավարարվել են: Վերոնշյալ դատավճռով որոշվել է նաև իրեղեն ապացույց ճանաչված 25.200 եվրոն և 4.040.000 ՀՀ դրամ գումարները, բջջային հեռախոսները և ակնոցը՝ որպես ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույք, բռնագրավել: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը քաղաքացիական հայցվորների կողմից չի բողոքարկվել:

Դատավճռի կատարման փուլում քաղաքացիական հայցվորները դիմումներ են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ քաղաքացիական հայցի մասով դատավճռում առկա անհստակությունը մեկնաբանելու խնդրանքով: 2010 թվականի հունիսի 3-ին Առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ որոշում, որը քաղաքացիական հայցվորները բողոքարկել են վերաքննության կարգով: Վերաքննիչ դատարանի 2010 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ քաղաքացիական հայցվորների վերաքննիչ բողոքները մերժվել են:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ քաղաքացիական հայցվորների կողմից բերված վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ վերադարձվել են:

2011 թվականի մարտի 2-ին քաղաքացիական հայցվորները դիմում են ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու վերաբերյալ: ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 12-ին որոշել է ՀՀ քրեական

օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Քաղաքացիական հայցվորները 2011 թվականի հոկտեմբերի 14-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել՝ խնդրելով նոր հանգամանքի հիմքով, քաղաքացիական հայցի մասով վերանայել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը: Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ քաղաքացիական հայցվորների վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (տե՛ս սույն որոշման 1-10-րդ կետերը):

17. Սույն որոշման 15-րդ կետում շարադրված և վերլուծված իրավական դրույթների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ բողոքաբերների խնդրանքը մերժելիս Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկվել է ամբաստանյալի, պաշտպանի և մեղադրողի կողմից, իսկ քաղաքացիական հայցվորները վերաքննության կարգով բողոքարկել են ոչ թե Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճիռը, այլ դրանում առկա անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ նույն դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի որոշումը: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ թեև դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը ածանցյալ է սույն գործով նույն դատարանի կողմից կայացված դատավճռից այն առումով, որ դրանում մեկնաբանված է դատավճռի բովանդակությունը, սակայն, ի տարբերություն դատավճռի, անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ որոշման մեջ սահմանված չեն քաղաքացիական հայցվորների իրավունքները և պարտականությունները:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը քաղաքացիական հայցի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման իրավաչափության մասով Վերաքննիչ դատարան բողոքարկված չի եղել: Այլ կերպ ասած, բողոքաբերների կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված խնդրանքը վերաբերել է մի հարցի, որը, լուծված լինելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտով, բողոքարկված և վերստին քննված չի եղել վերադաս դատական ատյանի կողմից, ուստի, տուժողներն իրավամբ նոր հանգամանքով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը վերանայելու վերաբերյալ բողոքը ներկայացրել են Վերաքննիչ և ոչ թե Վճարելի դատարան:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ վերաքննիչ բողոքը վարույթ



ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ տուժողներ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին 2011 թվականի նոյեմբերի 14-ի դատական ակտով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերոնշյալ հանգամանքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմաճանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Տուժողներ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

7.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՔԲԴ/0205/01/08**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախազահուրթյամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ներկայացուցիչ՝</i>	Ա.ՋԵՅՆԱԼՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճարելի դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշման դեմ Արամ Բաբկենի Բարեղամյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի վճարելի բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 235-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, 2008 թվականի մարտի 2-ին՝ թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Քննիչի նույն օրվա որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին:

2008 թվականի մարտի 10-ի որոշմամբ Ա.Բարեղամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

2008 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ Ա.Բարեղամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քննիչի նույն օրվա որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից Ա.Բարեղամյանի վերաբերյալ նյութերն անջատվել են առանձին վարույթ:

2008 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Ա.Բարեղամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի ապրիլի 25-ին Ա.Բարեղամյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի քրեական դատարան (այսուհետ նաև՝ Քրեական դատարան):

2. Քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Ա.Բարեղամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ա.Բարեղամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով պատիժները մասնակի գումարելու միջոցով Ա.Բարեղամյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալի պաշտպան Հ.Բաղդասարյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաբնիչ քրեական դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժել է՝ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ:

4. Վճարելի դատարանի 2009 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ Ա.Բարեղամյանի պաշտպան Վ.Ջուռնաչյանի վճարելի բողոքը վերադարձվել է:

5. 2011 թվականի հունվարի 31-ին Ա.Բարեղամյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Ղազարյանը բողոք են բերել՝ խնդրելով նոր երևան եկած կամ նոր հանգամանքի՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի ՄԳՈ-923 որոշման հիման վրա վերանայել Վճարելի դատարանի 2009 թվականի մայիսի 7-ի որոշումը:

Ա.Բարեղամյանի ներկայացուցիչների բողոքը Վճարելի դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշմամբ վերադարձվել է:

6. Ա.Բարեղամյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանը և Ա.Ղազարյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԳՈ-943 որոշումը, որով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան

տրված բովանդակության մասով ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 2012 թվականի հունվարի 31-ին բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 13-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 9-ի ՍԳՌ-923 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը՝ այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

8. Վճռաբեկ դատարանը 2011 թվականի մարտի 4-ի որոշմամբ արձանագրել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել ամբողջությամբ կամ մի մասով:

Ինչպես երևում է «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշումից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր չի ճանաչվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին համապատասխան Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը նոր հանգամանքի հիման վրա Վճռաբեկ դատարանի դատական ակտը վերանայելու հիմք չէ»:

9. ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավոր

յություն չի ընձեռում, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)՝ որոշման իրապարակման պահին ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի համալիր լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ սահմանադրական դատարանն այդ դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2011 թվականի նոյեմբերի 1-ը:

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերները փաստարկել են, որ Վճարելի դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողնվել Սահմանադրությանը հակասող՝ իրենց վստահորդի՝ Ա.Բարեղամյանի արդար դատաքննության իրավունքը խախտող իրավանդորդներ պարունակող դատական ակտը:

Բողոքի հեղինակները, որպես նոր հանգամանք վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-943 որոշումը, խնդրել են հարուցել ՀՀ վճարելի դատարանի 2011 թվականի մարտի 4-ի «Վճարելի բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման վարույթ, բեկանել այդ որոշումը, վարույթ ընդունել և քննել «Վճարելի բողոքը վերադարձնելու մասին» 2009 թվականի մայիսի 7-ի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքով վերանայելու պահանջի մասին 2011 թվականի հունվարի 31-ի բողոքը:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված հարցը հետևյալն է. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՈ-943 որոշումն արդյոք Վճարելի դատարանի 2011 թվականի մարտի 4-ի դատական ակտը վերանայելու հի<sup>օ</sup>նք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի կապակցությամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել *Ա.Հարությունյանի* վերաբերյալ որոշման մեջ: Նշված որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

(...)

Իսկ դատարանում գործի քննությունը սկսում է այն պահից, երբ անձը համապատասխան դատավարական փաստաթուղթը (բողոքը, միջնորդագիրը) ներկայացնում է դատարան (տե՛ս Աշոտ Հարությունյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

13. ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ 943 որոշման հիման վրա 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխություն է տեղի ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում: Փոփոխության արդյունքում վերոնշյալ դրույթը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են [այն դեպքում, երբ] Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Սույն գործով Ա.Բարեղամյանի ներկայացուցիչները նոր հանգամանքի հիմքով վճարելի բողոքը դատարան են ներկայացրել 2012 թվականի հունվարի 31-ին, որի հիման վրա Վճարելի դատարանը 2012 թվականի մարտի 13-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին:

14. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտը Վճարելի դատարանում վերանայելու ժամանակ Վճարելի դատարանը պետք է ղեկավարվի 2011 թվականի նոյեմբերի 21-ին փոփոխված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, քանի որ Վճարելի բողոքը ներկայացնելու ժամանակ արդեն իսկ գործում էր հիշյալ նորմը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վճարելի դատարանը 2011 թվականի մարտի 4-ի որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշումից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր չի ճանաչվել՝ Վճարելի դատարանը եզրակացրել է, որ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը նոր հանգամանքի հիման վրա Վճարելի դատարանի դատական ակտը վերանայելու հիմք չէ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԳՌ-943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ 19-րդ և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Վերոնշյալ որոշումից երևում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2011 թվականի նոյեմբերի 1-ը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշումը նոր հանգամանքով վերանայելու համար՝ Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 13-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 9-ի ՄԳՈ-923 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասը՝ այդ որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 9-ի ՄԳՈ-923 որոշման եզրափակիչ մասի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը դրանում չի բացահայտել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը և չի գտել, որ այդ դրույթները կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

17. Սույն որոշման 13-14-րդ և 16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը բավարարման ենթակա չէ:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ, 426<sup>1</sup>-րդ, 426<sup>2</sup>-րդ, 426<sup>4</sup>-րդ, 426<sup>7</sup>-րդ և 426<sup>9</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Մ Ց**

1. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 4-ի որոշման դեմ Արամ Բարկենի Բարեղամյանի ներկայացուցիչներ Ա.Ջեյնալյանի և Ա.Ղազարյանի բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*                      *ստորագրություն*  
*Դատավորներ՝*                    *ստորագրություններ*

8.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0118/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>մախազահությունը՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությունը դատավորներ՝</i>	Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությունը՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությունը ամբաստանյալ՝</i>	Ա.ԹՐՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անուշավան Արամի Թորոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ մեղադրող Հ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի մայիսի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62203311 քրեական գործը:

2011 թվականի մայիսի 10-ի որոշմամբ Անուշավան Թորոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հունիսի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):



2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի դատավճռով Անուշավան Թորոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերադրակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով: Ա.Թորոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և Ա.Թորոսյանն ազատվել է պատիժը կրելուց:

3. Մեղադրող Հ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 2-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Հ.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ մեղադրող Հ.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Ա.Թորոսյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության բաժնի ոստիկանության վաշտի 4-րդ դասակի 1-ին ջոկի ոստիկան, ոստիկանության սերժանտ Ա.Թորոսյանը 2011 թվականի ապրիլի 14-ին, ժամը 20<sup>30</sup>-ի սահմաններում, մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանի ոստիկանական պահակակետում ծառայություն իրականացնելիս կենցաղային բնույթի հարցերի շուրջ վիճել է կնոջ եղբոր՝ նույն բաժնի ոստիկան Մարգիս Ոսկանյանի և մյուս եղբայրների՝ Ռազմիկ Ոսկանյանի և Նարեկ Մուրադյանի հետ, որի ընթացքում մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով հարվածել է Ս.Ոսկանյանի ձախ ազդրին ու պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 122):

6. Առաջին ատյանի դատարանը Ա.Թորոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված արարքը վերադրակել է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հաստատված համարելով հետևյալը. «(...) [Պահակակետում] ամբաստանյալ Անուշավան Թորոսյանի ընտանեկան հարցերի շուրջ գրույցի ընթացքում վիճարանություն է առաջացել ամբաստանյալ Ա.Թորոսյանի և տուժող Սարգիս Ոսկանյանի միջև, որի ընթացքում տուժող Ս.Ոսկանյանը ոտքով հարվածել, վայր է գցել ամբաստանյալ Ա.Թորոսյանին և շարունակել է ոտքերով հարվածել նրան: Ամբաստանյալ Ա.Թորոսյանն այդ հարվածների հետևանքով վնասվածքներ է ստացել, որոնք արնահոսել են և արյան հետք են թողել տուժող Ս.Ոսկանյանի հագուստի՝ բաճկոնի առաջնային մակերեսի և սվիտրի առաջնային մակերեսի վրա: Ամբաստանյալ

Ա.Թորոսյանը, գետնին ընկած վիճակում գրպանից հանելով իր մոտ պահվող դանակը, անկանոն թափահարել է այն և հարվածել Ս.Ոսկանյանի ձախ ազդրի ստորին երրորդական հետին մակերեսին՝ պատճառելով նրա առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Տուժող Ս.Ոսկանյանը վայր է ընկել գետնին և կորցրել է գիտակցությունը, իսկ նրա եղբայր Ռ.Ոսկանյանը և ազգական Ն.Մուրադյանը ռետինե մահակով, ինչպես նաև ձեռքերով և ոտքերով շարունակել են ծեծի ենթարկել ամբաստանյալ Ա.Թորոսյանին, որից հետո հեռացել են: Ա.Թորոսյանին պատճառվել է թեթև մարմնական վնասվածք՝ առողջության կարճատև քայքայումով: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 71):

7. Առաջին ատյանի դատարանը ամբաստանյալ Ա.Թորոսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից վերադարձնել է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ ապացուցվել է, որ 1. Կռվի նախահարձակը եղել է տուժողը: 2. Ա.Թորոսյանը տուժողին դանակով հարվածել է նրա կողմից հակաօրինական արարք կատարելու ընթացքում, երբ տուժողը ծեծի է ենթարկել ու մարմնական վնասվածք է պատճառել ամբաստանյալին: 3. Ա.Թորոսյանը տուժողին մարմնական վնասվածք է պատճառել նրա հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով՝ պաշտպանվելով իր առողջության նկատմամբ իրականացվող ինտենսիվ ոտնձգությունից: Վերը նշվածներն ապացուցում են, որ ամբաստանյալի նկատմամբ իրականացված ոտնձգությունը եղել է հանրորեն վտանգավոր, առկա և իրական: Ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը, և նա պաշտպանությամբ վնաս է պատճառել ոչ թե երրորդ անձի, այլ իրեն ծեծի ենթարկող և մարմնական վնասվածք պատճառող տուժողին: (...) տուժողի կողմից ձեռքերով և ոտքերով ամբաստանյալին հարվածներ հասցնելու պարագայում ամբաստանյալի կողմից դանակով տուժողին ձախ ազդրի շրջանում հարվածելը և ծանր մարմնական վնասվածք պատճառելը չի համապատասխանում տուժողի ոտնձգության բնույթին և վտանգավորությանը, որպիսի հանգամանքը ամբաստանյալի համար մինչև տուժողին դանակահարելն ակնհայտ է եղել, քանի որ տուժողի կողմից դանակ կամ մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված առարկա չի օգտագործվել: Հետևաբար ամբաստանյալը տուժողի առողջությանը ծանր մարմնական վնասվածք է պատճառել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 74):

8. Վերաքննիչ դատարանը, վերլուծության և գնահատության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ. « (...) դատարանի եզրահանգումներն այն մասին, որ ապացուցված չէ ամբաստանյալ Ա.Թորոսյանի կողմից դիտավորությամբ մեկ ուրիշի կյանքի համար վտանգավոր ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու հանգամանքը, և որ նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ մասից պետք է վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմնավոր են և բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից ու տվյալներից: (...) Դատարանի կողմից ամբաստանյալ Ա.Թորոսյանի արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական՝ կիրառվել է քրեական այն օրենքը, որը ենթակա է եղել կիրառման: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 132, 133):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը փաստարկել է, որ առկա են վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

10. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատական ատյանները Ա.Թորոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցներն իրենց համակցությամբ սխալ վերլուծելու, համադրելու և գնահատելու արդյունքում թույլ են տվել դատական սխալ: Գործի փաստական հանգամանքերի մասին դատական ակտերում շարադրված դատարանների հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքերին, դատարանները չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը, որը ենթակա էր կիրառման, սխալ են մեկնաբանել քրեական օրենքը, կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, ինչը հանգեցրել է անօրինական և չիմնավորված դատական ակտերի կայացմանը:

Վկայակոչելով սույն գործով նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Թորոսյանի և տուժող Ս.Ոսկանյանի տված ցուցմունքները՝ բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալի կողմից տուժողին դանակով հարված հասցնելու պահին ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի («Անհրաժեշտ պաշտպանությունը») իմաստով իրական ոտնձգություն առկա չի եղել, ամբաստանյալի անձին, հասարակության, պետության շահերին որևէ վտանգ չի սպառնացել:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն բողոքը վարույթ ընդունելու հիմքը օրենքի, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի («Առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ») միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունն է:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Թորոսյանի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

14. *Ա.Հակոբյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունը իրավաչափ և հետևաբար՝ արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

- ա) ոտնձգության հանրային վտանգավորությունը.
- բ) ոտնձգության առկայությունը.
- գ) ոտնձգության իրական լինելը,
- դ) վտանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին.
- ե) վնաս հասցնելը միայն ոտնձգողին.
- զ) պաշտպանության համարժեքությունը ոտնձգությանը:

(...)

Անհրաժեշտ պաշտպանության համարժեքության գնահատման և որպես արդյունք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման համար անհրաժեշտ է գնահատել ոտնձգության վտանգավորության աստիճանի և պաշտպանության միջև համապատասխանությունը:

Օրենքը չի պահանջում, որ պաշտպանվողը կիրառի ոտնձգողի կողմից կիրառվող միջոցներին հավասարագոր միջոցներ: Պաշտպանվողը կարող է գործադրել նաև առավել արդյունավետ միջոցներ:

Ոտնձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության խնդիրը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

- ա) պաշտպանվող բարիքի արժեքավորությունը և այն վնասի չափը, որ կարող էր հասցվել դրան,
- բ) ոտնձգության ինտենսիվությունը ու հանկարծակիությունը,
- գ) պաշտպանվողի և ոտնձգողի ֆիզիկական հնարավորությունները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական ուժը և այլն),
- դ) ոտնձգողների և պաշտպանվողների քանակը,
- ե) ոտնձգության իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն» (տե՛ս Արտյոմ Նորայրի Հակոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշման 27-28-րդ կետերը):

15. Չարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոտնձգության բնույթն ու վտանգավորությունը որոշվում են ոտնձգության օբյեկտի արժեքավորությամբ, ոտնձգության ինտենսիվությամբ, պաշտպանվողի և ոտնձգողի ֆիզիկական հնարավորություններով, նրանց քանակով, ոտնձգության իրադրությամբ և այլն: Ուստի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ առկա է ակնհայտ

(խիստ, էական) անհամապատասխանություն ունեցողությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև:

Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով խոսքը սպառնացող և պատճառվող վնասների միջև առկա խիստ (էական) անհամապատասխանության մասին է: Այլ կերպ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ո՛չ ոտնձգության բնույթից և վտանգավորությունից, ո՛չ էլ իրադրությունից:

Վճարելի դատարանը հարկ է համարում նշել նաև, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների առկայության կամ բացակայության հարցի քննարկման համար առաջին հերթին պետք է պարզել անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայության հարցը: Այլ կերպ՝ անհրաժեշտ է առաջին հերթին պարզել ոտնձգության և պաշտպանության առկայության, ապա նոր միայն դրանց արդյունքում պատճառված վնասների համապատասխանության հարցը:

16. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման սուբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով:

Անհրաժեշտ պաշտպանության վիճակում ուղղակի դիտավորությամբ գործելու պարագայում պաշտպանվողը՝

ա) գիտակցում է, որ ոտնձգությունից կարելի է պաշտպանվել ոտնձգողին նվազ ծանր վնաս պատճառելով,

բ) կանխատեսում է ոտնձգողին վնաս պատճառելու անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը,

գ) ցանկանում է վերոնշյալ հետևանքի առաջացումը:

Անհրաժեշտ պաշտպանության վիճակում անուղղակի դիտավորությամբ գործելու պարագայում պաշտպանվողը՝

ա) գիտակցում է, որ ոտնձգությունից կարելի է պաշտպանվել ոտնձգողին նվազ ծանր վնաս պատճառելով,

բ) կանխատեսում է ոտնձգողին վնաս պատճառելու հնարավորությունը,

գ) գիտակցաբար թույլ է տալիս վերոնշյալ հետևանքի առաջացումը կամ անտարբեր է դրա առաջացման նկատմամբ:

17. Սույն գործով ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, որ ամբաստանյալ Ա.Թորոսյանի և տուժող Ս.Ոսկանյանի միջև առաջացած վիճարանության ընթացքում տուժող Ս.Ոսկանյանը ոտքով հարվածել, վայր է գցել ամբաստանյալ Ա.Թորոսյանին և ընկած վիճակում շարունակել է ձեռքերով և ոտքերով հարվածել նրան: Ամբաստանյալ Ա.Թորոսյանը, գետնին ընկած վիճակում գրպանից հանելով իր մոտ պահվող դանակը, հարվածել է Ս.Ոսկանյանի ձախ ազդրի ստորին երրորդական հետին մակերեսին՝ նրա առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Տուժող Ս.Ոսկանյանը վայր է ընկել գետնին և կորցրել գիտակցությունը, իսկ նրա եղբայր Ռ.Ոսկանյանը և ազգական Ն.Մուրադյանը ռետինե մահակով, ինչպես նաև ձեռքերով և ոտքերով շարունակել են ծեծի ենթարկել ամբաստանյալ Ա.Թորոսյանին, որից հետո հեռացել են:

Մեջբերված փաստական հանգամանքներից դատարանները հետևություն են արել այն մասին, որ ամբաստանյալի նկատմամբ իրականացված ոտնձգությունը եղել է հանրորեն վտանգավոր, առկա և իրական: Ամբաստանյալի գործողություններն ուղղ-

ված են եղել իր շահերի պաշտպանությանը, որի ընթացքում վնաս է պատճառվել ամբաստանյալին ծեծի ենթարկող անձին՝ տուժող Ս.Ոսկանյանին:

Վերոգրյալի հետ մեկտեղ դատարաններն արձանագրել են, որ տուժողի կողմից ձեռքերով և ոտքերով ամբաստանյալին հարվածներ հասցնելու պարագայում ամբաստանյալի կողմից դամակով տուժողին ձախ ազդրի շրջանում հարվածելը և ծանր մարմնական վնասվածք պատճառելը չի համապատասխանում տուժողի ոտնձգության բնույթին և վտանգավորությանը, որպիսի հանգամանքը ամբաստանյալի համար մինչև տուժողին դանակահարելն ակնհայտ է եղել, քանի որ տուժողի կողմից դանակ կամ մարմնական վնասվածք պատճառելու համար հարմարեցված առարկա չի օգտագործվել (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում և համապատասխանաբար նաև *Ա.Հակոբյանի* վերաբերյալ որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ *Ա.Թորոսյանի* արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն են բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

19. Հիմք ընդունելով սույն որոշման 12-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Անուշավան Արամի Թորոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*                    *ստորագրություն*  
*Դատավորներ՝*                *ստորագրություններ*

9.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏԳ/0088/01/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍՏՏԻՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Կ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ

2012 թվականի մարտի 30-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գարիկ Նորիկի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Ղազարյանի և նրա պաշտպան Կ.Ղալումյանի վճարելի բողոքները,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի մարտի 11-ին հարուցվել է թիվ 38101444 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2011 թվականի մայիսի 10-ի որոշմամբ Գարիկ Նորիկի Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի մայիսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 22-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Գարիկ Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: Վերոնշյալ դատավճռով Գ.Ղազարյանը գրկվել է նաև որսորդությամբ զբաղվելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով նշանակված պատժին լրիվ գումարվել է նախորդ՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 19-ի դատավճռով նշանակված պատժը՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը, և Գ.Ղազարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Գ.Ղազարյանը գրկվել է որսորդությամբ զբաղվելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 22-ի դատավճռով դատապարտվել են նաև Դ.Մնացականյանը, Ա.Ենգիբարյանը, Թ.Մնացականյանը:

Դատավճռով որոշվել է նաև ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել, և ամբաստանյալներ Դ.Մնացականյանից, Ա.Ենգիբարյանից, Թ.Մնացականյանից և Գ.Ղազարյանից համապարտության կարգով հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված նյութական վնասի փոխհատուցում:

3. Ամբաստանյալներ Գ.Ղազարյանի և Ա.Ենգիբարյանի վերաբննիչ բողոքների քննության արդյունքում Վերաբննիչ դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ վերաբննիչ բողոքները մերժել է, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաբննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ամբաստանյալ Գ.Ղազարյանը և նրա պաշտպան Կ.Ղալումյանը:

2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ վճարելի դատարանն ամբաստանյալ Գ.Ղազարյանի և նրա պաշտպան Կ.Ղալումյանի վճարելի բողոքներն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքների պատասխան չի ներկայացվել:

### **Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Գ.Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. 2011 թվականի մարտի 5-ին ապօրինի որս կատարելու նպատակով Գարիկ Ղազարյանը, նախնական համաձայնության գալով Իջևան քաղաքի բնակիչներ Դ.Մնացականյանի, Թ.Մնացականյանի, Տավուշի մարզի Գետահովիտ գյուղի բնակիչ Ա.Ենգիբարյանի հետ, գնացել է Իջևան քաղաքի «Գոշավան» երկաթգծի կայարանի հարակից տարածքի «Պոպոբնուտ» կոչվող անտառամաս, կազմակերպել շուրջկալ, իսկ Դ.Մնացականյանն իր մոտ պահվող, համապատասխան թույլտվությամբ տրված «ՄՈ-27» տեսակի 12 մմ տրամաչափի որսորդական հրացանի օգտագործմամբ



սպանել և որսացել է որսն ամբողջովին արգելված երկու հատ վայրի այծյամ, որի հետևանքով պետությանը պատճառվել է ընդհանուր՝ 500.000 ՀՀ դրամի վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 131):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռում արձանագրված է, որ «Գարիկ Նորիկի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով 19.01.2011թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով առկա է 1.098.000 /մեկ միլիոն իննսուներեք հազար/ ՀՀ դրամի չափով նյութական վնաս, որը դեռևս հատուցված չէ» (տե՛ս Քրեական գործ, հատոր 2, էջ 110):

7. Վերաքննիչ դատարանը մերժել է ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) կիրառումը՝ պատճառաբանելով, որ «Գործի նյութերից երևում է, որ Գարիկ Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով 19.01.2011թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով առկա է 1.098.000 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, որը դեռևս հատուցված չէ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Ղազարյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշումը կիրառելի չէ, քանի որ նրա կողմից չի հատուցվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը» (տե՛ս Քրեական գործ, հատոր 2, էջեր 166-167):

8. Գործում առկա է թիվ 111010048985020 անդորրագիրը, որի համաձայն՝ 2011 թվականի հոկտեմբերի 10-ին Գարիկ Ղազարյանը «ՎՏԲ-Հայաստան» բանկի Իջևանի մասնաճյուղում Կենտրոնական գանձապետարանի թիվ 900005024063 հաշվեհամարին վճարել է 1.098.000 ՀՀ դրամ գումար (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 138):

9. Վերաքննիչ դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության ուսումնասիրությունից երևում է, որ մախրոդ կետում նշված անդորրագիրն ամբաստանյալ Գ.Ղազարյանը Վերաքննիչ դատարան է ներկայացրել 2011 թվականի հոկտեմբերի 12-ին, որն ուսումնասիրվել է դատական նիստի ընթացքում (տե՛ս դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչը՝ քրեական գործ, հատոր 2, էջ 163):

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբեր, ամբաստանյալ Գ.Ղազարյանը փաստարկել է, որ առկա է վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

11. Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է և անհիմն, կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Ի հիմնավորումն իր վերոնշյալ փաստարկի՝ բողոքաբերը պնդել է, որ Վերաքննիչ դատարանում դատական նիստի ժամանակ ինքն Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 19-ի դատավճռով սահմանված 1.098.000 ՀՀ դրամի չափով նյութական վնասը հատուցելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ՝ վճարման անդորրագրի բնօրինակ է ներկայացրել: Այդ փաստն արտացոլվել է դատական նիստի արձանագրության մեջ, ինչի հիման վրա մեղադրողը միջնորդել է իր նկատմամբ կիրառել Համաներման ակտը: Վերաքննիչ դատարանը, սակայն, առանց վերոնշյալ ապացույցը հետազոտելու և գնահատելու, իր վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ 2011 թվականի հունվարի 19-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված 1.098.000 ՀՀ դրամի չափով նյութական վնասը դեռևս հատուցված չէ:

Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը բացառող բավարար ապացույցի՝ վնասի հատուցումը հավաստող անդորրագրի առկայության, ինչպես նաև իր նկատմամբ Համաներման ակտը կիրառելու իրավական խոչընդոտների բացակայության պայմաններում Վերաքննիչ դատարանը շարունակել է քրեական գործի վարույթը՝ անտեսելով Համաներման ակտի պահանջը:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբեր, ամբաստանյալ Գ.Ղազարյանը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բեկանել, իր նկատմամբ կիրառել Համաներման ակտը և իր մասով գործի վարույթը կարճել:

13. Բողոքաբեր, ամբաստանյալ Գ.Ղազարյանի պաշտպան Կ.Ղալումյանը փաստարկել է, որ առկա են վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

14. Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական:

Իր վերոնշյալ պնդումը բողոքաբերը հիմնավորել է Առաջին ատյանի դատարանի դատավճռով սահմանված 1.098.000 ՀՀ դրամ նյութական վնասը հատուցված լինելու վերաբերյալ ամբաստանյալ Գ.Ղազարյանի կողմից ներկայացված փաստարկների հետ համընկնող փաստարկներով (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերոգրյալից բացի, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը՝ 2011 թվականի մայիսի 25-ից հետո գործող խմբագրությամբ, որը չպետք է կիրառել, քանի որ ամբաստանյալ Գ.Ղազարյանը սույն գործով որպես մեղադրյալ է ներգրավվել 2011 թվականի մայիսի 10-ին: Ըստ բողոք բերած անձի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի նոր խմբագրությամբ քրեական գործով վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը կախվածության մեջ է դրում պատճառված վնասի հատուցումից, հետևաբար վերացնում է ամբաստանյալ Գ.Ղազարյանի՝ այդ դրույթի նախկին խմբագրությամբ երաշխավորված իրավունքը՝ զրկելով նրան իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումից և պատժից:

խուսափելու իրական հնարավորությունից, ինչպես նաև էապես վատթարացնում է նրա դրությունը:

15. Վերագրյալի հիման վրա՝ բողոքաբեր, ամբաստանյալ Գ.Ղազարյանի պաշտպան Կ.Ղալումյանը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բեկանել, ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ կիրառել Համաներման ակտը և նրա մասով գործի վարույթը կարճել:

**Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Համաներման ակտի կիրառելիությունը*

16. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը հատուցված չլինելու պատճառաբանությամբ:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատժից ենթակա են ազատման առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձինք:

Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չի կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը:

18. Համաներման ակտին՝ որպես ինքնավար ինստիտուտի, ինչպես նաև համաներման ակտի կիրառելիության հետ կապված որոշ հարցերին Վճռարեկ դատարանն անդրադարձել է Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) Համաներումն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատվածությունը: Առանց համաներման ակտի գոյության օրենսգրքերի համապատասխան դրույթներն իրացվել չեն կարող:

(...)

Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չա-

փով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գագիկի Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշումը, կետ 16):

19. Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ Համաներման ակտն անձի նկատմամբ կիրառելի չէ բոլոր այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով այդ անձի վրա դրված է նյութական վնասը հատուցելու պարտականություն, և այդ պարտականությունը վերջինիս կողմից չի կատարվում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված սահմանափակման նպատակն է հանցագործությանը նյութական վնաս պատճառած անձանց շահագրգռել հատուցելու վերոնշյալ վնասը:

Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետից բխում է նաև, որ պատճառված վնասը հատուցելուց հետո Համաներման ակտի կիրառման սահմանափակումը վերանում է: Այլ կերպ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը հատուցելու հանգամանքը վերացնում է Համաներման ակտի կիրառման արգելքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հանցագործությանը պատճառված նյութական վնասը հատուցվել է, սակայն Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի վկայակոչմամբ վերոնշյալ ակտը չի կիրառվել, ապա դա հանգեցնում է անձի իրավունքների խախտման:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռում արձանագրված է, որ Գ.Ղազարյանի վերաբերյալ 2011 թվականի հունվարի 19-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով առկա է 1.098.000 (մեկ միլիոն ինսուսուր հազար) ՀՀ դրամի նյութական վնաս, որը դեռևս հատուցված չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 22-ի դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով ամբաստանյալ Գ.Ղազարյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով և տուգանքի 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Գ.Ղազարյանը զրկվել է որսորդությանը զբաղվելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը մերժել է ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը՝ պատճառաբանելով, որ Գ.Ղազարյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով առկա է 1.098.000 ՀՀ դրամի չափով նյութական վնաս, որը դեռևս հատուցված չէ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Գ.Ղազարյանը 2011 թվականի հոկտեմբերի 12-ի դատական նիստի ընթացքում ներկայացրել է անդորրագիր՝ հայտնելով, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 19-ի դատավճռով սահմանված 1.098.000 ՀՀ դրամը վճարել է: Այդ փաստաթուղթն ուսումնասիրվել է դատական նիստում և կցվել է քրեական գործին, սակայն Վերաքննիչ դատարանը

րանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ չի վերլուծվել և չի գնահատվել (տե՛ս սույն որոշման 7-9-րդ կետերը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Ապացուցման գործընթացի ինքնուրույն բաղադրատարրի՝ ապացույցների գնահատման հարցին Վճարելի դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ, որտեղ դիքթորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա: Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ամխազելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Գնահատման ենթակա են ինչպես ստացված տեղեկությունների բովանդակությունը, այնպես էլ աղբյուրները: Ապացույցների գնահատումը համապատասխան որոշումներում պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների ձևով՝ հիմնավորելով, թե ինչու որոշ ապացույցներ դրվել են որոշման հիմքում, իսկ մյուսները մերժվել են՝ ճանաչվելով ոչ հավաստի: (...)» (տե՛ս *mutatis mutandis* Մակար Ռազմիկի Հովհաննիսյանի և Աշոտ Վաղարշակի Մարտիրոսյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԳ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

22. Սույն որոշման 17-19-րդ կետերում և համապատասխանաբար նաև Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշման մեջ, ինչպես նաև սույն որոշման 21-րդ կետում և համապատասխանաբար նաև Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով և չգնահատելով ամբաստանյալ Գ.Ղազարյանի ներկայացրած անդորրագիրը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի խախտում:

Վերոնշյալ խախտման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է չհիմնավորված հետևության օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը Գ.Ղազարյանի կողմից հատուցված չլինելու հարցում և մերժել է Գ.Ղազարյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը:

23. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը հատուցված չլինելու պատճառաբանությամբ:

*II. Քրեադատավարական նորմի հետադարձ ուժը*

24. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Գ.Ղազարյանի նկատմամբ կիրառելի<sup>6</sup> էր արդյոք 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՕ-145-Ն օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացումը:

Վճռարեկ դատարանի կողմից վերոնշյալ հարցի քննարկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման՝ ժամանակի մեջ գործողության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում բարձրացված հարցի կապակցությամբ արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ դրույթի կիրառման պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

25. 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարվել է լրացում, համաձայն որի՝ «Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով [ընդունվել է համաներման ակտ] գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ:

2. Դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելն սկսված վարույթի վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի վերաբերյալ Վճռարեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել Ա.Հարությունյանի գործով որոշման մեջ, որտեղ ամրագրել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (...):

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմի գործողությանը, ապա այն տարածվում է այն դեպքերի վրա, երբ իրավահարաբերությունն առաջանալուց հետո օրենքը փոխվում է ի վնաս դատավարության մասնակիցների (...):» (տե՛ս Աշոտ Հարությունյանի գործով Վճռարեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

26. Ձարգացնելով Ա.Հարությունյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ժամանակի մեջ քրեադատավարական իրավունքի նորմերի գործողության առանձնահատկությունն այն է, որ գործի քննության կոնկրետ փուլում կիրառման ենթակա են տվյալ պահին գործող քրեադատավարական օրենքի դրույթները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ քրեադատավարական օրենք է գործել հանցանքը կատարելու պահին:

Ժամանակի մեջ քրեադատավարական օրենքի գործողության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնից միակ բացառությունը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով, որը վերաբերում է դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեադատավարական օրենքի հետադարձ ուժի արգելքին: Նշված արգելքի իմաստով սկսված վարույթի ընթացքում կիրառման ենթակա չէ դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը: Այլ կերպ՝ սկսված վարույթը շարունակվում է քրեադատավարական հին օրենքին համապատասխան, եթե նոր օրենքով վերացվում, սահմանափակվում են դատավարության մասնակցի իրավունքները կամ այլ կերպ վատթարացվում է նրա վիճակը:

27. Սույն որոշման նախորդ կետում վերլուծված բացառության կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակցի իրավունքները և կարգավիճակը կապված են քրեական դատավարության կոնկրետ փուլում որոշակի իրավահարաբերությունների առկայության հետ: Նշված իրավահարաբերությունների առկայությամբ պայմանավորված՝ քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցը ձեռք է բերում տվյալ փուլին բնորոշ կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ: Ուստի, քրեադատավարական օրենքի փոփոխության հետևանքով անձի իրավունքների սահմանափակման կամ նրա վիճակի վատթարացման մասին դատողություններ անելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե նախքան քրեադատավարական օրենքում փոփոխություն կատարելը անձն արդյոք օժտված է եղել որոշակի իրավունքով, որը սահմանափակվել է, կամ ունեցել է որոշակի կարգավիճակ, որը վատթարացել է օրենքի փոփոխության հետևանքով:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արգելվում է կիրառել դատավարական այն օրենքը, որը վերացնում կամ սահմանափակում է այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահին դատավարության մասնակցի ունեցած իրավունքը, ինչպես նաև այլ կերպ վատթարացնում է նրա՝ այդ պահին ունեցած կարգավիճակը:

28. Սույն գործով քննարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման վերլուծությունից երևում է, որ այն ուղղակիորեն կապված է համաներման ակտի հետ և սահմանում է դրա կիրառման արգելք: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ արգելվում է համաներման հիմքով գործի հարուցումը մերժել, վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվա-

ծում կատարված լրացումը փոխկապակցված է համաներման կոնկրետ ակտի հետ և առանց դրա կիրառվել չի կարող:

29. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 23-ին, «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» հրապարակվել է 2011 թվականի մայիսի 24-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 25-ին:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 26-ին:

Մեջբերված ժամկետների հետ համադրելով սույն որոշման 27-28-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է, և դրանից բխող իրավահարաբերությունները ծագել են «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Այլ կերպ՝ այն պահին, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում համաներման կիրառման համար սահմանվել է լրացուցիչ արգելք, Համաներման ակտը դեռևս ընդունված չի եղել, և դրա հետ կապված որևէ իրավահարաբերություն գոյություն չի ունեցել:

30. Հիմք ընդունելով սույն որոշման 25-29-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացումն ամբաստանյալ Գ.Ղազարյանի որևէ իրավունք չի սահմանափակել, ուստի անհիմն է նրա պաշտպանի բողոքի այն փաստարկը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), որ 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՕ-145-Ն օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացումը Գ.Ղազարյանի նկատմամբ կիրառվել չէր կարող:

31. Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման կիրառմամբ սույն գործի վարույթը կարճելու մասին պաշտպանի պնդմանը (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ քրեական գործերը ենթակա են կարճման, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որի համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Ղազարյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն, որի համար նախատեսված է ազատազրկում՝ առավելագույնը չորս տարի ժամկետով: Հետևաբար, անկախ նյութական վնասը հատուցված լինելու կամ չլինելու հանգամանքից, Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը տվյալ դեպքում կիրառելի չէ:

32. Սույն որոշման 16-23-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին



չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը և կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա՝ ամբաստանյալ Գ.Ղազարյանի՝ օրենքով երաշխավորված իրավունքից զրկելու ճանապարհով: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքները պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ի և մասի 2-րդ կետի հիման վրա Գ.Ղազարյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գարիկ Նորիկի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

10.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՄԳ/0204/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՈՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ դատախազ Գ.Մախլյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հունիսի 14-ին Գորիսի կայագործի զինվորական դատախազությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90502211 քրեական գործը:

2011 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ Սրապիոն Ազատի Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

2. 2011 թվականի հուլիսի 13-ին թիվ 90502211 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը արագացված դատական քննության կարգի կիրառմամբ 2011 թվականի օգոստոսի 3-ի դատավճռով ամբաստանյալ Սրապիոն Ազատի Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել կալանքի 3 (երեք) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով մասնակիորեն բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և իր նկատմամբ պատիժ նշանակել կալանք՝ 15 (տասնհինգ) օր ժամկետով կամ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, պայմանականորեն չկիրառել:

Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է, Ս.Հովհաննիսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասից վերադարձվել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 36-րդ հոդվածի հիմքով ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, իսկ նրա նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ Գորիսի կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Գ.Մախլյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

5. Մեղադրական եզրակացության համաձայն՝ «(...) Սրապիոն Ազատի Հովհաննիսյանը 2011թ. հունիսի 6-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, գումարտակի լվացարանում ձեռքերով ջուր է լցրել նույն գումարտակի ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Նազարի Ալավերդյանի վրա, վերջինս պահանջել է, որպեսզի Ս.Հովհաննիսյանը նման կատակ չանի, սակայն Ս.Հովհաննիսյանը չի ընդունել պահանջը և խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում սկսել է վիճաբանել Վ.Ալավերդյանի հետ, այնուհետև ծեծի ենթարկել՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով:

(...)

Վ.Ալավերդյանն իր ցուցմունքում նշել է նաև, որ դեպքից հետո իրեն է հանդիպել Ս.Հովհաննիսյանը, ներողություն խնդրել, ինքը ներել է նրան և որևէ բողոք չունի:

(...)

Այսինքն՝ Սրապիոն Ազատի Հովհաննիսյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով: (...)» (տե՛ս Քրեական գործ, էջեր 65, 67 և 68):

Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանը, ընդունելով տուժող Վ.Ալավերդյանին ծեծի ենթարկելու փաստը և զոջալով դրա համար՝ հայտնել է, որ դեպքը կատարվել է գումարտակի լվացարանում իրենց կարգի բերելու ժամանակ, ինքը կատակ անելով տուժողի վրա ջուր է լցրել, ինչը պատճառ է հանդիսացել միմյանց քաշքշելու և վիճաբանելու համար, որի ընթացքում խփել է Վ.Ալավերդյանին, սակայն իր արարքով նպատակ չի ունեցել խախտել կանոնագրքային կանոնները: Այդ պահին լվացարանում եղել են իրենք երկուսով, այլ զինձառայողներ չեն եղել: Դեպքից կես ժամ անց իրենք հաշտվել են, քանի որ ընկերներ են: Ամբաստանյալը հայտնել է նաև այն մասին, որ արարքը կատարելու պահին ո՛չ ինքը, ո՛չ տուժողը ծառայողական պարտականություններ կատարելիս չեն եղել և որևէ տեսակի վերակարգի մեջ չեն գտնվել (տե՛ս Քրեական գործ, էջ 179):

### **3. Վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

6. Ըստ բողոքաբերի, սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքը, այն է՝ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

7. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է նաև, որ դուրս գալով վերաքննիչ բողոքի սահմաններից՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ, 9-րդ, 10-րդ, 18-րդ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածների պահանջները:

8. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա հետևությունները հիմնված չեն ո՛չ ՀՀ գործող օրենսդրության, ո՛չ գործի հանգամանքների օբյեկտիվ և լիարժեք վերլուծության վրա: Վկայակոչելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 8-րդ հոդվածը՝ բողոքաբերը փաստարկել է, որ գործամասում գտնվելու ժամանակահատվածում զինձառայողները գտնվում են զինվորական ծառայողական պարտականությունների մեջ, ինչը ենթադրում է, որ ցանկացած հակաօրինական գործողություն, որը որևէ կերպ կապված է զինձառայողի զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ, հանդիսանում է անմիջական միջամտություն զինվորական ծառայության կարգին, հետևաբար ուղղակի կամ անուղղակի միտված է կարգապահական խախտման կամ հանցագործության հիմնական (կամ լրացուցիչ) օբյեկտին՝ զինվորական ծառայության կարգին: Բողոք բերած անձի գնահատմամբ զինձառայողի կողմից այլ զինձառայողի նկատմամբ կիրառված բռնությունը կամ պատվի և արժանապատվության ստորացումը և նվաստացումն անմիջականորեն կարող են ունենալ (ոտնահարում են) զինվորական ծառայության կարգը, քանի որ զինձառայողին հասցված ֆիզիկական վնասը զինվորական ստորաբաժանման մարտունակության և պաշտպանողականության անկման չափանիշ է՝ նկատի ունենալով, որ սպառնալիքի, պատվի և արժանապատվության նվաստացման կամ անմիջական ֆիզիկական ներգործության արդյունքում տուժողի մոտ առաջանում է ոչ միայն անձնական թերարժե-

քության, անվստահության զգացում, այլև ընդհանրապես փոխվում է իր վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ:

Վերոշարադրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ զինծառայողը, գտնվելով գորամասում, արդեն իսկ կրում և իրացնում է զինծառայողի կարգավիճակից բխող իրավունքներ և պարտականություններ, հետևաբար վերջինիս գործողությունները ցանկացած պարագայում կանոնակարգվում են զինվորական ներքին կամ այլ կանոնագրերով:

Վկայակոչելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրի 13-րդ հոդվածը, ինչպես նաև վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ բաժնում սահմանված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ զինծառայողների ընդհանուր պարտականությունները ևս հանդիսանում են զինծառայողների կանոնադրային փոխհարաբերությունների հիմքը, և դրանց չպահպանումն ուղղակիորեն հանդիսանում է կանոնադրային հարաբերությունների խախտում:

9. Անդրադառնալով ամբաստանյալին մեղսագրված արարքի սուբյեկտիվ կողմին՝ բողոքաբերը նշել է, որ զինակցի նկատմամբ բռնություն գործադրող զինծառայողը գիտակցում է, որ խախտում է զինվորական ծառայության կանոնակարգերով սահմանված՝ զինծառայողների միջև փոխհարաբերությունները և ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս դրանք: Բողոք բերած անձի գնահատմամբ նման դեպքում շարժառիթը կարող է կապված լինել ինչպես զինվորական ծառայողական պարտականությունների կատարման, այնպես էլ ցանկացած այլ հանգամանքի հետ, որը որևէ կերպ (այդ թվում՝ անուղղակիորեն) ոտնահարում է զինծառայողների կանոնադրային հարաբերությունների բովանդակությունն ու բնույթը:

10. Շարադրված փաստարկների հիման վրա բողոքաբերը եզրակացություն է արել այն մասին, որ սույն գործով ամբաստանյալը, ոտնձգելով զինծառայողի առողջության, պատվի ու արժանապատվության դեմ, ուղղակիորեն ոտնձգել է նաև զինծառայողների կանոնադրային փոխհարաբերությունների դեմ՝ խախտելով զինվորական ծառայության սահմանված կարգը: Ուստի, բողոք բերած անձի գնահատմամբ ամբաստանյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում նախատեսված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի դատավճռին:

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի («Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում») կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

*1. Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում.*

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն

մասին, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի արարքը ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով («Ձինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում»):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու համար, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից,
- 3) զենք կամ մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով,
- 4) անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքի համար, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Մեջբերված քրեափրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ այս հանցագործության հիմնական օբյեկտ է հանդիսանում զինվորական կանոնադրերում ամրագրված՝ ենթակայության տակ չգտնվող զինձառայողների փոխհարաբերությունների կարգը, իսկ լրացուցիչ օբյեկտ է զինձառայողների առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը:

15. Ենթակայության տակ չգտնվող զինձառայողների փոխհարաբերությունների կարգը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնադրերով, ենթաօրենսդրական ակտերով, պետերի (հրամանատարների) հրամաններով սահմանված զինվորական ծառայության կարգի տարատեսակ և դրա խախտումը դրսևորվում է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով արգելված արարք(ներ)ի կատարմամբ, այլև զինվորական ծառայությունից բխող հատուկ վարքագծի կանոնների խախտմամբ: Այլ խոսքով՝ ենթակայության տակ չգտնվող զինձառայողների փոխհարաբերություններին կարող է վնաս պատճառվել այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որը զուգորդվել է զինձառայողի վարքագծի հատուկ կանոնների խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հիմք ընդունելով երկօբյեկտ հանցակազմերի առանձնահատկությունները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցակազմի հիմնական օբյեկտին վնաս հասցնելը հնարավոր է լրացուցիչ օբյեկտին, տվյալ դեպքում՝ տուժողի առողջությանը, պատվին ու արժանապատվությանը վնաս հասցնելու միջոցով: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ տուժողի առողջությանը,

պատվին ու արժանապատվությանը վնաս հասցնելը ինքնին չի նշանակում, որ հանցավորի արարքն ուղղված է եղել հիմնական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ: Կոնկրետ դեպքում արարքը կարող է ուղղված լինել անձի առողջության, նրա պատվի ու արժանապատվության դեմ՝ որպես հանցագործության հիմնական օբյեկտի:

Հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

- ա) զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելը,
- բ) զինծառայողին ծաղրոծանակի կամ հալածանքի ենթարկելը,
- գ) զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով արգելված արարքները կարող են կատարվել ինչպես գորամասի տարածքում, այնպես էլ դրանից դուրս, ծառայության կամ հանգստի, մշակութային, սպորտային միջոցառումների ժամանակ, աշխատանքի վայրում կամ գործուղման մեջ, բուժհիմնարկում գտնվելիս և այլն:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտը հատուկ է: Որպես այդպիսին հանդես են գալիս ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում գորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները:

Տվյալ հանցագործության սուբյեկտ կարող են լինել շարքային, սերժանտական (ավագային) կազմի այն զինծառայողները, ինչպես նաև այն ենթասպաներն ու սպաները, ովքեր ստորադասության հարաբերությունների մեջ չեն գտնվում տուժողի հետ, այսինքն՝ ծառայության բերումով և կոչումով նրա պետը կամ ենթական չեն համարվում: Նրանք կարող են լինել ծառայական դրությամբ (պաշտոնով) և զինվորական կոչումով միմյանց հավասար, ինչպես նաև կրտսեր կամ ավագ զինվորական կոչումով, եթե չեն գտնվում ստորադասության հարաբերությունների մեջ:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ջինծառայողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են: Նրանք օգտվում են հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից՝ հաշվի առնելով գործող օրենսդրությամբ սահմանված զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները: Նրանց վրա դրվում են սահմանադրական, այլ համաքաղաքացիական պարտականություններ, ինչպես նաև ընդհանուր, ծառայության և հատուկ պարտականություններ՝ սահմանված զինվորական ծառայության պայմաններով»:

17. Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ խախտում է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգով սահմանված կարգը, ծառայության դրությամբ և զինվորական կոչումով իր հետ հավասար զինծառայողի նկատմամբ կատարում է բռնի գործողություններ և ցանկանում է վտանգավոր հետևանքների առաջացումը: Միաժամանակ, իր գործողությունների հետևանքի նկատմամբ հանցավորի վերաբերմունքը կարող է դրսևորվել, ինչպես ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, այնպես էլ անգոյությունով:

ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ

նշված հանցակազմի շարժառիթները կարող են տարբեր լինել (օրինակ՝ խուլիգանական դրդումներ, զինվորական ծառայության նկատմամբ տուժողի վերաբերմունքից դժգոհություն, անձնական հակակրանք, մյուս զինծառայողներին իր ազդեցության տակ պահելու, նրանց հանդեպ իր թվացյալ գերազանցությունը հաստատելու ցանկություն և այլն):

18. Սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինծառայողի կողմից մեկ այլ զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը կամ սույն որոշման 15-րդ կետում թվարկված արարքներից որևէ մեկը կատարելը կարող է որակվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով արգելված հանցագործություն միայն այն դեպքում, երբ ոսնձգում է զինվորական ծառայությունը կրելու համար սահմանված կարգի դեմ և անմիջականորեն կապված է զինվորական գործունեության հետ: Այլ խոսքով՝ զինծառայողի կողմից մեկ այլ զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելը կամ սույն որոշման 15-րդ կետում թվարկված արարքներից որևէ մեկը կատարելը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք մեղավոր անձը թույլ է տվել զինվորական կանոնադրերով նախատեսված վարքագծի կանոնների խախտում, և դա ուղղված է եղել զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ:

19. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադրի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Ձինծառայողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության բովանդակությունն ու ծավալը կախված են այն բանից, թե արդյոք նրանք զինվորական ծառայության պարտականություններ են կատարում, թե ոչ:

Ձինծառայողների պարտականությունների կատարում ասելով հասկացվում է՝ մարտական գործողություններին մասնակցելը, պաշտոնեական պարտականություններին, մարտական հերթապահության կատարումը, գորավարժություններին մասնակցելը, աշխատակարգով սահմանված ծառայության ժամանակամիջոցում գորամասի տարածքում կամ, եթե դա թելադրված է ծառայության անհրաժեշտությամբ, ծառայողական գործողման կամ բուժման մեջ գտնվելը, ծառայության վայր, բուժման մեկնելը կամ վերադառնալը, զինվորական հավաքներին մասնակցելը, գերության մեջ (բացառությամբ կամավոր գերի հանձնվելու դեպքերը), պատանդի կամ ներկալվածի վիճակում գտնվելը, անհայտ բացակայությունը՝ մինչև զինծառայողին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչելը կամ մեռած հայտարարելը, անհատի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ապահովման գործում իրավապահ մարմիններին օգնություն ցույց տալը, զինծառայողների այլ գործողություններ, որոնք դատարանի կողմից ճանաչվել են որպես հասարակության ու պետության շահերից բխող:

Որպես զինվորական ծառայության պարտականությունները կատարող չեն ճանաչվում այն զինծառայողները, որոնք կատարում են քրեական օրենսդրությամբ նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ:

Անհրաժեշտության դեպքում հրամանատարի (պետի) հրամանով զինծառայողը պարտավոր է զինվորական ծառայության պարտականությունների կատարմանն անցնել ցանկացած ժամանակ:

Ձինվորական ծառայության կատարման ժամանակ զինծառայողները համարվում են պետական իշխանության ներկայացուցիչներ և գտնվում են պետության պաշտպանության տակ»:



ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր զինծառայող ունի պաշտոնական պարտականություններ, որոնք որոշում են նրա զբաղեցրած պաշտոնին համապատասխան իրեն հանձնարարված դերի ու խնդիրների գործնական կատարման ծավալն ու սահմանները: Պաշտոնական պարտականություններն օգտագործվում են միայն ի շահ ծառայության:

Այդ պարտականությունները սահմանվում են զինվորական կանոնադրություններով, հրահանգներով, կանոնակարգերով, ինչպես նաև սույն Կանոնագրքի կիրարկման ուղղությամբ ուղղակի պետերի գրավոր հրամաններով»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Մարտական հերթապահության (մարտական ծառայության), օրվա և կայազորային վերակարգի մեջ գտնվող, ինչպես նաև տարերային աղետների հետևանքների վերացման համար ներգրավված կամ այլ արտակարգ վիճակներում գտնվող զինծառայողները կատարում են հատուկ պարտականություններ: Այդ պարտականությունները և դրանց կատարման կարգը սահմանվում են օրենսդրական, համագորային ակտերով, զինվորական կանոնադրություններով ու դրանց հիման վրա մշակված իրավական այլ ակտերով և, որպես կանոն, կրում են ժամանակավոր բնույթ:

Հատուկ պարտականությունների կատարման ժամանակ զինծառայողներն օժտվում են նաև հատուկ իրավունքներով՝ կապված զինվորական կարգապահության և իրավակարգի պահպանման, անձնակազմի, մարտական դրոշմների, սպառազինության, ռազմական տեխնիկայի ու նյութական այլ միջոցների և ուրիշ ռազմական ու պետական օբյեկտների պաշտպանության հետ, այդ թվում՝ զենքի գործադրմամբ»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվություն զինծառայողները կրում են հանցագործություն կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությանը համապատասխան»:

Մեջբերված դրույթները վերլուծելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինվորական ծառայության մեջ ընդգրկված լինելու փաստն ինքնին հիմք չէ արձանագրելու, որ զինծառայողը յուրաքանչյուր պահի զինվորական ծառայության կոնկրետ պարտականություններ է կատարում: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծառայության մեջ գտնվելու ժամանակաշրջանում զինծառայողները գտնվում են ոչ միայն զինվորական ծառայական հարաբերությունների, այլ զինվորական օրենսդրության նորմերով չկարգավորվող այլ (անձնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլն) իրավահարաբերությունների մեջ:

20. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ինչպես նշվել է սույն որոշման 15-րդ կետում, ենթակայության տակ չգտնվող զինծառայողների փոխհարաբերությունների կարգը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնագրքերով, ենթաօրենսդրական ակտերով, պետերի (հրամանատարների) հրամաններով սահմանված զինվորական ծառայության կարգի տարատեսակ, և դրա խախտումը դրսևորվում է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով արգելված արարք(ներ)ի կատարմամբ, այլև զինվորական ծառայությունից բխող հատուկ վարքագծի կանոնների խախտմամբ: Ուստի, ենթակայության տակ չգտնվող զինծառայողների կողմից հակաիրավական արարք կատարելու յուրաքանչյուր դեպքում զինծառայողների միջև փոխհարաբերությունների սահմանված

կարգը խախտվում է: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ զինծառայողի կողմից կատարված յուրաքանչյուր հակաիրավական արարք կարող է ունենալ մեկից ավելի շարժառիթներ և նպատակներ, որոնցից մեկը գերակայում է մյուսների նկատմամբ: Ուստի յուրաքանչյուր դեպքում արարքի ճիշտ քրեաիրավական որակման համար կարևոր նշանակություն ունի գերակա շարժառիթի և նպատակի պարզումը: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ կհիմնավորվի, որ զինծառայողի գերակա շարժառիթը և նպատակը կապված են եղել զինծառայողների միջև փոխհարաբերությունների սահմանված կարգը խախտելու հետ, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով: Մինչդեռ այն դեպքում, երբ գերակա շարժառիթը զինծառայողների միջև փոխհարաբերությունների սահմանված կարգը խախտելու հետ կապված չի եղել և պայմանավորված է եղել անձնական կամ այլ բնույթի մոտիվացիայով, և արարքն ուղղված չի եղել զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ, ապա այն ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմով, որը պատասխանատվություն է սահմանում զինվորական գործունեության հետ չկապված արարքի համար:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 14-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործմասի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունը հստակ սահմանագատել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող զանցանքներից: Այլ խոսքով՝ զինվորական կանոնադրերով սահմանված՝ զինծառայողների փոխհարաբերությունների վարքագծի կանոնների խախտումն ինքնին չի նշանակում, որ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքն անպայման պետք է որակվի որպես զինվորական հանցագործություն, այն կարող է որակվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմով, որը պատասխանատվություն է սահմանում զինվորական գործունեության հետ չկապված արարքի համար, կամ որակվել որպես կարգապահական խախտում և հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմերը բլանկետային են, զինծառայողին զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է պարզել և դատավարական փաստաթղթերում (օրինակ՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ) շարադրել, թե կոնկրետ ինչո՞ւմ է արտահայտվել մեղավոր անձի կողմից վարքագծի կանոնների խախտումը, կոնկրետ ո՞ր ակտում ամրագրված դրույթներն են խախտվել, արդյո՞ք արարքի և առաջացած հետևանքի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

22. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (ղիտավորյալ կամ անգզույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն (...):»:

Սույն որոշման նախորդ կետում արձանագրված՝ զինվորական հանցագործության և կարգապահական խախտման տարբերակման հիմքը արարքի հանրային վտանգավորության աստիճանն է: Վերջինիս Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ.Մաղաթյանի* գործով կայացված որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Հիմք ընդունելով կարգապահական խախտման վերոշարադրյալ հասկացությունը, ինչպես նաև *mutatis mutandis* *Գ.Մաղաթյանի* գործով որոշման մեջ ձևավորված՝ արարքի հանրային վտանգավորության վերաբերյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զինծառայողների միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրոծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով, հանգեցնում է կարգապահական պատասխանատվության այն դեպքում, երբ՝

ա) ենթակայության տակ չգտնվող զինծառայողների փոխհարաբերությունների կարգի խախտման հետևանքով պատճառված վնասն էական չէ,

բ) արարքի կատարման եղանակի, անձի մտադրության իրականացման աստիճանի վերաբերյալ փաստական տվյալները վկայում են իրավախախտում կատարած անձի ոչ բարձր հանրային վտանգավորության մասին,

գ) արարքը համատեղ կատարելու պարագայում՝ անձի արարքի ոչ բարձր հանրային վտանգավորության և իրավախախտմանը նրա ոչ էական մասնակցության մասին:

Վերոնշյալ հանգամանքների առկայության պարագայում արարքը, որը թեև արտաքնապես դրսևորվել է որպես ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով արգելված՝ զինծառայողների միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտում, սակայն իր մեջ չի պարունակում վերոնշյալ հանցակազմի հատկանիշները, անձին ոչ թե քրեական, այլ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում:

23. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնադրերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է»:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ձինվորական կարգապահությո-

յունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների, զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա»:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքով նախատեսված իրավախախտումների համար կարգապահական պատասխանատվություն առաջանում է անկախ այն հանգամանքից, որ այդ խախտումները իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն»:

Մեջբերված կանոնադրային դրույթների վերլուծությունից երևում է, որ զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը վերջինիս կողմից զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտումն է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինվորական կարգապահությունը, այդ թվում՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար զինծառայողը ենթակա է ինչպես կարգապահական, այնպես էլ քրեական պատասխանատվության: Այլ խոսքով զինծառայողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության մաս այն դեպքում, երբ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի հատկանիշներ:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի կողմից տուժող Վ.Ալավերդյանի նկատմամբ բռնությունը կատարվել է անձնական հողի վրա, որն արտահայտվել է նրանում, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանը գումարտակի լվացարանում լվացվելիս ձեռքերով ջուր է լցրել տուժողի վրա, իսկ երբ վերջինս պահանջել է մնան կատակ չանել, Ս.Հովհաննիսյանը ծեծի է ենթարկել նրան (տես սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ հանցանքի կատարման պահին ո՛չ տուժողը, ո՛չ ամբաստանյալը զինվորական ծառայության ընդհանուր կամ հատուկ բնույթի պարտականություններ կատարելիս չեն եղել:

25. Սույն որոշման 14-23-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 24-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաբանության մարմինը, Ս.Հովհաննիսյանի արարքը որակելով որպես զինվորական հանցագործություն, անտեսել է այն հանգամանքը, որ ամբաստանյալի արարքի հետևանքով չի խախտվել տվյալ կամ մեկ այլ ստորաբաժանման ներքին կարգուկանոնը, չի խանգարվել անձնակազմի հանգիստը: Գումարտակի լվացարանում ամբաստանյալի կողմից տուժողի վրա ձեռքերով ջուր լցնելու պատճառով նրանց միջև առաջացած քաշքշուկի և վիճաբանության ընթացքում ամբաստանյալի դիտավորությունն ուղղված չի եղել զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կարգի դեմ, նա չի ցանկացել ոտնձգություն կատարել զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ կամ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել զինվորական հանրության նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի տարրերն ու հատկանիշները, հետևաբար հիմնավոր է Վերաբանիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի

արարքը ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով («Ձինժառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում»):

II. *Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի սահմաններից դուրս գալը.*

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ո է արդյոք բողոքաբերի պնդումն այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

27. ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

28. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճիռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը կապված է եղել իր նկատմամբ նշանակված պատիժը փոփոխելու կամ պայմանականորեն չլիքառելու հետ: Նշված բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, Ս.Հովհաննիսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասից վերադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

29. Առաջին ատյանի դատարանի դատավճիռով նշանակված պատիժը Վերաքննիչ դատարանի կողմից փոփոխելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ն.Սարգսյանի* գործով կայացված որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխելիս վերաքննիչ դատարանը ևս ղեկավարվում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով:

(...)

պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է ղեկավարվի դատարանը պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝

- ա) օրինականությունը,
- բ) արդարությունը,
- գ) պատժի անհատականացումը,
- դ) մարդասիրությունը:

Պատիժ նշանակելու վերոնշյալ սկզբունքները սահմանում են այն հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվում է դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատժի տեսակն ու չափն ընտրելիս:

(...)

(...) օրինականության սկզբունքի իմաստով՝ պատիժ նշանակելու հիմնական և առաջին պայմանը հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայությունն է: (...)» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 13-15-րդ կետերը):

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

30. Սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Ն.Մարգարյանի* գործով կայացված որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համակարգային վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատժի վերաքննիչ վերանայման շրջանակներում վերաքննիչ դատարանը, ի թիվս պատժի նշանակման այլ սկզբունքների, ղեկավարվում է պատիժ նշանակելու օրինականության սկզբունքով:

Ուստի, Վճարելի դատարանն արձանագրում է, որ պատիժ նշանակելու օրինականության և արդարության սկզբունքները փոխկապակցված են արարքի քրեաիրավական որակման հետ: Ավելին, պատիժ նշանակելու օրինականության սկզբունքի ապահովումը հիմնված է արարքի ճիշտ քրեաիրավական որակման վրա, հետևաբար առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատժի օրինականության հարցը հնարավոր չէ քննարկել առանց արարքի քրեաիրավական որակման անդրադառնալու:

31. Սույն որոշման 27-28-րդ և 30-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 29-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ բողոքաբերի պնդումն այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

32. Վերոգրյալից բացի, Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու մասին հանգամանքները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը»:

Վերոշարադրյալ քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ վարույթի կարճման հիմքերի առկայության դեպքում քրեական գործով դատական քննություն չիրականացնելու կանոնը պետք է մեկնաբանվի քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի իրավական նշանակությանը համապատասխան. այն չպետք է հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար: Այսինքն՝ այս կանոնը պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ առկա են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապն-

որումը դադարեցնելու հիմքեր: Հակառակ դեպքում, Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա ենթակա է անվերապահ բեկանման՝ անկախ այն հանգամանքից, թե ով և ինչ հիմքով է վերաքննիչ բողոք ներկայացրել: Այլ խոսքով՝ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտի անվերապահ բեկանումը քրեադատավարական օրենքի իմպերատիվ պահանջ է (անվերապահ բեկանման հիմքերի մասին տես *mutatis mutandis* Մխիթար Էլոյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը):

33. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալն ու տուժողը հաշտվել են (տես սույն որոշման 5-րդ կետը): Նշված հանգամանքը հաստատվել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ, և Ս.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդումը՝ դադարեցվել (տես սույն որոշման 3-րդ կետը):

34. Սույն որոշման 32-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 33-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա է եղել Առաջին ատյանի դատարանի դատավճռի անվերապահ բեկանման հիմք, և Վերաքննիչ դատարանն իրավասու է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 36-րդ հոդվածի հիմքով ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից:

35. Հիմք ընդունելով սույն որոշման 13-34-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ուստի, հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Սրապիտն Ազատի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*  
Դատավորներ՝ *ստորագրություններ*

11.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԳ/0326/01/09**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝</i>	Ջ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արամ Ստեփանի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ դիմող Գայանե Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2006 թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13137806 քրեական գործը:

2006 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13143406 քրեական գործը:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 13137806 քրեական գործը միացվել է թիվ 13143406 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2007 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Արամ Ստեփանի Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:



2007 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է, իսկ 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ քրեական գործով կասեցված վարույթը՝ վերսկսվել:

2008 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ լրացվել է Ա.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը:

Նախաքննության մարմնի 2008 թվականի օգոստոսի 20-ի մեկ այլ որոշմամբ Ա.Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2008 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է:

2009 թվականի մայիսի 6-ին Ա.Սկրտչյանը ձերբակալվել է:

2009 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ վերսկսվել է քրեական գործով կասեցված վարույթը:

2009 թվականի դեկտեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ստյանի դատարան):

2. Առաջին ստյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով ազատազրկման՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Սկրտչյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Տուժող Սեժոյում Երիցյանի քաղաքացիական հայցը բավարարվել է՝ ամբաստանյալ Ա.Սկրտչյանից հօգուտ տուժող Մ.Երիցյանի վճարվել է բռնագանձել 4000 (չորս հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Տուժող Արաքսյա Հայրապետյանի քաղաքացիական հայցը բավարարվել է և ամբաստանյալ Ա.Սկրտչյանից հօգուտ տուժող Ա.Հայրապետյանի վճարվել է բռնագանձել 3000 (երեք հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Տուժող Ա.Հայրապետյանի՝ 9000 (ինը հազար) ԱՄՆ դոլարի մատվ քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության, իսկ քաղաքացիական հայցվորներ, տուժողներ Էդուարդ Խաչատրյանի, Վյաչեսլավ Պետրոսյանի, Մելանյա Բաղայանի, Արմենուհի Մելքոնյանի, Վահան Գուրիկյանի, Սվետլանա Սիբայելյանի քաղաքացիական հայցերի հարցը համարվել է լուծված՝ ամբաստանյալի կողմից հանցագործությանը նրանց պատճառված նյութական վնասը վերականգնված լինելու պատճառաբանությամբ:

Տուժող Հովհաննես Գևորգյանի քաղաքացիական հայցի հարցը համարվել է լուծված՝ քաղաքացիական դատավարության կարգով այն արդեն լուծված լինելու պատճառաբանությամբ:

Բացի այդ, Գայանե Իսրայելյանի անվամբ ձևակերպված և փաստացի ամբաստանյալ Ա.Սկրտչյանին պատկանող «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա տարածվել է բռնագանձում՝ տուժողներ Մ.Երիցյանին,

Հ.Գևորգյանին, Ա.Հայրապետյանին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար:

3. Ամբաստանյալ Ա.Սկրտչյանի պաշտպան Տ.Քիշմիրյանի, մեղադրող Հ.Բարսեղյանի և տուժող Ա.Հայրապետյանի վերաբննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաբննիչ քրեական դատարանը 2010 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ վերաբննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը:

4. ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի 2010 թվականի օգոստոսի 5-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Ա.Սկրտչյանի պաշտպան Տ.Քիշմիրյանը, տուժող Ա.Հայրապետյանը և դիմող Գ.Իսրայելյանը:

Վճարելի դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Սկրտչյանի պաշտպան Տ.Քիշմիրյանի, տուժող Ա.Հայրապետյանի վճարելի բողոքները վերադարձվել են, իսկ դիմող Գ.Իսրայելյանի վճարելի բողոքը թողնվել է առանց քննության՝ վճարելիության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկված լինելու հիմքով:

5. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 30-ի որոշմամբ Ա.Սկրտչյանի վերաբերյալ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը համապատասխանեցվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ 143-Ն օրենքին, արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

6. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ բավարարվել է Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի՝ Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը բողոքարկելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բողոքարկման համար սահմանված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը:

Դիմող Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի վերաբննիչ բողոքի քննության արդյունքում Վերաբննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ վերաբննիչ բողոքը մերժել է՝ ավտոմեքենայի բռնագանձման մասով օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը:

7. Վերաբննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանը, որը Վճարելի դատարանի 2012 թվականի մարտի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ տուժող Հ.Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Մելիքսեթյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դիմող Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի վճարելի բողոքը:

### **2.Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

8. Ամբաստանյալ Ա.Սկրտչյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2004 թվականի փետրվար ամսից մինչև 2006 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակա-

հատվածում հանդիսացել է «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն և իրականացրել ռիելթորական՝ անշարժ գույքի առքուվաճառքի գործունեություն: Նա, տեղեկանալով, որ Երևանի մերձակայքում՝ 16-րդ թաղամասի հարևանությամբ գտնվող «Հուլիսի ավան» կոչվող թաղամասում, բարեգործական հիմունքներով կառուցվում են բնակարաններ, որոշել է այդ պատրվակով տարբեր քաղաքացիներից հափշտակել առանձնապես խոշոր չափերի հասնող գումարներ: Մի շարք քաղաքացիների մոտ ձեռք բերելով վստահություն՝ Ա.Սկրտչյանը նրանց խոստացել է շուկայականից ցածր արժեքով «Հուլիսի ավան» կոչվող թաղամասում ապահովել բնակարաններով: Նրանց մի մասը, վստահելով Ա.Սկրտչյանին, վաճառել են իրենց բնակարանները և գումարները հանձնել նրան՝ մի քանի ամսից նոր բնակարաններ ունենալու ակնկալիքով, իսկ քաղաքացիների մյուս մասը նույն նպատակով Ա.Սկրտչյանին են հանձնել իրենց խնայած գումարները: Վերջինս ինը քաղաքացիներից հափշտակել է շուրջ 51.844.185 ՀՀ դրամին համարժեք 125.950 ԱՄՆ դոլար գումար, իսկ հետագայում՝ 3 տարի շարունակ խուսափել է նրանցից, այնուհետև՝ թաքնվել քննությունից:

Այսպես՝ Ա.Սկրտչյանը, ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Սվետլանա Միքայելյանի վստահությունը, իբրև «Հուլիսի ավան» կոչվող թաղամասում նրա համար բնակարան գնելու խոստումով 2004 թվականի փետրվար ամսից մինչև մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում Երևանի Թումանյան 8 հասցեում գտնվող իր ընկերության գրասենյակում տուժող Ս.Միքայելյանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 7.460.910 ՀՀ դրամին համարժեք 13.500 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Ս.Միքայելյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Այնուհետև, Ա.Սկրտչյանը, կրկին խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Վահան Դուրինյանի վստահությունը, իբրև «Հուլիսի ավան» թաղամասում բնակարան գնելու խոստումով 2004 թվականի վերջից մինչև 2005 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում իր ընկերության գրասենյակում Վ.Դուրինյանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 5.486.075 ՀՀ դրամին համարժեք 11.500 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Վ.Դուրինյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Բացի այդ, Ա.Սկրտչյանը, կրկին խարդախությամբ հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Մելանյա Բաղալյանի վստահությունը, 2005 թվականի փետրվարի 24-ից մինչև ապրիլի 14-ն ընկած ժամանակահատվածում իր ընկերության գրասենյակում նրանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է 18.000 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Մ.Բաղալյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Այնուհետև, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ, չարաշահելով տուժող Հ.Գևորգյանի վստահությունը, իբրև Երևանի արվարձաններում բնակարան գտնելու և գնելու խոստումով, 2005 թվականի ապրիլի 14-ից մինչև հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում իր ընկերության գրասենյակում տուժող Հ.Գևորգյանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 4.476.300 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Հ.Գևորգյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Բացի այդ, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Արաքսյա Հայրապետյանի վստահությունը, իբրև «Հույսի ավան» կոչվող թաղամասում բնակարան գտնելու և գնելու խոստումով 2005 թվականի սեպտեմբերի 20-ին իր ընկերության գրասենյակում տուժող Ա.Հայրապետյանից ստացել է 5.391.240 ՀՀ դրամին համարժեք 12.000 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Ա.Հայրապետյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական: Հետագայում Ա.Սկրտչյանը տուժող Ա.Հայրապետյանի ամուսնուն վերադարձրել է գումարի մի մասը՝ 9000 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած խոշոր չափի հասնող՝ 1.347.810 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար գումարը հափշտակել է:

Այնուհետև, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Արմենուհի Մելքոնյանի վստահությունը, իբրև նույն թաղամասում բնակարան գնելու խոստումով, 2005 թվականի հունիս ամսից մինչև 2006 թվականի հունվարի 23-ն ընկած ժամանակահատվածում իր ընկերության գրասենյակում տուժող Ա.Մելքոնյանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 5.147.170 ՀՀ դրամին համարժեք 11.500 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Ա.Մելքոնյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Բացի այդ, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Մեծլում Երիցյանի վստահությունը, իբրև բնակարան գտնելու և գնելու խոստումով, 2005 թվականի նոյեմբերի 5-ին իր ընկերության գրասենյակում տուժող Մ.Երիցյանից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 6.900.000 ՀՀ դրամ գումար և տիրացել այդ գումարին: Վկա Մ.Երիցյանի միջոցով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Մ.Երիցյանին վերադարձրել է 11.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 4.000 ԱՄՆ դոլարը չի վերադարձրել:

Այնուհետև, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Էդուարդ Խաչատրյանի վստահությունը, իբրև Երևանի արվարձաններում բնակարան գտնելու և գնելու խոստումով, 2006 թվականի փետրվարի 20-ին իր ընկերության գրասենյակում տուժող Է.Խաչատրյանից խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 4.256.280 ՀՀ դրամին համարժեք 9.450 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործարքին օրինական տեսք տալու և

հավատարժան դարձնելու նպատակով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը տուժող Է.Խաչատրյանին հանձնել է իր՝ «Ա ընդ Վ գրուպ» ՍՊԸ-ի և «Տանիք» անշարժ գույքի գործակալության գլխավոր տնօրենի անունից տրված ստացական:

Բացի այդ, Ա.Սկրտչյանը, կրկին հափշտակություն կատարելու դիտավորությամբ չարաշահելով տուժող Վյաչեսլավ Պետրոսյանի վստահությունը, իբրև «Հույսի ավան» կոչվող թաղամասում բնակարաններ գտնելու և գնելու խոստումով, 2006 թվականի մայիսի սկզբից մինչև մայիսի 19-ն ընկած ժամանակահատվածում իր ընկերության գրասենյակում տուժող Վ.Պետրոսյանից պարբերաբար խաբեությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 14.869.560 ՀՀ դրամին համարժեք 34.000 ԱՄՆ դոլար գումար և տիրացել այդ գումարին: Գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Սկրտչյանի հարազատները վերականգնել են տուժողներ Է.Խաչատրյանին, Ա.Սեփրոնյանին, Հ.Գևորգյանին, Մ.Բաղդալյանին, Վ.Դուրիսյանին, Ս.Միքայելյանին Վ.Պետրոսյանին պատճառված նյութական վնասը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջեր 388-390):

9. Գործի նյութերում առկա է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնի քննչական բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Բալասանյանի գրությամբ հետևյալ բովանդակությամբ. «(...) ք.Երևանի Հալաբյան 31շ. 45 բն. բնակիչ Արամ Ստեփանի Սկրտչյանի անունով գրանցված ավտոմեքենա չկա» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 218):

10. Գործի նյութերում առկա են նաև՝

10.1. ավտոմեքենայի կոշտ գրավի պայմանագիր, որով «Յունիբանկ» ՓԲԸ-ն Գայանե Իսրայելյանին տրամադրում է 13000 ԱՄՆ դոլար վարկ՝ որպես գրավի առարկա դիտելով Գ.Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենան (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 141),

10.2. «Յունիբանկ» ՓԲԸ-ի և Գ.Իսրայելյանի միջև կնքված վարկային պայմանագիրը, որով բանկը վարկառուին տրամադրում է 13000 ԱՄՆ դոլար գումարի վարկ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 142),

10.3. Գույքի վրա կալանք դնելու մասին 2009 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը, որով կալանք է դրվել «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ 152),

10.4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի 2011 թվականի հունվարի 14-ի գրությունը հետևյալ բովանդակությամբ. ««Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենան քննիչի կողմից գույքի վրա կալանք դնելու մասին 2006 թվականի սեպտեմբերի 5-ի որոշում կայացնելուց հետո չի օտարվել (...):

Մինչ որոշում կայացնելը, այն Գայանե Իսրայելյանը 2006թ.ապրիլի 7-ին նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերել Գայանե Ավագյանից: Այնուհետև՝ Գ.Իսրայելյանն առանց նոտարական վավերացման, ներքին առուվաճառքի պայմանագրով նշված ավտոմեքենան 2006թ. հուլիսի 20-ին վաճառել է Գևորգ Տիգրանյանին, և ներկայումս այն գտնվում է վերջինիս մոտ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ18),

10.5. Գայանե Ավագյանի և Գայանե Իսրայելյանի միջև կնքված՝ «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, էջ41):

11. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ կատարողական թերթը պարզաբանելու մասին 2011 թվականի օգոստոսի 2-ի որոշման համաձայն՝ «(...) Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. հունվարի 19-ի վճռով վճռվել է պատասխանող Արամ Սկրտչյանից հօգուտ հայցվոր Հովհաննես Գևորգյանի բռնագանձել 4.482725 ՀՀ դրամ՝ որպես չկատարված պարտավորության հիմնական գումար, ինչպես նաև 848.625 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ: (...) Հովհաննես Գևորգյանին վերադարձվել է գումարի մի մասը: Այժմ Արամ Սկրտչյանից հօգուտ Հովհաննես Գևորգյանի բռնագանձման ենթակա է 1.425.000 ՀՀ դրամ, սակայն բռնագանձման ենթակա չեն բանկային տոկոսների համար հաշվարկված գումարները» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 636):

12. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Գ.Իսրայելյանը սույն գործի շրջանակներում քաղաքացիական պատասխանող չի ճանաչվել:

13. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Քրեական գործի նյութերով հիմնավորված է համարվել, որ «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենան ձեռք է բերվել ամբաստանյալ Արամ Ստեփանի Սկրտչյանի կողմից, պատկանում է նրան: Պաշտպանական կողմի այն պատճառաբանությունը, որ այդ ավտոմեքենան վաճառվել է այլ անձի և վաճառված գումարներով պարտքեր են փակվել, հիմնավոր չէ: Գործի նյութերից երևում է, որ վերոհիշյալ ավտոմեքենայի առուվաճառքի գործարք իրականում չի կատարվել, չի պահպանվել նման գործարքների ձևակերպման օրենքով սահմանված պայմանները: Հետևաբար դատարանը գտնում է, որ այդ գործարքը չի կատարվել: Նկատի ունենալով, որ դատարանի կողմից տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար դատարանը քաղաքացիական հայցերը բավարարել է, դատարանը գտավ, որ բռնագանձումը պետք է տարածել «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա՝ տուժողներ Արաքսյա Հայրապետյանին, Մեծյուն Երիցյանին, Հովհաննես Գևորգյանին պատճառված նյութական վնասը հատուցելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, էջ 399):

14. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ մերժել է դիմող Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի վերաքննիչ բողոքը և այն պատճառաբանել է հետևյալ կերպ. «Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր իրավասության դատարանը, հիմնավորված համարելով, որ «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենան ձեռք է բերվել ամբաստանյալ Արամ Ստեփանի Սկրտչյանի կողմից, պատկանում է նրան, իսկ պաշտպանական կողմի այն պատճառաբանությունը, որ այդ ավտոմեքենան վաճառվել է այլ անձի և վաճառված գումարներով պարտքեր են փակվել, հիմնավոր չէ, քանի որ գործի նյութերից երևում է, որ վերոհիշյալ ավտոմեքենայի առուվաճառքի գործարք իրականում չի կատարվել, չի պահպանվել նման գործարքների ձևակերպման օրենքով սահմանված պայմանները, հետևաբար իրավացիորեն հանգել է այն հետևության, որ այդ գործարքը չի կատարվել և նկատի ունենալով, որ դատարանի կողմից տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար դատարանը քաղաքացիական հայցերը բավարարել է, բռնագանձումը հիմնավոր կերպով տարածել է «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի

վրա՝ տուժողներ Արաքսյա Հայրապետյանին, Մեժլում Երիցյանին, Հովհաննես Գևորգյանին պատճառված նյութական վնասը հատուցելու համար:

Վերը նշվածի պայմաններում Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ավտոմեքենան կանխավճարով ձեռք է բերել Արամ Մկրտչյանը: Պատճառված վնասից խուսափելու համար այն ձևակերպել է իր քեռու կնոջ՝ Գայանե Իսրայելյանի անվամբ, ապա ներքին պայմանավորվածությամբ այն ձևակերպել Արամ Մկրտչյանի քրոջ ամուսնու՝ Գևորգ Տիգրանյանի անվամբ, որից ելնելով էլ դատարանը որոշել է բռնագանձումը տարածել նաև այդ ավտոմեքենայի վրա» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, էջեր 147-148):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

15. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի, 396-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանին ներկայացվել են մի շարք ապացույցներ և փաստաթղթեր, որոնք հիմնավորում են Գ.Իսրայելյանի սեփականության իրավունքը «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ, ինչպես նաև այն փաստը, որ հետագայում այն վաճառվել է Գ.Տիգրանյանին: Հետևաբար, բռնագանձում է տարածվել Ա.Մկրտչյանին չպատկանող գույքի վրա:

Վերոշարադրյալից բողոքաբերը եզրակացություն է արել այն մասին, որ խախտվել են նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածների և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածների պահանջները:

16. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելու մասով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը:

### **4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Գույքի վրա բռնագանձում տարածելիս անձի սեփականության իրավունքի պաշտպանությունը*

17. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ քաղաքացիական հայցի հիման վրա տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելու արդյունքում խախտվե՞լ են արդյոք դիմող Գ.Իսրայելյանի՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

18. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: (...)»:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

(...)

Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

(...):»

Մեջբերված սահմանադրական դրույթները Վճռարեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել *Ա.Հայրասյետյանի* գործով որոշման մեջ, որտեղ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը՝

1) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է գրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

2) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ» (տե՛ս Արթուր Հայրասյետյանի վերաբերյալ Վճռարեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշման 19-րդ կետը):

19. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: (...):»

Թե՛ն անձի սեփականության իրավունքն ուղղակիորեն երաշխավորված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքն արդեն իսկ նշանակում է, որ 1-ին հոդվածը երաշխավորում է ըստ էության անձի սեփականության իրավունքը, որին համապատասխանում է սեփականության իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտականությունը: Այսպես՝ *Օներլիլ-դիզն ընդդեմ Թուրքիայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Սեփականության իրավունքի իրական և արդյունավետ իրականացումը կախված չէ լոկ պետության՝ չմիջամտելու պարտականությունից, այլ պահանջում է նաև պաշտպանության որոշակի պոզիտիվ միջոցառումներ, մասնավորապես, երբ առկա է անմիջական կապ անձի գույքային իրավունքներն արդյունավետորեն իրացնելու և այլ միջոցառումների միջև, որոնք անձը կարող է իրավաչափորեն ակնկալել իշխանությունից (տե՛ս *Օներլիլիզ v. Turkey* գործով 2004 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 48939/99, կետ 134):»

20. Վերոնշյալ սահմանադրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծության հիման վրա անձի սեփականության իրավունքը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքս-



սույն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որպեսզի այդք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Իսրայելյանը «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի սեփականատերն է (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Հետևաբար, վերջինս օգտվում է *Ա.Հայրապետյանի* գործով որոշման մեջ ամրագրված և սույն որոշման 18-րդ կետում վերահաստատված երաշխիքներից:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Քաղաքացիական հայցը հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն մեղադրյալի գործողությունների համար (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական պատասխանող է ճանաչվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չբույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար»:

23. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով պատասխանատվության սուբյեկտ են ինչպես կասկածյալը և մեղադրյալը, այնպես էլ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում քրեական օրենսգրքով արգելված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար: Մեղադրյալի գործողությունների համար պատասխանատու անձանց թվին են դասվում, մասնավորապես, ծնողները, որդեգրողները, խնամակալները, շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնող անձինք, որոնք օրենքի ուժով պատասխանատու են մեղադրյալի գործողությունների համար:

24. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հայցի քննության և բավարարման արդյունքում բռնագանձում կարող է տարածվել կամ հանցանք կատարած անձի, կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այսինքն՝ քաղաքացիական պատասխանողի գույքի վրա: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ գույքային պատասխանատվության սուբյեկտ է հանդես գալիս երրորդ անձը, անհրաժեշտ է հիմնավորել մեղադրյալի գործողությունների համար պատասխանատվություն կրելու նրա պարտականությունը: Ընդ որում, եթե դատարանը գտնում է, որ հնարավոր բռնագանձումը կարող է տարածվել քաղաքացիական պատասխանողի գույքի վրա, ապա պարտադիր է որպեսզի վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ճանաչված լինի քաղաքացիական պատասխանող և հնարավորություն ունենա օգտվելու քաղաքացիական պատասխանողի՝ ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված իրավունքներից:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 18-24-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե անձը ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա չի հանդիսանում մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չի ներգրավվել որպես քաղաքացիական պատասխանող, ապա վերջինիս գույքի վրա բռնագանձում տարածելը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներով երաշխավորված՝ սեփականության իրավունքի խախտման:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Գ.Իսրայելյանը սույն գործի շրջանակներում չի ներգրավվել որպես քաղաքացիական պատասխանող (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով քաղաքացիական հայցերը և հիմնավորված համարելով, որ «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենան ձեռք է բերվել ամբաստանյալ Ա.Սկրտչյանի կողմից, պատկանում է նրան, միաժամանակ արձանագրելով այն փաստը, որ վերը նշված ավտոմեքենան ձևակերպված է դիմող Գ.Իսրայելյանի անվամբ, սակայն միայն փաստացի է պատկանում ամբաստանյալ Ա.Սկրտչյանին տուժողներ Մ.Երիցյանին, Հ.Գևորգյանին, Ա.Հայրապետյանին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար բռնագանձում է տարածել «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա (տե՛ս սույն որոշման 2-րդ և 13-րդ կետերը):

Իր հերթին Վերաքննիչ դատարանը, քննության առնելով դիմող Գ.Իսրայելյանի ներկայացուցիչ Ջ.Հակոբյանի վերաքննիչ բողոքը, մերժել է այն և Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ այն պատճառաբանությամբ, որ «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենան կանխավճարով ձեռք է բերել Ա.Սկրտչյանը և միայն պատճառված վնասից խուսափելու համար այն ձևակերպել է իր քեռու կնոջ՝ Գ.Իսրայելյանի անվամբ, ապա ներքին պայմանավորվածությամբ այն ձևակերպել Արամ Սկրտչյանի քրոջ ամուսնու՝ Գևորգ Տիգրանյանի անվամբ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ ստորադաս դատարանները չեն հիմնավորել, որ դիմող Գ.Իսրայելյանը հանդիսանում է Ա.Սկրտչյանի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձ, իսկ «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելը հիմնավորվել է միայն այն եզրահանգմամբ, որ սույն ավտոմեքենան փաստացի պատկանում է ամբաստանյալ Ա.Սկրտչյանին:

27. Սույն որոշման 18-25-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 26-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցի հիման վրա տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելու արդյունքում խախտվել են դիմող Գ.Իսրայելյանի՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

*II. Հանցագործությամբ պատճառված նյութական վնասը վերականգնելու համար գույքի վրա բռնագանձում տարածելը*

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. իրավասո՞ւ էին արդյոք ստորադաս դատարանները

տուժողներ Մ.Երիցյանին, Հ.Գևորգյանին, Ա.Հայրապետյանին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար, քաղաքացիական հայցի հիման վրա բռնագանձում տարածել «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա:

29. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է տույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: (...)»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝ (...)»

10) քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել:

(...)

12) ինչ անել իրեղեն ապացույցները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հարկադիր կատարման ենթակա են՝ (...)»

2) քրեական գործերով դատարանի դատավճիռները և որոշումները՝ տուգանքների, գույքի բռնագրավման և գույքի բռնագանձումների մասով. (...)»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ «(...)»

3. Կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա:

Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել:

4. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածվում է հետևյալ հերթականությամբ.

(...)

2) պարտապան ֆիզիկական անձի պարագայում՝

ա) շարժական գույք,

բ) անշարժ գույք:

Յուրաքանչյուր հաջորդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածվում է միայն մախտոդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածելուց հետո: (...)»:

30. Վերոշարադրյալ նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ հանցագործությամբ պատճառված նյութական վնասի առկայության դեպքում դատավճռով ենթակա են լուծման քաղաքացիական հայցին և վնասի հատուցմանը վերաբերող

որոշակի հարցեր՝ կապված քաղաքացիական հայցն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու, մերժելու կամ առանց քննության թողնելու, ինչպես նաև պատճառված գույքային վնասը հատուցելու հետ:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից երևում է նաև, որ հանցագործությամբ պատճառված նյութական վնասի առկայության դեպքում դատավճիռ կայացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալ բռնագանձման ենթակա գույքի տեսակի, հերթականության, բռնագանձման կարգի սահմանմանը վերաբերող հարցերին: Նշված հարցերի լուծումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորման առարկայից և համարվում է «Պատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկա: Այլ կերպ՝ քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցի քննության արդյունքում դատավճիռ կայացնելիս դատարանը պետք է սահմանափակվի միայն քաղաքացիական հայցի լրիվ կամ մասնակի բավարարման, դրա չափի սահմանման, ինչպես նաև այն անձի մատնանշմամբ, ումից ենթակա է գույքի բռնագանձումը: Ինչ վերաբերում է բռնագանձման ենթակա գույքի տեսակին, առաջնահերթությանը և այլ հարցերին, ապա դրանք լուծվում են դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների կողմից դատական ակտն ի կատար ածելու փուլում:

31. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով տուժողներ Մ.Երիցյանի, Ա.Հայրապետյանի քաղաքացիական հայցերը և սահմանելով բռնագանձման ենթակա գումարի չափը, տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար բռնագանձում է տարածել «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, օրինական ուժի մեջ է թողել այն (տե՛ս սույն որոշման 13-14-րդ կետերը):

Սեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը սույն գործով դատավճիռ կայացնելիս, ի թիվս այլ հարցերի, լուծել է նաև այն հարցը, թե հանցագործությամբ պատճառված գույքային վնասը հատուցելու համար ինչ գույքի վրա պետք է բռնագանձում տարածել:

32. Սույն որոշման 29-30-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 31-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանն իրավասու չէր քաղաքացիական հայցի հիման վրա տուժողներ Մ.Երիցյանին, Հ.Գևորգյանին, Ա.Հայրապետյանին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար բռնագանձում տարածել «Տոյոտա Պրադո» 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա: Մինչդեռ սույն գործով դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դուրս է եկել քաղաքացիական հայցի լուծման ընթացքում իր լիազորությունների շրջանակներից: Իր հերթին Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, օրինական ուժի մեջ է թողել այն՝ չանդրադառնալով և չվերացնելով քրեադատավարական օրենքի վերոնշյալ խախտումը:

33. Հիմք ընդունելով սույն որոշման 17-32-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով էական են և հիմք են հանդիսանում Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «Տոյոտա Պրադո» մակնիշի 50 SL 550 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելու մասով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի հունիսի 11-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

12.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏԳ/0145/01/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	<b>Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ</b>
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	<b>Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ</b> <b>Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ</b> <b>Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ</b> <b>Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ</b>
<i>քարտուղարությամբ՝</i>	<b>Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ</b>
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	<b>Հ.ՍԱՄԱՋԱՆՅԱՆԻ</b>

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անդրանիկ Գարիկի Առուստամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Առուստամյանի և նրա պաշտպան Հ.Մամաջանյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հունիսի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 38103011 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հունիսի 3-ի որոշմամբ Անդրանիկ Գարիկի Առուստամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով:

2011 թվականի սեպտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2011 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Առուստամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտել է ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Առուստամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշման դեմ վճարելի բողոք են բերել ամբաստանյալ Ա.Առուստամյանը և նրա պաշտպան Հ.Մամաջանյանը, որը Վճարելի դատարանի 2012 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2.Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Ա.Առուստամյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2011 թվականի հունիսի 1-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում, 100.000 ՀՀ դրամ հափշտակելու նպատակով, ապօրինի մուտք է գործել «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի Իջևանի մասնաճյուղի միջանցիկ հանգստյան սենյակ և ձեռքին եղած, կենցաղային նշանակության ծալովի դանակի գործադրմամբ, սպառնացել է առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել բանկի հաշվապահ, գանձապահ Քնարիկ Արարատի Խաչատրյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 211):

6. Նախաքննության մարմնի 2011 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ նշանակվել է դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 94):

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության արդյունքում 2011 թվականի սեպտեմբերի 6-ին կազմված թիվ 334/11 եզրակացության համաձայն՝ «[Փորձաքննվողը] (...) հարցերին պատասխանում է փոքր-ինչ ուշացումով, (...) տալիս է (...) մակերեսային, պարզունակ պատասխաններ: (...) Ընդհանուր գիտելիքների և պատկերացումների պաշարը աղքատիկ է: Մտածողությունն ավելի կոնկրետ տիպի է, որոշ դատողություններ մակերեսային են, թեթևակշիռ, պրիմիտիվ: Բանականությունը բարձր չէ: (...) Վերոգրյալի հիման վրա հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Անդրանիկ Գարիկի Առուստամյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում, հանդիսանում է պրիմիտիվ անձ: Որպես հոգեկան հիվանդությամբ չտառապող անձնավորություն փորձաքննվողը կարող էր ու կարող է հաշիվ տալ իրեն իր գործողությունների համար և ղեկավարել դրանք ինչպես իրավախախտումը կատարելու պահին, այնպես էլ ներկայումս: Ուստի Անդրանիկ Գարիկի Առուստամյանին իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ հարկ է ճանաչել մեղսունակ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 129):

7. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Մինչև դատաքննությունն սկսելն ամբաստանյալ Անդրանիկ Գարիկի Առուս-

տամյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

Միջնորդությունը պնդեց նաև ամբաստանյալի օրինական ներկայացուցիչը և պաշտպանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 211):

8. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Առուստամյանը ծնվել է 1994 թվականի հուլիսի 24-ին, իսկ հանցանքը կատարել է 2011 թվականի հունիսի 1-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 211):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջները:

Վկայակոչելով Հ.Հաբեշյանի և Հ.Հովհաննիսյանի գործերով կայացված որոշումները՝ բողոքաբերները նշել են, որ սույն գործով առկա բացառիկ հանգամանքները բավարար էին Ա.Առուստամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կիրառելու համար:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են Ա.Առուստամյանի անձը բնութագրող տվյալները, պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, այն է՝ հանցանքը կատարելու և ներկա պահին անչափահաս լինելը, հոգեկան զարգացման աստիճանը և առողջական վիճակը (պրիմիտիվ անձ լինելը, տարօրինակություններ ունենալը), նախկինում հանցանք չկատարելը, դատապարտված կամ արատավորված չլինելը, դրական բնութագրվելը, իրեն մեղավոր ճանաչելը և կատարածի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը, պետք է գնահատվեին որպես բացառիկ հանգամանքներ: Բողոքաբերները փաստարկել են նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածում ամրագրված՝ արդարացի պատիժ նշանակելու օրենսդրական պահանջը վերացական չէ և պետք է ուղղված լինի պատժի նպատակների իրականացմանը:

Վերոշարադրյալից բողոքաբերները եզրակացրել են, որ սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ա.Առուստամյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելով հնարավոր է հասնել պատժի նպատակների իրականացմանը:

10. Բողոքաբերները փաստարկել են, որ Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 375<sup>3</sup>-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի պահանջները:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ քրեադատավարական օրենսդրությունը չի պարունակում որևէ դրույթ, որը կսահմաներ անչափահասների նկատմամբ դատական քննության արագացված կարգ կիրառելու



առանձնահատկությունները, ինչը կասկածի տակ է դնում անչափահասի նկատմամբ դատական քննության արագացված կարգ կիրառելու հնարավորությունը:

Ըստ բողոքաբերների՝ դատական քննության արագացված կարգի կիրառումը պետք է բացառվի անչափահասի նկատմամբ այն դեպքում, երբ վերջինս բանականության ցածր աստիճան, տարօրինակություններ, պրիմիտիվ և մակերեսային մտածողություն ունի, քանի որ նման դեպքում դատարանի համար անհնարին է դառնում ամբաստանյալի կողմից ներկայացված՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդության բնույթը, միջնորդության հետևանքները գիտակցելու կարողությունը, միջնորդության ներկայացման կամավորությունը պարզելը:

11. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակները խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

#### **4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքաբերներն ըստ էության երկու իրավական հարց են բարձրացրել, որոնցից առաջինն առնչվում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի արդարացիությանը, երկրորդը՝ ամբաստանյալի նկատմամբ դատական քննության արագացված կարգ կիրառելու իրավաչափությանը: Այլ կերպ՝ բողոքաբերների առաջին հարցն առնչվում է նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածների չկիրառմամբ, իսկ երկրորդը՝ դատավարական իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 375<sup>3</sup>-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի պահանջների խախտմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավարական խախտման առկայությունը հաստատված ճանաչելու պարագայում այն կարող է ազդեցություն ունենալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի վրա՝ Վճարելի դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ անչափահասի նկատմամբ դատական քննության արագացված կարգի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորվա՞ծ է արդյոք Ա.Առուստամյանի վերաբերյալ գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված

դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, (...):»

3. Դատարանը, գտնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

(...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>3</sup>-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

3. Դատավորը հարցեր է տալիս ամբաստանյալին համոզվելու համար՝ պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի այդպիսին), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:

4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա է սույն օրենսգրքի 375<sup>1</sup> հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

(...):»

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ համաձայնվելն է, իսկ պայմաններից մեկը՝ ամբաստանյալի՝ իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները գիտակցելը: Այլ խոսքով՝ դատական քննության արագացված կարգի կիրառումը թույլատրելի է այն դեպքում, երբ ամբաստանյալը գիտակցում է դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդության բնույթը և դրա հիման վրա իրականացվող դատական քննության էությունը, հետևանքները, դատավճիռ կայացնելու կարգը և կայացված դատավճիռը բողոքարկելու սահմանափակումները:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռարեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Շ.Ամիրխանյանի և Գ.Յարմանյանի* գործով կայացված որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) դատական քննության արագացված կարգի կիրառման համար, ի թիվս այլոց, անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1) ամբաստանյալը կամ մեղադրյալն իր միջնորդության մեջ հայտարարել է առաջադրված մեղադրանքի հետ համաձայն լինելու և արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին,

2) ամբաստանյալը կամ մեղադրյալը գիտակցում է իր ներկայացրած միջնորդության բնույթն ու հետևանքները,

3) միջնորդությունը ներկայացված է կամավոր, պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>2</sup>-րդ հոդվածով նախատեսված ժամանակահատվածում, այն է՝ քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը,

4) մեղադրողը չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ,

5) անձը մեղադրվում է այնպիսի հանցանք գործելու մեջ, որի համար նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

(...) վերը շարադրված պայմանների հետ մեկտեղ, դատական քննության արագացված կարգի կիրառման համար անհրաժեշտ է նաև հետևյալ պայմանների առկայությունը.

1) դատարանը ճշտել է դատական քննության արագացված կարգի կիրառման կապակցությամբ տուժողի դիրքորոշումը (տե՛ս Տիգրան Քամալյանի վերաբերյալ Վճռարեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵՇԴ/0097/01/09 որոշման 19-րդ կետը):

2) ամբաստանյալը կամ մեղադրյալը անչափահաս չէ և ենթադրյալ հանցանքը կատարելու պահին նրա տասնութ տարին լրացած է եղել,

3) բացակայում են քրեական գործը կարճելու հիմքերը:

(...) թվարկված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դատական քննության արագացված կարգի կիրառումն անթույլատրելի է: Այլ կերպ՝ միայն նշված բոլոր պայմանների համակցությունն է դատարանին իրավունք տալիս դատավճիռ կայացնել՝ առանց ընդհանուր կարգով դատական քննություն անցկացնելու: Ուստի, դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու հիմք են՝

1) մեղադրողի համաձայնության բացակայությունը,

2) առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի մասնակի համաձայնությունը,

3) ամբաստանյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցագործության՝ առանձնապես ծանր լինելը,

4) ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից միջնորդությունը ներկայացվել է ճնշման տակ, այսինքն՝ հարկադրաբար,

5) ամբաստանյալը կամ մեղադրյալը չի գիտակցում ներկայացված միջնորդության բնույթն ու հետևանքները:

(...) եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված և [վերևում] թվարկված պայմաններից որևէ մեկը չի պահպանվել, ապա դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին» (տե՛ս Շողակաթ Ամիրխանյանի և Գառնիկ Ֆարմանյանի գործով Վճռարեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշման 24-27-րդ կետերը):

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝

«Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.  
3) հանցագործության` քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.  
4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող և խստացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին:

2. Անչափահասների գործերով վարույթի կարգը կարգավորվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով, ինչպես նաև սույն գլխի հոդվածներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 440-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլոր գործերով հաստատման ենթական հանգամանքներից բացի, անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

- 1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).
- 2) կյանքի և դաստիարակության պայմանները.
- 3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված են անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները, որոնք վերաբերում են ընդհանուր կարգով իրականացվող դատական քննություններին: Նույն դրույթների վերլուծությունից երևում է, որ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգի կիրառման իրավական հիմք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված չէ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու ուղղակի արգելք, սակայն օրենսգիրքը չի նախատեսում անչափահասների գործերով ընդհանուր կարգից տարբերակված՝ դատական քննության արագացված կարգի կիրառման հատուկ կանոններ: Անչափահասների գործերով վարույթի իրականացման հատուկ կանոնները լրացուցիչ երաշխիքներ են սահմանում գործի հանգամանքների բազմակողման, լրիվ և օբյեկտիվ քննության, հանցագործության կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտման, անչափահասի կողմից իր դատավարական իրավունքների իրականացման, գործի արդարացի քննության համար, ինչպես նաև անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ որպես անչափահասների իրավունքների երաշխավորման միջոց, նախատեսվում է ապացուցման առարկայի ընդլայնված շրջանակ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում նախատեսված՝ ապացուցման ենթակա ընդհանուր հանգամանքներին զուգահեռ պետք է քննարկման առարկա դարձվեն նաև անչափահասի անձին վերաբերող տեղեկությունները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ չպետք է կիրառվի:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 15-16-րդ կետում շարադրված վերլուծությունը, համապատասխանաբար նաև *Շ.Ամիրխանյանի* և *Գ.Ֆարմանյանի* գործով կայացված որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անչափահասի վերաբերյալ գործի քննության ժամանակ, ի թիվս այլոց, ենթակա են պարզման նաև հետևյալ հանգամանքները՝

- 1) անչափահասի վրա այլ անձանց ազդեցությունը,
- 2) հակաիրավական հայացքների, հակումների առաջացման պատճառները,
- 3) հանցանքի կատարմանը նպաստող պատճառները և պայմանները,
- 4) անչափահասի սոցիալական ինտեգրման աստիճանը,
- 5) հոգեկան խանգարումների հետ չկապված մտավոր թերազդացվածության մասին վկայող տվյալների առկայությունը:

Վերոշարադրյալ տվյալների հիման վրա հնարավոր է պարզել, թե արդյոք անչափահասը դժվարություններ ունի իր արարքներին գնահատական տալու, դրանք վերահսկելու, վարքագծի այս կամ այն ձևն ընտրելու, իր արարքին ուղեկցող հանգամանքները հաշվի առնելու, իր արարքի հնարավոր հետևանքները կանխատեսելու կապակցությամբ: Բացի այդ, վերոնշյալ տվյալները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր դեպքում պարզել անչափահասի վարքագծի շարժառիթները:

18. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն որոշման նախորդ կետում շարադրված հանգամանքները կարող են պարզվել միայն ընտանիքում, ուսումնական հաստատությունում կամ աշխատավայրում անչափահասի վարքը և միջանձնային հարաբերությունները, ինչպես նաև հանցագործություն կատարելուց առաջ և հետո նրա վարքագիծն ուսումնասիրելու արդյունքում: Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ անչափահասի վերաբերյալ գործի քննության ժամանակ պարզման ենթակա հանգամանքների լրիվ և բազմակողմանի ուսումնասիրությունը, անչափահասի կողմից իր դատավարական իրավունքների իրացումը և գործի արդարացի քննությունը հնարավոր է արդյունավետորեն ապահովել միայն գործի ընդհանուր կարգով դատական քննության պայմաններում՝ համապատասխան հանգամանքները բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու միջոցով:

Միաժամանակ, Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ վերոնշյալ արգելքը չպետք է դիտարկվի որպես անչափահասի իրավունքների սահմանափակում: Վճարելի դատարանի այս եզարահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ՀՀ գործող քրեական օրենսդրության համաձայն՝ անկախ անչափահասի կողմից կատարված արարքի ծանրության աստիճանից՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նրա նկատմամբ պատիժը նշանակվում է հատուկ կանոններով, որոնք ենթադրում են ավելի մեղմ չափանիշների կիրառում, քան պատժի նշանակման ընդհանուր դրույթներն են: Հետևաբար, անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու արգելքը որևէ կերպ չի սահմանափակում նրանց նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու հնարավորությունը:

Վճարելի դատարանն ընդգծում է նաև, որ անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգ կիրառելու արգելքը, հետևաբար ընդհանուր կարգով դատական քննության իրականացումը չպետք է հանգեցնի գործի չիմնավորված, անհարկի ձգձգումների, այլ հաշվի առնելով անչափահաս անձի իրավական պաշտպա-

նության կարևորությունն ու առանձնահատկությունը, պետք է իրականացվի արդյունավետ և որակյալ քննություն հնարավորինս սեղմ ժամկետներում:

19. Վճռարեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշումները բխում են անչափահասների շահերի պաշտպանության վերաբերյալ ուղղորդող նշանակություն ունեցող մի շարք միջազգային-իրավական կարգադրագրերից: Մասնավորապես՝ «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 5.1-րդ մասի համաձայն՝ «Անչափահասների վերաբերյալ արդարադատության համակարգն ուղղված է առաջին հերթին անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի անչափահաս իրավախախտների վրա ազդեցություն գործող ցանկացած միջոց միշտ համաչափ լինի ինչպես իրավախախտի անհատական առանձնահատկություններին, այնպես էլ իրավախախտման հանգամանքներին»:

Նույն կանոնների 14.1-րդ մասի համաձայն՝ «Դատական քննությունը պետք է պատասխանի անչափահասի շահերին և իրագործվի ըմբռնողության մթնոլորտում, որն անչափահասին հնարավորություն կտա մասնակցելու դատաքննությանը և այնտեղ ազատ շարադրելու իր տեսակետները»:

Նույն կանոնների 20.1-րդ մասի համաձայն՝ «Անչափահասի ցանկացած գործ սկզբից ևեթ պետք է վարել արագ, թույլ չտալով անհարկի ձգձգումներ»:

«Երեխաների իրավունքների մասին» Նյու-Յորքի 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1992 թվականի հունիսի 1-ին) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2003 թվականին ընդունված «Անչափահասների շրջանում հանցագործությունների նկատմամբ նոր մոտեցումների և անչափահասների գործերով արդարադատության նշանակության մասին» N R(2003) 20 հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ «Քրեական դատավարության բոլոր փուլերը պետք է անցկացվեն կարճ ժամանակահատվածներում, որպեսզի նվազեցվեն հետաձգումները և հնարավորության սահմաններում ապահովվեն հանցավորության արագ կանխարգելումը անչափահասների շրջանում: Սակայն բոլոր գործերով քննության արագացման և արդյունավետության բարձրացման միջոցները պետք է հավասարակշռվեն քրեադատավարական նորմերի պահպանման պահանջների հետ»:

20. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Առուստամյանը հանցանքը կատարել է մինչև չափահաս դառնալը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ ամբաստանյալ Ա.Առուստամյանը բնութագրվել է որպես հարցերին ուշացումով պատասխանող, մակերեսային, պարզունակ պատասխաններ տվող, մակերեսային դատողություններ ունեցող, թեթևակշիռ, պրիմիտիվ անձ, ինչպես նաև նշվել է, որ նրա բանակաևորությունը բարձր չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մինչև դատաքննությունն սկսելն Ա.Առուստամյանը միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարել է, որ գիտակցում է

արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանում գործի քննությունն իրականացվել է դատական քննության արագացված կարգով և Ա.Առուստամյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնաիրությունից երևում է, որ Ա.Առուստամյանի գործով դատական քննության արագացված կարգը կիրառվել է ոչ միայն վերջինս կողմից հանցանքը անչափահաս տարիքում կատարված լինելու, այլ նաև մակերեսային դատողություններ, բանականության ցածր աստիճան, կարողությունների ցածր մակարդակ, միջանձնային հարաբերություններում առանց խորքային պատկերացումների անմիջական հավատ ունենալու պայմաններում:

21. Սույն որոշման 14-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Առուստամյանի վերաբերյալ գործի քննության արագացված կարգ կիրառելու հետևանքով Առաջին ատյանի դատարանը լրիվ և բազմակողմանի ուսումնասիրության չի ենթարկել անչափահաս ամբաստանյալի կողմից իր արարքներին գնահատական տալու, դրանք վերահսկելու, արարքին ուղեկցող հանգամանքները և հնարավոր հետևանքները հաշվի առնելու հետ կապված ղեկավարությունների առկայության հանգամանքը, չի պարզել Ա.Առուստամյանի վարքագծի շարժառիթները և այլն, ինչպես նաև չի գնահատել արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները վերջինիս կողմից հիմնովին չզիտակցելու հավանականությունը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 17-18-րդ կետերում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հիմնավորված չէ Ա.Առուստամյանի վերաբերյալ գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որը դրսևորվել է արագացված կարգով դատական քննություն անցկացնելու կարգի ու պայմանների վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված պահանջների անտեսման ձևով: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, օրինական ուժի մեջ է թողել այն՝ չսնդրադառնալով և չվերացնելով քրեադատավարական օրենքի խախտումը:

22. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի էական խախտում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...):»:

Ստորադաս դատարանների կողմից թույլ տված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով էական են և հիմք են հանդիսանում նրանց կողմից կայացված դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Մ Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Անդրանիկ Գաբիկի Առուստամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 8-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝  
Դատավորներ՝*

*ստորագրություն  
ստորագրություններ*



13.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0113/06/11

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

*նախագահությամբ՝* Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունվարի 10-ի որոշման դեմ մեղադրյալ Գուրգեն Նիկողայի Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հունիսի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 19113111 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Գուրգեն Նիկողայի Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2011 թվականի օգոստոսի 11-ին մեղադրյալ Գ.Գրիգորյանը հայտնաբերվել է:

3. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2011 թվականի օգոստոսի 13-ին կրկին քննության առնելով մեղադրյալ Գ.Գրիգորյանի կալանավորման հարցը, բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը և անփոփոխ է թողել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի պաշտպան Հ.Հովսեփյանի միջնորդությունը:

4. Մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 13-ի որոշումը:

5. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է երկու ամիս ժամկետով:

6. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը կրկին երկարացվել է երկու ամիս ժամկետով:

7. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանը, որը վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 10-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

8. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 10-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի մարտի 6-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

9. Վճարելի բողոքին կից ներկայացված «ՀԱՅՓՈՍՍ» ՓԲԸ-ի Ձև 47 կտրոնի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2011 թվականի դեկտեմբերի 12-ին:

10. Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Դատական վարույթի նյութերի, վերաքննիչ բողոքի և բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը մեղադրյալ Գուրգեն Նիկոլայի Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումը կայացրել է 2011 թվականի դեկտեմբերի 6-ին, վերաքննիչ բողոքը՝ ծրարի վրա արված դրոշմակնիքի համաձայն՝ փոստին

հանձնվել է 2011 թվականի դեկտեմբերի 13-ին և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում նույն օրը՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ին: (...)

(...) Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ հրապարակված լինելով 2011 թվականի դեկտեմբերի 6-ին, կարող էր բողոքարկվել 2011 թվականի դեկտեմբերի 07-ի գիշերվա գյու ժամից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 11-ի գիշերվա ժամը քսանչորսը: Քանի որ 2011 թվականի դեկտեմբերի 11-ը կիրակի էր՝ ոչ աշխատանքային օր, ժամկետի վերջին օրը պետք է հաշվել դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2011 թվականի դեկտեմբերի 12-ը: (...)

Վերաքննիչ բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2011 թվականի դեկտեմբերի 13-ին, այսինքն պաշտպան Հովսեփի Հովսեփյանի կողմից վերաքննիչ բողոքը բերվել է քրեադատավարական օրենքով նախատեսված վերաքննիչ բողոքարկման ժամկետների խախտմամբ: (...) Նման պայմաններում գտնում են, որ պաշտպան Հովսեփի Հովսեփյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ» (տե՛ս նյութեր, էջեր 136-137):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքը բերվել է 2011 թվականի դեկտեմբերի 12-ին՝ և այն «Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 2008 ստորաբաժանմանն է հանձնվել նույն օրը, այլ ոչ թե 2011 թվականի դեկտեմբերի 13-ին:

Վերոշարադրյալից բողոքաբերը հանգել է այն եզրահանգման, որ խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, սահմանափակվել են անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 10-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորվա՞ծ է արդյոք մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից գրկման (...) օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական աստիճանում»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինակառությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում է [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հինգօրյա ժամկետում, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: (...)

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, (...): Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, (...):

(...)»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից երևում է, որ քրեական վարույթի պատշաճ ընթացքն ապահովվում է նաև քրեադատավարական ժամկետների միջոցով, ինչը դատավարության մասնակիցներին հնարավորություն է ընձեռում որոշակի ժամանակահատվածում կատարել քրեադատավարական գործողություններ կամ ձեռնպահ մնալ այդ գործողությունների կատարումից:

15. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցակցային դատավարությունում, որտեղ գործում է կողմերի «արագ դատարանի» իրավունքը, դատավարական ժամկետները երաշխավորում և կարգավորում են վարույթի մասնակիցների իրավունքների իրացումը: Գրանով պայմանավորված՝ դատավարական ժամկետների պահպանումն ապահովում է ոչ միայն քրեական դատավարության խնդիրների իրականացումը, այլև ինքնին դատավարության ընթացակարգի արդարությունը:

16. Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը կրկին երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի կողմից որոշում է կայացվել 2011 թվականի դեկտեմբերի 6-ին, որի վերաքննության կարգով բողոքարկման ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա, կազմել է հրապարակվելու պահից հինգ օրը (տե՛ս սույն որոշման 6-րդ և 14-րդ կետերը):

Վճռաբեկ բողոքին կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Հ.Հովսեփյանի կողմից վերաքննիչ բողոքը փոստին է հանձնվել 2011 թվականի դեկտեմբերի 12-ին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 10-ի որոշմամբ պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում առկա իրավական նորմերի և վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին աստայանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման դեմ պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հնգօրյա ժամկետի պահպանմամբ:

Հետևաբար, հիմնավորված չէ մեղադրյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Հ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի և 419-րդ հոդվածների հիման վրա, հիմք է կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Գուրգեն Նիկոլայի Գրիգորյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

14.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԳ/1133/07/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ներկայացուցիչ՝</i>	Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Դուկասյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի մարտի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83156811 քրեական գործը:

2. 2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով թույլատրել կատարել խուզարկություն «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի՝ Երևան քաղաքի Չարուբյան 1/1 հասցեում գտնվող գրասենյակում և կից օժանդակ կառույցներում՝ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր և այլ իրեր հայտնաբերելու և առգրավելու համար:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և թույլատրվել է կատարել խուզարկություն «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի՝ Երևան քաղաքի Չարուբյան 1/1 հասցեում գտնվող գրասենյակում և կից օժանդակ կառույցներում՝ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր և այլ իրեր հայտնաբերելու և առգրավելու համար:

3. «Սեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Լուկասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունվարի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Սեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Լուկասյանը, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

5. Գործի նյութերում առկա է խուզարկություն կատարելու վերաբերյալ 2012 թվականի հունվարի 12-ի արձանագրությունը, որի համաձայն «Այն սկսվեց ժամը 15<sup>10</sup> և ավարտվեց 23<sup>10</sup>: Մինչև խուզարկություն կատարելը ներկայացվեց այդ մասին դատարանի «26» 12 2011թ. որոշումը (...)» (տե՛ս նյութեր, էջ 46):

6. Առաջին ատյանի դատարանի եզրափակիչ մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարել՝ թիվ 83156811 քրեական գործով թույլատրել խուզարկություն կատարել «Սեզո Գոլդ» ՍՊ ընկերության Երևան քաղաքի Չարուբյան 1/1 հասցեում գտնվող գրասենյակում և կից օժանդակ կառույցներում՝ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր և այլ իրեր հայտնաբերելու և առգրավելու համար:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան» (տե՛ս նյութեր, էջ 21):

7. «Սեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Լուկասյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 2012 թվականի հունվարի 16-ին (տե՛ս նյութեր, էջ 83):

8. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Ինչպես երևում է վերաքննիչ բողոքից, այն վերաքննիչ դատարան է ուղարկվել 2012 թվականի հունվարի 16-ին, իսկ Առաջին ատյանի դատարանի նյութերից՝ բողոքարկվող որոշումից երևում է, որ այն հրապարակվել է 2011 թվականի դեկտեմբերի 26-ին, այսինքն՝ դիմողի բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի, 382.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

Բողոքարկվող որոշումը նշված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10<sup>1</sup> կետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի մեջ, հետևաբար այն գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, որի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակելու պահից տասնօրյա ժամկետում:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2012 թվականի հունվարի 9-ն էր, սակայն բողոքը ուղարկվել է 2012 թվականի հունվարի 16-ին, հետևաբար բողոքը ժամկետանց է:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում են, որ վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառով: (...) (տե՛ս նյութեր, էջ 83):

**Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեադատավարական օրենսդրության նորմերի խախտում:

Ի հիմնավորում իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասը, Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ինչի արդյունքում «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ն գրկվել է օրենքով երաշխավորված իր իրավունքներից: Բողոք բերած անձը, մասնավորապես, փաստարկել է, որ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները, այդ թվում՝ խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդությունները քննվում են դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ, ուստի միջնորդության վերաբերյալ որոշումը միայն կայացվում է, այլ ոչ թե հրապարակվում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նշված դեպքում խուզարկության որոշման բողոքարկման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի տրամաբանությունից բխող և 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված իրավաբանական փաստը՝ դատական ակտի հրապարակումը, օբյեկտիվորեն բացակայել է, ուստի օրենքով սահմանված բողոքարկման ժամկետն ինքնին չի հոսել:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 27-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խուզարկություն կատարելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտերի բողոքարկման ժամկետի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ղուկասյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանի որոշմամբ կատարվում են բնակարանի խուզարկությունը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի,



քննիչի կամ դատախազի պատճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդություները՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար: (...)»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

2. Դատական նիստին իրավունք ունի մասնակցել դատախազը, եթե անհրաժեշտ է համարում անձամբ պաշտպանել միջնորդությունը: Դատախազն իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝

« (...)»

2. Խուզարկություն կամ առգրավում կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն կամ առգրավում, ծանոթացնել որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

(...)

7. Խուզարկություն կատարելիս որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո քննիչն առաջարկում է հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը կամ թաքնված անձին (...)»:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու միջնորդություն հարուցելու մասին որոշումը հանդիսանում է մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության օբյեկտ: Ընդ որում, նշված որոշման հիման վրա հարուցված միջնորդության քննությունն իրականացվում է բացառապես դռնփակ դատական նիստում՝ դատավորի, միջնորդություն ներկայացրած անձի և, ըստ անհրաժեշտության, դատախազի մասնակցությամբ: Միջնորդության քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումը հրապարակվում է քննիչի կողմից բնակարանի խուզարկությունը կատարելուց անմիջապես առաջ:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակարանի խուզարկություն կատարելու միջնորդության կապակցությամբ դատարանի կողմից կայացված դատական ակտը կայացումից անմիջապես հետո հասանելի է լինում միայն միջնորդությունը ներկայացրած պաշտոնատար անձին և դատախազին: *A contrario*, շահագրգիռ մյուս կողմն այդ որոշման առկայության մասին իրազեկվում է միայն խուզարկություն կատարելուց անմիջապես առաջ: Այսինքն՝ քննարկվող միջնորդության դատական քննության արդյունքում կայացված որոշումը մինչ խուզարկություն կատարելը ո՛չ հրապարակման, ո՛չ էլ որևէ այլ եղանակով հասանելի չի դարձվում շահագրգիռ մյուս կողմի համար:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10<sup>1</sup> կետի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտեր՝ առաջին աստիճանի դատարանի դատավճիռ, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը» վերտառությամբ 376<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

«(...)

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազդարկման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ « (...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող ակտերի դեմ վերաքննիչ բողոքը բերվում է դրանք հրապարակելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետները օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: (...):»:

Սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծությունից երևում է, որ դատավարական ժամկետները հաշվելիս հիմք են ընդունվում որոշակի փաստեր կամ իրադարձություններ, որոնցից սկսվում է ժամկետի ընթացքը: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկության վերաբերյալ դատարանի որոշմանը, ապա այն հանդիսանում է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որը Վերաքննիչ դատարան կարող է բողոքարկվել այդ որոշման հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

16. Հիմք ընդունելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ դատական ակտի վերաքննիչ բողոքարկման համար նախատեսված ժամկետի հաշվարկի հիմքում դրված իրավաբանական փաստը դատական ակտի հրապարակման պահն է: Հետևաբար, առաջին ատյանի դատարանի՝ խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ որոշման բողոքարկման՝ օրենքով նախատեսված ժամկետն սկսում է հոսել այդ որոշման մասին շահագրգիռ կողմին պաշտոնապես ծանուցելու, այն է՝ խուզարկությունն սկսելու պահից:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ բավարարել է խուզարկություն կատարելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը և չի մանրամասնել որոշման բողոքարկման ժամկետները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սույն գործով խուզարկությունը կատարվել է 2012 թվականի հունվարի 12-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

«Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ղուկասյանն Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 2012 թվականի հունվարի 16-ին: Նշած բողոքը Վերաքննիչ դատարանը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման դատավարական ժամկետը հաշվելու հիմք հանդիսացած իրավաբանական փաստը տեղի է ունեցել 2012 թվականի հունվարի 12-ին, հետևաբար բողոքարկման ժամկետն ինքնին չի սկսել հոսել Առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի կայացման պահից, այն է՝ 2011 թվականի դեկտեմբերի 26-ից սկսած: Արդյունքում, վերաքննիչ բողոքը թողնելով առանց քննության, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված՝ գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, սահմանափակել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ղուկասյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի և 419-րդ հոդվածների հիման վրա՝ հիմք է կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

20. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

15.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԳ-1/0043/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան՝* Կ.ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Բորիսի Բաբայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ մեղադրող Մ.Բաղդյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի մայիսի 30-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայազորային բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90263911 քրեական գործը:

2011 թվականի հունիսի 11-ի որոշմամբ Դավիթ Բաբայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հունիսի 29-ին թիվ 90263911 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. 2011 թվականի հուլիսի 28-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայագորային բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90270311 քրեական գործը:

2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Դավիթ Բաբայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի սեպտեմբերի 13-ին թիվ 90270311 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

3. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ թիվ 90263911 և թիվ 90270311 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Դավիթ Բաբայանը մեղավոր է ճանաչվել երկու հանցավոր արարքների մեջ՝ յուրաքանչյուրը նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով: Յուրաքանչյուր դրվագով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Դ.Բաբայանի նկատմամբ պատիժ է սահմանվել կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է նախորդ՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի օգոստոսի 31-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 6 (վեց) ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելը, և Դ.Բաբայանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Ամբաստանյալ Դ.Բաբայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռը Դ.Բաբայանին մեղսագրված արարքներից առաջին դրվագի մասով բեկանել է, այդ դրվագով Դ.Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել:

Դ.Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի երկրորդ դրվագով նշանակված պատիժը՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 1 (մեկ) տարի ժամկետով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով՝ դատավճիռների համակցությամբ նշանակված պատժին մասնակիորեն նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 6 (վեց) ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելը գումարելու և Դ.Բաբայանի նկատմամբ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելու ձևով վերջնական պատիժ սահմանելու մասով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը թողնվել է անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Մ.Բալդյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի մարտի 28-ի որոշմամբ մեղադրող Մ.Բալդյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Ամբաստանյալ Դ.Բաբայանին մեղադրանք է առաջադրվել և Առաջին ատյանի դատարանի դատավճռով նա մեղավոր է ճանաչվել հետևյալ արարքների համար. «Դ.Բաբայանը, 2010 թվականի դեկտեմբերի 28-ից հանդիսանալով ժամկետային զինծառայող, մորը տեսակցելու, ինչպես նաև ելնելով ընտանիքի սոցիալական ծանր վիճակից 2011 թվականի մարտի 11-ին, ինչպես նաև 2011 թվականի մարտի 26-ին՝ ժամը 6<sup>40</sup>-ին, ինքնակամ թողել է գորամասի տարածքը և գնացել Երևանի 16 թաղամասի թիվ 15 շենքի թիվ 40 բնակարան: Մորը տեսակցելուց հետո, 2011 թվականի մարտի 29-ին՝ ժամը 12<sup>10</sup>-ին, ինքնակամ ներկայացել է ծառայության վայր: 2011 թվականի մայիսի 19-ին ժամը 7-ից մինչև 2011 թվականի մայիսի 21-ը՝ ժամը 7<sup>45</sup>-ը, բացի այդ, 2011 թվականի մայիսի 31-ի ժամը 12<sup>50</sup>-ից մինչև 2011 թվականի հունիսի 2-ի ժամը 17<sup>20</sup>-ը կրկին նույն պատճառաբանությամբ ինքնակամ թողել է գորամասի տարածքը և գնացել տուն: Այսինքն՝ Դ.Բաբայանը երեք անվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև երեք օր տևողությամբ ինքնակամ թողել է գորամասը /1-ին դրվագ/:

Բացի այդ, Դ.Բաբայանը մորը տեսակցելու պատճառաբանությամբ 2011 թվականի հուլիսի 18-ին ինքնակամ թողել է գորամասի տարածքը, իսկ 2011 թվականի օգոստոսի 17-ին ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերվել է և բերման ենթարկվել: Այսինքն՝ Դ.Բաբայանը երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ ինքնակամ թողել է գորամասը /2-րդ դրվագ/» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջեր 61-62, հատոր 3, էջեր 77-82):

7. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը Դ.Բաբայանին մեղսագրված արարքներից առաջին դրվագի մասով բեկանել է հետևյալ պատճառաբանությամբ. « (...) ՀՀ ՊՆ Արբոլյանի ՌՌ բաժնի հետաքննիչ Ռ.Վարդանյանի 2011 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ, որը նույն օրը հաստատվել է ՀՀ ՊՆ Արբոլյանի ՌՌ բաժնի պետի կողմից, Դավիթ Բորիսի Բաբայանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ՝ նկատի ունենալով, որ 2011 թվականի մարտի 11-ին ժամը 06:00-15:00, 2011 թվականի մարտի 26-ի ժամը 17:00-ից մինչև 2011 թվականի մարտի 29-ի ժամը 12:10-ը գորամասն ինքնակամ թողնելու դեպքում բացակայում է հանցակազմը:

Հետաքննության մարմնի վերոհիշյալ որոշումը չի վերացվել: Այդ պայմաններում Դ.Բաբայանը որպես մեղադրյալ է ներգրավվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, և նա դատարանի դատավճռով հաստատված համարված մեղսագրված արարքի 1-ին դրվագով դատապարտվել է նաև այն բանի համար, որ հանդիսանալով ժամկետային զինծառայող՝ 2011 թվականի մարտի 11-ին, ինչպես նաև 2011 թվականի մարտի 26-ին՝ ժամը 06:40-ին, ինքնակամ թողել է գորամասի տարածքը, 2011 թվականի մարտի 29-ին՝ ժամը 12:10-ին, ինքնակամ ներկայացել ծառայության վայր: Նա ինքնակամ գորամասը թողել է նաև 2011 թվականի մայիսի 19-ի ժամը 07:00-ից մինչև 2011 թվականի մայիսի 21-ը՝ ժամը 07:45-ը, բացի այդ, 2011 թվականի մայիսի 31-ի ժամը 12:50-ից մինչև 2011 թվականի հունիսի 02-ի

ժամը 17:20-ը: Այսինքն՝ Դ.Բաբայանը դատապարտվել է երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև 3 օր տևողությամբ ինքնակամ գորամասը թողնելու համար:

Փաստորեն, նախաքննական մարմնի, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի կողմից Դ. Բաբայանին մեղաազարվել է արարք այն դեպքում, երբ 2011 թվականի մարտի 11-ին և 2011 թվականի մարտի 26-ի ժամը 06:40-ից մինչև 2011 թվականի մարտի 29-ի ժամը 12:10-ը գորամասն ինքնակամ թողնելու մասով հետաքննության մարմնի որոշմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է: Այսինքն՝ Դ.Բաբայանին առաջադրված մեղադրանքի այդ մասով առկա է քրեական հետապնդում չիրականացնելու մասին հետաքննության մարմնի չվերացված որոշում:

(...)

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի ապրիլի 4-ի չվերացված որոշման առկայության պայմաններում 2011 թվականի մարտի 11-ին և 2011 թվականի մարտի 26-ի ժամը 06:40-ից մինչև 2011 թվականի մարտի 29-ի ժամը 12:10-ը գորամասն ինքնակամ թողնելու մասով Դ.Բաբայանը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվել և դատապարտվել չէր կարող:

Վերջինս չէր կարող մեղաազարված արարքի 1-ին դրվագով մեղադրվել և դատապարտվել նաև դատավճռով հաստատված համարված մեղադրանքի մնացած մասով՝ 2011 թվականի մայիսի 19-ի ժամը 07:00-ից մինչև 2011 թվականի մայիսի 21-ը ժամը 07:45-ը և 2011 թվականի մայիսի 31-ի ժամը 12:50-ից մինչև 2011 թվականի հունիսի 02-ի ժամը 17:20-ը գորամասն ինքնակամ թողնելու համար, որովհետև Դ.Բաբայանը երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև 3 օր տևողությամբ ինքնակամ չի թողել գորամասը: Այս դեպքում ևս Դ.Բաբայանի գործողություններում բացակայում է հանցակազմը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և նույն հոդվածի 5-րդ մասի դրույթներով ղեկավարվելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազարված արարքի 1-ին դրվագի մասով դատավճիռը ենթակա է բեկանման. Դ.Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և այդ մասով քրեական գործի վարույթը կարճել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջեր 144-145):

8. ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության բաժնի հետաքննիչ Ռ.Վարդանյանի 2011 թվականի ապրիլի 4-ի «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման համաձայն՝ «(...)Նախապատրաստված նյութերով պարզվել և հիմնավորվել է, որ շարքային Դ.Բաբայանը գորամասն ինքնակամ թողել է 26.03.11թ. ժամը 16:00-ի սահմաններում: 29.03.11թ. ժամը 12:10-ին ինքնակամ ներկայացել է գորամաս: (...) Համաձայն ՀՀ ՊՆ 55076 գորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանքի՝ շարքային Դավիթ Բորիսի Բաբայանը զինվորական ծառայության ընթացքում ունեցել է գորամասն ինքնակամ թողնելու երկու դեպք՝ 1) 11.03.11թ. ժամը 06:00-15:00, 2) 26.03.11թ. ժամը 17:00-ից մինչև 29.03.11թ. ժամը 12:10: Այսպիսով, նախապատրաստված նյութերով հիմնավորվել է, որ Դ.Բաբայանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ուստի վերագրայլի հիման վրա (...) որոշեցի Դավիթ Բորիսի Բաբայանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով նրա նկատմամբ քրեական

գործի հարուցումը մերժել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (...))» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջեր 44-46):

9. ՀՀ պաշտպանության նախարարության 55076 գորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «ՀՀ ՊՆ 55076 գորամասի զինձառայող Դավիթ Բորիսի Բաբայանը գորամասում ծառայելիս թույլ է տվել հետևյալ խախտումները՝ ԶԻԹ 11.03.11թ. ժ.06:00-15:00, 26.03-29.03.11թ., 19.05-21.05.11թ., 31.05-02.06.11թ., և 18.07-17.08.11թ, և նշված խախտումների համար կրել է կարգապահական տույժ՝ «կալանք» 12.03-22.03.11թ., 30.03-09.04.11թ., 21.05-26.05թ., 06.06-11.06.11թ.» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 129):

10. Ամբաստանյալ Դ.Բաբայանն իր վերաքննիչ բողոքում փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է իր կողմից որպես կարգապահական տույժ կարգապահական մեկուսարանում կրած 30-օրյա ժամկետը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջ 104):

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքարեբը փաստարկել է, որ առկա է վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը Դ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի 1-ին դրվագով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Դ.Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը, այն է՝ Դ.Բաբայանին առաջադրված մեղադրանքի այդ դրվագով առկա է քրեական հետապնդում չիրականացնելու մասին հետաքննության մարմնի չվերացված որոշում:

Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ զինձառայողը բացակայի գորամասից կամ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանա երեք օրից ավելի, բայց մեկ ամսից պակաս ժամկետով, կամ նույն արարքները կատարի երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ մեկից երեք օր տևողությամբ: Սույն գործով 1-ին դրվագով Դ.Բաբայանը երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև երեք օր տևողությամբ ինքնակամ թողել է գորամասը՝ 2011 թվականի մարտի 11-ին՝ ժամը 6-ից 15-ը, 2011 թվականի մարտի 26-ից 2011 թվականի մարտի 29-ը, 2011 թվականի մայիսի 19-ից 2011 թվականի մայիսի 21-ը, 2011 թվականի մայիսի 31-ից 2011 թվականի հունիսի 2-ը: Զորամասն ինքնակամ թողնելու վերոգրյալ երկու դրվագներով հետաքննիչի 2011 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառով: ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմն առաջացել է, երբ Դ.Բաբայանը երրորդ անգամ ինքնակամ թողել է գորամասի տարածքը: Դրանից ելնելով՝ հարուցվել է քրեական գործ, կատարվել է քննություն, և մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկվել է դատարան: Քրեա-



կան գործ հարուցելիս կամ հետագայում մեղադրանք առաջադրելիս հետաքննիչի կողմից 2011 թվականի ապրիլի 4-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ այդ ժամանակ Դ.Բաբայանի գործողություններում բացակայել է հանցակազմը և այն առաջացել է այն ժամանակ, երբ նա երեք ամսվա ընթացքում երրորդ անգամ ինքնակամ թողել է գորամասի տարածքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի դրույթները չեն խախտվել, այլ պարզապես Վերաքննիչ դատարանի կողմից ճիշտ չի կիրառվել և մեկնաբանվել քրեադատավարական օրենքը, ինչի արդյունքում անհիմն և չարդարացված կերպով բարելավվել է ամբաստանյալի վիճակը:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը՝ Դ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղազգրված արարքներից առաջին դրվագով, և քրեական գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի («Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում») համատեքստում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի («Ձորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնել») մեկնաբանման առումով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

#### *1. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքը*

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի ապրիլի 4-ի որոշման չվերացված լինելը Դ.Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղազգրված արարքներից առաջին դրվագով իրականացվող քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ (...) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում (...)»:

Նշված դրույթը սահմանում է քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը բացառող հիմքերից մեկը: Դրա բովանդակությունից հետևում է, որ անձի նկատմամբ որոշակի մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշման առկայությունը բացառում է նույն անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական գործ հարուցելու կամ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը: Այլ խոսքով՝ քանի դեռ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումը վերացված չէ, նույն անձը նույն մեղադրանքով քրեական պատասխանատվության ենթարկվել չի կարող: Քրեական հետապնդումը բացառող այս հանգամանքի հիմքում օրենսդիրը նախատեսել է երկու պարտադիր պայման՝

ա) քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումը պետք է վերաբերի նույն անձին,

բ) այդ որոշումը պետք է կայացված լինի նույն մեղադրանքի սահմաններում:

16. «Մեղադրանք» եզրույթի բովանդակային մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա. Պասյանի* և *Ա. Ստեփանյանի* գործերով կայացված որոշումներում: *Ա. Պասյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) «մեղադրանքի ձևակերպում» եզրույթ[ի] կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն» (տե՛ս Արկադի Պատվականի Պասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 18-19-րդ կետերը):

*Ա. Ստեփանյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Քրեական օրենքով նախատեսված՝ անձին մեղսագրվող արարքը պետք է արտացոլվի անձին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ: Վերջինս պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, ինչպես նաև դրանում պետք է նշվի քրեական այն օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները» (տե՛ս Ալվարո Չուբարի Ստեփանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԳ/0327/01/10 որոշման 16-րդ կետը):

17. Վերահաստատելով *Ա. Պասյանի* և *Ա. Ստեփանյանի* գործերով կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ մեղադրանքի ձևակերպման մեջ պետք է ամբողջապես արտացոլվի անձին մեղսագրվող արարքը, որը պետք է ներառի հանցակազմի բոլոր

հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, ինչպես նաև քրեական այն օրենքը, որին համապատասխանում է նկարագրված՝ հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքը: Արարքի ճիշտ որակման համար հատկապես կարևոր է հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրող փաստերի հստակ և լիարժեք շարադրանքը:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի՝ գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի հիմքում ընկած փաստերի ամբողջական, հստակ և ճիշտ ձևակերպումը նաև երաշխիք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված՝ քրեական հետապնդումը բացառող հիմքի առկայությունը հաստատելու կամ ժխտելու, ինչպես նաև անձի՝ նույն արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկվելու համար այն դեպքերում, երբ այդ նույն արարքի համար նրա նկատմամբ առկա է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին չվերացված որոշում:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Բաբայանի կողմից 2011 թվականի մարտի 11-ին՝ ժամը 6-ից 15-ը, ինչպես նաև 2011 թվականի մարտի 26-ից 29-ը գործամասն ինքնակամ թողնելու դեպքերի համար նախապատրաստված նյութերով ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Արովյանի բաժնի հետաքննիչ Ռ.Վարդանյանի 2011 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Գ.Բաբայանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Թիվ 90263911 քրեական գործի շրջանակներում Գ.Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա չորս դեպքով, այն է՝ 2011 թվականի մարտի 11-ին՝ ժամը 6-ից 15-ը, 2011 թվականի մարտի 26-ից 29-ը, 2011 թվականի մայիսի 19-ից 21-ը և 2011 թվականի մայիսի 31-ից հունիսի 2-ն ինքնակամ թողել է գործամասի տարածքը (առաջին դրվագ): Թիվ 90270311 քրեական գործի շրջանակներում Գ.Բաբայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2011 թվականի հուլիսի 18-ին ինքնակամ թողել է գործամասի տարածքը, իսկ 2011 թվականի օգոստոսի 17-ին ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերվել և բերման է ենթարկվել (երկրորդ դրվագ):

Վերը նշված երկու դրվագներից յուրաքանչյուրով Առաջին ատյանի դատարանը Գ.Բաբայանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը Գ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներից առաջին դրվագով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել է, Գ.Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել և այդ մասով քրեական գործի վարույթը կարճել: Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին, գտել է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի ապրիլի 4-ի չվերացված որոշման առկայության պայմաններում 2011 թվականի մարտի 11-ին և 2011 թվականի մարտի 26-ից 29-ը գործամասն ինքնակամ թողնելու դեպքերով Գ.Բաբայանը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվել և դատապարտվել չէր կարող (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ հետաքննիչի 2011 թվականի ապրիլի 4-ի որոշման հիմքում, որով Դ.Բաբայանի նկատմամբ փաստորեն քրեական հետապնդում չի իրականացվել, ընկած է Դ.Բաբայանի կողմից գործման ինքնական թողնելու երկու դեպք՝ 2011 թվականի մարտի 11-ին և 2011 թվականի մարտի 26-ից 29-ը: Իսկ սույն քրեական գործով Դ.Բաբայանին առաջին դրվագով առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած է գործման ինքնական թողնելու չորս դեպք՝ 2011 թվականի մարտի 11-ին, 2011 թվականի մարտի 26-ից 29-ը, 2011 թվականի մայիսի 19-ից 21-ը, 2011 թվականի մայիսի 31-ի հունիսի 2-ը:

19. Սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննիչի որոշումը և սույն քրեական գործով Դ.Բաբայանին առաջադրված մեղադրանքը չնայած վերաբերում են նույն անձին, սակայն այդ փաստաթղթերում շարադրված և արարքների օբյեկտիվ կողմը բնութագրող փաստական հանգամանքները նույնը չեն: Հետևաբար, Դ.Բաբայանին սույն քրեական գործով առաջադրված մեղադրանքի հետ նույնական մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում առկա չէ: Այլ կերպ՝ բացակայում է նույն անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով պարտադիր պայման է քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունն արձանագրելու համար:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի ապրիլի 4-ի որոշման չվերացված լինելը Դ.Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներից առաջին դրվագով իրականացվող քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

*II. Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ*

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. գործման ինքնական թողնելու համար Դ.Բաբայանի նկատմամբ կալանքը որպես կարգապահական տույժ կիրառված լինելու պայմաններում նույն արարքի համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս չի<sup>o</sup> խախտվել արդյոք կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

22. ՀՀ Մահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մինևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար»:

Վերոգրյալ իրավանդության բովանդակային վերլուծությունից հետևում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքը հիմնարար տեղ է գրադեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում՝ «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

23. Վճռարեկ դատարանը գտնում է, որ «նույն արարքի համար» ձևակերպումը ճիշտ կիրառելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած «քրեական մեղադրանք» եզրույթի մեկնաբանմանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Այսպես՝ *Էնգելը և այլք ընդդեմ Նիդերլանդների գործով* Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ (...) Կոնվենցիան, անկասկած թույլ է տալիս պետություններին հասարակական շահերի պաշտպանի գործառույթն իրականացնելիս սահման անցկացնել քրեական և կարգապահական վարույթների միջև, ինչպես նաև դրանց սահմանազատում իրականացնել, սակայն հաշվի առնելով որոշակի պայմաններ: Կոնվենցիան պետություններին ազատություն է տրամադրում որպես հանցագործություն բնորոշել իրավունքներից մեկի բնականոն իրականացումից շեղվող որևէ գործողություն կամ անգործություն: Խոսքն այն իրավունքների մասին է, որոնք պաշտպանվում են Կոնվենցիայով: (...) Եթե պայմանավորվող պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ իրավախախտումը որակել որպես կարգապահական՝ քրեականի փոխարեն, կամ «խառը» իրավախախտում կատարողին հետապնդել կարգապահական, այլ ոչ թե քրեական մակարդակով, ապա 6-րդ և 7-րդ հոդվածների հիմնական դրույթների գործողությունը կենթարկվեր նրանց ինքնիշխան կամքին: Իրավասության այդպիսի ընդլայնումը կարող է հանգեցնել Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի արդյունքների: Այդ պատճառով Դատարանը 6-րդ հոդվածին համապատասխան (...) իրավունք ունի հավաստիանալու, որ կարգապահական վարույթը ոչ մի կերպ չի փոխարինում քրեական վարույթին (տե՛ս Engel and others v. The Netherlands գործով 1976 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72, 5370/72, կետ 81):

*Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով* Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Դատարանը գտնում է, որ որպեսզի պարզվի, թե արդյոք իրավախախտումը Կոնվենցիայի իմաստով որակվում է որպես «քրեական», առաջին

հերթին անհրաժեշտ է որոշակիացնել, թե իրավախախտումը սահմանող դրույթը Պատասխանող պետության իրավական համակարգում գտնվում է քրեական իրավունքում, հաջորդը՝ պետք է հաշվի առնվի «իրավախախտման բնույթը» և հնարավոր պատժի ծանրությունը (...): Բոլոր դեպքերում, ներպետական իրավական համակարգում տրված բնորոշումը 6-րդ հոդվածի իմաստով որոշիչ չէ և խնդրո առարկա իրավախախտման բնույթն առավել կարևոր գործոն է (...): Դատարանը նշում է, որ (...) դիմումատուի նկատմամբ կիրառված սանկցիայի նպատակը եղել է զուտ պատժիչ և կանխարգելիչ: Ի վերջո, ինչ վերաբերում է պատժի խստությանը, Դատարանը գտնում է, որ ազատությունից զրկման կիրառումը որպես պատիժ ընդհանուր առմամբ պատկանում է քրեական ոլորտին, եթե այն իր բնույթով, տևողությամբ կամ իրականացման եղանակով էականորեն վնասակար չէ (...): Սույն գործով դիմումատուն ազատությունից զրկվել է երեք օր ժամանակով և այս ընթացքում պահվել է փակի տակ: Ընդ որում, առավելագույն պատիժը, որը կարող էր սահմանվել, հանդիսանում էր 15-օրյա կալանքը: Այս դիտարկումները բավարար են հաստատված համարելու, որ այն արարքը, որի կատարման համար դիմումատուն մեղադրվում էր, Կոնվենցիայի իմաստով կարելի է դասակարգել որպես քրեական (...)» (տե՛ս Galstyan v. Armenia գործով 2007 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26986/03, կետեր 56-60):

24. Այսպիսով, Եվրոպական դատարանի վերոգրյալ դիրքորոշումներից հետևում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով իրավախախտումը որպես «քրեական» որակելու չափորոշիչներն են՝ ա) իրավախախտման դասակարգումն ըստ ազգային օրենսդրության, բ) իրավախախտման բնույթը, գ) նշանակված կամ հնարավոր պատժի խստության աստիճանը: Ընդ որում, իրավախախտումը «քրեական» որակելու համար բավարար է այդ չափորոշիչներից միայն մեկի, այլ ոչ թե բոլորի պարտադիր առկայությունը:

25. Անդրադառնալով *non bis in idem* սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել *Սերգեյ Չոլտոյխինն ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացված վճռում, որի համաձայն՝ նախադեպային իրավունքի հիմքը, որը ձևավորվել է դատարանի կողմից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի բողոքարկման արդյունքում, փաստում է, որ առկա է մի քանի մոտեցում այն հարցի հետ կապված, թե նույնն են արդյոք այն արարքները, որոնց մեջ դիմողը մեղադրվում է: Առաջին մոտեցումը, որը հիմնվում է դիմողի «նույն վարքագծի վրա» անկախ այն բանից, թե այդ վարքագիծն ինչպես է որակվում օրենքով (*idem factum*), ներկայացված է *Gradinger*-ի գործով կայացված վճռում (...), որի համաձայն՝ թեև երկու հանցագործությունների տարբերակումը, բնույթն ու նպատակները տարբեր են եղել, տեղի է ունեցել 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում, քանի որ երկու որոշումներն էլ հիմնված են եղել դիմողի նույն վարքագծի վրա: (...) Երկրորդ մոտեցումը ևս բխում է այն ենթադրությունից, որ մեղադրյալի վարքագիծը, որի վրա հիմնված է մեղադրանքը, նույնն է, սակայն նշվում է, որ նույն վարքագիծը կարող է հասցնել մի քանի հանցագործության, որոնք կարող են քննվել տարբեր վարույթներում: (...) Դատարանի կարծիքով, թեև արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքին ավելի համահունչ կլիներ այն, որ երկու հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվեին նույն դատարանում՝ մեկ վարույթով, սակայն այն փաստը, որ քննվող գործով երկու վարույթ է իրականացվել, էական չի հանդիսանում: (...) Երրորդ մոտեցումը շեշտադրում է երկու հանցագործությունների «էական տարբերը»: (...) Դատարանը գտնում է, որ տարբեր մոտեցումների առկայությամբ

յունը, կապված այն խնդրի հետ, թե դիմողին մեղսագրվող արարքն իսկապես համընկնում է այն արարքի հետ, որի համար նա արդեն դատապարտվել կամ արդարացվել է, առաջացնում է իրավական անորոշություն, որը համատեղելի չէ այնպիսի հիմնարար իրավունքի հետ, ինչպիսին է նույն հանցագործության համար երկու անգամ չմեղադրվելը (...):

(...) Դատարանը կարծում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը պետք է ընկալվի այնպես, որ արգելվի երկրորդ «հանցագործության» մեջ մեղադրելը կամ դատապարտելը, քանի որ այն բխում է նույն փաստերից կամ այնպիսի փաստերից, որոնք ըստ էության նման են:

7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները ենթակա են կիրառման նոր մեղադրանք հարուցելու ժամանակ, երբ սկզբնական արդարացումը կամ դատապարտումն արդեն ձեռք է բերել *res judicata* ուժը: Այս հատման կետում առկա նյութը, անկասկած, ներառում է այն որոշումը, որով առաջին «պատժիչ վարույթը» եզրափակվել է և այն մեղադրանքները, որոնք ներկայացվել են դիմողին նոր վարույթով: Որպես կանոն, այս փաստաթղթերում պետք է երկուստեք առկա լինեն այն հանցագործության փաստական հանգամանքները, որի համար դիմողն արդեն դատապարտվել է, և այն հանցագործության, որի համար նրան մեղադրանք է առաջադրվել: Դատարանի կարծիքով, նման փաստական հանգամանքները որպես ելակետ բավարար են պարզաբանելու համար այն հարցը, թե արդյոք երկու վարույթների փաստերը եղել են նման, թե ըստ էության նույնական: Դատարանը շեշտադրում է, որ կարևոր չէ, թե նոր մեղադրանքների որ հատվածներն են, ի վերջո, հետագա վարույթներով բավարարվել կամ մերժվել, քանի որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածն ամրագրում է երաշխիքներ՝ ուղղված նոր վարույթով մեղադրվելու կամ պատասխանատվության ենթարկվելու դեմ և ոչ թե երկրորդ անգամ դատապարտվելու կամ արդարացվելու արգելքի դեմ (...):

Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը չի սահմանափակում երկու անգամ չմեղադրվելու և դատարանի առաջ չկանգնելու իրավունքը (...): 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը կիրառվում է անգամ այն դեպքերում, երբ անձը մեղադրվել է, սակայն չի դատապարտվել: Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը սահմանում է երեք տարբեր երաշխիքներ և նշում, որ որևէ մեկը չպետք է լինի (ա) մեղադրման ենթակա, (բ) մեղադրված կամ (գ) դատապարտված նույն հանցագործության համար (տե՛ս *Sergey Zolotukhin v. Russia* գործով 2009 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 14939/03, կետեր 107-122):

26. Դ.Բաբայանի կողմից իրավախախտում կատարելու ժամանակ գործող՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնադիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի թիվ 14 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ «Կայազորային կարգապահական մեկուսարանը նախատեսված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության հիման վրա կարգապահական տույժի կարգով մեկուսացված, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա ձերբակալված կամ կալանավորված, դատարանի կողմից դատապարտված զինծառայողներին պահելու համար»:

Նույն հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ «Կայազորային կարգապահական մեկուսարանում զինծառայողները պահվում են՝ կարգապահական տույժի կարգով

մեկուսացված պարտադիր ժամկետային զինծառայության շարքային կազմի զինծառայողները՝ միասին, ընդհանուր խցում (...):

Նշված հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ «Սեկուսարանում պահվողների իրավունքները, պարտականությունները, նրանց տեղափոխման առանձնահատկությունները, ինչպես նաև խորհրդակցությունները, տույժի միջոցները և դրանց կիրառումն իրականացվում են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ N 247 որոշման 54-րդ կետի համաձայն՝ «Զինվորներին կարող են տրվել հետևյալ տույժերը՝

(...)

ե) ժամկետային ծառայության զինվորների մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում՝ մինչև տասն օր, իսկ պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորներին՝ մինչև յոթ օր.

Վերլուծելով վերոգրյալ դրույթները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ զինված ուժերի կարգապահական նախկին կանոնադրության հիման վրա կարգապահական տույժի կարգով զինծառայողները կարող էին համապատասխանաբար մինչև 10 կամ 7 օր ժամկետով մեկուսացվել և պահվել խցերում՝ կայագորային կարգապահական մեկուսարանում: Ընդ որում, նույն մեկուսարանում են պահվել նաև քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված կամ կալանավորված, ինչպես նաև դատապարտված զինծառայողները: Կարգապահական տույժի կարգով մեկուսացված զինծառայողների համար սահմանված են եղել նույնպիսի իրավունքներ և պարտականություններ, ինչպիսիք ունեցել են ձերբակալվածները, կալանավորվածները կամ դատապարտվածները: Այլ խոսքով՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված անձանց ազատությունը սահմանափակվել է և նրանք պահվել են մեկուսացման նույն պայմաններում, ինչ որ ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձինք:

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված երկու հանցավոր արարքներից առաջին դրվագով մեղադրանք է առաջադրվել, և Առաջին ատյանի դատարանի կողմից նա մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ չորս դեպքով՝ 2011 թվականի մարտի 11-ին, 2011 թվականի մարտի 26-ից 29-ը, 2011 թվականի մայիսի 19-ից 21-ը և 2011 թվականի մայիսի 31-ից հունիսի 2-ն ինքնակամ թողել է գորամասի տարածքը:

Գործի նյութերից երևում է նաև, որ Դ.Բաբայանը գորամասի տարածքն ինքնակամ թողնելու վերը թվարկված բոլոր չորս դեպքերի համար ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանքի ձևով, համապատասխանաբար 2011 թվականի մարտի 12-ից 22-ը (10 օր), 2011 թվականի մարտի 30-ից ապրիլի 9-ը (10 օր), 2011 թվականի մայիսի 21-ից 26-ը (5 օր) և 2011 թվականի հունիսի 6-ից 11-ը (5 օր) (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Դ.Բաբայանը յուրաքանչյուր իրավախախտման համար ենթարկվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի՝ պահվելով կարգապահական մեկուսարանում՝ 5 կամ 10 օր տևողությամբ:

28. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչները (տե՛ս սույն որոշման 23-րդ կետը) կիրառելով սույն որոշման նախորդ կետում մեջբեր-



ված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Դ.Բաբայանին մեղաազրված իրավախախտումները նախատեսվել են որպես կարգապահական զանցանք, սակայն դրանք իրենց բնույթով եղել են վտանգավոր, հանդիսացել են հատուկ կարգավիճակ ունեցող անձանց որոշակի խմբի՝ գորակույզի կամ պայմանագրային հիմունքով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների համար սահմանված պարտադիր կանոնների խախտում, իսկ ներգործության միջոցի նպատակը եղել է պատժիչ:

29. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած Դ.Բաբայանին յուրաքանչյուր դեպքում համապատասխանաբար 10 կամ 5 օր կարգապահական մեկուսարանում պահելը կիրառվել է որպես կարգապահական տույժ, սակայն նրա կողմից կատարված իրավախախտման բնույթը, ինչպես նաև նշանակված ներգործության միջոցի բնույթն ու խստությունը թույլ են տալիս եզրահանգելու, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով այն հավասարագոր է այդ արարքների համար նրան «քրեական մեղադրանքի» համար դատապարտելուն:

30. Ընդհանրացնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դ.Բաբայանը, փաստորեն, նույն արարքի՝ զորամասն ինքնակամ թողնելու համար ենթարկվել է նախ՝ կարգապահական պատասխանատվության, ապա նույն արարքի համար նրա նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, որով էլ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով նա մեղավոր է ճանաչվել, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում պահելը՝ մեկ տարի ժամկետով: Դ.Բաբայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով իրականացված քրեական հետապնդումը վերաբերել է այն նույն արարքին՝ նույն փաստական հանգամանքներով, որի համար նա ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որն իր բնույթով և նշանակված պատժի խստությամբ հավասարագոր է քրեական մեղադրանքի համար քրեական պատասխանատվության ենթարկվելուն:

31. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում՝ Դ.Բաբայանը նույն արարքի համար կրկին դատվել է: Այլ խոսքով՝ զորամասն ինքնակամ թողնելու համար Դ.Բաբայանի նկատմամբ կալանքը որպես կարգապահական տույժ կիրառված լինելու պայմաններում նույն արարքի համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս խախտվել է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

32. Հիմք ընդունելով սույն որոշման 22-31-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Դ.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազրված երկու հանցավոր արարքներից առաջին դրվագով քրեական հետապնդումը դադարեցնելով և այդ մասով գործի վարույթը կարճելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն սխալ է պատճառաբանել իր դատական ակտը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «(...) Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»:

Միննույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում», Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Դավիթ Բորիսի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

16.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԴ1/0040/01/11

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշման դեմ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) ներկայացուցիչ Հ.Անդրեասյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի փետրվարի 7-ին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 61200711 քրեական գործը:

2011 թվականի մարտի 9-ի որոշմամբ Գագիկ Արշակի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չիեռանալու մասին:

2011 թվականի հունիսի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ «Հաստատանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 6-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Գ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Գազիկ Արշակի Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացվել է:

3. Ամբաստանյալ Գ.Առաքելյանի պաշտպան Գ.Մադոյանի և «Ալբրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Անդրեասյանի վերաբնիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաբնիչ քրեական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 11-ին որոշում է կայացրել վերաբնիչ բողոքները մերժելու, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. «Ալբրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Անդրեասյանի վճռարեկ բողոքը վճռարեկ դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Քրեական գործով կատարված քննությամբ նախաքննական մարմինը հաստատված է համարել հետևյալը «2008 թվականի դեկտեմբերի 8-ին Անահիտ Սարգսյանը որդուն՝ Գ.Երեմյանին պատկանող հողամասը և Լիլիթ Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 1986 թվականի արտադրության «Մերսեդես-Բենց G-280» մակնիշի 88 ՍԼ 778 պետհամարանիշի ավտոմեքենան վերջիններիս համաձայնությամբ գրավադրել է «Ալբրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ում. ստացել 13.000 ԱՄՆ դոլար վարկ, որից 2000 ԱՄՆ դոլարը տվել է Գազիկ Առաքելյանին, այն հետագայում բանկին մարելու նպատակով: Վարկը ստանալուց հետո Ա.Սարգսյանը բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված պարտականությունները չի կատարել, ինչի պատճառով էլ «Ալբրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ն 2009 թվականի հուլիսի 7-ին դիմել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ գումարի բռնագանձման հայցի պահանջով:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով «Ալբրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, 2009 թվականի հուլիսի 27-ին որոշում է կայացրել հայցագնի՝ 13.485 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով պատասխանողներ Ա.Սարգսյանին և Լ.Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին:

2009 թվականի հուլիսի 27-ի ԵԱՆԴ/0997/02/09 կատարողական թերթի հիման վրա ԴԱՀԿ ծառայության Կոտայքի մարզային բաժնում 2009 թվականի օգոստոսի 19-ին հարուցվել է կատարողական վարույթ, որի ընթացքում 2009 թվականի օգոստոսի 31-ին արգելանք է դրվել Լ.Առաքելյանի գույքի և դրամական միջոցների վրա ու նրան սեփա-

կանոնային իրավունքով պատկանող, «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ում գրավադրված, 1986 թվականի արտադրության «Մերսեդես-Բենց G-280» մակնիշի 88 UL 778 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա և այն ի պահ է հանձնվել վերջինիս հորը, մահ լիազորված անձ Գագիկ Առաքելյանին: 2010 թվականի դեկտեմբերի 2-ին ԳԱՀԿ աշխատակիցների կողմից ավտոմեքենան առգրավելիս Գ.Առաքելյանը, նախազգուշացված լինելով արգելանքի տակ գտնվող գույքն օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու անթույլատրելիության և մնանատիպ արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելու մասին, թաքցրել է ավտոմեքենան, հրաժարվել է տեղեկություն հայտնել ավտոմեքենայի գտնվելու ստույգ վայրի մասին՝ պատճառաբանելով, որ այն օտարել է, տվել է պարտք մնացած գումարի դիմաց (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջեր 159-163):

6. Առաջին ատյանի դատարանը՝ կիրառելով Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը, կարճել է Գագիկ Արշակի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը և դադարեցրել է նրա նկատմամբ քրեական հետապնդումը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 133-135):

Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ արձանագրված է, որ. «Համաձայն համաներմում հայտարարելու մասին որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի՝ որոշման կատարումը դրվել է դատարանների վրա այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել:

Նույն որոշման 15-րդ կետի համաձայն՝ համաներման որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր հանցագործություն են կատարել մինչև 2011թ. մայիսի 1-ը ներառյալ:

Դատարանը գտնում է, որ միջնորդությունը բխում է վերոհիշյալ օրենսդրական ակտերի բովանդակությունից, ենթակա է բավարարման, ուստի Գագիկ Արշակի Առաքելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջ 135):

7. «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հ.Անդրեասյանն իր վերաքննիչ բողոքում նշել է, որ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտմամբ: Դատարանը սխալ է մեկնաբանել Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 398-րդ հոդվածները և չի կիրառել Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետը: Բողոքաբերն իր վերաքննիչ բողոքում նշել է նաև, որ դատարանը բանկին չի ներգրավել որպես դատավարության մասնակից և չի լուծել հանցագործությամբ պատճառված վնասի փոխհատուցման հարցը:

8. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի որոշումը՝ Գագիկ Առաքելյանի վերաբերյալ համաներմում կիրառելու և ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, արձանագրել է, որ. «Նկատի ունենալով, որ Գագիկ Առաքելյանի նկատմամբ համաներման որոշման կիրառման սահմանափակումները գործի նյութերում բացակայում են, վերաքննիչ դատարանը գտնում է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության

դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ բավարարելով Գագիկ Առաքելյանի միջնորդությունը և «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի կիրառմամբ կարճելով սույն քրեական գործի վարույթը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 196-199):

9. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի վճռի (օրինական ուժի մեջ է մտել 2010 թվականի ապրիլի 14-ին) համաձայն՝ «Անահիտ Սարգսյանից հօգուտ «Ալբրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 11.813 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (...): Բռնագանձումը տարածել գրավի առարկա՝ պատասխանող Լիլիթ Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող «Մերսեդես-Բենց G-280» մակնիշի, 1986 թվականի արտադրության, 88 UL 778 պետհամարանիշի ավտոմեքենայի (...) վրա (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 16):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքարեքը փաստարկել է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ և 398-րդ հոդվածները:

Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը, դատական ցիտի նախապատրաստական փուլում քննելով ամբաստանյալ Գ.Առաքելյանի դիմումը՝ իր նկատմամբ Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ, այն բավարարել է և որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու, Գ.Առաքելյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Փաստորեն, դատարանն անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը, որի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ, ինչպես նաև Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջը, որի համաձայն՝ համաներում չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հանգեցրել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի անկատարության՝ դատարանը հաշվի չի առել, որ Գ.Առաքելյանի կատարած հանցագործությամբ բանկին պատճառվել է խոշոր չափի նյութական վնաս և չի լուծվել այդ վնասի փոխհատուցման հարցը: Բացի այդ, բանկը մասնակից չի դարձվել դատաքննությանը, դրանով իսկ գրկվելով օրենքով իրեն վերապահված իրավունքից:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ հոդվածները՝ բողոքարեքը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել դատական սխալ: Ուստի, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Բանկին դատավարության մասնակից չճանաչելու իրավաչափությունը*

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Գ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի քննությանը մասնակից չլիցիտվելով՝ խախտվե՞լ են արդյոք «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ-ի իրավունքներն ու օրինական շահերը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասը («Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները») պատասխանատվություն է նախատեսում արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքն այն անձի կողմից վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու համար, ում այդ գույքը վստահված է եղել, ինչպես նաև վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով (ավանդներով) բանկային գործառնություններ իրականացնելու համար:

Մեջբերված հանցակազմի վերլուծությունից երևում է, որ այն վերաբերում է վերգրված և արգելանքի տակ գտնվող գույքի կամ կալանքի տակ գտնվող դրամական միջոցների հետ կատարվող ապօրինի գործողություններին:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հիմնական, անմիջական օբյեկտ են հանդիսանում արդարադատության նորմալ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունները: Որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս քաղաքացիների (համապատասխան գործերով տուժողների, հայցվորների), իրավաբանական անձանց, պետության գույքային իրավունքներն ու օրինական շահերը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է վերգրված և արգելանքի տակ գտնվող գույքը

ա) վատնելով,

բ) օտարելով,

գ) թաքցնելով,

դ) ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով

ե) կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով:

Վերգրված կամ արգելանքի տակ գտնվող գույքի վատնումը դրսևորվում է նրանում, որ հանցավորը, գույքի նկատմամբ իր լիազորություններն օգտագործելով, իրեն վստահված գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով օտարում է (ծախսում, վաճառում, այլ անձանց հանձնում, սպառում և այլն): Վատնումն ավարտված է համարվում այն պահից, երբ ավարտվում է երրորդ անձանց գույքը հանձնելու կամ այն սպառելու գործընթացը: Վատնումը կարող է դրսևորվել ոչ միայն միանվագ ակտով, այլև ժամանակի ընթացքում գույքը մաս-մաս օտարելու առանձին դրվագներով:

Վերգրված կամ արգելանքի տակ գտնվող գույքի օտարումը դրսևորվում է վաճառելով, փոխանակելով, նվիրելով, գրավ դնելով:

Վերգրված կամ արգելանքի տակ գտնվող գույքը թաքցնելը նշանակում է առանց վարույթն իրականացնող մարմնին տեղյակ պահելու և ապագայում էլ նրանց տեղե-

կատվություն չտալու մտադրությամբ դրա տեղափոխումը այլ վայր կամ այլ անձանց ի պահ տալը:

Վերգրված կամ արգելանքի տակ գտնվող գույքը մեկ ուրիշին հանձնելը նշանակում է առանց համապատասխան մարմնի թույլտվության դրա ի պահ տալը այլ կազմակերպության կամ անձի՝ առանց գույքը թաքցնելու մտադրության:

Կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելը ենթադրում է յուրաքանչյուր բանկային գործառնության իրականացում, որը կարող են կատարել բանկային մարմինները՝ ՀՀ բանկային օրենսդրությանը համապատասխան:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ ապօրինի գործողություններ է կատարում, վերգրված և արգելանքի տակ գտնվող գույքի կամ կալանքի տակ գտնվող դրամական միջոցների հետ:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտը հատուկ է. վերգրված կամ արգելանքի տակ գտնվող գույքի կապակցությամբ որպես այդպիսին կարող է հանդիսանալ միայն այն անձը, ում այդ գույքը վստահված է եղել, իսկ կալանքի տակ գտնվող դրամական միջոցների կապակցությամբ՝ վարկատու կազմակերպության ծառայողը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը հաստատված է համարել, որ «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն վարկ տրված գումարի բռնագանձման հայցապահանջով դիմել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ Ա.Սարգսյանի և Լ.Առաքելյանի: Գործի քննության ընթացքում դատարանը հայցվորի միջնորդության հիման վրա որոշում է կայացրել պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին: Նշված որոշման հիման վրա ԴԱՀԿ ծառայության Կոտայքի մարզային բաժնում հարուցված կատարողական վարույթի շրջանակներում արգելանք է դրվել Լ.Առաքելյանի գույքի, այդ թվում Բանկում գրավադրված՝ «Մերսեդես-Բենց G-280» մակնիշի ավտոմեքենայի վրա, որն ի պահ է հանձնվել Լ.Առաքելյանի հորը՝ Գագիկ Առաքելյանին: Գ.Առաքելյանը, նախազգուշացված լինելով արգելանքի տակ գտնվող գույքն օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու անթույլատրելիության և մնամատիպ արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելու մասին, 2010 թվականի դեկտեմբերի 2-ին հրաժարվել է ԴԱՀԿ աշխատակիցներին տեղեկություն հայտնել ավտոմեքենայի գտնվելու վայրի մասին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ընդ որում, Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի վճռով Բանկի հայցը բավարարվել է՝ վճռվել է Ա.Սարգսյանից հօգուտ Բանկի բռնագանձել 11.813 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, բռնագանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող՝ «Մերսեդես-Բենց G-280» մակնիշի ավտոմեքենայի վրա (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա թաքցրել է ավտոմեքենան, որը գրավադրված է եղել Բանկում և հանդիսացել է վարկառուի՝ Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների ապահովման



միջոց: Նրա գործողությունների հետևանքով, փաստորեն, ձայնողվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի վճռի կատարումը:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործի ինչպես նախաքննության, այնպես էլ Առաջին ատյանի դատարանի դատական քննության ընթացքում Բանկը գործի քննությանը մասնակից չի դարձվել, իսկ վերաքննիչ բողոքում բերված՝ դատավարության մասնակից դարձնելու փաստարկին, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի անդրադարձել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արգելանքի տակ գտնվող, «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում գրավադրված և դատարանի վճռով բռնագանձման ենթակա ավտոմեքենայի նկատմամբ Գ.Առաքելյանի կատարած ենթադրյալ հանցագործության արդյունքում խախտվել են ինչպես արդարադատության նորմալ գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունները, այնպես էլ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի՝ որպես պարտատիրոջ, գույքային իրավունքներն ու օրինական շահերը:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքի հեղինակի փաստարկն այն մասին, որ սույն քրեական գործի քննությանը մասնակից չդարձվելով՝ խախտվել են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի գույքային իրավունքներն ու օրինական շահերը:

## *II. Համաներման ակտի կիրառելիությունը*

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Գ.Առաքելյանի նկատմամբ համաներում կիրառելու, ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումները:

21. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Համաներման ակտի՝ որպես ինքնավար ինստիտուտի, ինչպես նաև համաներման ակտի կիրառելիության հետ կապված որոշ հարցերի Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վ.Ավետիսյանի* գործով կայացված որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ. «(...) Համաներումն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ

կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատվածությունը: Առանց համաներման ակտի գոյության օրենսգրքերի համապատասխան դրույթներն իրացվել չեն կարող:

(...)

Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմանը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմանից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԳ-3/0013/01/11 որոշումը, կետ 16):

22. Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ քրեական գործերը ենթակա են կարճման, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որի համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում:

Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ համաներմանը չի կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը:

2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարվել է լրացում, համաձայն որի՝ «Մույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով [ընդունվել է համաներման ակտ] գործի հարուցման մեթոմ, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

23. Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են *Գ. Ղազարյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ Համաներման ակտն անձի նկատմամբ կիրառելի չէ բոլոր այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով այդ անձի վրա դրված է նյութական վնասը հատուցելու պարտականություն, և այդ պարտականությունը վերջինիս կողմից չի կատարվում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված սահմանափակման նպատակն է հանցագործությամբ նյութական վնաս պատճառած անձանց շահագրգռել հատուցելու վերոնշյալ վնասը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման վերլուծությունից երևում է, որ այն ուղղակիորեն կապված է համաներման ակտի հետ և սահմանում է դրա կիրառման արգելք: Մասնավորապես, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ արգելվում է համաներման հիմքով գործի հարուցումը մերժել, վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ (տե՛ս Գարիկ Նորիկի Ղազարյանի գործով Վճռարեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ՏԴ-0088/01/ 11 որոշման 19-րդ և 28-րդ կետերը):

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ կիրառելով Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը, կարճել է Գ.Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը և դադարեցրել է նրա նկատմամբ քրեական հետապնդումը:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում Բանկի ներկայացուցիչը փաստարկել է, որ դատարանը սխալ է մեկնաբանել Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը և չի կիրառել Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետը՝ նշելով, որ Բանկին սույն գործով չի ներգրավել որպես դատավարության մասնակից և չի լուծել Բանկին պատճառված վնասի փոխհատուցման հարցը:

Վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության՝ բավարարելով Գ.Առաքելյանի միջնորդությունը և Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի կիրառմամբ կարճելով սույն քրեական գործի վարույթը (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

Մինչդեռ, ինչպես նշվեց սույն որոշման 17-րդ կետում, Գ.Առաքելյանը մեղադրվել է այն բանում, որ թաքցրել է արգելանքի տակ գտնվող և իրեն ի պահ հանձնված, «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում գրավադրված, հետևաբար՝ ստացված վարկի վերադարձվելիության երաշխիք հանդիսացող ավտոմեքենան:

25. Նախորդ կետում շարադրված փաստերի վերլուծությունը հիմք է տալիս Վճռարեկ դատարանին հանգելու հետևության, որ Բանկը՝ որպես պարտատեր, գրավի առարկա հանդիսացող ավտոմեքենայի նկատմամբ ունենալով քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված որոշակի իրավունքներ, Գ.Առաքելյանի գործողությունների հետևանքով գրկվել է այդպիսիք իրականացնելու հնարավորությունից: Արդյունքում խախտվել են Բանկի՝ որպես պարտատիրոջ, գույքային իրավունքներն ու օրինական շահերը (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

26. Վ.Ավետիսյանի և Գ.Ղազարյանի գործերով կայացված որոշումներում, ինչպես նաև սույն որոշման 22-23-րդ, 25-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 24-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքի հեղինակի փաստարկն առ այն, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել, որ Գ.Առաքելյանի գործողությունների արդյունքում բանկին պատճառվել է գույքային վնաս և չի լուծվել այդ վնասի փոխհատուցման հարցը: Հետևաբար, Վճռարեկ դատարանը գտնում է, որ Գ.Առաքելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը Համաներման ակտի կիրառմամբ կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն

օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված չեն:

27. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Գ.Առաքելյանի նկատմամբ Համաձայնեցման ակտը կիրառելի չէր նաև 9-րդ կետի 6-րդ ենթակետի հիմքով (համաձայնեցումը չի կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ սույն գործով առկա չէ օրինական ուժի մեջ մտած որևէ դատական ակտ, որով Գ.Առաքելյանի վրա դրված լիներ Բանկին պատճառված գույքային վնասը հատուցելու պարտականություն:

28. Սույն որոշման 13-26-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը և կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ին օրենքով երաշխավորված իրավունքից զրկելու ճանապարհով: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գազիկ Արշակի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

17.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0102/01/11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

*մասնակցությամբ ամբաստանյալ՝* Բ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

Բ.Երևանում

որոնքաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Քնարիկ Նորիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ ամբաստանյալի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2010 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում Քնարիկ Պետրոսյանի կողմից վաշխառությամբ զբաղվելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 15108110 քրեական գործը:

2011 թվականի մայիսի 5-ին Քնարիկ Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. 2011 թվականի մայիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի դատավճռով Քննարիկ Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 400.000 (չորսհարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Ք.Պետրոսյանի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է պատժից:

Տուժող Գագիկ Հայրապետյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարվել է, վճռվել է ամբաստանյալ Քննարիկ Պետրոսյանից հօգուտ տուժող Գ.Հայրապետյանի բռնագանձել 2.865 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում:

2011 թվականի մայիսի 5-ի որոշմամբ Քննարիկ Պետրոսյանին սեփականության և համասեփականության իրավունքով պատկանող գույքի վրա դրված կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռով որոշված քաղաքացիական հայցի վերջնական կատարումը:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ք.Պետրոսյանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ք.Պետրոսյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Քննարիկ Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ 2007 թվականի հոկտեմբեր ամսից Գագիկ Հայրապետյանին պարտք տված 2.179.800 ՀՀ դրամին համարժեք 6.000 ԱՄՆ դոլարի և 2.000.000 ՀՀ դրամի դիմաց՝ որպես ընդհանուր գումարի ամսական 5 տոկոս հավելավճար, մինչև 2009 թվականի մայիս ամիսը յուրաքանչյուր ամիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2007-2009 թվականների համար սահմանված բանկային 13% հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով ստացել է 108.990 ՀՀ դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլար և 100.000 ՀՀ դրամ:

Բացի այդ, Քննարիկ Պետրոսյանը 2008 թվականի հուլիս ամսվա սկզբին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության աշխատակից Մուսաննա Հակոբյանին իր աշխատասենյակում՝ Բուզանդի 1/3 հասցեում, ամսական 5 տոկոս հավելավճարով տրամադրել է 200.000 ՀՀ դրամ, որի դիմաց ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2008-2010 թվականների համար սահմանված բանկային 13%

հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, մինչև 2010 թվականի հունվար ամիսը, ստացել է ամսական 10.000 ՀՀ դրամ՝ որպես տոկոսագումար: 70.000 ՀՀ դրամ մայր գումարը մարելուց հետո մնացած 130.000 ՀՀ դրամ մայր գումարի դիմաց յուրաքանչյուր ամիս՝ մինչև 2010 թվականի փետրվարի 15-ը, որպես տոկոս ստացել է 6.500 ՀՀ դրամ:

6.Քրեական գործում առկա է ստացական այն մասին, որ տուժող Գ.Հայրապետյանն ամբաստանյալ Ք.Պետրոսյանից պարտքով վերցրել է 9.050 (ինը հազար հիսուն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և պարտավորվել է վերադարձնել վեց ամսվա ընթացքում: Ստացականը թվագրված է 04.06.2010թ. (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 15):

Քրեական գործում առկա է ստացական այն մասին, որ տուժող Գ.Հայրապետյանն ամբաստանյալ Ք.Պետրոսյանից պարտքով վերցրել է 3.120.000 (երեք միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ և պարտավորվել է վերադարձնել վեց ամսվա ընթացքում՝ մինչև 01.06.2010թ. (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 16):

7. Գ.Հայրապետյանի տված ստացականների հիման վրա Ք.Պետրոսյանը դիմել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ պարտքով տրված գումարները բռնագանձելու պահանջով, տուժող Գ.Հայրապետյանը Ք.Պետրոսյանի հետ կնքված փոխառության պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածով նախատեսված կարգով չի վիճարկել:

2011 թվականի հունիսի 21-ի վճռով քաղաքացիական հայցը բավարարվել է (տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 155-158):

#### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

8. Բողոքի հեղինակը նշել է, որ իր բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի, մասնավորապես՝ վաշխառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործում առկա և դատարանում հետազոտված որևէ ապացույցով չի հաստատվել իրեն մեղսագրվող վաշխառության հանցակազմի սուբյեկտիվ կողմը, այն է՝ պարտք տրված գումարի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը: Բողոքաբերի պնդմամբ, որպես իր մեղքը հիմնավորող ապացույցներ են դիտվել շահագրգիռ կողմի՝ տուժող Գ.Հայրապետյանի, նրա կնոջ՝ Ի.Իսրայելյանի, տուժող Ս.Հակոբյանի, ինչպես նաև մի քանի այլ վկաների ցուցմունքները, ովքեր նշել են, որ ամեն ինչ լսել են վերը նշված շահագրգիռ անձանցից:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջները, գործով ձեռք բերված ապացույցները չեն ենթարկել օբյեկտիվ և բազմակողմանի ստուգման, յուրաքանչյուր ապացույց չեն գնահատել վերաբերե-

լիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ խախտվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 360-րդ, 365-րդ հոդվածների պահանջները:

10. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել և իր նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

**Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռարեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռարեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված վաշխառության հանցակազմի մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Վաշխառության քրեաիրավական և փոխառության քաղաքացիաիրավական բնութագրերը.*

12. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Վաշխառությունը՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալ[ն է], ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի 1-ին մասով արգելված արարքի համար՝

1) որի հետևանքով տուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,

2) որը կատարվել է որպես արհեստ,

3) որը կատարվել է տուժողի անչափահաս լինելը կամ մտավոր զարգացման թերություններն օգտագործելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը գետեղված է «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ գլխում և հանդիսանում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վտանգավորությունը դրսևորվում է նրանով, որ դրանք խախտում են տնտեսության ոլորտի իրավակարգը, տնտեսական շրջանառության առանձին մասնակիցների,



հասարակության, պետության տնտեսական շահերը, գույքային վնաս են պատճառում տնտեսվարող սուբյեկտներին և առանձին քաղաքացիներին: Համանման կերպով, վաշխառության հանրային վտանգավորությունն արտահայտվում է հետևյալ կերպ՝

ա) վաշխառության հետևանքով խախտվում է պետության ֆինանսական գործունեությունը, վաշխառումն ստանում է չհաշվառված եկամուտ, ինչպես նաև նյութական վնաս է պատճառում քաղաքացիներին և իրավաբանական անձանց,

բ) վաշխառությունը կարող է նախադրյալ հանդիսանալ այլ՝ առավել ծանր հանցագործությունների (օրինակ՝ փողերի լվացում, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելը և այլն) կատարման համար:

13. Վաշխառության հանցակազմի դիսպոզիցիայի վերլուծությունից երևում է, որ այն երկօբյեկտ հանցագործություն է: Վաշխառության հիմնական անմիջական օբյեկտն են պետության ֆինանսական գործունեության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, լրացուցիչ օբյեկտ են մասնավոր անձանց գույքային իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ընդ որում՝ վաշխառության հանցակազմն այնպես է կառուցված, որ հիմնական օբյեկտը վնասվում է լրացուցիչ օբյեկտին վնաս պատճառելու միջոցով:

Վաշխառության առարկա կարող են հանդիսանալ դրամը, ինչպես նաև տեսակային հատկանիշներով որոշվող գույքը:

Օբյեկտիվ կողմից վաշխառության հանցակազմը նկարագրված է հետևյալ երկրնորելի արարքների միջոցով՝

1) պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը,

2) անձի հետ՝ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվում է մյուս կողմը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ:

Ինչ վերաբերում է արարքի ավարտման պահին, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով արգելված արարքներն ավարտված են համարվում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու կամ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելու պահից: ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով արգելված արարքն ավարտված է համարվում տուժողի՝ նյութական ծանր կացության մեջ ընկնելու պահից:

15. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել մինչև նույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխատուին իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Փոխառության պայմանագիրը ենթադրվում է անտոկոս՝ դրանում ուղղակիորեն այլ բան նախատեսված չլինելու դեպքում, եթե՝

1) քաղաքացիների միջև փոխառության պայմանագիրը կնքված է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարով և այն կապված չէ կողմերից որևէ մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ.

2) փոխառուին պայմանագրով հանձնվել է ոչ թե դրամ, այլ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք»:

Մեջբերված քաղաքացիաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ փոխառության պայմանագրի իմաստով՝ փոխատուն դրամը կամ տեսակային հատկանիշներով որոշվող իրերը փոխառուին է հանձնում ի սեփականություն: Փոխառության պայմանագրով փոխատուն ձեռք է բերում պահանջի իրավունք, իսկ փոխատուն ստանձնում է պարտքը վերադարձնելու պարտականություն: Որպես ընդհանուր կանոն, փոխառության պայմանագիրը հատուցելի է:

16. Մույն որոշման 12-14-րդ և 15-րդ կետերում շարադրված վերլուծության համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով արգելված վաշխառության տարատեսակն ըստ էության ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված փոխառության պայմանագրի էական պայմաններից մեկի (տոկոսի չափի) խախտմամբ կնքված գործարք է:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությամբ վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության՝ որպես մասնավոր հետապնդման գործի վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորվել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-947 որոշման մեջ:

18. Մույն որոշման նախորդ կետում վկայակոչված որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ:

(...)

ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով

իրավունքների և ազատությունների խախտումների կանխման խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է խախտված իրավունքների վերականգնման ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես՝ (...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետևանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

(...)

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները:

(...)

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն»:

19. Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-947 որոշմամբ արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մասնավոր հետապնդման գործ հանդիսացող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում քրեական և քաղաքացիական վարույթների միջև ընտրություն կատարելու հնարավորության կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառությունը փոխառության պայմանագրի էական պայմաններից մեկի (տոկոսի չափի) խախտմամբ կնքված գործարք է (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը), ուստի վերջինիս կապակցությամբ քրեական և քաղաքացիական վարույթների միջև ընտրություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ պայմանագրային իրավունքից (մասնավոր իրավունքից) բխող վեճերի պարագայում հանրային շահն էապես ավելի փոքր է, քան մասնավոր շահը: Ուստի հանրային-իրավական գործիքակազմի ներգրավումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ բարձր ու համարժեք ապացուցողական չափանիշով հիմնավորվում է, որ տվյալ կոնկրետ դեպքում առկա է շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ որպես տոկոսի չափի խախտմամբ փոխառության պայմանագրի կնքման նախաձեռնող շատ դեպքերում հանդես է գալիս վաշխառության ենթադրյալ տուժողը, ով հետագայում, փաստորեն, հնարավորություն է ստանում չարաշահելու իր իրավունքը, եթե հայտնվում է անբարենպաստ դրության մեջ, օրինակ՝ չի կարողանում կամ չի ցանկանում կատարել ստանձնած պարտավորությունները:

*II. Վաշխառության գործերով դատարանի լուծմանը ենթակա հարցերը.*

20. Վաշխառության քրեաիրավական և փոխառության քաղաքացիաիրավական բնութագրերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վաշխառության համար քրեական պատասխանատվության հարցը կապված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ փոխառության պայմանագրի պայմանների առկայության հետ: Ուստի, անհրաժեշտ է համարում վերլուծության ենթարկել փոխառության պայմանագրի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մի շարք դրույթներ և որա արդյունքում պարզաբանել, թե վաշխառության գործերով ո՞ր հարցերն են ենթակա դատարանի լուծմանը:

21. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

2. Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ»:

Փոխառության պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում այն դեպքում, երբ փոխառուն, ի հավաստումն փոխառության պայմանագրի կնքման, փոխառուին տալիս է ստացական կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Ստացականը կամ այլ փաստաթուղթը ստորագրվում է փոխառուի կողմից և ձեռք է բերում ապացուցողական նշանակություն, այս իմաստով՝ ստացականը կամ այլ փաստաթուղթը հավասարեցվում է գրավոր ձևով կնքված պայմանագրին:

22. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առչինչ է»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը (...):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին գրկում է ի հավաստումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի գրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ գրավոր ձևով չկնքված փոխառության գործարքն առչինչ է, և կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Ընդ որում, փոխառության գործարքի գրավոր ձևի չպահպանման դեպքում արգելվում է ի հավաստումն փոխառության գործարքի ու նրա պայմանների վկայակոչել վկաների ցուցմունքներ:

23. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխառումն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխառումն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխառուին վերադարձնել ստացված փոխառության գումարը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխառումն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխառուից իրականում դրան կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով»:

Մեջբերված դրույքների վերլուծությունից երևում է, որ փոխառումն պարտավոր է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել ստացած փոխառության գումարը, իսկ եթե պայմանագիրը հատուցելի է, վճարել նույն պայմանագրով նախատեսված տոկոսները՝ կողմերի համաձայնությամբ սահմանված չափով և հաճախականությամբ: Փոխառումն իրավունք ունի նաև վիճարկել փոխառության պայմանագիրը:

24. Հիմք ընդունելով սույն որոշման 21-23-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխառության պայմանագրի գրավոր ձևակերպումը, ի թիվս այլոց, կատարվում է փոխառուի կողմից փոխառուին ստացական հանձնելով, որտեղ նշվում է փոխառության գումարը և այն վերադարձնելու ժամկետը: Փոխառությունը հատուցելի լինելու դեպքում ստացականում նշվում են սահմանված տոկոսների չափը և դրանց հաշվարկման կարգը:

Փոխառության պայմանագրի բովանդակության վերաբերյալ քաղաքացիաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ այդ պայմանագրով փոխառումն ձեռք է բերում որոշակի իրավունքներ, իսկ փոխառումն՝ որոշակի պարտականություններ: Ընդ որում, փոխառուի հիմնական պարտականությունը փոխառությամբ ստացած դրամի նույն գումարը կամ նույն տեսակի, որակի և քանակի իրերը վերադարձնելն է: Հատուցելի փոխառության պայմանագրի առկայության պարագայում փոխառումն պարտավոր է նաև վճարել նույն պայմանագրով նախատեսված տոկոսները: Ընդ որում, տոկոսների չափը, ինչպես նաև դրանց հաշվարկման կարգը սահմանվում են կողմերի համաձայնությամբ: Տոկոսների չափը որոշելու կողմերի իրավունքը սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով սահմանված այն իմպերատիվ կանոնով, ըստ որի՝ փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 20-24-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վաշխառության վերաբերյալ գործեր քննելիս դատարանը լուծում է միայն անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը և իրավասու չէ անդրադառնալ ապօրինի գործարքով տուժողին պատճառված վնասի փոխհատուցման խնդրին: Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը

հիմնված է այն հանգամանքի վրա, որ ապօրինի գործարքի կնքման և դրա արդյունքում վնասների առաջացման հարցում կարող է առկա լինել նաև տուժողի մեղքը, տուժողի կողմից իր իրավունքների չարաշահումը և այլն (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը): Ուստի, ապօրինի գործարքով տուժողին պատճառված վնասի փոխհատուցման հարցը ենթակա է լուծման քաղաքացիական դատավարության կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերին համապատասխան:

26. Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ պայմանագրային (մասնավոր) հարաբերությունները ենթադրում ենկամքի ազատություն, կողմերի հայեցողության լայն հնարավորություն, որը կապված է հիմնականում փոխադարձ օգուտ կամ տնտեսական շահ ստանալու հանգամանքի հետ: Վաշխառության դեպքում ևս կողմերի միջև կնքվում է փոխադարձ համաձայնության, որի դեպքում տուժող կողմը գիտակցում է մնան համաձայնության հետևանքները և ցանկանում է մտնել մնան հարաբերության մեջ: Այլ խոսքով, ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով արգելված վաշխառությունները կողմանի ապօրինի գործարք է, որը կնքվել է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ: *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը:

Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրություն և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն:

Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը՝ որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրություն՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» (տե՛ս Լիա Արտյոմի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 31-րդ կետը):

Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի ուժով՝ տոկոսի չափի խախտմամբ կնքված փոխառության պայմանագիրը համարվում է վիճահարույց գործարք: Ուստի, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը հնարավորություն է տալիս կողմերին մնան գործարքը վիճարկել դատական կարգով և պահանջել կիրառել անվավերության հետևանքներ:

27. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն որոշման 20-27-րդ կետերում շարադրված վերլուծությունը և հատկապես 25-րդ կետում ամրագրված չափանիշը կարող է կիրառելի լինել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության տարատեսակի նկատմամբ: Նշված չափանիշը կիրառելի չէ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վաշխառության որակյալ տարատեսակի առկայության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է հիմնավոր կասկած, որ վաշխառությունը նախադրյալ է հանդիսացել այլ՝

առավել ծանր հանցագործությունների (օրինակ՝ փողերի լվացում, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելը և այլն) կատարման համար:

*III. Քնարիկ Պետրոսյանին վերագրվող արարքում վաշխառության հանցակազմի առկայությունը.*

28. Սույն որոշման 12-27-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների և վերլուծությունների լույսի ներքո Վճարելի դատարանն անդրադառնում է սույն գործով իր առջև բարձրացված հիմնական հարցին՝ հիմնավորվա՞ծ են արդյոք Ք.Պետրոսյանի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը:

29. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմի վերլուծությունը շարադրված է սույն որոշման 12-14-րդ կետերում: Նշված վերլուծության համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված վաշխառության հանցակազմն օբյեկտիվ կողմից դրսևորվում է պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալով (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը): Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ և ավարտված է համարվում ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու պահից (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

ա) Ք.Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ 2007 թվականի հոկտեմբեր ամսից Գագիկ Հայրապետյանին պարտք տված 2.179.800 ՀՀ դրամին համարժեք 6.000 ԱՄՆ դոլարի և 2.000.000 ՀՀ դրամի դիմաց՝ որպես ընդհանուր գումարի ամսական 5 տոկոս հավելավճար, մինչև 2009 թվականի մայիս ամիսը յուրաքանչյուր ամիս ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2007-2009 թվականների համար սահմանված բանկային 13% հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով ստացել է 108.990 ՀՀ դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլար և 100.000 ՀՀ դրամ:

բ) Ք.Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է նաև այն բանի համար, որ 2008 թվականի հուլիս ամսվա սկզբին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության աշխատակից Սուսաննա Հակոբյանին իր աշխատասենյակում՝ Բուզանդի 1/3 հասցեում, ամսական 5 տոկոս հավելավճարով տրամադրել է 200.000 ՀՀ դրամ, որի դիմաց ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2008-2010 թվականների համար սահմանված բանկային 13% հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով, մինչև 2010 թվականի հունվար ամիսը, ստացել է ամսական 10.000 ՀՀ դրամ՝ որպես տոկոսագումար: 70.000 ՀՀ դրամ մայր գումարը մարելուց հետո մնացած 130.000 ՀՀ դրամ մայր գումարի դիմաց յուրաքանչյուր ամիս՝ մինչև 2010 թվականի փետրվարի 15-ը, որպես տոկոս ստացել է 6.500 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

գ) Տուժող Գ.Հայրապետյանի կողմից ամբաստանյալ Ք.Պետրոսյանին տրված երկու ստացականների համաձայն՝ Գ.Հայրապետյանը Ք.Պետրոսյանից պարտքով վերցրել է 9.050 (ինը հազար հիսուն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 3.120.000 (երեք միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ (ա) և (բ) ենթակետերում շարադրված արարքներում Ք.Պետրոսյանի մեղադրանքը, ի թիվս այլոց, հիմնավորված է համարվել նաև (գ) կետում վկայակոչված ստացականների գնահատման արդյունքում: Նշված ստացականներում որևէ նշում չկա Ք.Պետրոսյանի կողմից պարտք տրված դրամի համար որևէ չափով տոկոսներ ստանալու մասին: Մինչդեռ, ինչպես երևում է սույն որոշման 29-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար նաև սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմի վերլուծությունից, վաշխառության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը:

31. Սույն որոշման 12-29-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 30-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել հետևյալ հանգամանքները՝

1) արդյո՞ք Առաջին ատյանի դատարանն իրավասու էր լուծել տուժող Գ.Հայրապետյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, թե՞ պարտավոր էր լուծել միայն Ք.Պետրոսյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը (տե՛ս սույն որոշման 25-րդ կետը):

2) արդյո՞ք սույն գործով առկա են փաստական տվյալներ այն մասին, որ Ք.Պետրոսյանը Գ.Հայրապետյանին տված դրամի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ է ստացել:

3) արդյո՞ք սույն գործով Ք.Պետրոսյանի և Գ.Հայրապետյանի միջև չի կնքվել անհատույց փոխառության պայմանագիր, որի նկատմամբ կիրառելի են փոխառության պայմանագրի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերը (տե՛ս սույն որոշման 15-րդ, 21-24րդ կետերը): Առավել ևս, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Հայրապետյանի տված ստացականների հիման վրա Ք.Պետրոսյանը դիմել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ պարտքով տրված գումարները բռնագանձելու պահանջով, տուժող Գ.Հայրապետյանը Ք.Պետրոսյանի հետ կնքված փոխառության պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածով նախատեսված կարգով չի վիճարկել:

2011 թվականի հունիսի 21-ի վճռով քաղաքացիական հայցը բավարարվել է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

32. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բարձրացված հիմնական հարցին հնարավոր չէ(տե՛ս սույն որոշման 29-րդ կետը) պատասխանել առանց սույն որոշման 32-րդ կետում նշված հարցադրումներին պատասխանելու: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու



մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Քնարիկ Նորիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

18.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0666/10/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝  
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Կ.ԲԱՏԻԿՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ դատախազ Կ.Բատիկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հուլիսի 4-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Ասատրյանի որոշմամբ Արմեն Վոլոդյայի Մահակյանի ստացած հրազենային թափանցող վնասվածքի փաստի առթիվ հարուցվել է թիվ 10117611 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ Վահագն Հրաչիկի Խաչատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2011 թվականի հոկտեմբերի 24-ին Վ.Խաչատրյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին, 2011 թվականի հոկտեմբերի 25-ին նրան ՀՀ

քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նեղադրանք է առաջադրվել:

2011 թվականի հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևորագույն գործերով ավագ քննիչ Վ.Մուրադյանը թիվ 10117611 քրեական գործն ընդունել է վարույթ:

2. 2011 թվականի նոյեմբերի 11-ին ավագ քննիչ Վ.Մուրադյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թույլատրել ստանալ երեք վկաների կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսագանգերի վերծանումները, արձանագրությունների տվյալները, ինչպես նաև ըստ ալեհավաքային կայանների՝ այդ հեռախոսահամարներով հեռախոսասարքերի շարժը, կայանների՝ այդ թվում Երևանի Պուշկինի 50 հասցեի հասցեում գտնվող կայանի, տեղակայման վերաբերյալ տեղեկատվությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը մերժվել է:

3. Երևան քաղաքի դատախազի տեղակալ Կ.Բատիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 9-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերոգրյալ որոշման դեմ դատախազ Կ.Բատիկյանի վճարելի բողոքը Վճարելի դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

#### **Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. «Հեռախոսային միացումները վերծանելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» ավագ քննիչ Վ.Մուրադյանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի միջնորդության համաձայն՝ «2011 թվականի հուլիսի 4-ին, ժամը 00.10-ին Երևան քաղաքի 3-րդ կլինիկական հիվանդանոց բուժօգնության է դիմել Երևան քաղաքի Հալաբյան 44-րդ շենքի 21-րդ բնակարանի բնակիչ Արման Վոլոդյայի Սահակյանը՝ ստորին շրթունքի պատռված թափանցող վերքով, կտրիչ ստորին ատամների տրավմատիկ բացակայությամբ, լեզվի ենթալեզվային շրջանի հրազենային վնասվածքներով: (...) Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Արման Սահակյանը իրականում Արմեն Գազիկի Սարգսյանն է, (...): Միաժամանակ պարզվել է, որ գործով վկա Վ.Սարգսյանը ցուցմունքներ է տվել, որ 2011 թվականի հուլիսի 3-ին իր որդին՝ Գազիկ Սարգսյանը, եկել է տուն ծեծված վիճակում, սակայն իրեն ոչինչ չի պատմել: Ինքն այդ մասին հայտնել է ամուսնուն՝ Արմեն Սարգսյանին, որը տեսնելով որդուն ծեծված վիճակում՝ դուրս է եկել բնակարանից: Որոշ ժամանակ անց իր բնակարանի պատուհանից տեսել է իրենց շենքի բակում կանգնած սև գույնի «Տոյոտա» և սպիտակ գույնի «Տոյոտա ջիպ» մակնիշի ավտոմեքենաներ: Այնուհետև տեսել է, որ «Տոյոտա ջիպ» ավտոմեքենայից իջել են 3 հոգի, որոնցից մեկի ձեռքում եղել է ատրճանակ: Նրանցից մեկը հայհոյել է ամուսնուն, իսկ մյուսը՝ ատրճանակով կրակել ամուսնու ուղղությամբ:

Այնուհետև, Վ.Սարգսյանն իրեն ճանաչման ներկայացված լուսանկարներում պատկերված անձանցից ճանաչել է Վ.Խաչատրյանին և հայտնել, որ դա այն անձն է, ով կրակել է իր ամուսնու վրա:

2011 թվականի օգոստոսի 20-ին որոշում է կայացվել Վ.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին (...): Նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2011 թվականի հոկտեմբերի 24-ին Վ.Խաչատրյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել:

Առաջադրված մեղադրանքում Վ.Խաչատրյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ հանդիսանում է «Նաիրի ինչուրան» ՍՊԸ-ի բաժնետեր և խորհրդի անդամ: 2011 թվականի հունվարին «Տոյոտա-Երևան» խանութ սրահից ապանիկով գնել է «Տոյոտա Պրադո» ջիպ մակնիշի, սպիտակ գույնի (...) ավտոմեքենան, որը վարում է ինքը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև իր ընկերներն ու աշխատակիցները: Հայտնել է, որ 2011 թվականի հուլիսի 3-ին, ժամը 17-ից գտնվել է Երևանի Պուշկինի փողոցի 50 հասցեում գտնվող «Նաիրի ինչուրան» ՍՊԸ-ին պատկանող գրասենյակում և մասնակցել գործնական քննարկման: Այնտեղ է մնացել մինչև ժամը 00.30-ը, այնուհետև՝ գնացել է տուն: Նշված օրը գրասենյակ է այցելել իր ընկեր Էդուարդ Հակոբյանն ու խնդրել իրենից իր նշված մեքենան: Ինքը չի մերժել և է.Հակոբյանին է հանձնել ավտոմեքենան: Մի քանի օր անց, կոնկրետ օրը չի հիշում, Է.Հակոբյանը բերել է մեքենան և առանց իր հետ հանդիպելու՝ կանգնեցրել Պուշկինի 50 հասցեում գտնվող գրասենյակի բակում՝ բանալիները թողնելով գրասենյակում: Նշել է նաև, որ իրեն պատկանող բջջային հեռախոսը, որի մեջ տեղադրված է եղել 098-500005 հեռախոսահամարը, այդ ամբողջ ընթացքում եղել է ավտոմեքենայի մեջ: Հայտնել է նաև, որ ինքը Երևանի Բագրատունյաց փողոցի 26 շենքի բակում տեղի ունեցած դեպքին մասնակից չի եղել և տեղյակ չի կատարվածի մասին:

Վ.Խաչատրյանի այլուրեքությունն ստուգելու նպատակով հարցաքննվել են «Նաիրի ինչուրան» ՍՊԸ-ի աշխատակիցներ Գ.Բաղդասարյանը, Հ.Շիլիազարյանը և Տ.Գավուրմաջյանը, որոնք ցուցմունքներ են տվել այն մասին, որ 2011 թվականի հուլիսի 3-ին, ժամը 17-ի սահմաններից գտնվել են նշված գրասենյակում և Վ.Խաչատրյանի ղեկավարությամբ անցկացրել են գործնական քննարկում:

Վարույթն իրականացնող մարմնի մոտ առկա է հիմնավոր կասկած, որ բոլոր այն վկաները, որոնք այս կամ այն կերպ հաստատել են Վ.Խաչատրյանի այլուրեքությունը՝ վարույթն իրականացնող մարմնին իրականությունը չեն հայտնում, քանզի մի շարք փաստեր խոսում են հակառակի մասին, որ Վ.Խաչատրյանը գտնվել է դեպքի վայրում և անմիջականորեն մասնակցություն ունեցել կատարվածին: (...):

Քննիչը «Հեռախոսային միացումները վերծանելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» 2011 թվականի նոյեմբերի 11-ի միջնորդությունը հարուցելիս ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով (տես նյութեր, էջեր 2-4):

6. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ քննիչի միջնորդությունը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «Դատարանը իրավական վերլուծության ենթարկելով վերը նշված [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ, 239-րդ, 241-րդ] հոդվածները և փաստելով, որ ավագ քննիչ Վ.Մուրադյանը

պնդեց, որ ներկայացված միջնորդությունը չի վերաբերում հեռախոսային խոսակցությունների լսմանն ու ձայնագրառմանը, գտնում է, որ վերը նշված միջնորդությունը չի կարող լուծվել ՀՀ քրեական դատավարության 241-րդ հոդվածով սահմանված կանոններով: Միաժամանակ, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասում նշված «այլ հաղորդումներ» իրավական ձևակերպման տակ պետք է հասկանալ ինչպես հեռախոսային խոսակցությունների վերծանումները, այնպես էլ դրանց հետ կապված մյուս տեղեկությունները, որոնք նույն հոդվածի համաձայն կարող են վերահսկվել միայն այն դեպքում, երբ վերաբերվում և պատկանում են կասկածյալին կամ մեղադրյալին, մինչդեռ քննիչի միջնորդության մեջ նշված՝ վերահսկման ենթակա հեռախոսահամարները պատկանում են վկաներին, ովքեր գրկված չեն իրենց հեռախոսահամարով կայացված հեռախոսագրերի վերծանումներն ստանալու և քննիչին տրամադրելու հնարավորությունից: Քննիչ Վ.Մուրադյանի կողմից դատարանին որևէ հիմնավորում չներկայացվեց այն մասին, որ վկաները հրաժարվել են իրենց կողմից օգտագործված և միջնորդության մեջ նշված հեռախոսահամարի հեռախոսագրերի վերծանումներն ստանալուց և վարույթն իրականացնող մարմնին տրամադրելուց: Ինչ վերաբերում է քննիչի այն պատճառաբանությանը, որ իր կողմից վկաներին չի առաջարկվել տրամադրել վերը նշված վերծանումները, քանի որ նրանք իրավունք ունեն դրանք չտրամադրելու, ապա նշված պատճառաբանությունը բավարար հիմնավորում չէ ներկայացված միջնորդությունը բավարարելու համար» (տե՛ս նյութեր, էջեր 41-42):

7. Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ նշելով հետևյալը. «[Առաջին ատյանի] դատարանի եզրահանգումները՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի հիշյալ միջնորդությունը մերժելու վերաբերյալ, հիմնավոր են, դրանք բխում են ինչպես գործի փաստական հանգամանքներից և տվյալներից, այնպես էլ գործող օրենսդրության պահանջներից: (...) Դատարանը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում վարույթն իրականացնող մարմնի միջնորդության մեջ նշված և դատարանում հայտնած փաստարկների քննարկմամբ կայացրել է հիմնավորված որոշում և նման պայմաններում դատախազի վերաքննիչ բողոքում նշված, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում՝ դատաքննության ժամանակ հայտնած փաստարկները հիմք չեն կարող դառնալ դատարանի որոշումը բեկանելու և վարույթն իրականացնող մարմնին թույլատրելու ստանալ վկաներ Դ.Բաղդասարյանին պատկանող 096-000097, Հ.Եղիազարյանին պատկանող 093-433976 և Տ.Գավորմաջյանին պատկանող 093-711771 հեռախոսահամարների 2011թ. հուլիսի 3-ի մուտքային և ելքային վերծանումները, արձեռնամատների տվյալները, նշված հեռախոսահամարների հեռախոսասարքերի շարժը՝ ըստ ալեհավաքային կայանների, նկատի ունենալով նաև, որ դատարանի որոշումը բխում է դրանում մատնանշված իրավադրույթների բովանդակությունից: Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ [դատական ակտը] օրինական է, հիմնավորված և պատճառաբանված» (տե՛ս նյութեր, էջեր 65-66):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ առկա է վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի

դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, առանց նշելու, թե ինչ հիմքերով է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարում ճիշտ, իսկ վերաքննիչ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, առանց պատճառաբանությունների, Առաջին ատյանի դատարանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ և 241-րդ հոդվածների առնչությամբ կատարված վերլուծությունները համարել է իրավացի և որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու մասին:

Ըստ բողոքաբերի, Առաջին ատյանի դատարանը, 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ և 241-րդ հոդվածները, յուրովի է մեկնաբանել օրենքը և եզրակացություն արել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածում նշված՝ «այլ հաղորդումներ» ձևակերպման տակ պետք է հասկանալ ինչպես հեռախոսային խոսակցությունների վերծանումները, այնպես էլ դրանց հետ կապված տեղեկությունները, որոնք կարող են վերահսկվել միայն այն դեպքում, երբ վերաբերում և պատկանում են կասկածյալին կամ մեղադրյալին: Ընդ որում՝ դատարանն իր նման եզրահանգումը չի պատճառաբանել և չի մեկնաբանել, մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի բովանդակությունը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի տեսանկյունից, ակնհայտ է, որ այն վերաբերում է միայն նամակագրության վերահսկմանը և ոչ մի կերպ չի կարող նույնացվել հեռախոսային խոսակցությունների վերծանումների և դրանց հետ կապված մյուս տեղեկությունների հետ: Այնինչ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածը կարգավորում է հեռախոսային խոսակցությունները լսելու ընթացակարգը, որը վերաբերում է կոնկրետ հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունները և դրա հետ կապված այլ տեղեկությունները վերահսկելուն: Այսինքն՝ օրենսդիրը տվյալ իրավիճակի համար նախատեսել է հատուկ նորմ, որով և ղեկավարվել է վարույթն իրականացնող մարմինը՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելով:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ քրեական գործերի քննության ընթացքում բազմիցս պատահում են այնպիսի իրավիճակներ, երբ հանցագործության բացահայտման միակ հնարավորությունն անմիջականորեն կապված է վկայի, տուժողի կամ հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսահամարների մուտքային և ելքային վերծանումներում առկա տեղեկությունների հետ: Քիչ չեն նաև այդ դեպքերը, երբ դատարանները բավարարել են վկաների և տուժողների կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային վերծանումներն ստանալու վերաբերյալ՝ նախաքննական մարմնի ներկայացրած միջնորդությունները: Այսինքն, առաջին ատյանի դատարանների կողմից վերոգրյալ քրեադատավարական նորմերը մեկնաբանվում և կիրառվում են տարբեր կերպ, ուստի այս պայմաններում էական նշանակություն կարող է ունենալ Վճռաբեկ դատարանի որոշումը:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը, այն օրինական ուժի մեջ

թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ նամակագրության և հեռախոսային խոսակցությունների գաղտնիության սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածում նշված «այլ հաղորդումներ» ձևակերպման տակ պետք է հասկանալ ինչպես հեռախոսային խոսակցությունների վերձանումները, այնպես էլ դրանց հետ կապված տեղեկությունները:

12. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ « (...) Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք. որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-րդ (...) [հոդվածով] ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար (...)»:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: 2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կյանքի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը: Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:»

13. Վերոգրյալ սահմանադրական, կոնվենցիոն և օրենսդրական իրավանդումների վերլուծությունից հետևում է, որ անձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքը անձի՝ ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությանը երաշխավորված կարևոր իրավունքներից է, որը պետք է պաշտպանվի կամայական և անօրինական միջամտությունից: Ընդ որում՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով և միայն իրավաչափ հիմքերի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության և բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտության դեպքում: Ըստ այդմ էլ, անձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքի երաշխիք է հանդիսանում այդ իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կիրառումը: Վերջինիս իմաստով՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

14. Քրեական դատավարությունում հաղորդակցությունների՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերը և կարգը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ և 241-րդ հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝

«1. Երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի կամ մեղադրյալի ուղարկված կամ նրանց կողմից ստացվող նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներում (այսուհետ՝ նամակագրություն) կարող են պարունակվել գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ, քննիչը կարող է պատճառաբանված որոշում կայացնել, որում պարունակվում է միջնորդություն դատարանին՝ նշված անձանց նամակագրությունը վերահսկելու համար:

(...)

3. Նամակագրությանը, որի վրա կարող է կալանք դրվել, մասնավորապես, վերաբերում են հետևյալ օբյեկտները՝ նամակները, հեռագրերը, ռադիոգրերը, փոստածանրոցները (բանդերոլները), ծանրոցները, փոստային բեռնամփոփները (կոնտեյներները), փոխանցումները, ֆաքսով և էլեկտրոնային փոստով հաղորդումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանա-



կուրյուն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատարանի որոշմամբ թույլատրվում է տվյալ խոսակցությունների լսում և ձայնագրառում:

2. Խոսակցությունների լսման և ձայնագրառման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է՝ դատարանին միջնորդություն հարուցելու մասին պատճառաբանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը և հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման և ձայնագրառման տեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան: (...):»

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածը վերաբերում է նամակագրության վերահսկմանը: Ընդ որում՝ օրենսդիրը «նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ» եզրույթներն ընդհանրացրել է մեկ՝ «նամակագրություն» եզրույթով՝ սահմանելով, որ կալանք կարող է դրվել նամակագրության հետևյալ օբյեկտների վրա՝ նամակներ, հեռագրեր, ռադիոգրեր, փոստածանրոցներ (բանդերոլներ), ծանրոցներ, փոստային բեռնամփոփներ (կոնտեյներներ), փոխանցումներ, ֆաքսով և էլեկտրոնային փոստով հաղորդումներ: Այսպիսով, այլ հաղորդումները նամակագրության բաղադրատարր են և ներառված են նշված օբյեկտների շրջանակում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածը վերաբերում է հեռախոսային խոսակցությունները վերահսկելուն: Ընդ որում՝ վերահսկողության առարկան հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցություններում առկա տեղեկատվությունն է, որն ամրագրվում է այդ տեղեկատվության լսման կամ ձայնագրառման միջոցով: Այսինքն, վերոգրյալ հոդվածով կանոնակարգվում են հեռախոսային և կապի այլ միջոցների վերահսկողության հետ կապված բոլոր հարցերը:

Վերոգրյալ հոդվածների համեմատական վերլուծությունից երևում է նաև, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի, որը նախատեսում է, որ վերահսկման ենթակա է միայն մեղադրյալի և կասկածյալի նամակագրությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածը հնարավորություն է տալիս վերոնշյալներից բացի վերահսկել նաև հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային խոսակցությունները: Այդ անձանց շարքին կարող են դասվել տուժողը և վկաները:

15. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները. (...)

11) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում.

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում.(...):»

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է, որը նշանակում է՝

1) հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային խոսակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ. հեռախոսահամարի պարզումը,

գ. տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը, (...)

2) բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ. հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը, հեռախոսահամարը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը. (...):

3) ինտերնետային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

ա. ինտերնետային ցանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ՝ IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեն,

բ. ինտերնետն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID),

գ. հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, ինտերնետային հասցեն, ինտերնետային հեռախոսային զանգն ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը»:

Շարադրված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դրանք նույնպես վերաբերում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված՝ նամակագրության և հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի սահմանափակմանը: Ընդ որում՝ վերոգրյալ օրենքի 25-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նամակագրության վերահսկում է համարվում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումը և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև

նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը՝ նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածում, ինչպես նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում օգտագործված «նամակագրություն» եզրույթի բովանդակային իմաստը նույն է. երկու դեպքում էլ վերահսկման առարկա են հանդիսանում նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները: Հետևաբար, «այլ հաղորդումները» ենթակա են վերահսկման որպես նամակագրության բաղադրատարր՝ նամակագրության վերահսկման համար սահմանված կարգով:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի իմաստով՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հեռախոսային խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է: Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը տարանջատել է հեռախոսային ֆիքսված ցանցի և բջջային հեռախոսային ցանցի, ինտերնետային հաղորդակցության՝ ներառյալ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների վերահսկումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հեռախոսային ֆիքսված ցանցի վերահսկումը ենթադրում է՝ հեռախոսային խոսակցության ձայնագրումը, հեռախոսահամարի պարզումը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տեղեկությունները հավաքելը և (կամ) ամրագրելը: Բջջային հեռախոսային ցանցի դեպքում վերահսկումը ենթադրում է՝ հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը, հեռախոսահամարը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները հավաքելը և (կամ) ամրագրելը: Այսպիսով, ֆիքսված և բջջային հեռախոսահամարներով հեռախոսային խոսակցությունների ժամանակը, տևողությունը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունների ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը հեռախոսային խոսակցությունների վերահսկման բաղադրատարր են, հետևաբար դրանց նկատմամբ ենթակա են կիրառման հեռախոսային խոսակցությունները վերահսկելու կարգավորումները:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը, ի համեմատ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի, կոնկրետացրել է հեռախոսային խոսակցությունների վերահսկման առարկաները, դրանք են՝ հեռախոսահամարը, բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցության ժամանակահատվածի, տևողության, հաղորդակցվողների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունը, հեռախոսային խոսակցությունների և ինտերնետային հաղորդակցության բովանդակությունը: Այլ խոսքով՝ հեռախոսահամարների մուտքային և ելքային

հեռախոսագանգերի վերծանումները, բաժանորդի անհատական տվյալները և հեռախոսասարքերի շարժի (ըստ ալեհավաքային կայանների) վերաբերյալ տեղեկությունը՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկման բաղադրատարր են, և դրանց վերահսկումը պետք է իրականացվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով սահմանված կարգով:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածը և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված և վերլուծված հոդվածների համակարգային գնահատման արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում («Հեռախոսային խոսակցությունների վերահսկում») առկա կարգավորումները բխում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի բովանդակությունից և կոչված են ապահովելու դրա վաչափ իրացումը:

19. Սույն որոշման 12-18-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նամակագրության և հեռախոսային խոսակցությունների վերահսկման ընթացակարգերը հստակ տարանջատված են: Նամակագրության վերահսկումն ընդգրկում է նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 3-րդ մասում շարադրված օրյեկտների շրջանակում: Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը ներառում է ֆիքսված հեռախոսային ցանցի, բջջային հեռախոսային ցանցի և ինտերնետային հաղորդակցության վերահսկումը, որի մաս են կազմում նաև հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսագանգերի վերծանումները, բաժանորդի անհատական տվյալների և հեռախոսասարքերի շարժի պարզումը:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քննիչը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածով, միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ստանալ վկաների կարգավիճակ ունեցող անձանց բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսագանգերի վերծանումները, արձանագրության տվյալները, ինչպես նաև ըստ ալեհավաքային կայանների՝ նշված հեռախոսահամարների հեռախոսասարքերի շարժը, կայանների տեղակայման վերաբերյալ տեղեկատվությունը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը մերժել է, պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասում նշված «այլ հաղորդումներ» իրավական ձևակերպման տակ պետք է հասկանալ ինչպես հեռախոսային խոսակցությունների վերծանումները, այնպես էլ դրանց հետ կապված մյուս տեղեկությունները, որոնք կարող են վերահսկվել միայն այն դեպքում, երբ վերաբերում և պատկանում են կասկածյալին և մեղադրյալին, մինչդեռ քննիչի միջնորդության մեջ նշված՝ վերահսկման ենթակա հեռախոսահամարները պատկանում են վկաներին, որոնք զրկված չեն իրենց հեռախոսահամարներով կայացված հեռախոսագանգերի վերծանումները ստանալուց և վարույթն իրականացնող մարմնին տրամադրելուց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ դատարանի կողմից կայացվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

21. Սույն որոշման 12-19-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները ճիշտ չեն մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ և 241-րդ հոդվածները, որի արդյունքում կիրառել են քրեադատավարական այն դրույթը, որը կիրառման ենթակա չէր: Քննիչի միջնորդությունը վերաբերել է հեռախոսային խոսակցությունների վերահսկմանը, մինչդեռ ստորադաս դատարաններն այն քննելիս և լուծելիս ղեկավարվել են նամակագրության վերահսկողության բաղադրատարր հանդիսացող՝ «այլ հաղորդումների» վերահսկման ընթացակարգով, ինչի արդյունքում կայացրել են չիմնավորված որոշում: Մինչդեռ, միջնորդության բավարարման կամ մերժման հարցը ստորադաս դատարանները պետք է լուծեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի կարգավորումների շրջանակում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածում նշված «այլ հաղորդումներ» ձևակերպման տակ պետք է հասկանալ ինչպես հեռախոսային խոսակցությունների վերծանումները, այնպես էլ դրանց հետ կապված տեղեկությունները:

22. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չիմնավորված որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Քննիչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է ստնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝  
Դատավորներ՝*

*ստորագրություն  
ստորագրություններ*

19.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԱԶԴ/0065/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*ճախագահությամբ՝* Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորների՝* Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Սարգսի Խուրշուդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ մաս՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի սեպտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական ճախապատմությունը**

1. 2011 թվականի ապրիլի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 09105411 քրեական գործը:

2011 թվականի ապրիլի 1-ին Արթուր Խուրշուդյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Ա.Խուրշուդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Ա.Խուրշուդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2011 թվականի մայիսի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճռով Ա.Խուրշուդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ Ա.Խուրշուդյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Ամբաստանյալ Ա.Խուրշուդյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա կալանքից ազատվել է դատական նիստերի դահլիճում:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 1-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Ա.Խուրշուդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտվել տուգանքի՝ 700.000 ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար Երևանի նշանակությամբ ունեցող փաստերը**

5. Ա.Խուրշուդյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2011 թվականի մարտի 31-ին՝ ժամը 22:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Գրոյի փողոցի թիվ 15 շենքի մոտ կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով փորձել է բացահայտ հափշտակել Աննա Իսախանյանի պարանոցի՝ 100.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա շղթան և խաչը, սակայն, հանդիպելով Ա.Իսախանյանի դիմադրությանը, իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը և դիմել է փախուստի:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ մեղադրողի կողմից բերված վերաքննիչ բողոքում նշված է. «(...) Դատարանը, կիրառելով «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, հաշվի չի առել, որ նույն համաներման 9-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը կիրառելի չէ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած կամ այդ հանցագործությունը կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն: Քանի որ Ա.Խուրշուդյանի կատարած արարքը

հանցավորձ է, կարծում եմ, որ դատարանը ճիշտ չի մեկնաբանել համաներման ակտը, այն է՝ համաներման ակտի 8-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պատժաչափի չկրած մասը կրճատվում է մեկ քառորդով նույն որոշման 9-րդ կետի 7-րդ ենթակետում հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցավորձ կամ հանցագործության նախապատրաստություն են, այլ ոչ թե ազատում է պատժի կրումից:

Վերոգրյալի հիման վրա (...) խնդրում եմ բեկանել Արթուր Խուրշուդյանի վերաբերյալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 07.07.2011թ. դատավճիռը, Ա.Խուրշուդյանի նկատմամբ նշանակել պատիժ՝ առանց «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման կիրառման» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 59-60-րդ էջեր):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) Այս պայմաններում վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղադրվող ամբաստանյալ Արթուր Խուրշուդյանի նկատմամբ կիրառելի չէ ՀՀ Ազգային ժողովի համաներում հայտարարելու մասին 26.05.2011 թվականի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը (...):

Բացի այդ, դատարանն ամբաստանյալի նկատմամբ ազատագրկման հետ կապված պատիժ նշանակելիս պատժատեսակի նպատակահարմարության հարցը քննության առարկա չի դարձրել, չի պատճառաբանել և չի նշել այն շարժառիթները, թե ինչու է ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պատիժներից առավել խիստ պատիժ՝ ազատագրկում նշանակել և ինչու պատիժներից նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Վերաքննիչ դատարանը քննության առնելով ամբաստանյալ Ա.Խուրշուդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով պատիժ նշանակելու հարցը և հաշվի առնելով մեղքի ձևը, այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղսագրված հանցագործությունն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի դասակարգվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է նաև այլընտրանքային պատիժ՝ տուգանքի ձևով, հանգում է այն հետևության, որ վերջինիս նկատմամբ պետք է նշանակել վերոհիշյալ հոդվածով սահմանված պատիժներից տուգանք պատժատեսակը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 78-80-րդ էջեր):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրողը վիճարկել է Ա.Խուրշուդյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարե-



դարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառման իրավաչափությունը՝ փաստարկելով, որ Ա.Խուրշուդյանը նշված համաներման ակտի կիրառմամբ ոչ թե պետք է ազատվեր նշանակված պատժի կրումից, այլ նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը պետք է կրճատվեր մեկ քառորդով, և խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ու Ա.Խուրշուդյանի նկատմամբ նշանակել պատիժ՝ առանց համաներման ակտի կիրառման: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, մեղադրողի բողոքը մասնակիորեն բավարարելով, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Ա.Խուրշուդյանին դատապարտելով տուգանքի 700.000 ՀՀ դրամի չափով:

Վերոշարադրյալ հանգամանքը, բողոք բերած անձի կարծիքով, վկայում է այն մասին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ թույլ տալով դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի որոշումը և քրեական գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

10. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամբողջով քրեադատավարական իրավանդությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Ա.Խուրշուդյանի նկատմամբ կայացված դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն այն դեպքում, երբ մեղադրողի վերաքննիչ բողոքը վերաբերել է համաներման ակտի սխալ կիրառմանը:

12. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

(...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5<sup>1</sup>) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները (...)

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

13. Վերոգրյալ իրավանդությունների ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն էականորեն տարբերվում են առաջին ատյանի դատարանում գործի քննության սահմաններից: Մասնավորապես, եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության սահմանները որոշվում են անձին առաջադրված մեղադրանքի հիման վրա (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մաս), ապա վերաքննության կարգով գործը վերանայելիս գործի քննության սահմանները կանխորոշում է վերաքննիչ բողոքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ ասած՝ վերաքննիչ դատարանում վերաքննիչ բողոքի սահմաններում դատական ստուգման է ենթարկվում առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը և ոչ թե իրականացվում է գործի ըստ էության քննություն: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասն ուղակիորեն արգելում է վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը փոփոխել կամ լրացնել գործի դատական քննության ընթացքում՝ ամրագրելով, որ դրանք ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում:

14. Մ.Էդոյանի և այլոց վերաբերյալ գործով կայացված որոշման մեջ քննարկման առարկա դարձնելով վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բողոք դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանդություններից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»։ Նշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին:

(...) տրված օրենքի մեկնաբանությունները ոչ միայն պայմանավորված են օրենքի իմաստի տառացի ընկալմամբ, այլև արտահայտում են քրեական դատավարությունում իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասում և 415-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավանորմերն ըստ էության ամրագրում են Վճռաբեկ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը և հետապնդում են իրավաչափ նպատակ. ապահովել կողմերի հետևողականությունն իրենց նյութաիրավական ու դատավարական շահերի պաշտպանության գործում:

Այնուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները (...)» (տե՛ս Մխիթար Միհրանի Էլոյանի և այլոց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը):

15. Վերահաստատելով և զարգացնելով վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի է մահ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող իրավանորմերին: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չեն կրում և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանորմերի համատեքստում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրողը վիճարկել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառման իրավաչափությունը՝ փաստարկելով, որ Ա.Խուրշուդյանը նշված համաներման ակտի կիրառմամբ ոչ թե պետք է ազատվեր նշանակված պատժի

կրումից, այլ նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը պետք է կրճատվեր մեկ քառորդով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը համաձայնել է մեղադրողի փաստարկների հետ, միևնույն ժամանակ դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, սեփական նախաձեռնությամբ քննարկման առարկա է դարձրել Ա.Խուրշուդյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, Ա.Խուրշուդյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում և բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Ա.Խուրշուդյանի նկատմամբ պատիժ է նշանակել տուգանքի ձևով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցավորի նկատմամբ նշանակված պատժի անհամաչափությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող դատավարական իրավունքի խախտում չէ և ոչ էլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ քրեական գործի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման հիմք: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս անդրադառնալ Ա.Խուրշուդյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցին և այդ մասով փոփոխել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

18. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Ա.Խուրշուդյանի նկատմամբ կայացված դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն այն դեպքում, երբ մեղադրողի վերաքննիչ բողոքը վերաբերել է համաներման ակտի սխալ կիրառմանը: Այլ կերպ ասած՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռն Ա.Խուրշուդյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ թույլ տալով վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խաչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արթուր Սարգսի Խուրշուդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 7-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝  
Դատավորներ՝*

*ստորագրություն  
ստորագրություններ*

20.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՇՂ/0184/06/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորների՝* Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԳՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

որոշաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշման դեմ մեղադրյալ Կարեն Ռոմիկի Քոչարյանի պաշտպան Տ.Մուրադյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնի Արթիկի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 28105311 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Կարեն Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով: Նույն օրը մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2. 2011 թվականի սեպտեմբերի 24-ին մեղադրյալ Կ.Քոչարյանն ինքնակամ ներկայացել է նախաքննության մարմին:

2011 թվականի սեպտեմբերի 25-ին Կ.Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին նույն դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը վերահաստատվել է:

3. Վերագրյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել պաշտպան Ս.Մուրադյանը, որը Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Կ.Քոչարյանի պաշտպան Ս.Մուրադյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները**

5. Մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ պաշտպան Ս.Մուրադյանը վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2011 թվականի սեպտեմբերի 26-ին (տե՛ս կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութեր, էջ 16):

6. Վերաքննիչ բողոքում նշված է. «Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.09.2011թ. որոշմամբ բավարարվել է քննիչ Ռ.Մխիթարյանի միջոցորոշումը, և մեղադրյալ Կարեն Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը երկու ամիս ժամանակով (...):»:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման պատճենը վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել:

Պաշտպան Ս.Մուրադյանի վերաքննիչ բողոքում բացակայում է որևէ նշում առ այն, որ մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ հետախուզում հայտարարելուց և Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելուց հետո վերջինս ինքնակամ ներկայացել է նախաքննության մարմնին, իսկ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է (տե՛ս կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութեր, էջեր 13-15):

7. Նյութերում առկա ուղեկցական գրության ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննության կարգով քննության առնելու համար Վերաքննիչ դատարան ուղարկվել է Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութերը (տե՛ս կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութեր, էջ 18):

Մեղարյալ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին նյութերը Վերաքննիչ դատարան չեն ուղարկվել (տե՛ս կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ նյութեր):

8. Պաշտպան Տ.Մուրադյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշման մեջ նշված է. «(...) ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2011 թվականի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալ Կարեն Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորում՝ երկու ամիս ժամկետով:

Վերը նշված որոշման դեմ 26.09.2011 թվականին վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Կարեն Քոչարյանի շահերի պաշտպան Տիգրան Մուրադյանը (...):

Մեղադրյալ Կարեն Քոչարյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ այն ժամկետանց է, քանի որ սույն գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել 2011 թվականի սեպտեմբերի 15-ին, մինչդեռ վերաքննիչ բողոք է բերվել 2011 թվականի սեպտեմբերի 26-ին, երբ արդեն իսկ ավարտված էր բողոքարկման ժամկետը (...):» (տե՛ս կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութեր, էջեր 19-20):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ իր կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքը:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ ինքը վերաքննիչ բողոք է բերել հաջորդ օրը՝ 2011 թվականի սեպտեմբերի 26-ին, որպիսի պայմաններում բողոքի ժամկետանց լինելու մասին խոսք լինել չէր կարող: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով իր բողոքը դիտել է որպես Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ բերված և ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողել է առանց քննության:

10. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ 2011 թվականի նոյեմբերի 4-ին Կ.Քոչարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդվածի 1-ին մասով, դրանով իսկ նվազել է Կ.Քոչարյանին վերագրվող արարքի վտանգավորության աստիճանը, սակայն նա կալանքից ազատ չի արձակվել: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը թողնելով առանց քննության, հնարավորություն չի տվել ներկայացնելու այդ հանգամանքը, ինչն էլ հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման:



11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված՝ դատավարական իրավունքի խախտմանն առնչվող իրավական հարցը հետևյալն է՝ իրավաչափ է արդյոք պաշտպան Տ.Մուրադյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

13. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով՝ առաջին ատյանի դատարանի կալանավորման մասին որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան հրապարակման պահից հնգօրյա ժամկետում:

14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավասու են բողոքարկել իրենց ազատությունից զրկելու՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իմաստով «օրինականության» համար էական դատավարական և նյութական պայմանները: Սա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է քննի ոչ միայն ներպետական օրենսդրության մեջ սահմանված դատավարական պահանջների համապատասխանությունը, այլ նաև ձերբակալման համար հիմք հանդիսացած կասկածների ողջամտությունը, ձերբակալման և հետագա կալանավորման նպատակների օրինականությունը (տե՛ս Brogan and Others v. The United Kingdom գործով 1988 թվականի նոյեմբերի 29-ին կայացված վճիռը, գանգատներ թիվ 11209/84, 11234/84, 11266/84, 11386/85, կետ 65 և Grauslys v. Lithuania գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ին կայացված վճիռը, գանգատ թիվ 36743/97, կետ 53):

15. Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2011 թվականի սեպտեմբերի 15-ին Կ.Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2011 թվականի սեպտեմբերի 24-ին մեղադրյալ Կ.Քոչարյանն ինքնակամ ներկայացել է նախաքննության մարմին:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին նույն դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը վերահաստատվել է, որի վերաքննության կարգով բողոքարկման ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, կազմել է հրապարակվելու պահից հինգ օր (տե՛ս սույն որոշման 1-3-րդ կետերը):

Համաձայն պաշտպան Տ.Մուրադյանի վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա փոստային ծառայության դրոշմակնիքի՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2011 թվականի սեպտեմբերի 26-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ պաշտպանի կողմից վերաքննիչ բողոք է բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հնգօրյա ժամկետի պահպանմամբ, հետևաբար ներկայացված բողոքի ժամկետանց լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն անհիմն են:

16. Միևնույն ժամանակ, նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը քննության առնելու համար Վերաքննիչ դատարան են ուղարկվել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ նյութերը:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու մասին նյութերը Վերաքննիչ դատարան չեն ուղարկվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից նույնպես հնարավոր չէ եզրակացնել, որ հետախուզման մեջ եղած մեղադրյալ Կ.Քոչարյանն ինքնակամ ներկայացել է նախաքննության մարմին, և Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը պաշտպան Տ.Մուրադյանի վերաքննիչ բողոքը դիտարկել է որպես մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ բերված բողոք և ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողել առանց քննության (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ որոշումը կայացնելիս Վերաքննիչ դատարանն ըստ էության անտեղյակ է եղել այն հանգամանքից, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ մեղադրյալ Կ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է, և պաշտպան Տ.Մուրադյանը վերաքննիչ բողոք է բերել այդ որոշման դեմ: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ հանգամանքները չեն կարող արդարացնել մեղադրյալ Կ.Քոչարյանի՝ կալանավորման օրինակաչությունը վիճարկելու իրավունքի սահմանափակումը:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման հետևանքով տեղի է ունեցել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է,

քանի որ դրա արդյունքում սահմանափակվել է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարատության մատչելիության իրավունքները: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա հիմք է կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Կարեն Ռոմիկի Քոչարյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

21.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0157/11/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	<b>Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ</b>
<i>մասնակցությամբ դատավորների՝</i>	<b>Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ</b> <b>Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ</b> <b>Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ</b> <b>Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ</b>
<i>քարտուղարությամբ՝</i>	<b>Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ</b>
<i>մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝</i>	<b>Հ.ԱԼՈՒՍՅԱՆԻ</b>

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի մայիսի 13-ին Սուրեն Մանթաշի Բաբայանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ Աշոտ Միքայելյանը և Ռաֆայել Մանուչարյանն իր վստահությունը չարաշահելու եղանակով, խաբեությամբ, կեղծիքներ կատարելու միջոցով դարձել են «Տիգրատոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Իներկոմ» արտադրական կոոպերատիվի հիմնադիրներ՝ իրեն պատճառելով գույքային վնաս:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի ավագ հետաքննիչ Վ.Անոյանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ Մ.Բաբայանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ հետաքննիչ Վ.Անոյանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ Ս.Բաբայանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Լ.Չարխիֆալակյանի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ դիմող Ս.Բաբայանի բողոքը մերժվել է:

3. 2011 թվականի հոկտեմբերի 1-ին դիմող Ս.Բաբայանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի նոյեմբերի 2-ին որոշում է կայացրել դիմող Ս.Բաբայանի բողոքը մասնակիորեն բավարարելու մասին: Վարույթն իրականացնող մարմնի համար պարտավորություն է սահմանվել վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ հետաքննիչ Վ.Անոյանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ թույլ տրված Ս.Բաբայանի իրավունքների խախտումը:

4. Դատախազ Լ.Չարխիֆալակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի փետրվարի 8-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վիսատերը**

6. Դիմող Ս.Բաբայանի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքի խնդրանքը շարադրված է հետևյալ կերպ. «Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով, խնդրում եմ վերացնել «նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Անոյանի 16.08.2011 թվականի որոշումը, ինչպես նաև՝ բողոքս մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Լ.Չարխիֆալակյանի 20.09.2011 թվականի որոշումը» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, 2-5-րդ էջեր):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով, դատարանը որոշեց Սուրեն Մանթաշի Բաբայանի բողոքը՝ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Անոյանի 16.08.2011 թվականի որոշումը, ինչպես նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Լ.Չարխիֆալակյանի 20.09.2011 թվականի որոշումը վերացնելու դեմ, բավարարել մասնակիորեն:

Վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնել «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Վ.Անոյանի 16.08.2011 թվականի որոշմամբ թույլ տրված և սույն որոշմամբ արձանագրված դիմող Սուրեն Բաբայանի իրավունքների խախտումը և

կատարել սույն որոշման պահանջները (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, 50-62-րդ էջեր):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Ի հիմնավորումն աավածի՝ բողոքաբերը նշել է, որ դիմող Ս.Բաբայանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոք է ներկայացրել դատարան և խնդրել է վերացնել վիճարկվող որոշումը: Մինչդեռ ստորադաս դատարանները բողոքի քննությունն իրականացրել և համապատասխան որոշում են կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով:

Ըստ բողոքի հեղինակի՝ վերոգրյալի արդյունքում առաջացել է իրավական անորոշություն, այն է՝ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով չի վերացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին հետաքննիչի որոշումը, որի դեպքում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը պարտադիր կլիներ, այլ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է այնպիսի պարտավորություններ (նշանակել փորձաքննություն, կատարել հարցաքննություններ և այլն), որոնք հետաքննիչի որոշման առկայության պայմաններում, առանց քրեական գործ հարուցելու, հնարավոր չէ կատարել:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ սույն գործով որոշումներ կայացնելիս ստորադաս դատարանները պահպանե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու դեպքում կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (...):

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հարողաժ ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով (...):

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

12. Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվել են Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ, որտեղ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանդումներ, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

(...) ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

(...) շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր

նորմերը» (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշումը, 20-21-րդ կետեր):

13. Վերահաստատելով նախորդ կետում և համապատասխանաբար նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշումը, 20-21-րդ կետեր):

13. Վերահաստատելով նախորդ կետում և համապատասխանաբար նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշումը, 20-21-րդ կետեր):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Ս.Բաբայանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջներով, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոք է ներկայացրել դատարան և խնդրել է վերացնել վիճարկվող որոշումը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը բողոքի քննությունն իրականացրել և համապատասխան որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վարույթն իրականացնող մարմնի համար սահմանելով դիմող Ս.Բաբայանի իրավունքների խախտումը վերացնելու պարտավորություն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սեջրեղված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում կիրառել է ոչ թե դրա համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կանոնները, այլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կանոնները:

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներից, չի պահպանել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, քրեադատավարական օրենքի խախտումը վերացնելու փոխարեն դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...)»:



Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝*                            *ստորագրություն*  
*Դատավորներ՝*                           *ստորագրություններ*

22.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԿԳ-1/0025/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Լ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վլադիկ Վաչագանի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Խաչատրյանի պաշտպան Լ.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի փետրվարի 11-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 20103011 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Վլադիկ Խաչատրյանի կողմից սպանության փորձ կատարելու փաստի առթիվ:

2011 թվականի փետրվարի 11-ին Վ.Խաչատրյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Վ.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել:

Նույն օրը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Վ.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի 2011 թվականի մարտի 14-ի որոշմամբ Վ.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով նոր մեղադրանք է առաջադրվել:

2011 թվականի մարտի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 20-ի դատավճռով Վ.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և դատապարտվել տուգանքի 50.000 ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Վ.Խաչատրյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց:

Վ.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 6 տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ Վ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով:

3. Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 22-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Վ.Խաչատրյանի պաշտպան Լ.Պողոսյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի հունվարի 25-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Ամբաստանյալ Վ.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել, և նա դատապարտվել է հետևյալ արարքների համար.

2011 թվականի հունիս ամսին Վ.Խաչատրյանը և Աբովյան քաղաքի Սարալանջ փողոցի թիվ 12 շենքի 15-րդ բնակարանի սեփականատեր Սերգեյ Թադևոսյանը բանավոր համաձայնության են եկել, որ վերջինս վաճառում է հիշատակված բնակարանը և կից ավտոտնակը 65.000 ԱՄՆ դոլարով, իսկ Վ.Խաչատրյանը գնում է այն: Պայմանավորվածության համաձայն՝ գործարքը փաստաթղթային ձևակերպում պետք է ստանար 1,5 տարվա ընթացքում, երբ Վ.Խաչատրյանն աստիճանաբար վճարեր այդ գումարը: Դրանից հետո Վ.Խաչատրյանը որպես կանխավճար Ս.Թադևոսյանին է տվել 3.000 ԱՄՆ դոլար և 2010 թվականի օգոստոս ամսվա ընթացքում ընտանիքով տեղափոխվել է Ս.Թադևոսյանի բնակարան, իսկ վերջինս, տեղափոխվելով ավտոտնակին կից սենյակ, շարունակել է օգտվել բնակարանի կոմունալ հարմարություններից: Մինչև 2010 թվա-

կանի նույնքեր ամիսը Վ.Խաչատրյանը Ս.Թադևոսյանին բնակարանի դիմաց որևէ գումար չի տվել, վերջինս պահանջել է ազատել բնակարանը, սակայն Վ.Խաչատրյանը չի համաձայնել՝ պահանջելով վերադարձնել 3.000 ԱՄՆ դոլարը: Դրանից հետո Ս.Թադևոսյանը լուրջաբանից օգտվելու պատրվակով մտել է բնակարան, այնտեղից դուրս հանել Վ.Խաչատրյանի կնոջը և թռնիկներին և այլևս թույլ չի տվել, որ Վ.Խաչատրյանի ընտանիքը բնակվի նշված բնակարանում: Բնակարանում մնացած գույքը և որպես կանխավճար տված գումարը հետ վերցնելու նպատակով Վ.Խաչատրյանը դիմում է ներկայացրել ոստիկանության Կոտայքի բաժին: Կոտայքի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Մ.Կիրակոսյանը 2011 թվականի փետրվարի 1-ին որոշում է կայացրել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ դիմումի մեջ նշված փաստերի՝ քաղաքացիաիրավական բնույթ կրելու պատճառաբանությամբ: Նշված որոշումը սահմանված ժամկետում հանձնվել է Վ.Խաչատրյանին: 2011 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 12-ի սահմաններում, Վ.Խաչատրյանը դատարան դիմելու համար նյութերը վերցնելու նպատակով գնացել է ավագ քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակ, որտեղ պատահաբար հանդիպել է Ս.Թադևոսյանին: Աշխատասենյակում Վ.Խաչատրյանը Ս.Թադևոսյանից պահանջել է վերադարձնել որպես կանխավճար տված 3.000 ԱՄՆ դոլարը և իր ընտանիքին պատկանող՝ Ս.Թադևոսյանի բնակարանում մնացած գույքը, սակայն հատկապես գումարը վերադարձնելու մասին մերժողական պատասխան լսելով՝ բռնել է Ս.Թադևոսյանի վերարկուի թևից, մյուս ձեռքով իր գրպանից հանել է աշխատանքի վայրում օգտագործվող և սրելու նպատակով պատահաբար իր մոտ մնացած խոհանոցային դանակը և ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով մի քանի հարված է փորձել հասցնել Ս.Թադևոսյանի որովայնի և կրծքավանդակի հատվածին, սակայն վերջինս կարողացել է խույս տալ հարվածներից, հետ է քաշվել՝ բռնելով Վ.Խաչատրյանի ձեռքը: Այդ ընթացքում քննիչ Մ.Կիրակոսյանը Վ.Խաչատրյանին մի կողմ է հրել, գցել է բազմոցի վրա և բռնել ձեռքը, որում եղել է դանակը: Բղավոցներից աշխատասենյակ է մտել նույն քննչական բաժանմունքի քննիչ Լ.Գրիգորյանը, որի միջամտությունից հետո Վ.Խաչատրյանը տվել է դանակը, արդյունքում՝ Վ.Խաչատրյանն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը:

Այնուհետև Վ.Խաչատրյանը, դեռևս գտնվելով քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակում, դիտավորությամբ ձեռքով հարվածել է Ս.Թադևոսյանի դեմքին՝ պատճառելով առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

6. Քրեական գործի քննության ընթացքում տուժող Ս.Թադևոսյանը հետևյալ բովանդակությամբ ցուցմունք է տվել. «(...) այդ պահին նա փակեց իմ ճանապարհը, վերարկուի աջ թևի միջից հանելով մի սուր ծայրով դանակ, բռնելով իմ վերարկուի թևից, բղավելով, որ ես միևնույնն է քեզ սպանելու եմ, սկսեց դանակով հարվածներ հասցնել փորիս և կրծքիս մասերին: Այդ ժամանակ քննիչ Մ.Կիրակոսյանը վրա հասավ, բռնեց նրա ձեռքը, դանակը մի կերպ առավ և թույլ չտվեց, որ նա շարունակեր ինձ հարվածել և վնասել (...)» (տես քրեական գործ, հատոր 1-ին, 14-15-րդ էջեր):

7. Վկա Մ.Կիրակոսյանը հետևյալ բովանդակությամբ ցուցմունք է տվել. «(...) Այդ պահին Վ.Խաչատրյանն իր վերարկուի աջ թևի միջից քաշեց ու դուրս բերեց մի սուր ծայրով խոհանոցային դանակ, աջ ձեռքում բռնելով, իսկ մյուսով էլ բռնելով Ս.Թադևոսյանի վերարկուից, ասաց՝ տես թե ինչ եմ անելու, խփելու եմ քեզ սպանեմ միևնույնն է, փողս չես տալիս ու դանակի ծայրի սուր մասով երեք անգամ հարվածներ հասցրեց

Ս.Թադևոսյանի որովայնի ու կրծքավանդակի վրա: Ս.Թադևոսյանն այդ պահին հետ էր քաշվում ու բռնեց Վ.Խաչատրյանի ձեռքը: Ես բղավեցի, որ վերջ տա, չհարվածի ու տեղիցս արագ վեր կենալով՝ հասա Վլադիկին, բռնեցի ձեռքից, որ չհարվածի, վնասագերծեցի նրան (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 35-37-րդ էջեր):

Առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում պատասխանելով նախագահող դատավորի հարցին՝ Մ.Կիրակոսյանն ասել է. «Չգիտեմ ինչն էր խանգարում, որ հարվածեր, ես մտածում եմ, որ տուժողը պաշտպանվել է, դա է նպաստել, որ հարված չլինի» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն, 149-151-րդ էջեր):

8. Ամբաստանյալ Վ.Խաչատրյանը հերքել է Ս.Թադևոսյանին դանակով հարվածելու հանգամանքը՝ հայտնելով, որ վերջինիս ուղղությամբ դանակը ձեռքին որևէ շարժում չի կատարել, այլ ընդամենը ցանկացել է վախեցնելու միջոցով հետ ստանալ իր գումարը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 47-49-րդ, 71-72-րդ և 97-100-րդ էջեր):

Ամբաստանյալ Վ.Խաչատրյանն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել գրություն, որտեղ հայտնել է, որ նախապես տեղյակ է եղել այն մասին, որ տուժող Ս.Թադևոսյանը 2011 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 11-12-ի սահմաններում, գնալու է քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակ: Այդ օրն առավոտյան իր անձնական ավտոմեքենայով եկել և սպասել է մինչև Ս.Թադևոսյանը մտել է ոստիկանության շենք, որից հետո՝ մոտ 10 րոպե անց, բարձրացել է քննիչի աշխատասենյակ, որտեղ հանդիպել է Ս.Թադևոսյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 134-139-րդ էջեր):

9. Տուժող Ս.Թադևոսյանի մոտ դանակի գործադրմամբ պատճառված որևէ մարմնական վնասվածք չի հայտնաբերվել (տե՛ս դատաբժշկական փորձագետի թիվ 17 եզրակացությունը, քրեական գործ, հատոր 1-ին, 38-39-րդ էջեր): Դեպքի պահին Ս.Թադևոսյանի հագին եղած հագուստների վրա ծակած-կտրած վնասվածքներ նույնպես առկա չեն եղել (տե՛ս դատահետքաբանական փորձագետի թիվ 238 եզրակացությունը, քրեական գործ, հատոր 1-ին, 107-108-րդ էջեր):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 25-րդ, 126-127-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ դատարանները ճիշտ չեն գնահատել քրեական գործում առկա ապացույցները, ինչի հետևանքով ամբաստանյալ Վ.Խաչատրյանի արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական: Ըստ բողոքաբերի՝ քրեական գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհաստատեր, որ Վ.Խաչատրյանի դիտավորությունն ուղղված է եղել Ս.Թադևոսյանին ապօրինաբար կյանքից զրկելուն, և այն ավարտին չի հասցվել՝ Վ.Խաչատրյանի կամքից անկախ հանգամանքներում: Ամբաստանյալը, նպատակ ունենալով վախեցնելու միջոցով հետ ստանալ իր գումարը և գույքը, Ս.Թադևոսյանի հասցեին տվել է սպանության սպառնալիք, հետևաբար նրա արարքը պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և Վ.Խաչատրյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով (սպանության փորձ) և 137-րդ հոդվածով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել) նախատեսված հանցակազմերի հատկանիշների ճիշտ մեկնաբանման կապակցությամբ: Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քրեաիրավական վերլուծության ենթարկել վերոնշյալ հանցակազմերը՝ նպատակ ունենալով դրանցով արգելված արարքների համար քրեական պատասխանատվության ոլորտում ապահովել օրենքի միատեսակ կիրառություն:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Վ.Խաչատրյանի արարքում սպանության փորձի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպանության, այսինքն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

15. Ինչպես երևում է վերոգրյալ իրավանորմերի բովանդակությունից, ՀՀ քրեական օրենսդրությունը քրեական պատասխանատվություն է սահմանում ոչ միայն սպանության կամ դրա փորձի, այլ նաև այդպիսի արարք կատարելու իրական սպառնալիքի համար:

Սպանության, ինչպես նաև հանցափորձի քրեաիրավական բնութագրերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Բաղդասարյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններից հանրային առավել բարձր վտանգավորությամբ առանձնանում է սպանությունը: Սպանության օբյեկտ են հանդիսանում հասարակական այն հարաբերությունները, որոնք ուղղված են մարդու կյանքի անվտանգության ապահովմանը: Այլ կերպ ասած՝ ճշված հանցագործության անմիջական օբյեկտը յուրաքանչյուր մարդու կյանքն է, որը ենթակա է քրեաիրավական պաշտպանության նրա ծնվելու պահից մինչև մահ:

Օբյեկտիվ կողմից սպանությունը դրսևորվում է մեկ ուրիշին դիտավորությամբ, ապօրինաբար կյանքից զրկելու մեջ, որը կարող է կատարվել և՛ գործողությամբ, և՛

անգործությամբ: Գործողությամբ կատարվող սպանությունը կարող է տեղի ունենալ տուժողի վրա ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան ներգործության միջոցով: Անգործությամբ պատճառված մահվան համար կարող է քրեական պատասխանատվություն առաջանալ միայն այն ժամանակ, երբ հաստատվի, որ անձն անհրաժեշտ գործողություններով չի կանխել վրա հասնող մահը, թեև տվյալ կոնկրետ իրադրությունում ոչ միայն պարտավոր էր, այլև իրական հնարավորություն ուներ դա անելու:

Օբյեկտիվ կողմից սպանությունը բնութագրվում է նաև հանցավոր արարքի և առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի պարտադիր առկայությամբ:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է տուժողին մահ պատճառել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը, չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահվան առաջացումը կամ անտարբերություն է դրսևորում այդ հետևանքի առաջացման նկատմամբ:

(...)

Օբյեկտիվ կողմից հանցավորձը բնութագրվում է՝

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելով:

Հանցավորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը, կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիտավորությամբ նախատեսվածը (օրինակ՝ սպանության փորձի ժամանակ տուժողը ոչ թե մահանում է, այլ ստանում է ծանր մարմնական վնասվածք): Ուստի այն դեպքերում, երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հատկանիշներ են, ապա դրանք կլանվում են հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չեն որակվում:

Հանցավորձը բնութագրող հաջորդ հատկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցավորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ» (տե՛ս Արարատ Վազգենի Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ/0168/01/10 որոշման 14-րդ և 16-րդ կետերը):

16. Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության փորձը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Այլ խոսքով՝ սպանության փորձի դեպքում հանցավորը գիտակցում է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում է մեկ ուրիշի մահը վրա հասնելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցան-

կանում է դրա առաջանալը, սակայն մահացու հետևանքը վրա չի հասնում նրա կամքից անկախ պատճառներով (գոհի ակտիվ դիմադրություն, այլ անձանց միջամտություն, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալ և այլն):

17. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության սպառնալիքի հետ մեկտեղ այն պատասխանատվություն է նախատեսում առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու իրական սպառնալիքի համար: Այսինքն՝ նշված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև սեփականության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում: Այս հանցակազմի իմաստով սպառնալիքի արտահայտման եղանակները կարող են տարբեր լինել, ինչն արարքի որակման համար նշանակություն չունի: Այն կարող է արտահայտվել բանավոր, գրավոր, որոշակի գործողություններով (օրինակ՝ զենքը ցուցադրաբար քափահարելով):

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ձևական է, այսինքն՝ հանցանքն ավարտված է համարվում սպառնալիքը տալու պահից: Հնարավոր են դեպքեր, սակայն, երբ սպառնալիքը տրվել է գրավոր ձևով, և այն ինչ-որ պատճառով չի հասել հասցեատիրոջը: Նման դեպքերում հանցանքն ավարտված կհամարվի այն ժամանակ, երբ տուժողը ծանոթանա սպառնալիքի բովանդակությանը:

18. Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից են սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում, սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի:

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ամենցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաբյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչ-



յուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով:

19. Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով արգելված արարքը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք տալով՝ տուժողի վրա հոգեբանական ազդեցություն է գործադրում՝ վերջինիս մոտ առաջացնելով վախի, անվստահության զգացողություն, նախատեսում և ցանկանում է նշված հետևանքների առաջացումը: Հանցագործության շարժառիթները կարող են տարբեր լինել՝ վրեժ, խանդ, անձնական անբարյացկամ հարաբերություններ և այլն:

20. Այսպիսով, հիմք ընդունելով նախորդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության փորձի ժամանակ հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողին կյանքից զրկելուն, և նա այդ ուղղությամբ որոշակի գործողություններ է կատարում, սակայն հանցագործությունը մինչև վերջ չի հասցնում՝ իր կամքից անկախ հանգամանքներով (գոհի ակտիվ դիմադրություն, այլ անձանց միջամտություն, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալ և այլն): Այլ խոսքով՝ սպանության փորձի ժամանակ սպանության հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումը սկսվում է, սակայն հետևանքը՝ տուժողի մահը, վրա չի հասնում հանցավորի կամքից անկախ պատճառներով: Մինչդեռ սպանության սպառնալիքի պարագայում հանցավորի գործողությունները սահմանափակվում են միայն այս կամ այն կերպ սպառնալիք տալով, իսկ նրա դիտավորությունն ուղղված է տուժողի հոգեկան առողջությանը վնաս պատճառելուն՝ նրա մոտ սեփական կյանքի համար տագնապի զգացողության առաջացմանը: Այսինքն՝ սպանության սպառնալիքը ենթադրում է միայն հոգեբանական բռնություն, այլ ոչ թե ֆիզիկական:

21. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, այնպես էլ ստորադաս դատարանները հաստատված են համարել այն, որ 2011 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 12-ի սահմաններում, Վ.Խաչատրյանը դատարան դիմելու համար նյութերը վերցնելու նպատակով գնացել է քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակ և այնտեղ պատահաբար հանդիպել Ս.Թադևոսյանին: Զննիչի աշխատասենյակում Վ.Խաչատրյանը Ս.Թադևոսյանից պահանջել է վերադարձնել 3.000 ԱՄՆ դոլարը և իր ընտանիքին պատկանող գույքը, սակայն լսելով հատկապես գումարը վերադարձնելու մասին մերժողական պատասխան՝ բռնել է Ս.Թադևոսյանի վերարկուի թևից, մյուս ձեռքով իր գրպանից հանել աշխատանքի վայրում օգտագործվող և սրելու նպատակով պատահաբար իր մոտ մնացած խոհանոցային դանակը և ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով մի քանի հարված է փորձել հասցնել վերջինիս որովայնի և կրծքավանդակի հատվածին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ամբաստանյալ Վ.Խաչատրյանը հերքել է Ս.Թադևոսյանին դանակով հարվածելու հանգամանքը՝ հայտնելով, որ վերջինիս ուղղությամբ դանակը ձեռքին որևէ շարժում չի կատարել, այլ ընդհանրապես ցանկացել է վախեցնելու միջոցով հետ ստանալ իր գումարը: Տուժող Ս.Թադևոսյանի մոտ դանակի գործադրմամբ պատճառված որևէ մարմնական վնասվածք չի հայտնաբերվել, դեպքի պահին Ս.Թադևոսյանի հագին եղած հագուստների վրա ծակած-կտրած վնասվածքներ նույնպես առկա չեն եղել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

22. Միևնույն ժամանակ քրեական գործում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ ամբաստանյալ Վ.Խաչատրյանը քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակում պատահաբար չի հանդիպել տուժող Ս.Թադևոսյանին: Վ.Խաչատրյանը հայտնել է, որ տեղյակ է եղել այն մասին, որ Ս.Թադևոսյանը 2011 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 11-12-ի սահմաններում, գնալու է քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակ և նախապես սպասել է, մինչև վերջինս մտել է ոստիկանության շենք, որից մոտ 10 րոպե անց բարձրացել է քննիչի աշխատասենյակ և հանդիպել նրան (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Բացի այդ, ինչպես տուժող Ս.Թադևոսյանը, այնպես էլ քննիչ Մ.Կիրակոսյանն իրենց ցուցմունքներում հայտնել են, որ ամբաստանյալ Վ.Խաչատրյանը, մի ձեռքով բռնելով Ս.Թադևոսյանին, մյուսով իր վերարկուի թևի միջից է հանել խոհանոցային դանակը, որով փորձել է հարվածել տուժողին (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

23. Վճարելի դատարանը փաստում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սույն որոշման նախորդ կետում նշված փաստական տվյալները որևէ գնահատականի չեն արժանացրել, այլ ապացույցների բավարար համակցությամբ չեն հերքել դրանք և այդ պայմաններում հաստատված են համարել այն, որ Վ.Խաչատրյանը դատարան դիմելու համար նյութերը վերցնելու նպատակով է գնացել քննիչ Մ.Կիրակոսյանի աշխատասենյակ և այնտեղ պատահաբար է հանդիպել Ս.Թադևոսյանին, ինչպես նաև այն, որ Վ.Խաչատրյանը գրպանից է հանել պատահաբար իր մոտ մնացած խոհանոցային դանակը և դրանով փորձել հարվածել Ս.Թադևոսյանին:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ ստորադաս դատարանները որևէ գնահատական չեն տվել Առաջին ատյանի դատարանում նախագահող դատավորի հարցին վկա Մ.Կիրակոսյանի կողմից տրված հետևյալ պատասխանին. «Չգիտեմ ինչն էր խանգարում, որ հարվածեր, ես մտածում եմ, որ տուժողը պաշտպանվել է, դա է նպատակը, որ հարված չլինի» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

24. Բացի այդ, գործի նյութերով հաստատված է, որ ամբաստանյալի և տուժողի միջև դեպքին նախորդող ժամանակահատվածում առկա են եղել լարված փոխհարաբերություններ, մասնավորապես Ս.Թադևոսյանն իր բնակարանից վտարել է Վ.Խաչատրյանին և նրա ընտանիքի անդամներին, իսկ հետագայում հրաժարվել է վերադարձնել բնակարանում մնացած Վ.Բաղդասարյանի ընտանիքին պատկանող գույքը և վերջինիս կողմից բնակարանը գնելու նպատակով տրված 3.000 ԱՄՆ դոլար կանխավճարը: Նշված գույքն ու գումարը հետ ստանալու նպատակով Վ.Խաչատրյանը դիմում է ներկայացրել ոստիկանության Կոտայքի բաժին, որի հիման վրա նախապատրաստված նյութերով քննիչ Մ.Կիրակոսյանը որոշում է կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Այս պայմաններում Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել պարզելու հանցավոր ոտնձգության պահին ամբաստանյալ Վ.Խաչատրյանի մոտ առկա հոգեկան ապրումները, հույզերը, չի պարզվել, թե ընդունակ էր արդյո՞ք վերջինս տվյալ պահին խելամուտ և բազմակողմանիորեն կշռադատելու և գիտակցելու իր արարքի հետևանքները:

Վճարելի դատարանը գտնում է, որ առանց վերը նշված հանգամանքները պարզելու ամբաստանյալ Վ.Խաչատրյանի արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալ հնարավոր չէ:

25. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ

հողվածի պահանջները, պատշաճ հետազոտման և գնահատման չեն ենթարկել քրեական գործում առկա բոլոր ապացույցները: Նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, ուստի հիմք է սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներով, ինչպես վերաբերելիության և թույլատրելիության առումով, այնպես էլ իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից պետք է պատշաճ հետազոտման և գնահատման ենթարկի գործում առկա ապացույցները, որից հետո միայն սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո քրեաիրավական գնահատական տա ամբաստանյալ Վ.Խաչատրյանի կատարած արարքին:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վլադիկ Վաչագանի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 20-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝                                   ստորագրություն*  
*Դատավորներ՝                                   ստորագրություններ*

23.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՇԴ/0037/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորների՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ մեղադրող՝</i>	Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարդան Մարտի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշման դեմ մեղադրող Գ.Մարկոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի հունվարի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցվել է թիվ 61200311 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 28-ի որոշմամբ Վ.Մաթևոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը Վ.Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2011 թվականի ապրիլի 8-ին Վ.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նոր մեղադրանք է առաջադրվել:

Նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ Վ.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նոր մեղադրանք է առաջադրվել:

2011 թվականի ապրիլի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Վ.Մաթևոսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ:

3. Մեղադրողի և տուժողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Գ.Մարկոսյանը:

2012 թվականի հունվարի 16-ին ամբաստանյալ Վ.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաբայանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով վճարելի բողոքը մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Վճարելի դատարանը 2012 թվականի հունվարի 19-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Նախաքննության մարմնի կողմից Վ.Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, տեղեկանալով «Արմեննոտոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձուլակաղապարների ձեռքբերման անիրաժեշտության մասին, վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույք հափշտակելու դիտավորությամբ, 2007 թվականի փետրվարի 21-ին ձեռնարկում է հիմնադրում «Մ.Վ.Մ.-Ֆորմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից «Արմեննոտոր» ՓԲԸ-ի հետ 2007 թվականի մարտի 5-ին կնքել է ձուլակաղապարների պատրաստելու և մատակարարելու վերաբերյալ թիվ 9/0307 պայմանագիրը և չարաշահելով «Արմեննոտոր» ՓԲԸ-ի ղեկավարության վստահությունը, 2007 թվականի մարտի 15-ին ստացել և խաբուրությամբ հափշտակել է ձուլակաղապարների պատրաստման համար պայմանագրով նախատեսված ընդհանուր գումարի 40 տոկոսը՝ 3.100.000 ՀՀ դրամ առանձնապես խոշոր չափի գումարը, որից հետո 2007 թվականի մարտի 28-ին գրավոր դիմել է «Արմեննոտոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանին՝ խնդրելով «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ին տրամադրել ընդհանուր 626.760 ՀՀ դրամ արժողությամբ 15 հատ էլեկտրական շարժիչ, հետագայում թիվ 9/0307 պայմանագրով նախատեսված գումարից հաշվանցում կատարելու պայմանով, սակայն 2007 թվականի մարտի 29-ին ստանալով էլեկտրական շարժիչները՝ խարդախությամբ հափշտակել է դրանք:

6. Առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների գնահատմամբ հաստատված է համարել հետևյալը.

«(...) ամբաստանյալ Մաթևոսյանը 2005-2007թ. հանդիսացել է «Նոր ընտանիք» ՍՊ ընկերության տնօրեն, որը զբաղվել է մետաղական կաղապարների և այլ դետալների արտադրությամբ, իսկ գործունեությունը ծավալել է «Հայէլեկտրամեքենա» ՓԲ ընկերությունից վարձակալած հա. 33 արտադրամասում:

2007թ. փետրվարին ամբաստանյալ Մաթևոսյանն ազատվել է այդ պաշտոնից, քանի որ այդ ընկերության հիմնադիրները եղել են այլ անձինք, և ցանկացել է ունենալ իր հիմնադրած ընկերությունը: Ամբաստանյալ Մաթևոսյանը 2007թ. փետրվարի 21-ին հիմնել է «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊ ընկերությունը և սկսել է արտադրություն ծավալել նույն արտադրամասում:

Հաստատված է նաև, որ ամբաստանյալ Մաթևոսյանը «Արմենմոտոր» ՓԲ ընկերություն գնացել է իր արտադրամասի հաստոցի համար էլեկտրական շարժիչ ձեռք բերելու նպատակով, սակայն անհրաժեշտ չափանիշների շարժիչ չի եղել: Այդ ընթացքում «Արմենմոտոր» ՓԲ ընկերության աշխատակիցները, իմանալով, որ ամբաստանյալ Մաթևոսյանի ղեկավարած ընկերությունը զբաղվում է նաև մետաղական կաղապարների արտադրությամբ, որոշ ժամանակ անց ամբաստանյալ Մաթևոսյանին հրավիրել են մետաղական կաղապարների պատվերի հարցով բանակցելու: Պայմանավորվածության համաձայն՝ «Արմենմոտոր» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամները գնացել են «Հայէլեկտրամեքենա» ՓԲ ընկերության հա. 33 արտադրամաս, ուսումնասիրել հաստոցային պարկը, տեսել աշխատող բանվորներին, եղած հումքը, ձուլակաղապարների արտադրության հետ կապված դետալները և համոզվելով, որ ամբաստանյալ Մաթևոսյանը կարող է պատվերը կատարել՝ այդ մասին նաև գրավոր գեկուցել են «Արմենմոտոր» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենին, որից հետո միայն 2007թ. մարտի 5-ին կնքվել է 9/0307 պայմանագիրը, ըստ որի՝ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է օրացուցային 150 օրվա ընթացքում պատրաստել և «Արմենմոտոր» ՓԲ ընկերությանը մատակարարել 7.739.000 ՀՀ դրամ արժողության երկու կոմպլեկտ ձուլակաղապար, որից հետո պայմանագրի գումարի 40 տոկոսը՝ 3.100.000 ՀՀ դրամը որպես կանխավճար փոխանցվել է «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊ ընկերության հաշվին, իսկ ընկերությունը սկսել է պայմանագրային պարտավորությունը կատարելու գործընթացը, այն է՝ կատարել է հաշվարկներ, չափազրել ընկերության հաստոցը, ուսումնասիրել Փարաքար գյուղում գտնվող «Արմենմոտոր» ՓԲ ընկերության հաստոցային պարկը, պատրաստել համապատասխան գծագրեր, մեկ ամիս ժամկետով 24.000 ՀՀ դրամով վարձակալել է «Արմենմոտոր» ՓԲ ընկերության հաստոցը և պատրաստել դետալներ:

Դրանից հետո համոզվելով, որ հաստոցի չափային շեղումների պատճառով հնարավոր չէ ձուլակաղապարները պատրաստել՝ ամբաստանյալ Մաթևոսյանը դրանք պատվիրել է Ուկրաինայում, որի մասին հայտնել է «Արմենմոտոր» ՓԲ ընկերության ղեկավարությանը:

Բացի այդ, հաստատված է նաև, որ պայմանագիրը կնքելուց հետո ամբաստանյալ Մաթևոսյանը 2007թ. մարտի 28-ին գրավոր դիմել է «Արմենմոտոր» ՓԲ ընկերությանը և ստացել է 626.760 ՀՀ դրամ արժողության էլեկտրական 15 շարժիչ, դրանց արժեքն արդեն կնքված պայմանագրի գումարի շրջանակում հաշվանցելու պայմանով (...):» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, 230-231-րդ էջեր):

7. Քրեական գործում առկա է 2007 թվականի մարտի 5-ին կնքված թիվ 9/0307 պայմանագրի բնօրինակը, որի համաձայն՝ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն

Վ.Մաթևոսյանի, որ գործում է կանոնադրության հիման վրա, հետագայում «Կատարող» մի կողմից և «Արմեննոտոր» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանի, որ գործում է կանոնադրության հիման վրա, հետագայում «Պատվիրատու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1.1. կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Պատվիրատուի կողմից տրամադրված արտադրանմուշների հիման վրա պատրաստել 4 միավոր ձուլակաղապար և հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ձուլակաղապարները և վճարել դրանց համար սույն պայմանագրի պայմաններին համաձայն (...):

4.1. Պատվիրատուն վճարում է Կատարողի կողմից առաքվող Ապրանքի համար (...) ընդամենը ներառյալ ԱԱՀ՝ 7.739.000 դրամ:

4.2 Պատվիրատուն պարտավորվում է պայմանագիրը ստորագրելուց հետո վճարել կանխավճար ընդհանուր գումարի 40%-ի չափով (3.100.000 դրամ), իսկ մնացած 60%-ը (4.639.000 դրամ) ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո մինչև ապրանքի առաքումը (...):

7.1. Սույն պայմանագրի 5.1 կետում նշված ժամկետները խախտելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է միանվագ տուգանք ժամանակին չմատակարարված ապրանքների գնի 5%-ի չափով և ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ժամանակին չմատակարարված ապրանքների ընդհանուր արժեքի 0,1%-ի չափով (...):

7.4. Պայմանագրի պայմանների խախտման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմին հասցված վնասները ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 155-156-րդ էջեր):

8. Թիվ 62 վճարման հանձնարարագրի համաձայն՝ 2007 թվականի մարտի 15-ին «Արմեննոտոր» ՓԲԸ-ի հաշվեհամարից «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի հաշվեհամարին է փոխանցվել 3.100.000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված կանխավճար (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 154):

9. 2007 թվականի մարտի 28-ին Վ.Մաթևոսյանը գրությամբ դիմել է «Արմեննոտոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանին՝ խնդրելով «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ին վաճառել 15 միավոր էլեկտրաշարժիչ՝ հետագայում թիվ 9/0307 պայմանագրի շրջանակներում փոխադարձ հաշվարկ կատարելու պայմանով: Նույն օրը 626.760 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 15 հատ էլեկտրաշարժիչ տրամադրվել է Վ.Մաթևոսյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 39):

10. Քրեական գործում առկա է «Արմեննոտոր» ՓԲԸ-ի տնտեսագիտական բաժնի պետ Կ.Ստեփանյանի զեկուցագրի պատճենը՝ ուղղված նույն ընկերության գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանին, որն ունի հետևյալ բովանդակությունը. «(...) 2007թ. սկզբներին, մոտավորապես հունվար-փետրվար ամիսներին, Վ.Մաթևոսյանը ներկայացել էր ընկերության Մարքեթինգի Դեպարտամենտ՝ էլեկտրաշարժիչի պատվեր կատարելու նպատակով (2,2 կվտ հզորության, 2860 պտ/րոպե, եռաֆազ):

Դեպարտամենտի աշխատակիցների հետ բանակցությունների ընթացքում պարզվել էր, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի գործունեության մաս է կազմում նաև ձուլակաղապարների պատրաստումը, որոնց կարիքն այդ ժամանակ ուներ «Արմեննոտոր» ՓԲԸ-ն (...):

Հիշատակված տեղեկությունը Ձեզ հայտնելուց հետո Ձեր կարգադրությամբ հանձնաժողովը՝ կազմված (...) այցելեցինք «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ընկերություն՝ բանակցելու և ընկերության հնարավորություններին ծանոթանալու համար:

Այցելության ընթացքում պարզվեց, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն, իրոք, կանոնադրությամբ գործող հիմնարկ է, արտադրական գործունեություն իրականացնելու համար վարձակալում է «Հայէլեկտրամեքենա» ընկերության տարածքն արտադրամասերից մեկում (N 33 արտադրամասի տարածք), իրեն վստահված արտադրական տարածքի տեխնիկական հնարավորությունները բավարարում էին մեր ուզած պատվերի կատարմանը:

Ուսումնասիրվեց «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի կանոնադրական գործունեության ոլորտները, ներկա աշխատակազմի որակավորման մակարդակը (աշխատում էին հիմնականում «Հայէլեկտրամեքենա» ընկերության աշխատակիցները համատեղությամբ), որից հետո նախապատրաստվեց պայմանագիրը, և երկու կողմերը ստորագրեցին այն 09.03.2007թ. ամսաթվով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 121):

11. Քրեական գործում առկա է «Արմենմոտոր» ՓԲԸ-ի գործիքաշինական արտադրության տնօրեն Տ.Իսախիյանի զեկուցագրի պատճենը՝ ուղղված նույն ընկերության գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանին, որն ունի հետևյալ բովանդակությունը. «(...) Ինչ վերաբերում է «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ընկերությանը տրամադրված ելակետային նյութերին, ապա նրանց տրամադրվել է պատրաստի մուշներ (ենթադրաբար թուրքական արտադրության):

Բացի մուշներ տրամադրելուց, տրամադրվել են նաև ֆոտոնկարներ, ծավալային, քաշային և քանակային տվյալներ, որն արձանագրված է պայմանագրի և նրան կից՝ հավելված 1-ի մեջ:

Թիվ 9/0307 05.03.2007թ. պայմանագրի կնքմանը նախորդել է իմ և մեր ընկերության տարբեր մասնագետների մանրակրկիտ աշխատանքը Վ.Մաթևոսյանի հետ՝ չափերի և քաշերի վերլուծության, մամլամայրերի և մամլամատերի նկատմամբ պահանջների ճշտման, կապված մեր ունեցած ձուլամեքենաների հնարավորություններից: Այդ աշխատանքներն ամփոփվել են իր հետ անցկացված աշխատանքային խորհրդակցություններում (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, էջ 122):

12. Ամբաստանյալ Վ.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաբայանը 2011 թվականի հուլիսի 15-ին դատաքննությունը լրացնելու մասին միջնորդությամբ է հանդես եկել Առաջին ատյանի դատարանում՝ կից ներկայացնելով մի շարք նյութեր, որոնցից երևում է, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն պատշաճ կարգով գրանցվել է հարկային մարմիններում, պարբերաբար ներկայացրել է հաշվետվություններ, վարել է հաշվապահական հաշվառում, վճարումներ է կատարել հարկերի և սոցիալական ապահովության վճարների գծով, շահույթ ստանալու նպատակով իրականացրել է տնտեսական գործունեություն, պարբերաբար տարբեր տեսակի առևտրային գործարքներ է կնքել (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 66-175-րդ էջեր):

Բացի այդ, պաշտպանության կողմը ներկայացրել է Վ.Մաթևոսյանի կողմից իրականացված՝ թիվ 9/0307 պայմանագրի առարկա հանդիսացող ձուլակաղապարների աշխատանքային գծագրերի պատճենները (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 203-212-րդ էջեր):

13. Ամբաստանյալ Վ.Մաթևոսյանը և՛ նախաքննության, և՛ դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ կանխավճարը ստանալուց հետո ձեռնամուխ է եղել ձուլակաղապարների պատրաստման աշխատանքներին, սակայն նախնական աշխատանքների մեծ մասը կատարելուց հետո պարզվել է, որ ձուլակաղապարներ պատրաստելու համար նախատեսված հաստոցը չափերի շեղումներ է տվել, ինչի հետևանքով հնարավոր չի եղել աշխատանքները շարունակել (տե՛ս քրեական գործ,



հատոր 1-ին, 108-110-րդ, 112-116-րդ, 140-141-րդ, 192-րդ, 198-րդ, 216-րդ էջեր և հատոր 2-րդ, 224-226-րդ էջեր, դատական նիստի ձայնային արձանագրության լագերային կրիչներ):

14. Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քննելով «Արմեննոտոր» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի՝ գումարի պահանջի մասին, 2009 թվականի մայիսի 25-ին վճիռ է կայացրել հայցը մասնակիորեն բավարարելու մասին: «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ից հոգուտ «Արմեննոտոր» ՓԲԸ-ի բռնագանձվել է 8.038.166 ՀՀ դրամ, որից 3.100.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված կանխավճարի գումար, 626.760 ՀՀ դրամը՝ որպես կանխավճարին ավելացված այլ գործարքներից առաջացած պարտքի գումար, 386.950 ՀՀ դրամը՝ որպես ժամանակին չմատակարարված ապրանքների արժեքի վրա հաշվարկված 5 տոկոս տուգանքի գումար, 24.000 ՀՀ դրամը՝ որպես սարքավորումների վարձակալության պայմանագրի գումար, 3.900.456 ՀՀ դրամը՝ որպես չմատակարարված ապրանքի գումարի վրա հաշվարկված տույժի գումար (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 41-42-րդ էջեր):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված արդարացման դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 7-րդ, 18-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը շարադրել է *Լ. Ավետիսյանի* գործով Վճարելի դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, դրանց հետ համադրել սույն գործի փաստական հանգամանքները, այնուհետև եզրակացություն արել առ այն, որ քրեական գործում առկա ապացույցների բավարար համակցությամբ հաստատված է ամբաստանյալ Վ.Մաթևոսյանի կողմից խարդախություն կատարելու հանցամանքը:

Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանները չեն կատարել գործի հանցամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ամբողջական վերլուծության չեն ենթարկել խարդախության հանցակազմի բոլոր հատկանիշները, և որպես հետևանք՝ հանցանք կատարած անձը խուսափել է քրեական պատասխանատվությունից:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, ամբաստանյալ Վ.Մաթևոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ նշանակել համաչափ պատիժ:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

17. Բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմը քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից սահմանազատելու կապակցությո-

յամբ օրենքի միատեսակ կիրառության ապահովման շրջանակներում առկա է Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները զարգացնելու անհրաժեշտություն:

18. Մույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափի են արդյոք ամբաստանյալ Վ.Մաթևոսյանի արարքում խարդախության հանցակազմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում խարդախության, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակության կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար:

Խարդախության հանցակազմի քրեաիրավական բնութագիրը Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության է ենթարկվել *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ (տե՛ս Լիա Արտյոմի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 22-26-րդ կետերը):

20. *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ խարդախության հանցակազմը դիտարկվել է նաև մասնավոր-իրավական պարտավորությունների հետ հարաբերակցության մեջ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ամենցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ:

Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափի հանրային շահերը:

Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն:

Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը՝ որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

(...) Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության անձեռնմխելիությունը հիմնարար սահմանադրական արժեք է, ուստի խարդախության վերաբերյալ դատական քաղաքականության համար պետք է անկյունաքարային նշանակություն ունենա սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը» (տե՛ս Լիա Արտյոմի Ավետիսյանի վերաբերյալ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 27-32-րդ կետերը):

21. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ առկա իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես քրեաիրավական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմք է հանդիսանում անօրինական գործողությունը, որն օրենքով պահպանվող հասարակական հարաբերությունների և սոցիալական արժեքների մեջ առաջ է բերում որևէ բացասական փոփոխություն:

Քաղաքացիական իրավունքի իմաստով քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Քրեական իրավունքի տրամաբանությամբ պատիժ կարող է նշանակվել միայն հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ: Պատիժն արտահայտվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձին օրենքով նախատեսված կարգով որոշակի իրավունքներից և ազատություններից զրկելով կամ նշված իրավունքներն ու ազատությունները սահմանափակելով:

22. Վերոգրյալի հիման վրա Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում առանձնացնել քրեաիրավական ներգործության միջոցներից քաղաքացիաիրավական ներգործության միջոցների տարբերակման հետևյալ հիմքերը՝

ա) քրեաիրավական ներգործության միջոցը հիմնվում է օրինականության սկզբունքի վրա. քրեական պատասխանատվության միակ հիմքն այնպիսի արարքի կատարումն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձը ենթակա է պատասխանատվության՝ անկախ որևէ անձին վնաս պատճառված լինելու հանգամանքից: Այլ խոսքով՝ քրեաիրավական ներգործության միջոցները նպատակ են հետապնդում պատժել հանցանք կատարած անձին:

Քաղաքացիաիրավական ներգործության միջոցները հիմնվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատճառված վնասը վերականգնելու, փոխհատուցելու գաղափարի վրա և իրավախախտի համար առաջացնում են միայն գույքային հետևանքներ:

բ) արարքի ճիշտ քրեաիրավական որակման և հետևաբար նաև քրեաիրավական ներգործության միջոցի ընտրության համար կարևոր նշանակություն ունի մեղքի ձևը:

Քաղաքացիաիրավական ներգործության միջոցների կիրառման ժամանակ իրավախախտի կողմից պատճառված վնասը ենթակա է հատուցման ամբողջ ծավալով՝ անկախ նրա մեղքի ձևից:

զ) ՀՀ քրեական օրենքով արգելված արարք կատարած անձին պատասխանատվության ենթարկելիս պետությունը (բացառությամբ մասնավոր մեղադրանքի գործերի) կաշկանդված չէ տուժողի կարծիքով և հանրային միջոցներով իրականացնում է քրեաիրավական պաշտպանություն:

Քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում կողմերը կարող են ազատ կամահայտնության արդյունքում համաձայնության գալ հասցված վնասի վերականգնման հարցում: Այլ խոսքով՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնում են իրենց հայեցողությամբ:

23. Ընդհանրացնելով քրեաիրավական ներգործության միջոցներից քաղաքացիաիրավական ներգործության միջոցների տարբերակման վերոնշյալ հիմքերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն իր մեջ չի պարունակում քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները, նշված արարքը կատարած անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառությունը բացառվում է: Այս դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը տուժողի հայեցողությամբ պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրություն՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ քրեական օրենքով արգելված արարքի հետևանքով որևէ անձի գույքային վնաս է պատճառվել, քրեական պատասխանատվությունից բացի, դրա հետ համակցության մեջ, կարող են գործել նաև քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները:

24. Սույն որոշման 20-22-րդ կետերում, ինչպես նաև *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ շարադրված վերլուծության համատեքստում մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը՝

ա) խարդախությունը սեփականության դեմ ուղղված հանցագործություն է, հետևաբար դրա առարկա է հանդիսանում նյութական աշխարհի այն իրը (առարկան), որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և ենթակա է դրամական գնահատման: Ասվածից հետևում է, որ խարդախության առարկա կարող են հանդիսանալ ցանկացած տեսքով ապրանքանյութական արժեքները, որոնք ունեն փոխանակման արժեք, զին, հանդիսանում են արժեքի դրամական արտահայտություն: Քննարկվող հանցագործության առարկա չեն կարող հանդիսանալ ոչ նյութական բնույթի արժեքները՝ գիտական աշխատությունները, տեղեկատվությունը, ծառայությունները և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով աշխատանք կամ որոշակի ծառայություն ձեռք բերելը կամ պարտավորությունները չկատարելը չեն կարող որակվել որպես խարդախություն՝ այդ հանցագործության առարկայի բացակայության պատճառով:

բ) խարդախության և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերը միմյանցից տարանջատվում են օբյեկտիվ կողմի հատկանիշներով:

Ինչպես արդեն նշվել է *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ, օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն: Մինչդեռ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտում արձանագրելիս պետք չէ, որ անձը գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը ստանալիս խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ազդած լինի գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի կամքի վրա՝ վերջինիս մոտ առաջ բերելով գույքի հանձնման օրինականության պատրանք: Այս դեպքում քաղաքացիական իրավահարաբերությունների անբարեխիղճ սուբյեկտը գույքը կամ դրա նկատմամբ իրավունքը կարող է ստանալ օրինական ճանապարհով, սակայն հետագայում ինչ-ինչ պատճառներով չկատարել կամ ոչ պատշաճ կատարել գույքի փոխանցման հետ կապված ստանձնած պարտավորությունները:

25. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճարելի դատարանն արձանագրում է, որ խարդախությունը և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշներով հաճախ համընկնում են: Հետևաբար, այստեղ պետք է նկատի ունենալ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է սուբյեկտիվ կողմով: Մասնավորապես՝ խարդախությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը ենթադրում է, որ հանցավորը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև նախատեսում և ցանկանում է դա:

Միևնույն ժամանակ խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքին կամ գույքային իրավունքին տիրանալը հանցավորը նպատակ է ունենում հափշտակել այն, չվերադարձնել գույքը, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Մինչդեռ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում անձը նման նպատակ չի ունենում:

26. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ խարդախության մեղադրանքով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավարար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիտավորություն է ունեցել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Այն դեպքում, երբ առկա է մասնավոր-իրավական պայամանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտում, ապա նշվածը որպես խարդախություն որակելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ անձն ի սկզբանե նպատակ չի ունեցել իրականացնելու գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի փոխանցման հետ կապված իր վրա վերցրած պարտավորությունները:

27. Անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավո-

րագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել նաև, որ վերը նշված փաստական հանգամանքների հետ մեկտեղ յուրաքանչյուր դեպքում, գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել իրականացնելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

28. Անդրադառնալով սույն գործի նյութերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

28.1 (ա) Վ.Մաթևոսյանը 2005-2007 թվականների ընթացքում հանդիսացել է «Նոր ընտանիք» ՍՊԸ-ի տնօրեն: Նշված ընկերությունը, ի թիվս այլնի, զբաղվել է մետաղական կադապարների արտադրությամբ և գործունեություն է իրականացրել «Հայէլեկտրամեքենա» ՓԲԸ-ից վարձակալված թիվ 33 արտադրամասում:

(բ) Վ.Մաթևոսյանն ազատվել է «Նոր ընտանիք» ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնից և 2007 թվականի փետրվարի 21-ին հիմնադրել «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

(գ) «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն սահմանված կարգով գրանցվել է հարկային մարմիններում, վարել է հաշվապահական հաշվառում, ներկայացրել է հաշվետվություններ, վճարումներ է կատարել հարկերի և այլ վճարների գծով: Ընկերությունը շահույթ ստանալու նպատակով իրականացրել է տնտեսական գործունեություն, մի շարք առևտրային գործարքներ է կնքել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

28.2 (ա) Վ.Մաթևոսյանը «Արմենմոտոր» ՓԲԸ գնացել է իր ընկերության հաստոցների համար էլեկտրական շարժիչ ձեռք բերելու նպատակով, որի ընթացքում «Արմենմոտոր» ՓԲԸ-ի աշխատակիցները տեղեկացել են, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն զբաղվում է նաև մետաղական կադապարների արտադրությամբ:

(բ) Վ.Մաթևոսյանին մետաղական կադապարների պատվերի հարցով բանակցելու հրավիրել են «Արմենմոտոր» ՓԲԸ-ի աշխատակիցները:

(գ) «Արմենմոտոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հրամանով ընկերության աշխատակիցների թվից կազմվել է հանձնաժողով, որն այցելել է «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ՝ բանակցելու և ընկերության հնարավորություններին ծանոթանալու համար: Այցելության ընթացքում հանձնաժողովի անդամները պարզել են, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն արտադրական գործունեություն է իրականացնում «Հայէլեկտրամեքենա» ՓԲԸ-ի թիվ 33 արտադրամասում, որի տեխնիկական հնարավորությունները բավարարում են պատվերի կատարմանը: Ուսումնասիրվել է նաև աշխատակազմի որակական մակարդակը, պարզվել է, որ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ում համատեղության կարգով աշխատում են «Հայէլեկտրամեքենա» ՓԲԸ-ի աշխատակիցները (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

28.3 (ա) 2007 թվականի մարտի 5-ին կնքված թիվ 9/0307 պայմանագրի համաձայն՝ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ն պարտավորվել է տրամադրված արտադրանքների հիման վրա պատրաստել 4 միավոր ձուլակաղապար և հանձնել «Արմեննոտոր» ՓԲԸ-ին:

(բ) Պայմանագրի գինը կազմել է 7.739.000 ՀՀ դրամ, որի 40 %-ը՝ 3.100.000 ՀՀ դրամը, «Արմեննոտոր» ՓԲԸ-ն պարտավորվել է վճարել կանխավճարի տեսքով պայմանագիրը ստորագրելուց հետո, իսկ մնացածը՝ ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո, մինչև ապրանքի առաքումը:

(գ) Պայմանագրի պայմանները խախտելու համար դրանում նախատեսվել են տույժ և տուգանք:

(դ) 2007 թվականի մարտի 15-ին «Արմեննոտոր» ՓԲԸ-ի հաշվեհամարից «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի հաշվեհամարին է փոխանցվել 3.100.000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված կանխավճար:

(ե) 2007 թվականի մարտի 28-ին Վ.Մաթևոսյանը գրությամբ դիմել է «Արմեննոտոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Կ.Պետրոսյանին՝ խնդրելով «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ին վաճառել 15 միավոր էլեկտրաշարժիչ՝ հետագայում թիվ 9/0307 պայմանագրի շրջանակներում փոխադարձ հաշվարկ կատարելու պայմանով: Նույն օրը 626.760 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 15 հատ էլեկտրաշարժիչ տրամադրվել է Վ.Մաթևոսյանին (տե՛ս սույն որոշման 7-9-րդ կետերը):

28.4 (ա) Մինչև թիվ 9/0307 պայմանագրի կնքումը «Արմեննոտոր» ՓԲԸ-ի մասնագետների և Վ.Մաթևոսյանի միջև տեղի են ունեցել մի շարք աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում կատարվել են պահանջվող ձուլակաղապարների չափային, քաշային և այլ տեխնիկական պահանջների ճշգրտումներ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

(բ) Պայմանագիրը կնքելուց հետո Վ.Մաթևոսյանն աշխատանքներ է ձեռնարկել ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ, այն է՝ այցելել և ուսումնասիրել է «Արմեննոտոր» ՓԲԸ-ի հաստոցային պարկը, չափագրել հաստոցը, մեկ ամիս ժամկետով վարձակալել է դրանցից մեկը, կազմել է ձուլակաղապարների աշխատանքային գծագրեր, պատրաստել է դետալներ (տե՛ս սույն որոշման 6-րդ, 12-րդ կետերը):

28.5 Վ.Մաթևոսյանը նախաքննության և դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ գումարը ստանալուց հետո ձեռնամուխ է եղել ձուլակաղապարների պատրաստման աշխատանքներին, սակայն դրանց մեծ մասը կատարելուց հետո աշխատանքները ձախողվել են՝ ձուլակաղապարներ պատրաստելու համար նախատեսված հաստոցի չափային շեղումների պատճառով (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

28.6 Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 25-ի վճռով «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ից հօգուտ «Արմեննոտոր» ՓԲԸ-ի բռնագանձվել է 8.038.166 ՀՀ դրամ, որից 3.100.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված կանխավճարի գումար, 626.760 ՀՀ դրամը՝ որպես կանխավճարին ավելացված այլ գործարքներից առաջացած պարտքի գումար, 386.950 ՀՀ դրամը՝ որպես ժամանակին չմատակարարված ապրանքների արժեքի վրա հաշվարկված 5 տոկոս տուգանքի գումար, 24.000 ՀՀ դրամը՝ որպես սարքավորումների վարձակալության պայմանագրի գումար, 3.900.456 ՀՀ դրամը՝ որպես չմատակարարված ապրանքի գումարի վրա հաշվարկված տույժի գումար (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

29. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-27-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի

ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործում առկա ապացույցների շարքում չկա որևէ փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Վ.Մաթևոսյանը, որով ներգործել է տուժողի գիտակցության և կամքի վրա, ինչի արդյունքում, ընկնելով մոլորության մեջ, «Արմենմոտոր» ՓԲԸ-ի տնօրինությունը պայմանագիր է կնքել «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի հետ և գույք հանձնել Վ.Մաթևոսյանին: Այսինքն՝ գործի նյութերով հիմնավորված չէ Վ.Մաթևոսյանի կողմից այնպիսի արարքի կատարում, որը կզնահատվեր որպես խարդախություն:

Հետևաբար, բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

Ինչ վերաբերում է խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրանքի կողմը չի ներկայացրել որևէ պաշտոնական վարկած Վ.Մաթևոսյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ մինչև «Արմենմոտոր» ՓԲԸ-ի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը Վ.Մաթևոսյանը դրսևորել է գույքի հափշտակության ուղղակի դիտավորություն և ունեցել է այդպիսի նպատակ: Սույն որոշման 26-27-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ դեպքում խարդախությունը բացակայում է:

30. Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Մաթևոսյանի արարքում բացակայում են խարդախության հանցակազմի թե՛ օբյեկտիվ կողմը և թե՛ սուբյեկտիվ կողմը: Իսկ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունները խախտելու արդյունքում «Արմենմոտոր» ՓԲԸ-ին հասցված գույքային վնասի վերականգնման հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հարցի կապակցությամբ Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի մայիսի 25-ին արդեն իսկ վճռի է կայացրել՝ «Մ.Վ.Մ.-Ֆորմ» ՍՊԸ-ից հոգուտ «Արմենմոտոր» ՓԲԸ-ի բռնագանձվել է 8.038.166 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 29.6-րդ կետը):

31. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Մաթևոսյանի արարքում խարդախության հանցակազմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևություններն օրինական են և հիմնավորված, իսկ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքների փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Վարդան Մարտի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը թողնել



օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

24.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԳԳ4/0002/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>ճախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորների</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

որմերաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ Աշոտ Թորգոմի Հարությունյանի, Վլադիմիր Վլադիմիրի Բաղդասարյանի և նրա պաշտպան Ռ.Ռ.Լազյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական ճախապատմությունը**

1. 2010 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքի քննիչ Ա.Մարտիրոսյանի կողմից հարուցվել է թիվ 50108810 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Վլադիմիր Բաղդասարյանի կողմից «Շանթ» հեռուստաընկերության լրագրողներ Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ Վ.Բաղդասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել:

2. 2011 թվականի փետրվարի 16-ին Վ.Բաղդասարյանը և Աշոտ Հարությունյանը գրությամբ դիմել են քննիչ Ա.Մարտիրոսյանին՝ հայտնելով, որ 2010 թվականի նոյեմբերի

10-ին «Շանթ» հեռուստաընկերության լրագրողներ Ա.Սուքիասյանը և Է.Պետրոսյանն ապօրինի մուտք են գործել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակարան և առանց թույլտվության տեսանկարահանել: Խնդրել են ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի հատկանիշներով հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն:

Քննիչ Ա.Մարտիրոսյանը 2011 թվականի փետրվարի 17-ին որոշում է կայացրել Վ.Բաղդասարյանի, Ա.Հարությունյանի միջնորդությունը մերժելու և Ա.Սուքիասյանի, Է.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. 2011 թվականի փետրվարի 22-ին թիվ 50108810 քրեական գործի նյութերը ծանոթանալու համար ներկայացվել են Վ.Բաղդասարյանին և նրա պաշտպաններ Ա.Սաղաթեյանին, Ռ.Ռ-Լազյանին, սակայն նրանք հրաժարվել են ծանոթանալ՝ հայտարարելով, որ միջնորդում են նախքան քրեական գործի ավարտ հայտարարելը և նյութերին ծանոթացնելը Վ.Բաղդասարյանին օրենքով նախատեսված կարգով պարզաբանել առաջադրված մեղադրանքի էությունը և հարցաքննել: Պաշտպաններ Ա.Սաղաթեյանը և Ռ.Ռ-Լազյանը հայտարարել են նաև, որ հաղորդում են տալիս լրագրողներ Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու մասին:

Քննիչ Ա.Մարտիրոսյանը 2011 թվականի փետրվարի 22-ին որոշում է կայացրել Վ.Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքի էությունը պարզաբանելու և հարցաքննելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. 2011 թվականի փետրվարի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2011 թվականի փետրվարի 26-ին Վ.Բաղդասարյանը և Ա.Հարությունյանը բողոք են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել քննիչ Ա.Մարտիրոսյանին՝ իրենց ներկայացրած հաղորդման հիման վրա հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն:

2011 թվականի մարտի 23-ին պաշտպան Ռ.Ռ-Լազյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել քննիչ Ա.Մարտիրոսյանին՝ իր և պաշտպան Ա.Սաղաթեյանի ներկայացրած հաղորդման հիման վրա հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն:

5. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 22-ի դատական նիստի ժամանակ Վ.Բաղդասարյանի պաշտպաններ Ռ.Ռ-Լազյանը և Ա.Սաղաթեյանը հանդես են եկել միջնորդությամբ՝ խնդրելով դատարանին ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

6. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի հուլիսի 13-ին որոշում է կայացրել քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու մասին Վ.Բաղդասարյանի և Ա.Հարությունյանի բողոքը, պաշտպան Ռ.Ռ-Լազյանի բողոքը, ինչպես նաև քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելու մասին պաշտպաններ Ռ.Ռ-Լազյանի և Ա.Սաղաթեյանի միջնորդությունը մերժելու մասին:

Նույն օրն Առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռ, որով Վ.Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 200.000 ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետութ-

յան անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Վ.Բաղդասարյանն ազատվել է նշանակված պատժից:

7. Ա.Հարությունյանի, Վ.Բաղդասարյանի և պաշտպան Ռ.Ռ-Լազյանի վերաքննիչ բողոքների հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 12-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու և Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Նույն օրը Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Վ.Բաղդասարյանի պաշտպաններ Ռ.Ռ-Լազյանի և Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքները մերժելու և Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Վ.Բաղդասարյանի պաշտպաններ Ռ.Ռ-Լազյանը և Ա.Սաղաթելյանը, որոնք Վճռաբեկ դատարանի 2012 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ վերադարձվել են՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Ա.Հարությունյանը, Վ.Բաղդասարյանը և նրա պաշտպան Ռ.Ռ-Լազյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

9. Վ.Բաղդասարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ 2010 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Սևան քաղաքի Դեմիրճյան 6/5 հասցեում գտնվող շենքում խոչընդոտել է «Շանթ» հեռուստաընկերության լրագրողներ Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի մասնագիտական օրինական գործունեությանը, այն է՝ ձեռքով հարվածել է Է.Պետրոսյանի դեմքին և շենքից դուրս գալու պահանջներ ներկայացնելով՝ թույլ չի տվել կատարել նկարահանումներ:

10. Վ.Բաղդասարյանին առաջադրված մեղադրանքի էությունը պարզաբանելու և նրան հարցաքննելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին քննիչ Ա.Մարտիրոսյանի 2011 թվականի փետրվարի 22-ի որոշման մեջ նշված է. «Իսկ ինչ վերաբերում է Ա.Սաղաթելյանի և Ռ.Ռ-Լազյանի կողմից 10.11.2010 թ-ին Արփի Արտաշեսի Սուքիասյանի և Էդուարդ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից ՀՀ քր. օր.-ի 147 հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործություն կատարելու մասին արված հաղորդմանը, ապա փաստի վերաբերյալ քրեական գործում առկա է 17.02.2011

թ-ին կայացված որոշում քրեական գործի հարուցումը մերժելու և Արփի Արտաշեսի Սուքիասյանի և Էդուարդ Հովհաննեսի Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (...)) (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, 131-132-րդ էջեր):

11. Վ.Բաղդասարյանը, Ա.Հարությունյանը և պաշտպան Ռ.Ռևազյանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, նախաքննության մարմնի 2011 թվականի փետրվարի 17-ի և 2011 թվականի փետրվարի 22-ի որոշումները բողոքարկել են Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել քննիչ Ա.Մարտիրոսյանին ներկայացված հաղորդումների հիման վրա հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 32-33-րդ և 36-37-րդ էջեր):

12. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի մարտի 12-ին որոշում է կայացրել Վ.Բաղդասարյանի վերաբերյալ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Նույն դատական ակտով որոշվել է Վ.Բաղդասարյանի և Ա.Հարությունյանի բողոքը քննության առնել քրեական գործի դատաքննության ընթացքում (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 42-րդ էջ):

13. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի հուլիսի 13-ի որոշման մեջ նշել է. «(...) Այսպիսով, ինչպես հստակ երևում է վերը շարադրվածից, դեպքի վայր հանդիսացող Սևան քաղաքի Դեմիրճյան փողոցի 6/5 հասցեում գտնվող տարածքը հասարակական նշանակության տարածք է, այն որպես բնակարան չի օգտագործվել և չէր կարող օգտագործվել, ուստի Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի կողմից չէր կարող խախտվել ամբաստանյալ Վ.Բաղդասարյանի և քաղաքացի Աշոտ Հարությունյանի, ինչպես իրենք են նշում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, իրավունք, որը տվյալ դեպքում ընդհանրապես գոյություն չի ունեցել (ի դեպ, ամբաստանյալ Վ.Բաղդասարյանն իրավական առումով ընդհանրապես ոչ մի առնչություն չունի մատնանշված հասարակական նշանակության տարածքի հետ):

Պաշտպանական կողմի ներկայացրած միջնորդությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելու մասին, ենթակա է մերժման այն հիմքով, որ դատաքննությամբ Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի կողմից ազգային, ռասայական, կրոնական թշնամանք հարուցելուն ուղղված գործողություններ թույլ տալու, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը հիմնավորող ապացույցներ ձեռք չեն բերվել: Ա.Սուքիասյանը և Է.Պետրոսյանը, իրականացնելով օրենքով սահմանված իրենց մասնագիտական օրինական գործողությունները, փորձել են իրենց իրավասության սահմաններում տեղեկատվություն ստանալ ք.Սևան Դեմիրճյան 6/5 հասցեում գործող կրոնական կազմակերպության վերաբերյալ: Նշված գործողությունները կրոնական թշնամանք հարուցելու հատկանիշներ չեն պարունակում, ուստի և որպես այդպիսիք գնահատվել չեն կարող: Հարկ է նշել նաև, որ լրագրողները մինչև հիշյալ շինություն մտնելը նույնիսկ չեն իմացել, թե հատկապես որ կրոնական կազմակերպության հավաքատեղի է այն հանդիսանում» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, 155-156-րդ էջեր):

14. Վ.Բաղդասարյանը և պաշտպան Ռ.Ռևազյանն իրենց վերաքննիչ բողոքներում, ի թիվս այլնի, փաստարկել են նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու խնդրանքով

պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն իրավաչափ չէ (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, 8-12-րդ և 16-20 էջեր):

15. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման մեջ փաստարկել է. «(...) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով քրեական գործի ներկայացված նյութերը, հանգում է այն հետևության, որ բերված վերաքննիչ բողոքները պետք է մերժել՝ նկատի ունենալով, որ ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Ա.Հարությունյանի և պաշտպանական կողմի դիմումների, հաղորդումների և միջնորդության վերաբերյալ տրվել են լիարժեք և սպառիչ պատասխաններ, իսկ վերաքննիչ դատարանում լրացուցիչ որևէ փաստարկ չի ներկայացվել, անձի իրավունքները և ազատությունները խախտված չեն, ուստի կայացվել է օրինական, պատճառաբանված և հիմնավորված որոշում, որպիսին բեկանելու հիմքերը բացակայում են» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, 193-196-րդ էջեր):

### **3. Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

16. Բողոքների հեղինակները փաստարկել են, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերները նշել են, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական գործի շրջանակներում քննության առնելով քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու մասին Ա.Հարությունյանի, Վ.Բարդասարյանի և պաշտպան Ռ.Ռևազյանի բողոքները, թույլ է տվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգը սահմանող քրեադատավարական նորմերի խախտում: Մասնավորապես, խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջն առ այն, որ բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում, մինչդեռ հիշատակված բողոքների կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել այն ստանալու պահից ավելի քան 4 ամիս անց:

17. Ըստ բողոքների հեղինակների՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, հետևաբար Վերաքննիչ դատարանը, դրա դեմ բերված վերաքննիչ բողոքները քննելով կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ և 387-րդ հոդվածների պահանջների խախտում:

Բողոքների հեղինակներն անդրադարձել են նաև քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու մասին բողոքների, ինչպես նաև քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու մասին միջնորդության հիմնագուրկ լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերում առկա դատողությունների՝ փաստարկելով, որ դրանք իրավաչափ չեն:

Ա.Հարությունյանն իր բողոքում նշել է, որ Առաջին ատյանի դատարանն իրեն չի ծանուցել իր կողմից բերված բողոքի քննության օրվա մասին, ինչի արդյունքում ինքը գրկվել է դրա վերաբերյալ դատարանում բացատրություններ տալու իրավունքից:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքներ բերած անձինք խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը, այն օրինական

ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճարելի դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթն ավարտված լինելու դեպքում նախաքննության մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների քննության կարգի հետ կապված առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

*1. Նախաքննությունն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկումը դատարան՝ գործով մինչդատական վարույթն ավարտված լինելու պարագայում*

19. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. մինչդատական վարույթն ավարտված լինելու պարագայում նախաքննության մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները ենթակա են քննության քրեական գործի հետ համատեղ, գործն ըստ էության քննող դատարանի կողմից, թե առանձին վարույթով, մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատարանի կողմից:

20. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատարանի լիազորություններն են (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

Մեջբերված իրավանդության համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և կոչված է ապահովելու դատական պաշտպանության համընդհանուր իրավունքի արդյունավետ իրացումը քրեական դատավարության սկզբնական փուլում:

21. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ն. Միսակյանի* գործով կայացված որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորալ այն մասին, որ.

«(...)

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառնությունների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (...» (տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

22. Սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Ն. Միսակյանի* գործով որոշման մեջ արձանագրված գործառնությունների արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը նախատեսել է



մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տեսակները և դրանց իրականացման կարգը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրականացման կարգը՝ որպես նման վերահսկողության օբյեկտ հռչակելով հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները, իսկ որպես վերահսկողության առարկա՝ այդ որոշումների և գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Վերոգրյալից հետևում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին:

23. Դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում նշված լիազորությունն արդյունավետ և հնարավորինս արագ կերպով իրականացնելու, անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու նպատակով քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է վերահսկողության իրականացման հատուկ ընթացակարգ (դատավարական ձև), որն իր բնույթով էականորեն տարբերվում է քրեական գործի քննության կարգից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասը դատարանին պարտավորեցնում է բողոքը քննել միանձնյա՝ այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում, իսկ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի համար պարտավորություն է սահմանում դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր:

Ընդ որում, «Նարեկ» ՄՊԸ-ի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) դատական կարգով բողոքարկման ենթակա են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները և որոշումները, որոնք կայացվել են մինչև գործն ըստ էության լուծելու համար դատարան ուղարկելը: Սահմանելով հետագա դատական վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նախաքննության ավարտված լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման համար: (...)» (տե՛ս «Նարեկ» ՄՊԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0050/11/08 որոշման 22-րդ կետը):

24. Սույն որոշման 20-23-րդ կետերում և համապատասխանաբար նաև Ն.Միսակյանի և «Նարեկ» ՍՊԸ-ի գործերով որոշումներում շարադրված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթն ավարտված լինելու պարագայում նախաքննության մարմնի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները ենթակա են քննության մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատարանի կողմից՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի) պահպանմամբ:

Հակառակ դեպքում, եթե այդ բողոքները քննության առարկա դարձվեն քրեական գործն ըստ էության քննող դատարանի կողմից, ապա այդ գործի քննության ընթացքում արդյունավետ կերպով չեն կենսագործվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրները: Արդյունքում՝ բողոքաբերը կզրկվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից:

*II. Քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման անթույլատրելիությունը*

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է պատասխանել նաև հետևյալ հարցին. դատավարության մասնակիցների՝ քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա՞ է արդյոք վերաքննիչ բողոքարկման:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կասակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

27. Մեջբերված քրեախրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում է որևէ իրավանդում, որը կասահմաներ քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը:

Կիրառելով մեկնաբանման *expression unius* կանոնը, որի համաձայն՝ սպառնիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով՝ Վճռարեկ դատարանը եզրահանգում է, որ դատավարության մասնակիցների՝ քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ:

28. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Բաղդասարյանի և Ա.Հարությունյանի դիմումի կապակցությամբ, որտեղ վերջիններս խնդրել էին ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի հատկանիշներով հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն, քննիչ Ա.Մարտիրոսյանը 2011 թվականի փետրվարի 17-ին որոշում է կայացրել Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Քրեական գործի նյութերին ծանոթացնելիս Վ.Բաղդասարյանի պաշտպաններ Ա.Սաղաթեյանը և Ռ.Ռևազյանը հայտարարել են, որ հաղորդում են տալիս լրագրողների Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու մասին: Մինևույն ժամանակ պաշտպանության կողմը միջնորդել է Վ.Բաղդասարյանին պարզաբանել առաջադրված մեղադրանքի էությունը և հարցաքննել: Քննիչ Ա.Մարտիրոսյանը 2011 թվականի փետրվարի 22-ին որոշում է կայացրել նշված միջնորդությունը մերժելու մասին: Որոշման մեջ քննիչն անդրադարձել է նաև պաշտպաններ Ա.Սաղաթեյանի և Ռ.Ռևազյանի հաղորդմանը՝ նշելով, որ փաստի առթիվ քրեական գործում առկա է Ա.Սուքիասյանի և Է.Պետրոսյանի նկատմամբ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ և 10-րդ կետերը):

Վ.Բաղդասարյանը և Ա.Հարությունյանը, ինչպես նաև պաշտպան Ռ.Ռևազյանը քննիչի վերագրյալ որոշումների դեմ բողոք են ներկայացրել Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի մարտի 12-ին որոշում է կայացրել Վ.Բաղդասարյանի վերաբերյալ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Նույն դատական ակտով որոշվել է Վ.Բաղդասարյանի և Ա.Հարությունյանի բողոքը քննության առնել քրեական գործի դատաքննության ընթացքում (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունիսի 22-ի դատական նիստի ժամանակ պաշտպաններ Ռ.Ռ.Լազյանը և Ա.Սաղաթելյանը հանդես են եկել միջնորդությամբ՝ խնդրելով դատարանին ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի հուլիսի 13-ին որոշում է կայացրել նախաքննության մարմնի որոշումների դեմ Վ.Բաղդասարյանի, Ա.Հարությունյանի և պաշտպան Ռ.Ռ.Լազյանի բողոքները մերժելու մասին: Նույն որոշմամբ Առաջին ատյանի դատարանը մերժել է նաև քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելու մասին պաշտպանների միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ և 13-րդ կետերը):

Վերաքննիչ բողոքներում Վ.Բաղդասարյանը և պաշտպան Ռ.Ռ.Լազյանը վիճարկել են նաև դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի արված միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ փաստարկել է, որ պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

29. Սույն որոշման 26-27-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի հետևյալ խախտումները.

ա) Առաջին ատյանի դատարանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության իրականացման ընթացակարգը (դատավարական ձևը), նախաքննության մարմնի որոշումների դեմ Վ.Բաղդասարյանի, Ա.Հարությունյանի և պաշտպան Ռ.Ռ.Լազյանի բողոքները քննության է առել քրեական գործի հետ համատեղ: Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման է ենթարկել քրեական գործի քննության ընթացքում և վերոգրյալ խախտումը վերացնելու փոխարեն դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

բ) Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն, որ դատավարության մասնակիցների՝ քրեական գործ հարուցելու համար դատախազին դիմելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի չի նախատեսում, Վ.Բաղդասարյանի և Ռ.Ռ.Լազյանի վերաքննիչ բողոքների հիման վրա դատական ստուգման է ենթարկել նաև պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու մասով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը:

30. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու

կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու վերաբերյալ Ա.Հարությունյանի, Վ.Բաղդասարյանի և Ռ.Ռևազյանի բողոքները մերժելու մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը, Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից բարձրացված մյուս հարցերին (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արձանագրված խախտումների առկայության պայմաններում նպատակահարմար չի գտնում անդրադառնալ դրանց:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու վերաբերյալ Ա.Հարությունյանի, Վ.Բաղդասարյանի և պաշտպան Ռ.Ռևազյանի բողոքները մերժելու մասին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

25.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՇԴ/0070/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>ճախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորների՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
<i>քարտուղայությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունիսի 8-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Խաչատուրի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Կ.Պետրոսյանի պաշտպան Է.Արամյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական ճախապատմությունը**

1. 2011 թվականի մարտի 3-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11106011 քրեական գործը՝ Կարեն Պետրոսյանի կողմից խարդախությամբ Ալվարո Առաքելյանի գույքը հափշտակելու փաստի առթիվ:

2011 թվականի մարտի 4-ին Կ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 11-ի որոշմամբ Կ.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2011 թվականի հունիսի 8-ին Կ.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի հունիսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով Կ.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 350.000 ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ՝ Կ.Պետրոսյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց:

Կ.Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառմամբ՝ Կ.Պետրոսյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով:

3. Պաշտպան Է.Արամյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 16-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Կ.Պետրոսյանի պաշտպան Է.Արամյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունվարի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

2012 թվականի հունվարի 25-ին մեղադրող Շ.Իսրայելյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել, իսկ վերանայվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Կ.Պետրոսյանը դատապարտվել է այն բանի համար, որ, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, չարաշահելով Ա.Առաքելյանի վստահությունը, վերջինիս պատկանող՝ Երևան քաղաքի Մայիսի 9 փողոցի 13-րդ շենքի թիվ 74 բնակարանը գրավադրելու և նրա համար բանկից վարկ ստանալու պատրվակով 2010 թվականի սեպտեմբերի 27-ին խաբեությամբ Ա.Առաքելյանից Շենգավիթ նոտարական գրասենյակում ստացել է նշված բնակարանը վաճառելու և գրավադրելու վերաբերյալ լիազորագիր, այնուհետև 2010 թվականի հոկտեմբերի 5-ին բնակարանի առուվաճառքի պայմանագիր է կնքել Տ.Գալարյանի հետ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի կարողացել հասցնել, առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը չի կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական

կողմից, քանի որ բնակարանատեր Ա.Առաքելյանը 2010 թվականի հոկտեմբերի 14-ին նոտարական կարգով դադարեցրել է Կ.Պետրոսյանին տրված լիազորագրի գործողությունը:

Բացի այդ, Կ.Պետրոսյանը, ուրիշի գույքի զգալի չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, չարաշահելով Ա.Առաքելյանի վստահությունը, վերջինիս և նրա ամուսնու՝ Ա.Խառատյանի անվամբ աշխատանքի վերաբերյալ տեղեկանքներ ձեռք բերելու, բանկի կառավարչին կաշառք տալու, բնակարանի չսեփականաշնորհված տարածքն օրինականացնելու պատրվակով, 2010 թվականի հուլիս և սեպտեմբեր ամիսներին՝ քննությամբ չպարզված օրերին, Ա.Առաքելյանից խաբեությամբ հափշտակել է 234.111 ՀՀ դրամ՝ նրան պատճառելով զգալի չափի գույքային վնաս:

6. 2010 թվականի սեպտեմբերի 27-ին տուժող Ա.Առաքելյանի կողմից ամբաստանյալ Կ.Պետրոսյանին նոտարական կարգով տրվել է լիազորագիր, որն ունի հետևյալ բովանդակությունը. «Ես, Հայաստանի Հանրապետության քաղ. Ալվարդ Վաղուշի Առաքելյանս (...) լիազորում եմ Հայաստանի Հանրապետության քաղ. Կարեն Պետրոսյանին (...) իմ փոխարեն գրավ դնելու, գրավից հանելու, անհրաժեշտության դեպքում իր հայեցողությամբ սահմանված գումով և պայմաններով վաճառելու ՀՀ ք.Երևան, Մայիսի 9 փ., 13 շ., բն. 74 հասցեում գտնվող անշարժ գույքը (...) կնքելու և ստորագրելու գրավի, առուվաճառքի, վարկային պայմանագրերը, ստանալու ինձ հասանելիք գումարները, լուծելու կնքված պայմանագրերը, տալու և ստանալու դիմումներ, տեղեկանքներ, այլ փաստաթղթեր, ստորագրելու իմ փոխարեն և կատարելու բոլոր գործողությունները կապված նշված հանձնարարության հետ:

Ես՝ Ալվարդ Վաղուշի Առաքելյանս, հայտարարում եմ, որ գործունակությունս սահմանափակված չէ, իմ նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանված չէ, և սույն լիազորագիրը տալիս եմ հոժարական և սթափ մտքով:

Լիազորագրի բովանդակությունը, էությունը, ինչպես նաև իրավական հետևանքները նոտարի կողմից բացատրվել են ինձ, պարզ է և համապատասխանում է իմ ցանկությանը (...)» (տե՛ս քրեական գործ, էջ 4):

7. 2010 թվականի հոկտեմբերի 5-ին Կ.Պետրոսյանը նոտարական կարգով անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր է կնքել Տ.Գորարյանի հետ, որով վերջինիս է վաճառել ք.Երևան, Մայիսի 9 փ., 13/74 հասցեում գտնվող բնակարանը (տե՛ս քրեական գործ, էջ 37):

8. 2010 թվականի հոկտեմբերի 14-ին Ա.Առաքելյանը նոտարական կարգով դադարեցրել է 2010 թվականի սեպտեմբերի 27-ին Կ.Պետրոսյանին տրված լիազորագրի գործողությունը (տե՛ս քրեական գործ, էջ 173):

9. Տուժող Ա.Առաքելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ֆինանսական խնդիրները կարգավորելու նպատակով ցանկացել է իրեն պատկանող բնակարանի գրավադրմամբ վարկ վերցնել և այդ նպատակով դիմել է Կ.Պետրոսյանի օգնությանը: Վերջինս հայտնել է, որ բանկի հետ կապված գործարքները կատարելու համար անհրաժեշտ է մոտ 800 ԱՄՆ դոլար: Ինքը և ամուսինը մաս-մաս տվել են այդ գումարը, ինչպես նաև բնակարանի գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որից հետո Կ.Պետրոսյանը երկու անգամ բանկի աշխատակիցների հետ եկել է բնակարանը տեսնելու: Քանի որ տանը չի եղել, խնդրել է հարևանությամբ բնակվող քրոջը բացել բնակարանի դուռը, նշված անձինք տեսել են բնակարանը, որից հետո Կ.Պետրոսյանը հայտնել է, որ 2010 թվականի օգոստոսի 30-ին վարկը կստանան: Այդ օրն ամուսինը զանգահարել է



Կ.Պետրոսյանին, վերջինս եկել է իրենց բնակարան, հայտնել, որ վարկը ձգձգվում է, ինքն իր անձնական գումարից որոշակի գումար կտա, իսկ երբ վարկը ստանան՝ հետ կվերադարձնեն: Նույն օրը Կ.Պետրոսյանն իրեն տվել է 400.000 ՀՀ դրամ: Դրանից հետո Կ.Պետրոսյանը, տարբեր պատճառաբանություններ բերելով, հայտնել է, որ վարկի ձևակերպման գործընթացը ձգձգվում է, իսկ 2010 թվականի սեպտեմբերի կեսերին իրեն տվել է 600.000 ՀՀ դրամ և ասել, որ դա դարձյալ իր անձնական գումարներից է: Դրանից մի քանի օր անց Կ.Պետրոսյանն իրեն ասել է, որ պետք է լիազորագիր տա, որպեսզի բնակարանն իր անվամբ բանկում գրավ դնի, քանի որ բանկի կառավարիչն իրեն է ճանաչում և վստահում ու միայն այդ դեպքում վարկ կտրամադրի: 2010 թվականի սեպտեմբերի 24-ին ինքը, ամուսինը և Կ.Պետրոսյանը գնացել են նոտարական գրասենյակ, հերթ պահել մոտ մեկ ժամ: Մեքենագրուհուն ասել են, որ բնակարանը բանկում գրավ դնելու և վարկ ստանալու համար ցանկանում են լիազորագիր կնքել: Այդ ժամանակ Կ.Պետրոսյանը հեռախոսով գրուցելիս է եղել, հեռախոսն անջատելուց հետո ասել է, որ ինքն աշխատանքի է, չի կարող երկար բացակայել և պայմանավորվել են մեկ ուրիշ օր գալ նոտարական գրասենյակ և լիազորագիր կնքել: 2010 թվականի սեպտեմբերի 27-ին միայնակ գնացել է Երևանի Արշակունյաց պողոտայում գտնվող նոտարական գրասենյակ և մինչ Կ.Պետրոսյանի գալն աշխատակցուհուն ասել է, որ լիազորագիր է ցանկանում տալ, որպեսզի լիազորված անձն իր բնակարանը բանկում գրավ դնի: Մեքենագրուհին համակարգչով հավաքել է լիազորագիրը, հետո եկել է Կ.Պետրոսյանը, կարդացել այն, որից հետո զանգահարել է ինչ-որ մարդու, հեռախոսը փոխանցել մեքենագրուհուն: Նոտարական գրասենյակի աշխատակցուհին, հեռախոսով խոսելուց հետո, փոփոխություններ է կատարել լիազորագրի բովանդակության մեջ: Լիազորագիրը տպելուց հետո կարդացել է այն և նկատել, որ դրանում նշված է նաև բնակարանը վաճառելու իրավունքը, Կ.Պետրոսյանին հարցրել է, թե ինչի համար է այն նշվում, եթե բնակարանը պետք է գրավադրվի, այլ ոչ թե վաճառվի: Վերջինս բարկացել է և հայտնել, որ ձևականորեն է այդ կետը նշվում, բանկի կառավարիչն է այդպես պահանջել, առանց վաճառքի իրավունքի բանկը վարկ չի տրամադրի: Վստահելով Կ.Պետրոսյանին՝ վերջինիս ցանկացած բովանդակությամբ լիազորագիր է կնքել: Դրանից հետո վարկ ստանալու գործընթացը ձգձգվել է և Կ.Պետրոսյանին հրավիրել է իր տուն, որպեսզի պարզի, թե որն է պատճառը: Վերջինս հայտնել է, որ բանկն այլևս վարկ չի տրամադրում, հետո էլ ասել է, որ իր կողմից տրված 1.000.000 ՀՀ դրամը բանկի տրամադրած վարկի գումարից է եղել: Ինքը պահանջել է վերադարձնել լիազորագիրն ու բնակարանի սեփականության իրավունքի վկայականը, սակայն Կ.Պետրոսյանն ասել է, որ լիազորագիրն իրեն պետք չի եղել, այն պատռել, գցել է, իսկ վկայականը կվերադարձնի 1.000.000 ՀՀ դրամը հետ ստանալու դեպքում: Այդ խոսակցությունից հետո ինքն անհանգստացել է, մտածել է, որ հնարավոր է Կ.Պետրոսյանն իր բնակարանը վաճառած լինի, գնացել է կադաստր և պարզել, որ իր բնակարանի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր է ներկայացվել, որից հետո նոտարական կարգով դադարեցրել է Կ.Պետրոսյանին տրված լիազորագրի գործողությունն ու բնակարանի կադաստրային անվանափոխություն չի կատարվել (տե՛ս քրեական գործ, 45-50-րդ, 79-89-րդ, 120-129-րդ, 145-146-րդ էջեր):

10. Նախքան քրեական գործի հարուցումը Ա.Առաքելյանն իր բացատրություններում նշել է, որ առաջին անգամ, երբ ամուսնու և Կ.Պետրոսյանի հետ գնացել են նոտարական գրասենյակ, իրենք հրաժարվել են լիազորագրի մեջ նշել նաև բնակարանը վաճառելու իրավունքը, որից հետո Կ.Պետրոսյանն ասել է, որ բանկի կառավարչի հետ

կխոսի, կճշտի, թե ինչ բովանդակությամբ պետք է լիազորագիր կնքվի և հեռացել է (տե՛ս քրեական գործ, 12-14-րդ, 30-33-րդ էջեր):

11. Ամբաստանյալ Կ.Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2010 թվականի հուլիս ամսին ծանոթացել է Ա.Խառատյանի և նրա կնոջ՝ Ա.Առաքելյանի հետ, ովքեր խնդրել են իրեն օգնել բնակարանը բանկում գրավ դնելու և վարկ ստանալու հարցում: Ինքն ասել է, որ բանկում ծանոթներ ունի, կարող է օգնել այդ հարցում, սակայն բանկի աշխատակիցները բնակարանը պետք է տեսնեն, որից հետո միայն պարզ կլինի վարկ կտրամադրեն, թե՛ ոչ: Այնուհետև բանկի աշխատակիցներն իր ուղեկցությամբ եկել և տեսել են բնակարանը, որից հետո պարզվել է, որ բնակարանն ունի չսեփականաշնորհված տարածք, և բանկից իրեն տեղեկացրել են, որ վարկ չի տրամադրվի: Ինքն այդ մասին հայտնել է Ա.Առաքելյանին, վերջինս էլ ասել է, որ եթե չի ստացվում բնակարանի գրավադրմամբ վարկ վերցնել, անհրաժեշտ է այն վաճառել 20.000-25.000 ԱՄՆ դոլարով: Ինքն այդ մասին հայտնել է իր ծանոթ Տ.Գրարյանին, որը ցանկություն է հայտնել տեսնել այդ բնակարանը, որից հետո հայտնել է, որ ուզում է գնել այն: Այդ մասին ասել է Ա.Առաքելյանին, իսկ Տ.Գրարյանի հետ պայմանավորվել է, որ բնակարանը պետք է վաճառվի 23.000 ԱՄՆ դոլարով: Վերջինս որպես կանխավճար իրեն տվել է 1.000.000 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ փոխանցել է Ա.Առաքելյանին: Դրանից հետո Ա.Առաքելյանն իրեն ասել է, որ չի կարող գործարքն անձամբ կատարել, որովհետև չի ցանկանում, որ այդ մասին իմանա ամուսինը: 2010 թվականի սեպտեմբերի 27-ին Շենգավիթ նոտարական գրասենյակում Ա.Առաքելյանը բնակարանը վաճառելու իրավունքով լիազորագիր է տվել իրեն, ինչից հետո՝ 2010 թվականի հոկտեմբերի 5-ին ինքն առուվաճառքի պայմանագիր է կնքել Տ.Գրարյանի հետ: Առուվաճառքի պայմանագիրը ներկայացրել են կադաստրի տարածքային ստորաբաժանում, սակայն բնակարանի անվանափոխություն չի կատարվել, քանի որ Ա.Առաքելյանը դիմում է ներկայացրել և կասեցրել գործընթացը: Դրանից հետո Ա.Առաքելյանն իրեն հայտնել է, որ ընտանեկան խնդիրներ ունի, որոշել է չվաճառել բնակարանը և իրենից պահանջել է վերադարձնել բնակարանի սեփականության իրավունքի վկայականը, ինքն էլ հայտնել է, որ վկայականը կվերադարձնի միայն այն ժամանակ, երբ հետ կստանա որպես կանխավճար տրված 1.000.000 ՀՀ դրամը (տե՛ս քրեական գործ, 55-68-րդ, 104-110-րդ, 120-129-րդ էջեր):

12. Վկա Վալիդա Մանուչարյանը գործի քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Առաքելյանի բնակարանում հանդիպել է վերջինիս, և նա հայտնել է, որ ֆինանսական խնդիրների պատճառով դիմել է Կ.Պետրոսյանին, որպեսզի նա օգնի իր բնակարանը վաճառելու հարցում, սակայն հետագայում փոշմանել է և ցանկանում է հետ ստանալ բնակարանի սեփականության վկայականը (տե՛ս քրեական գործ, 200-204-րդ, 206-209-րդ էջեր):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Կ.Պետրոսյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Ի հիմնավորումն վերոգրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը շարադրել և վերլուծել է սույն գործի փաստական հանգամանքները, *Լ.Ավետիսյանի* գործով Վճարելի դատա-

րանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, որից հետո եզրակացություն է արել այն մասին, որ Կ.Պետրոսյանի արարքում բացակայում են խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշները: Ըստ բողոքաբերի՝ բնակարան վաճառելու և գրավադրելու համար տուժող Ա.Առաքելյանի կողմից ամբաստանյալ Կ.Պետրոսյանին լիազորագիր տալու, բնակարանի վաճառքի գումարը ստացած լինելու կամ չլինելու փաստի ապացուցման հիմնախնդիրները վերաբերում են մասնավոր իրավունքի ոլորտին, և այդ հարցով հանրային շահը չի գերակայում մասնավոր շահի նկատմամբ:

14. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ դատարանների կողմից, ի թիվս այլնի, որպես Կ.Պետրոսյանի մեղքը հիմնավորող ապացույցներ են դիտվել «Ակբա-Կրեդիտ-Ազրիկոլ» բանկից ստացված գրությունը, Տ.Գզարյանի և ամբաստանյալի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը, լիազորագիրը և «Նաիրիտ» փակ բաժնետիրական ընկերությունից ստացված գրության պատասխանը: Քրեական գործում բացակայում է վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որևէ որոշում, որով նշված փաստաթղթերը ճանաչվել են որպես այլ ապացույց, հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա, դրանք չպետք է դիտվեին ապացույց և դրվեին դատավճռի հիմքում:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը, քրեական գործի վարույթը կարճել և Կ.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նախ պետք է պատասխանել հետևյալ իրավական հարցին. իրավաչափ են արդյոք ամբաստանյալ Կ.Պետրոսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ խարդախությունը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է:

18. Խարդախության հանցակազմի քրեաիրավական բնութագիրը Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության է ենթարկվել *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ: Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է: Այս կապակցությամբ էական նշանակություն կարող է ունենալ թե գույքն ուրիշին հանձնելու գործում ով է նախաձեռնություն դրսևորել: Արդյոք գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնելու տուժողի մտադրությունն առաջացել է հանցավորի կողմից նրան հանձնելու և հորդորելու արդյունքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով:

Այսինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հատուկ եղանակով՝ խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով:

Խաբեությունը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով իրական, ճշմարիտ փաստերի դիտավորյալ խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը: (...):

Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև ձևավորված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով տուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզվի տուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է (...):» (տե՛ս Լիա Արտյոմի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 22-26-րդ կետերը):

19. Սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Լ.Ավետիսյանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական վերլուծությունների լույսի ներքո գնահատելով ամբաստանյալ Կ.Պետրոսյանին մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Պետրոսյանի գործողություններում խարդախության հանցակազմի առկայության վերաբերյալ եզրահանգման գալու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված համարել, որ վերջինս, նպատակ ունենալով խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակել Ա.Առաքելյանին պատկանող գույքը, հանցավոր վարքագիծ է դրսևորել, որով ներգործել է Ա.Առաքելյանի գիտակցության և կամքի վրա, ինչի արդյունքում վերջինս ընկնելով մոլորության մեջ իր բնակարանը վաճառելու իրավունք է հանձնել Կ.Պետրոսյանին:

20. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

ա) 2010 թվականի սեպտեմբերի 27-ին տրված լիազորագրով Ա.Առաքելյանը Կ.Պետրոսյանին լիազորել է իր փոխարեն գրավ դնելու, գրավից հանելու, անհրաժեշտության դեպքում իր հայեցողությամբ սահմանված գնով և պայմաններով վաճառելու Երևանի Մայիսի 9 փողոցում գտնվող իր բնակարանը, կնքելու և ստորագրելու գրավի, առուվաճառքի, վարկային պայմանագրերը, ստանալու հասանելիք գումարները, լուծելու կնքված պայմանագրերը, տալու և ստանալու դիմումներ, տեղեկանքներ, այլ փաստաթղթեր: Ա.Առաքելյանը հայտարարել է, որ լիազորագիրը տալիս է հոժարական և սթափ մտքով, լիազորագրի բովանդակությունը, էությունը, ինչպես նաև իրավական հետևանքները նոտարի կողմից բացատրվել են իրեն, պարզ են և համապատասխանում են իր ցանկությանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի բովանդակությունից երևում է, որ Կ.Պետրոսյանը նշված բնակարանը վաճառել է Տ.Գզարյանին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) 2010 թվականի հոկտեմբերի 14-ին Ա.Առաքելյանը նոտարական գրասենյակում հայտարարություն է տվել այն մասին, որ հետ է վերցնում Կ.Պետրոսյանին տրված լիազորագիրը: Ա.Առաքելյանը հայտարարությունը ներկայացրել է կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում, ինչի հիման վրա Կ.Պետրոսյանի և Տ.Գզարյանի միջև 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրից բխող իրավունքը պետական գրանցում չի ստացել (տե՛ս սույն որոշման 8-րդ, 9-րդ և 11-րդ կետերը):

դ) Ա.Առաքելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ չի ցանկացել վաճառել իր բնակարանը, այլ ընդհամենը ցանկացել է դրա գրավադրմամբ բանկից վարկ ստանալ և այդ հարցում իրեն օգնելու խնդրանքով դիմել է Կ.Պետրոսյանին: Վերջինս իրեն ասել է, որ պետք է լիազորագիր տա, որպեսզի բնակարանն իր անվամբ բանկում գրավ դնի, քանի որ բանկի կառավարիչն իրեն է ճանաչում և վստահում ու միայն այդ դեպքում վարկ կտրամադրվի: Նոտարական գրասենյակում Կ.Պետրոսյանն իրեն հայտնել է, որ լիազորագրում ձևականորեն պետք է նշվի նաև վաճառքի իրավունքը, բանկի կառավարիչն է այդպես պահանջել և առանց վաճառքի իրավունքի բանկը վարկ չի տրամադրի: Վստահելով Կ.Պետրոսյանին՝ վերջինիս ցանկացած բովանդակությամբ լիազորագիր է կնքել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

ե) Կ.Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Առաքելյանի բնակարանի գրավադրմամբ վարկ ստանալու գործընթացը ձախողվել է, քանի որ բնակարանն ունեցել է չսեփականաշնորհված տարածք: Այդ մասին հայտնել է Ա.Առաքելյանին, որից հետո վերջինս խնդրել է վաճառել բնակարանը: Ա.Առաքելյանն իրեն ասել է, որ չի կարող գործարքն անձամբ կատարել, որովհետև չի ցանկանում, որ այդ մասին իմանա ամուսինը: Այնուհետև իր ծանոթներից Տ.Գզարյանը բնակարանը տեսնելուց հետո ցանկություն է հայտնել գնել այն և որպես կանխավճար իրեն է տվել 1.000.000 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ փոխանցել է Ա.Առաքելյանին: 2010 թվականի սեպտեմբերի 27-ին Ա.Առաքելյանն ինքնական բնակարանը վաճառելու իրավունքով լիազորագիր է տվել իրեն, որից հետո առուվաճառքի պայմանագիր է կնքել Տ.Գզարյանի հետ: Առուվաճառքի պայմանագիրը ներկայացրել են կադաստրի տարածքային ստորաբաժանում, սակայն բնակարանի անվանափոխություն չի կատարվել, քանի որ Ա.Առաքելյանը դիմում է ներկայացրել և կասեցրել գործընթացը: Ա.Առաքելյանից պարզաբանումներ է

պահանջել, վերջինս էլ հայտնել է, որ ընտանեկան խնդիրներ ունի, որոշել է չվաճառել բնակարանը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ քրեական գործի նախաքննության ընթացքում մի քանի անգամ հարցաքննվել է վկա Վ.Մամուչարյանը, որը հայտնել է, որ Ա.Առաքելյանի բնակարանում հանդիպել է վերջինիս, և նա ասել է, որ ինքն է խնդրել Կ.Պետրոսյանին օգնել բնակարանը վաճառելու հարցում, սակայն հետագայում փոշմանել է և ցանկանում է հետ ստանալ բնակարանի սեփականության վկայականը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը վկա Վ.Մամուչարյանի ցուցմունքները չեն հետազոտել և նրա հայտնած փաստական տվյալները որևէ գնահատականի չեն արժանացրել, այլ ապացույցների բավարար համակցությամբ չեն հերքել դրանք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ տուժող Ա.Առաքելյանի կողմից մինչ քրեական գործի հարուցումը տված բացատրությունների և գործի քննության ընթացքում տված ցուցմունքների միջև առկա են էական հակասություններ: Մասնավորապես, Ա.Առաքելյանն իր բացատրություններում նշել է, որ առաջին անգամ, երբ ամուսնու և Կ.Պետրոսյանի հետ զնացել են նոտարական գրասենյակ, իրենք հրաժարվել են լիազորագրի մեջ նշել նաև բնակարանը վաճառելու իրավունքը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Մինչդեռ հետագա ցուցմունքներում տուժողը հայտնել է, որ Կ.Պետրոսյանը բնակարանը վաճառելու իրավունքը լիազորագրում նշելու պահանջ է ներկայացրել միայն այն ժամանակ, երբ ինքը երկրորդ անգամ, միայնակ զնացել էր նոտարական գրասենյակ և վստահելով Կ.Պետրոսյանին՝ վերջինիս ցանկացած բովանդակությամբ լիազորագիր է կնքել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերոգրյալ հակասությունը նույնպես ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց վերը նշված հանգամանքները պարզելու ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով արգելված արարքում Կ.Պետրոսյանի մեղավորության կամ անմեղության մասին եզրահանգման գալ հնարավոր չէ:

22. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, պատշաճ հետազոտման և գնահատման չեն ենթարկել քրեական գործում առկա բոլոր ապացույցները: Նշվածը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, ուստի հիմք է սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի մասով պետք է ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներով, ինչպես վերաբերելիության և թույլատրելիության առումով, այնպես էլ իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից պետք է պատշաճ հետազոտման և գնահատման ենթարկի գործում առկա ապացույցները, որից հետո միայն սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո եզրահանգման գա առ այն, թե Ա.Առաքելյանն իր

բնակարանը վաճառելու իրավունքով նոտարական լիազորագիր է տվել Կ.Պետրոսյանին ինքնակամ, թե վերջինին կողմից դրսևորած հանցավոր վարքագծի արդյունքում՝ գտնվելով մոլորության մեջ:

23. Անդրադառնալով Կ.Պետրոսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, ղեկավարվելով օրենքով և ներքին համոզմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ Կ.Պետրոսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության: Հետևաբար, այդ առումով ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված են, իսկ պաշտպանի բողոքում առկա փաստարկներն իրենց հաստատումը չեն գտնում քրեական գործի նյութերում:

24. Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկին այն մասին, որ դատարանները որպես Կ.Պետրոսյանի մեղքը հիմնավորող ապացույցներ են դիտել մի շարք փաստաթղթեր, որոնք սահմանված կարգով այլ ապացույց չեն ճանաչվել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ այն հիմնագուրկ է, քանի որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպանի կողմից հիշատակված փաստաթղթերը նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ ճանաչվել են որպես ապացույց (տե՛ս քրեական գործ, 191-192-րդ էջեր):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Կարեն Խաչատուրի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը բեկանել և գործն այդ մասով ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Կարեն Խաչատուրի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

26.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0203/01/11

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Ռ.ՀԱԿՈԲՅԱՆԻ
<i>դատախազ՝</i>	Ռ.ՍԱՐՈՒԻՆԱՆՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Թադևոս Ավետիքի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 1-ի որոշման դեմ ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հունվարի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 52100211 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 11-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի 2011 թվականի մարտի 25-ի որոշմամբ վերացվել է քրեական գործի վարույթը կասեցնելու մասին նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 11-ի որոշումը, և քրեական գործի վարույթը վերսկսվել է:



2011 թվականի մայիսի 17-ի որոշմամբ Թ.Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով և 242-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի սեպտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 27-ի դատավճռով ամբաստանյալ Թ.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ գրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ Թ.Գևորգյանն ազատվել է նշանակված հիմնական պատժից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել և հռչակվել է նրա անմեղությունը:

3. Ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանի և տուժող Վ.Արզումանյանի իրավահաջորդ Ա.Արզումանյանի վերաբննիչ բողոքների քննության արդյունքում Վերաբննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վերաբննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 27-ի դատավճիռը:

4. Վերաբննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանը և տուժող Վ.Արզումանյանի իրավահաջորդ Ա.Արզումանյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 2-ի որոշումներով Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանի բողոքն ընդունվել է վարույթ, իսկ տուժող Վ.Արզումանյանի իրավահաջորդ Ա.Արզումանյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Թ.Գևորգյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2010 թվականի հունիսի 21-ին իր կողմից վարած «ՎԱԶ-2121» մակնիշի 6700131 պետհամարանիշի ավտոմեքենայով, ուզելից խմիչք օգտագործած վիճակում քաղաք Սպիտակից Երևան ընթանալիս Սպիտակ-Երևան ճանապարհի 1-ին կիլոմետրում, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնների 65-րդ և 66-րդ կետերի պահանջները, ինչպես նաև «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, ավտոմեքենան վարելով սահմանված թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ և իրականացնելով իր վարած ավտոմեքենայի ընթացքի ոչ պատշաճ և վտանգավոր կառավարում, ավտոմեքենան դուրս է բերել հանդիպակաց երթևեկելի ուղեմաս և ընկել ճանապարհին հարող հանդամաք, ինչի հետևանքով ավտոմեքենայի ուղևոր Վարդան Արամայիսի Արզումանյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 142):

6. Առաջին ատյանի դատարանին ներկայացված ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանի պաշտպանական ճառում առկա է հետևյալ ձևակերպումը. «Եթե դատարանը գտնի, որ ամբաստանյալը կատարել է իրեն վերագրվող արարքը, ապա չի կարող կայացնել մեղադրական դատավճիռ, այլ պետք է կարճի քրեական գործով վարույթը՝ կիրառելով 2011 թվականի մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» N ԱԺՌ-277-Ն որոշումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 116):

7. Վերաքննիչ բողոքում ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանը փաստարկել է, որ «Դատարանը, ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու դեպքում, պետք է ոչ թե ազատեր նրան պատժից, այլ պետք է կարճեր քրեական գործի վարույթը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 208):

8. Ամբաստանյալ Թ.Գևորգյանի՝ 2012 թվականի հունիսի 1-ին Վերաքննիչ դատարանին ուղղված դիմումն ունի հետևյալ բովանդակությունը. «Թեև ես ինձ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով վերագրվող արարքում մեղավոր չեմ ճանաչում, սակայն ներկայումս չեմ առարկում, որ իմ նկատմամբ կիրառվի նույն համաներման ակտի 5-րդ կետի 4-րդ ենթակետը և կարճել քրեական գործի վարույթը:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանին միջնորդում և խնդրում եմ սույն քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրվող դրվագով իր նկատմամբ կիրառել հիշյալ համաներման ակտի 5-րդ կետի 4-րդ ենթակետը և կարճել քրեական գործը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 290):

9. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) համաներման ակտ ընդունվելու հիմքով քրեական գործի վարույթի կարճումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ անձն ըստ էության ընդունում է իր կողմից հանցանք կատարելու փաստը՝ համաձայնվելով համաներման ակտի հիմքով քրեական գործի վարույթի կարճմանը:

Այնինչ, ինչպես երևում է գործի նյութերից, ամբաստանյալ Թ.Գևորգյանն իրեն մեղավոր չի ճանաչել, ավելին, նրա պաշտպանի կողմից ներկայացված բողոքում խնդրվել է նրան արդարացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքով:

Հետևաբար, վերաքննիչ դատարանն անհիմն է համարում վերաքննիչ բողոքի փաստարկն այն մասին, որ առաջին ատյանի դատարանը, չկարճելով քրեական գործի վարույթը սխալ է կիրառել համաներման ակտը:

Միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանը Թ.Գևորգյանին պատժից ազատել է ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011 թվականի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա: (...) Թ.Գևորգյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից նշանակվել է պատիժ ազատագրվման ձևով՝ մեկ տարի 6 ամիս ժամկետով: Հետևաբար Թ.Գևորգյանը ենթակա էր պատժից ազատման նշված որոշման 1-ին կետի՝ ոչ թե 3-րդ, այլ 1-ին ենթակետի հիման վրա» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 305):

**3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ սույն գործով կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասը, ու չպետք է կիրառվեր:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Թ.Գ.Լորգյանին առաջադրված մեղադրանքը հաստատված է համարվել միայն գործի ելքով շահագրգռված, տվյալ գործով տուժողի իրավահաջորդ ճանաչված անձի և նրա ընտանիքի անդամների ցուցմունքների հիման վրա, ինչպես նաև փորձագետի՝ միմյանց հակասող եզրակացությունների հիման վրա:

11. Բողոքաբերը նշել է նաև, որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Թ.Գ.Լորգյանի նկատմամբ սխալ է կիրառվել Համաներման ակտը: Ըստ բողոքաբերի՝ համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթի կարճումը չպետք է պայմանավորվի անձի կողմից հանցանքի կատարման փաստի ընդունման հետ, քանի որ Համաներման ակտով նման սահմանափակում նախատեսված չէ:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 1-ի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ճանաչելով և հռչակելով Թադևոս Գ.Լորգյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ կամ Համաներման ակտի 6-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա՝ քրեական գործի վարույթը կարճել:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերի կողմից բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերն ըստ էության երկու իրավական հարց է բարձրացրել, որոնցից առաջինն առնչվում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի սխալ կիրառմանը (նյութական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), իսկ երկրորդը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի խախտմանը (դատավարական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով դատավարական իրավունքի խախտման առկայությունը հաստատված ճանաչելու պարագայում այն կարող է ազդեցություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի կիրառման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաներման ակտի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող

նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Մույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ օրինական և հիմնավորվա՞ծ է արդյոք Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը, այն դեպքում, երբ Համաներման ակտի հիման վրա՝ քրեական գործի վարույթի կարճու՛մը թույլատրելի պայմանավորվել է Թ.Գևորգյանի կողմից հանցանքի կատարման փաստն ընդունելու հանգամանքով:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

13) ընդունվել է համաներման ակտ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

*Մ.Էդոյանի և այլոց* վերաբերյալ կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմերից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»։ Ուշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին:

(...) [վերոնշյալ] օրենքի մեկնաբանությունները ոչ միայն պայմանավորված են օրենքի իմաստի տառացի ընկալմամբ, այլև արտահայտում են քրեական դատավարությունում իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռությունը: (...)» (տե՛ս Մխիթար Մխիրանի Էդոյանի և այլոց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը):

16. Մ.Էշոյանի և այլոց վերաբերյալ կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտի ընդունումը քրեական դատավարության ցանկացած փուլում բացառում է քրեական գործի վարույթը: Համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի վերոնշյալ պարտականությունը, սակայն, որոշակի վերապահում ունի, մասնավորապես՝ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը ենթակա է կարճման այն դեպքում, երբ մեղադրյալը դրա դեմ չի առարկում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր նկատմամբ համաներման ակտի կիրառման համար անձի համաձայնության՝ որպես իմպերատիվ պահանջի օրենսդրական ամրագրումը նպատակ է հետապնդում վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն տալ պարզելու, թե արդյոք անձը համաձայն է, որ համաներման ակտի ընդունման հիմքով իր նկատմամբ քրեական գործ չհարուցվի, քրեական հետապնդում չիրականացվի կամ հարուցված քրեական գործը կարճվի:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման «ոչ արդարացնող» հիմք է, որի դեպքում թեև կատարված արարքն իր մեջ պարունակում է հանցակազմի հատկանիշներ, սակայն համապատասխան համաներման ակտի առկայության պարագայում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Այլ կերպ՝ համաներման ակտի հիման վրա՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, սակայն ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ՝ դրանից բխող հետևանքներով:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 16-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու և հարուցված քրեական գործը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորության իրականացման համար անհրաժեշտ իմպերատիվ պահանջ է հանդիսանում անձի համաձայնությունը: Համաներման ակտի կիրառման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում անձի համաձայնությունը հանդիսանում է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք և կապված է բացառապես իր նկատմամբ համաներման ակտ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի ցանկության հետ: Հետևաբար, համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն ենթադրում է, որ վերջինս յուրաքանչյուր դեպքում պարտավոր է քննարկման առարկա դարձնել համաներման ակտի կիրառման հարցը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ ամբաստանյալը համաձայն չէ համաներման ակտի կիրառման հետ, պարտավոր է բացառել դրա կիրառումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իր նկատմամբ համաներման ակտի կիրառման դեպքում անձի համաձայնությունը վերաբերում է բացառապես նշված ակտի կիրառմանը, և դրա բացակայության դեպքում գործի վարույթը շարունակվում է ընդհանուր կանոններով՝ հնարավորություն տալով անձին հասնելու ամբողջական «ռեաբիլիտացիայի»: Հետևաբար, Համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթի

կարճման հնարավորության դեպքում որևէ այլ, այդ թվում՝ անձի կողմից հանցանք կատարելն ընդունելու կամ չընդունելու հիմքով համաներման ակտի չկիրառումը հանդիսանում է անձի իրավունքների խախտում, որը դրսևորվել է Համաներման ակտի կիրառման ոչ իրավաչափ սահմանափակման ձևով:

19. «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 1-ին կետում սահմանված են պատժից ազատելու դեպքերը, իսկ Համաներման ակտի 6-րդ և 8-րդ կետերում սահմանված են համապատասխանաբար՝ քրեական հետապնդում չհարուցելու և քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև պատժաչափի չկրած մասը կրճատելու դեպքերը:

Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետն ամրագրում է, որ քրեական հետապնդում չի հարուցվում և չի իրականացվում, ինչպես նաև կարճվում են մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների կամ դատարանի վարույթում գտնվող քրեական այն գործերը, որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում:

Համաներման ակտի 8-րդ կետի 3-րդ ենթակետն ամրագրում է, որ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պատժաչափի չկրած մասը կրճատվում է մեկ երրորդով:

Վերոշարադրյալ դրույթների ուսումնասիրությունից երևում է, որ Համաներման ակտի կիրառման արդյունքում անձը կարող է ազատվել պատժից, նրա նկատմամբ քրեական հետապնդումը կարող է դադարացվել, նրա նկատմամբ քրեական հետապնդում կարող է չիրականացվել, ինչպես նաև կարող է կարճվել քրեական գործի վարույթը և կրճատվել պատժի չկրած մասը:

Այսինքն, Համաներման ակտի կիրառման արդյունքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելը ենթադրում է քրեական գործի կարճման միջոցով անձին դատապարտելուց հրաժարում, իսկ պատժից ազատելը ենթադրում է մեղադրական դատավճռով դատապարտված անձին իր նկատմամբ նշանակված պատժից կամ դրա մի մասից ազատում: Համաներման ակտի կիրառման վերոնշյալ դեպքերից երկրորդի պարագայում մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր է: Հետևաբար, Համաներման ակտի կիրառմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելը վերջինիս համար ավելի բարենպաստ հետևանքներ է առաջացնում, քան պատժից ազատելը, քանի որ առաջին դեպքում անձը մեղադրական դատավճռով չի դատապարտվում, և նրա նկատմամբ պատիժ չի նշանակվում: Հետևաբար, համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի կարճման պահանջի դեպքում անձին իր նկատմամբ նշանակված պատժից կամ դրա մի մասից ազատելը հանդիսանում է անձի իրավունքների խախտում, որը դրսևորվել է համաներման ակտի ոչ ճիշտ կիրառման ձևով:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Թ.Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել 34-138-րդ հոդվածի 1-ին մասով և 242-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Թ.Գևորգյանի պաշտպան Ռ.Հակոբյանը խնդրել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման

20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման հիման վրա՝ քրեական գործի վարույթը կարճել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Թ.Գևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցների վարելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով, ինչպես նաև Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ ազատել է նշանակած հիմնական պատժից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել և հռչակել է նրա անմեղությունը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Համաներման ակտի 6-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը ենթակա էր կարճման, և ամբաստանյալ Թ.Գևորգյանը չի առարկել իր նկատմամբ Համաներման ակտի կիրառման դեմ:

Վերաքննիչ դատարանում գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալ Թ.Գևորգյանը դիմում է ներկայացրել՝ նշելով, որ թեև մեղավոր չի ճանաչում իրեն վերազրկող արարքի կատարման մեջ, սակայն չի առարկում իր նկատմամբ համաներման ակտի կիրառման հիման վրա քրեական գործի վարույթի կարճմանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, այն թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ համաներման ակտ ընդունվելու հիմքով քրեական գործի վարույթի կարճումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ անձն ըստ էության ընդունում է իր կողմից հանցանք կատարելու փաստը՝ համաձայնվելով համաներման ակտի հիմքով քրեական գործի վարույթի կարճմանը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը Թ.Գևորգյանի նկատմամբ Համաներման ակտը չի կիրառել և դրա հիման վրա՝ քրեական գործի վարույթը չի կարճել՝ ելնելով այն հանգամանքից, որ վերջինս չի ընդունել իր կողմից հանցանք կատարելու փաստը:

21. Սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով ոչ թե պետք է կայացնի մեղադրական դատավճիռ, Թ.Գևորգյանին դատապարտելու ազատակման և, Համաներման ակտի հիման վրա, նրան ազատելու պատժի կրումից, այլ պարտավոր էր կարճել Թ.Գևորգյանի նկատմամբ քրեական գործի վարույթը: Վճարելի դատարանը գտնում է, որ այս առումով առկա է Համաներման ակտի ոչ ճիշտ կիրառում, որը հանգեցրել է անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման: Հետևաբար, օրինական և հիմնավորված չէ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական և հիմնավորված չէ նաև այն պատճառով, որ դրանում հաստատված է համարվել, որ համաներման ակտ ընդունվելու հիմքով քրեական գործի վարույթի կարճումը թույլատրելի է, եթե անձն ընդունում է իր կողմից հանցանք կատարելու փաստը: Վճարելի

քեկ դատարանը գտնում է, որ այս առումով ևս առկա է Համաներման ակտի ոչ ճիշտ կիրառում, որը հանգեցրել է անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 14-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջների խախտումներ: Ստորադաս դատարանների կողմից թույլ տված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա՝ հիմք են հանդիսանում կայացված դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

23. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հարցին հնարավոր կլինի անդրադառնալ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Թադևոս Ավետիսի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 27-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 1-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*



27.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0287/01/11

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախազահուրյամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>պաշտպան՝</i>	Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Գագիկի Արամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Արամյանի պաշտպան Ռ.Հակոբյանի վճարելի բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 19124111 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ Վաչե Բաբինյանը և Արթուր Արամյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով:

2011 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ Վ.Բաբինյանին և Ա.Արամյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրանց նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով:

2011 թվականի դեկտեմբերի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2012 թվականի փետրվարի 3-ի դատավճռով Վ.Բաբինյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և դատապարտել է ազատազրկման 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ Ա.Արամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և դատապարտել է ազատազրկման 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալներ Վ.Բաբինյանի և Ա.Արամյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 3-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Արամյանի պաշտպան Ռ.Հակոբյանը, որը վճռաբեկ դատարանի 2012 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալներ Վ.Բաբինյանը և Ա.Արամյանը դատապարտվել են այն բանի համար, որ Տիգրան Թորոսյանին պատկանող «Շեն-տուն» ՄՊԸ-ի Վանաձոր քաղաքի Վարդանանց 116 հասցեում գտնվող, նույն անունը կրող խանութից գողություն կատարելու նպատակով նախնական համաձայնության գալով և գիտենալով, որ խանութի տարածքը տեսանկարահանվում է, իրենց անձը գաղտնի պահելու նպատակով պատրաստել են դիմակներ: 2011 թվականի հոկտեմբերի լույս 19-ի գիշերը՝ ժամը 3.30-ի սահմաններում, Վ.Բաբինյանը Ա.Արամյանի հետ գնացել է հիշյալ խանութի մոտ, որտեղ իր հետ նախապես վերցրած երկաթյա ձողով կտրել է խանութի ցուցափեղկի ապակին և Ա.Արամյանի հետ գաղտնի հափշտակել է ապակու անմիջապես հետևում դրված 170.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ երկու բեռնատրոններ, մեկ էլեկտրական սողոց և դիմել փախուստի (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 53):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Ամբաստանյալներ Վաչե Բաբինյանի և Արթուր Արամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում կատարված արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը և բնույթը, նրանց անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքերը, ինչպես նաև հանցագործության կատարմանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը:

Դատարանն ամբաստանյալներ Վաչե Բաբինյանի և Արթուր Արամյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նրանք երիտասարդ են, զոջում են կատարած հանցանքի համար, բնութագրվում են դրական, նրանցից Արթուր Արամյանը նախկինում արատավորված չի, տուժողին պատճառված վնասից՝ խանութի ջարդած ապակու արժեքը, նրանք կանոնավոր վերականգնել են:

Ամբաստանյալներ Վաչե Բաբինյանի և Արթուր Արամյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Ամբաստանյալներ Վաչե Բաբինյանի և Արթուր Արամյանի նկատմամբ պատժատեսակ ընտրելու և պատիժը նրանց կողմից կրելու հարցը քննարկելով պատժի նպատակների իրացվելիության համատեքստում և հաշվի առնելով գործի հանգամանքները, ամբաստանյալների կատարած արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը՝ դատարանը գտնում է, որ նրանց նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատագրվման ձևով, որը նրանց կողմից ենթակա է կրելու» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 54):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածներով, պատիժ նշանակելու ընդհանուր դրույթներով, նկատի ունենալով ամբաստանյալին մեղսագրված արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրանց անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները և ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ հանգում է այն հետևության, որ Վաչե Բաբինյանի և Արթուր Արամյանի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ, այն արդարացի է և համապատասխանում է նրանց անձնավորությանը և հանցանքի ծանրությանը, ուստի դատավճիռը պատժի մասով՝ մեղմացման առումով, փոփոխելու հիմքեր չկան:

(...)

Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի բխում օրենքի պահանջներից և հաշվի առնելով նաև կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև կատարման եղանակը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 134-135):

8. «Առարկաներ հայտնաբերելու, գննելու և վերցնելու մասին» 2011 թվականի նոյեմբերի 2-ի արձանագրության համաձայն՝ «Վանաձոր քաղաքի ոստիկանության Բագումի բաժանմունքի շենքի բակից (...) Արթուր Արամյանը մեզ ուղեկցեց Վանաձոր քաղաքի հարավ-արևմտյան կողմում գտնվող Դարպաս գյուղ և նշված գյուղի Հարավսլավական տնակների թաղամասում (...) մատնացույց արեց ավտոճանապարհի աջ կողմում գտնվող 1 հարկանի փայտյա շինությունը և հայտարարեց, որ (...) տան խոհանոցում գտնվող թախտի մեջ ինքը և իր ընկեր Վաչե Բաբինյանը պահել են իրենց կողմից գողացված 2 հատ բենզատոցները և մեկ հատ էլեկտրական սողցը: (...) Արթուր Արամյանը հայտարարեց, որ նշված 2 հատ բենզատոցները և մեկ հատ էլեկտրական սողցը ինքը և Վաչե Բաբինյանը սույն թվականի հոկտեմբեր ամսին գողացել են միասին Վանաձոր քաղաքի «Շեն տուն» կոչվող խանութից և բերել ու պահել են նշված թախտի մեջ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 23-24):

9. Գործի ճյուղերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Արամյանը նախկինում չի դատվել, իսկ Վ.Բաբինյանը բնութագրվում է որպես դատվածություն չունեցող անձ (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 53):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 7-րդ, 8-րդ կետերի, 358-րդ հոդվածի պահանջները:

Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները չեն հիմնավորել և չեն պատճառաբանել Ա.Արամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակը՝ տուգանքը չկիրառելը, և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ա.Արամյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում չկայացնելը:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները որպես Ա.Արամյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ չեն գնահատել այն, որ նա հանցանքը կատարել է կյանքի ծանր հանգամանքների գուգորդման հետևանքով՝ ընտանիքի համար գոյատևման միջոց հայթայթելու նպատակով, հավշտակված գույքը հետագայում վերադարձրել է տուժողին, հատուցել է խանութի կոտրված ապակու արժեքը, աշակցել է հանցագործության բացահայտմանը, այն է՝ տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, մանրամասն նկարագրել է դեպքի բոլոր հանգամանքները՝ իրեղեն ապացույցները տեղափոխելու և պահելու վայրը, մասնակցել է քննչական փորձարարության կատարմանը, ինչպես նաև այն, որ սույն քրեական գործով քաղաքացիական հայց չի հարուցվել, և առկա է տուժողի դիմումը՝ ամբաստանյալներին ներելու և մեղմ վերաբերվելու վերաբերյալ:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի որոշումը և Ա.Արամյանի նկատմամբ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակ՝ տուգանք, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատժի արդարության և անհատականացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Ա.Արամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պահպանվե՞լ են արդյոք պատժի արդարության և անհատականացման սկզբունքները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,  
(...)
- 3) պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով՝  
(...)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Վերոշարադրյալ հոդվածի սանկցիայի վերլուծությունից երևում է, որ այն այլընտրանքային է և հնարավորություն է տալիս դատարանին, ելնելով կոնկրետ հանցագործության հանրային վտանգավորության բնույթից և աստիճանից, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել արդարացի պատիժ՝ ընտրելով հոդվածի սանկցիայով նախատեսված պատժատեսակներից որևէ մեկը՝ տուգանք կամ ազատազրկում:

*Գ. Մաղաթյանի* վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդել են անձի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա:

Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

Արարքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում Վճռաբեկ դատարանը կարևորում է խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել տվյալ ժամանակահատվածում քրեական օրենսդրությամբ պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 13-15-րդ կետերը):

15. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված

անձի նկատմամբ և արտահայտվում է այն անձին իրավունքներից և ազատություններից օրենքով նախատեսված գրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

«2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն են՝

(...)

9) մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը.

10) (...), հանցագործությամբ պատճառված գույքալիս և բարոյական վնասը կանոնավոր հատուցելը կամ վերացնելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները»:

Հանցագործությունը բացահայտելուն աջակցելուն Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Հունիկյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Հանցագործությունը բացահայտելուն աջակցելը կարող է արտահայտվել նախաքննության մարմնին և դատարանին այնպիսի տեղեկություններ հաղորդելով, որոնք նրանց համար հետաքրքրություն են ներկայացնում և վերջիններիս մինչ այդ անհայտ են եղել (հանցավորը մատնանշում է հանցագործության գործիքի գտնվելու տեղը, ներկայացնում է իրեղեն ապացույցներ, օգնում է քննչական փորձարարությունների կազմակերպմանն ու անցկացմանը և այլն)» (տե՛ս Մամվել Գրիգորի Հունիկյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշման 22-րդ կետը):

Պատժի արդարության և անհատականացման սկզբունքների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել *Ն.Սարգսյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ, զարգացնելով *Կ.Հարությունյանի* վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-201/07, *Գ.Հովհաննիսյանի* վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09, *Գ.Ավետիսյանի* և *Ա.Հովակիմյանի* վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԱԶԳ/0164/01/09 և մի շարք այլ որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ «(...) պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից մահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

(...)

ՀՀ քրեական օրենսգիրքը չի բովանդակում բոլոր այն հանգամանքների սպառնչ ցանկը, որոնք պետք է հաշվի առնվեն դատարանի կողմից կոնկրետ հանցագործության համար պատիժ նշանակելիս: Օրենսգիրքը, սակայն, դատարանին տալիս է պատժի անհատականացման ընդհանուր չափանիշներ, որոնց հիման վրա դատարանը կարող է նշանակել արդարության պահանջներին համապատասխանող պատիժ: Նշված չափանիշներն են՝

ա) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ընդհանրապես, կոնկրետ հանցագործության կատարման հանգամանքների տեսանկյունից մասնավորապես,

բ) հանցավորի անձը,

գ) պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)

Պատժի անհատականացման երրորդ չափանիշը պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներն են: Վերջիններիս Վճռարեկ դատարանն անդրադարձել է Հ.Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Ռ.Խատտյանի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07, Պ.Բայրամյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07, Ղ.Հովհաննիսյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԶԳ/0078/01/09 և մի շարք այլ որոշումներում» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի վերաբերյալ Վճռարեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 16-17-րդ և 20-րդ կետերը):

16. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ պատժի արդարացիությունը և անհատականացումը ենթադրում է, որ պատժի տեսակի և չափի որոշման ժամանակ դատարանը պետք է հաշվի առնի կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ նրա պատասխանատվությունը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների գնահատումը յուրաքանչյուր կոնկրետ գործով պատիժ նշանակելիս հնարավորություն է տալիս դատարանին պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի, բնույթի, ինչպես նաև հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատժի անհատականացման կարևորությունն այն է, որ դա լուրջ երաշխիք է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատժի նպատակների իրականացման համար:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Արամյանը, գործություն կատարելու նպատակով նախնական համաձայնության գալով Վ.Բաբինյանի հետ, գնացել է Վանաձոր քաղաքի «Շեն-տուն» ՍՊԸ-ի խանութի մոտ, որտեղ Վ.Բաբինյանն իր հետ նախապես վերցրած երկաթյա ձողով կտորել է խանութի ցուցափեղկի ապակին, և նրա հետ գաղտնի հափշտակել է ապակու հետևում դրված 170.000 ՀՀ դրամ ընդհանուր արժուրությամբ երկու բեռզատրոցներ, մեկ էլեկտրական սոլոց և դիմել փախուստի (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ հանցակիցներից Վ.Բաբինյանն ավելի մեծ դերակատարություն է ունեցել հանցանքի կատարմանը, քան Ա.Արամյանը, այն է՝ Վ.Բաբինյանն իր հետ նախապես վերցրել է երկաթյա ձողը, որով կտրել է խանութի ցուցափեղկի ապակին:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ամբաստանյալ Ա.Արամյանն աջակցել է հանցագործության բացահայտմանը և հանցագործությամբ ձեռք բերված գույքի որոնմանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նա երիտասարդ է, գոչում է կատարած հանցանքի համար, բնութագրվում է դրական, նախկինում արատավորված չի եղել, կամովին վերականգնել է խանութի ջարդած ապակու արժեքը, ինչպես նաև հաշվի է առել ամբաստանյալ Ա.Արամյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, հանցագործության կատարմանը նրա մասնակցության աստիճանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Արամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի չի առել վերջինիս կողմից հանցագործության բացահայտմանը և հանցագործությամբ ձեռք բերված գույքի որոնմանն աջակցելը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ հանդիսանում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք և էականորեն նվազեցնում է անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Ա.Արամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս չեն պահպանվել պատժի արդարության և անհատականացման սկզբունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը բավարար ստուգման ու գնահատման չի ենթարկել Ա.Արամյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է պատիժ, որն անարդարացի է ակնհայտ խիստ լինելու պատճառով և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանն ու նրա անձին, հետևաբար չի բխում պատժի նպատակներից: Վերաքննիչ դատարանը, իր հերթին դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, օրինական ուժի մեջ է թողել այն՝ չանդրադառնալով և չվերացնելով քրեական օրենքի վերոնշյալ խախտումը:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Արամյանի նկատմամբ պատիժ են նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր



սկզբունքների խախտմամբ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական և չիմնավորված դատական ակտի կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հիմք են հանդիսանում Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 3-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի դատական ակտերը բեկանելու և գործը Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Գազիկի Արամյանի մատով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 3-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 15-ի դատական ակտերը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

28.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԼԳ/0171/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ազատ Նորայրի Մաղաքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ Ա.Մաղաքյանի պաշտպան Գուրգեն Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հունիսի 28-ին ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության 7-րդ կայագորային քննչական բաժնի քննիչ Գ.Աղասյանի կողմից հարուցվել է թիվ 90451811 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Ազատ Նորայրի Մաղաքյանը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2011 թվականի օգոստոսի 20-ին Ա.Մաղաքյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի դատավճռով Ա.Մաղաքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 6 (վեց) ամիս ժամկետով:

2012 թվականի փետրվարի 7-ին Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել նույն դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի դատավճռի անհստակությունը լուծելու մասին. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կարգով, Ազատ Նորայրի Մաղաքյանի նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է Ա.Մաղաքյանի կրած կարգապահական տույժի ժամկետը՝ 15 օրը, և նրան թողնվել է կրելու պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 5 (հինգ) ամիս 15 (տասնհինգ) օր ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրող Ա.Կիրակոսյանը և ամբաստանյալ Ա.Մաղաքյանի պաշտպան Գ.Հարությունյանը:

Գործի՝ վերաքննության կարգով քննությանը ՀՀ զինվորական դատախազ Գ.Կոստանյանի կողմից լիազորվել է մասնակցելու ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Անահիտ Եղիազարյանը, որը վերաքննիչ դատարանում ներկայացրել է մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ միջնորդություն:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ մեղադրող Ա.Կիրակոսյանի և պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի դատավճիռը՝ քննանվել, քրեական գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ մեղադրողի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ Ա.Մաղաքյանի պաշտպան Գ.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստերը և քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

5. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի դատավճռով հաստատված է համարվել, որ Ազատ Մաղաքյանը Գյումրու զինկոմիսարիատի կողմից 2009 թվականի նոյեմբերի 16-ին զորակոչվել է ժամկետային զինվորական ծառայության և նշանակվել է ծառայության ՀՀ ՊՆ թիվ 70839 զորամասում: Ծառայության ընթացքում զորամասն ինքնակամ լքելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, Ա.Մաղաքյանը Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 9-ի դատավճռով դատապարտվել է կալանքի 2 ամիս ժամկետով: Պատիժը կրելուց հետո 2011 թվականի մայիսի 18-ին հետագա ծառայության է նշանակվել ՀՀ ՊՆ 63853 զորամասի 2-րդ մոտոհրաձգային գումարտակի 5-րդ վաշտի 2-րդ դասակի 3-րդ ջոկում՝ որպես հրաձիգ, կոչումով շարքային:

2011 թվականի մայիսի 18-ին՝ ժամը 22.30-ի սահմաններում Ա.Մաղաքյանն ինքնակամ թողել է զորամասը և 2011 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 09:00-ին հայտնաբերվել և բերման է ենթարկվել Շիրակի կայագործի ՌՌ բաժին ու նույն օրը տեղափոխվել է

գորամաս: Նույն օրը, մի քանի ժամ անց՝ ժամը 19:30-ի սահմաններում, Ա.Մաղաքյանը նորից ինքնական թողել է գորամասը և 2011 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում ներկայացել է Լոռու կայագրի Վանաձորի Ռ-Ռ բաժին: Այնուհետև 2011 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 00:15-ի սահմաններում նա կրկին ինքնական թողել է գորամասը և նույն օրը ժամը 12:00-ին ինքնական ներկայացել է Լոռու կայագրի Վանաձորի Ռ-Ռ բաժին: Մի քանի օր անց՝ 2011 թվականի հունիսի 27-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում Ա.Մաղաքյանը կրկին ինքնական թողել է գորամասը և 2011 թվականի հունիսի 28-ին՝ ժամը 07:30-ի սահմաններում ինքնական ներկայացել գորամաս:

Առաջին առյուծի դատարանը 2012 թվականի հունվարի 19-ի դատավճռում արձանագրել է, որ Ա.Մաղաքյանը երեք ամսվա ընթացքում 4 անգամ, մինչև 3 օր տևողությամբ, առանց հարգելի պատճառների, բացակայել է ծառայության վայրից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 147-149):

6. Գործի՝ վերաքննության կարգով քննության ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Ա.Եղիազարյանի կողմից ներկայացված՝ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ միջնորդության համաձայն՝ «Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Մաղաքյանը 3 ամսվա ընթացքում 4 անգամ գորամասը ինքնական լքել է մինչև 3 օր տևողությամբ: Դրանցից երկու անգամվա համար, մասնավորապես 20.05.2012թ. և 15.06.2012թ. Վանաձորի Ռ-Ռ բաժնի պետի և զննի հրամանատարի հրամաններով ենթարկվել է կարգապահական տույժի՝ «կարգապահական մեկուսացման» ձևով: Առաջին անգամ 5 օր ժամկետով, երկրորդ անգամ՝ 10 օր ժամկետով:

Նշված երկու դեպքերը ներառվել են Ա.Մաղաքյանի մեղադրանքի ծավալում և մյուս օրերի հանրագումարի արդյունքում անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, որը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Ըստ նշված կետի՝ «Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավասության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:

Ըստ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ «Պետությունը ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների, ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան»:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և որն իր Սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում):

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված վերոհիշյալ նորմը իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում, որի առաջին մասը սահմանում է. «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածը սահմանում է (...) 3 ամսվա ընթացքում 3 և ավելի անգամ մինչև 3 օր տևողությամբ գորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը: Տվյալ գործով Ա.Մաղաքյանը գորամասը թեպետ լքել է 4 անգամ, սակայն դրանցից 2-ի համար նա արդեն ենթարկվել է կարգապահական մեկուսացման՝ կալանքի ձևով, իսկ մյուս 2-ը ինքնին հանցակազմ չեն պարունակում, ուստի նրան առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ և ենթակա է կարճման» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 228-230):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, հանգում է այն հետևության, որ դրանք բավարարելու հիմքեր չկան, սակայն քրեական գործի վարույթը անհրաժեշտ է կարճել և Ա.Մաղաքյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ մեղադրողի կողմից վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանցքնություն է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը»:

Նկատի ունենալով, որ գործով մեղադրողը Վերաքննիչ դատարանում հայտնաբերելով ամբաստանյալ Ա.Մաղաքյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, միջնորդություն ներկայացրեց վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին, ուստի առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռն անհրաժեշտ է բեկանել և վերոնշյալ հիմքով Ա.Մաղաքյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել՝ նրա նկատմամբ դադարեցնելով քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 243-249):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքա-

կան իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի խախտումներով:

9. Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոք բերած անձը նշել է, որ իր պաշտպանյալին մեղադրանք է առաջադրվել գործմասը 4 անգամ՝ 2011 թվականի մայիսի 18-ին, 2011 թվականի մայիսի 20-ին, 2011 թվականի հունիսի 15-ին, 2011 թվականի հունիսի 27-ին, ինքնական թողնելու համար: Մինչդեռ, նրա մեղադրանքի ծավալում ընդգրկված երկու, այն է՝ 2011 թվականի մայիսի 18-ին և 20-ին գործմասն ինքնական թողնելու էլիզաբոլով 2011 թվականի մայիս ամսին Լոռու կայագրի ռազմական ոստիկանության բաժնում նախապատրաստվել են նյութեր, և հետաքննության մարմինը, հաստատված համարելով, որ Ա.Մաղաքյանը գործմասն ինքնական թողել է 2 անգամ, այսինքն՝ նրա կատարած արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները, 2011 թվականի մայիսի 28-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ա.Մաղաքյանի կողմից երրորդ անգամ գործմասն ինքնական թողնելուց հետո, 2011 թվականի հունիսի 24-ին նախապատրաստված նյութերը հետաքննության մարմնի կողմից ուղարկվել են Լոռու կայագրի զինվորական դատախազին: 2011 թվականի հունիսի 27-ին դատախազությունը, առանց վերացնելու հետաքննության մարմնի կողմից 2011 թվականի մայիսի 28-ին կայացված որոշումը, նյութերն ուղարկել է ՀՀ ՊՆ ԶԾ 7-րդ կայագրային քննչական բաժին: Այս ընթացքում Ա.Մաղաքյանը մեկ անգամ էլ է ինքնական թողել գործմասը, և քննիչը քրեական գործ հարուցելուց հետո՝ 2011 թվականի հունիսի 21-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

10. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա բողոքի հեղինակը եզրակացություն է արել այն մասին, որ Ա.Մաղաքյանի կողմից 2011 թվականի մայիսի 18-ին և 20-ին գործմասն ինքնական թողնելու փաստի առթիվ առկա է հետաքննության մարմնի՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշում, որն օրենքով սահմանված ժամկետում չի վերացվել հսկող դատախազի կամ գլխավոր դատախազի կողմից, ուստի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա, պետք է մեղադրանքի այս մասով քրեական հետապնդումը դադարեցնել:

Ինչ վերաբերում է մեղադրանքի ծավալում ընդգրկված՝ Ա.Մաղաքյանի կողմից 2011 թվականի հունիսի 15-ին և 27-ին գործմասն ինքնական թողնելու հանգամանքին, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում միայն երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև երեք օր տևողությամբ գործմասն ինքնական թողնելու համար, իսկ Ա.Մաղաքյանն ինքնական գործմասը թողել է երկու անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ, այսինքն՝ նրա կատարած արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, որը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա, քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

11. Վերգրյալի հիման վրա բողոքաբերը նշել է, որ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ, 366-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, պարտավոր էր Ա.Մաղաքյանի նկատմամբ

կայացնել արդարացման դատավճիռ: Դրա փոխարեն, սակայն, կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու որոշում՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով:

12. Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ օրենքի կոնկրետ նորմը վկայակոչված չլինելու պատճառով հիշյալ որոշումից հնարավոր չէ հասկանալ, թե քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող, թե՛ ոչ արդարացնող հիմքով, մինչդեռ դա պարտադիր է ամբաստանյալի իրավունքների վերականգման առումով: Բացի այդ, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, քանի որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերանայել է վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս:

13. Վերոգրյալի հիման վրա վճռարեկ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հունվարի 19-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ ճանաչելով և հռչակելով Ա.Մաղաքյանի անմեղությունը:

#### **4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

14. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով Ա.Մաղաքյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

15. Բարձրացված հարցին Վճռարեկ դատարանն անդրադարձել է *Գ.Ղազարյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրողը (...) մեղադրանքից հրաժարվելու իրավասությամբ օժտված է բացառապես առաջին ատյանի դատարանում: Առաջին ատյանի դատարանի դատական ակտի՝ դատավճռի կայացմամբ ավարտվում է մեղադրանքի հիմնավորվածության և օրինականության ստուգումը և, հետևաբար, սահմանափակվում է նաև մեղադրողի՝ մեղադրանքից հրաժարվելու իրավասությունը:

(...)

(...) վերաքննիչ դատարանում մեղադրանքի պաշտպանություն չի իրականացվում, հետևաբար նաև՝ մեղադրողն օժտված չէ մեղադրանքից հրաժարվելու լիազորությամբ: Այլ կերպ՝ եթե մեղադրողը մեղադրանքից հրաժարվելու իր լիազորությունը չի իրացնում առաջին ատյանի դատարանում, որտեղ իրականացվում է գործի՝ ամբողջ ծավալով քննություն, ապա քրեական գործի հետագա քննությունների ընթացքում, այսինքն՝ վերաքննիչ և վճռարեկ դատարաններում, որտեղ ստուգվում են ստորադաս դատարանների կողմից կայացված ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, զրկվում է նման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից» (տե՛ս Գեղամ Միսակի Ղազարյանի գործով Վճռարեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 26-28-րդ կետերը):

16. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված, և համապատասխանաբար, *Գ.Ղազարյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված դիրքորոշումը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ իրենց վարույթում գտնվող գործի քննության ժամանակ վերադաս դատարանները պարզում են, որ

առկա են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքեր, ապա պարտավոր են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել՝ հիմնվելով ոչ թե մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ մեղադրողի միջնորդության, այլ այդ միջնորդության հիմքում դրված փաստական հանգամանքների վրա:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրողն Առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ մեղադրանքից չի հրաժարվել, ավելին՝ վերաքննության կարգով բողոքարկել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 2-3-րդ և 5-րդ կետերը):

Գործի՝ վերաքննության կարգով քննությանը ՀՀ զինվորական դատախազ Գ.Կոստանյանի կողմից լիազորվել է մասնակցելու ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Ա.Եղիազարյանը, որը Վերաքննիչ դատարանում ներկայացրել է մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ միջնորդություն (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

Վերանայման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը մերժել է մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքները, իսկ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի դատավճիռը՝ բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է՝ մեղադրողի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծության լուսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով Ա.Մաղաքյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրակացությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ մեղադրողի կողմից ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու պատճառաբանությամբ, քանի որ վերաքննիչ դատարանում մեղադրողն օժտված չէ մեղադրանքից հրաժարվելու լիազորությամբ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, ստանալով դատախազի՝ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ միջնորդությունը և պարզելով, որ առկա են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքեր, պետք է որոշում կայացնե՛ր՝ հիմնվելով ոչ թե մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ մեղադրողի միջնորդության, այլ այդ միջնորդության հիմքում դրված փաստական հանգամանքների վրա:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:



20. Ինչ վերաբերում է բողոքարեթի կողմից բարձրացված մյուս հարցերին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշման նախորդ կետերում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ազատ Նորայրի Մաղաքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

29.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԷԳ/0024/06/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Աշոտի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի փետրվարի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Թիվ 12148310 քրեական գործը հարուցվել է 2010 թվականի դեկտեմբերի 15-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2011 թվականի մարտի 16-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Արմեն Աշոտի Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով, 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. 2011 թվականի մարտի 16-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատա-

րան՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ թիվ 12148310 քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կասեցվել է:

3. 2011 թվականի հունիսի 16-ին Ա.Պետրոսյանը Ռուսաստանի Դաշնության ՆԳ Միներալավոդսկի գծային վարչության կողմից հայտնաբերվել և ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի կողմից 2011 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացվել Ա.Պետրոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 1-ին մասով, 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2011 թվականի նոյեմբերի 24-ին Ա.Պետրոսյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և ներկայացվել Էրեբունո քննչական բաժին:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ թիվ 12148310 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

4. 2011 թվականի նոյեմբերի 25-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ 2011 թվականի մարտի 18-ին ընտրված խափանման միջոց կալանավորումն անփոփոխ թողնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ վերահաստատվել է նույն դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը:

5. 2012 թվականի հունվարի 13-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժվել է, և նա անհապաղ ազատվել է կալանքից:

6. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2012 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստերը և քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

7. Արմեն Աշոտի Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2009 թվականի սեպտեմբերին, չպարզված օրը, մորեղբոր դստեր՝ ակնհայտ տասն-

վեց տարին չլրացած, 1995 թվականի մայիսի 6-ին ծնված Ալվարդ Սեդրակյանի համաձայնությամբ Հրազդանի կիրճում սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ: Հաջորդ օրը Ա.Պետրոսյանը նույն վայրում կրկին սեռական հարաբերություն է ունեցել Ա.Սեդրակյանի հետ:

Այնուհետև, Ա.Պետրոսյանը խաբեությամբ՝ Ա.Սեդրակյանի հետ ամուսնանալու խոստումներ տալով, վերջինիս ներգրավել է ծանր հանցագործության կատարմանը՝ նրան դրդել է գողանալ տատի ոսկյա զարդերը: 2009 թվականի հոկտեմբերին Ա.Սեդրակյանն իրենց՝ Խաղաղ-Դոնի 5-րդ շենքի 176-րդ բնակարանից գաղտնի հափշտակել է տատի՝ Սոֆյա Գրիգորյանի՝ խոշոր չափի՝ 1.450.000 դրամ ընդհանուր արժողության 130 գրամ ընդհանուր քաշով ոսկյա զարդերը և նույն օրը գողացված զարդերը հանձնել է Ա.Պետրոսյանին:

8. Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «Դատարանը գտնում է, որ մեղադրյալին Հայաստանի Հանրապետություն բերելուց հետո ժամանակի և տարածության մեջ ՀՀ օրենքների գործողության սկզբունքից ելնելով, ՀՀ օրենսդրությամբ (տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով) պատշաճ ընթացակարգ է կիրառվել, այն է վերսկսվել է գործի վարույթը, մեղադրյալը ներկայացվել է դատարան՝ կիրառված խափանման միջոց կալանքը վերահաստատելու, նրան մեղադրանք է առաջադրվել, նա տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ: Սակայն դա չի նշանակում, որ նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի հիմքով ՌԴ-ում փաստացի կալանքի տակ պահելու ժամկետը չպետք է հաշվվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետները հաշվարկելիս, որը անհիմն լինելով հանդերձ, կհանգեցնի մարդու իրավունքների և ազատությունների խախտման:

(...) դատարանը գտնում է [որ]ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով թիվ 12148310 քրեական գործով մեղադրյալ Արմեն Աշոտի Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորման ժամկետը հաշվարկվում է 16.06.2011թվականից և որոշում է միջնորդությունը մերժել, քանզի լրացել է մեղադրյալին կալանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն վեցամսյա ժամկետը և վերջինիս հետագա կալանքի տակ պահելը ապօրինի է:

Դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա պայմաններում լրացել է մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետը, իսկ վարույթն իրականացնող մարմինը չի կայացրել որոշում վերջինիս կալանքից ազատելու մասին, ուստի դատարանը հիմք ընդունելով վերոշարադրյալները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների [պաշտպանության մասին] Եվրոպական կոնվենցիայի» 5-րդ հոդվածի դրույթները, գտնում է, որ մեղադրյալին պետք է անհապաղ ազատ արձակել կալանքից՝ մեղադրյալին ապօրինի կալանքի տակ պահելու հանգամանքը բացառելու նպատակով» (տե՛ս Նյութեր, թերթեր 86-88):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշել է հետևյալը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ արգելանքի վերցնելն այն գործողությունն է, որն սկսվում է ազատությունից փաստացի հարկադրական գրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատագրվման ձևով դատավճիռն է կատար անելիս:

Նույն հոդվածի 38-րդ կետի համաձայն՝ անազատության մեջ պահելը՝ դա անձին անազատությունից հարկադրաբար զրկելն է, ինչ պատճառներով էլ դա իրականացված լինի:

Այսպիսով, թիվ 12148310 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածով և 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Արմեն Աշոտի Պետրոսյանին առաջադրված մեղադրանքները դասվում են ոչ մեծ, միջին ծանրության հանցագործությունների շարքը, որոնց կատարման համար կիրառված խափանման միջոց կալանավորման ժամկետը չի կարող գերազանցել 6 ամիսը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվում է այն ժամանակը, երբ անձը գտնվել է արգելանքի տակ, այն է՝ նրան ձերբակալելու կամ կալանավորելու պահից:

Ուստի, վերոգրյալներից ելնելով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Արմեն Աշոտի Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորման ժամկետը 16.06.2011 թվականից հաշվարկելով՝ օրինական և հիմնավորված որոշում է կայացրել կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու մասին, նկատի ունենալով, որ լրացել է մեղադրյալին կալանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն վեցամսյա ժամկետը և վերջինիս հետագա կալանքի տակ պահելն ապօրինի է:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա. Պետրոսյանին 2011թ. նոյեմբերի 24-ին ՀՀ էտապավորելուց հետո, նախաքննության մարմինն անհրաժեշտ ջանասիրություն ցուցաբերելու դեպքում հնարավորություն ուներ միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործի քննությունը սեղմ ժամկետներում ավարտելու և համապատասխան հիմքերի առկայության պայմաններում այն դատարան ուղարկելու համար:

Այսպիսով, դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Ա. Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելիս նյութական կամ դատավարական իրավունքի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք կարող էին հանգեցնել դատական սխալի, և հիմք կհանդիսանալին որոշումը բեկանելու և մեղադրյալ Արմեն Աշոտի Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու համար: Ուստի Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ա. Ափիյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս Նյութեր, թերթեր 117-124):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով հստակ չի կարգավորվում այն հարցը, թե հետախուզվողին այլ պետությունում հայտնաբերելու, արգելանքի վերցնելու և էտապավորելու դեպքում որ պահից սկսած պետք է հաշվվի նրան կալանքի տակ պահելու ժամկետը՝ օտարերկրյա պետությունում արգելանքի վերցվելու<sup>1</sup>, թե՞ Հայաստանի Հանրապետություն նրան տեղափոխելու պահից: Ուստի, բողոք-

քաբերը գտնում է, որ սույն գործով Վճռարեկ դատարանի որոշումը հնարավորություն կտա միատեսակ կիրառություն ապահովել բարձրացված հարցի կապակցությամբ, մասնավորապես այն առումով, թե հանձնման կապակցությամբ անձի՝ արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը մտնո՞ւմ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ մինչդատական վարույթի ընթացքում անձին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

11. Վերոգրյալից բացի, բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով կայացված՝ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 10-ի որոշումը հանդիսանում են չիմնավորված դատական ակտեր և ենթակա են բեկանման:

Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոք բերած անձը նշել է, որ մեղադրյալ Ա.Պետրոսյանը կալանքի տակ է պահվել երկու տարբեր իրավական ռեժիմներով. Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ հանձնման կապակցությամբ, իսկ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու և քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու օրվանից՝ մինչդատական վարույթի կապակցությամբ: Բողոքաբերը շեշտել է, որ հանձնման կապակցությամբ անձին անազատության մեջ պահելու ժամկետի և մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի հարաբերակցությունը որևէ կոնկրետ իրավական նորմով չի կարգավորվում: Նշվածը, սակայն, դեռևս չի նշանակում, որ հանձնման կապակցությամբ անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է հաշվարկվի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա բողոքաբերը նշել է, որ 2011 թվականի հունիսի 16-ից նոյեմբերի 24-ն ընկած ժամանակամիջոցում Ա.Պետրոսյանին անազատության մեջ պահելու հիմք են հանդիսացել Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների համապատասխան որոշումները, այլ ոչ թե հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշումը: Տվյալ դեպքում Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինները գործել են հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրերին և Ռուսաստանի Դաշնության ներպետական օրենսդրությանը համապատասխան: Այլ խոսքով՝ մինչև 2011 թվականի նոյեմբերի 24-ը Ա.Պետրոսյանը մինչդատական վարույթի հետ կապված կալանքի տակ չի գտնվել, նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կասեցված է եղել մեղադրյալի՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների տրամադրության ներքո չգտնվելու հիմքով, ուստի Ա.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը չէր կարող կատարված համարվել:

12. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա բողոքի հեղինակը եզրակացրել է, որ Ա.Պետրոսյանին Ռուսաստանի Դաշնությունում անազատության մեջ պահելու նպատակը հանդիսացել է Հայաստանի Հանրապետությանը նրա հանձնումն ապահովելը, իսկ այն պահից, երբ Ա.Պետրոսյանը էտապավորվել է Հայաստանի Հանրապետություն, նրան կալանքի տակ պահելու հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը:

Վկայակոչելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսկի կոնվենցիայի 61.2-րդ

հողվածը՝ բողոք բերած անձը շեշտել է, որ նշված հողվածում կիրառվող՝ «կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետ» հասակացություն ՀՀ օրենսդրության մեջ չկա, իսկ միջազգային պայմանագրում օգտագործված՝ «կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետ» արտահայտությունը չի կարող նույնացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված «մինչդատական վարույթի ընթացքում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ» հասակացության հետ:

13. Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 19-ի որոշումը և Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 10-ի որոշումը, իսկ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնել երկու ամսով:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա պետությունում արգելանքի վերցված և Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձին մինչդատական վարույթի կապակցությամբ կալանքի տակ պահելու ժամկետը հաշվելու վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը պետք է հաշվվի Ռուսաստանի Դաշնությունում նրան արգելանքի վերցնելու<sup>1</sup>, թե<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու պահից:

16. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

(...)

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

(...)

7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ արգելանքի վերցնելը գործողություն է, որն սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատագրվման ձևով դատավճիռն ի կատար ածելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 37-րդ կետի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կալանքն ընտրելն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38-րդ կետի համաձայն՝ անազատության մեջ պահելը անձին ազատությունից հարկադրաբար զրկելն է, ինչ պատճառներով էլ որ դա իրականացված լինի:

Վերոշարադրյալ քրեադատավարական և սահմանադրական նորմերի վերլուծությունից երևում է, ՀՀ Սահմանադրությունը և քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում են կալանավորման երկու ինքնուրույն տեսակ՝

- ա) կալանավորումը որպես խափանման միջոց,
- բ) հանձնման նպատակով կալանավորում:

Կալանավորման վերոնշյալ տեսակներն ունեն տարբեր իրավական բնույթ և հետապնդում են տարբեր նպատակներ: Դրանցից առաջինը հանդիսանում է հարկադրանքի միջոց, որը կիրառվում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրա ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

Կալանավորման վերոնշյալ տեսակներից երկրորդը՝ հանձնման նպատակով կալանավորումը, անձին անազատության մեջ պահելն է այլ պետությանը նրա հանձնումն ապահովելու նպատակով:

17. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսկի կոնվենցիայի 61.2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայի 60, 61 և 61<sup>1</sup> հոդվածների դրույթներին համապատասխան կալանքի վերցված անձի՝ կալանքի տակ պահելու ժամանակը, նրան հանձնելու դեպքում, հաշվվում է կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ, որը նախատեսված է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որին այդ անձը հանձնվել է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից:

2. Կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվում է այն ժամանակը, երբ անձը գտնվել է՝

1) արգելանքի տակ՝ նրան ձերբակալելիս և կալանավորելիս.

2) բժշկական հաստատությունում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, հիվանդանոցային փորձաքննություն, ինչպես նաև քրեական գործով վարույթի ընթացքում հայտնաբերված ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարումից բուժում անցնելու ընթացքում, այդ թվում՝ կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելիս:

3. Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, գումարվում են կալանքի տակ և բժշկական հաստատությունում անձի գտնվելու, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվող բոլոր ժամկետները: Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կատարվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է:

4. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև 6 ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է



ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս: Կալանքի տակ պահելու ժամկետի հետագա երկարացումն արգելվում է, բացառությամբ սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերի:

Միևնույն քրեական գործով, ինչպես նաև դրան միացված կամ դրանից անջատված քրեական գործով մեղադրյալին կրկին կալանքի տակ վերցնելու դեպքում կալանքի տակ մնալու ժամկետը հաշվվում է՝ այն ժամանակը հաշվի առնելով, որը մեղադրյալը ավելի վաղ անցկացրել է կալանքի տակ:

5. Քրեական գործով միևնույնական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 1 տարին.

2) մեղադրյալին վերագրվող հանցագործության համար քրեական օրենքով ազատազրկման նախատեսված առավելագույն ժամկետը՝ այն դեպքում, երբ նշված ժամկետը պակաս է 1 տարուց:

6. Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում»:

Մեջբերված կոնվենցիոն դրույթի տառացի մեկնաբանությունից երևում է, որ հանձնման դեպքում անձին կալանքի տակ պահելու ժամանակը պետք է հաշվվի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ անձին կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ: ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում սահմանված են խափանման միջոց կալանավորման ժամկետների հաշվարկման կարգն ու պայմանները, որոնք չեն վերաբերում հանձնման նպատակով կալանքի ժամկետին:

18. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը, ինչպես նաև սույն որոշման 16-րդ կետում առկա այն հանգամանքը, որ որպես խափանման միջոց կալանավորումը դատարանի համապատասխան որոշման հիման վրա կիրառվում է քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ անձը չի գտնվում ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք ընտրելու մասին դատարանի որոշումը չի կարող կատարված համարվել և, հետևաբար, խոսք չի կարող լինել դատարանի որոշմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետի ընթացքն սկսված լինելու և, համապատասխանաբար նաև՝ այդ ժամկետի հաշվարկի մասին: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խափանման միջոց կալանավորման ժամկետն սկսում է հոսել ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ անձի հայտնվելու, այլ խոսքով՝ անձին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու պահից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանձնման նպատակով կալանավորման ժամկետը, խափանման միջոց կալանավորման ժամկետի հետ մեկտեղ, պետք է հաշվակցվի անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով նշանակված ազատազրկման հետ կապված պատժի ժամկետի մեջ:

19. Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Մասնավորապես, Չանդերգան ընդդեմ Լատվիայի գործով կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն

իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ տվյալ ժամանակահատվածում Լատվիայում գործող քրեական դատավարության օրենսգրքի որևէ դրույթով նախատեսված չի եղել, որ անձի՝ օտարերկրյա պետությունում նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակը պետք է ներառվի նրա կալանքի ամբողջ ժամկետի մեջ: Ուստի, Դատարանը գտնում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի ո՛չ 5-րդ հոդվածի 3-րդ մասը, ո՛չ էլ որևէ այլ դրույթ սկզբունքորեն Մասնակից պետությանը չի պարտավորեցնում հաշվի առնել երրորդ պետությունում անձի կրած նախնական կալանքի ժամկետը (տե՛ս Չանդ-բերգսն ընդդեմ Լատվիայի (ZANDBERGS v. LATVIA) գործով 2011 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 71092/01, կետ 63):

20. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը լրացվել է 38.1-րդ և 38.2-րդ կետերով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38.1-րդ կետի համաձայն՝ ժամանակավոր կալանավորումն անձին անազատության մեջ պահելն է հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38.2-րդ կետի համաձայն՝ հանձնելու համար կալանավորումն անձին անազատության մեջ պահելն է նրա հանձնումն ապահովելու նպատակով:

Մեջբերված քրեադատավարական դրույթները համադրելով սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերառությունը կրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում 2012 թվականի մարտի 19-ին կատարված լրացումը (38.1-րդ և 38.2-րդ կետեր) վկայում է այն մասին, որ օրենսդիրը ևս խափանման միջոց կալանքը տարբերակում է հանձնման նպատակով կալանքից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ելակետային հասկացությունները պարզաբանող հոդվածում «ժամանակավոր կալանավորում» և «հանձնելու համար կալանավորում» հասկացությունները մեկնաբանող վերոնշյալ դրույթների նախատեսումը լրացուցիչ անգամ հիմնավորում է կալանավորման երկու ինքնուրույն տեսակների վերաբերյալ սույն որոշման 16-րդ կետում շարադրված դիրքորոշումը:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2011 թվականի հունիսի 16-ից նոյեմբերի 24-ը Ա.Պետրոսյանը կալանավորված է եղել հանձնման նպատակով, իսկ 2011 թվականի նոյեմբերի 24-ից, այն է՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու և ՀՀ իրավապահ մարմինների տրամադրության տակ անցնելու պահից՝ Ա.Պետրոսյանը գտնվել է խափանման միջոց կալանքի տակ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ 2011 թվականի հունիսի 16-ից նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում Ա.Պետրոսյանը ՌԴ-ում եղել է հանձնման նպատակով կալանքի տակ, իսկ 2011 թվականի նոյեմբերի 24-ից, այն է՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելուց և ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ հայտնվելուց հետո նա սկսել է գտնվել իր նկատմամբ ՀՀ-ում ընտրված խափանման միջոց կալանքի տակ:

22. Սույն որոշման 20-րդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Պետրոսյանին մինչդատական վարույթի կապակցությամբ կալանքի տակ պահելու ժամկետը պետք է հաշվվի ոչ թե Ռուսաստանի Դաշնությունում նրան արգելանքի վերցնելու, այլ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու պահից:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը և իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, քանի որ Վճռաբեկ դատարանն օժտված չէ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու իրավասությամբ:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Արմեն Աշոտի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

30.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԵԷԴ/0026/12/12

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝	Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝	Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ
դատապարտյալ՝	Ս.ՍՈՒԼՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ դատախազ Ա.Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով, դատաքննության արագացված կարգի կիրառմամբ, Սամվել Վլադիմիրի Սուլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2011 թվականի մայիսի 2-ից:

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի 2011 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապե-

տության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 8-րդ կետի 5-րդ ենթակետը, դատապարտյալ Ս.Սուլյանի պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով՝ 5 (հինգ) ամիս 26 (քսանվեց) օրով, և վերջնական թողնվել է կրելու ազատագրելու՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 4 (չորս) օր ժամկետով:

2. 2012 թվականի ապրիլի 2-ին ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալ Ս.Սուլյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը մերժվել է:

3. Դատապարտյալ Ս.Սուլյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի մայիսի 3-ի որոշմամբ բողոքը բավարարել է: Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 11-ի որոշումը բեկանվել է, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագիրը բավարարվել է, և դատապարտյալ Ս.Սուլյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասը՝ 6 (վեց) ամիս 3 (երեք) օր ժամկետով ազատագրելու կրելուց:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ա.Ստեփանյանը:

2012 թվականի հունիսի 22-ի որոշմամբ վճարելի դատարանը դատախազ Ա.Ստեփանյանի վճարելի բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

5. Դատախազ Ա.Ստեփանյանը փաստարկել է, որ առկա են վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

6. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ պնդման՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի պահանջի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանվել քրեական օրենքը, ինչի հետևանքով դատապարտյալ Ս.Սուլյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Բողոքի հեղինակը, մասնավորապես, նշել է, որ Ս.Սուլյանը դատապարտվել է ՀՀ

քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի իմաստով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով արգելված արարքն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, դասվում է ծանր հանցագործությունների շարքին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի իմաստով՝ ծանր հանցագործության դեպքում պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Ս.Սուլյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կարող էր սկսվել միայն Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով նշանակված պատժի կեսը փաստացի կրելուց հետո, այլ խոսքով՝ 2012 թվականի մայիսի 2-ից հետո: Շարունակելով բողոք բերած անձը կարծիք է հայտնել այն մասին, որ թեև դատապարտյալ Ս.Սուլյանի նկատմամբ նշանակված պատժը ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի կողմից Համաներման ակտի կիրառման արդյունքում կրճատվել է մեկ քառորդով, այնուամենայնիվ, նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը չպետք է 2012 թվականի մայիսի 2-ից շուտ սկսվեր: Իր պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ժամկետները վերաբերում են նշանակված պատժին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ պատժը նշանակվում է դատարանի դատավճռով: Բողոքաբերը նշել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում որպես պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու պայման ամրագրվել է նշանակված պատժի որոշակի մասը փաստացի կրելու պարտավորությունը, ինչը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, վերաբերում է միայն դատարանի դատավճռով նշանակված պատժին, այլ ոչ թե Համաներման ակտի կիրառման արդյունքում մնացած պատժին:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ իր կողմից շարադրված մոտեցմանը հակառակ մոտեցում դրսևորելու պարագայում խախտվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված օրինականության և 8-րդ հոդվածով ամրագրված դատապարտյալների հավասարության սկզբունքները, քանի որ դատապարտյալների մի մասը պատժից պայմանական վաղաժամկետ կարող են ազատվել դատարանի կողմից նշանակված պատժի համապատասխան մասը կրելուց հետո, իսկ դատապարտյալների մյուս մասը՝ համաներման ակտի կիրառման արդյունքում մնացած պատժի համապատասխան մասը կրելուց հետո:

7. Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

**Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

8. Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռարեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառնության իրացումն է: Վճռարեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ պատժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու

պայմանի մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

9. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ Ս.Սուլյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կարող էր սկսվել միայն Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով նշանակված պատժի՝ երկու տարի ժամկետով ազատագրվման կեսը կրելուց հետո:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝ (...) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված նվազագույն ժամկետը: (...)»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից երևում է, որ ծանր հանցագործության համար ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի մնացած մասը կրելուց, եթե փաստացի կրել է նշանակված պատժի կեսը: Այլ խոսքով, ծանր հանցագործության համար դատապարտված անձին պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու պայմանն իր նկատմամբ նշանակված պատժի կեսը վերջինիս կողմից կրած լինելն է:

11. Սույն որոշման 9-րդ կետում շարադրված հարցադրման լույսի ներքո վերլուծելով սույն որոշման նախորդ կետում շարադրված դատողությունը՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հարցադրմանը պատասխանելու նպատակով անհրաժեշտ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում առկա՝ «նշանակված պատիժ», ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասում առկա՝ «պատիժ» հասկացությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «(...) օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով (...) դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից (...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ պատիժը պետության քրեական քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից մեկն է և հանդիսանում է հանցագործության նկատմամբ պետության պաշտոնական արձագանքը:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ պատիժը նշանակվում է դատարանի կողմից կայացվող դատավճռով: Այլ խոսքով՝ պատժի՝ որպես քրեական քաղաքականության իրականացման հիմնական միջոցի, նշանակման իրավասությունը վերապահված է դատարանին:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի իմաստով՝ օրենսդիր մարմնի կողմից ընդունված համաներման ակտով դատապարտյալը լրիվ կամ մասնակիորեն կարող է ազատվել դատարանի կողմից նշանակված պատժից: Այլ խոսքով՝ կոնկրետ պատժի դատապարտված անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունված համաներման ակտի կիրառման արդյունքում կարող է դատարանի դատավճռով իր նկատմամբ նշանակված հիմնական և (կամ) լրացուցիչ պատժի կրումից ազատվել մասնակիորեն կամ ամբողջությամբ: Պատժից մասնակիորեն ազատվելու դեպք է նաև համաներման ակտի այնպիսի կիրառումը, երբ կրճատվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված և վերջինիս կողմից դեռևս չկրած պատիժը: Այդ դեպքում համաներման ակտի կիրառման արդյունքում դատապարտյալի կողմից կրելու ենթակա պատժի ժամկետը որոշակիորեն նվազում է, հետևաբար, փոփոխվում է նաև դատարանի դատավճռով նշանակված պատժի ընդհանուր ժամկետը:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվող հարկադրանքի միջոց է, որի ժամկետը օրենսդիր մարմնի կողմից ընդունված համաներման ակտի հիման վրա կարող է փոփոխության ենթարկվել:

Վերոշարադրյալ դատողությունների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիր մարմնի կողմից ընդունված համաներման ակտի կիրառման պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում առկա՝ «նշանակված պատիժ»-ը, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասում առկա՝ «պատիժ»-ը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով դատապարտյալի նկատմամբ կայացված, օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված և համաներման ակտի կիրառմամբ փոփոխության ենթարկված պատիժն է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձի նկատմամբ նշանակված պատժի ժամկետը համաներման ակտի կիրառմամբ փոփոխության է ենթարկվում, տվյալ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը պետք է լուծվի՝ ելնելով ոչ թե դատավճռով սահմանված ժամկետից, այլ այն ժամկետից, որը ձևավորվել է համաներման ակտի կիրառմամբ այդ պատժի չկրած մասի կրճատման արդյունքում: Մասնավորապես, ծանր հանցագործության համար ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք պետք է ձեռք բերի, եթե փաստացի կրել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված և համաներման ակտի կիրառմամբ փոփոխված, այդ թվում՝ պատժի չկրած մասի կրճատման արդյունքում ձևավորված պատժի վերջնական ժամկետի կետը:



14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով Ս.Սուլյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Հետագայում՝ պատիժը կրելու ընթացքում, նրա նկատմամբ կիրառվել է Համաներման ակտի 8-րդ կետի 5-րդ ենթակետը և նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ քառորդով՝ 5 (հինգ) ամիս 26 (քսանվեց) օրով: Արդյունքում Ս.Սուլյանի՝ ազատազրկման ձևով պատժի վերջնական ժամկետը կազմել է ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 4 (չորս) օր (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալ Ս.Սուլյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր է ներկայացրել՝ ելնելով համաներման կիրառման արդյունքում ձևավորված պատժի՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 4 (չորս) օր ժամկետից (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

15. Սույն որոշման 10-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը Ս.Սուլյանի նկատմամբ ենթակա էր կիրառման, քանի որ նա փաստացի կրել էր դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված և Համաներման ակտի կիրառմամբ փոփոխության ենթարկված պատժի կեսը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ Ս.Սուլյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը կարող էր սկսվել միայն Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով նշանակված պատժի՝ երկու տարի ժամկետով ազատազրկման կեսը փաստացի կրելուց հետո: Հետևաբար, հիմնավոր չէ նաև բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Սամվել Վլադիմիրի Սուլյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

31.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0022/11/12**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոմսիմյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մայիսի 25-ի որոշման դեմ Լ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի փետրվարի 15-ին դիմողներ Ֆահրադ Ոսկանյանը, Սամվել Թամարյանը, Գառնիկ Աբազյանը, Սարիբեկ Հռոմսիմյանը, Դարիբ Սիտիչյանը, Ալբերտ Օվիյանը և Դեմենտի Թադևոսյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ոստիկանության ԶԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը:

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ դիմողներ Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոմասիմյանի, Գ.Միտիչյանի, Ա.Օվի-յանի և Գ.Թադևոսյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ վե-րաքննիչ բողոք են բերել Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոմասիմյա-նի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանը և Տ.Եգորյանը, որը վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել փաստաբան Լ.Հակոբյանը:

վճռաբեկ դատարանը 2012 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներ-կայացվել:

**վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. վերաքննիչ դատարանը Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռ-ոմասիմյանի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանի և Տ.Եգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ առաջին ատյանի դատարանի՝ կալանա-փորման, կալանքի ժամկետի երկարաձգման, թշկական հաստատությունում անձանց տեղափորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկե-տում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

(...)

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-թյան դատարանի բողոքարկվող որոշման ուսումնասիրությունից երևում է, որ այն կայացվել է 2012 թվականի ապրիլի 20-ին: Որոշման եզրափակիչ մասում նշվել է, որ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ 10 օրվա ընթաց-քում, սակայն չի նշվել, որ հրապարակվելու պահից» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 85):

վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Դատական վարույթի նյութերի, վերաքննիչ բողոքի և բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ վե-րաքննիչ բողոքը, ծրարի վրա արված դրոշմակնիքի համաձայն՝ փոստին է հանձնվել 2012 թվականի մայիսի 14-ին և ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք եղել՝ 2012 թվականի մայիսի 16-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետն անցնելուց հե-տո, հետևաբար, վերաքննիչ բողոքը ժամկետանց է» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 2-12, 82, 85):

վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողո-քը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դա-տական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375<sup>4</sup>-րդ

հողվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

(...) Ֆահրադ Ոսկանյանի, Մամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոմսիմյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 85-86):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

6. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ, վերաքննիչ բողոքը թողնելով առանց քննության, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի, 41-րդ հոդվածի 1-ին մասի և 379-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 10<sup>1</sup>-րդ կետերը և նշել, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է, քանի որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը հանդիսանում է վերջնական, գործն ըստ էության լուծող ակտ՝ անկախ նրանից թե կայացվել է մինչդատական վարույթի, թե գործի դատական քննության ընթացքում: Հետևաբար, այն դեպքում, երբ քրեական գործի վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը բողոքարկվում է դատական կարգով, դատարանի կողմից բողոքը մերժելու մասին որոշումը պետք է դիտվի որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ, քանի որ քրեական գործի վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի և դատարանի կողմից կայացված որոշումների իրավական հետևանքները նույնարժեք են, իսկ միակ տարբերությունը որոշումը կայացնող սուբյեկտներն են:

Վերոշարադրյալ դատողություններից բողոք բերած անձը եզրակացրել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է և ենթակա է վերաքննիչ բողոքարկման մեկամսյա և ոչ թե տասնօրյա ժամկետում: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոքը բերվել է քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ, իսկ բողոքը ժամկետանց համարելու մասին Վերաքննիչ դատարանի դատողությունները հիմնավոր չեն:

7. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման համար նախատեսված ժամկետը չի կարող հաշվարկվել այնպես, որ տասնօրյա ժամկետն սկսի հոսել վերոնշյալ որոշումը դատական նիստերի դադարում հրապարակելու և ոչ թե այն ստանալու պահից:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածում առկա՝ «իրապարակելու պահից տասնօրյա ժամկետում» ձևակերպման իմաստով դատական ակտի հրապարակման պահ պետք է դիտարկել բողոք բերող անձի կողմից տվյալ դատական ակտն ստանալու և ոչ թե նիստերի դադարում այն հրապարակելու պահը: Ըստ բողոք բերած անձի, նշված մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայից, որի համաձայն՝ նշված դատարանի դատական ակտերի հրապարակ-

ման պահ է համարվում դրանք դիմողին հանձնելու օրը: Բացի այդ, բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման եզրափակիչ մասում «հրապարակման պահից» ձևակերպում առկա չէ:

Վերոշարադրյալ դատողություններից բողոք բերած անձը եզրակացրել է, որ անգամ եթե սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումը մեկնաբանվի որպես գործն ըստ էության չլուծող դատական ակտ, միևնույնն է այն բողոքարկվել է օրենքով սահմանված ժամկետում:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

9. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճարելի դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դատական ստուգման ենթարկելու արդյունքում Առաջին ատյանի դատարանի կայացրած ակտի վերաքննիչ բողոքարկման համար սահմանված ժամկետների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

#### *1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերը.*

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ոստիկանության ԶԳ-Վ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումն արդյո՞ք գործն ըստ էության լուծող դատական ակտ է:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ վերջնական որոշումը քրեական վարույթն իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշումն է, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10<sup>1</sup>-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն են առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճարելի դատարանի դատական ակտերը:

Մեջբերված քրեադատավարական նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական որոշման տեսակներից մեկն են: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կե-

տի տառացի մեկնաբանությունից երևում է, որ «գործն ըստ էության լուծող որոշում» հասկացությունն օրենսդիրը տարբերակել է «քրեական վարույթը շարունակելը բացառող որոշում» հասկացությունից, բացի այդ, վկայակոչված քրեադատավարական դրույթի վերլուծությունից հետևում է նաև, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի հասկացությունը բնորոշելիս օրենսդիրը թվարկել է այն ակտերը, որոնք կայացվում են բացառապես դատարանի կողմից գործի՝ ըստ էության քննության փուլում:

12. Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման դեպքերն ու դրանց դատավարական ընթացակարգը սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. (...) Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել (...), ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու, կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...):»:

Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման ժամկետի հետ կապված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՄԴՈ-930 որոշման 5-րդ կետի համաձայն՝ «(...) Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ և 263-րդ հոդվածների հարաբերակցության խնդրին՝ ժամկետային կարգի սահմանման առնչությամբ, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե օրենսգիրքը

նախատեսում է 290-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ընդհանուր կարգից շեղում այլ իրավադրույթներում, ապա իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ էր թեկուզ հավելել՝ «... եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ» բառակապակցությունը: Առկա խմբագրությունը և նշված երկու հոդվածներում ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, որը, ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրավունքների խախտման իրական վտանգ է բովանդակում: Այդ անհամապատասխանությունը թերևս առաջացել է այն պատճառով, որ 21.02.2007թ. ՀՕ-93-Ն օրենքով օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերջինս համակարգային ամբողջականության մեջ չի դիտարկվել 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ: Մինչև փոփոխությունն այդ դրույթը պարզապես սահմանել է, որ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»: Բնականաբար, մնան ձևակերպման պարագայում հիշյալ անհամապատասխանությունն առկա չի եղել»:

ՀՀ սահմանադրական դատարանի նույն որոշման եզրափակիչ մասի համաձայն՝

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տված բովանդակության շրջանակներում ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը և հակասական իրավակարգավորման հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի անմիջական անվավերությունն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2011թ. հունիսի 30-ը»:

Ն.Միսակյանի գործով կայացված որոշման մեջ վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածները՝ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

(...) նախաքննության մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը (վարույթի մասը) կարճելու վերաբերյալ որոշումները մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտ են, այդ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ դատական վերահսկողության առարկա: (...)» (տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԳ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

13. Վերահաստատելով և զարգացնելով Ն.Միսակյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարանը ոչ թե գործի՝ ըստ էության քննություն է իրականացնում, այլ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով ստուգում է նախաքննության մարմնի որոշումների, այդ թվում՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Վերոշարադրյալ դիրքորոշումը համադրելով սույն որոշման 11-րդ կետում շարադրված վերլուծության հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին նախաքննության մարմնի որոշումը հանդիսանում է ոչ թե գործն ըստ էության լուծող, այլ վերջնական որոշում: Հետևաբար, նախաքննության մարմնի որոշումների, այդ թվում՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերը չեն հանդիսանում գործն ըստ էության լուծող դատական ակտեր:

14. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ոստիկանության ՔԳ-Վ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի որոշումն ուժի մեջ թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ: Հետևաբար, հիմնավորված չէ բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող ակտ՝ անկախ նրանից, թե կայացվել է նախաքննության մարմնի, թե՛ դատարանի կողմից, ինչպես նաև բողոք բերած անձի այն պնդումը, որ եթե դատական կարգով բողոքարկվում է նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, ապա դատարանի կողմից բողոքը մերժելու մասին



որոշումը նույնպես պետք է դիտվի որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրենսդրական կարգավորման շրջանակներում կարգավորված են նաև այդ ակտերի բողոքարկման դատավարական ընթացակարգերն ու ժամկետները: Հետևաբար, հիմնավորված չէ նաև բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի և 379-րդ հոդվածի պահանջների խախտում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

*II. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկը.*

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք դիմողների ներկայացուցիչների վերաբերյալ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

2. Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող աշխատանքային օրը (...):

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, (...) Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում են առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ անկամսյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

17. Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի ապրիլի 20-ին կայացրել է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ժամկետը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հրապարակվելու պահից տասն օր է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկ կատարելու արդյունքում ստացվում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման բողոքարկման վերջնաժամկետ է հանդիսացել 2012 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ 2012 թվականի ապրիլի 30-ը հայտարարվել է ոչ աշխատանքային օր, հաջորդ օրը՝ մայիսի 1-ը եղել է Աշխատանքի Միջազգային օրը, որը նույնպես ոչ աշխատանքային օր է, հետևաբար, հիշատակված դատական ակտի բողոքարկման վերջնաժամկետ է հանդիսացել հաջորդ աշխատանքային օրը՝ 2010 թվականի մայիսի 2-ը՝ մինչև ժամը քսանչորսը:

Վերաքննիչ բողոքի և բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը, ծրարի վրա արված դրոշմակնիքի համաձայն՝ փոստին է հանձնվել 2012 թվականի մայիսի 14-ին և ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք եղել՝ 2012 թվականի մայիսի 16-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետն անցնելուց հետո: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վերաքննիչ բողոքը ժամկետանց է եղել:

19. Սույն որոշման 16-րդ կետում շարադրված քրեադատավարական դրույթների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ և 18-րդ կետերում մեջբերված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ դիմողների ներկայացուցչների կողմից վերաքննիչ բողոք է բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված տասնօրյա ժամկետի խախտմամբ: Հետևաբար, դիմողների ներկայացուցչների վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դիմողները և նրանց ներկայացուցիչները Առաջին ատյանի դատարան բողոքարկման համար ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չեն ներկայացրել և վերաքննիչ բողոքում բաց թողնված ժամկետի վերականգման հարցն ընդհանրապես քննարկման առարկա չեն դարձրել (դատական ակտի բողոքարկման՝ բաց թողնված ժամկետի մասին *mutatis mutandis* տե՛ս Կանոն Սիմակի Կիրակոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ՀՅԲԲԴ-2/0149/01/08 որոշումը):

20. Անդրադառնալով բողոք բերած անձի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման համար նախատեսված ժամկետը չի կարող հաշվարկվել այնպես, որ տասնօրյա ժամկետն սկսի հոսել վերոնշյալ որոշումը դատական նիստերի դահլիճում հրապարակելու և ոչ թե այն ստանալու պահից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածում, որում հստակ կանոնակարգված է, որ բողոքարկման ժամկետը հաշվարկվում է դատավարական ակտը հրապարակելու և ոչ թե այն ստանալու պահից: Դատական ակտերն օրենքով սահմանված կարգով հրապարակվում են դատական նիստերի դահլիճում, իսկ դատական ակտի ստանալու կարգն այլ է, ինչը բացառում է «հրապարակման պահից» և «ստանալու պահից» եզրույթների նույնացումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

379-րդ հոդվածում ամրագրված կարգավորման առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշման եզրափակիչ մասում «հրապարակման պահից» արտահայտության բացակայությունը դատավարության մասնակիցներին չի զրկել օրենքով սահմանված ժամկետում տվյալ դատական ակտը բողոքարկելու իրավունքից և հնարավորությունից:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 10-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի, հիմնավորումների և պահանջի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, իսկ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և դեկլարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հոռոմսիմյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

ԵԿԴ/0022/11/12

Դատավոր՝ Ս.Ավետիսյան

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2012 թվականի օգոստոսի 24-ի կայացրած դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերի առանձին դրույթների վերաբերյալ.

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի փետրվարի 15-ին դիմողներ Ֆ.Ոսկանյանը, Ս.Թամարյանը, Գ.Աբազյանը, Ս.Հռոռնսիմյանը, Ղ.Միտիչյանը, Ա.Օվիյանը և Դ.Թադևոսյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) խնդրելով վերացնել քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը:

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ դիմողներ Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոռնսիմյանի, Ղ.Միտիչյանի, Ա.Օվիյանի և Դ.Թադևոսյանի բողոքն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք են բերել Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոռնսիմյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանը և Տիգրան Եգորյանը, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մայիսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել փաստաբան Լ.Հակոբյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

5. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Վերաքննիչ դատարանը Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոմ-սիմյանի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանի և Տ.Եգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ.

6. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի բողոքարկվող որոշման ուսումնասիրությունից երևում է, որ այն կայացվել է 2012 թվականի ապրիլի 20-ին: Որոշման եզրափակիչ մասում նշվել է, որ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ 10 օրվա ընթացքում, սակայն չի նշվել, որ հրապարակվելու պահից:

(...)

Գատական վարույթի նյութերի, վերաքննիչ բողոքի և բողոքին կցված ծրարի ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը, ծրարի վրա արված դրոշմակնիքի համաձայն՝ փոստին է հանձնվել 2012 թվականի մայիսի 14-ին և ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք եղել՝ 2012 թվականի մայիսի 16-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, հետևաբար, վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 375<sup>4</sup>-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Նման պայմաններում վերաքննիչ դատարանը գտել է, որ Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոմսիմյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ»:

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, իրենց վերաքննիչ բողոքը թողնելով առանց քննության, խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ, 41-րդ հոդվածի 1-ին մասի և 379-րդ հոդվածի պահանջները:

Ի հիմնավորումն վերադարձրյալ փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 10<sup>1</sup>-րդ կետերը,

նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է և վերաքննիչ բողոք բերելու համար որպես ժամկետ պետք է հաշվարկվեր 1-ամսյա ժամկետը, ոչ թե 10-օրյա ժամկետը, հետևաբար իրենց կողմից Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ, իսկ բողոքը ժամկետանց համարելու մասին Վերաքննիչ դատարանի դատողությունները հիմնավոր չեն, ինչից բողոքաբերը եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ: Պաշտպանը հանգել է հետևության, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը հանդիսանում է վերջնական, գործն ըստ էության լուծող ակտ, անկախ նրանից թե կայացվել է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչդատական վարույթի փուլում, թե անմիջապես դատարանի կողմից: Եվ, եթե բողոքարկվում է քննչական մարմնի քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը առաջին ատյանի դատարան, ապա դատարանի կողմից բողոքի մերժման որոշումը նույնպես պետք է դիտվի որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ, քանի որ միակ տարբերությունը դատարանի կողմից կարճման որոշման կայացման և քննչական մարմնի կողմից նույն որոշման կայացման միջև որոշում կայացնող սուբյեկտների միջև է, իսկ իրավական հետևանքները միանգամայն նույնաբեք են:

8. Բողոքաբերը նշել է, որ հրապարակման պահից բողոքարկման տասնօրյա ժամկետը չի կարող մեկնաբանվել որպես դատական միստերի դախլիճում հրապարակման պահից հաշվարկվող ժամկետ, այլ դատական ակտը ստանալու պահից հաշվարկվող ժամկետ:

Դիմողը փաստարկել է, որ եթե նույնիսկ ընդունվի, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, միևնույն է այն բողոքարկվել է օրենքով սահմանված ժամկետում:

9. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի «հրապարակելու պահից տասնօրյա ժամկետում» սահմանման մեջ հրապարակելու պահ պետք է դիտարկել տվյալ դատական ակտը բողոք բերող անձի կողմից ստանալու պահը՝ այլ ոչ թե այն միստերի դախլիճում դատարանի կողմից հրապարակելու պահը, ինչը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայից, որի կանոնների համաձայն նշված դատարանի դատական ակտերի հրապարակման պահ է համարվում դրանք դիմած անձին հանձնելու օրը:

10. Բողոքաբերը փաստել է նաև այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման եզրափակիչ մասում «հրապարակման պահից» արտահայտությունը նշված չէ:

11. Հինք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**Դատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը.**

Ուսումնասիրելով Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոմսիսյանի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշման դեմ Լ.Հակոբյանի վճռարեկ բողոքը, ծանոթանալով

ներկայացված նյութերին և վճռաբեկ բողոքն ամբողջությամբ մերժելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի առանձին եզրահանգումների հետ ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

12. Բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելու նպատակը իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության ապահովվման սահմանադրական գործառույթների իրացումն է:

Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանի առջև բարձրացված իրավական հարցերը հետևյալն են.

ա) Արդյո՞ք ըստ էության լուծող դատական ակտ է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ սույն գործով քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ ոստիկանության ԶԳ-Վ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչի որոշումը ուժի մեջ թողնելու մասին,

բ) արդյո՞ք սույն գործով վերաքննիչ բողոքը բերվել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանում բողոքարկելու համար սահմանված ժամկետի պահպանմամբ,

գ) արդյո՞ք հրապարակման պահից բողոքարկման 10-օրյա ժամկետը ենթակա է հաշվարկման դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, թե դատական ակտը ստանալու պահից,

դ) արդյո՞ք իրավաչափ է Վերաքննիչ դատարանի որոշումը՝ դիմողների ներկայացուցիչների վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին:

Համաձայն լինելով նշված առանձին իրավական հարցերի իրավաչափության և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման հետ, միևնույն ժամանակ, հարկ են համարում նշել, որ առանձին հարցադրումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունների կապակցությամբ ունեն վերապահումներ:

14. Բացի այդ, իրավունքի զարգացման գործառույթի արդյունավետ իրացման համատեքստում սկզբունքային նշանակություն ունի նաև այն իրավական հարցը, թե Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման եզրափակիչ մասում «հրապարակման պահից» արտահայտության բացակայությունն արդյո՞ք չի գրկել դատավարության մասնակիցներին օրենքով սահմանված ժամկետում տվյալ դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից և իրավունքից:

15. Այդ առումով անհրաժեշտ են համարում սույն վարույթով արտահայտել նաև այն իրավական դիրքորոշումը, թե արդյո՞ք դիմող անձանց համար գործնականում դատարաններն ապահովել են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության և իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք իրականացումը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ դատական որոշումների բողոքարկման կարգի և ժամկետների վերաբերյալ օրենքում սահմանված են տարբեր իրավակարգավորումներ:

Այսպես՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով *որոշման պատճենն ստանալու պահից 7* օրվա ընթացքում»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ «... Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա *պատճենն ստանալու պահից 7* օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Նույն օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և ըստ էության չլուծող դատական ակտերը բողոքարկվում են *հրապարակվելու օրվանից* (տարբեր ժամկետներում):

Նշված օրենսգրքի 402-րդ և 412-րդ հոդվածներում սահմանված է, որ Վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկվում են *հրապարակման պահից*, իսկ ըստ էության չլուծող դատական ակտերը՝ *ակտը ստանալու պահից*... եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, հաշվի առնելով դատավարական ակտերի բողոքարկման հատուկ ժամկետների և ընթացակարգերի կարևորությունը, առանձին նորմերով սահմանել է այդ որոշումների բողոքարկման հատուկ ընթացակարգ (263-րդ, 290-րդ հոդվածներ):

17. Օրենսգրքում առկա դատավարական որոշումների ժամկետային կարգավորումները հստակ տարբերակված չեն, բովանդակում են տարբեր մոտեցումներ, և ինչպես վկայում են քննության առարկա գործի նյութերը, մարդու իրավունքների խախտման իրական վտանգ են բովանդակում:

Դատավարական որոշումները ստանալու և դրանք բողոքարկելու ժամկետային կարգի սահմանմանն առնչվող օրենսդրական տարբեր կարգավորումների իմաստն ու նպատակը հասկանալի չեն:

Օրինակ, ինչով է պայմանավորված, որ Առաջին ատյանի դատարանի ըստ էության չլուծող դատական ակտերը բողոքարկվում են՝ հրապարակվելու պահից, իսկ Վերաքննիչ դատարանի կայացրած նույն ակտերը՝ ստանալու պահից:

18. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի



սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (տես՝ Աշինգդեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, *Ashingdane v. the United Kingdom*, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57):

19. Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (տես՝ Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, *Stubbings and Others v. the United Kingdom*, Judgment, 22.10.1996, par. 51,55):

20. Բացի այդ, հարկ են համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատական քննության իրավունքի ապահովման սկզբունքով, քանի որ արդար դատաքննության բաղկացուցիչ տարրերից մեկը դատարանի մատչելիության իրավունքն է: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (տես՝ *Բրուսլյա Գոմեզ դե լա Տորրեն* ընդդեմ Իսպանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, կետ 33):

21. Միաժամանակ հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանի կողմից չեն կարող ստեղծվել այնպիսի ձևական խոչընդոտներ, որոնց արդյունքում խախտվում է դատական ակտն օրենքով նախատեսված կարգով վերանայելու անձի իրավունքը հետևյալ պատճառաբանությամբ.

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վերը նշվածից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի

ապահովվի ցանկացած որոշման վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան):

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000 թվականի թիվ 36 որոշմամբ պարզաբանվել է, որ բողոքարկման բաց թողած ժամկետների վերականգնման վերաբերյալ դիմումները քննության առնելիս պետք է մանրամասն հետազոտվեն ժամկետների բաց թողման պատճառները: Եվ բոլոր այդ դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (հիվանդություն, անհարթահարելի ուժ, դատական ակտերի կայացման մասին անտեղյակ լինելը ոչ իր մեղքով և այլն), ժամկետի բացթողումը պետք է ճանաչել հարգելի:

Դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանել է նաև այն մասին, որ որպես կանոն բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ հանձնելու պատճառով:

22. Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ են համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, թե արդյո՞ք օրենքում *«հրապարակելու պահից»* առկա եզրույթը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային, որի կանոնների համաձայն Դատարանի դատական ակտերի հրապարակման պահ է համարվում դիմած անձին հանձնելու օրը:

Նույնպիսի մոտեցում ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածում:

23. Մույն վարույթով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը հրապարակվել է 20.04.2012 թվականին, այսինքն՝ նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել դատական ակտի հրապարակման պահից՝ 10 օրյա ժամկետում: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանի որոշման եզրափակիչ մասը շարադրվել է հետևյալ ձևով՝ «Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան 10 օրվա ընթացքում», ինչով անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը:

Նման պայմաններում դիմող կողմի համար պարզ չի եղել, այն հանգամանքը, որ տվյալ դատական ակտը կարող էր վերաքննության կարգով բողոքարկվել հրապարակելու, թե՞ այն ստանալու օրվանից:

Մույն նյութերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը դիմողների ներկայացուցիչները ստացել են 2012 թվականի մայիսի 2-ին և 3-ին, իսկ վերաքննիչ բողոքի և բողոքին կցված ծրարի վրա դրված դրոշմակնիքի համաձայն՝ փոստին է հանձնվել բողոքարկման համար սահմանված 10 օրյա ժամկետում՝ 2012 թվականի մայիսի 14-ին և վերաքննիչ դատարան մուտք է եղել մայիսի 16-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում են, որ սույն նյութերով վերաքննիչ դատարանը, անտեսել է այդ հանգամանքը, որի հետևանքով դիմողները գրկվել են իրենց իրավունքների պաշտպանության նպատակով դատարան դիմելու և դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակայն դատաքննության իրավունքից:

Վերաքննիչ դատարանը, ի նկատի ունենալով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման եզրափակիչ մասի անհատակությունը, ելնելով դիմողների իրավունքների և արդարադատության շահերից, կարող էր իրականացնել դատական ստուգում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների... համար:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նորմերը գործում են անմիջականորեն: Իսկ 18-րդ հոդվածում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք...»:

24. Վերոգրյալը հիմք է տալիս գալու հետևության, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության տեսանկյունից կարող է էական նշանակություն ունենալ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված բողոքը վարույթ ընդունելու և դատական ակտը բեկանելու հիմք է:

Այն հանգամանքը, որ դատավարական որոշումների բողոքարկման ընթացակարգը և ժամկետային սահմանումները դատական պրակտիկայում հանգեցրել են տարբերույթ մեկնաբանությունների և ոչ միատեսակ կիրառության, հաստատվում է նաև նրանով, որ այդ հարցերով դատավարության մասնակիցները պարբերաբար դիմում են ՀՀ Սահմանադրական դատարան (տես՝ 07.07.2009թ. ՍԳ-Ո 844 և 21.12.2010թ. ՍԳ-Ո 930 որոշումները):

Մնալով հատուկ կարծիքի՝ հաշվի են առել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ԵԶԳ/0678/02/08, ԱՎԳ-1/0049/02/09 և ԵՇԳ/0438/02/09 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

25. Գտնում են, որ վերոնշյալ հարցերի առնչությամբ արտահայտած իրավական դիրքորոշումները ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը ընդունելիս կարող են ուղղորդող նշանակություն ունենալ՝ խնդրո առարկա հարցերի վերաբերյալ միատեսակ օրենսդրական ձևակերպումներ տալու առումով, նամանավանդ, որ օրենսգրքի նախագծում նշված հարցերը հստակ կարգավորված չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361<sup>1</sup>-րդ, 369-րդ, 414<sup>2</sup>-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, գտնում են, որ դիմողներ Ֆ.Ոսկանյանի և մյուսների ներկայացուցիչ Լ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, այն է՝ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշումը բեկանել և վարույթը վերադարձնել նույն դատարան՝ նոր քննության:

*Դատավոր՝ ստորագրություն*

32.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԷԳ/0001/11/12**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2010 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12148310 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 16-ի որոշմամբ Արմեն Աշոտի Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 4-րդ մասով և 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2011 թվականի ապրիլի 29-ին քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կասեցվել է:

2. 2011 թվականի հունիսի 16-ին մեղադրյալ Ա.Պետրոսյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Ա.Պետրոսյանի մեղադրանքը փոփոխվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 1-ին մասով և 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի նոյեմբերի 24-ին Ա.Պետրոսյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և ներկայացվել է նախաքննության մարմնին: Նույն օրը քրեական գործի վարույթը վերսկսվել է և Ա.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածի 1-ին մասով և 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ նույն դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

3. 2011 թվականի դեկտեմբերի 26-ին մեղադրյալ Ա.Պետրոսյանի պաշտպան Վ.Աթոյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն՝ խնդրելով մեղադրյալ Ա.Պետրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից՝ միջին ծանրության հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձին 6 ամսից ավելի ժամկետով կալանքի տակ պահելն անթույլատրելի լինելու պատճառով, քրեական գործի վարույթը կարճել և Ա.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Ափիյանը 2011 թվականի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացրել մեղադրյալ Ա.Պետրոսյանին կալանքից ազատ արձակելու մասով պաշտպան Վ.Աթոյանի միջնորդությունը մերժելու մասին՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Քրեական գործի վարույթը կարճելու և Ա.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով միջնորդության լուծումը հետաձգվել է՝ մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը:

4. 2012 թվականի հունվարի 11-ին պաշտպան Վ.Աթոյանը բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել դատախազ Ա.Ափիյանի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը և պարտավորեցնել նախաքննության մարմնին մեղադրյալ Ա.Պետրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից, ինչպես նաև կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել Ա.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշմամբ պաշտպան Վ.Աթոյանի բողոքը բավարարվել է մասնակիորեն: Նախաքննության մարմինը պարտավորեցվել է վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը, այն է՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալա-

նավորման ժամկետը հաշվել վերջինիս փաստացի արգելանքի վերցնելու օրվանից՝ 2011 թվականի հունիսի 16-ից և, կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, անթույլատրելի համարել կալանքի տակ Ա.Պետրոսյանի հետագա գտնվելը: Քրեական գործի վարույթը կարճելուն և Ա.Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն պարտավորեցնելու մասով պաշտպանի բողոքը մերժվել է:

5. Դատախազ Ա.Ափիյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի փետրվարի 13-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

6. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

7. Առաջին ատյանի դատարանը պաշտպան Վ.Աթոյանի բողոքը մասնակիորեն բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 165-րդ հոդվածով և 38-177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Արմեն Աշոտի Պետրոսյանին առաջադրված մեղադրանքները դասվում են ոչ մեծ, միջին ծանրության հանցագործությունների շարքը, որոնց կատարման համար կիրառված խափանման միջոց կալանավորման ժամկետը չի կարող գերազանցել 6 ամիսը (...):

Դատախազի այն փաստարկը, որ հանձնման համար կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող հաշվարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետների մեջ, քանի որ գործով մինչդատական վարույթը եղել է կասեցված, այն վերսկսվել է 2011թ. նոյեմբերի 24-ին, այսինքն՝ մեղադրյալին Հայաստան տեղափոխելու և քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու օրը և հետևաբար այդ օրվանից է պետք հաշվել մինչդատական վարույթի ընթացքում կալանքի ժամկետը, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի խախտում թույլ չի տրվել, անհիմն է, քանի որ այն չի բխում սույն որոշման մեջ նշված իրավական ակտերի պահանջներից, նմանօրինակ դրույթ չկա նախատեսված ոչ մի իրավական ակտում (...):

Դատարանը գտնում է, որ մեղադրյալին Հայաստանի Հանրապետություն բերելուց հետո ժամանակի և տարածության մեջ ՀՀ օրենքների գործողության սկզբունքից ելնելով, ՀՀ օրենսդրությամբ /տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով/ պատշաճ ընթացակարգ է կիրառվել, այն է՝ վերսկսվել է գործի վարույթը, մեղադրյալը ներկայացվել է դատարան՝ կիրառված խափանման միջոց կալանքը վերահաստատելու, նրան մեղադրանք է առաջադրվել, նա տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկ: Սակայն դա չի նշանակում, որ նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի հիմքով ՌԳ-ում փաստացի կալանքի տակ պահելու ժամկետը չպետք է հաշվվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով

նախատեսված ժամկետները հաշվարկելիս, որը անհիմն լինելով հանդերձ, կհանգեցնի մարդու իրավունքների և ազատությունների խախտման (...):» (տե՛ս նյութեր, թերթ 45-50):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. «Այսպիսով, առաջին ատյանի դատարանի դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Ափիյանի վերաքննիչ բողոքը բավարարելու և առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան, նկատի ունենալով, որ պաշտպան Վ.Աթոյանի բողոքը քննության առնելիս թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ» (տե՛ս նյութեր, թերթ 79-91):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով հստակ չի կարգավորվում այն հարցը, թե հետախուզվողին այլ պետությունում հայտնաբերելու, արգելանքի վերցնելու և տեղափոխելու դեպքում որ պահից սկսած պետք է հաշվել նրան կալանքի տակ պահելու ժամկետը՝ օտարերկրյա պետությունում արգելանքի վերցվելու՞, թե Հայաստանի Հանրապետություն նրան տեղափոխելու պահից: Ուստի, բողոքաբերը գտնում է, որ սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշումը հնարավորություն կտա միատեսակ կիրառություն ապահովել բարձրացված հարցի կապակցությամբ, մասնավորապես այն առումով, թե հանձնման կապակցությամբ անձի՝ արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը մտնո՞ւմ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ մինչդատական վարույթի ընթացքում անձին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

10. Վերոգրյալից բացի, բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով կայացված՝ ստորադաս դատարանների որոշումները հանդիսանում են չհիմնավորված դատական ակտեր և ենթակա են բեկանման:

Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոք բերած անձը նշել է, որ մեղադրյալ Ա.Պետրոսյանը կալանքի տակ է պահվել երկու տարբեր իրավական ռեժիմներով. Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ հանձնման կապակցությամբ, իսկ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու և քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայացնելու օրվանից՝ մինչդատական վարույթի կապակցությամբ: Բողոքաբերը շեշտել է, որ հանձնման կապակցությամբ անձին անազատության մեջ պահելու ժամկետի և մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի հարաբերակցությունը որևէ կոնկրետ իրավական նորմով չի կարգավորվում: Նշվածը, սակայն, դեռևս չի նշանակում, որ հանձնման կապակցությամբ անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է հաշվարկվի մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա բողոքաբերը նշել է, որ 2011 թվականի հունիսի 16-ից նոյեմբերի 24-ն ընկած ժամանակամիջոցում Ա.Պետրոսյանին անազատության մեջ պահելու հիմք են հանդիսացել Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների համապատասխան որոշումները, այլ ոչ թե հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու

մասին Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 18-ի որոշումը: Տվյալ դեպքում Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինները գործել են հանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրերին և Ռուսաստանի Դաշնության ներպետական օրենսդրությանը համապատասխան: Այլ խոսքով՝ մինչև 2011 թվականի նոյեմբերի 24-ը Ա.Պետրոսյանը մինչդատական վարույթի հետ կապված կալանքի տակ չի գտնվել, նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կասեցված է եղել մեղադրյալի՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների տրամադրության ներքո չգտնվելու հիմքով, ուստի Ա.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը չէր կարող կատարված համարվել:

Վերոգրյալից բողոքի հեղինակը եզրակացրել է, որ Ա.Պետրոսյանին Ռուսաստանի Դաշնությունում անազատության մեջ պահելու նպատակը հանդիսացել է Հայաստանի Հանրապետությանը նրա հանձնումն ապահովելը, իսկ այն պահից, երբ Ա.Պետրոսյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն, նրան կալանքի տակ պահելու հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության դատարանի որոշումը:

Վկայակոչելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսկի կոմվենցիայի 61.2-րդ հոդվածը՝ բողոք բերած անձը շեշտել է, որ նշված հոդվածում կիրառվող՝ «կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետ» հասկացությունն ՀՀ օրենսդրության մեջ չկա, իսկ միջազգային պայմանագրում օգտագործված՝ «կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետ» արտահայտությունը չի կարող նույնացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված «մինչդատական վարույթի ընթացքում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ» հասկացության հետ:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մեղադրյալ Ա.Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորման ժամկետը 2011 թվականի հունիսի 16-ից հաշվելու և կալանքի տակ նրա հետագա գտնվելն անթույլատրելի համարելու մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի փետրվարի 13-ի որոշումը և մեղադրյալ Ա.Պետրոսյանի պաշտպան Վ.Աթոյանի բողոքը մերժել:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը պետք է հաշվել Ռուսաստանի Դաշնությունում նրան արգելանքի վերցնելու<sup>1</sup>, թե Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու պահից:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իրավական հարցին Վճռաբեկ դատարանի կողմից պատասխան է տրվել մեղադրյալ Ա.Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքում՝ 2012 թվականի օգոստոսի 24-ին կայացված թիվ ԵԷԴ/0024/06/11 որոշման մեջ, որտեղ Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը:



«ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

(...)

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

(...)

7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ արգելանքի վերցնելը գործողություն է, որն սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատագրկման ձևով դատավճիռն ի կատար ածելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 37-րդ կետի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կալանքն ընտրելն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38-րդ կետի համաձայն՝ անազատության մեջ պահելը անձին ազատությունից հարկադրաբար զրկելն է, ինչ պատճառներով էլ որ դա իրականացված լինի:

Վերոշարադրյալ քրեադատավարական և սահմանադրական նորմերի վերլուծությունից երևում է, ՀՀ Սահմանադրությունը և քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում են կալանավորման երկու ինքնուրույն տեսակ՝

ա) կալանավորումը որպես խափանման միջոց,

բ) հանձնման նպատակով կալանավորում:

Կալանավորման վերոնշյալ տեսակներն ունեն տարբեր իրավական բնույթ և հետապնդում են տարբեր նպատակներ: Դրանցից առաջինը հանդիսանում է հարկադրանքի միջոց, որը կիրառվում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրա ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճիռի կատարումն ապահովելու նպատակով:

Կալանավորման վերոնշյալ տեսակներից երկրորդը՝ հանձնման նպատակով կալանավորումը, անձին անազատության մեջ պահելն է այլ պետությանը նրա հանձնումն ապահովելու նպատակով:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միևսկի կոնվենցիայի 61.2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայի 60, 61 և 61<sup>1</sup> հոդվածների դրույթներին համապատասխան կալանքի վերցված անձի՝ կալանքի տակ պահելու ժամանակը, նրան հանձնելու դեպքում, հաշվվում է կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ, որը նախատեսված է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որին այդ անձը հանձնվել է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից:

2. Կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվում է այն ժամանակը, երբ անձը գտնվել է՝

1) արգելանքի տակ՝ նրան ձերբակալելիս և կալանավորելիս.

2) բժշկական հաստատությունում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, հիվանդանոցային փորձաքննություն, ինչպես նաև քրեական գործով վարույթի ընթացքում հայտնաբերված ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարումից բուժում անցնելու ընթացքում, այդ թվում՝ կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելիս:

3. Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, գումարվում են կալանքի տակ և բժշկական հաստատությունում անձի գտնվելու, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվող բոլոր ժամկետները: Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է:

4. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև 6 ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս: Կալանքի տակ պահելու ժամկետի հետագա երկարացումն արգելվում է, բացառությամբ սույն օրենսգրքի 139-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերի:

Սիւնույն քրեական գործով, ինչպես նաև դրան միացված կամ դրանից անջատված քրեական գործով մեղադրյալին կրկին կալանքի տակ վերցնելու դեպքում կալանքի տակ մնալու ժամկետը հաշվվում է՝ այն ժամանակը հաշվի առնելով, որը մեղադրյալը ավելի վաղ անցկացրել է կալանքի տակ:

5. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 1 տարին.

2) մեղադրյալին վերագրվող հանցագործության համար քրեական օրենքով ազատազրկման նախատեսված առավելագույն ժամկետը՝ այն դեպքում, երբ նշված ժամկետը պակաս է 1 տարուց:

6. Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում»:

Մեջբերված կոնվենցիոն դրույթի տառացի մեկնաբանությունից երևում է, որ հանձնման դեպքում անձին կալանքի տակ պահելու ժամանակը պետք է հաշվվի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ անձին կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ: ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում սահմանված են խափանման միջոց կալանավորման ժամկետների հաշվարկման կարգն ու պայմանները, որոնք չեն վերաբերում հանձնման նպատակով կալանքի ժամկետին:

Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը, ինչպես նաև (...) այն հանգամանքը, որ որպես խափանման միջոց կալանավորումը դատարանի համապատասխան որոշման հիման վրա կիրառվում է քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով, Վճռաբեկ

դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ անձը չի գտնվում ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք ընտրելու մասին դատարանի որոշումը չի կարող կատարված համարվել և, հետևաբար, խոսք չի կարող լինել դատարանի որոշմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետի ընթացքն սկսված լինելու և, համապատասխանաբար նաև՝ այդ ժամկետի հաշվարկի մասին: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խափանման միջոց կալանավորման ժամկետն սկսում է հոսել ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ անձի հայտնվելու, այլ խոսքով՝ անձին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու պահից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանձնման նպատակով կալանավորման ժամկետը, խափանման միջոց կալանավորման ժամկետի հետ մեկտեղ, պետք է հաշվակցվի անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով նշանակված ազատագրկման հետ կապված պատժի ժամկետի մեջ:

Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Մասնավորապես, Ջանդբերգսն ընդդեմ Լատվիայի գործով կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ տվյալ ժամանակահատվածում Լատվիայում գործող քրեական դատավարության օրենսգրքի որևէ դրույթով նախատեսված չի եղել, որ անձի՝ օտարերկրյա պետությունում նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակը պետք է ներառվի նրա կալանքի ամբողջ ժամկետի մեջ: Ուստի, Դատարանը գտնում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի ո՛չ 5-րդ հոդվածի 3-րդ մասը, ո՛չ էլ որևէ այլ դրույթ՝ սկզբունքորեն Մասնակից պետությանը չի պարտավորեցնում հաշվի առնել երրորդ պետությունում անձի կրած նախնական կալանքի ժամկետը (տե՛ս Ջանդբերգսն ընդդեմ Լատվիայի (ZANDBERGS v. LATVIA) գործով 2011 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 71092/01, կետ 63):

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը լրացվել է 38.1-րդ և 38.2-րդ կետերով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38.1-րդ կետի համաձայն՝ ժամանակավոր կալանավորումն անձին անազատության մեջ պահելն է հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38.2-րդ կետի համաձայն՝ հանձնելու համար կալանավորումն անձին անազատության մեջ պահելն է նրա հանձնումն ապահովելու նպատակով:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում 2012 թվականի մարտի 19-ին կատարված լրացումը (38.1-րդ և 38.2-րդ կետեր) վկայում է այն մասին, որ օրենսդիրը ևս խափանման միջոց կալանքը տարբերակում է հանձնման նպատակով կալանքից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի ելակետային հասկացությունները պարզաբանող հողվածում «Ժամանակավոր կալանավորում» և «հանձնելու համար կալանավորում» հասկացությունները մեկնաբանող վերոնշյալ դրույթների նախատեսումը լրացուցիչ անգամ հիմնավորում է կալանավորման երկու ինքնուրույն տեսակների վերաբերյալ (...) շարադրված դիրքորոշումը» (տե՛ս Արմեն Աշոտի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0024/06/11 որոշման 16-20-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ա.Պետրոսյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից 2011 թվականի հունիսի 16-ին, իսկ Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել և նախաքննության մարմնին է ներկայացվել 2011 թվականի նոյեմբերի 24-ին (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Այսինքն՝ 2011 թվականի հունիսի 16-ից նոյեմբերի 24-ն Ա.Պետրոսյանը կալանավորված է եղել հանձնման նպատակով, իսկ 2011 թվականի նոյեմբերի 24-ից, այն է՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու և ՀՀ իրավապահ մարմինների տրամադրության տակ անցնելու պահից՝ Ա.Պետրոսյանը գտնվել է խափանման միջոց կալանքի տակ:

2012 թվականի հունվարի 11-ին պաշտպան Վ.Աթոյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել նախաքննության մարմնին մեղադրյալ Ա.Պետրոսյանին անհապաղ ազատ արձակել կալանքից՝ միջին ծանրության հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձին 6 ամսից ավելի ժամկետով կալանքի տակ պահելն անթույլատրելի լինելու պատճառով: Առաջին ատյանի դատարանի կողմից պաշտպանի բողոքն այդ մասով բավարարվել է, իսկ Վերաքննիչ դատարանը նշված դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 5-րդ կետերը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Պետրոսյանին մինչդատական վարույթի կապակցությամբ կալանքի տակ պահելու ժամկետը պետք է հաշվել ոչ թե Ռուսաստանի Դաշնությունում նրան արգելանքի վերցնելու, այլ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու պահից:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Արմեն Աշոտի Պետրոսյանի պաշտպան Վ.Աթոյանի բողոքը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի հունվարի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

33.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԷԴ/0201/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ ամբաստանյալ՝</i>	Է.ԱՍԱՏՐՅԱՆԻ
<i>մեղադրող՝</i>	Ա.ՍԵՓՈՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Էդմոն Գարսիսի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մարտի 28-ի որոշման դեմ մեղադրող Ա.Սեփոյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարյուցվել է թիվ 60130311 քրեական գործը՝ Էդմոն Ասատրյանի կողմից Արևհատ Մելիքյանին վրաների ենթարկելու և նրան մահ պատճառելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ Է.Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ

քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը Է.Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2011 թվականի դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2012 թվականի փետրվարի 13-ի դատավճռով Է.Ասատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից 2 տարի ժամկետով: Է.Ասատրյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամկետով:

Տուժողի իրավահաջորդ Ա.Մանվելյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի մարտի 28-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա.Մեփոյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Է.Ասատրյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2011 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 14-ի սահմաններում, «Հասմեխ» սահմանափակ պատասխանատվությանը ընկերությանը պատկանող և իրեն ամրակցված «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով երթևեկել է Երևանի Տիգրան Մեծ պողոտայով դեպի Արցախի փողոցի ուղղությամբ: Երևանի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 71 շենքի դիմաց լուսացույցի կարմիր լույսի տակ կանգնել է և կանաչ լույսի ներքո վերսկսելով երթևեկությունը՝ թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների 105-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ, այն է՝ հայտնաբերելով իր երթևեկության ուղղության լուսացույցով կարգավորվող հետիոտնային անցումով հանգիստ քայլերով փողոցը հատող հետիոտն Ա.Մեփոյանին և չհանդգնելով երթևեկության անվտանգության մեջ, վերսկսել է երթևեկությունը, հնարավորություն չի տվել հետիոտնին դուրս գալ վտանգավոր գոտուց, ինչի տեխնիկական հնարավորությունն ունեցել է, վրաերթի է ենթարկել Ա.Մեփոյանին և անգուշությամբ նրան պատճառել մահ:

6. Քրեական գործի նախաքննության ընթացքում ամբաստանյալ Է.Ասատրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 14-ի սահմաններում

րում, իրեն ամրակցված «Կամագ» մակնիշի բեռնատար ավտոմեքենայով, 20 տոննա բարձրված բեռով ընթանալիս է եղել Երևանի Տիգրան Մեծ պողոտայով: Հասնելով թիվ 71 շենքի դիմաց՝ արգելակել է և կանգնել լուսացույցի կարմիր լույսի տակ՝ երկրորդ ընթացագոտում: Մոտ 30 վայրկյան կանգնած մնալուց հետո, երբ իր ուղղության համար լուսացույցի կանաչ լույս է վառվել, ցանկացել է վերսկսել երթևեկությունը, սակայն այդ պահին նկատել է, որ իր առջևով, հետխոտնային անցումով, աջից դեպի ձախ հանգիստ քայլերով փողոցը հատում են տարեց տղամարդ և կին՝ տղամարդն առջևից, իսկ կինը՝ նրանից մոտ երկու մետր հետ: Երբ տղամարդը հասել է իր ընթացագոտու վերջնամասին, մի պահ կանգնել է և նայել դեպի ձախ, այդ ընթացքում ինքը գրեթե հասնելիս է եղել հետխոտնային անցումներին, դիմել է արգելակման, կանգնել մեկ-երկու վայրկյան, մինչ տղամարդը շարունակել է քայլերը և հասել պողոտայի կենտրոնին, որից հետո վերսկսել է երթևեկությունը՝ կարծելով, թե այդ կինը նույնպես անցել է իր մեքենայի դիմացից: Երթևեկությունը վերսկսելուց և կանգ գծից 7-8 մետր տարածություն անցնելուց հետո միայն նկատել է, որ վրատերթի է ենթարկել կնոջը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 97-98):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Պատժի տեսակ և չափ նշանակելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը, այն, որ ամբաստանյալ Էդմոն Ասատրյանը նախկինում արատավորված և դատապարտված չի եղել, անկեղծորեն զոջում է կատարածի համար, ինչպես աշխատավայրում, այնպես էլ բնակության վայրում բնութագրվում է բացառապես դրականորեն, հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը, խնամքի տակ են գտնվում երկու անչափահաս երեխաներն ու զառանյալ մայրը, որը տառապում է շաքարային դիաբետ հիվանդությամբ և մշտական խնամքի կարիք ունի, կամովին հատուցել է տուժողի իրավահաջորդին պատճառված գույքային վնասը՝ 700.000 ՀՀ դրամի չափով, բացի այդ, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական գործակալության կողմից տուժողի իրավահաջորդին է տրամադրվելու վրատերթի հետևանքով սահմանված ևս 600.000 ՀՀ դրամ ապահովագրական գումար: Որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դատարանը համարում է առաջին անգամ հանգամանքների պատահական գույքորդմամբ միջին ծանրության հանցանք կատարելը և տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունները: Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ դատարանը դատաքննությամբ չհայտնաբերեց: Միաժամանակ, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, տուժողի իրավահաջորդի բողոքի բացակայությունը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողությունները, ամբաստանյալ Է.Ասատրյանի անձը բնութագրող տվյալները (...) դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալ Է.Ասատրյանի անձը հանրության համար վտանգավորություն չի ներկայացնում և նրա ուղղվելը հնարավոր է առանց նրան հասարակությունից մեկուսացնելու, առանց պատիժը կրելու (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 57-58):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգում է հետևության, որ Էդմոն Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին առաջին ատյանի դատարանի հետևությունը համապատասխանում է գործի փաստա-



կան հանգամանքներին ու պատժի արդարացիության քրեախրավական սկզբունքին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 116-119):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Է.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջների խախտում:

Ըստ բողոքաբերի՝ սույն գործով ստորադաս դատարաններն անտեսել են կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Այս կապակցությամբ բողոքաբերը վկայակոչել է Վճարելի դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ Գ-Գ-1/0003/01/10 որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատարանները հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և հանցավորի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: Մինչդեռ, ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Է.Ասատրյանի նկատմամբ պատիժ սահմանելիս անտեսել են նրա կողմից ճանապարհային երթևեկության կանոնների այնպիսի կոպիտ խախտում թույլ տալու հանգամանքը, ինչպիսին է ճանապարհը կարգավորվող հետիոտնային անցումով հատող հետիոտնին չզիջելը, ինչը խոսում է ինչպես արարքի, այնպես էլ հանցավորի անձի՝ հանրության համար վտանգավորության բարձր աստիճանի մասին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 28-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարաններն ամբաստանյալ Է.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս հաշվի առե՞լ են արդյոք վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Պատիժ նշանակելը քրեական գործերով արդարադատության իրականացման կարևոր տարրերից մեկն է, որի շրջանակներում կարևորվում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահպանումը: Ն.Սարգսյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է ղեկավարվի դատարանը պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝

- ա) օրինականությունը,
- բ) արդարությունը,
- գ) պատժի անհատականացումը,
- դ) մարդասիրությունը:

Պատիժ նշանակելու վերոնշյալ սկզբունքները սահմանում են այն հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվում է դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատժի տեսակն ու չափն ընտրելիս: Նշված սկզբունքներից յուրաքանչյուրը՝ որպես առանձին բաղադրամաս, ունի ինքնուրույն նշանակություն և պարտադիր հաշվի է առնվում քրեական պատիժ նշանակելիս: (...)» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 14-րդ կետը):

Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին և նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մաև թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09, ԼԳ-2/0019/01/09 և այլ որոշումներում:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում հիշատակված որոշումներում արտահայտված իրավական մոտեցումները՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս դատարանն ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան և այլն) պետք է հաշվի առնի ամբաստանյալի կողմից հանցագործության կատարման եղանակը: Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարված հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող

ու ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելու, ինչպես նաև նրանց կողմից պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելու ընթացքում դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սահակյանի* գործով կայացված որոշմամբ: Համաձայն այդ որոշման՝ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված] հանցակազմի սուբյեկտիվ կողմի բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ հանցանք կատարող անձը հասկանում է, որ իր գործողությունների (անգործության) արդյունքում կարող է հանրության համար վտանգավոր հետևանքներ առաջանան, այսինքն՝ նա գիտակցում է, որ իր կողմից թույլ տված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում հնարավոր է տեղի ունենա վթար և մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանը հասցվի վնաս, սակայն, ցուցաբերելով հանցավոր անգոյություն, այնուամենայնիվ, թույլ է տալիս նշված խախտումը՝ հույս ունենալով խուսափել հնարավոր ծանր հետևանքների առաջացումից:

Օբյեկտիվ կողմից նշված արարքը դրսևորվում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ, որոնցից առավել կոպիտ խախտումներն ամրագրված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ գործերով դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: Նշված հանգամանքի կարևորումը պայմանավորված է նրանով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված՝ ճանապարհային երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումները (լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը և այլն) վտանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը կարևոր նշանակություն ունի նաև հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին ճիշտ պատկերացում կազ-

մելու համար» (տե՛ս Արամ Մերյոժայի Սահակյանի գործով Վճռարեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ-1/0003/01/10 որոշման 19-20-րդ կետերը):

15. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Սահակյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով տրանսպորտային միջոցի վարորդի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը ճիշտ գնահատելու համար պետք է առանձնակի ուշադրություն դարձվի կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին:

Վճռարեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի կողմից դրսևորվում է անզգուշություն, այլ խոսքով՝ արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է անզգուշությամբ, սակայն ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները հաճախ խախտվում են գիտակցաբար: Ընդ որում, վարորդը, ելնելով կոնկրետ իրադրությունից, իր վարած տրանսպորտային միջոցի առանձնահատկություններից և այլ հանգամանքներից, երբեմն մաս գիտակցում է, որ իր կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տալու դեպքում մարդու (մարդկանց) կյանքի կամ առողջության համար վտանգ կառաջացնի, սակայն, ցուցաբերելով հանցավոր անզգուշություն, այնուամենայնիվ, թույլ է տալիս նշված խախտումը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անզգուշությամբ կատարված հանցանքը կարող է դրսևորվել ինքնավստահությամբ կամ անփութությամբ:

2. Հանցանքը համարվում է ինքնավստահությամբ կատարված, եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

3. Հանցանքը համարվում է անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հետևանքների նկատմամբ դրսևորվող անզգուշ մեղքի ձևը կարող է տարբեր կերպ արտահայտվել: Այսպես՝ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է իր արարքի (գործողության կամ անգործության) պոտենցիալ վտանգավորությունը, նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և չնայած դրան, հույսը դնելով իր հմտությունների, անձանց, սարքավորումների և այլնի վրա, թույլ է տալիս սահմանված անվտանգության կանոնների խախտում՝ առանց բավարար հիմքերի հույս ունենալով, որ վտանգավոր հետևանքները կկանխվեն:

Հանցավոր անփութության օրենսդրական բնորոշումը ցույց է տալիս, որ անզգուշության այս տեսակը բնութագրվում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը չնախատեսելով: Այլ խոսքով՝ անփութությամբ գործող անձը, իրական

հնարավորություն և պարտավորվածություն ունենալով նախատեսել վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բավարար շրջահայացություն, ուշադրություն և հոգատարություն չի ցուցաբերում այդ հետևանքների առաջացումը թույլ չտալու համար:

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անզգույշ մեղքի վերոգրյալ տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցավոր անփութության դեպքում անձը չի նախատեսում իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցում նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը: Մինչդեռ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է, որ իր կողմից թույլ տրված խախտման արդյունքում կարող են վտանգավոր հետևանքներ առաջանալ, այսինքն՝ նա գիտակցում է իր արարքի վտանգավորությունը և, չնայած դրան, թույլ է տալիս նշված խախտումը, ինչը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին:

18. Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել: Բացի այդ, դատարանները պետք է գնահատեն, թե տվյալ խախտման արդյունքում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը և որքանով էր ակնհայտ տրանսպորտային միջոցը վարողի համար իր կողմից թույլ տված խախտման և հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման միջև պատճառական կապի զարգացման հավանականությունը: Այլ խոսքով՝ համապատասխան գնահատականի պետք է արժանացվի կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց նշված հանգամանքների գնահատման հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին:

19. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից հետիոտնային անցումների հատման կանոնները խախտելը, այդ թվում՝ հետիոտնին չգիջելը, պարունակում է ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու մեծ հավանականություն: Նշված իրադրությունում, որպես կանոն, խախտումը թույլ տվողի համար բավականաչափ ակնհայտ է լինում խախտման արդյունքում վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը: Ճանապարհային

երթևեկության կանոնների նշված խախտումը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 6-րդ կետում:

Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ Է.Ասատրյանը «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով՝ բարձրված 20 տոննա բեռով, լուսացույցի կարմիր լույսի տակ կանգնած լինելով, հայտնաբերելով իր երթևեկության ուղղության լուսացույցով կարգավորվող հետիոտնային անցումով փողոցը հատող հետիոտներին և չհամոզվելով երթևեկության անվտանգության մեջ՝ վերսկսել է երթևեկությունը, հնարավորություն չի տվել հետիոտնին դուրս գալ վտանգավոր գոտուց, ինչի տեխնիկական հնարավորությունն ունեցել է, վրաերթի է ենթարկել Ա.Սելիքյանին և անզգուշությամբ նրան պատճառել մահ:

Ընդ որում, ամբաստանյալ Է.Ասատրյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ նկատել է իր առջևով հետիոտնային անցումով փողոցը հատող տղամարդուն և կնոջը, արգելակել և սպասել է մինչև տղամարդն անցել է մեքենայի դիմացից և կարծելով, թե կինը նույնպես դուրս է եկել վտանգավոր գոտուց, վերսկսել է երթևեկությունը: Կանգ գծից 7-8 մետր տարածություն անցնելուց հետո միայն նկատել է, որ վրաերթի է ենթարկել կնոջը (տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը):

20. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Է.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ուշադրություն չեն դարձրել թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին և այն պատշաճ գնահատականի չեն արժանացրել, ինչպես նաև որևէ միջոց չեն ձեռնարկել պարզելու թույլ տրված խախտման և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ Է.Ասատրյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը):

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Է.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս պատշաճ չեն գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ հաշվի չեն առել վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը:

21. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալ Է.Ասատրյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է հաշվի առել առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ միջին ծանրության հանցանք կատարելը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): *Ա.Ավետիսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «(...) «հանգամանքների պատահական զուգորդում» հասկացությունը գնահատողական կատեգորիա է և որոշվում է միայն դատարանի կողմից՝ գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հետազոտելու արդյունքում: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ, ի թիվս այլոց, հանգամանքների պատահական զուգորդում կարող են լինել.

1. իր կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ անձի մոլորությունը,

2. հանցավոր արարքներ կատարող անձանց խմբում մեկ անգամ պատահական գտնվելն ու այդ խմբի կողմից կատարված հանցագործությանը մեկ անգամ մասնակցելը,

3. մեղսագրվող հանցանքի կատարումն անձին ակնհայտորեն բնորոշ չլինելը,

4. հանցանքի կատարումը հոգեճնշող վիճակում, արտակարգ կամ այլ հանգամանքների ազդեցության տակ» (տե՛ս Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշման 22-րդ կետը):

Ինչպես երևում է Առաջին ատյանի դատարանի դատավճռի պատճառաբանական մասի վերլուծությունից, դրանում բացակայում են Է.Ասատրյանի կողմից արարքը հանգամանքների պատահական գուգորդմամբ կատարելը հիմնավորող փաստական տվյալները: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը չի նշել, թե գործում առկա ինչ հանգամանքների հետազոտման արդյունքում է հանգել այն հետևության, որ իրեն մեղսագրվող արարքը Է.Ասատրյանը կատարել է հանգամանքների պատահական գուգորդմամբ:

22. Վերը նշված խախտումները, որոնք կարող էին ազդել պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էդմոն Գարասիմի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մարտի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

34.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՇԴ/0002/01/11**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ մեղադրող՝</i>	Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
<i>պաշտպան՝</i>	Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 24-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի, Տիգրան Ալբերտի Հարությունյանի, Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, Արթուր Սեդրակի Հարությունյանի, Արմեն Էդուարդի Պետրոսյանի և Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի մարտի 20-ի որոշման դեմ մեղադրող Տ.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2010 թվականի հունիսի 2-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 11114510 քրեական գործը՝ մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ:



Նախաքննության մարմնի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումներով Տիգրան Հարությունյանը և Կարեն Հարությունյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 21-ին Արթուր Հարությունյանը և Էդգար Հարությունյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի հոկտեմբերի 22-ին Խաչատուր Ճաղարյանը և Գևորգ Ճաղարյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, Խ.Ճաղարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Գ.Ճաղարյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2010 թվականի նոյեմբերի 3-ին Գրիգոր Ճաղարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2010 թվականի նոյեմբերի 10-ին Անդրանիկ Աբրահամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի նոյեմբերի 15-ին Արմեն Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2010 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալներ Գևորգ Ճաղարյանի, Խաչատուր Ճաղարյանի, Տիգրան Հարությունյանի, Կարեն Հարությունյանի, Արթուր Հարությունյանի, Էդգար Հարությունյանի, Արմեն Պետրոսյանի և Անդրանիկ Աբրահամյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ:

Ամբաստանյալ Գրիգոր Ճաղարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի մարտի 20-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ս.Պողոսյանը:

Վճռաբեկ դատարանը 2012 թվականի հունիսի 1-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալներ Գևորգ Ճաղարյանին, Գրիգոր Ճաղարյանին, Խաչատուր Ճաղարյանին, Տիգրան Հարությունյանին, Կարեն Հարությունյանին, Արթուր Հարությունյանին, Էդգար Հարությունյանին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրվել են հետևյալ մեղադրանքները.

5.1 «Գևորգ Խաչատուրի Ճաղարյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ծարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր հոր՝ Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, եղբոր՝ Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի, պապու՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ միասին վեճի են բռնվել Տիգրան Աբրետի Հարությունյանի, նրա որդիներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, եղբոր որդի Արթուր Սեդրակի Հարությունյանի, վերջիններիս ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի և գործով չպարզված այլ անձանց հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայտյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար: Այդ ընթացքում Գևորգ Ճաղարյանը, մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, դանակը որպես զենք գործադրելով, փորձել է հարվածել Տիգրան Հարությունյանին, սակայն նրա գործողությունները խափանվել են դեպքին միջամտած անձանց կողմից:

Այսինքն՝ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով»:

5.2 «Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ծարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր հոր՝ Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, եղբոր՝ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, պապու՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ միասին վեճի են բռնվել Տիգրան Աբրետի Հարությունյանի, նրա որդիներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, եղբոր որդի Արթուր Սեդրակի Հարությունյանի, վերջիններիս ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի և գործով չպարզված այլ անձանց հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայտյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար: Այդ ընթացքում Գրիգոր Ճաղարյանը, մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, դանակը որպես զենք գործադրելով, հարվածել է Կարեն Հարությունյանին և գոտկային շրջանի ծակած-կտրած չթափանցող վերքի ձևով նրա առողջությանը պատճառել է թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով:

Այսինքն՝ Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 4-րդ մասով»:

5.3 «Խաչատուր Հրանտի Ճաղարյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ծարուրի փողոցի

27 շենքի մոտ, իր հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի, որդիների՝ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի և Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի հետ միասին վեճի են բռնվել Տիգրան Ալբերտի Հարությունյանի, նրա որդիներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, եղբոր որդի Արթուր Մեղրակի Հարությունյանի, վերջիններիս ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի և գործով չպարզված այլ անձանց հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայտյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Խաչատուր Հրանտի Ճաղարյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.4 «Տիգրան Ալբերտի Հարությունյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր որդիներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, եղբոր որդի Արթուր Մեղրակի Հարությունյանի, վերջիններիս ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի և գործով չպարզված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայտյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Տիգրան Ալբերտի Հարությունյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.5 «Կարեն Տիգրանի Հարությունյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր հոր՝ Տիգրան Ալբերտի Հարությունյանի, եղբոր՝ Էդգար Տիգրանի Հարությունյանի, հորեղբոր որդի Արթուր Մեղրակի Հարությունյանի, վերջիններիս ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի և գործով չպարզված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայտյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Կարեն Տիգրանի Հարությունյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.6 «Արթուր Մեղրակի Հարությունյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի փողոցի

27 շենքի մոտ, իր հորեղբայր Տիգրան Ալբերտի Հարությունյանի, հորեղբոր որդիներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի և ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գազիկի Աբրահամյանի և գործով չչարգված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայիոյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Արթուր Սեդրակի Հարությունյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.7 «Էդգար Տիգրանի Հարությունյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր հոր՝ Տիգրան Ալբերտի Հարությունյանի, եղբոր՝ Կարեն Տիգրանի Հարությունյանի, հորեղբոր որդի Արթուր Սեդրակի Հարությունյանի և ընկերներ Արմեն Էդուարդի Պետրոսյանի, Անդրանիկ Գազիկի Աբրահամյանի և գործով չչարգված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայիոյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Էդգար Տիգրանի Հարությունյանը կատարել է հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.8 «Արմեն Էդուարդի Պետրոսյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի փողոցի 27 շենքի մոտ, իր ընկերներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Արթուր Սեդրակի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, Անդրանիկ Գազիկի Աբրահամյանի և Տիգրան Ալբերտի Հարությունյանի և գործով չչարգված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայիոյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Արմեն Էդուարդի Պետրոսյանը կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

5.9 «Անդրանիկ Գազիկի Աբրահամյանը (...) մեղադրվում է նրանում, որ 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Շարուրի

փողոցի 27 շենքի մոտ, իր ընկերներ Կարեն Տիգրանի Հարությունյանի, Արթուր Սեդրակի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, Արմեն Էդուարդի Պետրոսյանի և Տիգրան Ալբերտի Հարությունյանի և գործով չպարզված այլ անձանց հետ միասին վեճի են բռնվել Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, նրա որդիներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և հոր՝ Հրանտ Հակոբի Ճաղարյանի հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայիոյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար:

Այսինքն՝ Անդրանիկ Գագիկի Աբրահամյանը կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 230-246):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի պատճառաբանական մասում նշել է. «(...) գործի նյութերի, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների ու մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի վերլուծությունից դատարանը եզրահանգում է, որ Խաչատուր և Գևորգ Ճաղարյաններին, Տիգրան, Կարեն, Արթուր և Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրված մեղադրանքների ձևակերպումն անհատականացված չէ: Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումից, ինչպես նաև մեղադրական եզրակացությունից չի երևում, թե ամբաստանյալներ Խաչատուր և Գևորգ Ճաղարյանները, Տիգրան, Կարեն, Արթուր և Էդգար Հարությունյանները, Արմեն Պետրոսյանը և Անդրանիկ Աբրահամյանն ինչ գործողություններ են կատարել, կոնկրետ ո՞վ ո՞ւմ է քաշքշել, ձեռքերով, ոտքերով ո՞վ ո՞ւմ է հարվածել, հարվածելու համար ի՞նչ առարկաներ են օգտագործվել և ո՞ւմ նկատմամբ, բացի այդ չի երևում, թե այդ հարվածների հետևանքով կոնկրետ ո՞ւմ ինչ վնաս է պատճառվել, ի՞նչ բնույթ է կրել այդ վնասը, ինչո՞ւմ է արտահայտվել հայիոյանքների խուլիգանական բնույթը և այլն: Այսինքն, ամբաստանյալներ Խաչատուր և Գևորգ Ճաղարյաններին, Տիգրան, Կարեն, Արթուր և Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման մեջ բացակայում են նրանց մեղսագրված արարքի քրեախրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ինչպես նաև այդ հանգամանքները հիմնավորող ապացույցները, այսինքն, գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ հիմնավորելու համար ամբաստանյալներին մեղսագրվող արարքների իրավաբանական որակման հիմքերը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 322-335):

7. Վերաքննիչ դատարանը, իր համաձայնությունն արտահայտելով Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա պատճառաբանությունների հետ, նշել է. «(...) Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ հիմնավորումների պայմաններում վերաքննիչ դատարանն այդպիսիք գտնում է] օրինական և պատճառաբանված (...): Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոնշյալ ամբաստանյալներին արդարացնելու մասին Առաջին ատյանի հետևությունները բավարար են և մյուս պատճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ դատավճիռը բեկանելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 101-119):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ, 258-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 8-րդ, 17-րդ, 23-25-րդ, 127-րդ, 202-րդ, 270-րդ, 309<sup>1</sup>-րդ, 358-րդ, 360-րդ, 366-րդ, 395-րդ, 396-րդ, 398-րդ հոդվածների պահանջները: Ըստ բողոքաբերի՝ սույն գործով առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պայմանները, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանի կողմից ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռում շարադրված հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին: Դատարանն արդարացման դատավճռի հիմքում դրել է գործի փաստական հանգամանքներից չբխող և ոչնչով չհիմնավորված հետևություն այն մասին, որ Խաչատուր Ծաղարյանին, Տիգրան, Կարեն, Արթուր, Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրվել են նույնաբովանդակ մեղադրանքներ, որոնք անհատականացված չեն, մեղադրանքների ձևակերպման մեջ բացակայում են նրանց մեղսագրված արարքների քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ինչի արդյունքում խախտվել են անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքները, ինչպես նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքը:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, իսկ դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը, անտեսել են օրենսդրի իմպերատիվ պահանջն այն մասին, որ մեղադրանքը ձևակերպելիս նախաքննության մարմինը, հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը նշելուց բացի, մյուս հանգամանքները նշում է այնքանով, որքանով որ դրանք պարզված են գործի տվյալներով: Տվյալ դեպքում, գործով նախաքննության ընթացքում պարզվել են խուլիգանության որոշակի հանգամանքներ, որոնք արտացոլվել են մեղադրանքների ձևակերպման մեջ և համապատասխանում են նյութական ու դատավարական օրենքի պահանջներին: Իսկ թե ով, ում, ինչ առարկայով է հարվածել, ով ինչ վնասվածք է ստացել, որևէ իրավական նշանակություն չունի, քանի որ հիշատակված անձանց մեղադրանք է առաջադրվել ոչ թե անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն կատարելու, այլ մի խումբ անձանց կողմից բռնության գործադրմամբ խուլիգանություն կատարելու համար:

Այն հանգամանքը, որ մի քանի անձանց կատարած արարքների օբյեկտիվ կողմը, հետևաբար նաև մեղադրանքի ձևակերպումները մնան են միմյանց, որևէ կերպ չի կարող վկայել կոլեկտիվ պատասխանատվության առկայության կամ անձնական պատասխանատվության սկզբունքի խախտման մասին: Մեղադրանքի բովանդակության բաղկացուցիչ մասն է կազմում նաև մեղադրանքի ձևակերպման ամփոփիչ մասը, որտեղ արձանագրվել է, որ խմբի կազմում կոնկրետ անձը կատարել է նկարագրված կոնկրետ արարքը:

Գատավճռի ուսումնասիրությունից չի երևում նաև, թե ինչ հիմնավորմամբ է Առաջին ատյանի դատարանը հանգել այն հետևության, որ տեղի է ունեցել ամբաստանյալների պաշտպանության իրավունքի խախտում և քրեադատավարական առկա իրավակարգավորման պայմաններում քրեական հետապնդման մարմնի կոնկրետ որ գործողություններն են հանգեցրել պաշտպանության իրավունքի խախտման:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ամբաստանյալ Գևորգ Ճաղարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ արդարացնելու մասով, հիմնավորված չէ:

Քրեական գործով Գևորգ Ճաղարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և նույն մեղադրանքով գործն ուղարկվել է դատարան: Առաջին ատյանի դատարանում Գևորգ Ճաղարյանին առաջադրված մեղադրանքը չի փոփոխվել, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի կարգով նրան նոր մեղադրանք չի առաջադրվել: Այսինքն՝ Գևորգ Ճաղարյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ Առաջին ատյանի դատարանը վերջինիս արդարացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մինչդեռ նրան նշված հոդվածով մեղադրանք երբևէ չի առաջադրվել: Առաջին ատյանի դատարանը, իրեն վերապահելով քրեական հետապնդման մարմնի լիազորություն, Գևորգ Ճաղարյանի արարքը նախ դիտել է որպես ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված, ապա հենց այդ նույն արարքի կատարման մեջ էլ նրան արդարացրել է:

Բացի այդ, շարադրելով և վերլուծելով ամբաստանյալ Գևորգ Ճաղարյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցները՝ բողոքաբերը եզրահանգում է արել առ այն, որ դեպքի պահին Գևորգ Ճաղարյանի մոտ դանակի առկայությունը և դրա գործադրման փաստը հավաստող ապացույցների բացակայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն անհիմն են: Ըստ բողոքաբերի՝ Գևորգ Ճաղարյանի մեղավորությունը դանակի գործադրմամբ խուլիգանություն կատարելու մեջ հաստատված է ապացույցների բավարար ամբողջությամբ:

10. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ սահմանված պատժի և ընտրված խափանման միջոց գրավն անփոփոխ թողնելու մասերով, նույնպես օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն:

Ամբաստանյալ Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ պատժի նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, օրենքով պաշտպանվող հարաբերությունների սցիյալական նշանակությունը, ինչի արդյունքում հանցավորի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատժ:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել, որ Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոց գրավը չվերացնելու և նրան դատարանի դահլիճում կալանքի չվերցնելու դեպքում էականորեն մեծանում է վերջինիս կողմից քրեական պատասխանատվությունից և նշանակված պատժը կրելուց խուսափելու հավանականությունը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն քեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշումը:

Գևորգ Ճաղարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և սահմանել կատարած հանցանքի բնույթին ու հասարակական վտանգավորությանը համաչափ պատիժ: Գևորգ Ճաղարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը վերացնել և նրան կալանքի վերցնել դատարանի դահլիճում:

Խաչատուր Ճաղարյանին, Տիգրան, Կարեն, Էդգար, Արթուր Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրանց նկատմամբ սահմանել կատարած հանցանքների բնույթին ու հասարակական վտանգավորությանը համաչափ պատիժ:

Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ նշանակված պատիժը խստացման առումով փոփոխել: Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը վերացնել և նրան կալանքի վերցնել դատարանի դահլիճում:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի ձևակերպումը որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման, ինչպես նաև հանցակիցների քրեաիրավական պատասխանատվության անհատականացման միջոց դիտարկելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Անդրադառնալով բողոքաբերի կողմից բարձրացված հարցերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք, ըստ էության, հանգում են մեկ հարցի, այն է՝ սույն գործով ամբաստանյալներ Խաչատուր Ճաղարյանին, Տիգրան, Կարեն, Արթուր, Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրված մեղադրանքների ձևակերպմանը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի ձևակերպումն անհրաժեշտ է քննարկել երկու՝ դատավարական և նյութական ասպեկտներով: Մասնավորապես, քննարկել մեղադրանքի ձևակերպման համատեքստում արդար դատաքննության իրավունքի ապահովման, ինչպես նաև հանցակիցների քրեաիրավական պատասխանատվության անհատականացման հարցերը:

*1. Արդար դատաքննության իրավունքի ապահովումը մեղադրանքի ձևակերպման համատեքստում*

14. Մեղադրանք հասկացության օրենսդրական ձևակերպումը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետում: Նշված իրավանորմի համաձայն՝ մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախա-



տեսված կարգով ներկայացված հիմնավորումն է՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների իրացման առումով մեղադրանքը բնորոշվում է որպես լիազորված պետական մարմնի կողմից անձին արված պաշտոնական ծանուցում այն մասին, որ հիմքեր կան պնդելու, թե նա քրեական հանցանք է գործել (տե՛ս *Eckle v. Germany*, 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, կետ 73):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

2. Սույն հոդվածի առաջին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են (...) մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները (...):

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը (...):

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել *Ս. Պասյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ

անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն» (տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը):

15. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը:

Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղադրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը:

16. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին (...)»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

ա) շտապ կարգով և մանրամասն, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ձեռքարկվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են (...) այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քննիչը, հավաստիանալով մեղադրյալի ինքնության մեջ, նրան հայտարարում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և բացատրում առաջադրված մեղադրանքի էությունը: Այդ գործողությունների կատարումը մեղադրյալի և քննիչի ստորագրությամբ հաստատվում է (...):»:

Մեջբերված դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ համապատասխան փաստաթղթերում մեղադրանքի ամրագրումը հանդիսանում է այն դատավարական միջոցը, որով ապահովվում է քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքը տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջների բացահայտման հարցը պետք է քննարկել արդար դատաքննության հիմնարար իրավունքի համատեքստում:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մախադեպային իրավունքից: Մասնավորապես, եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ այն հարցը, թե արդյոք կոնկրետ գործով մեղադրյալին բավարար տեղեկատվություն տրամադրվել է առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին, պետք է միշտ ուսումնասիրվի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոմվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով մախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում (տե՛ս *Deweere v. Belgium*, 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռը, կետ 56, *Artico v. Italy*, 1980 թվականի մայիսի 13-ի վճիռը, կետ 32, *Goddi v. Italy*, 1984 թվականի ապրիլի 9-ի վճիռը, կետ 28, *Colozza v. Italy*, 1985 թվականի փետրվարի 12-ի վճիռը, կետ 26):

17. Արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրացման կարևորագույն երաշխիքներից են մրցակցության սկզբունքը և պաշտպանության իրավունքը: Մրցակցության սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *U. Puzurjanski* և *U. Թումանյանի* գործով կայացված որոշման մեջ (*mutatis mutandis* տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռ-ազմիկի Թումանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԴԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետը):

Պաշտպանության իրավունքի, մասնավորապես, մեղադրական եզրակացության համատեքստում դրա իրացման ապահովման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս. Նալբանդյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում» (տե՛ս Սուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԴ-2/0144/01/09 որոշման 24-րդ կետը):

Մեկ այլ՝ *Ա. Պասյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր (արարքի փաստական նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, դատակոչի ենթակա անձանց շրջանակը և այլն) էական նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար» (տե՛ս Արկադի Պատվականի Պասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 19-րդ կետը):

18. Պաշտպանության իրավունքը՝ որպես մեղադրյալին վերապահված դատավարական իրավունքների ամբողջություն, հնարավորություն է տալիս վերջինիս հանդես գալ դատավարության հիմքնուրույն սուբյեկտի կարգավիճակով, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում՝ պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Մրցակցության սկզբունքը և պաշտպանության իրավունքը կոչված են դատավարությունը համապատասխանեցնելու արդարության չափորոշիչներին և ապահովելու իրավունքների արդյունավետ վերականգնում, իսկ քրեական արդարադատության շրջանակներում վերագրյալն առնվազն ենթադրում է տեղի ունեցած հանցագործության մանրամասների հաստատումը, դրանց ճշգրիտ իրավաբանական գնահատական տալը, հասարակությանը և առանձին անհատներին հասցված վնասի, ինչպես նաև հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի իրական մեղքի ամբողջական բացահայտումը:

19. Մրցակցային դատավարության ընթացքում պաշտպանությունը հանդես է գալիս որպես մեղադրանքի հակադրում՝ նպատակ ունենալով հերքել այն և պաշտպանել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքներն ու շահերը: Այս կարևորագույն գործառնության արդյունավետ իրականացման համար պաշտպանության կողմն առնվազն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերին, դրանց վերաբերյալ ներկայացնելու սեփական դիրքորոշումը և մասնակցելու ապացուցման գործընթացին: Պաշտպանության իրավունքի իրականացումը, ինչպես նաև մրցակցային դատավարության ապահովումն անհնար են, եթե մեղադրյալը տեղյակ չէ, թե ինչ անօրինական արարքի կատարման մեջ է մեղադրվում և ինչ ապացույցների հիման վրա:

Ինչպես արդեն նշվեց, մեղադրանքի ձևակերպումը միակ հնարավոր դատավարական միջոցն է, որով հնարավոր է դառնում իրացնել անձի իրավունքը տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Հետևաբար մեղադրանքի ձևակերպումը կարելի է բնորոշել որպես մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի ապահովմանն ուղղված երաշխիք, որը հնարավոր է դարձնում առաջադրված մեղադրանքից օրինական միջոցներով պաշտպանվելը և թույլ է տալիս հասնել քրեական վարույթի հիմնական՝ մեղադրյալի անմեղության կամ մեղավորության հարցի հստակ լուծմանը:

Վերոգրյալից Վճռաբեկ դատարանը հետևություն է անում այն մասին, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր, մասնավորապես, արարքի փաստական նկարագրությունը, այդ նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, վճռորոշ նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար:

20. Պաշտպանության իրավունքի իրականացման համար մեղադրանքի ձևակերպման կարևորության հարցի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները մեղադրյալին իրավունք են վերապահում տեղեկացված լինելու ոչ միայն մեղադրանքի համար առիթ հանդիսացած նյութական փաստերի մասին, այլ նաև այդ փաստերի մանրամասն իրավական որակման մասին (տե՛ս Pelissier and Sassi v. France, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, կետ 51): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («բ») ենթակետի մասով բերված բողոքի վերաբերյալ Եվրոպական դատարանը գտել է, որ («ա») և («բ») ենթակետերը կապված են միմյանց հետ, և որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո (տե՛ս Pelissier and Sassi v. France, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, կետ 54):

21. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: Նույն կերպ անընդունելի է, երբ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում հանցակիցներին ներկայացվում է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունները, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայագրկման:

*II. Հանցակիցների քրեաիրավական պատասխանատվության անհատականացումը*

22. ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համակատարողները հանցագործության համար ենթակա են պատասխանատվության սույն օրենսգրքի Հատուկ մասի նույն հոդվածով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին:

2. Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

3. Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար:

(...)»:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում ամրագրված հանցակցության դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են *Ա.Մաթևոսյանի* և *Ռ.Հարությունյանի* գործով կայացված որոշման մեջ (տե՛ս *mutatis mutandis* Ալիկ Մաթևոսյանի և Ռ-աֆիկ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-30-րդ կետերը):

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում ամրագրված դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել են *Հ.Սարգսյանի* և *այլոց* գործով կայացված որոշման մեջ (տե՛ս *mutatis mutandis* Հակոբ Սարգսյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԳ/0136/01/10 որոշման 12-18-րդ կետերը): Նշված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Նախնական համաձայնությամբ գործող անձանց պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի

41-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործության մասնակիցները մինչև հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններն սկսելը պայմանավորվում են հանցանքը համատեղ կատարելու մասին: Ընդ որում, համաձայնությունը ձեռք է բերվում խմբի անդամների կողմից գործողությունների համատեղ կատարման ուղղվածության, հանցագործության կատարման տեղի, ժամանակի, եղանակի և միջոցների, ինչպես նաև խմբի անդամների միջև դերաբաշխման շուրջ (...» (տե՛ս Հակոբ Սարգսյանի և այլոց գործով Վճռարեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԳ/0136/01/10 որոշման 18-րդ կետը):

24. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի*, ինչպես նաև *Հ.Սարգսյանի և այլոց* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է հաստատել, որ նա մասնակցել է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը, որն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում և որի կապակցությամբ հաստատված է նրա մեղքը: Այլ խոսքով՝ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս նրանցից յուրաքանչյուրի արարքը պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ մյուս բոլոր հանցակիցների հետ համակցության մեջ՝ պարզելով հանցակիցներից յուրաքանչյուրի արարքի հանրային վտանգավորությունն ու հակաիրավականությունը և հետևաբար նաև հանցակիցներից յուրաքանչյուրի արարքում հանցագործության հատկանիշների և քրեական պատասխանատվության հիմքերի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռարեկ դատարանը գտնում է, որ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի և գնահատի հանցակիցների կողմից համատեղ կատարված բոլոր արարքները, ինչպես նաև այդ արարքների հետևանքները՝ արդյունքում ուրվագծելով հանցակիցներից յուրաքանչյուրի՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու սահմաններն ու ծավալները:

25. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դիրքորոշման լույսի ներքո համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածում ամրագրված՝ ըստ մեղքի պատասխանատվության և 10-րդ հոդվածում ամրագրված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր, այդ թվում՝ համատեղ կատարված հանցավոր արարքն անհատական բնույթ ունի, ուստի հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից և բացառել կատարված արարք(ներ)ի համար հանցակիցներին «հավասարաչափ», այսինքն՝ ոչ ըստ յուրաքանչյուր հանցակցի մեղքի քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Իրականացնելով պատասխանատվության անհատականացում՝ վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր հանցակցի մասով պետք է պարզի, թե ինչպիսին է եղել նրա դերը հանցավոր վարքագծի դրսևորման ժամանակ, ինչ մասնակցության աստիճան է նա ունեցել, ինչ ձևով է դրսևորվել այդ մասնակցությունը՝ ակտիվ, թե՛ պասիվ:

26. Վճռարեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասում իր ամրագրումը ստացած՝ հանցագործությանը հանցակիցներից յուրա-

քանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը հաշվի առնելու պարտականությունն առկա է ոչ միայն հանցակիցներին պատասխանատվության ենթարկելու, այն է՝ գործով դատավճիռ կայացնելու փուլում, այլ նաև հանցակիցներից յուրաքանչյուրին մեղադրանք առաջադրելիս նրանց արարք(ներ)ին քրեախրավական որակում տալու փուլում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակիցներից յուրաքանչյուրի նկատմամբ կոնկրետ հանցակազմի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է հաջորդաբար պարզել, թե՝

ա) ինչ արարք է կատարվել և արդյոք դրանում առկա է հանցակազմ,

բ) արդյոք արարքի կատարմանը մասնակցել են երկու կամ ավելի անձինք և արդյոք նրանց գործողություններում (անգործությունում) առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հանցակցության ձևերից որևէ մեկը,

գ) հանցակիցներից յուրաքանչյուրը կոնկրետ ինչ գործողություն (անգործություն) է կատարել,

դ) հանցակիցներից յուրաքանչյուրը մասնակցության ինչ աստիճան է ունեցել հանցավոր արարքի կատարմանը,

ե) հանցակիցներից յուրաքանչյուրին ինչ ծավալով պետք է մեղսագրվի կատարված արարքը:

27. Ամփոփելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցությամբ կատարված արարքը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղի է ունեցել հանցավոր արարք, որի կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, ովքեր գործել են համատեղ, դիտավորյալ և կատարել են դիտավորյալ հանցագործություն: Ուստի, իրավախախտման փաստը պետք է կոնկրետացվի յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքները անհատականացվեն՝ հաշվի առնելով անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն այս հանգամանքների հստակ պարզման և դատավարական փաստաթղթերում ամրագրման դեպքում է հնարավոր լուծել այդ արարքները կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը:

28. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Խաչատուր Ճաղարյանին, Տիգրան, Կարեն, Արթուր, Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով, և նրանցից յուրաքանչյուրին առաջադրված մեղադրանքը շարադրվել է հետևյալ կերպ. 2010 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Երևանի Շարուրի փողոցի 27 շենքի մոտ մի կողմից Հրանտ, Խաչատուր, Գրիգոր և Գևորգ Ճաղարյանները, մյուս կողմից Տիգրան, Կարեն, Էդգար, Արթուր Հարությունյանները, Արմեն Պետրոսյանը, Անդրանիկ Աբրահամյանը և գործով չպարզված այլ անձինք վճեի են բռնվել, որի ընթացքում կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, խանգարելով շրջակա շենքերի բնակիչների հանգիստը և հասարակական օբյեկտների բնականոն աշխատանքը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով ներկաների նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ խուլիգանական հայհոյանքներ են տվել, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար (տե՛ս սույն որոշման 5.3-5.9-րդ կետերը):



Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ քրեական հետապնդումն իրականացնող մարմինն ամբաստանյալներին՝ Խաչատուր Ճաղարյանին, Տիգրան, Կարեն, Արթուր, Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին մեղադրանք առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով, չի հստակեցրել հանցակիցներից յուրաքանչյուրի կատարած արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը: Մեղադրանքի կողմն ամբաստանյալներին առաջադրել է բացարձակապես նույնաբովանդակ մեղադրանքներ՝ սահմանափակվելով նրանց կատարած արարքների ընդհանրական նկարագրությամբ, այն է՝ շուրջ 10 թույն տևողությամբ տվել են խուլիգանական հայիռյանքներ, քաշքշել և ձեռքերով, ոտքերով ու տարբեր առարկաներով հարվածել են իրար, և չի կոնկրետացրել հանցավոր արարքի կատարման ժամանակ ամբաստանյալներից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունների շրջանակը, մասնավորապես այն, թե կոնկրետ ո՞վ ո՞ւմ է քաշքշել, ձեռքերով, ոտքերով ո՞վ ո՞ւմ է հարվածել, հարվածելու համար ո՞վ ի՞նչ առարկա է օգտագործել և ո՞ւմ նկատմամբ, հարվածների հետևանքով կոնկրետ ո՞ւմ է վնաս պատճառվել, ի՞նչ բնույթ է կրել այդ վնասը և այլն:

29. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-27-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե նրանցից յուրաքանչյուրին մեղսագրված արարքն ինչպես է դրսևորվել: Մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում չի ապահովվել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքը տեղեկանալու իրենց դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, հետևաբար չի ապահովվել նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի և մրացակցային դատավարության սկզբունքի անխափան իրականացումը, որպիսի պայմաններում արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջները բավարարող դատաքննությունն անհնար է:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում, երբ յուրաքանչյուր հանցակցի մասով իրավախախտման փաստը կոնկրետացված չէ, իսկ դրա հանգամանքներն անհատականացված չեն, հնարավոր չէ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան լուծել հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը:

30. Սույն որոշման նախորդ կետում առկա եզրահանգման լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքաբերի այն փաստարկին, որ սույն գործով որևէ իրավական նշանակություն չունի, թե ով, ում, ինչ առարկայով է հարվածել, ով ինչ վնասվածք է ստացել, քանի որ հիշատակված անձանց մեղադրանք է առաջադրվել ոչ թե անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն կատարելու, այլ մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտել[ն է], որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով գույքորդված խուլիգանության համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է նախատեսում մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքի կատարման համար:

Ինչպես երևում է շարադրված իրավանորմի վերլուծությունից, անձին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու համար դեռ բավարար չէ, որ նա խմբի կազմում կատարած լինի խուլիգանություն: Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որակելու համար անհրաժեշտ նախապայման է, որ հանցավորի գործողությունները, ի թիվս այլնի, գույքորդվեն անձի նկատմամբ բռնության գործադրմամբ: Հետևաբար խմբի կազմում բռնության գործադրմամբ խուլիգանություն կատարելու համար մեղադրանք առաջադրելու դեպքում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դատավարական փաստաթղթերում արտացոլել, թե հանցակիցներից յուրաքանչյուրն ինչպիսի բռնություն է գործադրել և ում նկատմամբ:

31. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ ամբաստանյալներ Խաչատուր Ծաղարյանին, Տիգրան, Կարեն, Արթուր, Էդգար Հարությունյաններին, Արմեն Պետրոսյանին և Անդրանիկ Աբրահամյանին առաջադրված մեղադրանքներն անհատականացված չեն (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս առումով ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավորված, իսկ բողոք բերած անձի փաստարկները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) հիմնազուրկ են:

### *III. Բողոքաբերի բարձրացրած մյուս հարցերը*

32. Անդրադառնալով բողոքի հեղինակի այն պնդմանը, թե ամբաստանյալ Գևորգ Ծաղարյանի մեղավորությունը դանակի գործադրմամբ խուլիգանություն կատարելու մեջ հաստատված է (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, դրանք իրենց համակցության մեջ գնահատելով, հանգել է հիմնավոր հետևության այն մասին, որ ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատված չէ, որ դեպքի ժամանակ Գևորգ Ծաղարյանը, դանակը որպես զենք գործադրելով, փորձել է հարվածել Տիգրան Հարությունյանին, սակայն նրա գործողությունները խափանվել են այլ անձանց կողմից:

Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանների հետևությունները հետազոտված ապացույցների չհամապատասխանելու և Գևորգ Ծաղարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ դատական ակտերը բեկանելու համար:

33. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու էր Գևորգ Ճաղարյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քանի որ նրան այդպիսի մեղադրանք երբևէ չի առաջադրվել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ»:

Տվյալ դեպքում քրեական հետապնդումն իրականացնող մարմինն ամբաստանյալ Գևորգ Ճաղարյանին որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), մինչդեռ Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում ճանաչել և հռչակել է Գևորգ Ճաղարյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը), ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Այդուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշման մեջ շարադրված հիմնավորումների պայմաններում Գևորգ Ճաղարյանի անմեղությունը կասկած չի հարուցում, հետևաբար արձանագրված քրեադատավարական օրենքի էական խախտումն արդարացման դատավճիռը բեկանելու հիմք հանդիսանալ չի կարող:

34. Անդրադառնալով բողոքաբերի մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, կատարված հանցագործության, հանցավորի անձի, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման արդյունքում, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին համապատասխան, ամբաստանյալ Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրագործմանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը հիմք կտար կարճելու, թե Գրիգոր Ճաղարյանին դատարանի դահլիճում կալանքի չվերցնելու դեպքում էականորեն մեծանում է նրա՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը: Այդպիսիք բացակայում են նաև բերված բողոքում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գրիգոր Ճաղարյանի նկատմամբ սահմանված պատժի և ընտրված խափանման միջոց գրավն անփոփոխ թողնելու մասերով ստորադաս դատարանների դատական ակտերի օրինական, հիմնավորված և պատճառաբանված չլինելու մասին բողոքաբերի փաստարկները հիմնագուրջ են:

35. Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում ստորադաս դա-

տարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված են, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի, Խաչատուր Հրանտի Ճաղարյանի, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի, Տիգրան Ալբերտի Հարությունյանի, Կարեն Տիգրանի Հարությունյանի, Էդգար Տիգրանի Հարությունյանի, Արթուր Սեդրակի Հարությունյանի, Արմեն Էդուարդի Պետրոսյանի և Անդրանիկ Գագիկի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մարտի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

35.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0081/01/ 11**

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քրեական պալատը  
(այսուհետ՝ Վճարելի դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ՝ տուժող՝</i>	Ի.ԲԱԲԱԶԱՆՅԱՆԻ
<i>պաշտպան՝</i>	Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սելինե Միշայի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 19-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի և տուժող Ի.Բաբաջանյանի վճարելի բողոքները,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2010 թվականի հունիսի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13130110 քրեական գործը:

2010 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ Սելինե Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 118-րդ հոդվածով:

Քննիչի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ թիվ 13130110 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 15101210 քրեական գործը:

2010 թվականի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացվել թիվ 13130110 քրեական գործից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Իրինա Բաբաջանյանի և մյուսների վերաբերյալ մասն անջատելու մասին, և քրեական գործին շնորհվել է 15116210 համարը:

2011 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ թիվ 15116210 քրեական գործը միացվել է թիվ 13130110 քրեական գործին:

2011 թվականի ապրիլի 13-ին որոշում է կայացվել Ի.Բաբաջանյանի և մյուսների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ և 178-րդ հոդվածներով քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2011 թվականի ապրիլի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունվարի 11-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Մարգարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ամբաստանյալ Մ.Մարգարյանի հետ տուժող Ա.Ստեփանյանի հաշտվելու պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճռով ամբաստանյալ Մ.Մարգարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնգրավմամբ, սակայն ոչ ավելի 25.000.000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամից: Վճռվել է նաև տուժող և քաղաքացիական հայցվոր Ի.Բաբաջանյանի քաղաքացիական հայցը մերժել, իսկ տուժող և քաղաքացիական հայցվոր Կ.Ջաբարյանի քաղաքացիական հայցը՝ թողնել առանց քննության:

3. Ամբաստանյալ Մ.Մարգարյանի և տուժող Ի.Բաբաջանյանի վերաբնիչ բողոքների քննության արդյունքում Վերաբնիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ վերաբնիչ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաբնիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպան Վ.Գրիգորյանը և տուժող Ի.Բաբաջանյանը:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի և տուժող Ի.Բաբաջանյանի վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Մ.Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2009 թվականի հունիսից մինչև 2010 թվականի ապրիլն ընկած ժամանա-

կահատվածում Երևան քաղաքի Մ.Խորենացի թիվ 33 հասցեում գտնվող «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայի մի խումբ աշխատակիցների վստահությունը չարաշահելու՝ նրանց ոսկե զարդերը վերավաճառելու և գումարները վճարելու, կամ գրավադրելու, ապա վերադարձնելու կամ իբրև պարտք գումարներ վերցնելու ու վերադարձնելու պատրվակով, միասնական հանցավոր մտադրությամբ, շարունակաբար խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 67.117.994 ՀՀ դրամին համարժեք ոսկեղեն և գումար: Այսպես՝

2009 թվականի հունիսից օգոստոս ամիսների ընթացքում Ի.Բաբաջանյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը վճարելու պատրվակով «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 25.000 ԱՄՆ դոլարին համարժեք 961,5 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, որի դիմաց որպես վստահության երաշխիք մաս-մաս վերադարձրել է 9.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 16.000 ԱՄՆ դոլարին համարժեք 5.867.360 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2009 թվականի հուլիսի 4-ից մինչև 2010 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում Գոհար Գալստյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և չորս օրը մեկ 100-150-ական ԱՄՆ դոլարով գումարը վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 41.299 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության, 1652 գրամ ընդհանուր քաշով տարբեր տեսակի ոսկե զարդեր, որոնց դիմաց որպես վստահության երաշխիք՝ նույն ժամանակահատվածում մաս-մաս վերադարձրել է 12.799 ԱՄՆ դոլար, իսկ մնացած՝ 28.500 ԱՄՆ դոլար գումարին համարժեք ոսկյա զարդերը հափշտակել է: Բացի այդ, 2010 թվականի մարտի 25-ին՝ մեկ օրով գրավ դնելու և վերադարձնելու պատրվակով նրանից վերցրել է 47.000 ԱՄՆ դոլար գումար ընդհանուր արժեքով, 500 գրամ քաշով ադամանդե և այլ թանկարժեք քարերով տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն հիշյալ ոսկյա զարդերը նույնպես հափշտակել է: Այսպիսով, խարդախությամբ նրանից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 75.500 ԱՄՆ դոլարին համարժեք 28.740.893 ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկե զարդեր:

2009 թվականի սեպտեմբերին Վահագն Սիքալեյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը մինչև 2009 թվականի դեկտեմբերը վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 2.800.000 ՀՀ դրամին համարժեք 432 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն խոշոր չափերի՝ ընդհանուրը 2.800.000 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2009 թվականի նոյեմբերից մինչև 2010 թվականի մարտի 5-ն ընկած ժամանակահատվածում Գոհարիկ Մկրտչյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը մինչև 2010 թվականի ապրիլի 15-ը վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 1.200.000 ՀՀ դրամ գումարին համարժեք 120 գրամ քաշով տարբեր տեսակի ոսկե զարդեր և իբր որպես պարտքի գումար՝ 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.000.000 ՀՀ դրամ, սակայն առանձնապես խոշոր չափերի՝ 3.200.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով ոսկե զարդերն ու գումարը հափշտակել է:

2010 թվականի փետրվարի 28-ից մինչև մարտի 26-ն ընկած ժամանակահատվածում «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում Նելլի Գևորգյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և 100-ական ԱՄՆ դոլարով գումարը վճարելու

լու պատրվակով պարբերաբար վերցրել է 4.395 ԱՄՆ դոլարին համարժեք 56 գրամ՝ 585 հարգի, և 61.6 գրամ՝ 750 հարգի, ոսկե զարդեր, որոնց դիմաց որպես վստահության երաշխիք՝ մաս-մաս տվել է 800 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած զարդերը հափշտակել է: Բացի այդ, 2010 թվականի մարտի 26-ին այս անգամ արդեն գրավադրելու և մինչև ապրիլի 15-ը վերադարձնելու պատրվակով վերցրել է 10.496 ԱՄՆ դոլար գումարին համարժեք 301 գրամ՝ 585 հարգի և 39 գրամ՝ 750 հարգի տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն հիշյալ ոսկե զարդերը նույնպես հափշտակել է: Այսպիսով, Ն.Գևորգյանից խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 5.263.961 ՀՀ դրամի ոսկե զարդեր:

2010 թվականի փետրվարից մինչև մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում Լիլիթ Ավետիսյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը մինչև նույն տարվա մարտի 25-ը վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 1.080.000 ՀՀ դրամին համարժեք 69 գրամ քաշով՝ 750 հարգի տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն հափշտակել է խոշոր չափերի՝ ընդհանուր 1.080.000 ՀՀ դրամի ոսկե զարդեր:

2010 թվականի մարտի 1-ից 23-ն ընկած ժամանակահատվածում Կարինե Չաքրյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ գրավադրելու և 10 օր անց ոսկեղենը վերադարձնելու պատրվակով «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 17.390.000 ՀՀ դրամին համարժեք 1350 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, որի դիմաց որպես վստահության երաշխիք մաս-մաս տվել է 788.420 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած առանձնապես խոշոր չափերի՝ 16.601.580 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2010 թվականի մարտի սկզբին Ջավարդ Դավթյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը 10 օր անց վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 555.000 ՀՀ դրամին համարժեք 55 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն խոշոր չափերի՝ ընդհանուր 555.000 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2010 թվականի ապրիլի 1-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Պարզև Նազարյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը վճարելու պատրվակով «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 2.200.000 ՀՀ դրամին համարժեք 237 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, սակայն խոշոր չափերի՝ ընդհանուր 2.200.000 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2010 թվականի ապրիլի 2-ին Ջուլիետա Քոչարյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել 1.419.156 ՀՀ դրամին համարժեք 135 գրամ քաշի տարբեր տեսակի ոսկե զարդեր, որի դիմաց որպես վստահության երաշխիք մաս-մաս տվել է 2.600 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած զգալի չափերի՝ ընդհանուր 380.000 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:

2010 թվականի ապրիլի սկզբին Լուսինե Մանուչարյանի վստահությունը չարաշահելու եղանակով՝ վերավաճառելու և գումարը նույն ամսվա վերջին վճարելու պատրվակով, «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայում նրանից վերցրել է 1.539.200 ՀՀ դրամին համարժեք 4.160 ԱՄՆ դոլարի 157 գրամ քաշով տարբեր տեսակի ոսկյա զարդեր, որի դիմաց որպես վստահության երաշխիք մաս-մաս տվել է 3.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած զգալի չափերի՝ ընդհանուր 429.200 ՀՀ դրամի ոսկե զարդերը հափշտակել է:



Բացի այդ, նա 2010 թվականի օգոստոսի 10-ին Երևան քաղաքի Տիգրան Մեծի 36րդ շենքի 21 բնակարանում սույն գործով նրա դեմ տրված ցուցմունքների շուրջ անհիմն վիճարանել է Արմենուհի Ստեփանյանի հետ, որի ընթացքում ծեծի է ենթարկել վերջինիս» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 259-261, 310-312):

6. Դատաքննության արյուներում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ տուժողներ Իրինա Բաբաջանյանից և Պարզ Եսաբաբյանից խարդախությամբ ոսկյա զարդեր հափշտակելու դրվագներով ամբաստանյալ Մ.Մարգարյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ, նշված արարքների կատարման մեջ Մ.Մարգարյանին մեղավոր ճանաչելու համար բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, ուստի Առաջին ատյանի դատարանը դրանք հանել է Մ.Մարգարյանին առաջադրված մեղադրանքի ընդհանուր ծավալից՝ նրան մեղավոր ճանաչելով մյուս դրվագներով առաջադրված մեղադրանքում (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 191):

7. Առաջին ատյանի դատարանը դատավճռի՝ «Դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները» բաժնում արձանագրել է. «Դատաքննությամբ, գործի տվյալներով, դատարանը հիմնավորված է համարում հետևյալը.

Ամբաստանյալ Մելինե Միշայի Մարգարյանը, իրեն վերագրվող ինը դրվագներից հինգով միանձնյա, իսկ **չորս դրվագներով՝ հանցավոր համաձայնության գալով նախաքննության մարմնի կողմից որպես տուժող ներգրավված Իրինա Բաբաջանյանի հետ**, 2009 թվականի հունիսից մինչև 2010 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքի Մ.Խորենացի թիվ 33 հասցեում գտնվող «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայի մի խումբ աշխատակիցներից խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի հասնող գույք հափշտակելու միասնական դիտավորությամբ, շարունակաբար, վերավաճառելու և նույն ժամանակահատվածում գումարները վերադարձնելու, ինչպես նաև կարճ ժամանակով գրավադրելու և վերադարձնելու պատրվակներով **վերցրել են** տարբեր տեսակի ոսկյա զարդեր, սակայն վերավաճառելու պատրվակով վերցրած ոսկեղենը, ինչպես նաև գրավատներում գրավադրված ոսկյա զարդերի դիմաց ստացված գումարների՝ առանձնապես խոշոր չափ կազմող մասը **չեն վերադարձրել**, որպես վստահության երաշխիք՝ 100-ական ԱՄՆ դոլար գումարներ են վերադարձրել և բերելով տարբեր պատճառաբանություններ՝ հուսադրել են, իբրև թե կվերադարձնեն գումարներն ու ոսկեղենը, սակայն **խաբեությամբ հափշտակել են դրանք**: Բացի այդ, հայտարարելով, իբրև թե շահավետ գործարքի համար սեղմ ժամկետով շտապ գումար է անհրաժեշտ, Մ.Մարգարյանն այդ պատրվակով նույնպես կանխիկ գումար է վերցրել և հափշտակել: **Այսպիսով, ամբաստանյալ Մ.Մարգարյանը որպես տուժող ներգրավված Իրինա Բաբաջանյանի հետ հանցավոր համաձայնությամբ** կամ միանձնյա, տարբեր դրվագներով տուժողներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 59.050.634 /հիսուսհինը միլիոն հիսուն հազար վեց հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկյա զարդեր և կանխիկ գումար հետևյալ հանգամանքներում.

Ի.Բաբաջանյանի միջոցով ծանոթանալով վերջինիս բարեկամուհի Գ.Գալստյանի հետ՝ 2009 թվականի հուլիսի 4-ից մինչև 2010 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում **Ի.Բաբաջանյանի հետ միասին Գ.Գալստյանի վստահությունը չարաշահելու եղանակով (...)** Մ.Մարգարյանը և **Ի.Բաբաջանյանը** տուժող Գ.Գալստյանից **հափշտակել են** առանձնապես խոշոր չափերի՝ 75.500 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարին համարժեք 28.740.893 ՀՀ դրամ ընդհանուր արժողության ոսկյա զարդեր:

(...)

2010 թվականի մարտի 1-ից 23-ն ընկած ժամանակահատվածում ամբաստանյալ **Մ.Մարգարյանը և տուժող Ի.Բարաջանյանը տուժող Կարինե Չարարյանի վստահությունը չարաշահելու եղանակով (...)** առանձնապես խոշոր չափերի՝ 16.601.580 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով ոսկյա զարդերը **հափշտակել են:**

(...)

Բացի այդ, ամբաստանյալ **Մ.Մարգարյանը և որպես տուժող ներգրավված Իրինա Բարաջանյանը, հանցավոր համաձայնությամբ,** 2010 թվականի ապրիլի 2-ին, **տուժող Ջուլիետա Քչարյանի վստահությունը չարաշահելու եղանակով (...)** զգալի չափերի՝ 380.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով ոսկյա զարդերը **հափշտակել են:**

(...)

2010 թվականի ապրիլի սկզբին, ամբաստանյալ **Սելինե Մարգարյանը և որպես տուժող ներգրավված Իրինա Բարաջանյանը, հանցավոր համաձայնությամբ, տուժող Լուսինե Մանուչարյանի վստահությունը չարաշահելու եղանակով (...)** զգալի չափերի՝ 429.200 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով ոսկյա զարդերը **հափշտակել են (...)**» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 181-182):

8. Քննիչի 2011 թվականի ապրիլի 13-ի որոշման մեջ արձանագրված է. «(...) Վերոգրյալը հիմնավորվել է մահ Ի.Բարաջանյանի ցուցմունքներով, ինչպես մահ նրա դեմ հաղորդում և ցուցմունք տված անձանց հետ առերես հարցաքննություններով, որ իրականում նրանց ոսկեղենն ու գումարները խարդախությամբ հափշտակել է Մ.Մարգարյանը, այսինքն, որ Ի.Բարաջանյանն ինքն է տուժել Մ.Մարգարյանի հանցավոր գործողությունների հետևանքով և որ հիշյալ անձանցից գույք հափշտակելու դիտավորություն չի ունեցել և չի հափշտակել, ուստի Ի.Բարաջանյանի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 178 հոդվածի հանցակազմի հատկանիշները»:

Վերոգրյալի հիման վրա քննիչը որոշում է կայացրել Ի.Բարաջանյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 227-229):

9. Քննիչի՝ «Լազերային սկավառակը ներկայացնելու և զննելու մասին» 2010 թվականի հունիսի 8-ի արձանագրության համաձայն՝ Ի.Բարաջանյանը ներկայացրել է լազերային սկավառակ, հայտարարելով, որ. «դրանում արտատպված է Մ.Մարգարյանի կողմից կատարված խոսակցությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 137):

Քննիչի՝ «Գատաձայնագրառման փորձաքննություն նշանակելու մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի որոշման համաձայն՝ «(...) Ի.Բարաջանյանն իր բացատրությանը կից ներկայացրել է «PRINCO BUDGET» մակնիշի CD-R80 տեսակի լազերային սկավառակ, որի վրա արտատպված է իր ամուսնու կողմից իրենց բնակարանում կատարած Մ.Մարգարյանի խոսակցության ձայնագրառումը (...):»

Նշված որոշմամբ այդ սկավառակը տրամադրվել է փորձագետներին՝ դրանում առկա խոսակցության բովանդակությունը, տևողությունը, հնարավոր մասնակիցներին պարզելու նպատակով փորձաքննություն կատարելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 19):

Նշված որոշման հիման վրա ստացված փորձագետի թիվ 10-1728 եզրակացությունը և դրան որպես հավելված կցված՝ ձայնագրության մեջ լսվող խոսակցության վերծանումը, նախաքննական մարմինը դրել է մեղադրյալ Մ.Մարգարյանի մեղադրանքի հիմքում՝ նշելով. «Հիշյալ վերծանումներով հիմնավորվել է մեղադրյալ Մ.Մարգարյանի

կողմից գործով տուժողներից ոսկե զարդեր վերցնելու և գումարները չտալու հանցանք» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 297):

10. Քննարկելով վկա Վլադիմիր Բաբայանի կողմից կատարված, Մ.Մարգարյանի հետ տեղի ունեցած խոսակցության ձայնագրությունը պարունակող լազերային սկավառակի հիման վրա կատարված փորձագետի թիվ 10-1728 եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելիության հարցը՝ Առաջին ատյանի դատարանն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ պատճառաբանելով. «Վերոհիշյալ ձայնագրությունը կատարվել է քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձ, վկա Վ.Բաբաջանյանի կողմից, չի պահպանվել այդ գործողության օրենքով սահմանված կատարման կարգը: Հետևաբար այդ ձայնագրության հիման վրա կատարված տեսաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությունը մեղադրանքի հիմքում դրվել և որպես ապացույց օգտագործվել չի կարող» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 190):

**Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Տուժող Ի.Բաբաջանյանը փաստարկել է, որ առկա են վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճարելի դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

12. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 21-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 309-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճարելի դատարանի մի շարք որոշումներ, նշել է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտերում տեղ գտած «(...) հանցավոր համաձայնության գալով նախաքննության մարմնի կողմից որպես տուժող ներգրավված Ի.Բաբաջանյանի հետ (...)» և նման այլ ձևակերպումները փաստում են անմեղության կանխավարկածի, ինչպես նաև օրինականության սկզբունքների խախտմամբ իրեն «քրեական մեղադրանք» առաջադրելու մասին:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ իր կողմից բերված վերաքննիչ բողոքի հիմքերից մեկը եղել է ստորադաս դատարանի կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը, սակայն Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ այդ հարցին ընդհանրապես չի անդրադարձել՝ բավարարվելով միայն վերաքննիչ բողոքի հիմնավորումների շարադրանքով:

13. Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ, 114-րդ, 122-րդ հոդվածները՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ սույն գործով վկայի կողմից կատարված՝ իր և Մ.Մարգարյանի խոսակցության ձայնագրության հիման վրա քննիչի

կողմից նշանակված տեսաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի խախտում:

14. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 19-ի որոշումը և բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, կամ, եթե Վճռաբեկ դատարանը կգտնի, որ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները բավարար են իր իրավունքի խախտումը վերականգնող դատական ակտ կայացնելու համար, ապա՝ կայացնել համապատասխան ակտ:

15. Ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպան Վ.Գրիգորյանը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին:

16. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ իր պաշտպանյալին առաջադրված մեղադրանքը չի հիմնավորվել դատաքննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցներով, նրա արարքում բացակայում է հանցակազմը, իսկ ստորադաս դատարանները ճիշտ չեն կիրառել քրեական օրենքը, մասնավորապես՝ ճիշտ չեն որակել իր պաշտպանյալի արարքը: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է նաև, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը առերևույթ հակասում են Վճռաբեկ դատարանի նախկինում՝ 2007 թվականի փետրվարի 27-ին ընդունված թիվ ՎԲ-05/07, 2011 թվականի փետրվարի 24-ին ընդունված թիվ ԵԿԳ/0176/01/09, 2012 թվականի հունիսի 8-ին ընդունված թիվ ԵՇԳ/0070/01/11 որոշումներին:

17. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարշավարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 19-ի որոշումը, քրեական գործի վարույթը կարճել, Մ.Մարգարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

#### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

18. Նախքան վճռաբեկ բողոքներում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերների կողմից բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքներից առաջինն առնչվում է դատական քննության սահմանների, անմեղության կանխավարկածի, ինչպես նաև մրցակցության սկզբունքների խախտմամբ բողոքաբեր Ի.Բարաջանյանին «քրեական մեղադրանք» առաջադրելու, ինչպես նաև տեսաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի խախտում թույլ տալու հարցերին (դատավարական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 12-13-րդ կետերը), իսկ երկրորդ բողոքը վերաբերում է ամբաստանյալ Մ.Մարգարյանի արարքը ոչ ճիշտ որակելու հարցին (մյութական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով դատավարական իրավունքի խախտման առկայությունը հաստատված ճանաչելու պարագայում հնարավոր է, որ այն ազդեցություն ունենա ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպանի կողմից բարձրացված նյութական իրավունքի խախտման հարցի վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության սահմանների, անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման, ինչպես նաև ապացույցի թույլատրելիության հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքները դատական քննության սահմանների համատեքստում.*

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանը, հաստատված համարելով, որ Մ.Մարգարյանն իրեն մեղաազարկող չորս դրվագներով, որպես տուժող ներգրավված Իրինա Բաբաջանյանի հետ հանցավոր համաձայնությամբ, տուժողներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի ոսկյա զարդեր և կանխիկ գումար, թույլ է տվել արդյոք դատական քննության սահմանների անցում և տուժող Ի.Բաբաջանյանի անմեղության կանխավարկածի խախտում:

20. Անմեղության կանխավարկածի սկզբունքը սահմանող՝ ՀՀ Սահմանադրության 21-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Բարսայանի և Ս.Թումանյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) [Ա]րդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Նշված սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից:

Անմեղության կանխավարկածի բովանդակությունն արտացոլված է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (in dubio pro reo) կանոնի մեջ: (...):

(...)[Ա]նմեղության կանխավարկածի նկատմամբ հարցանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի: Ուստիև դատարանը, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահը, իր գործողություններով, այդ թվում որոշումներով որևէ կերպ չպետք է

սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին» (տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով Վճռարեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ, 270-րդ, 309-րդ հոդվածներով ամրագրված՝ մեղադրանքի և դրա սահմանների վերաբերյալ հարցին Վճռարեկ դատարանն անդրադարձել է *Ա. Պապյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է, մի կողմից, մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից, այն հանգամանքով, որ դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: Ընդ որում, դատական քննության սահմաններն ընդգծելու և մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է, որ «մեղադրանք» եզրույթը հասկացվի որպես արարքի քրեաիրավական որակման և դրա հիմքում ընկած փաստական հանգամանքների ամբողջություն: (...)» (տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռարեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ /0115/01/09 որոշման 23-րդ կետը):

Դատական քննության սահմանների հարցին Վճռարեկ դատարանն անդրադարձել է *Ա.Բարայանի* և *Ս.Թումանյանի* գործով կայացված որոշման մեջ՝ նշելով, որ «(...) թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն նրան առաջադրված մեղադրանքի սահմաններում:

(...) [Դ]ատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները և դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների հետազոտման արդյունքում մեղսագրվող արարքը կհաստատվի, դատարանը պարտավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե ոչ: (...)» (տե՛ս Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով Վճռարեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 21-րդ, 23-րդ կետերը):

21. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա.Բարայանի* և *Ս.Թումանյանի*, ինչպես նաև *Ա. Պապյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ գործի դատական քննությունը

սահմանափակված է այն անձանց շրջանակով, ում նկատմամբ գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում՝ այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Հետևաբար, դատարանն իրավասու չէ դուրս գալ դատական քննության՝ մեղադրական եզրակացությամբ նախանշված սահմաններից: Հակառակ պարագայում դատարանը կիրականացնի քրեական հետապնդման գործառույթ՝ այդպիսով խախտելով մրցակցության, կողմերի հավասարության, անմեղության կանխավարկածի սկզբունքները, ինչպես նաև մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքը:

Վճռարեկ դատարանն արձանագրում է նաև, որ անմեղության կանխավարկածի իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված հիմնարար սկզբունքներից է, որը գործում է քրեական դատավարության ողջ ընթացքում: Անմեղության կանխավարկածը նախևառաջ հանդիսանում է դատավարական երաշխիք, սակայն նրա կիրառման ոլորտը դուրս է գալիս այդ շրջանակից: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հիմնարար սկզբունքը պաշտպանում է յուրաքանչյուրին՝ պետական պաշտոնատար անձանց կողմից հանցագործության կատարման մեջ մեղադրվելուց՝ նախքան օրենքին համապատասխան կայացված դատարանի դատավճիռը:

22. Վճռարեկ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Մասնավորապես, *Վուլախը և այլոք ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «պարոն Վիտալի Վուլախը դատարանի առաջ չի կանգնել: Նա ինքնասպանություն է գործել իր ենթադրյալ հանցակիցների ձեռքակալման օրը՝ 2002 թվականի մարտի 25-ին: Պարոն Վիտալի Վուլախի մահվանից երեք ամիս անց նրա նկատմամբ քրեական վարույթը դադարեցվել է: Այս կապակցությամբ արձանագրվել է, որ 6-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակները չեն սահմանափակվում ընթացիկ քրեական դատավարություններով, այլ նաև տարածվում են այն դատական որոշումների վրա, որոնք ընդունվել են քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո (...):

(...) Դատարանը կրկնում է, որ քրեական իրավունքի հիմնարար կանոններից մեկն այն է, որ քրեական պատասխանատվություն չի կարող լինել, եթե չկա հանցանք կատարած անձ (...): Այնուամենայնիվ, պարոն Վիտալի Վուլախի հանցակիցների նկատմամբ իրականացվող վարույթի ընթացքում Կրասնոդարի ռեզիդենտ դատարանը կարծիք է արտահայտել այն մասին, որ պարոն Վիտալի Վուլախը «բանդա է ստեղծել», որ «դրամական միջոցներ է ունեցել» և, որ «ֆինանսավորել է բանդան և բանդայի յուրաքանչյուր անդամին վարձատրել է կատարված հանցագործությունների համար (...): Նշված ձևակերպումները չեն հանդիսացել պարոն Վիտալի Վուլախի դեմ ներկայացված «կասկածի արձանագրում»։ առանց որևէ պայմանի կամ վերապահման՝ որպես հաստատված հանգամանք է ներկայացվել այն, որ նա հանդիսացել է հանցավոր խմբավորման ղեկավար և որ նա համակարգել և ֆինանսավորել է հանցավոր խմբավորման գործունեությունը:

(...) Տուժողներին պատճառված նյութական և ոչ նյութական վնասների հատուցման նպատակով ներկայացված հայցերի քննությանն ուղղված քաղաքացիական վարույթների ընթացքում օգտագործված ձևակերպումներն ավելի հստակ են եղել: Կուրգանսկի շրջանային դատարանը, վկայակոչելով գործով կայացված դատավճիռը, ոչ

միայն կրկնել է, որ պարոն Վիտալի Վուլախը «հանդիսացել է զինված հանցավոր խմբի (բանդայի) ղեկավար», այլ նաև շարունակել է՝ ասելով, որ «նրա ղեկավարության տակ բանդան ծանր հանցագործություններ է կատարել», այդ թվում՝ սպանություն և սպանության փորձ (...):

(...) Դատարանը շեշտում է, որ վերջնական մեղադրական դատական ակտի բացակայության պայմաններում առկա է հիմնարար տարբերություն անձի կողմից հանցանք կատարված լինելու վերաբերյալ կասկած արտահայտելու և դատական ակտում անձի կողմից տվյալ հանցանքը կատարված լինելու վերաբերյալ հստակ ձևակերպում տալու միջև: Հաշվի առնելով շրջանային և ռեզիդնալ դատարանների դատական ակտերում առկա ձևակերպումների հստակ և անվերապահ բնույթը՝ Դատարանը գտնում է, որ դրանք հանդիսացել են պարոն Վիտալի Վուլախի մեղքի վերաբերյալ դատողություն, որը կատարվել է նախքան նրան օրենքով սահմանված կարգով մեղավոր ճանաչելը: Դատարանն ընդգծում է, որ դատարանի կողմից նման բնույթի ժամանակավրեպ դատողություն անելու համար որևէ արդարացում չի կարող լինել (...):

(...) Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում» (տե՛ս *Vulakh and Others v. Russia* գործով 2012 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 33468/03, կետեր 33-37):

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի Մ.Խորենացի թիվ 33 հասցեում գտնվող «Տաշիր» առևտրի կենտրոնի ոսկու շուկայի մի խումբ աշխատակիցների վստահությունը չարաշահելու՝ նրանց ոսկե զարդերը վերավաճառելու և գումարները վճարելու, կամ գրավադրելու, ապա վերադարձնելու կամ իբրև պարտք գումարներ վերցնելու ու վերադարձնելու պատրվակով, միասնական հանցավոր մտադրությամբ, շարունակաբար խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 67.117.994 ՀՀ դրամին համարժեք ոսկեղեն և գումար հափշտակելու, ինչպես նաև Ա.Ստեփանյանին ծեծի ենթարկելու համար նախաքննական մարմինը Մեկինե Մարգարյանին մեղադրանք է առաջադրել և գործը, հաստատված մեղադրական եզրակացությամբ, ուղարկել է Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռից երևում է, որ քննության արդյունքներով հաստատված է համարվել, որ ամբաստանյալ Մ.Մարգարյանն իրեն վերագրվող ինը դրվագներից չորսով տուժող Ի.Բաբաջանյանի հետ հանցավոր համաձայնությամբ խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի գումար և ոսկյա զարդեր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Մ.Մարգարյանի և տուժող Ի.Բաբաջանյանի վերաքննիչ բողոքները, 2012 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ դրանք մերժել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ի.Բաբաջանյանը սույն գործով որպես մեղադրյալ ներգրավված չի եղել, այլ անձի հետ հանցավոր համաձայնությամբ տուժողների առանձնապես խոշոր չափերի գումարները և ոսկյա զարդերը խարդախությամբ հափշտակելու մեջ չի մեղադրվել, նման մեղադրանքի շուրջ չի հարցաքննվել և մեղադրանքից չի պաշտպանվել: Ավելին, նախաքննական մարմինը 2011 թվականի ապրիլի 13-ին որոշում է կայացրել Ի.Բաբաջանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ և 178-րդ հոդվածներով քրեական հետապնդում չիրակահանգնել՝ նրա գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:



յամբ: Նախաքննական մարմնի այդ որոշումը չի վերացվել: Սույն գործում Ի.Բաբաջանյանն ունեցել է տուժողի դատավարական կարգավիճակ, հետագայում ևս նախաքննական մարմնի կողմից նրան մեղադրանք չի առաջադրվել (տես սույն որոշման 1-ին, 8-րդ կետերը):

Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը դատաքննության արդյունքներով որպես հաստատված փաստ է համարել տուժող Ի.Բաբաջանյանի կողմից հանցագործություն, տվյալ դեպքում՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու հանգամանքը՝ իր դատավճռում տարվ պնայիսի ձևակերպումներ, որոնք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հավասարագոր են քրեական մեղադրանք առաջադրելուն:

Բացի այդ, գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Մարգարյանին որպես մեղադրյալ ներգրավելու որոշմամբ և մեղադրական եզրակացությամբ առանձնապես խոշոր չափերի գումարներ և ոսկյա զարդեր խարդախությամբ **տուժող Ի.Բաբաջանյանի հետ հանցավոր համաձայնությամբ** հափշտակելու վերաբերյալ փաստական տվյալներ չեն նշվել, Մ.Մարգարյանին այդպիսի որակյալ հատկանիշ չի մեղազարգվել և առաջադրված մեղադրանքի ծավալի մեջ չի ներառվել:

24. Սույն որոշման 20-22-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, իր դատական ակտում հաստատված համարելով վերոգրյալ փաստը, խախտել է դատական քննությունը միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն առաջադրված մեղադրանքի սահմաններում կատարելու քրեադատավարական պահանջը: Մ.Մարգարյանին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունն ստուգելուց զատ դատարանն իր վրա է վերցրել նաև մեղադրողի գործառույթներ, ինքնուրույն ձևակերպել է նոր մեղադրանք՝ ամբաստանյալ Մ.Մարգարյանին և տուժող Ի.Բաբաջանյանին մեղազարգել է խարդախության միջոցով առանձնապես խոշոր չափերի հափշտակությունը հանցավոր համաձայնությամբ կատարելու փաստը: Վերոնշյալ ձևակերպումներով Առաջին ատյանի դատարանը խախտել է տուժող Ի.Բաբաջանյանի անմեղության կանխավարկածի իրավունքը և մրցակցության սկզբունքը, ինչպես նաև վատթարացրել է ամբաստանյալ Մ.Մարգարյանի վիճակը՝ նրան զրկելով վերոգրյալ չորս դրվագներով իր պաշտպանությունն իրական և արդյունավետ կազմակերպելու հնարավորությունից:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններն են՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

(...):»:

25. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ի.Բաբաջանյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հետևությունը կրել է հստակ և անվերապահ բնույթ, ինչը հանգեցրել է դատական քննության սահմանների, մրցակցության սկզբունքի, ինչպես նաև տուժող Ի.Բաբաջանյանի անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը, հաստատված համարելով, որ Մ.Մարգարյանն իրեն մեղազրկող չորս դրվագներով որպես տուժող ներգրավված Իրինա Բաբաջանյանի հետ հանցավոր համաձայնությամբ տուժողներից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի ոսկյա զարդեր և կանխիկ գումար, թույլ է տվել դատական քննության սահմանների անցում և տուժող Ի.Բաբաջանյանի անմեղության կանխավարկածի խախտում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի վերոնշյալ խախտման մասին տուժող Ի.Բաբաջանյանը նշել է նաև վերաքննիչ բողոքում՝ բերելով համապատասխան հիմնավորումներ: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում շարադրել է բողոքաբերի հիմնավորումները, սակայն որոշման պատճառաբանական մասում դրանք ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել:

## *II. Ապացույցի թույլատրելիությունը.*

26. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք տեսաձայնագրառման փորձաքննության 2010 թվականի թիվ 10-1728 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

27. ՀՀ Սահմանադրության 23-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձնական կյանքի, այդ թվում՝ այլ անձանց հետ ցանկացած եղանակով հաղորդակցվելու անձեռնմխելիության իրավունքի հետ կապված հարցերին անդրադարձել են ինչպես ՀՀ սահմանադրական դատարանը, այնպես էլ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի նոյեմբերի 23-ի թիվ ՄԳՈ-926 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վերջինս սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք **համաժամանակյա նախապայման**.

ա/ օրենքով սահմանված դեպքերում,

բ/ օրենքով սահմանված կարգով,

գ/ դատարանի որոշմամբ:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում նշված նախապայմաններից շեղվելու որևէ իրավական հնարավորություն:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանվում է անձի հեռախոսային խոսակցությունները և այլ հաղորդումները լսելու երկու իրավական ռեժիմ՝ որպես քննչական գործողություն և որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում: Ընդ որում, երկու իրավական ռեժիմների դեպքում էլ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը երաշխավորում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտ-

նիտության իրավունքը՝ դրանց սահմանափակման համար, ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համահունչ, որպես պարտադիր պայման նախատեսելով **դատարանի համապատասխան որոշման առկայությունը:**

(...)

Դատարանի որոշման առկայության՝ որպես ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրավունքի սահմանափակման համար նախատեսված պայմանի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս հետապնդում է հետևյալ իրավաչափ նպատակները.

**Ունի**, այն նպատակ ունի պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից,

**Երկրորդ**, հաշվի առնելով այն հանգամանքը, որ [քրեական դատավարության] օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու և հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում կազմված արձանագրությունները քրեական դատավարության ընթացքում օգտագործվում են որպես ապացույց և արդյունքում կարող են կիրառվել հաղորդակցվող անձի կամ նրա ընդդիմախոսի դեմ, սահմանադիրն առանձնակի կարևորություն է տվել հիշյալ միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը,

**Երրորդ**, որպես կանոն, նշված միջոցառումները կրում են գաղտնի բնույթ, ինչը /ինչպես դա շեշտում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը/ որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանց չարաշահումների, որոնց կանխման արդյունավետ միջոցներից է նաև դրանց օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 23-ի թիվ ՍԳ-Ո-926 որոշման 4-5-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը *Վ.Խաչատրյանի* գործով կայացված որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքը անձի՝ ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է, որը պետք է պաշտպանվի կամայական և անօրինական միջամտությունից: Ընդ որում՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով և միայն իրավաչափ հիմքերի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության և բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտության դեպքում: Ըստ այդմ էլ, անձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքի երաշխիք է հանդիսանում այդ իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կիրառումը: Վերջինիս իմաստով՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշման հիման վրա» (տե՛ս Վահագն Հրաչյիկի Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0666/10/ 11 որոշման 13-րդ կետը):

28. Ապացույցների թույլատրելիության հետ կապված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սարգսյանի*

գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում:

(...)

[Մ]ույն գործով Քրեական դատարանն անձի դատապարտման հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնց բովանդակությունն ամբողջությամբ բխում է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից:

(...) Այդ ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջությամբ հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին» (տե՛ս Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԴԴ/0295/01/08 որոշման 15-րդ, 17-րդ կետերը):

29. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ գործի քննության ընթացքում տուժող Ի.Բաբաջանյանը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել իր ամուսնու կողմից կատարված՝ իր և ամբաստանյալ Մ.Մարգարյանի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լազերային սկավառակը: Քննիչը, նպատակ ունենալով պարզել սկավառակի վրա առկա խոսակցության բովանդակությունը, խոսակցության մասնակիցներին, որոշում է կայացրել դրա հիման վրա դատաձայնագրառման փորձաքննություն նշանակելու մասին՝ փորձագետին տրամադրելով նշված լազերային սկավառակը:

Քրեական գործով ստացված դատաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությանը որպես հավելված կցվել է սկավառակի վրա առկա՝ ձայնագրառման վերձայնումը: Նշված եզրակացությունը կից հավելվածով նախաքննական մարմինը դրել է մեղադրյալ Մ.Մարգարյանի մեղադրանքի հիմքում՝ գտնելով, որ դրանով հիմնավորվել է մեղադրյալ Մ.Մարգարյանի կողմից գործով տուժողներից ոսկե զարդեր վերցնելու և գումարները չտալու հանգամանքը:

Փաստորեն, նախաքննական մարմինն ամբաստանյալ Մ.Մարգարյանի և տուժող Ի.Բաբաջանյանի խոսակցության ձայնագրառումը թեև որպես ապացույց չի դիտել և Մ.Մարգարյանի մեղադրանքի հիմքում չի դրել, սակայն այդ ձայնագրառման հիման վրա նշանակված փորձաքննության արդյունքում ստացված եզրակացությունը և խոսակցության բովանդակությունը արտացոլող հավելվածը համարել է Մ.Մարգարյանի մեղքը հիմնավորող ապացույց:

Առաջին ատյանի դատարանը դատաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությունը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ պատճառաբանելով, որ ձայնագրությունը կատարվել է քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձ՝ վկա Վ.Բաբաջանյանի կողմից, չի պահպանվել այդ գործողության օրենքով սահմանված կատարման կարգը: Հետևաբար, այդ ձայնագրության հիման վրա կատարված դատաձայնագրառման փորձաքննության թիվ 10-1728 եզրակացությունը մեղադրանքի հիմքում դրվել և որպես ապացույց օգտագործվել չի կարող (տես սույն որոշման 9-10-րդ կետերը):

30. Սույն որոշման 27-28-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 29-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի որոշմամբ փորձաքննության ներկայացված լազերային սկավառակը ձեռք է բերվել քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ: Մասնավորապես, սույն գործով Մ.Մարգարյանի և Ի.Բաբաջանյանի խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել: Լազերային սկավառակը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել Ի.Բաբաջանյանը, ով հայտնել է, որ ձայնագրառումը կատարվել է իր ամուսնու կողմից: Այսինքն, նշված փաստական տվյալը ձեռք է բերվել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունցող անձի կողմից, անձանց հաղորդակցվելու ձայնագրառման քրեադատավարական կարգի էական խախտմամբ:

Նշվածը հիմք է տալիս պնդելու, որ փորձագետի եզրակացությունը թույլատրելի ապացույց չէ, քանի որ եզրակացության հիմքում ընկած փաստական տվյալը՝ լազերային սկավառակի բովանդակությունը կազմող տեղեկատվությունը, ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տեսաձայնագրառման փորձաքննության 2010 թվականի թիվ 10-1728 եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունն իրավաչափ է:

31. Սույն որոշման 20-24-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մելինե Միշայի

Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 19-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

32. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել ամբաստանյալ Մ.Մարգարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքում բարձրացված՝ քրեական օրենքի կիրառման, Մ.Մարգարյանի արարքի որակման վերաբերյալ փաստարկները՝ բավարարելով միայն ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու վերաբերյալ վերջինիս խնդրանքը (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Մելինե Միշայի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

36.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0067/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորների՝</i>	Հ.ԱՍՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատախազ՝</i>	Կ.ՋՈՀՐԱԲՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հակոբ Գազիկի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշման դեմ մեղադրող Կ.Ջոհրաբյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում հարուցվել է թիվ 69100512 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2012 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ Հակոբ Ամիրխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Հ.Ամիրխանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով:

2012 թվականի ապրիլի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 26-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել առաջին դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, երկրորդ դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով՝ տուգանք 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով ամբաստանյալ Հ.Ամիրխանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

3. Մեղադրող Կ.Չոհրաբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 26-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Կ.Չոհրաբյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ մեղադրող Կ.Չոհրաբյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար. «Ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը, 2010 թվականի սկզբից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 9-ը ներառյալ ժամանակահատվածում, իր և ընտանիքի կարիքները հոգալու, ապրուստի միջոցներ ձեռք բերելու նպատակով, խարդախությամբ, երկու անձանցից, յուրաքանչյուրից հափշտակել է խոշոր չափի գույք հետևյալ հանգամանքներում.

Առաջին դրվագ.

Ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը, 2010 թվականի սկզբին տեղեկանալով, որ իրենց թաղամասի բնակիչ, տուժող Ա.Վարդանյանը ցանկանում է Երևան քաղաքի Գ.Մահարու փողոցի թիվ 16/1 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ կատարել իր սեփականության իրավունքի պետական գրանցում, հաստատապես իմանալով, որ դրա համար բավարար հիմքերն առկա են, և այդ գործընթացն օրենքով սահմանված կարգով ենթակա է անվճար կատարման, խոստացել է օգնել նրան այդ հարցում: Ուրիշի խոշոր չափերի գույք հափշտակելու դիտավորությամբ, խաբեությամբ, իբրև թե այդ գործը սկսելու համար նա տուժող Ա.Վարդանյանից 2010 թվականի սկզբին ստացել և հափշտակել է 112.116 ՀՀ դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլար գումար՝ այն ծախսելով իր անձնական կարիքների համար:



Այնուհետև, 2010 թվականի սկզբից մինչև 2011 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում, տարբեր ամիսների և օրերի, Հ.Ամիրխանյանը, նույն հարցի լուծման համար սահմանված վճարումներ կատարելու պատրվակով, Ա.Վարդանյանից խարդախությամբ, մաս-մաս ստացել և հափշտակել է նաև 600.000 ՀՀ դրամ ընդհանուր գումար՝ Ա. Վարդանյանին պատճառելով խոշոր չափի՝ 712.116 ՀՀ դրամ ընդհանուր գումարի գույքային վնաս:

Երկրորդ դրվագ.

Բացի այդ, կրկին ուրիշի խոշոր չափի գույք հափշտակելու միասնական դիտավորությամբ, 2011 թվականի փետրվարին, Երևանում ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը տուժող Ա.Էլոյանին ներկայացել է որպես Երևանի քաղաքապետարանի աշխատակից և խոստացել է երեք հազար ԱՄՆ դոլար գումար կաշառք ստանալու և համապատասխան վճարումներ կատարելու միջոցով լուծել տուժող Ա.Էլոյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հարցը՝ նրա կողմից օգտագործվող, Երևանի Նոր Նորքի 1-ին զանգվածի թիվ 34 շենքի հարևանությամբ գտնվող, հազար քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ: Ստանալով տուժող Ա.Էլոյանի համաձայնությունը՝ ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը տուժող Ա. Էլոյանից Երևանում 2011 թվականի փետրվարին պահանջել և ստացել է 40.000 ՀՀ դրամ գումար՝ գործընթացն սկսելու համար անհրաժեշտ վճարումներ կատարելու պատրվակով: Այնուհետև, 2011 թվականի մարտի 9-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում, կաշառք ստանալու և կրկին վճարումներ կատարելու պատրվակով, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության վարչական շենքի մոտակայքում ամբաստանյալ Հ.Ամիրխանյանը տուժող Ա.Էլոյանից ստացել է 1.102.800 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ 2011 թվականի մարտի 11-ին հողամասի գլխավոր հատակագիծը կազմելու պատրվակով՝ 50.000 ՀՀ դրամ գումար և խաբեությամբ հափշտակել է այդ գումարները:

Շարունակելով իրականացնել Ա.Էլոյանի գույքի հափշտակության վերաբերյալ իր մտադրությունը՝ 2011 թվականի սեպտեմբերի 2-ին հողատարածքի չափագրության պատրվակով Հ.Ամիրխանյանն Ա.Էլոյանից պահանջել և ստացել է 5.000 ՀՀ դրամ գումար, իսկ 2011 թվականի սեպտեմբերի 9-ին կրկին կաշառք ստանալու պատրվակով պահանջել և ստացել է ևս 50.000 ՀՀ դրամ գումար, որոնք նույնպես խաբեությամբ հափշտակել է՝ Ա.Էլոյանին պատճառելով խոշոր չափի՝ 1.247.800 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով գույքային վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 118):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա է հետևյալ ձևակերպումը. «Զննարկելով մեղադրողի միջնորդությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Հակոբ Գազիկի Ամիրխանյանի նկատմամբ քրեական հետապնդումը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ դադարեցնելու մասին, դատարանը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշման 9-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ որոշվել է համաներումը չկիրառել մի

քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաձայնեցված չի կիրառվում:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաձայնեցված հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշման 15-րդ կետի համաձայն՝ սույն որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն են կատարել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ:

Ամբաստանյալ Հակոբ Գագիկի Ամիրխանյանը, բացի 2010թ. սկզբից մինչև 2011թ. սկիզբն ընկած ժամանակահատվածում տուժող Արմեն Վարդանյանից խարդախությամբ 712.116 ՀՀ դրամ ընդհանուր գումար հափշտակելուց, կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով նախատեսված մեկ այլ հանցագործություն՝ 2011թ. փետրվարից մինչև 2011թ. սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում տուժող Անահիտ Էլոյանից խարդախությամբ հափշտակել է 1.247.800 ՀՀ դրամ ընդհանուր գումարի՝ խոշոր չափի գույք, այսինքն՝ 2011թ. մայիսի 1-ից հետո մեկ այլ հանցագործություն է կատարել, որի պատճառով Հակոբ Ամիրխանյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաձայնեցված հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011թ. մայիսի 26-ի որոշումը կիրառվել չի կարող (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 120-122):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ որոշման պատճառաբանական մասում Վերաքննիչ դատարանը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի դրույթները և արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաձայնեցված հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի 2011թ. մայիսի 26-ի որոշման 15-րդ կետի համաձայն՝ սույն որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն են կատարել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ:

(...) Նշված նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ 2011 թվականի մայիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում հանցանք կատարած անձանց նկատմամբ համաձայնեցված ակտը չի կիրառվում, իսկ նույն ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ համաձայնեցված կիրառման ենթակա չէ մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաձայնեցված չի կիրառվում:

(...) Նկատի ունենալով, որ Հակոբ Ամիրխանյանին մեղաազարկող և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով նախատեսված երկրորդ արարքը ամբաստանյալը կատարել է 2011թ. մայիսի 1-ից հետո, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ համաձայնեցված ակտը՝ 9-րդ կետի 8-րդ ենթակետի ուժով կիրառելի չէ, հետևաբար Առաջին ատյանի դատարանը, մերժելով մեղադրողի միջնորդությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Հակոբ Գագիկի Ամիրխանյանի նկատմամբ քրեական հետապնդումը համաձայնեցված ակտի 6-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ դադարեցնելու մասին, հանգել է հիմնավոր ու ճիշտ հետևության» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 171):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճարելի բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

9. Ի հիմնավորումն իր վերոնշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է: Բողոքաբերը, մասնավորապես, նշել է, որ.

ա) 2010 թվականի սկզբից մինչև 2011 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում տուժող Ա.Վարդանյանից խաբեությամբ 300 ԱՄՆ դոլար և 600.000 ՀՀ դրամ հափշտակելու դրվագով Հ.Ամիրխանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Վերոնշյալ հանգամանքի վերածության արդյունքում բողոքաբերը եզրակացություն է արել այն մասին, որ տուժող Ա.Վարդանյանից խաբեությամբ 300 ԱՄՆ դոլար և 600.000 ՀՀ դրամ հափշտակելու դրվագով Հ.Ամիրխանյանին մեղադրանք է առաջադրվել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած հանցանքի համար:

բ) Գործի նյութերում առկա է ծննդյան վկայական, որի համաձայն՝ Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հ.Ամիրխանյանն ունեցել է մինչև երեք տարեկան երեխա՝ 2010 թվականի դեկտեմբերի 21-ին ծնված Վիգեն Հակոբի Ամիրխանյան:

գ) Հ.Ամիրխանյանի՝ մինչև երեք տարեկան երեխա ունենալու հանգամանքը հայտնի է եղել նաև նախաքննության ընթացքում, սակայն այդ դրվագով Հ.Ամիրխանյանին մեղադրանք է առաջադրվել, քանի որ նա առարկել է համաներման կիրառման դեմ:

դ) Վերաքննիչ դատարանը տուժող Ա.Վարդանյանից խոշոր չափի գումար հափշտակելու դրվագով Հ.Ամիրխանյանի նկատմամբ քրեական հետապնդումը չդադարեցնելու վերաբերյալ իր որոշումը հիմնավորել է Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված սահմանափակմամբ, որի համաձայն՝ համաներման ակտը չի կիրառվում մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար համաներում չի կիրառվում:

Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետի համատեքստում վերլուծելով մեջբերված հանգամանքները՝ բողոքաբերը փաստարկել է, որ «Եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի կիրառվում» իրավական ձևակերպումը վերաբերում է ոչ թե ցանկացած հանցագործության տեսակի, այլ 9-րդ կետի 7-րդ ենթակետում նշված՝ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով նախատեսված հանցագործությունների: Իսկ Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված հանցակազմը օրենսդրի կողմից չի ընդգրկվել, հետևաբար այդ հոդվածով հանցագործություն կատարած անձի նկատմամբ համաներում կիրառելու սահմանափակում չի կարող տարածվել:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը նշել է, որ Համաներման ակտը թե՛ իր կիրառման հիմքով և թե՛ այդ կիրառումը սահմանափակող դրույթներով կիրառելի է այն անձանց նկատմամբ, ովքեր հանցագործություն են կատարել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ, որի մասին ուղղակի նշված է Համաներման ակտի 15-րդ կետում: Այսինքն մայիսի 1-ից հետո կատարված հանցագործությունները չեն կարող Համաներման ակտի կիրառման համար արգելակող դեր կատարել, մինչդեռ Հ.Ամիրխանյանի գործով Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը Համաներման ակտի կիրառման սահմանափակումը կապել են նրա կողմից մայիսի 1-ից հետո կատարված հանցագործության հետ:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշումը և Ա.Վարդանյանից խոշոր չափերի գումար հափշտակելու դրվագով Հ.Ամիրխանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել՝ Համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ կետի 3-րդ ենթակետերի կիրառմամբ:

#### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանքների համակցության դեպքում Համաներման ակտի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մյուս գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Հ.Ամիրխանյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ, քանի որ նրան մեղսագրվող երկու հանցանքներից մեկը կատարվել է Համաներման ակտի ընդունումից հետո:

13. «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 9-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չի կիրառվում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 168-րդ հոդվածով, 175-176-րդ հոդվածներով, 190-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով (...) նախատեսված հանցագործությունները կատարած կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն»:

Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չի կիրառվում «մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի կիրառվում»:

Համաներման ակտի 15-րդ կետի համաձայն՝ «Սույն որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն են կատարել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ»:

14. Հանցանքների համակցության դեպքում համաներման ակտի կիրառման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ.Ավետիսյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Համաներման ակտի ուսումնասիրությունից երևում է, որ համաներման կիրառելիությունը և համաներման կիրառման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքը (քրեական գործի կարճում, պատժից ազատում, պատժաչափի չկրած մասի կրճատում և այլն) օրենսդիրը կատարած հանցագործությունների քանակից կախվածության մեջ չի դրել: Այլ կերպ՝ եթե համաներման ակտի համապատասխան դրույթներից բխում է, որ անձի նկատմամբ քրեական հետապնդում չպետք է հարուցել կամ իրականացնել, կամ անձը ենթակա է պատժից ազատման, ապա կատարած արարքների թվաքանակն ինքնին որևէ կերպ չի կարող խոչընդոտել համաներմանը տառացի նշանակությամբ մեկնաբանելու և կիրառելու համար:

Համաներման ակտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների համակցության դեպքին է վերաբերում միայն 9-րդ կետի 8-րդ ենթակետը, որի համաձայն՝ համաներմանը չի կիրառվում «մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներմում չի կիրառվում»:

Փաստորեն, հանցագործությունների համակցության դեպքում համաներման կիրառման սահմանափակումն օրենսդիրը նախատեսել է միայն մեկ դեպքում՝ համաներման չկիրառման հիմքում դնելով ոչ թե հանցանքների քանակական, այլ որակական կողմը՝ առկա է թեկուզ մեկ այնպիսի հանցագործություն, որի նկատմամբ համաներմանը կիրառելի չէ: (...):

Համաներման կիրառման մյուս սահմանափակումները հանցագործությունների գուտ թվաքանակով պայմանավորված չեն:

(...)

(...) հանցագործությունների համակցության այն դեպքերում, երբ համաներմանը բոլոր հանցանքների նկատմամբ կիրառելի է, ապա դատարանը պարտավորեցված է համաներման ակտը (...) կիրառել յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին: (...):

(...) Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում համաներման ակտի կիրառմանը հանցագործությունների համակցություն կազմող յուրաքանչյուր հանցագործության վերաբերյալ առանձին» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 18-րդ, 22-23-րդ կետերը):

15. Սույն որոշման 13-րդ կետում մեջբերված դրույթների համատեքստում զարգացնելով Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ ձևավորված մոտեցումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտի կիրառելիությունն անսահմանափակ չէ և պայմանավորված է որոշակի ժամկետում կատարված հանցագործություններով: Ընդ որում, այդ առումով կարևորվում է ոչ թե գործի քննության կամ Համաներման ակտի կիրառման, այլ հանցագործության կատարման պահը: Մասնավորապես, Համաներման ակտի 15-րդ կետից երևում է, որ օրենսդրի կամքն է եղել Համաներման ակտը կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր հանցագործություն են կատարել մինչև 2011 թվականի մայիսի 1-ը ներառյալ: Այլ խոսքով՝ Համաներման ակտը կիրառելի է միայն այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են մինչև նշված օրը հանցանք կատարելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Համաներման ակտի, դրա առանձին դրույթների վկայակոչումը, անկախ նրանից թե կոնկրետ դրույթը վկայակոչվում է Համաներման ակտը կիրառելու, թե կիրառման արգելքը հաստատելու համար, սահմանափակված է մինչ այդ օրը կատարված հանցագործությունների շրջանակով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվել է Համաներման ակտով ընդգրկվող ժամանակահատվածից դուրս, ապա այդ հանցագործության համար Համաներման ակտի կիրառելիության հարցի քննարկումն առարկայագուրկ է, քանի որ բացակայում է Համաներման ակտի կիրառման համար անհրաժեշտ իրավահարաբերությունը:

16. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Վ.Ավետիսյանի* գործով որոշմամբ Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետին տրված մեկնաբանությունը. «(...) հանցագործությունների համակցության դեպքում համաներման կիրառման սահմանափակումն օրենսդիրը նախատեսել է միայն մեկ դեպքում՝ համաներման չկիրառման հիմքում դնելով ոչ թե հանցանքների քանակական, այլ որակական կողմը՝ առկա է թեկուզ մեկ այնպիսի հանցագործություն, որի նկատմամբ համաներմամբ կիրառելի չէ (...)», և ընդգծում է, որ տվյալ սահմանափակմանը պետք է տալ բացառապես այն բովանդակային նշանակությունը, որն օրենսդիրն ի նկատի է ունեցել Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետում որոշակի հանցատեսակներ թվարկելով: Այլ խոսքով՝ Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումն անհրաժեշտ է դիտարկել սույն կետի 7-րդ ենթակետի համատեքստում՝ Համաներման ակտի կիրառման անհնարինությունը կապելով հանցագործության էության, այլ ոչ թե դրա կատարման ժամանակահատվածի հետ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Ամիրխանյանին մեղաազարվել է երկու դրվագով խարդախություն, որոնցից առաջինը՝ 2010 թվականի սկզբից մինչև 2011 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում տուժող Ա.Վարդանյանի նկատմամբ կատարված, որը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, երկրորդը՝ 2011 թվականի փետրվարից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում տուժող Ա.Էլոյանի նկատմամբ կատարված, որը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վկայակոչելով Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետը՝ Առաջին ատյանի դատարանը Հ.Ամիրխանյանի նկատմամբ Համաներման ակտը չի կիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ է թողել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով նախատեսված և 2011 թվականի մայիսի 1-ից հետո կատարած հանցագործության համար Հ.Ամիրխանյանի նկատմամբ կիրառել են Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետի դրույթները, ինչի հետևանքով Հ.Ամիրխանյանի նկատմամբ Համաներման ակտը չեն կիրառել նաև մինչև 2011 թվականի մայիսի 1-ը կատարած և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության համար: Մինչդեռ նշված հանցագործության համար նրա նկատմամբ Համաներման ակտի կիրառման սահմանափակումները բացակայում են:

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավորված չէ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ ամբաստանյալ Հ.Ամիրխանյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ, քանի որ նրան մեղսագրվող երկու հանցանքներից մեկը կատարվել է Համաներման ակտի ընդունումից հետո:

Հետևաբար, հիմնավոր է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Համաներման ակտի 9-րդ կետի 8-րդ ենթակետի սխալ մեկնաբանման արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման պահանջները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հակոբ Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 9-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հակոբ Գագիկի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

37.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԳ/0185/11/11**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ փաստաբան՝</i>	Վ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ փաստաբան Վ.Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի օգոստոսի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնում հարուցվել է թիվ 17126511 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ամուսիններ Գագիկ Ոսկանյանը և Ալլա Սեկոյանը հարցաքննվել են որպես վկա:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մակինյանը 2011 թվականի հոկտեմբերի 10-ին որոշում է կայացրել Ա.Սեկոյանին պատկանող՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ զանգվածի 30/2 շենքի 45 բնակարանի վրա կալանք դնելու մասին:

Փաստաբան Վ.Մանուկյանը վերոհիշյալ որոշումը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով վերացնել ավագ քննիչ Ա.Մակինյանի 2011 թվականի



հոկտեմբերի 10-ի որոշումը: Վ.Մանուկյանի բողոքն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մակինյանի 2011 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ փաստարան Վ.Մանուկյանի միջնորդությունը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. 2011 թվականի դեկտեմբերի 15-ին փաստարան Վ.Մանուկյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ավագ քննիչ Ա.Մակինյանի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ փաստարան Վ.Մանուկյանի բողոքը մերժվել է:

3. Փաստարան Վ.Մանուկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 22-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի ապրիլի 28-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել փաստարան Վ.Մանուկյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ փաստարան Վ.Մանուկյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. «Գույքի վրա կալանք դնելու մասին» քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման համաձայն՝ «Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ զանգվածի 30/2 շենքի 45 բնակարանի բնակիչ Գայանե Օնիկի Դազարյանն իր սկեսոր Ասյա Ավետիսյանի կողմից 2009 թվականի փետրվարի 6-ին տրված վերը նշված բնակարանի վերաբերյալ լիազորագրով, առանց վերջինիս տեղեկացնելու, Սվետլանա Պինչուկից վեց ամիս ժամանակով պարտքով վերցրել է 12.000 ԱՄՆ դոլար և որպես երաշխիք՝ բնակարանն առքուվաճառքի պայմանագրով վաճառել Ս.Պինչուկին, որից հետո վերջինս գումարը վերադարձնելու նպատակով Գազիկ Գվիդոնի Ոսկանյանից ամսական 6 տոկոս տոկոսադրույքով վերցրել է 20.000 ԱՄՆ դոլար և նշված բնակարանը Ս.Պինչուկը 2009 թվականի դեկտեմբերի 18-ին վաճառել է Գ.Ոսկանյանի կնոջը՝ Ալլա Մեկոյանին, այնուհետև յուրաքանչյուր ամիս Գ.Ոսկանյանին է տվել հասանելիք տոկոսներ:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ԶԳ-Վ Երևան քաղաքի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնում 24.08.2011 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 213 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17126511 քրեական գործը, որը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ 26.08.2011 թվականին ընդունվել է ՀԿԳ քննության վարչություն և կատարվել նախաքննություն:

Նկատի ունենալով, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ Գ.Ոսկանյանը կարող է օտարել իր կնոջ անունով հաշվառված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ զանգվածի 30/2 շենքի 45 բնակարանը, ուստի ելնելով վերոգրյալից (...)

որոշեցի վարույթիս թիվ 17126511 քրեական գործով կալանք դնել Ալլա Մեկոյանի անվամբ հաշվառված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ գանգվածի 30/2 շենքի 45 բնկարանի վրա» (տես՝ նյութեր, թերթ 35):

6. Առաջին ատյանի դատարանը քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ փաստաբան Վ.Մանուկյանի բողոքը մերժել է՝ նշելով, որ «Փաստաբան Վ.Մանուկյանի այն պնդումը, որ Ա.Մեկոյանի գույքի վրա կալանքը դրվել է ապօրինի, անհիմն է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1.1 կետի պահանջներից՝ համաձայն որի ՀՀ քրեական օրենսգրքի ...213... հոդվածների հատկանիշներով քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացրած մարմինն այդ արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված, կամ օգտագործման համար նախատեսված գործիքների վրա կալանք է դնում այն հայտնաբերելուց հետո անհապաղ:

Համաձայն նույն հոդվածի՝ այդ գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու հանգամանքից: (...) Վերը նշվածը հաշվի առնելով՝ դատարանը հաստատված է համարում, որ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները բխել են օրենքի պահանջներից և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն այդ գործողություններով» (տես՝ նյութեր, թերթ 53):

7. Վերաքննիչ դատարանը փաստաբան Վ.Մանուկյանի վերաքննիչ բողոքը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «Առաջին ատյանի դատարանը, (...) ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասի դրույթներով, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի այդ արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի, ներառյալ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված, կամ օգտագործման համար նախատեսված գործիքների վրա կալանք դնել այն հայտնաբերելուց հետո անհապաղ, օրինական և հիմնավորված որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

Ընդ որում, առաջին ատյանի դատարանն այդպիսի որոշում կայացնելիս հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի համաձայն՝ «այդ գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից (...)» (տես՝ նյութեր, թերթ 92-93):

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբեր Վ.Մանուկյանը փաստարկել է, որ առկա են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն

ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, մասնավորապես, նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական, չի բխում քրեական գործում եղած նյութերից և ձեռք բերված ապացույցներից, հակասում է ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և ՀՀ քրեական դատավարության դրույթների պահանջներին:

Բողոքաբերը, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները, նշել է, որ կալանքը դրվում է կասկածյալի, մեղադրյալի և այլ անձանց գույքի վրա, որոնց վրա կասկածյալի կամ մեղադրյալի գործողությունների համար կարող է դրվել նյութական պատասխանատվություն: Մինչդեռ, տվյալ քրեական գործի նախաքննությունը շարունակվում է մեկ տարուց ավելի, սակայն չի հիմնավորվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի կատարումը, գործով չկա ներգրավված կասկածյալ, մեղադրյալ, որոնց վրա կամ որոնց գործողությունների համար այլ անձի վրա հնարավոր լինի դնել նյութական պատասխանատվություն, որևէ անձ գործով չի ճանաչվել տուժող, քաղաքացիական հայցվոր, ներկայացված չէ քաղաքացիական հայց:

Արդյունքում բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ վարույթն իրականացնող մարմնի՝ «Գույքի վրա կալանք դնելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումն ապօրինի է, քանի որ սույն քրեական գործով իր վստահողները գտնվում են վկայի կարգավիճակում, գործով չկա կասկածվող, մեղադրվող անձ, ում հանցավոր գործողությունների հետ ուղղակի կամ անուղղակի առնչություն ունենա Գ.Ոսկանյանին կամ Ա.Սեկոյանին պատկանող անշարժ գույքը:

10. Վերագրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 28-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել ավագ քննիչ Ա.Մակինյանի՝ «Գույքի վրա կալանք դնելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր այն անձանց շրջանակի կապակցությամբ, ում սեփականությունը հանդիսացող կամ ում տիրապետության տակ գտնվող գույքի վրա կարող է կալանք դրվել: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք մինչդատական վարույթն իրականացնող մարմնի՝ «Գույքի վրա կալանք դնելու» մասին որոշման օրինական և իրավաչափ լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

13. Սեփականության իրավունքի վերաբերյալ սահմանադրական և կոնվենցիոն մի շարք դրույթների, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև նաև՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս.Հայրապետյանի* գործով կայացված որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ է պայմանավորված մասնավորապես ՀՀ Սահմանադրության մեջ (31-րդ հոդվածում) հետևյալ երաշխիքների ամրագրումը.

1) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է զրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով,

2) սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ» (տե՛ս Արթուր Արարատի Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԳ/0001/11/10 որոշման 19-րդ կետը):

14. Սեփականության իրավունքի սահմանափակման տարատեսակ է հանդիսանում գույքի վրա կալանք դնելու քրեադատավարական ինստիտուտը, որի օրենսդրական կարգավորումները տրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխում:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը և դատական ծախսերն ապահովելու համար:

2. Կալանքը դրվում է կասկածյալի և մեղադրյալի, ինչպես նաև այն անձանց գույքի վրա, որոնց վրա, կասկածյալի և մեղադրյալի գործողությունների համար, կարող է դրվել նյութական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի գույք է և ում մոտ է գտնվում:

3. Ամուսինների կամ ընտանիքի համատեղ սեփականության դեպքում կալանքը դրվում է մեղադրյալի բաժնի վրա: Բավարար ապացույցների առկայության դեպքում, որ համատեղ սեփականությունն ավելացել կամ ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, կալանքը կարող է դրվել ամուսինների կամ ընտանիքի ամբողջ գույքի կամ դրա որոշակի բաժնի վրա: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գույքի վրա կալանք դնելը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել բռնագրավման ենթական գույքը:

1.1 Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 175-224-րդ (...) հոդվածների հատկանիշներով քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինն այդ արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ամբողջ գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից

ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների վրա կալանք է դնում այն հայտնաբերելուց հետո անհապաղ: Այդ գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից: (...):»

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է նաև, որ իր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես, *Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացված վճռում, մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ (տե՛ս *Borzhonov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ և 233-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը սահմանել է գույքի վրա կալանք դնելու՝ որպես քրեադատավարական հարկադրանքի միջոցի իրականացման նպատակները, իրավական հիմքերը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ում սեփականությունը հանդիսացող կամ ում տիրապետության տակ գտնվող գույքի վրա կարող է կալանք դրվել:

Վերոնշյալ քրեադատավարական դրույթների իմաստով կալանք կարող է դրվել հետևյալ անձանց գույքի վրա՝

ա) կասկածյալ,

բ) մեղադրյալ,

գ) անձինք, ովքեր օրենքով պատասխանատվություն են կրում կասկածյալի կամ մեղադրյալի գործողությունների համար,

դ) այլ անձինք, որոնց սեփականությունն է հանդիսանում կամ որոնց մոտ է գտնվում այնպիսի գույք, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողությունների արդյունքում:

Ինչ վերաբերում է համատեղ սեփականությանը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով կալանքը դրվում է մեղադրյալի բաժնի վրա, իսկ այն դեպքում, երբ առկա են բավարար ապացույցներ, որ անուսինների կամ ընտանիքի համատեղ սեփականությունն ավելացել կամ ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, կալանքը կարող է դրվել ամբողջ գույքի վրա:

16. Սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված վերլուծությունից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքում այն անձանց նշումը, ովքեր մեղադրյալի կամ կասկածյալի գործողությունների համար նյութական պատասխանատվություն կրող անձինք են, պայմանավորված է նրանով, որ քաղաքացիական օրենսդրության համաձայն պատճառված վնասի համար որոշ դեպքերում պատասխանատվություն են կրում ոչ թե վնաս պատճառած անձինք, այլ ուրիշները: Այդպիսի անձինք են հանդիսանում, օրինակ՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները, շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնող անձինք, ովքեր օրենքի ուժով պատասխանատու են կասկածյալի կամ մեղադրյալի գործողությունների համար:

Օրենքում այլ անձանց նշումը, ում սեփականությունն է հանդիսանում կամ ում մոտ գտնվում է այնպիսի գույք, որի վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն ստացվել է մեղադրյալի կամ կասկածյալի հանցավոր գործունեության արդյունքում, պայմանավորված է նրանով, որ գործնականում հաճախ վերջինների կողմից նշված գույքը թաքցվում է այլ անձանց մոտ՝ դրա հայտնաբերումը դժվարեցնելու կամ անհնարին դարձնելու, ամեն կերպ իրենց մոտ պահպանելու նպատակով:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի վրա կալանք դնելու հիմքերի առկայության պատշաճ հիմնավորումն առանցքային նշանակություն ունի ինչպես գույքի վրա կալանք դնելու մասին օրինական որոշման կայացման, այնպես էլ հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի պաշտպանության արդարացի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի, գույքի վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը, ելնելով գույքի վրա կալանք դնելու նպատակից, պետք է պատճառաբանված կերպով հիմնավորի, որ.

1) տվյալ գործով անձը ներգրավված է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,

2) ենթադրաբար կատարված հանցագործությամբ պատճառվել է հատուցման ենթակա վնաս,

3) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված հանցակազմերով առկա է հիմնավորված ենթադրություն առ այն, որ

գույքը, որի վրա կալանք է դրվում, ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

4) գործով ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, ում մոտ գտնվում է կամ ում սեփականությունն է հանդիսանում գույքը, կարող են թաքցնել, փչացնել կամ սպառել այն:

Ընդ որում, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող և սույն որոշման 15-րդ կետի (գ) ենթակետում նշված անձանց սեփականությունը հանդիսացող կամ նրանց մոտ գտնվող գույքի վրա կալանք դնելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հիմնավորել այդ անձանց կողմից կասկածյալի կամ մեղադրյալի գործողությունների համար նյութական պատասխանատվություն կրելու հնարավորությունը:

Կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող և սույն որոշման 15-րդ կետի (դ) ենթակետում նշված անձանց սեփականությունը հանդիսացող կամ նրանց մոտ գտնվող գույքի վրա կալանք դնելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է բավարար հիմքերի վկայակոչմամբ հիմնավորել կալանադրվող գույքի՝ կասկածյալի կամ մեղադրյալի առերևույթ հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում ձեռքբերված լինելու հնարավորությունը:

Համանման կերպով Վճռարեկ դատարանը գտնում է, որ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կասանական փակվի իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով 2011 թվականի օգոստոսի 24-ին հարուցված քրեական գործի շրջանակներում ամուսիններ Գագիկ Ոսկանյանը և Ալլա Սեկոյանը հարցաքննվել են որպես վկա (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մակինյանը 2011 թվականի հոկտեմբերի 10-ին որոշում է կայացրել վկայի կարգավիճակում գտնվող Ա.Սեկոյանին պատկանող՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 2-րդ զանգվածի 30/2 շենքի 45 բնակարանի վրա կալանք դնելու մասին՝ պատճառաբանելով, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ Գ.Ոսկանյանը կարող է օտարել կնոջ անունով հաշվառված բնակարանը (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը): Քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ փաստաբան Վ.Մանուկյանի բողոքը Առաջին ատյանի դատարանը մերժել է՝ նշելով, որ բողոքը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջներից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ՝ նշելով, որ այն օրինական է և հիմնավոր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

19. Սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշման մեջ բացակայում է որևէ տվյալ այն մասին, որ Ա.Սեկոյանը, նրա ընտանիքի անդամը կամ որևէ այլ անձ սույն գործով ներգրավված է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Քննիչի որոշման մեջ չկա որևէ հիմնավորում առ այն, որ Ա.Սեկոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը ձեռք է բերվել նրա կամ մեկ այլ

անձի ենթադրաբար հանցավոր գործունեության արդյունքում, ում գործողությունների համար Ա.Մեկոյանը կարող է պատասխանատվություն կրել: Քննիչի որոշման մեջ վկայակոչված չէ նաև որևէ ապացույց, որը կհիմնավորեր բնակարանն օտարելու ենթադրությունը: Այդպիսի փաստական տվյալներ չկան նաև քննիչի որոշման հիմնավորվածությունը հաստատող նյութերում: Փաստորեն, Ա.Մեկոյանի սեփականության իրավունքը սահմանափակվել է օրենքով չնախատեսված հիմքերով, ինչի արդյունքում խախտվել են Ա.Մեկոյանի՝ որպես բնակարանի սեփականատիրոջ իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդաստան վարույթն իրականացնող մարմնի՝ «Գույքի վրա կալանք դնելու» մասին որոշման օրինական և իրավաչափ լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր չէ:

20. Սույն որոշման 13-19-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ փաստաբան Վ.Մանուկյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 22-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 28-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Փաստաբան Վ.Մանուկյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 22-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի ապրիլի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*



38.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՄԳ3/0019/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲԲԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ՝</i>	
<i>մեղադրող՝</i>	Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
<i>տուժող՝</i>	Ա.ՄԻՆԱՍՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրաչ Արթուրի Մակարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ թիվ 2 կայազորի զինվորական դատախազության դատախազ Ս.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2010 թվականի նոյեմբերի 23-ին ՀՀ ՊՆ ԶԾ 2-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 91258010 քրեական գործը:

2010 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Հրաչ Արթուրի Մակարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

2010 թվականի դեկտեմբերի 31-ին թիվ 91258010 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադասակարգվել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը, և Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրող Ս.Խաչատրյանը:

2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանը մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, այն է՝ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

4. Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադասակարգվել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ի մասով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը, և Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է:

5. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրող Ս.Խաչատրյանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժվել է:

6. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ մեղադրող Ս.Խաչատրյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. Հ.Մակարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով թիվ 59703 գորամասի ՍՈՒ-57 մարտկոցի մեխանիկ-վարորդ, կոչումով շարքային, խախտելով զինճառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները, ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում 2010 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 19<sup>00</sup>-ից 20<sup>00</sup>-ն ընկած ժամանակահատվածում, թիվ 36534 գորամասի մոտակայքում տեղակայված թիվ 64 ուսումնական կենտրոնում գղալով ընդհանուր ճաշամանից օգտվելու պատճառով վիճաբանության մեջ է մտել նույն գորամասի տանկային վաշտի ժամկետային զինճառայող կրտսեր սերժանտ Ա.Մինասյանի հետ, որի ընթացքում բռունցքով մի քանի անգամ հարվածել է Ա.Մինասյանի դեմքին՝ պատճառելով առողջության ծանր վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 52):

8. Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) տուժողի դատաքննական ցուցմունքները, դատաքննության ընթացքում անցկացված լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, փորձագետ Գ.Հարությունյանի գրավոր հայտարարությունը, ամբաստանյալի դատաքննական ցուցմունքների հետ համակցության մեջ վկայում են այն մասին, որ տուժողը ծնոտի կտրվածքի ձևով ծանր մարմնական վնասվածքը ստացել է տանկի փողի վրա վայր ընկնելու հետևանքով, իսկ տուժողին ամբաստանյալը պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որի համար պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 195):

9. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ. «Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեադատավարական օրենսդրության խնդիրների, քրեական գործի արդարացի քննության, ապացույցների ուժի, ապացույցների ստուգումը, գնահատումը կանոնակարգող ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված պահանջների համատեքստում քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, հանգում է այն համոզման, որ ընդհանուր իրավասության դատարանը չի ձեռնարկել բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման համար, քրեական գործով ձեռք բերված ապացույցները գնահատելիս, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-127-րդ հոդվածների պահանջների խախտումներ, թերի, միակողմանիորեն է գնահատել քրեական գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր իրավասության դատարանի որոշման մեջ գործի բոլոր փաստական հանգամանքները պատշաճ իրավական ընթացակարգով վերլուծության և գնահատության չեն ենթարկվել: Դատարանը, հիմք ընդունելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, դրանք չի համադրել նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների հետ և չի պարզել առաջացած հակասությունների պատճառները, ինչի արդյունքում հանգել է սխալ հետևության:

(...)

Առաջին ատյանի դատարանն իր որոշման հիմքում դրել է միայն դատաքննության ընթացքում տված ամբաստանյալ Հ.Մակարյանի, տուժող Ա.Մինասյանի, վկաներ Շ.Թադևոսյանի, Ա.Հայրապետյանի, Մ.Առաքելյանի, Վ.Ղարիբյանի, Գ.Հակոբյանի, Բ.Ղուկասյանի նախաքննական ցուցմունքները, դատարանի որոշմամբ նշանակված լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության 2011 թվականի մայիսի 17-ի եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ.Հարությունյանի հայտարարությունը: Ընդ որում, Առաջին ատյանի դատարանը դատավճռում նշված անձանց դատաքննական ցուցմունքներն ամբողջությամբ չի գնահատել:

Ամբաստանյալ Հ.Մակարյանի, տուժող Ա.Մինասյանի և գործով վկաների նախաքննական և դատաքննական ցուցմունքների հակասությունները պարզելու համար Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի պահանջները, այն է՝ չի հրապարակել, չի հետազոտել և չի գնահատել նրանց նախաքննական ցուցմունքները:

(...)

Առաջին ատյանի դատարանը փորձագետ Գ.Հարությունյանի գրավոր հայտարարությունը դիտելով որպես ապացույց, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ և 126-րդ հոդվածների պահանջները:

(...)

Առաջին ատյանի դատարանը, պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնի որոշման մեջ մատնանշված խախտումները, ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության քրեադատավարական տեսանկյունից վերացնի ապացույցների հետազոտության և գնահատության վերաբերյալ թույլ տված խախտումները և դատաքննության արդյունքներով գա համապատասխան եզրահանգման» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 268):

10. Առաջին ատյանի դատարանը, կրկին անգամ քննության առնելով գործը, 2012 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ի մասով, նրա նկատմամբ կիրառել է ՀՀ ԱՄ 2011 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը և վերջինիս նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) տուժողի դատաքննական ցուցմունքները, դատաքննության ընթացքում անցկացված լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, փորձագետ Գ.Հարությունյանի գրավոր հայտարարությունը, ամբաստանյալի դատաքննական ցուցմունքների հետ համակցության մեջ վկայում են այն մասին, որ տուժողը ծնոտի կոտրվածքի ձևով ծանր մարմնական վնասվածքը ստացել է տանկի փողի վրա վայր ընկնելու հետևանքով, իսկ տուժողին ամբաստանյալը պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որի համար պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 85):

11. Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշումը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ տվյալ հանցակազմի տարրերն ու հատկանիշները բացակայում են: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը՝ գնահատելով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները և համադրելով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հետ, իրավացիորեն ամբաստանյալ Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ մասնավորապես հիմք ընդունելով ամբաստանյալ Հրաչ Արթուրի Մակարյանի, տուժող Արայիկ Աշխարհաբեկի Սինասյանի, վկա Բորիկ Ռազմիկի Ղուկասյանի դատաքննության ցուցմունքները, վկաներ Շիրակ Հարությունի Թաղևոսյանի, Արմեն Ժորայի Հայրապետյանի, Սինաս Արթուրի Առաքելյանի, Վահե Արծրունու Ղարիբյանի, Գևորգ Արտաշեսի Հակոբյանի նախաքննական ցուցմունքները, դատաբժշկական փորձագետի 2010 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 227/հ եզրակացությունը, դատական քննության ընթացքում դատարանի որոշմամբ նշանակված լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության 2011 թվականի մայիսի 17-ի թիվ 37/լ եզրակացությունը, դատաբժշկական փորձա-

գիտական հանձնաժողովի նախագահ Գ.Հարությունյանի հայտարարությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 157):

**3. Վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

12. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

13. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի դատական ակտում պարզաբանված չէ տուժողի ստացած մարմնական վնասվածքների առաջացման հարցը, մինչդեռ այն էական նշանակություն ունի սույն գործի լուծման համար: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ քրեական գործի նախաքննության և դատաքննությունների ընթացքում հիմնավորվել է, որ տուժող Ա.Սինասյանը մարմնական վնասվածքները, այդ թվում՝ ստորին ծնոտի կոտրվածքն ստացել է ամբաստանյալ Հ.Մակարյանի հարվածի հետևանքով: Նշված հանգամանքը հիմնավորվել է նախաքննության ընթացքում տուժողի կողմից տրված ցուցմունքով, որը, սակայն, գործի դատական քննության ընթացքում տուժողը հերքել է:

Տուժողի նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասության կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի պահանջները, վերոնշյալ հակասությունը պարզելու նպատակով չի հրապարակել, չի հետազոտել և չի գնահատել տուժողի բացատրություններն ու նախաքննական ցուցմունքը:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ համանման կերպով Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել նաև վկա Բորիս Դուկասյանի նախաքննական ցուցմունքները, որոնք վկայում են ամբաստանյալի կողմից տուժողին հարվածելու մասին, և հիմք ընդունելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները՝ դրանք չի համադրել նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների հետ, չի պարզել առաջացած հակասությունների պատճառները, ինչի արդյունքում հանգել է սխալ հետևության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, ինչպես նաև 360-րդ հոդվածների պահանջները, առանց հիմնավոր պատճառաբանության անտեսել է նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք է ընդունել միայն դատաքննության ընթացքում ամբաստանյալի և տուժողի ցուցմունքները՝ արդյունքում հանգելով սխալ հետևության:

14. Հիմք ընդունելով իր վերոշարադրյալ դատողությունները՝ բողոք բերած անձը եզրակացություն է արել այն մասին, որ սույն գործի քննության ընթացքում թույլ տրված՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումների արդյունքում Առաջին ատյանի դատարանը կայացրել է այնպիսի դատական ակտ, որը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ուստի բողոքաբերը խնդրել է վճարելի բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

15. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճարելի դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու պարագայում նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն առաջին ատյանի դատարանի կողմից կատարելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Գործի նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշման կատարումը.*

16. Սույն գործով Վճարելի դատարանի կողմից քննության առնվող առաջին իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանը կատարե՞լ է արդյոք Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը, որով Վերաքննիչ դատարանը գործի քննության նոր ծավալ էր սահմանել: Գործի նոր դատական քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանի համար պարտադի՞ր էին արդյոք Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման մեջ շարադրված եզրահանգումները:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ դատարան[ը] դատարան [է], որը վերաքննության կարգով գործը քննում է վերաքննիչ բողոքի հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք (...):»:

Վերաքննիչ դատարանի իրավասության սահմանների հարցին Վճարելի դատարանն անդրադարձել է *Ա.Կարախանյանի* և *Ռ.Արշալույսյանի* գործերով կայացված որոշումների մեջ: *Ա.Կարախանյանի* գործով կայացված որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինակաճանության և հիմնավորվածության ստուգման իրավասությամբ օժտված դատարան, որն առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է, որպես կանոն, վերջինիս կողմից հետազոտված փաստական տվյալների հիման վրա: Այսինքն՝ ամբողջ ծավալով գործի քննություն, ինչպես նաև գործով ներկայացված բողոքի ապացույցների հետազոտություն իրականացնելու լիազորություն ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանին վերապահված չէ, հետևաբար, եթե վերաքննիչ դատարանը փորձում է դուրս գալ իր լիազորությունների շրջանակից, այն սկսում է գործել որպես առաջին ատյանի դատարան, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անթույլատրելի է» (տե՛ս Արման Վլադիմիրի Կարախանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԶԲԴ/0569/01/08 որոշման 17-րդ կետը):

*Ռ.Արշալույսյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վերաքննիչ դատարանը՝ որպես վերանայող ատյան, գործի էության վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը» (տե՛ս Ռուբիկ Համբարձումի Արշալույսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԱՐԱԳ/0021/01/08 որոշման 21-րդ կետը):

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտում պետք է նշվեն, թե ինչ հիմքերով է առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, ինչն է հիմք ծառայել առաջին ատյանի դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով բեկանելու կամ փոխելու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (...):»:

19. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված վերլուծության համատեքստում զարգացնելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար նաև *Ա.Կարախանյանի* և *Ռ.Արշալույսյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով՝

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավագործության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական ատյանների միջև գործառնության կապերի տրամաբանական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս դեպքում վերաքննիչ բողոքի առարկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե վերաքննիչ դատարանը նախկինում բեկանել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, ապա նոր քննության արդյունքում կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն ստուգում է նաև

նախկինում իր կողմից սահմանված նոր քննության ծավալը պահպանված լինելու հանգամանքը:

20. Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ծավալ սահմանելու մասին վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությունը կապված է վերաքննիչ բողոքի հիմքերի, հիմնավորումների և պահանջների հետ և պարունակում է առանձին հարցերի վերաբերյալ դատական ակտն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չլինելու, մինչդատական վարույթի կամ դատաքննության ընթացքում օրենքի պահանջների խախտման, ինչպես նաև դատական ակտում առկա հակասությունների և դրանց վերացման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան դատավարական գործողություններ կատարելու, արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու և բոլոր այն հարցերի մասին նշումներ, որոնք, ըստ վերաքննիչ դատարանի, դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու հիմք են հանդիսացել:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 19-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը չի կատարել առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը, որով վերջինս նոր քննության ծավալ է սահմանել, վերաքննիչ դատարանը պետք է բեկանի առաջին ատյանի դատարանի կողմից նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ գործի վերաքննության հիմքում ընկած է սահմանափակ վերանայման հայեցակարգը, որը չի թույլատրում վերաքննիչ դատարանին իրականացնել գործի ամբողջ ծավալով քննություն, ուստի, եթե վերաքննիչ դատարանը բեկանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկում է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, առաջին ատյանի դատարանը պարտավոր է կատարել վերաքննիչ դատարանի որոշումը և վերաքննիչ դատարանի կողմից նշված ծավալով իրականացնել գործի նոր քննություն: Նոր քննության արդյունքում կայացված առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերաքննության կարգով վերանայելու ընթացքում վերաքննիչ դատարանը նախ և առաջ պետք է ստուգի, թե առաջին ատյանի դատարանն արդյոք կատարել է իր որոշումը և արդյոք իր կողմից նշված սահմաններում իրականացրել է գործի քննություն: Այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի որոշման դատական ստուգման արդյունքում պարզվում է, որ վերջինս չի պահպանել վերաքննիչ դատարանի կողմից սահմանված նոր քննության ծավալը, Վճարելի դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտը չի հանդիսանում օրենքի պահանջների պահպանմամբ կայացված ակտ և ենթակա է բեկանման:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Հ.Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադարձվել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով: Կիրառվել է «ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը, և Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է: Մեղադրողի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանի դատական ակտը քննության առնելով՝ վերաքննիչ դատարանը



մասնակիորեն բավարարել է մեղադրողի վերաքննիչ բողոքը, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ Հ.Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից վերադարձրել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ի մասով, կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետը և Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել է: Մեղադրողի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանի դատական ակտը կրկին քննության առնելով՝ Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի դատական ակտը թողել է անփոփոխ, իսկ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է (տես սույն որոշման 2-5-րդ, ինչպես նաև 8-11-րդ կետերը):

23. Սույն որոշման 17-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 22-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը չի կատարել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը, որով Վերաքննիչ դատարանը գործի քննության նոր ծավալ էր սահմանել: Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի որոշումը չկատարելու հանգամանքը չի գնահատվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրողի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշման օրինակահանրությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար նշված հանգամանքին, պատշաճ գնահատական տար դրան և արդյունքում բեկաներ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշումն այն պատճառաբանությամբ, որ վերջինս չի կատարել Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը, որով Վերաքննիչ դատարանը գործի քննության նոր ծավալ էր սահմանել:

24. Անդրադառնալով այն հարցին, թե գործի նոր դատական քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանի համար պարտադիր էին արդյոք Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման մեջ շարադրված եզրահանգումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ գործի նոր դատական քննության ծավալ սահմանելու մասին վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությունը պայմանավորված է վերաքննիչ բողոքի հիմքերով, հիմնավորումներով և պահանջով, որի շրջանակներում վերաքննիչ դատարանն իրավասու է դատողություններ անել առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինակահանրության, հիմնավորվածության և պատճառաբանվածության, ինչպես նաև գործի քննության ընթացքում թույլ տրված օրենքի պահանջների խախտման և դրանց վերացման նպատակով որոշակի դատավարական գործողություններ կատարելու, անձին մեղազրկող արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու, նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու և մի շարք այլ հարցերի վերաբերյալ,

որոնք վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են հանդիսացել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի՝ որպես առաջին ատյանի դատարանի որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունն ստուգելու իրավասությամբ օժտված դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանի համար: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջին ատյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի համար վերաքննիչ դատարանի որոշման պարտադիր բնույթը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված՝ դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությունից: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջին ատյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի դատական ակտի պարտադիր լինելը չի կարող ազդել առաջին ատյանի դատարանի անկախության վրա, քանի որ կատարելով վերադաս դատարանի՝ օրենքի պահանջների կատարման վերաբերյալ ցուցումը՝ դատական ակտի բեկանված մասով գործի նոր քննություն իրականացնելիս առաջին ատյանի դատարանը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

*II. Ստորադաս դատարանների որոշումների հիմնավորվածությունը.*

25. Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննության առնվող երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ի մասով վերադրակելու և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի, ինչպես նաև այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումները:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) Գատավորը (...) չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբեր[ի] ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ ավել ցանցանկություն [տա]՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. (...) դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում [է] ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված [իր] ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտած ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

27.1. Առաջին ատյանի դատարանն իր 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշման հիմքում դրել է ամբաստանյալ Հ.Մակարյանի, տուժող Ա.Մինասյանի, վկաներ Շ.Թադևոսյանի, Ա.Հայրապետյանի, Մ.Առաքելյանի, Վ.Ղարիբյանի, Գ.Հակոբյանի, Բ.Ղուկասյանի՝ բացառապես դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները, դատարանի որոշմամբ նշանակված լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության 2011 թվականի մայիսի 17-ի եզրակացությունը, դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ.Հարությունյանի հայտարարությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

27.2. Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման մեջ նշված է, որ Առաջին ատյանի դատարանը ամբաստանյալ Հ.Մակարյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքների հակասությունները պարզելու համար, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի պահանջները, չի հրապարակել, չի հետազոտել և գնահատել նրա բացատրություններն ու նախաքննական ցուցմունքները: Նմանատիպ ձևով Առաջին ատյանի դատարանը որոշման հիմքում դրել է նաև տուժող Ա.Մինասյանի դատաքննական ցուցմունքները: Եվ թեև հրապարակվել է տուժողի նախաքննական ցուցմունքները, սակայն չի պարզվել, չի հստակեցվել և գնահատվել դրանց հակասությունները, այլ հիմք է ընդունվել տուժողի դատաքննական ցուցմունքները: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի գնահատությունից դուրս է մնացել կարևոր վկա Բորիս Ղուկասյանի նախաքննական ցուցմունքները, որոնք նույնպես չեն հրապարակվել, չեն հետազոտվել, չեն գնահատվել նախաքննական և դատաքննական ցուցմունքների էական հակասությունները: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ դատաբժշկական փորձագետի 2010 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 227/հ եզրակացության համաձայն՝ ժամկետային

զինծառայող Ա.Մինասյանի ստացած մարմնական վնասվածքները ստորին ծնոտի ձախ անկյան բեկորային տեղաշարժով կոտրվածքի, ճակատի և բազկի շրջանի ենթամաշկային արյունազեղման ձևով հասցվել են բութ, կոշտ առարկայի ներգործության հետևանքով, հնարավոր է որոշման մեջ նշված հանգամանքներում, որոնք առաջացրել են առողջության ծանր վնաս, ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան 1/3-ի կայուն կորուստով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը, ինչպես նաև քրեական գործ, հատոր 1, թերթ 271):

27.3. Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ Վերաքննիչ դատարանը փորձագետին առաջադրել է հետևյալ հարցերը.

1. հնարավոր է արդյոք, որ Մինասյանը ստորին ծնոտի ձախ անկյան բեկորային տեղաշարժումով կոտրվածքը ստանար տանկի վրա վայր ընկնելու և ծնոտի ձախ մասով տանկի փողին հարվածելու հետևանքով.

2. հնարավոր է արդյոք, որ Մինասյանը ստորին ծնոտի ձախ անկյան բեկորային տեղաշարժումով կոտրվածքը ստանար Հ.Մակարյանի կողմից դեմքի աջ մասին հարվածելու հետևանքով:

Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության եզրակացության «հետևություններ» բաժնում արձանագրվել է, որ «(...) Նկատի ունենալով վերոգրյալը՝ ինչպես նաև հաշվի առնելով վնասվածքների բնույթը, անատոմիական տեղակայումը, չի բացառվում նրանց առաջացումը որոշման հարցադրումներում, առաջադրված պայմաններում, այն է՝ ինչպես բութ առարկայի բռունցքի ներգործությամբ, այնպես էլ տանկի փողի վրա վայր ընկնելու հետևանքով: Ելնելով վնասվածքների ձախակողմյան տեղակայումից՝ նրանց առաջացումը բացառվում է ստորին ծնոտի աջ կեսի շրջանում ուժի ներդրումից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 272):

27.4. Վերաքննիչ դատարանում հարցաքննված փորձագետ Մ.Մելիքյանը հայտնել է, որ փորձաքննություն իրականացնելիս իր կողմից ուսումնասիրվել է հիվանդության պատմությունը, ինչպես նաև գրուցել է հիվանդի հետ, որը հայտնել է, որ ծնոտի շրջանի մարմնական վնասվածքը ստացել է համաձառայակիցների կողմից ծեծի ենթարկվելու արդյունքում, ինչը և իր կողմից արձանագրվել է եզրակացության մեջ: Տանկի փողի վրա ընկնելու մասին տուժողը որևէ տվյալ չի հայտնել, այլապես այդ մասին կնշվեր եզրակացության մեջ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 270):

27.5. Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հղում է կատարվել փորձագետ Գ.Հարությունյանի գրավոր հայտարարության վրա, սակայն, թե ինչի հիման վրա կամ որպես ինչ ապացույց է այն օգտագործվել, չի հստակեցվել: Ավելին, ներկայացված դիմումը և հայտարարությունը որևէ կերպ հաստատված չեն, չկա Գ.Հարությունյանի անձնագրի տվյալները և չգիտես ինչ ճանապարհով Գ.Հարությունյանին հայտնի է եղել, թե դատարանում ինչ հարցեր են առաջադրվելու իրեն և իր հայտարարության մեջ, պատասխանել է հենց այդ հարցերին: Եվ քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն հնարավոր չի ճշտել այդ «ապացույցի» ձեռքբերման աղբյուրը, ուստի այն չէր կարող օգտագործվել քրեական վարույթի ընթացքում՝ նկատի ունենալով, որ այն ձեռք է բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի պահանջների խախտմամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը, ինչպես նաև քրեական գործ, հատոր 1, թերթ 272):

27.6. Առաջին ատյանի դատարանը, անտեսելով Վերաքննիչ դատարանի կողմից նշված վերոշարադրյալ հանգամանքները, իր կողմից 2012 թվականի ապրիլի 12-ին

կայացված դատական ակտի հիմքում դրել է ապացույց չհանդիսացող՝ փորձագետի հայտարարությունը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Սույն որոշման 27.2-27.5-րդ ենթակետերում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից, սակայն, երևում է, որ փորձագետը չի բացառել նաև բուք առարկայի ներգործությամբ վնասվածքի առաջացման հնարավորությունը: Բացի այդ, եզրակացության մեջ հստակ պատասխան է տրվել դատարանի կողմից լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ առաջադրված հարցերին, անհրաժեշտ էր միայն լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության արդյունքում ձեռք բերված ապացույցը գնահատել վերաբերելիության, թույլատրելիության և այլ ապացույցների հետ համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչը, Առաջին ատյանի դատարանի կողմից չի կատարվել: Ձեռք բերված ապացույցների պայմաններում, հիմք ընդունելով դատաքննության ընթացքում դատաբժշկական փորձաքննության թիվ 37/լ եզրակացության միայն այն հետևությունը, որ տուժողը ծնոտի շրջանում կարող էր վնասվածք ստանալ տանկի փողի վրա վայր ընկնելու հետևանքով, Առաջին ատյանի դատարանը, առանց գնահատելու նույն եզրակացության հետևությունն այն մասին, որ այդ վնասվածքը տուժողը կարող էր ստանալ նաև բուք առարկայի ներգործությամբ, հանգել է հետևության, որ տուժողի ստացած մարմնական վնասվածքները առաջացել են տանկի փողի վրա վայր ընկնելու հետևանքով:

27.7. Վերաքննիչ դատարանը, կրկին քննության առնելով մեղադրողի վերաքննիչ բողոքը, 2012 թվականի հունիսի 14-ի որոշմամբ կայացրել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմանը հակասող որոշում, որում շարադրելով Առաջին ատյանի դատարանի հետևությունները՝ բավարար չափով չի պատճառաբանել, թե ինչու է գտնում, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

28. Սույն որոշման 26-րդ կետում շարադրված քրեադատավարական դրույթների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 27-րդ կետի ենթակետերում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հրաչ Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ի մասով վերադրակելու և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Հ.Մակարյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի որոշումը, ինչպես նաև այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չեն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Ֆ. Գալստյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված դիրքորոշումն այն մասին, որ «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու

հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման» (տե՛ս Ֆրունզիկ Խաչիկի Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը):

29. Հիմք ընդունելով սույն որոշման 16-28-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ գնահատման չեն ենթարկվել սույն գործի մի շարք հանգամանքներ, ինչի հետևանքով չեն լուծվել Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ առաջ քաշված մի շարք հարցեր, որոնք ինչպես առանձին վերցված, այնպես էլ իրենց համակցությամբ էական նշանակություն ունեն սույն գործի քննության, մասնավորապես՝ Հ.Մակարյանին մեղսագրված արարքը ճիշտ որակելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Վերաքննիչ դատարանը, 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ բեկանելով Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 3-ի որոշումը, գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելով և նոր քննության ծավալ սահմանելով, 2012 թվականի հունիսի 14-ի որոշմամբ կայացրել է Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմանը հակասող որոշում, որում բավարար չափով չի պատճառաբանել, թե ինչու է գտնում, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված:

30. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի պահանջների խախտում, հետևաբար Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ Հրաչ Արթուրի Մակարյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասից ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի վերադարձվելու, նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու մասին 2012 թվականի ապրիլի 12-ի և այն անվիժվալ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումներն անհրաժեշտ է բեկանել և քրեական գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

31. Նոր դատական քննությամբ անհրաժեշտ է սույն որոշման մեջ բարձրացված հարցերի շուրջ կատարել օբյեկտիվ, բազմակողմանի քննություն և, ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներից, պատշաճ գնահատման ենթարկել գործում եղած ապացույցները՝ նկատի ունենալով սույն որոշման և Վերաքննիչ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշման մեջ առաջ քաշված հարցադրումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Հրաչ Արթուրի Մակարյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 12-ի և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումները բեկանել և քրեական գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

39.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՐԴ/0176/01/11**

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ տուժող՝* Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արևիկ Հակոբի Սահակյանի և Ծովինար Հակոբի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի և տուժող Ա.Շահբազյանի վճռարեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմություն**

1. 2011 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արմավիրի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 48115110 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ Արևիկ Հակոբի Սահակյանը և Ծովինար Հակոբի Սահակյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Նույն օրը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արմավիրի մարզի քննչական բաժնի քննիչի որոշումներով Արևիկ և Ծովինար Սահակյանների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:



2011 թվականի նոյեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռով Արևիկ Հակոբի Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Ծովինար Հակոբի Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Վճռվել է քաղաքացիական հայցը թողնել առանց քննության և տուժող Անահիտ Գևորգի Շահբազյանին իրավունք վերապահել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների պաշտպան Յ.Մարգարյանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռը Արևիկ Հակոբի Սահակյանի և Ծովինար Հակոբի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով բեկանվել է: Արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ ամբաստանյալներ Արևիկ Հակոբի Սահակյանը և Ծովինար Հակոբի Սահակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով ճանաչվել են անմեղ և արդարացվել են:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը և տուժող Ա.Շահբազյանը վճարելի բողոքներ են ներկայացրել, որոնք Վճարելի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. Արմավիրի մարզի Արմավիր գյուղի բնակչուհիներ Արևիկ և Ծովինար Հակոբի Սահակյանները իրենց մոր՝ Վալյա Հարությունյանի հետ բնակվել են իրենց հանգուցյալ հոր՝ Հակոբ Սահակյանի՝ Արմավիրի մարզի Արմավիր գյուղի տանը, որտեղ բնակվել է նաև Արևիկի և Ծովինարի հորաքույր Անահիտ Գևորգի Շահբազյանը:

Հակոբ Սահակյանի մահվանից հետո երեխաների՝ Արևիկի և Ծովինարի և կնոջ՝ Վալյա Հարությունյանի հարաբերությունները հանգուցյալի քրոջ՝ Անահիտ Գևորգի Շահբազյանի հետ մշտապես եղել են լարված, միմյանց հետ հաճախ վիճաբանել են կենցաղային հարցերի շուրջ, դրա պատճառով Վալյա Հարությունյանն իր դուստրերի՝ Արևիկի և Ծովինարի հետ տեղափոխվել է եղբոր տուն: 2011 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 17-ի սահմաններում, Վալյա Հարությունյանն իր եղբորորդի Կոլյա Հայկի

Հարությունյանի և նրա ընկեր Արմեն Սրապի Կնյազյանի հետ վերջինիս «ՁԻԼ» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Արմավիրի մարզի Արմավիր գյուղ՝ իրենց իրերը տեղափոխելու նպատակով: Անահիտ Շահբազյանը, տեսնելով Վալյա Հարությունյանին, Արևիկ և Ծովինար Սահակյաններին, սկզբում արգելել է վերջիններիս մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել նրանց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել, և պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ: Այդ ժամանակ Վալյա Հարությունյանը, գտնվելով տանը, իրենց հագուստներն է դասավորել, իսկ աղջիկները՝ Արևիկը և Ծովինարը, իրերն են տեղափոխել և դրել «ՁԻԼ» ավտոմեքենայի մեջ: Այդ ընթացքում Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել Արևիկ և Ծովինար Սահակյաններին, որի պատճառով վիճաբանություն է սկսվել, և վերջիններս, ձեռքերով և ոտքերով հարվածելով, ծեծի են ենթարկել Անահիտ Շահբազյանին: Վալյա Հարությունյանը, բակից վիճաբանության ձայներ լսելով, դուրս է եկել տանից ու դուռերի հետ միասին հեռացել են այդտեղից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 66, 75, 95):

6. Առաջին ատյանի դատարանում Արևիկ և Ծովինար Սահակյանները ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր չեն ճանաչել և նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ իրոք իրենց հոր՝ Հակոբ Սահակյանի մահից հետո իրենց մոր՝ Վալյա Հարությունյանի հետ բնակվել են իրենց հայրական տանը, սակայն հորաքրոջ՝ Անահիտ Շահբազյանի հետ ունեցել են մշտապես լարված հարաբերություններ, հաճախ են վիճել կենցաղային հարցերի շուրջ, այդ պատճառով նրանք տեղափոխվել են Արմավիր քաղաքում բնակվող իրենց մորեղբոր տուն: 2011 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 17-ի սահմաններում, իրենց մորեղբոր որդի Կոլյա Հայկի Հարությունյանի և նրա ընկեր Արմեն Սրապի Կնյազյանի հետ վերջինիս «ՁԻԼ» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Արմավիրի մարզի Արմավիր գյուղ՝ իրենց իրերը վարձակալած բնակարան տեղափոխելու նպատակով: Անահիտ Շահբազյանը սկզբում արգելել է իրենց մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել իրենց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել և հեղուկով լցված պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ, սակայն վերջինիս չի դիպել: Երբ իրենք իրերն են տեղափոխել և դրել «ՁԻԼ» ավտոմեքենայի մեջ, Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել, որի ժամանակ իրենց միջև վիճաբանություն է սկսվել, իսկ Ծովինար Սահակյանը իրել է Անահիտ Շահբազյանին: Այնուհետև իրենց մայրը՝ Վալյա Հարությունյանը, բակից վիճաբանության ձայներ լսելով, դուրս է եկել տանից ու միասին հեռացել են այդտեղից:

Իրենք Անահիտ Շահբազյանին չեն հարվածել, չեն ծեծել ու մարմնական վնասվածքներ չեն պատճառել, միայն Ծովինար Սահակյանն է իրել նրան՝ սաստելու համար (տե՛ս քրեական գործ հատոր 1, թերթ 187):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Քրեական պատասխանատվության հիմքի, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, քրեական դատավարության օրենսդրության խնդիրների, օրինականության, անմեղության կանխավարկածի, ապացույցների, դրանց ստուգման, իրավական գնահատության, ապացուցման ենթական հանգամանքների վերաբերյալ ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսդրության վերոհիշյալ հիմնարար իրավադրույթների պահանջների համատեքստում քննության առնելով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված ճանաչված

փաստական հանգամանքները առ այն, որ ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանները 2011թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 17.00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Արմավիր գյուղում բնակվող իրենց հորաքույր՝ գործով տուժող Անահիտ Գևորգի Շահբազյանի տան բակում, իրենց գույքը տեղափոխելու ժամանակ վիճաբանել են վերջինիս հետ, որի ընթացքում դիտավորությանը հարվածներ են հասցրել և ծեծի ենթարկել Անահիտ Շահբազյանին, և Ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով վերը նշված փաստական հանգամանքների հիմքում դրված ապացույցները, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ Ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով հնարավոր չէ հիմնավորված համարելու ամբաստանյալներ Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, մասնավորապես, դրա օբյեկտիվ կողմը:

Դատաբժշկական փորձագետի թիվ 231 եզրակացությանը ամրագրվել է տուժող Ա.Շահբազյանի ստացած ոչ թե «մարմնական վնասվածքները», այլ «մարմնական վնասվածքը»:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալները և նկատի ունենալով, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատաքննությանը չհաստատվեց ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա.Շահբազյանին երեք և ավելի անգամներ հարվածելու փաստը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշն է, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, արտահայտելով միայն իրավունքի շահերը, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմամբ հանգում է այն հետևության, որ տուժողի ցուցմունքներն արժանահավատ չեն, նա նպատակ է հետապնդում կենցաղային հողի վրա առաջացած վեճի հետևանքով, իր իսկ հակասական ցուցմունքների վրա ամբաստանյալի կարգավիճակում հայտնված Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով պատժելու, նրա՝ որպես շահագրգիռ անձի ցուցմունքները բավարար չեն ամբաստանյալի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով որակելու համար» (տե՛ս քրեական գործ հատոր 2, թերթ 83, 85, 86):

### **3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

8. Բողոքաբերը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը, նշել է, որ սույն գործով առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ, 127-րդ հոդվածների և 397-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, մասնավորապես, ճիշտ չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ճիշտ չի կիրառել նյութական

օրենքը, ինչի արդյունքում հանցանք կատարած երկու անձինք անհիմն ազատվել են քրեական պատասխանատվությունից և պատժից:

Բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծեծելու կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, որը չի առաջացրել նույն օրենսգրքի 117-րդ հոդվածով («Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը») նախատեսված հետևանքները, և եզրակացություն արել այն մասին, որ հաստատված չհամարելով ամբաստանյալների կողմից տուժողին բազմաթիվ հարվածներ հասցնելու հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության ամբաստանյալների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ: Բողոք բերած անձի պնդմամբ ծեծը ենթադրում է գործողությունների պարբերականություն, իսկ նույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված «բռնի գործողություններ»-ը ներառում են անձին ֆիզիկական ցավ պատճառած մեկ հարվածը: Որպես նման «բռնի գործողություններ»-ի օրինակ՝ բողոք բերած անձը նշել է նաև կնմտելը, մազերը քաշելը և այլն:

10. Բողոքաբերը փաստարկել է, որ ծեծի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունից երևում է, որ ծեծին քրեախրավական գնահատական տալու և, հետևաբար, նշված հոդվածի կիրառման հարցում տարատեսակ մոտեցումներ են ցուցաբերվում: Մասնավորապես, ամբաստանյալի կողմից տուժողին մեկ հարված հասցնելու պարագայում դատարանները որոշ դեպքերում կայացրել են մեղադրական, այլ դեպքերում՝ արդարացման դատավճիռներ: Արդյունքում, բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ ծեծի համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կապակցությամբ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռին:

12. Բողոքաբերը տուժող Անահիտ Շահրազյանը, նշել է, որ սույն գործով վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիան: Ուստի, խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 14-ի դատավճռին:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքները վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծեծի համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ,

որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*I. Ծեծի համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը.*

14. Նախքան սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքներում բարձրացված իրավական հարցերին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը՝ վերհանելով հատկապես դրա օբյեկտի, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի մի շարք առանձնահատկություններ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ սույն գործով ներկայացված բողոքներում բարձրացված հարցերը քննելիս:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծեծելու կամ այլ բռնի գործողություններ կատարելու համար, որը չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով («Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը») նախատեսված հետևանքներ:

Մեջբերված քրեաիրավական դրույթը ներառված է մարդու դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ բաժնի՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող 16-րդ գլխում: Նշված գլխում ներառված առողջության դեմ հանցագործությունները հանրորեն վտանգավոր այն արարքներն են, որոնք ուղղված են մարդու առողջության դեմ:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը մարդու առողջությունն է, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ նաև մարդու պատիվն ու արժանապատվությունը:

Առողջությունը մարդու օրգանիզմի այնպիսի ֆիզիոլոգիական վիճակն է, երբ դրա բոլոր համակարգերը, մասերը և օրգանները նորմալ գործում են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության պրեամբուլայում առողջությունը բնորոշվում է որպես «ֆիզիկական, հոգևոր և սոցիալական լրիվ բարօրության վիճակ և ոչ թե միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայություն»:

Առողջության դեմ ուղղված ոտնձգության հետևանքով վնաս է պատճառվում անձի առողջությանը, խախտվում են անձի ինչպես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ նրա առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Քրեաիրավական պաշտպանության օբյեկտի տեսանկյունից առողջությունը ոչ նյութական բարիք է, որը, ընդհանուր կանոնի համաձայն, բնորոշվում է որպես մարդու ֆիզիկական և հոգեկան բարօրության վիճակ: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեական օրենքը պաշտպանում է ոչ թե առողջության իդեալական վիճակը, այն է՝ անձի ֆիզիկական և հոգեկան լրիվ բարօրության վիճակը, այլ անձի այն առողջական վիճակը, որն առկա է եղել նրա նկատմամբ հանցավոր ոտնձգություն կատարելու պահին: Հետևաբար, «առողջության դեմ ուղղված» հասկացությունն անհրաժեշտ է մեկնաբանել՝ ելնելով ինչպես Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրության պրեամբուլայում առողջությանը տրված ընդհանուր բնորոշումից, այնպես էլ այն անձի մոտ օբյեկտիվորեն առկա առողջական վիճակից, ում նկատմամբ կատարվել է հանցավոր ոտնձգությունը:

Ինչ վերաբերում է 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության լրացուցիչ օբյեկտին՝ արժանապատվությանը, ապա այն հանդիսանում է մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էության, անհրաժեշտ և անբախտելի հատկանիշ, որի հիման վրա մարդը դառնում է սոցիալական կենսագործունեության լիիրավ սուբյեկտ:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է՝

ա) տուժողին ֆիզիկական ցավ պատճառելով,

բ) տուժողի նկատմամբ այլ բռնի գործողություններ կատարելով, որոնք չեն պարունակում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ:

Նշված արարքների հետևանքով տուժողի ֆիզիկական վիճակը բացասական փոփոխությունների է ենթարկվում, որոնք բնորոշվում են որպես «առողջության դեմ ուղղված» ոտնձգության հետևանք: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում նշվում է ծեծելու կամ այնպիսի այլ բռնի գործողություններ կատարելու մասին, որոնք չեն պարունակում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ, այնուամենայնիվ այն հանդիսանում է մարդու առողջության դեմ ուղղված ոտնձգություն, որը օժտված է հանրային վտանգավորության որոշակի բնույթով և աստիճանով:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքերում, երբ կիրառված բռնության հետևանքով տուժողի հոգեկան վիճակը բացասական փոփոխությունների է ենթարկվում, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով («Խոշտանգում»):

18. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածում առկա՝ «այլ բռնի գործողություններ» ձևակերպմանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհրաժեշտ է մեկնաբանել «բռնություն» հասկացության համատեքստում: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում նկարագրված են բռնության տարբեր դրսևորումներ, որոնց թվին են դասվում ծեծը, խոշտանգումը և ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում որպես ինքնուրույն հանցակազմ կամ հանցակազմի որակյալ հատկանիշ կամ հանցանքի կատարման եղանակ նախատեսված բռնի այլ գործողությունները, որոնք նկարագրված են որպես բռնության կիրառում, բռնության սպառնալիք, այլ բռնություն, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն կամ դրանց կիրառման սպառնալիք, ֆիզիկական ցավ, ուժեղ ցավ, հոգեբանական բռնություն և այլն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքի հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:

19. Մույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության համատեքստում մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծեծը կամ այլ բռնի գործողությունները բռնության տարատեսակներ են, որոնք կարող են դրսևորվել ֆիզիկական բռնությամբ: Հոգեբանական բռնության դեպքում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

19.1. Ծեծելը բնութագրվում է տուժողի մարմնին հարվածներ հասցնելով, ընդ որում, հարվածները կարող են հասցվել ինչպես ձեռքերով կամ ոտքերով, այնպես էլ բութ և կոշտ գործիքի գործադրմամբ՝ բազմաթիվ (մեկից ավելի) անգամ:

Վճռարեկ դատարանի վերոշարադրյալ մեկնաբանության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում օգտագործված «ծեծել» եզրույթը ներկայացված է հոգնակի թվով, այսինքն՝ ոչ թե որպես մեկ, այլ բազմակի (մեկից ավելի) ակտ: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով արգելված ծեծի բովանդակությունից հետևում է, որ ծեծը տուժողին բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, որի արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական ցավ:

19.2. Այլ բռնի գործողություններ են, օրինակ՝ ձեռքերը ոլորելը, մազերը քաշելը, կճմտելը և այլն:

20. Ծեծի կամ այլ բռնի գործողությունների մասին կարող են վկայել անձի վրա արյան գեղումների, քերծվածքների, կապտուկների և այլ նմանատիպ դրսևորումների առկայությունը: Դրա հետ մեկտեղ Վճռարեկ դատարանն ընդգծում է, որ ծեծի կամ այլ բռնի գործողությունների արդյունքում անձի մարմնի վրա կարող է որևէ տեսանելի հետք չմնալ:

Այն դեպքում, երբ ծեծի կամ այլ բռնի գործողությունների հետևանքով տուժողի մարմնի վրա մնում են տեսանելի հետքեր, դրանք գնահատվում են ըստ ծանրության աստիճանի՝ ընդհանուր կանոններին համապատասխան: Գնահատումը տվյալ դեպքում իրականացվում է պատճառված վնասի ծանրության աստիճանի վերաբերյալ դատարժեկական փորձաքննության արդյունքների հիման վրա:

Այն դեպքում, երբ ծեծի կամ այլ բռնի գործողությունների արդյունքում անձի մարմնի վրա որևէ տեսանելի հետք չի մնացել և դրանց հետևանքով անձին, օրինակ՝ ֆիզիկական ցավ է պատճառվել կամ դրանք անձի թեթև տկարության պատճառ են հանդիսացել, դատարժեկական փորձագետն արձանագրում է տուժողի սուբյեկտիվ գանգատները՝ նշելով, որ վնասվածքների տեսանելի հետքերը բացակայում են, և չի որոշում առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանը: Նման դեպքերում ծեծի կամ բռնի այլ գործողություն կատարելու, մասնավորապես՝ տուժողին ֆիզիկական ցավ պատճառելու հանգամանքի բացահայտումն ամբողջովին դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի ճիշտ որակումը կոնկրետ հանրորեն վտանգավոր արարքի մեջ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայության հավաստումն է: Հետևաբար, քրեական վարույթն իրականացնող մարմնի խնդիրն է բացահայտել այն հատկանիշները, տարրերը, որոնք կազմում են տվյալ տեսակի հանցագործության օրենսդրական մոդելը կամ որ նույնն է՝ հանցակազմը:

Վճռարեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով գործի քննության ժամանակ վարույթն իրականացնող մարմինը պետք է ուշադրություն դարձնի և պատշաճ իրավական գնահատության արժանացնի վկաների, տուժողի, ամբաստանյալների ցուցմունքները և գործի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք թույլ կտան սահմանազատել նախ՝ հանցավոր արարքը ոչ հանցավոր արարքից, ապա քրեորեն հետապնդելի մի արարքը մյուս արարքից և դրանց ճիշտ քրեաիրավական գնահատական տալ:

21. Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, այլ խոսքով՝ քննարկվող հանցակազմով նախատեսված ֆիզիկական բռնությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծեծը կամ բռնի այլ գործողությունները կարող են այլ հանցագործությունների հատկանիշներ պարունակել կամ դրանց կատարման միջոց լինել: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը այլ հանցագործություններից սահմանազատելու համար անհրաժեշտ է պարզել հանցավորի դիտավորության ուղղվածությունը և գործի կոնկրետ հանգամանքները և ըստ այդմ էլ որոշել, թե արարքը քրեական օրենքով պաշտպանվող որ օբյեկտի դեմ է ուղղված: Օրինակ, եթե խուլիգանության ժամանակ հանցավորի արարքը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ապա այն այլ հատկանիշների առկայության դեպքում պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով («Խուլիգանություն»): Կամ անձի կյանքի կամ առողջության համար բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի («Ավազակությունը») պարտադիր հատկանիշ է, իսկ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը կողոպուտի պարտադիր հատկանիշ է (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված) և այլն:

Ինչ վերաբերում է ծեծի կամ այլ բռնի գործողությունների շարժառիթին ու նպատակին, ապա դրանք կարող են տարբեր լինել և արարքի որակման վրա չեն ազդում:

*II. Մեկ հարվածի քրեաիրավական նշանակությունը և հետևանքները.*

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. կարո՞ղ է արդյոք մեկ հարվածը որակվել որպես ծեծ:

23. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «(...) «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որեւէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»:



Վերոշարադրյալ, ինչպես նաև մի շարք այլ միջազգային-իրավական դրույթներ Վճարելի դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել Ա. Գոդյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ ընդգծվել է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի բացարձակ բնույթը (տե՛ս *mutatis mutandis* Արայիկ Էդուարդի Գոդյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԶԴ/0049/01/09 որոշումը):

24. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված դրույթների, մասնավորապես՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի վերլուծությունից երևում է, որ այն կիրառում է «մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք» ձևակերպումը: Նշված ձևակերպումը համադրելով սույն որոշման 18-րդ կետում մեկնաբանված «բռնություն» հասկացության հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բռնության արդյունքում անձին ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է պատճառվում, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով չեն կարող որակվել այն դեպքերը, երբ անձին ֆիզիկական ցավ չի պատճառվում: Միևնույն ժամանակ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ եզրակացությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ եթե արարքը փաստացի չի առաջացրել ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք և այդպիսիք պատճառելու դիտավորյալը չի բնութագրվում, իր նվազ կարևորության պատճառով չի կարող հանցագործություն համարվել (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս):

25. Վճարելի դատարանն ընդգծում է, որ վերոշարադրյալ եզրահանգումը հաստատվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ («Դիտավորյալ արողությանը թեթև վնաս պատճառելը») և 119-րդ («Խոշտանգումը») հոդվածների կառուցվածքային և բովանդակային համեմատությամբ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դիտավորյալ արողությանը թեթև վնաս պատճառելու համար, որն առաջացրել է արողության կարճատև քայքայում, կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ:

ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում խոշտանգումը բնորոշվում է որպես ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ («Դիտավորյալ արողությանը ծանր վնաս պատճառելը») և 113-րդ («Դիտավորյալ արողությանը միջին ծանրության վնաս պատճառելը») հոդվածներով նախատեսված հետևանքներ:

Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ, 118-րդ և 119-րդ հոդվածներում նախատեսված հանցագործությունների պարտադիր հատկանիշներից մեկը ֆիզիկական ցավի առկայությունն է: Նշված հոդվածների տարբերությունը պատճառված վնասի աստիճանն է: Մասնավորապես՝ դիտավորյալ արողությանը թեթև վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, դիտավորյալ արողությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշի բացակայության, ինչպես նաև այն դեպքում, երբ անձին պատճառվել է ֆիզիկական ցավ, արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ուժեղ ցավ,

մարմնական կամ հոգեկան տառապանք պատճառելու դեպքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց ֆիզիկական ցավի մեկ հարվածը որպես այլ բռնի գործողություններ որակելը ճիշտ չէ, քանի որ օբյեկտիվ կողմի տեսանկյունից հարված հասցնելը և այլ բռնի գործողությունները իրարից տարբերվում են, այդ եզրույթները նույնացնելու, ինչպես լեզվաբացատրական, այնպես էլ քրեաիրավական հիմքեր չկան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ծեծը ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հնարավոր են դեպքեր, երբ մեկ հարվածն ավելի ուժգին լինի, քան մի քանիսը: Հարվածների քանակը արարքը որակելու դեպքում էական նշանակություն ունի միայն այն դեպքում, երբ դրա հետևանքով որևէ հանցակազմի հատկանիշ համարվող ֆիզիկական վնաս չի առաջացել: Այսինքն՝ մեկ հարվածը, եթե առաջացնում է, օրինակ՝ առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս, ապա որակվում է ըստ փաստացի վրա հասած հետևանքի, իսկ այն դեպքում, երբ մեկ հարվածը ֆիզիկական ցավ կամ ֆիզիկական տառապանք չի պատճառել և այդպիսիք պատճառելու դիտավորյա՞մբ չի բնութագրվում, ապա իր նվազ կարևորության պատճառով այն չի կարող հանցագործություն համարվել:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեկ հարվածով ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու կամ այդպիսիք պատճառելու դիտավորության առկայության հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի տարիքը, առողջական վիճակը, ինչպես նաև հանցավորի ֆիզիկական տվյալները, հարվածի տեղակայումը, բնույթը և այլ հանգամանքները, որոնք իրենց համակցությամբ կարող են վկայել, որ տուժողին պատճառվել է ֆիզիկական ցավ:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 23-26-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեկ հարվածը չի կարող որակվել որպես ծեծ, ծեծը ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը, որոնց արդյունքում տուժողին ֆիզիկական ցավ է պատճառվել: Հետևաբար, տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը, որոնց արդյունքում տուժողին ֆիզիկական ցավ չի պատճառվել, ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով որպես ծեծ:

Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողին մեկ անգամ ուժեղ ցավ պատճառելը կամ պարբերաբար մեկական հարված հասցնելը, անկախ հարվածի ուժգնությունից, կարող է որակվել որպես խոշտանգում (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդված), եթե հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով անձին դիտավորյալ կերպով պատճառել է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեկ հարվածը, որը չի որակվում որպես ծեծ և հետևաբար, քրեաիրավական պատասխանատվության չի հանգեցնում, կարող է քաղաքացիաիրավական պատասխանատվություն առաջացնել, եթե դրանով նվաստացվի անձի պատիվն ու արժանապատվությունը:

### *III. Ամբաստանյալներին մեղսագրված արարքի քրեաիրավական գնահատականը.*

28. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով հնարավոր

չէ հիմնավորված համարել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը:

29. Ա. Պապյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն (տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 18-րդ կետը):

Գ. Ճաղարյանի և այլոց գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը:

Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը:

(...)

(...) համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական

եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր, մասնավորապես, արարքի փաստական նկարագրությունը, այդ նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, վճռորոշ նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար:

(...)

(...) գնահատելով մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեախրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: Նույն կերպ անընդունելի է, երբ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում հանցակիցներին ներկայացվում է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունները, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը:

(...)

(...) հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության հարցը լուծելիս անհրաժեշտ է հաստատել, որ նա մասնակցել է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարմանը, որն ուղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում և որի կապակցությամբ հաստատված է նրա մեղքը: Այլ խոսքով՝ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս նրանցից յուրաքանչյուրի արարքը պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ մյուս բոլոր հանցակիցների հետ համակցության մեջ՝ պարզելով հանցակիցներից յուրաքանչյուրի արարքի հանրային վտանգավորությունն ու հակախրավականությունը և հետևաբար նաև հանցակիցներից յուրաքանչյուրի արարքում հանցագործության հատկանիշների և քրեական պատասխանատվության հիմքերի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի և գնահատի հանցակիցների կողմից համատեղ կատարված բոլոր արարքները, ինչպես նաև այդ արարքների հետևանքները՝ արդյունքում ուրվագծելով հանցակիցներից յուրաքանչյուրի՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու սահմաններն ու ծավալները (տե՛ս Գևորգ Խաչատուրի Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԳ/0002/01/11 որոշման 15-րդ, 19-րդ, 21-րդ և 24-րդ կետերը):

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Արևիկ և Ծովինար Սահակյաններին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում առկա է հետևյալ ձևակերպումը՝ «Այդ ընթացքում Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել Արևիկ և Ծովինար Սահակյաններին, որի պատճառով վիճաբանություն է սկսվել և վերջիններս ձեռքերով և ոտքերով հարվածելով ծեծի են ենթարկել Անահիտ Շահբազյանին» (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանում Արևիկ և Ծովինար Սահակյանները նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ Անահիտ Շահբազյանը սկզբում արգելել է իրենց մտնել տան բակ, այնուհետև սկսել է վիճաբանել իրենց հետ՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց իրերի հետ իր ապրանքներն էլ են ցանկացել տանել, և հեղուկով լցված պոլիէթիլենային շիշը նետել է Արևիկ Սահակյանի ուղղությամբ, սակայն վերջինիս չի դիպել: Երբ իրենք իրերն են տեղափոխել և դրել «ՁԻԼ» ավտոմեքենայի մեջ, Անահիտ Շահբազյանը փորձել է խանգարել, որի ժամանակ իրենց միջև վիճաբանություն է սկսվել, իսկ Ծովինար Սահակյանը հրել է Անահիտ Շահբազյանին: Այնուհետև իրենց մայրը՝ Վալյա Հարությունյանը, բակից վիճաբանության ձայներ լսելով, դուրս է եկել տանից ու միասին հեռացել են այդտեղից: Իրենք Անահիտ Շահբազյանին չեն հարվածել, չեն ծեծել ու մարմնական վնասվածքներ չեն պատճառել, միայն Ծովինար Սահակյանն է հրել նրան՝ սաստելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ արձանագրել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով կամ գոնե դրանց որոշակի համակցությամբ հնարավոր չէ միանշանակորեն հիմնավորված համարելու ամբաստանյալներ Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, մասնավորապես, դրա օբյեկտիվ կողմը:

Դատաբժշկական փորձագետի թիվ 231 եզրակացությամբ ամրագրվել է տուժող Ա.Շահբազյանի ստացած ոչ թե «մարմնական վնասվածքները», այլ «մարմնական վնասվածքը»:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալները և նկատի ունենալով, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատաքննությամբ չհաստատվեց ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա.Շահբազյանին երեք և ավելի անգամներ հարվածելու փաստը, ինչը ՀՀ ն՞»<sup>31</sup>Յ օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշն է, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, արտահայտելով միայն իրավունքի շահերը, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմամբ հանգում է այն հետևության, որ տուժողի ցուցմունքներն արժանահավատ չեն, նա նպատակ է հետապնդում կենցաղային հողի վրա առաջացած վեճի հետևանքով, իր իսկ հակասական ցուցմունքների վրա ամբաստանյալի կարգավիճակում հայտնված Արևիկ Սահակյանին և Ծովինար Սահակյանին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով պատժելու, նրա՝ որպես շահագրգիռ անձի ցուցմունքները բավարար չեն ամբաստանյալի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով որակելու համար» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

31. Սույն որոշման 29-րդ կետում շարադրված դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 30-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից սույն գործով ամբաստանյալներին առաջադրվել է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու ենթադրյալ հանցավոր արարքին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը: Ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի

երևում, թե նրանցից յուրաքանչյուրին մեղսագրված արարքն ինչպես է դրսևորվել և ինչում է արտահայտվել, նրանցից ով է հարվածել տուժողին և քանի անգամ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում չի ապահովվել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձանց իրավունքը տեղեկանալու իրենց դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, հետևաբար չի ապահովվել նաև ամբաստանյալների պաշտպանության իրավունքի իրականացումը, որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրականացման պահանջները բավարարող երաշխիք: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում, երբ յուրաքանչյուր հանցակցի մասով իրավասխատման փաստը կոնկրետացված չէ, իսկ դրա հանգամանքներն անհատականացված չեն, հնարավոր չէ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան պարզել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հանցակիցների մեղավորության աստիճանը և քրեաիրավական նշանակություն ունեցող այլ հարցերի ճիշտ լուծումը:

32. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

ա) նախաքննական մարմինը բավարար ապացույցներ չի ներկայացրել տուժողին մեկից ավելի անգամ հարվածներ հասցնելու վերաբերյալ,

բ) նախաքննական մարմնի կողմից ներկայացված մեղադրանքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով հստակեցված չէ, նախաքննական մարմինը դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվել է միայն տվյալ արարքով արգելված հանցակազմի ընդհանրական նկարագրությամբ:

33. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

Սույն գործով, փաստորեն, չի հաստատվել ամբաստանյալներ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի կողմից տուժող Ա.Շահբազյանին մեկից ավելի անգամ հարվածելու փաստը, ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է համարել ապացուցված միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված, պատշաճ

իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված, փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, բոլոր կասկածները ամբաստանյալի օգտին փարատելով, միանշանակորեն հիմնավորվի յուրաքանչյուր ամբաստանյալի կատարած բոլոր գործողությունները՝ հասցված հարվածների քանակը, ինչով են դրանք հասցվել, տուժողի մարմնի որ մասերին, ինչը սույն գործով առկա չէ:

34. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրված ապացույցներով հնարավոր չէ հիմնավորված համարել ամբաստանյալներ Արևիկ և Ծովինար Սահակյանների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս առումով Վերաքննիչ դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 25-րդ, 35-րդ, 124-127-րդ, 358-րդ և 365-րդ պահանջները, կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ:

Անդրադառնալով բողոքաբեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի այն փաստարկին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված «այլ բռնի գործողություններ» ձևակերպումն իրենում ներառում է նաև անձին հասցված մեկ հարվածը, որը ֆիզիկական ցավ է պատճառում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ մեկ հարվածը չի կարող նույնացվել այլ բռնի գործողությունների հետ (տե՛ս սույն որոշման 22-27-րդ կետերը):

35. Հիմք ընդունելով սույն որոշման 14-34-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքներում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ փաստարկները (տե՛ս սույն որոշման 8-12-րդ կետերը) իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքները պետք է թողնել առանց բավարարման:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Արևիկ Հակոբի Սահակյանին և Ծովինար Հակոբի Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ անմեղ ճանաչելու և արդարացնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

40.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԳ/0109/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագործի զինվորական դատախազի տեղակալ Ա.Աղաբեկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի մարտի 22-ին ՀՀ ՊՆ 3-րդ կայագորային քննչական բաժնի քննիչ Ա.Ոսկանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90851712 քրեական գործը:

2012 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. 2012 թվականի ապրիլի 13-ին թիվ 90851712 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանն արագացված դատական քննության կարգի կիրառմամբ 2012 թվականի մայիսի 31-ի դատավճռով ամբաստանյալ Սերոբ Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և



դատապարտել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազության դատախազ Է.Աղաբալյանը՝ խնդրելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի պատժի մասով բեկանել՝ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ժամկետով փորձաշրջանը փոփոխել և նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազության դատախազ Է.Աղաբալյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի դատավճռի՝ թողնվել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազի տեղակալ Ա.Աղաբեկյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Ամբաստանյալ Սերոբ Սարգսյանը դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով թիվ 49971 գործմասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի 3-րդ դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, պետ, մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու իր հանձնարարությունը չկատարելու համար, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ ենթակա անձնակազմի նկատմամբ իր գերակա դիրքն ընդգծելու և նրանց մոտ խիստ պետի տպավորություն թողնելու նպատակով, 2012 թվականի մարտի 7-ին՝ ժամը 8<sup>30</sup>-ի սահմաններում, վաշտի զինանոցի մոտ գլխով մեկ անգամ հարվածել է իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի 3-րդ ջոկի ժամկետային զինժառայող նռնակածիզի օգնական շարքային Սարգիս Սերգեյի Ամիրբեկյանի դեմքին, որի հետևանքով վերջինիս առողջությանը պատճառել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, դրանով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին՝ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադրով կարգավորվող պետ-ստորադրյալ հարաբերություններին (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 58-59):

7. Թիվ 49971 գործմասի հրամանատարի հրամանով դեպի կապակցությամբ 2012 թվականի մարտի 13-ին կազմված ծառայողական եզրակացության համաձայն՝ գործով տուժող, շարքային Ս.Ամիրբեկյանը չի կատարել մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու՝ դասակի հրամանատար Ս.Սարգսյանի հրամանը, ինչի համար ենթարկվել է կարգապահական տույժի՝ կարգապահական մեկուսարանում 10 օր ժամկետով պահելու ձևով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 4-5, 18-19):

8. Ս.Սարգսյանը 2011 թվականին ավարտել է ՀՀ պաշտպանության նախարարության Վագգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը (տե՛ս քրեական գործ հատոր 1, թերթ 28):

Ս.Սարգսյանն ունի խրախուսանքներ, ծառայողական բնութագիրը դրական է (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 75-76):

Ս.Սարգսյանը ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հորելյանական մեդալով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 75):

9. Մեղադրանքը պաշտպանող ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի դատախազության դատախազ Է.Աղաբալյանը, Առաջին ատյանի դատարանում մեղադրական ճառով հանդես գալով, հայտնել է, որ «... Դատական միստի ընթացքում ամբաստանյալ Սերոբ Սարգսյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, և միջնորդել դատական միստն անցկացնել արագացված կարգով, որը դատարանի կողմից բավարարվել է:

Դատաքննության ընթացքում ուսումնասիրվեց ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները:

Ս.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Նրա անձը բնութագրող հատկանիշ անհրաժեշտ է դիտել այն, որ Ս.Սարգսյանը անկեղծորեն զոջացել է կատարածի համար, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, զորամասի հրամանատարության և բնակության վայրից բնութագրվում է դրական, ունի մեկ շնորհակալություն և «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հորելյանական մեդալ»: Ելնելով վերոգրյալից՝ մեղադրողը միջնորդել է Ս.Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 2 տարի ժամկետով (տե՛ս քրեական գործ հատոր 1, թերթ 121):

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել մեղադրողի վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, այդ թվում՝ ամբաստանյալ Ս.Սարգսյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը և հետևանքները, անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալն առաջին անգամ է կատարել միջին ծանրության հանցանք, ծառայության և բնակության վայրերից բնութագրվում է դրականորեն, ընտանեկան և սոցիալական պայմանները, խնամքին են գտնվում հայրն ու մայրը, երիտասարդ կադրային սպա է, պարգևատրված է «ՀՀ զինված ուժեր 20 տարի» մեդալով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, կատարած ընդունելը և զոջալը, ինչպես նաև Ս.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ վերջինիս նկատմամբ նշանակելով արդարացի պատիժ:

(...):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Առաջին ատյանի դատարանը հանգել է հետևության, որ Ս.Սարգսյանի ուղղվելը հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու,

նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ երկու տարի ժամկետով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 61-62):

11. Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի վերոգրյալ դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկություններին, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատականը, ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումը անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին:

(...)

Սեղադրող Է.Աղաբաբյանի վերաքննիչ բողոքը և դատախազ Ա.Աղաբեկյանի պատճառաբանությունը, որով գտնում են, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի պահանջները՝ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները, հիմնավոր չեն: Վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ նկատի ունենալով, որ դրա հետևությունները չեն բխում գործի փաստական հանգամանքներից, իսկ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները պատճառաբանված ու հիմնավոր են:

Վերոգրյալ հիմնավորմամբ Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի է, օրինական ու հիմնավորված, հետևաբար պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով դատավճիռը բեկանելու օբյեկտիվ հիմքեր չկան, և վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 61-62):

**Վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

12. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

13. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ, 70-րդ հոդվածների պահանջները, ինչի հետևանքով հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ, որը չի համապատասխանում վերջինիս անձին, նրա կատարած հանցագործության բնույթին ու հանրության համար վտանգավորության աստիճանին: Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը դիտել է հանցանքն առաջին անգամ կատարելը, սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղմացուցիչ հանգամանք նախատեսված է առաջին անգամ հանցանքների պատահական գուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը, մինչդեռ Ս.Սարգսյանի կողմից կատարված արարքի պարագայում հանցանքների պատահական գուգորդում առկա չէ:

Վերոշարադրյալ դատողությունների հիման վրա, ինչպես նաև վկայակոչելով *Կ.Հայրապետյանի* գործով 2009 թվականի հունիսի 2-ին Վճարելի դատարանի կայացրած թիվ ԵԿԳ/0146/01/08 որոշումը՝ բողոքաբերը եզրակացություն է արել այն մասին, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ սույն գործով ամբաստանյալի կողմից առաջին անգամ հանցանք կատարելը պետք է դիտել որպես մեղմացուցիչ հանգամանք:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դիտվել է նաև կատարածի համար գոջալը, որը նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ սույն գործով ամբաստանյալի կողմից կատարածի համար գոջալը հանդիսանում է ոչ թե նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, այլ անձը բնութագրող հանգամանք:

14. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները որպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք դիտել են այն, որ նա հանդիսանում է «կադրային սպա», մինչդեռ անձը բնութագրող տվյալները վերաբերում են անձի բարոյական հատկանիշներին, այդ թվում՝ բնութագրում են նրա վերաբերմունքը օրենքի, համակեցության կանոնների, ինչպես նաև զինվորական ծառայության նկատմամբ, մինչդեռ «կադրային սպա» լինելը, ինչպես նաև բարձրագույն կրթության առկայությունը դեռևս չի կարող վկայել մարդու օրինապաշտ և բարոյական լինելու մասին:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ ՀՀ զինված ուժերի սպայական կազմի մեծամասնությունը համալրված է «կադրային սպաներով», և «կադրային սպա» լինելը չի կարող հանդիսանալ անձը բնութագրող հանգամանք: Հակառակ դեպքում «կադրային սպա» լինելը որպես անձը բնութագրող հանգամանք պետք է դիտվի «կադրային սպաների» կողմից կատարված բոլոր զինվորական հանցագործությունների համար պատասխանատվություն և պատիժ սահմանելիս:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ սույն գործով ստորադաս դատարաններն ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք են դիտել «ՀՀ զինված ուժեր 20 տարի» մեղալով պարգևատրված լինելու հանգամանքը, սակայն նշված մեղալով պարգևատրվել է ՀՀ զինված ուժերի ամբողջ սպայական անձնակազմը:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ «ՀՀ զինված ուժեր 20 տարի» մեղալով պարգևատրված լինելու հանգամանքը չի վկայում ամբաս-

տանյալի կատարած սխառնքների կամ հայրենիքին մատուցած ծառայությունների մասին:

15. Բողոք բերած անձի պնդմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ դատարանի որոշումը պետք է պատճառաբանված լինի, մինչդեռ, ըստ նրա, սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերում առկա պատճառաբանությունները հիմնավոր չեն, ամբաստանյալի անձը բնութագրող, ինչպես նաև նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները ճիշտ չեն գնահատվել: Վկայակոչելով Հ.Սահակյանի գործով 2009 թվականի հունիսի 2-ին Վճռաբեկ դատարանի կայացրած թիվ ԵՔԲԳ/0571/01/08 որոշումը՝ բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով պատիժ նշանակելիս ստորադաս դատարանների կողմից չի քննարկվել սոցիալական արդարության վերականգնման հարցը:

16. Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Մերոք Մարգարյանին դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժ նշանակելիս պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների, անձը բնութագրող տվյալների, ինչպես նաև անձի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի գնահատման ժամանակ հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*Ի. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.*

18. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործով պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանի կողմից պահպանվել են պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները:

19. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ն.Մարգարյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են, որոնցով պետք է ղեկավարվի դատարանը պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝

- ա) օրինականությունը,
- բ) արդարությունը,
- գ) պատժի անհատականացումը,
- դ) մարդասիրությունը:

Պատիժ նշանակելու վերոնշյալ սկզբունքները սահմանում են այն հիմնական որոյթները, որոնցով ղեկավարվում է դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատժի տեսակն ու չափն ընտրելիս:

(...) պատժի նշանակման իրավական շրջանակները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով: Դրա հետ մեկտեղ, սակայն, վերոնշյալ օրենքը դատարանին հնարավորություն է տվել որոշակի սկզբունքների (...) պահպանմամբ, իր ներքին համոզմանը և իրավագիտակցությանը համապատասխան, ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր և Հատուկ մասերով նախատեսված սահմաններում որոշել պատժի տեսակն ու չափը: Այլ կերպ՝ ուրվագծելով կոնկրետ հանցանքի համար նշանակման ենթակա պատժի առավելագույն և նվազագույն սահմանները՝ ՀՀ քրեական օրենքը դատարանին տվել է այդ շրջանակում հայեցողություն դրսևորելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի գրեթե բոլոր հոդվածների սանկցիաներում ամրագրված վերոնշյալ մոտեցումը պայմանավորված է այն տրամաբանությամբ, որ քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Ուստի կոնկրետ արարքի և անձի նկատմամբ համընդհանուր քրեական օրենքով նախատեսված սանկցիան կիրառելիս դատարանը պետք է որոշակի հայեցողություն դրսևորի:

Վերոգրյալից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ առանց դատարանի հայեցողության պատժի անհատականացումն անհնար է:

(...) Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների հայեցողական և ոչ երբեք կամային գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 14-րդ, 22-23-րդ կետերը):

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով *Ն.Սարգսյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված և, համապատասխանաբար, սույն որոշման 18-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործով պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանի կողմից պահպանվել են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

*II. Սույն գործով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների գնահատումը.*

22. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ

սույն գործով առկա են ամբաստանյալ Ս.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժ մեղմացնող հանգամանքներ:

23. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների հետ կապված հարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Թ.Տեր-Գրիգորյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս» (տե՛ս Թամարա Իշխանի Տեր-Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

24. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք [է] առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը»:

Մեջբերված քրեաիրավական դրույթին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Կ.Հայրապետյանի* գործով, ինչպես նաև *Ա.Ավետիսյանի* գործով կայացված որոշումներում:

*Կ.Հայրապետյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդման] հանգամանքի առկայության փաստը հաստատելու համար անհրաժեշտ պայմաններն են՝

ա) անձը պետք է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքը կատարի առաջին անգամ,

բ) հանցանքի կատարումը պետք է պայմանավորված լինի հանցավորի կամքից անկախ գոյություն ունեցող հանգամանքների այնպիսի փոփոխությամբ կամ համընկմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց հուզական ազդեցությունն ունենան անձի նկատմամբ և նպաստեն հանցանքի կատարմանը:

Այսինքն՝ հանգամանքների պատահական զուգորդումը նախ և առաջ փաստի խնդիր է, որը դատարանի կողմից պետք է հաստատվի գործով բացահայտված բոլոր փաստական հանգամանքների համակցությամբ» (տե՛ս Կարեն Պարույրի Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԵԿԳ/0146/01/08 որոշման 15-րդ կետը):

*Ա.Ավետիսյանի* գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) «հանցանքների պատահական զուգորդում» հասկացությունը գնահատողական կատեգորիա է և որոշվում է միայն դատարանի կողմից՝ գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հետազոտելու

արդյունքում: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ, ի թիվս այլոց, հանգամանքների պատահական գուգորդում կարող են լինել.

1. իր կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ անձի մոլորությունը,

2. հանցավոր արարքներ կատարող անձանց խմբում մեկ անգամ պատահական գտնվելն ու այդ խմբի կողմից կատարված հանցագործությանը մեկ անգամ մասնակցելը,

3. մեղսագրվող հանցանքի կատարումն անձին ակնհայտորեն բնորոշ չլինելը,

4. հանցանքի կատարումը հոգեճնշող վիճակում, արտակարգ կամ այլ հանգամանքների ազդեցության տակ» (տե՛ս Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԴ-0091/01/09 որոշման 22-րդ կետը):

25. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի 1-ին մասում»:

Մեջբերված քրեաիրավական դրույթին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Պ.Բայրամյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է նաև անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետագոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները» (տե՛ս Պարույր Մտյոպայի Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը, ի թիվս այլոց, բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել ամբաստանյալ Ս.Սարգսյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալն առաջին անգամ է կատարել միջին ծանրության հանցանք, ծառայության և բնակության վայրերից բնութագրվում է դրականորեն, նրա խնամքին են գտնվում հայրն ու մայրը, երիտասարդ «կադրային սպա» է. պարզևատրված է «ՀՀ զինված ուժեր 20 տարի» մեդալով, ինչպես նաև այն, որ Ս.Սարգսյանն ընդունել է կատարածն ու զոջացել է (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):



27. Սույն որոշման 26-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 23-25-րդ կետերում մեջբերված և, համապատասխանաբար, *Թ.Տեր-Գրիգորյանի*, *Կ.Հայրապետյանի*, *Ա.Ավետիսյանի*, *Պ.Բայրամյանի* գործերով կայացված որոշումներում առկա իրավական դիրքորոշումների լուսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործով առկա են ամբաստանյալ Ս.Սարգսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ: Հետևաբար, անհիմն են բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ սույն քրեական գործով հանգամանքների պատահական գուգորում չկա:

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, թե ամբաստանյալ Ս.Սարգսյանի կողմից մեղքն ընդունելը և կատարածի համար զոջալը չի կարող դիտվել որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղքն ընդունելը կամ չընդունելն անձի սուբյեկտիվ իրավունքն է, որը նախատեսված և երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 21-րդ և 22-րդ հոդվածներով: Հետևաբար, մեղքը չընդունելը չի կարող պատիժ նշանակելիս հաշվի առնվել և հակառակը՝ մեղքն ընդունելը և կատարածի համար անկեղծորեն զոջալը ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում բարենպաստ քրեաիրավական նշանակություն ունեցող հանգամանք է և կարող է կատարել պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքի դեր: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղքն ընդունելը և կատարածի համար անկեղծորեն զոջալը, որպես մեղավոր անձի հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա լրիվ գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը, զոջացել է դրա համար: Մեղքն ընդունելու պարագայում քրեական պատժի նպատակների իրացումը, այդ թվում՝ պատժի ենթարկված անձին ուղղելու հավանականությունը, զգալիորեն բարձրանում է:

28. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է] տուժողի վարքագծի հակաօրինակականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը»:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ս.Սարգսյանը, հանդիսանալով դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, պետ, մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու հանձնարարություն է տվել տուժողին՝ իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի ժամկետային զինծառայող նոնակաձիգի օգնական շարքային Ս.Ամիրբեկյանին: Շարքային Ս.Ամիրբեկյանը, սակայն, չի կատարել դասակի հրամանատար Ս.Սարգսյանի օրինական պահանջը, ինչի պատճառով վերջինս հարվածել է նրան (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Դեպքի կապակցությամբ կազմված ծառայողական եզրակացության համաձայն՝ տուժողը՝ շարքային Ս.Ամիրբեկյանը, ենթարկվել է կարգապահական տույժի (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ամբաստանյալի կողմից տուժողին հարվածելը պայմանավորված է եղել տուժողի հակաօրինական արարքով, այն է՝ մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու հանձնարարությունը չկատարելով, մինչդեռ տուժողի վերոնշյալ արարքին գործի ո՛չ նախնական, ո՛չ դատական քննության ընթացքում որևէ զնահատական չի տրվել, և այդ կապակցությամբ համապատասխան դատավարական որոշում չի կայաց-

վել (այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայացնում է համապատասխան լրացուցիչ որոշում):

29. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է հանդիսացել նաև այն, որ ամբաստանյալի կողմից կատարված հանցագործությունը պայմանավորված է եղել տուժողի վարքագծի հակաօրինականությամբ, որը դրսևորվել է օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարությունը չկատարելով:

*III. Սույն գործով պատիժ նշանակելիս անձը բնութագրող տվյալները հաշվի առնելը.*

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ գերատեսչական մեղալով պարզևատրելը և «կադրային սպա» լինելը համարվում են անձը բնութագրող տվյալներ:

31. Բարձրացված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Հարությունյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Աբրեղի Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Ն.Սարգսյանի գործով կայացված որոշման մեջ զարգացնելով Հ.Հարությունյանի գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ («...») հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչ-պես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շատ դեպքերում պատժի տեսակի և չափի վրա ազդում են հանցավորի սեռը, տարիքը, առողջական վիճակը» (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 19-րդ կետը):

32. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Դատավճռի ներածական մասում ցույց է տրվում ամբաստանյալի անունը, հայրանունը, ազգանունը, նրա ծննդյան թվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, ընտանեկան դրությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, կրթությունը և ամբաստանյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի համար»:

Շարադրված քրեադատավարական նորմի վերլուծությունից երևում է, որ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներն օրենքում սպառնիչ թվարկված չեն և կարող են

ամեկա լինել գործի քննության համար նշանակություն ունեցող, ամբաստանյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ ևս (օրինակ՝ չմարված դատվածության մասին նշում, կամ որ դատարանի կողմից, երբ և ինչ հիմքով անձը ազատվել է պատիժը կրելուց, կամ չկրած պատժի տեսակն ու չափը, զինծառայողների դեպքում կարող է նշվել նաև զինվորական ծառայությանը գորակոչվելու ժամանակը, համապատասխան գորամասը, զինվորական կոչումը, զբաղեցրած պաշտոնը, պարգևների ամեկայությունը և այլն):

33. «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ «Խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման միջոց է: Յուրաքանչյուր հրամանատար (սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով վերապահված իրավունքների սահմաններում պարտավոր է խրախուսել եճթակա զինծառայողներին՝ ծառայության մեջ աչքի ընկնելու և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար)»:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ «Ձինծառայողներին տրվող խրախուսանքներից է գերատեսչական մեդալներով պարգևատրելը»:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ խրախուսանքը կարող է կիրառվել ցանկացած զինծառայողի նկատմամբ, անկախ զբաղեցված պաշտոնից և ունեցած զինվորական կոչումից:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մեդալներով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն հանձնվում է գերատեսչական մեդալ: Մեդալների ցանկը հաստատում է ՀՀ պաշտպանության նախարարը:

ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի հունիսի 20-ի թիվ 838 հրամանով սահմանվել է՝ «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալը հիմնելու և մեդալի կանոնադրությունը գործողության մեջ դնելու մասին կարգը: Հրամանի բովանդակությունից հետևում է, որ «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալը հիմնելը, պայմանավորված է ՀՀ զինված ուժերի 20-ամյա հոբելյանի կապակցությամբ զինված ուժերի զինծառայողների, պաշտպանության նախարարության քաղաքացիական հատուկ ծառայողների, հայրենիքի պաշտպանության, Հայոց բանակի կայացման ու հզորացման գործում մեծ ներդրում ունեցող անձանց խրախուսելու նպատակով:

34. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1537 հրամանով Ս.Սարգսյանը պարգևատրվել է «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ մեդալը հանքը պաշտպանող դատախազն Առաջին աստիճանի դատարանում գործի քննության ժամանակ ներկայացված իր մեդալը կան ճառում որպես Ս.Սարգսյանի անձը բնութագրող հատկանիշ է դիտել կատարածի համար վերջինիս կողմից զոջալը, խոստովանական ցուցմունք տալը, գորամասի հրամանատարության և բնակության վայրից դրական բնութագրվելը, մեկ շնորհակալություն և հոբելյանական մեդալ ունենալը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

35. Սույն որոշման 34-րդ կետում մեջբերված հանգամանքը վերլուծելով սույն որոշման 31-33-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ բողոքաբերի փաստարկն այն մասին, որ «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով պարգևատրված լինելու հանգամանքը չի վկայում ամբաստանյալի կատարած ինչ-որ սխալների կամ հայրենիքին մատուցած ծառայությունների մասին (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը): Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բողոքաբերի այս պնդումը չի բխում սույն որոշման 33-րդ կետում մեջբերված օրենսդրական և գերատեսչական ակտերի պահանջներից:

Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժ նշանակելիս պետական կամ գերատեսչական պարգևը հաշվի չառնելու հետևանքով ոչ միայն խախտվում են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, արժեզրկվում է պետական կամ գերատեսչական պարգևի բարոյական, արժեհամակարգային և դաստիարակչական նշանակությունը, այլ նաև թերագնահատվում է հանցավորի արժանապատվությունը և նրա բարոյահոգեբանական բնութագիրը:

36. Ջարգացնելով սույն որոշման 31-րդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, ՀՀ արտքայնյանի, Ն.Սարգսյանի գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: ՀՀ գործող քրեական օրենսդրության իմաստով «հանցավորի անձնավորություն» եզրույթը դիտարկվում է որպես քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք, հանցավորի անձը բնութագրող առանձին հատկանիշները և վարքագիծը օրենքում նախատեսված են որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև դատապարտյալին պատժից ազատելու նախապայման:

37. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթն այն մասին, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են (հոդված 3), մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից (հոդված 14)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող սահմանափակվել միայն անձի բարոյական հատկանիշներով և ներառում են նաև անձի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, նրա դրական կամ բացասական բնութագիրը, խրախուսանքների կամ տույժերի առկայությունը և այլն: Անձը բնութագրող տվյալների նշված մեկնաբանությունը վերաբերելի է հատկապես հանցանք կատարած զինծառայողների անձնավորությանը, ինչը պայմանավորված է զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձնահատուկ տեսակով և այդ ծառայությունը կրող զինծառայողների հատուկ կարգավիճակով:

38. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Զինվորական ծառայությունը կազմակերպվում է՝

1) գորակոչելու միջոցով՝ գորակոչային տարիքի քաղաքացիներին.

2) պայմանագրով՝ պահեստագործի շարքային կազմին.

3) պայմանագրով՝ ենթասպայական կազմին.

4) գորակոչի միջոցով կամ պայմանագրով՝ սպայական կազմին.

5) գորակոչի համար սահմանված կարգով՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված նախագորակոչային տարիքի քաղաքացիներին»:

Մեջբերված իրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ զինվորական ծառայության կազմակերպման մեջ առանձնացվում է ռազմաուսումնական հաստատություններ ընդունված նախագորակոչային տարիքի քաղաքացիների գորակոչը, որի միջոցով համալրվում է ՀՀ զինված ուժերի սպայական կազմի, այսպես կոչված՝ «կադրային սպայական կազմը»: «Կադրային սպայական կազմը», ի տարբերություն, գորակոչի միջոցով կամ պայմանագրով ձևավորվող սպայական կազմի, բաղկացած է պրոֆեսիոնալ զինվորականներից, որոնց հատուկ ուսուցման և պատրաստման համար պետությունը զգալի միջոցներ է ծախսում:

39. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալը 2011 թվականին ավարտել է ՀՀ պաշտպանության նախարարության Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, ունի խրախուսանքներ, ծառայողական բնութագիրը դրական է, ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «ՀՀ զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Ս.Սարգսյանի անձը բնութագրող վերոնշյալ հատկանիշները հաշվի են առել (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը):

Սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքաբերի պնդմամբ անձը բնութագրող տվյալները այնպիսի տեղեկություններ են, որոնք բնութագրում են անձի բարոյական հատկանիշները՝ հնարավորության սահմաններում, նրա վերաբերմունքը ծառայության, օրենքի և համակեցության կանոնների նկատմամբ, մինչդեռ «կադրային սպա» լինելը, ինչպես նաև բարձրագույն կրթության առկայությունը դեռևս չի կարող վկայել մարդու օրինապաշտ և բարոյական լինելու մասին (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

40. Սույն որոշման 39-րդ կետում մեջբերված հանգամանքները մեկնաբանելով սույն որոշման 37-38-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալի՝ «կադրային սպա» լինելը որպես անձը բնութագրող հանգամանք չգնահատելու և, հետևաբար, նրա կողմից առաջին անգամ, հանգամանքների պատահական գուգորդմամբ միջին ծանրության հանցանք կատարելու պարագայում հաշվի չառնելու և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը գրկվում է պետության հանդեպ ստանձնած իր պարտականությունը կատարելու հնարավորությունից: Նման մոտեցումը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, իրավաչափ չէ, հետևաբար, հիմնավոր չէ նաև բողոքաբերի փաստարկն այն մասին, որ ՀՀ զինված ուժերի «կադրային սպա» լինելը չի կարող հանդիսանալ անձը բնութագրող հանգամանք: Հետևաբար, «կադրային սպա» լինելու հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից որպես ամբաստանյալ Ս.Սարգսյանի անձը բնութագրող հանգամանք դիտելը ճիշտ է և բխում է, ինչպես ՀՀ

քրեական օրենսգրքում առկա՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (տե՛ս սույն որոշման 19-21-րդ կետերը), այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջից (տե՛ս սույն որոշման 32-րդ կետը):

*IV. Սույն գործով պատիժը պայմանականորեն չկիրառելը.*

41. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված չորրորդ իրավական հարցը հետևյալն է. սույն քրեական գործի շրջանակներում հիմնավոր՞ա է արդյոք ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

42. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Պետրոսյանի, Կ.Հարությունյանի, Գ.Ազատյանի, Ա.Անտոնյանի գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, Հ.Պետրոսյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարում դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց որոշակի պատժատեսակները ռեալ կրելու:

Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ դատարանը հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու» (տե՛ս Հասմիկ Արտաշեսի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԱԸԱԳ/0050/01/08 որոշումը):

Կ.Հարությունյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին» (տե՛ս Կարեն Տիգրանի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-201/07 որոշումը):

Գ.Ազատյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի այն դրույթները, որոնք վերաբերում են պատժին և պատժի նպատակներին: Նշված դրույթներն են, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածները, որոնք սահմանում են պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Նշված իրավադրույթների լույսի ներքո գնահատելով գործի հանգամանքները՝ կատարած հանցագործության առանձնահատկությունները, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, միայն դատարանը կարող է հանգել որոշակի հետևույթ-

յան, թե հանցանք կատարած անձի կողմից պատիժը կրելն անհրաժեշտ պայման է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին հասնելու համար, թե ոչ» (տե՛ս Գագիկ Հրաչի Ազատյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-195/07 որոշումը):

Ա.Անտոնյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ օրինակականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և մարդասիրության սկզբունքներին համապատասխան, նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակներին իրագործման հնարավորությունը» (տե՛ս Արթուր Խաչիկի Անտոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴ/0226/01/09 որոշման 19-րդ կետը):

43. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մեղադրողի պատճառաբանությունն այն մասին, թե Առաջին ատյանի դատարանը, կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի պահանջները, հիմնավոր չեն: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները պատճառաբանված ու հիմնավոր են, իսկ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի է, օրինական ու հիմնավորված. հետևաբար պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով դատավճիռը բեկանելու օբյեկտիվ հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

44. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 40-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է:

45. Սույն գործով բողոքաբերը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանները, Ս.Սարգսյանի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանակորեն չկիրառելով, նշանակել են ակնհայտ մեղմ պատիժ, որն արդարացի չէ՝ չի համապատասխանում հանցանքի ծանրությանը և դա կատարելու հանգամանքներին:

Բողոքաբերի վերոշարադրյալ դիրքորոշման կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, որպես դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու հիմք՝ անկախ նրանից, թե նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ է, թե ակնհայտ մեղմ, պայմանավորված է կիրառվող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժատեսակով և պատժա-

չափով, և այն չի կարող տարածվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության կամ չկիրառելիության վրա:

*Գ.Մարտիրոսյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ «Պատիժը մեղմացնելը և պատիժը պայմանականորեն չկիրառելը իրենցից ներկայացնում են քրեաիրավական երկու ինքնուրույն ինստիտուտներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, ըստ որի 1-ին կետի՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Այսինքն՝ դատարանը, կայացնելով մեղադրական դատավճիռ, ամբաստանյալի նկատմամբ նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատագրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզված լինելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը փաստացի կրելու, որոշում է դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Պատժի մեղմացումը դրսևորվում է հետևյալ ձևով՝ նշանակված հիմնական պատժատեսակը փոխելով ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված առավել մեղմ հիմնական պատժատեսակով, կամ նշանակված պատժաչափը նվազեցնելով, կամ նշանակված լրացուցիչ պատիժը վերացնելով, կամ դրա չափը նվազեցնելով, կամ ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով՝ նշանակել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով» (տե՛ս Գուրգեն Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի փետրվարի 1-ի թիվ ՎԲ-01/08 որոշումը):

46. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված՝ *Գ.Մարտիրոսյանի* գործով կայացված որոշման մեջ առկա իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը մեղմացնելը և պատիժը պայմանականորեն չկիրառելը երկու առանձին, ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտներ են, որոնց կիրառումը տարբեր հետևանքներ է առաջացնում: Մասնավորապես, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ նշանակված պատիժն ի կատար չի անվում, իսկ պատժի մեղմացման դեպքում փոփոխվում են ի կատար անվող պատժի ժամկետները կամ հենց պատժատեսակը:

47. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին աստիճանի դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը միջնորդել է Ս.Մարգարյանի նկատմամբ նշանակել պատիժ ազատագրկում՝ 2 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Առաջին աստիճանի դատարանն ամբաստանյալին դատապարտել է երկու տարի ժամկետով ազատագրկման (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

48. Սույն որոշման 47-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները մեկնաբանելով սույն որոշման 45-46-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն անհասկանալի է գտնում բողոքաբերի պնդումն այն մասին, թե ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը մեղմ է: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ամբաստանյալի նկատմամբ



նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի վկայում ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու մասին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, թե ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը մեղմ պատժի նշանակում է (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը), և արձանագրում է, որ բողոքաբերի՝ «բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի դատական ակտը և կայացնել նոր դատական ակտ, ամբաստանյալ Ս.Սարգսյանին դատապարտել ազատագրկման երկու տարի ժամկետով» խնդրանքն իրավաչափ չէ, քանի որ չի բխում պատիժը պայմանականորեն չկիրառելու և մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտների տարբերակումից (տե՛ս սույն որոշման 46-րդ կետը):

49. Հիմք ընդունելով սույն որոշման 18-48-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Հետևաբար, վճռաբեկ բողոքում նշված հիմքով նյութական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐՈՇՈՒՄ**

**ՍԴ/0109/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*մախազահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայազորի զինվորական դատախազի տեղակալ Ա.Աղաբեկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

1. 2012 թվականի մարտի 22-ին ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ոսկանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90851712 քրեական գործը:

2. 2012 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով թիվ 49971 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 15-րդ վաշտի 3-րդ դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, պետ, մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու իր հանձնարարությունը չկատարելու համար, անցնելով պաշտոնական լիազորությունների սահմանը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ ենթակա անձնակազմի նկատմամբ իր գերակա դիրքն ընդօգտելու և նրանց մոտ խիստ պետի տպավորություն բողոքելու նպատակով, 2012 թվականի մարտի 7-ին՝ ժամը 8.<sup>30</sup>-ի սահմաններում, վաշտի զինանոցի մոտ գլխով մեկ անգամ հարվածել է իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի 3-րդ ջոկի ժամկետային զինծառայող նռնակաձիգի օգնական շարքային Սարգիս Մերգեյի Ամիրբեկյանի դեմքին, որի հետևանքով վերջինիս առողջությանը պատճառել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայու-

մով, դրանով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին՝ ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքով կարգավորվող պետ-ստորադրյալ հարաբերություններին (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 58-59):

3. 2012 թվականի ապրիլի 13-ին թիվ 90851712 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը, արագացված դատական քննության կարգի կիրառմամբ, 2012 թվականի մայիսի 31-ի դատավճռով ամբաստանյալ Սերոբ Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Նրա վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է թիվ 49971 գործնախի հրամանատարության վրա:

4. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազության դատախազ Է.Աղաբալյանը՝ խնդրելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճիռը պատժի մասով բեկանել՝ ամբաստանյալ Ս.Սարգսյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ժամկետով փորձաշրջանը փոփոխել և նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազության դատախազ Է.Աղաբալյանի վերաքննիչ բողոքը մերժվել է: Սերոբ Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազի տեղակալ Ա.Աղաբեկյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել:

Բողոքաբերը նշել է, որ սույն քրեական գործով վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ նույնական հանգամանքներում պատժի և պատասխանատվության մեղմացման առումով ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ արդարացի, համաչափ պատժի նշանակման հարցում և խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Սերոբ Սարգսյանին դատապարտել ազատազրկման՝ 2 տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

7. ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայագրի զինվորական դատախազի տեղակալ Ա.Աղաբեկյանի վճռաբեկ բողոքը մերժել է: Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012

թվականի օգոստոսի 14-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռարեկ դատարանի՝ համապատասխան որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

8. Գործով քննիչ Ա.Ոսկանյանը հաստատված է համարել, որ մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու վերաբերյալ Ս.Սարգսյանի հանձնարարությունը շարքային Ս.Ամիրբեկյանը չի կատարել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 1, 31, 86, 91):

9. 2012 թվականի մարտի 8-ին թիվ 49971 գորամասի հրամանատարը դեպքի կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին թիվ 203 հրաման է արձակել: Հրամանի հիման վրա անցկացված ծառայողական քննության արդյունքում 2012 թվականի մարտի 13-ին կազմված ծառայողական եզրակացության համաձայն՝ գործով տուժող, շարքային Ս.Ամիրբեկյանը չի կատարել մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալու դասակի հրամանատար Ս.Սարգսյանի տված հրամանը, հակաճառել է նրան, ինչի համար ենթարկվել է կարգապահական տույժի՝ կարգապահական մեկուսարանում 10 օր ժամկետով պահելով:

Չորամասի համապատասխան հանձնաժողովի 2012 թվականի մարտի 13-ի ծառայողական եզրակացությամբ հիմնավորվել է, որ շարքային Ս.Ամիրբեկյանը հրաժարվել է կատարել Ս.Սարգսյանի հրամանը, այն է՝ մարտական պարապմունքի մեկնելու համար զենք և հանդերձանք ստանալ: Ս.Ամիրբեկյանը պատճառաբանել է, որ ի վիճակի չէ պարապմունքի մեկնել, քանի որ աջ ոտնաթաթի մատները խաշված են:

Ս.Սարգսյանը, լսելով վերջինիս պատասխանը, խորհուրդ է տվել Ս.Ամիրբեկյանին կատարել իր հրամանը և միևնույն ժամանակ պարապմունքից ազատվելու թույլտվություն ստանալու համար դիմել վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Վ.Չաքարյանին: Սակայն Ս.Ամիրբեկյանը, ձայնը բարձրացնելով, կրկին հրաժարվել է կատարել հրամանը, ինչի հետևանքով Ս.Սարգսյանը նրա նկատմամբ բռնություն է գործադրել:

Ծառայողական եզրակացության արդյունքներով, ի թիվս այլ հանգամանքների, հանձնաժողովն առաջարկել է Ս.Սարգսյանին հայտարարել «խիստ նկատողություն», իսկ Ս.Ամիրբեկյանին մեկուսացնել և պահել կարգապահական մեկուսարանում մինչև 10 օր՝ դասակի հրամանատարի հրամանալ չկատարելու և նրան հակաճառելու համար:

Առաջարկվել է նաև փաստով նախապատրաստված նյութերը ուղարկել Մարտակերտի թիվ 3 կայագործի զինվորական դատախազություն՝ հետագա ընթացքը որոշելու համար:

Թիվ 49971 գորամասի հրամանատարը, լինելով հետաքննության մարմին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի հիմքով՝ դեպքի կապակցությամբ նախապատրաստված նյութերը ուղարկել է վերը նշված զինվորական դատախազություն(տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 4-5, 18-19):

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը դատավճի կան որոշման հետ միաժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական մարմնի կամ համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել քրեական գործով մինչդրատական վարույթի ընթացքում»:

ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդված համաձայն՝ «Քրեական և վարչական գործերով դատարանը դատավճի, վճի կամ որոշման հետ միաժամանակ համապա-

տասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել վարչական կամ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը:

11. Սույն որոշման 8-9-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված իրավադրույթների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ս.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով 2012 թվականի մարտի 22-ին հարուցված քրեական գործի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինը (ՀՀ ՊՆ թիվ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ոսկանյանը), անտեսելով թիվ 49971 գործամասի ծառայողական եզրակացության՝ շարքային Ս.Ամիրբեկյանին վերաբերող մասը և դրա վերաբերյալ քննություն չկատարելով, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ, 27-րդ, 175-րդ, 180-րդ, 181-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես,

ա) շարքային Ս.Ամիրբեկյանի կողմից զինվորական կոչումով լեյտենանտ, պետ հանդիսացող Ս.Սարգսյանի օրիանական հրամանը չկատարելու պայմաններում քրեական վարույթն իրականացնող մարմինն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածում քրեական պատասխանատվություն է սահմանված հրամանը չկատարելու համար:

բ) նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք շարքային Ս.Ամիրբեկյանի արարքը չի՞ պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

գ) քրեական վարույթն իրականացնող մարմինն անտեսել է այն հանգամանքը, որ հրամանը չկատարելու դեպքում առաջացած էական վնասով խախտվում է ոչ միայն պետ-ստորադաս հարաբերությունները, այլ նաև գործերը կառավարելու զինվորական կանոնադրությունն ամրագրված կարգը:

12. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնակարգի 31-րդ հոդվածում սահմանված է, որ «Միանձնյա ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման, ղեկավարման և զինծառայողների փոխհարաբերության սկզբունքներից մեկն է (...) : Միանձնյա ղեկավարությունը դրսևորվում է հրամանատարի, պետի՝ իրադրության համակողմանի գնահատումից ելնելով՝ միանձնյա կերպով

որոշումներ ընդունելու, օրենքներին ու զինվորական կանոնադրություններին խստիվ համապատասխան հրամաններ արձակելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքի մեջ: Հրամանի քննարկումն անթույլատրելի է, իսկ չենթարկվելը կամ հրաման չկատարելը համարվում է զինվորական հանցագործություն»:

«Հայաստանի Հանարպետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Հրամանատարական ուղղահայացի և միանձնյա ղեկավարման ապահովման պայմաններն են հրամանատարի, պետի հրաման արձակելու իրավունքը և ենթակա զինծառայողի անառարկելիորեն ենթարկվելու պարտականությունը»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախաքննական մարմինը սույն քրեական գործի շրջանակներում անտեսել է ինչպես վերոնշյալ իրավադրույթները, այնպես էլ սույն որոշման 5-րդ կետում առկա հանգամանքները, ինչի հետևանքով շարքային Ս.Ամիրբեկյանի արարքին քրեաիրավական գնահատական չի տվել և դրանից բխող համապատասխան դատավարական որոշում չի կայացրել:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման նախորդ կետում արձանագրված բացթողումներն անտեսվել են նաև սույն գործի նկատմամբ հսկողություն իրականացրած՝ թիվ 3-րդ կայագործի զինվորական դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական Է.Աղաբալյանի կողմից: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով վերապահված դատավարական լիազորությունների շրջանակներում դատախազը պետք է միջոցներ ձեռնարկեր Ս.Ամիրբեկյանի արարքին իրավական գնահատական տալու ուղղությամբ, սակայն սույն քրեական գործում այդպիսի տվյալներ չկան:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազը, ի թիվս այլ հարցերի, պետք է ստուգի, թե կատարված է արդյո՞ք գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազն իրավասու է իր ցուցումներով գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ կազմված մեղադրական եզրակացությունը դատախազ Է.Աղաբալյանը հաստատել է 2012 թվականի ապրիլի 13-ին (տե՛ս գործ հատոր 1, թերթ 86-93):

Մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 273-274-րդ հոդվածներում առկա իրավադրույթների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազ Է.Աղաբալյանը, անտեսելով նախաքննական մարմնի կողմից թույլ տրված՝ վերոհիշյալ բացթողումները, համապատասխան միջոցներ չի ձեռնարկել գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննությունն ապահովելու ուղղությամբ:

15. Վճռաբեկ դատարանը, քննության առնելով մեղադրողի վճռաբեկ բողոքը, հանգել է հետևության, որ Ս.Սարգսյանի հանցանքը պայմանավորված է եղել շարքային Ս.Ամիրբեկյանի վերոնշյալ հակաօրինական արարքով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է (տե՛ս Վճռաբեկ դատարանի սույն գործով կայացրած թիվ ՍԳ/0109/01/12 որոշման 28-րդ, 29-րդ կետեր):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նախաքննական մարմնի թույլ տված վերոնշյալ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկը, այն է՝ չի ձեռնարկվել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, չի պարզվել ինչպես Ս.Սարգսյանի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրան արդարացնող, ինչպես նաև նրա պատասխանատվությունը մեղմացնող բոլոր հանգամանքները:

16. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, թույլ տրված դատավարական խախտումները գնահատելով որպես էական, հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ հարուցված քրեական գործի շրջանակներում տուժողի արարքին համապատասխան իրավական գնահատական չտալու հետևանքով խախտվել է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածներում ամրագրված՝ օրենքի առջև բոլորի, այդ թվում՝ հանցանք կատարած անձանց հավասարության սկզբունքը:

17. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ զինվորական դատախազի և ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության պետի ուշադրությունը պետք է հրավիրել սույն քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ դատական օրենսգրքի 21-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով ըստ մեղադրանքի Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ զինվորական դատախազի և ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության պետի ուշադրությունը հրավիրել քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված էական խախտումների վրա:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

41.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԱԴԴ/0034/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ պաշտպան՝* Ա.ԱՎԱԳՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամսոն Արթուրի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Ամիրխանյանի պաշտպան Ա.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի փետրվարի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90255612 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի մարտի 15-ի որոշմամբ Սամսոն Արթուրի Ամիրխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի մարտի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2012 թվականի մայիսի 2-ի դատավճռով Ս.Ամիրխանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել է կալանքի՝



1 (մեկ) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ս.Ամիրխանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող Վ.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճիռը և ամբաստանյալ Ս.Ամիրխանյանին դատապարտել է կալանքի՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ս.Ամիրխանյանի պաշտպան Ա.Ավագյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ ամբաստանյալ Ս.Ամիրխանյանի պաշտպան Ա.Ավագյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ մեղադրող Վ.Ավագյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ամբաստանյալ Ս.Ամիրխանյանի պաշտպան Ա.Ավագյանի վճարելի բողոքը:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ամբաստանյալ Ս.Ամիրխանյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՌԶ 1032 գործառնախի պայմանագրային զինծառայող, գործառնախի հրամանատարի կողմից նախապես հաստատված գրաֆիկի համաձայն՝ 2012 թվականի փետրվարի 9-ին, 10-ին, 13-ին, 14-ին, 16-ին, 17-ին, 20-ին, 21-ին նշանակված լինելով ծառայության՝ երեք օրից ավելի, բայց մեկ ամսից պակաս տևողությամբ՝ ութ օր առանց հարգելի պատճառների ծառայության չի ներկայացել (տե՛ս քրեական գործ, թերթ 76):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Դատարանը, ուսումնասիրելով ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, մասնավորապես՝ ամբաստանյալի խոստովանական ցուցմունքները, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագիրը, բնութագիրը, ծննդյան վկայականի պատճենը, եկավ հետևյալ եզրահանգման.

Սամսոն Արթուրի Ամիրխանյանի անձը դրական բնութագրող հանգամանքներն են՝ մեղքն ընդունելը և խոստովանական ցուցմունքներ տալը:

Սամսոն Արթուրի Ամիրխանյանի անձը բացասական բնութագրող հանգամանքն է՝ ՀՀ ՌԶ թիվ 1032 գործառնախի կողմից տրված ծառայողական բնութագիրը:

(...):

Սամսոն Արթուրի Ամիրխանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է (...) նախկինում արատավորված՝ դատապարտված չլինելը (...):

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Սամսոն Արթուրի Ամիրխանյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Դատարանը, հաշվի առնելով հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կատարման հանգամանքները ու գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և անձը բնութագրող վերը նշված հանգամանքները,

հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Սամսոն Արթուրի Ամիրխանյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Միաժամանակ դատարանը գտնում է, որ բացասական բնութագրվելու հանգամանքը վերը նշված անձը դրականորեն բնութագրող և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության պայմաններում չի կարող խոչընդոտ հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելու համար» (տե՛ս *քրեական* գործ, թերթ 76, 78):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում դատարանը ամբաստանյալ Սամսոն Ամիրխանյանի նկատմամբ պատիժ նշանակելիս բավարար չափով հաշվի չի առել նրա անձը բացասական բնութագրող՝ ՀՀ ՈՁ թիվ 1032 գործամասի կողմից տրված ծառայողական բնութագիրը:

Ըստ հիշյալ բնութագրի՝ ծառայության ընթացքում Սամսոն Ամիրխանյանը իրեն դրսևորել է բացասական կողմերով, իր պարտականությունները կատարել է ոչ լիարժեք, բազմիցս ունեցել է ուշացումներ և բացակասներ, ունի գործող կարգապահական տույժ, աչքի չի ընկել մարտական պատրաստության պարապմունքների ժամանակ, հրամանատարների հրամանները կատարել է թերություններով, խուսափել է իրեն հանձնարարված առաջադրանքները կատարելուց:

(...)

Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ հիշյալ հանցագործության սուբյեկտ են հանդիսանում զինծառայողները, այսինքն՝ ունեն հատուկ սուբյեկտի կարգավիճակ, ուստի վերջիններիս ծառայողական բնութագիրը ունի էական նշանակություն նրանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների համատեքստում պատիժ նշանակելու առումով:

Ամբաստանյալ Սամսոն Ամիրխանյանի անձը բնութագրող վերը նշված հանգամանքի դատարանի կողմից ոչ ճիշտ գնահատման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայագրի քննչական բաժնի կողմից 2012 թվականի մայիսի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90263412 քրեական գործը՝ շարքային Սամսոն Ամիրխանյանի կողմից 2012 թվականի ապրիլի 16-ին, 17-ին, 19-ին, 20-ին, 23-ին, 24-ին, 26-ին, 27-ին և 30-ին երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու փաստի առթիվ:

Հատկանշական է, որ ամբաստանյալ Սամսոն Ամիրխանյանին վերագրվող վերը նշված հանցավոր արարքը կատարվել է այն ժամանակահատվածում, երբ սույն գործը գտնվել է դատաքննության ընթացքում, որի պայմաններում հիմնավոր չէ դատարանի եզրահանգումը այն մասին, որ տվյալ հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալ Սամսոն Ամիրխանյանը դրսևորել է պատշաճ վարքագիծ:

Վերը նշվածից ելնելով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում ամբաստանյալ Սամսոն Ամիրխանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի չէ և նա դատարանի կողմից նշանակված պատիժը պետք է կրի» (տե՛ս *քրեական* գործ, թերթ 161):

**Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածները, որոնք ենթակա էին կիրառման:

Ըստ բողոքարեթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները սպառնիչ կերպով թվարկված չլինելու պարագայում նշված հոդվածի կիրառման պայման է դատարանի համոզվածությունն այն մասին, որ անձի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Հետևաբար, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սոցիալական արդարությունը վերականգնելը հնարավոր է նաև Ս.Ամիրխանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու պարագայում:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիս 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճռին:

**Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը ներկայացված վճարելի բողոքի սահմաններում վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ դատարանի կողմից անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի քննության ժամանակ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ Վերաքննիչ դատարանը խախտե՞լ է արդյոք անմեղության կանխավարկածի սկզբունքը, երբ Ս.Ամիրխանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը կապել է ամբաստանյալի նկատմամբ մեկ այլ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքի հետ:

12. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական

կարգով չի հաստատվի հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվող իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետետեսությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

(...):»:

Անմեղության կանխավարկածի սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի* վերաբերյալ որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Ա]դդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Նշված սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից:

Անմեղության կանխավարկածի բովանդակությունն արտացոլված է միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում ստացած «կասկածը մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի» (in dubio pro reo) կանոնի մեջ: Այս կանոնն իր ամրագրումն է ստացել ինչպես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջ և հանդիսանում է մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքի գործնական երաշխիք քրեական դատավարության և մասնավորապես, դատական քննության ընթացքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով, անմեղության կանխավարկածը, *inter alia* պահանջում է, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղագործող արարքը, իսկ ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է համարել այն իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին համապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն նրա վերաբերյալ ընդուն-

ված դատական որոշումից կարելի է կարծիք կազմել, որ նա մեղավոր է (տե՛ս *Barbera, Messegue and Jabardo v. Spain*, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետեր 77, 91):

Ինչպես երևում է վերոգրյալից, անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող անկողմնակալ մարմնի: Ուստիև դատարանը, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահը, իր գործողություններով, այդ թվում որոշումներով որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին» (տե՛ս Արմեն Զիվանի Բարայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Անձի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված հարցերին Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլոց, անդրադարձել է նաև *Ռ.Խաչատրյանի* վերաբերյալ կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, այնուհանդերձ, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին: (...)» (տե՛ս Ռուբեն Հմայակի Խաչատրյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵԱԶԴ/0120/01/09 որոշման 13-րդ կետը):

14. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անմեղության կանխավարկածը՝ որպես միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված հանրաճանաչ սկզբունք, կոչված է պաշտպանել անձի իրավունքները քրեական գործով վարույթի ամբողջ ընթացքում: Նշված հանգամանքը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ դատարանները, մինչև գործով կայացված վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, պարտավոր են ձեռնպահ մնալ անձի մեղավորության վերաբերյալ որևէ եզրակացություն անելուց:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ որևէ եզրակացություն անելու արգելքի մեջ ներառվում է նաև անձի վերաբերյալ մեկ այլ գործով դատական ակտ կայացնելիս այնպիսի հաստատական դատողություններ անելը, որոնք կապված են այդ նույն անձի նկատմամբ մեկ այլ փաստի առթիվ հարուցված մեկ այլ քրեական գոր-

ծով առաջադրված մեղադրանք(ներ)ում նրա մեղավորության հետ: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի քննության ժամանակ դատարանը չպետք է նշված հոդվածի կիրառման հնարավորությունը պայմանավորի ամբաստանյալի նկատմամբ մեկ այլ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքով և դրա հիման վրա բացառի անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը: Վճարելի դատարանն արձանագրում է, որ նման դեպքում առկա է անձի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Ս.Ամիրխանյանի անձը բնութագրող հանգամանքը, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, վերացնելով Ս.Ամիրխանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս բավարար չափով հաշվի չի առել Ս.Ամիրխանյանի անձը բացասական բնութագրող՝ ծառայողական բնութագիրը, քանի որ Ս.Ամիրխանյանի կողմից 2012 թվականի ապրիլի 16-ին, 17-ին, 19-ին, 20-ին, 23-ին, 24-ին, 26-ին, 27-ին և 30-ին երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու փաստի առթիվ 2012 թվականի մայիսի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ ամբաստանյալ Ս.Ամիրխանյանին վերագրվող հանցավոր արարքը կատարվել է այն ժամանակահատվածում, երբ սույն գործը գտնվել է դատաքննության ընթացքում, որի պայմաններում հիմնավոր չեն դատարանի եզրահանգումներն այն մասին, որ տվյալ հանցագործությունը կատարելուց հետո ամբաստանյալ Ս.Ամիրխանյանը դրսևորել է պատշաճ վարքագիծ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը որպես հաստատված փաստ Ս.Ամիրխանյանի անձը բնութագրող հանգամանք է դիտել նրա կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելը, այն է՝ երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու հանգամանքը: Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ սույն գործով դատական ակտ կայացնելու պահին վերոնշյալ փաստի կապակցությամբ իրականացվող քրեական վարույթը դեռևս չէր ավարտվել, և չկար օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ:

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ս.Ամիրխանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունն ամբաստանյալի նկատմամբ մեկ այլ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքի հետ կապելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Զրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության

ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ դրա արդյունքում խախտվել է անձի անմեղության կանխավարկածի իրավունքը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածների հիման վրա՝ հիմք է Վերաքննիչ դատարանի կայացված դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի կայացրած ակտին օրինական ուժ տալու համար:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սամսոն Արթուրի Ամիրխանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

42.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0185/06/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ՎՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ՎՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲԲԱՀԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ժիրայր Հարությունի Պարոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ մեղադրյալ Ժ.Պարոնյանի պաշտպան Ռ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի հունիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13127912 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Ժիրայր Հարությունի Պարոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2012 թվականի հունիսի 7-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի Կենտրոնական քննչական բաժնի ավագ քննիչ Է.Պետրոսյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)



խնդրելով մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Ժ.Պարոնյանի պաշտպան Ռ.Թովմասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ժ.Պարոնյանի պաշտպան Ռ.Թովմասյանը, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ժ.Պարոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի հունիսի 4-ին՝ ժամը 06.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Տերյան փողոցի 91 հասցեում գործող «Աֆրոդիտե» կարտոկե ակումբի դիմաց անհիմն վիճաբանության մեջ է մտել Աշոտ Ավետիսյանի հետ, որի ընթացքում իր կողմից ապօրինի ձեռք բերված և կրվող, դեռևս չպարզված հրազենից կրակոց է արձակել Ա.Ավետիսյանի ուղղությամբ և վերջինիս առողջությանը խուլիգանական դրդումներով դիտավորությամբ պատճառել է միջին ծանրության վնաս՝ աջ ազդրի միջանցիկ հրազենային վիրավորման ձևով (տե՛ս նյութեր, թերթ 1):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Լ.Չարիսիֆալակյանը հայտնեց, որ ներկայացված միջնորդությամբ և նյութերի ուսումնասիրությունից հիմնավոր չի գտնում վերագրվող արարքը մեղադրյալի կողմից կատարած լինելու հիմնավոր կասկածը և այդ հիմքով միջնորդությունը խնդրեց մերժել:

(...)

Ուսումնասիրելով ներկայացված նյութերը և միջնորդությունը, լսելով մասնակիցների՝ դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ մեղադրյալ Ժիրայր Հարությունի Պարոնյանին վերագրվող ՀՀ քր. օր-ի 113 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 235 հոդվածի 1-ին մասի նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելին է, դատարանը ներկայացված նյութերի ուսումնասիրությունից հիմնավոր է գտնում վերագրվող արարքը մեղադրյալի կողմից կատարած լինելու կասկածը և բարձր է գնահատում հավանականությունը, որ ազատության մեջ մնալով՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, խուսափել քրեական պատասխանատվությունից» (տե՛ս նյութեր, թերթ 26):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակերպումը. «Տվյալ դեպքում ներկայացված նյութերով /Ք.Դավթյանի՝ որպես վկա հարցաքննության 06.06.2012թ. արձանագրություններով, անձին ճանաչման ներկայացնելու մասին 06.06.2012թ. արձանագրությամբ, ինչպես նաև Համալսարանական թիվ 1 կլինիկական հիվանդանոցի 05.06.2012թ. տեղեկանքով/ առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալ Ժիրայր Հարությունյունի Պարոնյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և իրեն վերագրվող արարքներին, որոնց համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների ծավալը, բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Ժիրայր Հարությունյունի Պարոնյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը, թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, հետևաբար ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, որով արդեն իսկ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, վերացնելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 61):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 13-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ հոդվածների պահանջները:

9. Բողոքաբերը նշել է, որ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում չի ներկայացվել վերջինիս կողմից հանցանքի կատարումը հիմնավորող որևէ ապացույց: Բացի այդ, վերոնշյալ միջնորդության քննության ընթացքում ուշադրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ Ժ.Պարոնյանը դեպքի վայրում հայտնվել է հանգամանքների բերումով, երբևէ հրազեն չի ունեցել, որևէ մեկի ուղղությամբ հրազենից կրակոց չի արձակել և, հետևաբար, մարմնական վնասվածք չի պատճառել, իսկ ձերբակալվելու ընթացքում դիմադրություն ցույց չի տվել:

10. Ըստ բողոքաբերի՝ հիմնավորված ու պատճառաբանված չէ նաև մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումն այն պայմաններում, երբ մեղադրողը հայտնել է, որ առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ Ժ.Պարոնյանը կատարել է իրեն մեղադրվող արարքը և խնդրել է մերժել քննիչի միջնորդությունը:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 20-ի որոշումները և մերժել նախաքննության մարմնի՝ մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը դատախազի կողմից հետ վերցնելու իրավասության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը հետ վերցնելու՝ դատախազի իրավասության առկայության պայմաններում իրավաչափ է արդյոք կալանքի միջնորդությունը մերժելու մասին դատախազի խնդրանքը՝ մեղադրյալի կողմից հանցանք կատարված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության պատճառաբանությամբ:

14. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ « (...) Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է (...) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, (...) կիրառվում է] միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պատճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատական նիստին իրավունք ունի մասնակցել դատախազը, եթե անհրաժեշտ է համարում անձամբ պաշտպանել [դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու մասին] միջնորդությունը: Դատախազն իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը»:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատարան ներկայացնելու իրավունք ունեն քննիչը կամ դատախազը: Նշված միջնորդության դատական քննության ընթացքում դատախազն իրավասու է ինչպես անձամբ

պաշտպանել կալանքի միջնորդությունը, այնպես էլ հետ վերցնել այն, եթե գտնում է, որ միջնորդությունը հիմնավոր չէ:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին իր կամ քննիչի ներկայացրած միջնորդության դատական քննության ժամանակ դատախազն օժտված է բացառապես հետևյալ լիազորություններով՝

ա) անձամբ պաշտպանել իր կամ քննիչի ներկայացրած միջնորդությունը,

բ) հետ վերցնել իր կամ քննիչի ներկայացրած միջնորդությունը:

Մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին իր կամ քննիչի ներկայացրած միջնորդության դատական քննության շրջանակներում իրականացվող վերոնշյալ լիազորություններից բացի, դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի հիման վրա՝ իրավասու է նաև ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության կալանավորված անձանց:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի 2012 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Ժ.Պարոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նույն օրը նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանում նիստին մասնակցող դատախազը խնդրել է քննիչի ներկայացրած միջնորդությունը մերժել՝ մեղադրյալ Ժ.Պարոնյանի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը հաստատված չլինելու հիմքով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Սեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննության ընթացքում դատախազը խնդրել է մերժել միջնորդությունը և ոչ թե հետ է վերցրել այն:

17. Սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 16-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չընտրելու վերաբերյալ դատախազի՝ որպես մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող սուբյեկտի կամաարտահայտության դրսևորման միակ դատավարական ձևը ներկայացրած միջնորդությունը հետ վերցնելն է:

Միջնորդությունը հետ վերցնելու վերաբերյալ դատախազի կամաարտահայտությունը կարող է դրսևորվել այդ մասին դատարանում ուղղակիորեն հայտարարելու

միջոցով կամ գրավոր ընթացակարգով, մինչդեռ սույն գործով դատախազը ոչ միայն միջնորդությունը հետ վերցնելու վերաբերյալ հայտարարություն չի արել դատարանում, այլ նաև դատարանին ուղղված իր խնդրանքում չի օգտագործել այնպիսի ձևակերպումներ, որոնք կվկայեին այն մասին, որ դատախազը հետ է վերցնում մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը:

Բացի այդ, դատախազի կողմից միջնորդությունը հետ վերցնելու կամաարտահայտության բացակայության մասին է վկայում նաև այն փաստը, որ դատախազը հետագայում Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումը չի բողոքարկել:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազի՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը հետ վերցնելու իրավասության առկայության պայմաններում կալանքի միջնորդությունը մերժելու մասին դատախազի խնդրանքն իրավաչափ չէ:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ մեղադրյալ Ժ.Պարոնյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը դատախազի կողմից հետ վերցված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության ու հիմնավորվածության դատական ստուգման արդյունքում հանգել է հետևության, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ Ժ.Պարոնյանն առնչություն ունի նրան մեղսագրվող արարքի հետ: Միաժամանակ, հիմնավորված համարելով մեղսագրված արարքին Ժ.Պարոնյանի առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, Վերաքննիչ դատարանը եկել է եզրահանգման, որ այդ պայմաններում մեծ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողությունների՝ գործի քննությանը խոչընդոտելու և քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կատարման հավանականությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Այս առումով Վերաքննիչ դատարանը քրեադատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտումներ թույլ չի տվել, որոշումը կայացրել է վերաքննիչ բողոքի շրջանակներում՝ հիմնվելով գործի նյութերի հետազոտման արդյունքների վրա:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 12-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի, հիմնավորումների և պահանջի սահմաններում ստորադաս դատարանների որոշումներն օրինական, հիմնավորված և պատճառաբանված են, իսկ մյուս խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը գործի նյութերում չեն գտնում, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը մերժել: Մեղադրյալ Ժիրայր Հարությունի Պարոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 20-ի որոշումը քողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

43.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՇԳ/0110/01/11**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ մեղադրող՝</i>	Ժ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աննա Վրույրի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ մաս՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2011 թվականի հուլիսի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11123411 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ Աննա Վրույրի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի սեպտեմբերի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 20-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 8-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատվել է մեկ երրորդով:

Վերացվել է որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը, և Ա.Հարությունյանը կալանքի է վերցվել դատական նիստերի դահլիճից:

Տուժող Գառնիկ Ավագյանի քաղաքացիական հայցը բավարարվել է՝ ամբաստանյալ Ա.Հարությունյանից հոգուտ տուժող Գ.Ավագյանի վճռվել է բռնագանձել 217.000 (երկու հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ և 3900 (երեք հազար ինը հարյուր) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

3. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի պաշտպան Ռ.Բալաբանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մարտի 20-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Հարությունյանը, որը վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

#### **Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ա.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, տուժող Գ.Ավագյանին վստահեցնելով, որ ունի կապեր ՀՀ արդարադատության նախարարությունում և փաստաբաններ, որոնց միջոցով կկարողանա պատժից ազատել գողություն կատարելու համար կալանքի տակ գտնվող Գ.Ավագյանի որդուն, 2010 թվականի դեկտեմբերի 13-ին Երևանի Նորագավիթ 1-ին փողոցի 20 տանը նրանից ստացել է 540.300 ՀՀ դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար, այնուհետև, պատճառաբանելով, որ գումարը քիչ էր նախատեսել, նույն թվականի դեկտեմբերի 23-ին կրկին Գ.Ավագյանից ստացել է 720.140 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար: Այնուհետև, որոշակի մոծումներ կատարելու համար Գ.Ավագյանից պահանջել և ստացել է 109.030 ՀՀ դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլար, իսկ 2011 թվականի հունվարի 13-ին, վերջինիս վստահեցնելով, որ դատաքննությունն արագացված կարգով կատարելու համար անհրաժեշտ է 15.000 ՀՀ դրամ, կրկին ստացել է պահանջված գումարը: Այնուհետև, 2011 թվականի հունվարի 16-ին զանգահարելով Գ.Ավագյանին՝ նրանից պահանջել է ևս 36.450 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար՝ որպես իր կողմից մինչև այդ կատարված վճարումների գումար, և նույն օրն ստացել այն: Բացի այդ, Գ.Ավագյանին վստահեցնելով, որ գործն ընթացքի մեջ է և շուտով նրա որդուն ազատ են արձակելու, 2011 թվականի հունվարի 31-ին նրանից պահանջել և ստացել է 200.000 ՀՀ դրամ, իսկ նույն թվականի մարտի 1-ին, Գ.Ավագյանին հավաստիացնելով, թե իբր արդարադատության նախարարությունում իր ծանոթների միջոցով ստուգում է նշանակել և ազատման թուղթը ստանալու համար պետք է 42.000 ՀՀ դրամ վճարում կատարի, նույն օրն ստացել է այն՝ շարունակաբար Գ.Ավագյանից հափշտակելով ընդհանուր առմամբ 1.405.920 ՀՀ դրամին համարժեք 3.900 ԱՄՆ



դրլար և 257.000 ՀՀ դրամ: Այսպիսով, Ա.Հարությունյանը նախնական դիտավորությունն ավարտին է հասցրել՝ Գ.Ավագյանին պատճառելով խոշոր չափերի հասնող՝ 1.662.920 ՀՀ դրամի գույքային վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 123):

6. Վերաքննիչ դատարանի դատական ակտի՝ «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» հատվածում առկա է հետևյալ ձևակերպումը. «Վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքը՝ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, լսելով նաև բողոքում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին պաշտպանի և ամբաստանյալի պատճառաբանությունները, մեղադրողի պատասխանը դրա դեմ, ինչպես նաև ուսումնասիրելով և վերլուծելով գործի նյութերը, դրանք գնահատելով իրենց համակցությամբ՝ հանգում է այն հետևության, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 197):

Վերաքննիչ դատարանի դատական ակտի եզրափակիչ մասում առկա է հետևյալ ձևակերպումը. «(...) Պաշտպան՝ Ռուբեն Բալաբանյանի վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի մարտի 20-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Աննա Վրույրի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 198):

#### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 62-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:

Վկայակոչելով Վճարելի դատարանի մի շարք նախադեպային որոշումներ՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչու իր ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու, ինչպես նաև որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք չի գնահատվել տուժողին պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը, ինչի արդյունքում վերացել է արարքի հանրության համար վտանգավորության բնույթն ու աստիճանը, վերականգնվել սոցիալական արդարությունը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինքը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զոջացել է կատարածի համար, նախաքննության և դատաքննության ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, ունի երկու անչափահաս երեխա, իսկ որդին ծառայում է ՀՀ ազգային բանակում: Վկայակոչելով *Ա.Սարգսյանի* վերաբերյալ Վճարելի դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի որոշումը, որտեղ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատիժը անխուսափելիորեն ազդում է նրա ընտանիքի անդամների վրա, և կախված ընտանիքի կյանքում անձի ունեցած դերից, այն կարող է նաև ծանր կացության մեջ դնել վերջիններիս: (...)», բողոքաբերը նշել է, որ իր ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, իսկ ինքը հանդիսանում է իր ընտանիքի միակ կերակրողը:

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի, 360-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 8-րդ կետերի պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման նկարագրական-պատճառաբանական մասում, մասնավորապես, «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» մասում շարադրել է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել, մինչդեռ եզրափակիչ մասում անհիմն ու չպատճառաբանված կերպով մերժել է այն՝ կայացնելով արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտ:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 17-ի որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել կամ գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել բողոքաբերի կողմից բարձրացված հարցերի միջև առկա կապի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերն ըստ էության երկու իրավական հարց է բարձրացրել, որոնցից առաջինն առնչվում է իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն (նյութական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), իսկ երկրորդը՝ Վերաքննիչ դատարանի որոշման նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա անհամապատասխանությանը, (դատավարական իրավունքի խախտում) (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով բողոքաբերի կողմից փաստարկված դատավարական և նյութական իրավունքների ենթադրյալ խախտումները փոխկապակցված են, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում՝ 2012 թվականի մարտի 30-ին ընդունած թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշմանը:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի որոշումն այն պայմաններում, երբ դատական ակտի եզրափակիչ մասում արձանագրված եզրահանգումը չի բխում նույն ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությունից:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

(...)

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

(...)

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

(...))»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են դատարանի որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բողոքը քննելու արդյունքում՝ վերաքննիչ դատարանը կայացնում է դատական ակտ, որն ամբողջությամբ կամ մասամբ փոխարինում է առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

2. Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները

(...)

4. Վերաքննիչ դատարանի դատական ակտում պետք է նշվեն, թե ինչ հիմքերով է առաջին ատյանի դատարանի դատական ակտը համարվում ճիշտ, իսկ բողոքում բերված եզրահանգումները՝ անհիմն, ինչն էլ հիմք է ծառայել առաջին ատյանի դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մի մասով բեկանելու կամ փոփոխելու համար»:

*Գ. Ղազարյանի* վերաբերյալ կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են մաս վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը ևս պետք է կազմված լինեն ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնց ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատավճռին:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատական ակտի կառուցվածքին և բովանդակությանը որոշակի պահանջներ ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտը պետք է ամբողջական տեղեկություն պարունակի քննված գործի վերաբերյալ, ինչպես նաև ներառի դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի պատասխանները: Բացի այդ, դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ

ունենա, այդ թվում՝ վերաբերի միևնույն քրեական գործին, հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է» (տե՛ս Գեղամ Մխակի Ղազարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

14. Վերահաստատելով վկայակոչված որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռի օրինականությունը և հիմնավորվածությունը, իր դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում, մասնավորապես՝ «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» հատվածում նշել է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել, այնուհետև եզրափակիչ մասում արձանագրել է, որ պաշտպանի բողոքը ենթակա է մերժման (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերում առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ դատական ակտի եզրափակիչ մասում արձանագրված եզրահանգումը չի բխում նույն ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությունից:

16. Սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված չէ:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական ակտի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջներն ամրագրած 358-րդ և 371-րդ հոդվածների խախտում: Դրանք իրենց բնույթով էական են և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելու հիմք են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդիսանում են քրեադատավարական օրենքի էական խախ-

տումներ, հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի խախտման հետ փոխկապակցված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը) հարցին հնարավոր կլինի անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը) վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Աննա Վրույրի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն  
Դատավորներ՝ ստորագրություններ*

44.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՇԴ/0158/01/11**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
<i>մասնակցությամբ մեղադրող՝</i>	Կ.ԱԴԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դանիել Արմենակի Ղասաբողյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 30-ի որոշման դեմ ամբաստանյալ Դ.Ղասաբողյանի պաշտպան Ա.Ղասաբողյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2011 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 84102411 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Դանիել Ղասաբողյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Դ.Ղասաբողյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չիեռանալու մասին ստորագրությունը:

2011 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճռով Դ.Ղասաբողյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի 500.000 ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 30-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 30-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ա.Ղասաբողյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները**

5. Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել հետևյալը. «Դեագա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը զբաղվել է պանրի մեծածախ առևտրով՝ Հայաստանի Հանրապետության տարբեր գյուղերի բնակիչներից ձեռք է բերել պանիր և արտահանել Ռուսաստանի Դաշնություն: Նշված ընկերության տնօրեն է հանդիսացել Երազիկ Վարդանյանը, սակայն տնօրենի պարտականությունները փաստացի կատարել է նրա ամուսինը՝ Դանիել Ղասաբողյանը: 2008 թվականի ամռանը ընկերությունը գյուղացիներից ձեռք է բերել 60 տոննա պանիր, որից 2 տոննան՝ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղի բնակիչներից: «Դեագա» ՍՊԸ-ի կողմից պանիր ձեռք բերելիս տեղում գնման ակտեր չեն կազմվել:

2009 թվականի սեպտեմբերի սկզբներին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչության աշխատակիցները «Դեագա» ՍՊԸ-ում կատարել են բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 2009 թվականի սեպտեմբերի 9-ին կազմվել է թիվ 1004882 ակտը և «Դեագա» ՍՊԸ-ից ՀՀ բյուջե լրացուցիչ գանձման է առաջադրվել 6.627.200 ՀՀ դրամ: Նշված գումարի վճարումից խուսափելու նպատակով Դ.Ղասաբողյանը չլրացված գնման ակտեր է տրամադրել Կամո Գրիգորյանին և խնդրել դրանք ստորագրության հանձնել Խաչիկ գյուղի բնակիչներին, ովքեր 2009 թվականի աշնանը ստորագրել են դրանք: Այնուհետև Դ.Ղասաբողյանի կողմից տրված տվյալներով Ե.Վարդանյանը լրացրել է նշված գնման ակտերն այնպես, իբրև «Դեագա» ՍՊԸ-ն Խաչիկ գյուղի բնակիչներից գնել է 60 տոննա պանիր:

2010 թվականի փետրվարի 19-ին Էրեբունու հարկային տեսչության աշխատակիցներն արձանագրված հարկային պարտավորությունների գանձումն ապահովելու նպատակով հայց են ներկայացրել ՀՀ վարչական դատարան: 2010 թվականի մայիսի 11-ին Դ.Ղասաբողյանը նույն դատարան է դիմել հակընդդեմ հայցով, որի ընթացքում ՀՀ վարչական դատարան է ներկայացրել կեղծ ապացույց հանդիսացող գնման

ակտերն այն մասին, որ 2008 թվականի ամռանը Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղի տարբեր քաղաքացիներից գնել է շուրջ 60 տոննա պանիր (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, 144-147-րդ թերթեր):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Դ.Ղասաբողյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու գնահատման չեն ենթարկել քրեական գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում սխալ եզրահանգման են եկել Դ.Ղասաբողյանի մեղավորության վերաբերյալ: Ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորությունը հաստատող ապացույցներ ձեռք չեն բերվել:

7. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չկայացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների խախտում:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ Դ.Ղասաբողյանին մեղսագրվող արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, հետևաբար այդ արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կազմում է երկու տարի՝ հանցանքն ավարտված համարվելու պահից սկսած: Տվյալ դեպքում ամբաստանյալին մեղսագրվող հանցավոր արարքի ավարտման պահ է հանդիսանում գնման ակտերը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու օրը՝ 2010 թվականի մայիսի 11-ը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով դատական ակտ կայացնելու օրվա դրությամբ՝ 2012 թվականի հուլիսի 30-ին, ամբաստանյալ Դ.Ղասաբողյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած է եղել, սակայն Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի անդրադարձել դրան:

8. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 30-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

9. Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով նախևառաջ պետք է պատասխանել բողոքաբերի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. Վերաքննիչ դատարանը պարտավո՞ր էր արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել ամբաստանյալ Դ.Ղասաբողյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը:



10. ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորյալ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. (...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

4. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

11. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա.Սաղաթեյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական օրենսդրությամբ, կապված արարքի բնույթից և հանրության համար վտանգավորության աստիճանից, նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու տարբեր ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր վտանգավորությունը, և անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Վերոգրյալի հիման վրա քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Միևնույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով (...)» (տե՛ս Անահիտ Հայկի Սաղաթեյանի

գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ-5/0022/01/10 որոշման 24-րդ կետը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելը գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի վերլուծությունից բխում է, որ այն նկարագրում է դիտավորյալ հանցագործություն, իսկ հոդվածի սանկցիայով նախատեսված ազատագրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 2 տարին, ուստի տվյալ հոդվածով նախատեսված հանցավոր արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին, և այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի, և եթե վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատված կամ կասեցված չի եղել:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Գ.Ղասաբողլյանին մեղսագրվող հանցանքն ավարտվել է 2010 թվականի մայիսի 11-ին՝ կեղծ գնման ակտերը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու պահից: Քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ այն մասին, որ Գ.Ղասաբողլյանը նշված արարքը կատարելուց հետո կատարել է նոր հանցանք կամ խուսափել է քննությունից կամ դատից, այսինքն՝ վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատված կամ կասեցված համարելու հիմքերը բացակայում են:

Հետևաբար Գ.Ղասաբողլյանին մեղսագրվող հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացել է 2012 թվականի մայիսի 11-ին, և այդ օրվա դրությամբ նրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացնելու պահին՝ 2012 թվականի հուլիսի 30-ին, ամբաստանյալ Գ.Ղասաբողլյանին քրեական պատասխանատվության ենթարկելու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցած է եղել:

Հետևաբար Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անդրադառնալ այդ հարցին և այն դեպքում, եթե ամբաստանյալը չէր առարկի դրա դեմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել ամբաստանյալ Գ.Ղասաբողլյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը, ինչը չի արել:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա չդարձնելով ամբաստանյալ Գ.Ղասաբողլյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը, թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում: Այդ խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում

կայացնելու վրա, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

16. Միևնույն ժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դ.Ղասաբողյանին մեղադրանք է առաջադրվել և Առաջին ատյանի դատարանի կողմից նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ է կայացվել ՀՀ վարչական դատարան կեղծ ապացույց ներկայացնելու համար (տե՛ս սույն որոշման 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը): Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ այն պատասխանատվություն է նախատեսում գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելու համար:

Հետևաբար, վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատասխանի նաև այն հարցին, թե արդյո՞ք վարչական դատարան կեղծ ապացույց ներկայացնելը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում անդրադառնալ բողոքարբերի փաստարկներին առ այն, որ ստորադաս դատարանները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ու գնահատման չեն ենթարկել քրեական գործում առկա ապացույցները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Դանիել Արմենակի Ղասաբողյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

45.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԱԴԴ/0004/11/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դիմողների ներկայացուցիչ՝* Ռ.ՌԵՎԱԶՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 4-ի և հունիսի 12-ի որոշումների դեմ դիմողներ Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի ներկայացուցիչ Ռուբերտ Ռևազյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Վ.Մելքոնյանը 2011 թվականի հոկտեմբերի 31-ին որոշում է կայացրել Արման Վահանի Դավթյանի ստացած մարմնական վնասվածքների փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

2012 թվականի մարտի 30-ին Արման Դավթյանի և Սոնա Սկրտչյանի ներկայացուցիչ Ռուբերտ Ռևազյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով բողոքարկման բաց թողնված ժամկետը համարել հարգելի և վերացնել

ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Վ.Մերժոնյանի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

2. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ փաստաբան Ռ.Ռևազյանի բողոքը մերժվել է:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռևազյանի բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշմամբ մերժվել է, իսկ որոշումը՝ թողնվել անփոփոխ:

3. 2012 թվականի փետրվարի 21-ին Ռ.Ռևազյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից Արման Դավթյանի և մյուսների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանը 2012 թվականի մարտի 2-ին որոշում է կայացրել փաստաբան Ռ.Ռևազյանի հողողման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ նույն անձանց նկատմամբ նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին քննիչի չվերացված որոշման առկայության պատճառաբանությամբ:

Նույն որոշմամբ մերժվել է նաև սպառնալիքներով Սոնա Մկրտչյանից սուտ ցուցմունքներ վերցնելու վերաբերյալ վերջինիս բացատրության հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռևազյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012 թվականի մարտի 2-ի որոշումը:

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի մայիսի 8-ին որոշում է կայացրել 2012 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանի կողմից կայացված որոշումը վերացնելու պահանջը մերժելու մասին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռևազյանի բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 12-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի և հունիսի 12-ի որոշումների դեմ դիմողներ Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռևազյանը բերել է վճարելի բողոքներ:

2012 թվականի օգոստոսի 10-ին Վճարելի դատարանը որոշում է կայացրել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի թիվ ԵԱԴԳ/0004/11/12 որոշման դեմ բերված բողոքը վարույթ ընդունելու մասին:

2012 թվականի օգոստոսի 17-ին Վճարելի դատարանը որոշել է Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԿԴ/0039/11/12 որոշման դեմ բերված վճարելի բողոքն ընդունել վարույթ, թիվ ԵԱԴԴ/0004/11/12 և ԵԿԴ/0039/11/12 գործերը միացնել մեկ վարույթում՝ ԵԱԴԴ/0004/11/12 համարի տակ՝ նկատի ունենալով, որ այդ երկու գործերը վերաբերում են նույն անձանց և նույն հանգամանքներին, իսկ վճարելի բողոքները բերել է նույն անձը:

Վճարելի բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

6. Արման Վահանի Դավթյանի ստացած մարմնական վնասվածքների փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ ոստիկանության ԶԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչ Վ.Մելքոնյանի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը չի բովանդակում նշում այն մասին, թե ինչ կարգով և ինչ ժամկետում է այն ենթակա բողոքարկման (տե՛ս թիվ ԵԱԴԴ/0004/11/12 Նյութեր, թերթ 16-21):

Քննիչի վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Աշափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2012 թվականի ապրիլի 20-ին կայացված որոշման համաձայն՝ «(...) Ռ.Ռևազյանի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը, համաձայն որի՝ քննիչի որոշումը նախ պետք է բողոքարկվեր դատախազին, ապա նոր միայն դատարան: Բացի այդ, Ռ.Ռևազյանի բողոքը ժամկետանց է: Ս.Մկրտչյանի մասով բողոքը նույնպես ենթակա է մերժման ոչ միայն այն հիմքով, որ վերջինս բողոքարկման սահմանված ընթացակարգը չի պահպանել, այլև այն պատճառաբանությամբ, որ վերջինս օժտված չէ իրավասությամբ բողոքարկել քննիչի 31.10.2011 թվականի որոշումը, քանզի այդ որոշմամբ Ս.Մկրտչյանի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել և ընդհանրապես քննիչի որոշումը վերաբերում է Ա.Դավթյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ հետապնդում չիրականացնելուն» (տե՛ս թիվ ԵԱԴԴ/0004/11/12 գործի նյութեր, թերթ 39-40):

7. ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից Արման Դավթյանի և մյուսների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայություն 2012 թվականի փետրվարի 21-ին Ռ.Ռևազյանի ներկայացրած հարողման կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանի՝ 2012 թվականի մարտի 2-ին կայացված որոշման մեջ որևէ պարզաբանում չկա այն մասին, թե ինչ կարգով և ինչ ժամկետում է այն ենթակա բողոքարկման: Փոխարենը, որոշման եզրափակիչ մասում առկա է հետևյալ նախադասությունը. «Որոշման մասին հայտնել Արման Դավթյանին, Սոնա Մկրտչյանին, փաստաբան Ռուբեն Ռևազյանին և Վահագն Պողոսյանին ու նրանց բացատրել սույն որոշումը բողոքարկելու կարգը» (տե՛ս թիվ ԵԿԴ/0039/11/12 Նյութեր, թերթեր 20-21):

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանի 2012 թվականի մարտի 2-ի որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի մայիսի 8-ին կայացրել է որոշում, որի համաձայն՝ «(...) բողոքարկվող գործողությունները կատարված են օրենքին համապա-

տասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն» (տե՛ս թիվ ԵԿԳ/0039/11/12 գործի նյութեր, թերթ 75-83):

### **3. Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքների հեղինակը նշել է, որ սույն գործով ստորադաս դատարանները չեն անդրադարձել այն հարցին, թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշման բողոքարկման կարգը և ժամկետները չպարզաբանելը չէ՞ր կարող արդյոք վերոնշյալ որոշումը ոչ պատշաճ ժամկետում և ոչ ճիշտ ընթացակարգով բողոքարկելու պատճառ հանդիսանալ:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի՝ 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման մեջ որևէ հիշատակում չկա այն մասին, թե հիշյալ որոշումը որ մարմին, ինչ ժամկետներում և ինչ կարգով կարող է բողոքարկվել:

Անդրադառնալով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների բովանդակությանը՝ բողոքաբերը նշել է, որ ոստիկանների կողմից Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի նկատմամբ բռնություն կիրառելու, վերջիններիս նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու, նրանց ազատությունից ապօրինի գրկելու և ցուցմունքներ տալուն հարկադրելու վերաբերյալ իր կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացված հաղորդման շուրջ օրյեկտիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել:

Բողոքաբերը նշել է նաև, որ Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը վերաբերում է ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից Ա.Դավթյանին ծեծի ենթարկելու հանգամանքը պարզելուն, այսինքն՝ քննիչը քննել է մի գործ, որը վերաբերել է իր գործընկերներին, հետևաբար, նա ի սկզբանե եղել է գործով շահագրգռված անձ և հնարավորություն չի ունեցել իրականացնելու օրյեկտիվ քննություն:

10. Բողոքաբերի պնդմամբ՝ անհիմն է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման մեջ տեղ գտած այն պատճառաբանությունը, թե Ս.Սկրտչյանն օժտված չէ քննիչի՝ 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բողոքարկելու իրավասությամբ, քանի որ այդ որոշմամբ Ս.Սկրտչյանի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ թեև քննիչի՝ 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման եզրափակիչ մասը վերաբերում է միայն Ա.Դավթյանին, սակայն նույն որոշման մեջ տեղ գտած՝ «(...) չի ապացուցվել և հիմնավորվել Սոնա Սկրտչյանին և Արթուր Մանուկյանին ոստիկանության Մաշտոցի բաժնում ծեծի ենթարկելու դեպքերը (...)» արտահայտությունն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ հիշյալ որոշմամբ շոշափվել են նաև Սոնա Սկրտչյանի իրավունքները, ուստի նա նույնպես իրավունք ունի բողոքարկելու քննիչի՝ 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

11. Վերոշարադրյալի հիման վրա վճարելի բողոքների հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի և հունիսի 12-ի որոշումները և գործն ուղարկել նոր քննության:

**4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճարելի դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ իր գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները պարզաբանելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Վարույթն իրականացնող մարմնի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները պարզաբանելը.*

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք փաստաբան Ռ.Ռ-Լազյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի, ինչպես նաև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշումներն այն պարագայում, երբ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների մեջ պարզաբանված չեն եղել այդ որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները:

14. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ



միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ « (...) Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: (...)»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

Մեջբերված դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որին ուղիղ համեմատական է այդ իրավունքները և ազատությունները ճանաչելուն և պաշտպանելուն, ինչպես նաև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն ուղղված՝ պետության պոզիտիվ պարտականությունը: Նշված կառուցակարգերի թվին է դասվում նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը, որին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ. Չարյանի* գործով կայացված որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ « (...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և (...) կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը» (տե՛ս Լաուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալ իր իրավունքները և պարտականությունները (...)»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»:

Մեջբերված քրեադատավարական դրույթի վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական հարաբերություններում, ելնելով քրեական դատավարության հանրային բնույթից, դատավարության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իմանալ իր կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ բողոք ներկայացնելու իրավունքի մասին: Նշված իրավունքին համապատասխանում է քրեական վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը դատավարության յուրաքանչյուր մասնակցին պարզաբանելու նրա իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ բողոք ներկայացնելու իրավունքը:

16. Սույն որոշման 14-րդ և 15-րդ կետերում շարադրված վերլուծության համադրման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության ընթացքում դատավարության մասնակցի վերաբերյալ համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է դրանցում

պարզաբանի նաև, թե որ մարմին, ինչ ժամկետում և ինչ կարգով կարող են բողոքարկվել այդ փաստաթղթերը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարության մասնակցին վերոնշյալ պարզաբանումները չտրամադրելը հանգեցնում է վերջինիս իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 31-ին կայացվել է Ա.Դավթյանի ստացած մարմնական վնասվածքների փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում, որտեղ պարզաբանված չեն նշված որոշման բողոքարկման կարգն ու ժամկետները: Նախաքննության մարմնի վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի ապրիլի 20-ին կայացրել է դիմողների ներկայացուցիչ Ռ.Ռ-Լազյանի բողոքը մերժելու մասին որոշում՝ պատճառաբանելով, որ բողոքարկերի կողմից պահպանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը, ինչպես նաև բողոքը ժամկետանց է: Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռ-Լազյանի բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի որոշմամբ մերժվել է, իսկ որոշումը՝ թողնվել անփոփոխ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

2012 թվականի փետրվարի 21-ին Ռ.Ռ-Լազյանը ՀՀ հատուկ քննչական ծառայություն հաղորդում է ներկայացրել այն մասին, որ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից Ա.Դավթյանի և մյուսների նկատմամբ բռնություն է գործադրվել: Նշված հաղորդման կապակցությամբ 2012 թվականի մարտի 2-ին կայացված որոշման մեջ ևս որևէ պարզաբանում չկա այն մասին, թե ինչ կարգով և ինչ ժամկետում է այն ենթակա բողոքարկման: Փոխարենը, որոշման եզրափակիչ մասում առկա է հետևյալ նախադասությունը. «Որոշման մասին հայտնել Արման Դավթյանին, Սոնա Սկրտչյանին, փաստաբան Ռուբեն Ռ-Լազյանին և Վահագն Պողոսյանին ու նրանց բացատրել սույն որոշումը բողոքարկելու կարգը»:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Գրիգորյանի 2012 թվականի մարտի 2-ի որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի մայիսի 8-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողել անփոփոխ: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ Ա.Դավթյանի և Ս.Սկրտչյանի ներկայացուցիչ Ռ.Ռ-Լազյանի բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 12-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ (տե՛ս սույն որոշման 3-4-րդ և 7-րդ կետերը):

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբան Ռ.Ռ-Լազյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի,

ինչպես նաև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշումները հիմնավոր չեն, քանի որ դրանք կայացնելիս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված վերոնշյալ որոշումներում պարզաբանված չեն եղել դրանց բողոքարկման կարգն ու ժամկետները:

Ինչ վերաբերում է քննիչ Ա.Գրիգորյանի որոշման մեջ առկա հետևյալ ձևակերպմանը՝ «(...) Արման Դավթյանին, Սոնա Մկրտչյանին, փաստաբան Ռուբեն Ռևազյանին և Վահագն Պողոսյանին (...) բացատրել սույն որոշումը բողոքարկելու կարգը», ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինիս առկայությունը դեռևս չի նշանակում, որ համապատասխան անձանց բացատրվել են որոշման բողոքարկման կարգն ու ժամկետները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քննիչի վերոնշյալ նախադասության փոխարեն որոշման մեջ պետք է՝

ա) նշվեր, որ որոշումը հանձնվելու է դիմողին, ինչպես նաև բոլոր այն անձանց, ում իրավունքներին և պարտականություններին այն առնչվում է,

բ) պարզաբանվելին որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները՝ որոշման մեջ համապատասխան օրենսդրական դրույթների վրա հղում կատարելու և դրանց բովանդակությունը մեջբերելու միջոցով:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանները պետք է յուրաքանչյուրի համար արդյունավետ իրավական պաշտպանություն ապահովելու՝ պետության պարտավորության լույսի ներքո քննության առնելին մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների դեմ բերված բողոքները և պատշաճ գնահատական տալին մինչդատական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց պարտականությունները չկատարելու, այն է՝ որոշման բողոքարկման կարգն ու ժամկետը չպարզաբանելու վերաբերյալ:

*II. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձինք.*

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման մեջ առկա մոտեցումն այն մասին, որ Ս.Մկրտչյանն իրավունք չունի բողոքարկել Արման Վահանի Դավթյանի ստացած մարմնական վնասվածքների փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

21. Բողոքարկման իրավունք ունեցող անձանց շրջանակի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է տալիս նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձին մասնակցել քրեադատավարական իրավահարաբերություններին, եթե վերջիններս առնչվում են այդ անձի իրավունքներին և օրինական շահերին (...):

(...) եթե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն

իրավունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա» (տե՛ս Մարատ և Կարեն Սարգսյանների գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշման 21-23-րդ կետերը):

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման մեջ նշել է, որ Սոնա Մկրտչյանի մասով բողոքը նույնպես ենթակա է մերժման նաև այն պատճառաբանությամբ, որ վերջինս օժտված չէ քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բողոքարկելու իրավասությամբ, քանի որ այդ որոշմամբ նրա իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել և, ընդհանրապես, քննիչի որոշումը վերաբերում է Ա.Գավթյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ հետապնդում չիրականացնելուն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

23. Սույն որոշման 21-րդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 22-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման մեջ առկա մոտեցումն այն մասին, որ Ս.Մկրտչյանն իրավունք չունի բողոքարկել Արման Վահանի Գավթյանի ստացած մարմնական վնասվածքների փաստով քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ թեև քննիչի՝ 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման եզրափակիչ մասը վերաբերում է միայն Ա.Գավթյանին, սակայն նույն որոշման մեջ տեղ գտած այն արտահայտությունը, որ «(...) չի ապացուցվել և հիմնավորվել Սոնա Մկրտչյանին (...) ոստիկանության Մաշտոցի բաժնում ծեծի ենթարկելու դեպքերը (...)», ակնհայտորեն վկայում է այն մասին, որ հիշյալ որոշմամբ շոշափվել են նաև Սոնա Մկրտչյանի իրավունքները, ուստի նա նույնպես իրավունք ունի բողոքարկելու քննիչի որոշումը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

24. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը վերաբերում է ոստիկանութ-

յան Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից Ա.Դավթյանին ծեծի ենթարկելու հանգամանքը պարզելուն, այսինքն՝ քննիչը քննել է մի գործ, որը վերաբերել է իր գործընկերներին, հետևաբար, նա ի սկզբանե եղել է գործով շահագրգռված անձ և հնարավորություն չի ունեցել իրականացնելու օբյեկտիվ քննություն (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճարելի դատարանը վերահաստատում է, որ «(...) նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինից (տե՛ս Արայիկ Էդուարդի Գոլյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի ԵԱԶԴ/0049/01/09 որոշման 32-րդ կետը):

Վերահաստատելով *Ա. Գոլյանի* գործով որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի է ոչ միայն նախաքննության, այլ նաև հետաքննության մարմինների դեմ բերված բողոքների քննությանը: Հետևաբար, հիմնավոր է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ քննիչը քննել է մի գործ, որը վերաբերել է իր գործընկերներին, ուստի՝ նա ի սկզբանե հնարավորություն չի ունեցել իրականացնելու օբյեկտիվ քննություն:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 13-24-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք հիմք են Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշումը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի և հունիսի 12-ի որոշումները բեկանելու և մեկ վարույթում միացված գործը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, սույն գործով ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքները բավարարել մասնակիորեն: Դիմողներ Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Սկրտչյանի վերաբերյալ Երևան քաղաքի Աջափնյակ և

Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 8-ի որոշումը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 4-ի և հունիսի 12-ի որոշումները բեկանել և մեկ վարույթում միացված գործն ուղարկել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

46.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԳ3/0006/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սահակ Ռաֆիկի Թադևոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 9-ի որոշման դեմ մեղադրող Տ.Բիշարյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2011 թվականի սեպտեմբերի 20-ին:

Սահակ Ռաֆիկի Թադևոսյանին 2012 թվականի հունվարի 11-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի հունվարի 23-ին քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճռով Ս.Թադևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 տարի 6 ամիս ժամկետով:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Ս.Թադևոսյանը բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 9-ին որոշում է կայացրել ամբաստանյալի բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճիռը՝ պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Վերաքննիչ դատարանը Ս.Թադևոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման՝ 2 տարի 3 ամիս ժամկետով: Դատավճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշման դեմ մեղադրող Տ.Բիշարյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Սահակ Թադևոսյանը, նշված քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու ընթացքում, առանց իրացնելու նպատակի, գործով չպարզված անձից 2011 թվականի սեպտեմբերի 12-ին հեռախոսազանգով պահանջել և «Սևան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Սոս Հակոբյանի մոտ տեսակցության եկող Գայանե Հակոբյանի միջոցով 2011 թվականի սեպտեմբերի 13-ին «Սևան» քրեակատարողական հիմնարկ բերված և Սահակ Թադևոսյանի պահանջի համաձայն Գայանե Հակոբյանի կողմից նույն հիմնարկի ազատ դատապարտյալ Գևորգ Գասպարյանին փոխանցված հանձնուրի միջոցով փորձել է ապօրինի ձեռք բերել և պահել խոշոր չափի՝ 1,975 գրամ հաստատուն կշռով «ացետիլացված ափիոն» տեսակի թմրամիջոց: Իր հանցավոր մտադրությունը Ս.Թադևոսյանը, սակայն, չի կարողացել ավարտին հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ հանձնուրի մեջ գտնվող ամառային կոշիկի ներբանի մեջ թաքցված 1,975 գրամ «ացետիլացված ափիոն» տեսակի թմրամիջոցը «Սևան» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները զննության ժամանակ հայտնաբերել և առգրավել են:

6. Սահակ Ռաֆիկի Թադևոսյանը նախկինում ութ անգամ դատապարտված է եղել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 192-194):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա է հետևյալ ձևակերպումը. «ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի և 63-րդ հոդվածի համաձայն՝ ամբաստանյալ Ս.Թադևոսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է համարվում հանցանքը կատարելու առանձնապես վտանգավոր ռեցիդիվը, ուստի Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի կանոններով՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 103-107):

8. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա է հետևյալ ձևակերպումը. «Ամբաստանյալ Սահակ Թադևոսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցագործության համար նախատեսված պատժի առավելագույն ժամկետը մատնանշված հոդվածի սանկցիայով սահմանված է ազատազրկում 3 տարի ժամկետով:

(...) ամբաստանյալի նկատմամբ պետք է պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ և 65-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով, որի պայմաններում



Սահակ Թադևոսյանի նկատմամբ նշանակված պատժի ժամկետը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն չափը՝ 2 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկումը, հետևաբար առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը չի համապատասխանում մատնանշված հոդվածների պահանջներին:

(...) ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել՝ համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որով թույլ է տվել նյութական իրավունքի խախտումներ, այդ խախտումները իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն, հիմք է կայացված դատական ակտը մասնակիորեն՝ պատժի մասով, բեկանելու և փոփոխելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 40-44):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այսինքն՝ կիրառել է այն նորմը, որը ենթակա չէր կիրառման, ինչպես նաև սխալ է մեկնաբանել քրեական օրենքը: Արդյունքում թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, իսկ կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

10. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ պնդման՝ բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս իրավացիորեն կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները, որոնք կիրառելի են առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության պարագայում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4<sup>1</sup>-րդ մասի պահանջն այն մասին, որ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

11. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է պատժի մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճիռին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիրն է: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք

կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հոդվածի կիրառման կապակցությամբ դատական պրակտիկայի համար:

13. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոնները սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցավորձի համար ազատագրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատագրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4<sup>1</sup>-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս»:

ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:

Մեջբերված դրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ դրանք սահմանում են հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները: Ամբարշտելով, թե ռեցիդիվի տեսակով պայմանավորված ինչ չափի պատիժ կարող է նշանակվել անձի նկատմամբ՝ վերոշարադրյալ դրույթները սահմանում են նաև, որ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը բացառում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների կիրառմամբ պատիժ նշանակելը: Հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում պատիժը նշանակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի կանոններով՝ անկախ նրանից, թե հանցագործությունը, որի կատարման մեջ անձը մեղավոր է ճանաչվել, ավարտված է, թե ոչ: Այլ խոսքով՝ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չեն կիրառվում, եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվի որևէ տեսակ:

15. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Թադևոսյանը նախկինում ութ անգամ դատապարտված է եղել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Նշված հանգամանքը Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի է առնվել Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել՝ ղեկավարվելով հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանը պատժի մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ 2 տարի 6 ամիս ժամկետով ազատագրկման ձևով նշանակված պատիժը չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ և 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, քանի որ այդ իրավանորմներից բխում է, որ ՀՀ

քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Ս.Թադևոսյանի նկատմամբ նշանակված պատժի ժամկետը չի կարող գերազանցել 2 տարի 3 ամիս ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

16. Սույն որոշման 15-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները մեկնաբանելով սույն որոշման 14-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի պարագայում Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ենթակա էին կիրառման ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4<sup>1</sup>-րդ մասի և 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի, այլ ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Հետևաբար, հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ս.Թադևոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոնները սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով:

17. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի կողմից Ս.Թադևոսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս իրավացիորեն կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները, որոնք կիրառելի են առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության պարագայում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4<sup>1</sup>-րդ մասի պահանջն այն մասին, որ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի կողմից հիշյալ իրավանորմների պահանջները պահպանված լինելու պարագայում՝ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 67<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի և 65-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Թադևոսյանի վերաբերյալ 2012 թվականի հուլիսի 9-ի որոշումը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այսինքն՝ կիրառել է այն նորմը, որը ենթակա չէր կիրառման:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով դատական ակտը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Թադևոսյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, իսկ այդ դատական ակտը մասնակիորեն բեկանելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշումը՝ անօրինական և չիմնավորված: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ վճարելի դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սահակ Ռաֆիկի Թադևոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 3-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝                   ստորագրություն  
Դատավորներ՝               ստորագրություններ*

47.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼԳ/0078/06/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

յոնրազ դատական նիստում, քննության առնելով Վահե Սերյոժայի Բարսեղյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 17-ի որոշման դեմ մեղադրյալ Վ.Բարսեղյանի պաշտպան Հովսեփի Հովսեփյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2012 թվականի ապրիլի 2-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով:

2012 թվականի մայիսի 6-ին Վահե Բարսեղյանը ձերբակալվել է:

2012 թվականի մայիսի 8-ին Վ.Բարսեղյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել:

2. Լուռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի մայիսի 8-ի որոշմամբ բավարարվել է քննիչի միջնորդությունը և մեղադրյալ Վ.Բարսեղյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2 ամիս ժամկետով:

3. 2012 թվականի հունիսի 25-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով երկարացնել մեղադրյալ Վ.Բարսեղյանի նկատմամբ

ընտրված խափանման միջոց կալանքի ժամկետը: Զննչի վերոնշյալ միջնորդության դեմ պաշտպանը ներկայացրել է գրավոր առարկություն՝ խնդրելով միջնորդությունը մերժել: Պաշտպանը խնդրել է նաև քննչի միջնորդությունը հիմնավոր համարելու դեպքում որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառել գրավ:

4. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 28-ի որոշմամբ քննչի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և մեղադրյալ Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 15 (տասնհինգ) օրով՝ մինչև 2012 թվականի հուլիսի 21-ը: Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու մասին պաշտպանի միջնորդությունը դատարանը մերժել է:

5. Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ դատական ակտի դեմ մեղադրյալ Վ.Բարսեղյանի պաշտպանը բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ մերժվել է, իսկ դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

6. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Վ.Բարսեղյանի պաշտպանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

7. Վահե Բարսեղյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի ապրիլի 2-ի գիշերն ապօրինի մուտք է գործել Լոռու մարզի Յաղդան գյուղում գտնվող, Համեստ Քոչարյանին պատկանող անասնագոմ և այնտեղից գաղտնի հափշտակել է խոշոր չափերով՝ 1.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ երկու գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

8. Մեղադրյալ Վ.Բարսեղյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին 2012 թվականի հունիսի 25-ի որոշման մեջ քննիչը պատճառաբանել է, որ միջնորդության անհրաժեշտությունը պայմանավորված է Վ.Բարսեղյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանով, ինչպես նաև նրանով, որ չեն վերացել նրան կալանքի տակ պահելու հիմքերը, և նա, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խոչընդոտել գործի քննությանը՝ դատավարության մասնակիցների վրա ապօրինի ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով (տե՛ս Նյութեր, թերթ 18-19):

9. Զննչի միջնորդության դեմ ներկայացված գրավոր առարկության մեջ Վ.Բարսեղյանի պաշտպանը նշել է, որ քննիչը բավարարվել է միայն կալանքի հիմքերի օրենսդրական ձևակերպումները տառացիորեն արտագրելով, և փորձ անգամ չի կատարել ներկայացնելու իր նշած ենթադրությունները հիմնավորող որևէ փաստ: Պաշտպանը հավելել է, որ Վ.Բարսեղյանը բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր, դատվածությունը մարված է, անձնագիրը գտնվում է վարույթն իրականացնող մարմնի մոտ, խնամքին են կիներ և երկու տարեկան երեխան, ընտանիքը գտնվում է սոցիալական ծանր վիճակում, նա քննությունից չի խուսափել և չի խուսափի,

առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունքներ, պատճառված վնասը վերականգնված է:

Վերոգրյալի հիման վրա պաշտպանը խնդրել է քննիչի միջնորդությունը մերժել, իսկ եթե դատարանը գտնի, որ այն հիմնավոր է՝ խնդրել է որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառել գրավ՝ 500.000 ՀՀ դրամից մինչև 1.000.000 ՀՀ դրամի չափով (տե՛ս Նյութեր, թերթ 21-26):

10. Առաջին ատյանի դատարանն իր որոշման պատճառաբանական մասում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերի ու պայմանների առկայության հարցին որևէ անդրադարձ չի կատարել, իսկ կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) նկատի ունենալով, որ գործով պետք է կատարվեն անհրաժեշտ քննչական գործողություններ, նյութերը անհրաժեշտ է տրամադրել կողմերին ծանոթացման համար, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 06.07.2012 թվականին, դատարանը գտավ, որ գրավ կիրառելու պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման, իսկ քննիչի միջնորդությունը ենթակա է բավարարման մասնակիորեն, քանի որ գործով պետք է ստացվեն փորձաքննության եզրակացությունը և հեռախոսահամարների վերծանումները» (տե՛ս Նյութեր, թերթ 28):

11. Վերաքննիչ դատարանը Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Տվյալ դեպքում ներկայացված նյութերով առկա է հիմնավոր կասկած մեղադրյալ Վահե Սերյոժայի Բարսեղյանի հնարավոր առնչակցությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, կատարված հանցավոր արարքին, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, սույն գործով կատարվելիք անհրաժեշտ քննչական գործողությունների ծավալը և ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քննությունից, որը հիմք է տալիս նրա նկատմամբ՝ որպես խափանման միջոց, կալանավորման ժամկետը երկարացնելու համար:

Վերաքննիչ քրեական դատարանը՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում թվարկված գրավի կիրառման անթույլատրելիության հիմքերն սպառիչ չեն և դատարանը համապատասխան շարժառիթների շարադրմամբ իրավունք ունի յուրաքանչյուր դեպքում մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի, գտնում է, որ մեղադրյալին կալանքից գրավով ազատելը պետք է ճանաչել անթույլատրելի:

Վերաքննիչ քրեական դատարանը ելնելով վերոգրյալից գտնում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքում նշված պատճառաբանությունները հիմք չեն կարող հանդիսանալ մեղադրյալ Վահե Սերյոժայի Բարսեղյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց, կալանավորման ժամկետը երկարացնելու մասին, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը վերացնելու և նրա նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու համար:

Վերաքննիչ քրեական դատարանը՝ հաշվի առնելով մեղադրյալ Վահե Սերյոժայի Բարսեղյանի[ն] վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, հանգում է հետևության, որ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը վերացնելու հիմքեր չկան» (տե՛ս Նյութեր, թերթ 54-55):

**3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, չեն բխում ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ, 285-րդ հոդվածների պահանջներից, ինչպես նաև չեն համապատասխանում ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

13. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ իր պաշտպանյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ նախաքննական մարմինը տառաջցիորեն արտագրել է կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումները, և ո՛չ միջնորդության մեջ, ո՛չ դրան կից չի ներկայացրել քրեական գործով ձեռք բերված որևէ ապացույց, որով միջնորդությունը քննության առնող դատարանը կկարողանար հետևության հանգել ներկայացված միջնորդության հիմնավոր լինելու մասին: Համանման կերպով, Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ նշված չէ խափանման միջոց կիրառելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

14. Բողոքաբերը փաստարկել է, որ Վ.Բարսեղյանը ոստիկանություն բերման ենթարկվելիս դիմադրություն ցույց չի տվել, փախուստի փորձ չի կատարել, տվել է խոստովանական ցուցմունքներ, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զոջացել է կատարածի համար, արարքի հետևանքով պատճառված վնասը հարթված է, Վ.Բարսեղյանի անձնագիրը գտնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ, Վ.Բարսեղյանն ունի բնակության մշտական վայր, ամուսնացած է, նրա խնամքին են գտնվում չաշխատող կինը և 2 տարեկան երեխան, ընտանիքը գտնվում է սոցիալական ծանր վիճակում, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ գործին մասնակցում է հանրային պաշտպան:

Վերոշարադրյալ հանգամանքները հիմք ընդունելով՝ բողոք բերած անձը նշել է, որ անտրամաբանական են նախաքննության մարմնի և դատարանի եզրահանգումներն այն մասին, որ Վ.Բարսեղյանը կարող է թաքնվել կամ խոչընդոտել գործի քննությանը, քննիչի կանչով չներկայանալ, անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մասնակիցների վրա, նյութեր թաքցնել կամ կեղծել: Արդյունքում բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Վ.Բարսեղյանի նկատմամբ ամենախիստ խափանման միջոցի՝ կալանավորման կիրառման հիմքեր առկա չեն եղել:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալ վերլուծությունը՝ բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն առերևույթ հակասում են Ասլան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԳ/0022/06/08 և Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշումներին:

16. Բողոքաբերը պնդել է նաև, որ իր կողմից վերաքննության կարգով բողոքաբերված որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման օրվա և ժամի մասին Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ կերպով ծանուցված չլինելու պատճառով հնարավորություն չի ունեցել մասնակցելու 2012 թվականի հուլիսի 17-ին



ժամը 13<sup>00</sup>-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում տեղի ունեցած դատական նիստին և իրականացնելու մեղադրյալ Վ.Բարսեղյանի օրինական շահերի պաշտպանություն: Բողոքաբերը հավելել է, որ իրեն հասցեագրված ծանուցագիրը հանրային պաշտպանի գրասենյակում ստացվել է դատական նիստի հաջորդ օրը՝ 2012 թվականի հուլիսի 18-ին, մինչդեռ վերաքննիչ դատարանի որոշման նկարագրական մասից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու և պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ հետևության վերաքննիչ դատարանը հանգել է՝ լսելով բողոքի կապակցությամբ պաշտպանի հիմնավորումները, դատախազի պատասխանը, քննիչի բացատրությունը:

17. Հիմք ընդունելով վերը շարադրված դատողությունները՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 28-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշումը կամ ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

*1. Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը.*

18. Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված են արդյո՞ք Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի որոշումները:

19. Անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցին վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Ավետիսյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա:

(...) կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չ[է] օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ [է] կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու

նկատմամբ: Մինևույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

(...) մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր:

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի գործում առկա մնացած, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում: Այդ առումով կարող է քննության առկա դառնալ նաև դեռևս չկատարված քննչական գործողությունների բնույթը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը» (տե՛ս Ասլան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 19-20-րդ, 22-րդ, 24-րդ, 26-րդ կետերը):

Մեկ այլ՝ Վ.Գևորգյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառնիչ է, հետևաբար՝ անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է և անօրինական: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

(...) կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

(...) քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջոցառության քննարկման արդյունքներով դատարանը՝  
ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով» (տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 18-19-րդ, 22-րդ կետերը):

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման մեջ Առաջին ատյանի դատարանը ոչ միայն չի անդրադարձել կալանավորման պայմանների և հիմքերի առկայության հարցին, այլև չի էլ վկայակոչել խափանման միջոց կիրառելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը: Փոխարենը Առաջին ատյանի դատարանը Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը պատճառաբանել է անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու, փորձաքննության եզրակացությունն ու հեռախոսահամարների վերծանումները ստանալու և նյութերը կողմերին ծանոթանալու համար տրամադրելու անհրաժեշտությամբ: Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, չի արձանագրել ստորադաս դատարանի թույլ տված խախտումները, այլ հանգել է հետևության, որ դատական ակտը վերացնելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը):

21. Սույն որոշման 19-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար *Ա.Ավետիսյանի* և *Վ.Գևորգյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն որոշման 20-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումներն օրինական և հիմնավորված չեն:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկն այն մասին, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, չեն բխում ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ, 285-րդ հոդվածների պահանջներից,

ինչպես նաև չեն համապատասխանում ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին (տե՛ս սույն որոշման 12-14-րդ կետերը):

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ իր կողմից վերաքննության կարգով բողոքարկված որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման օրվա և ժամի մասին Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ կերպով ծանուցված չլինելու պատճառով հնարավորություն չի ունեցել մասնակցելու 2012 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 13<sup>00</sup>-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում տեղի ունեցած դատական նիստին և իրականացնելու մեղադրյալ Վ.Բարսեղյանի օրինական շահերի պաշտպանություն (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերի, ինչպես նաև բողոքաբերի ներկայացրած նամակի ծրարի և առաքանիների գրքի համապատասխան էջի լուսապատճենի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Վերաքննիչ դատարանի դատական նիստի մասին պաշտպան Հ.Հովսեփյանին և Լոռու մարզի դատախազ Կ.Շահբաղյանին հասցեագրված ծանուցագրերը Հանրային պաշտպանի գրասենյակում և Լոռու մարզի դատախազությունում ստացվել են նիստի հաջորդ օրը՝ 2012 թվականի հուլիսի 18-ին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ թեև Վերաքննիչ դատարանն իր որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու և պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ հետևության է հանգել՝ լսելով բողոքի կապակցությամբ պաշտպանի հիմնավորումները, դատախազի պատասխանը, քննիչի բացատրությունը, սակայն Վերաքննիչ դատարանի դատական նիստի արձանագրությունից երևում է, որ կողմերը նիստին ներկա չեն եղել: Նշված հանգամանքը ակնհայտ է ոչ միայն հիշյալ արձանագրությունից, այլ նաև հենց դատական ակտից, որի ներածական մասի ուսումնասիրությունից երևում է, որ դատական նիստին ներկա են եղել նախագահող դատավոր Մ.Ռեհանյանը և նիստի քարտուղար Մ.Մերքոնյանը (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրման համառոտագրումը, նյութեր, թերթ 51, ինչպես նաև՝ դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, նյութեր, թերթ 53): Հետևաբար, վերոհիշյալ հարցի վերաբերյալ բողոքի հեղինակի փաստարկը ևս հիմնավոր է:

## *II. Սույն որոշման իրավական արժեքը.*

23. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 18-22-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հիշյալ դատական ակտերը եղել են ժամանակավոր, և դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը: Ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2012 թվականի օգոստոսի 31-ին կայացրել է դատավճիռ, որով Վահե Մերյոժայի Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և դատապարտվել տուգանքի 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Վ.Բարսեղյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացվել է, և նա ազատ է արձակվել դատական նիստի դահլիճում (տե՛ս Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի թիվ ԼԳ/0139/01/12 գործով դատավճիռը):

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունեն:

Հիմք ընդունելով սույն որոշման 18-22-րդ կետերում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Բարսեղյանի նկատմամբ կարող են կիրառելի լինել *Գ.Սիբայեյանի* գործով կայացված որոշմամբ երաշխավորված իրավունքները (տե՛ս *mutatis mutandis* Գագիկ Գառնիկի Սիբայեյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 34-36-րդ կետերը):

24. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Վահե Մերյոժայի Բարսեղյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

48.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0219/01/11**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ՝* Ս.ՕՀԱՆՅԱՆԻ  
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ  
*քարտուղարությամբ՝* Կ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Վլադիմիրի Հակոբյանի և Արսեն Գևորգի Խոջայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Խոջայանի պաշտպան Գարիկ Մալխասյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2012 թվականի ապրիլի 14-ի դատավճռով Արթուր Վլադիմիրի Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Ա.Հակոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Ա.Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի ժամկետով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի հիման վրա՝ Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է նախորդ՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունիսի 8-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից 6 ամիս ժամկետով ազատազրկումը և Ա.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 տարի 6 ամիս ժամկետով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

Նույն դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Արսեն Գևորգի Խոջայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Ա.Խոջայանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, իսկ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկման 4 տարի 6 ամիս ժամկետով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Ա.Խոջայանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5 տարի ժամկետով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

Դատավճռով որոշվել է ամբաստանյալներ Ա.Հակոբյանից և Ա.Խոջայանից համապարտությամբ բռնագանձել 780.000 ՀՀ դրամ հօգուտ «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության՝ որպես հանցագործությանը պատճառված վնասի հատուցում (տե՛ս Քրեական գործ, հատոր 8, թերթեր 267-272):

2. Վերոնշյալ դատավճռի դեմ ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը բերել են վերաքննիչ բողոքներ (տե՛ս Քրեական գործ, հատոր 9, թերթեր 2-4, 6-8):

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 4-ին որոշում է կայացրել ամբաստանյալների բողոքները մասնակիորեն բավարարելու, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին (տե՛ս Քրեական գործ, հատոր 9, թերթեր 31-42):

3. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Խոջայանի պաշտպան Գ.Մալխասյանը բերել է վճարելի բողոք, որը վճարելի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

4. Ա.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նախկինում հափշտակություններ կատարելու համար երկու և ավելի դատվածություն ունենալով, դատվածությունը չմարված, հափշտակություններ կատարելու դիտավորությամբ՝ քաղաքացիների գույքը՝ հատկապես գումար, բջջային հեռախոսներ, զարդեր հափշտակելու և դրանք նմանատիպ իրերի առք ու վաճառքի կետերում իրացնելու, իսկ ստացված գումարը անձնական կարիքների համար ծախսելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Արսեն Գևորգի Խոջայանի հետ, ստեղծել են միավորված, կայուն, կազմակերպված հանցավոր խումբ և կատարելով դերաբաշխում՝ 2010

թվականի հունիս ամսից մինչև 2011 թվականի ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գործող գեղեցկության սրահներից և դեղատներից կատարել են մի շարք գաղտնի հափշտակություններ:

5. Ա.Խոջայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հափշտակություններ կատարելու դիտավորությամբ՝ քաղաքացիների գույքը՝ հատկապես գումար, բջջային հեռախոսներ, զարդեր հափշտակելու և դրանք նմանատիպ իրերի առք ու վաճառքի կետերում իրացնելու, իսկ ստացված գումարը անձնական կարիքների համար ծախսելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով Արթուր Վլադիմիրի Հակոբյանի հետ, ստեղծել են միավորված, կայուն, կազմակերպված հանցավոր խումբ և կատարելով դերաբաշխում՝ 2010 թվականի հունիս ամսից մինչև 2011 թվականի ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գործող գեղեցկության սրահներից և դեղատներից կատարել են մի շարք գաղտնի հափշտակություններ:

Առաջադրված մեղադրանքների համաձայն՝ Ա.Հակոբյանին և Ա.Խոջայանին մեղսագրվող արարքների հետևանքով «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերությանը պատճառվել է 29.500 ՀՀ դրամի և 746.500 ՀՀ դրամի գույքային վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 317-319):

6. Առաջին ատյանի դատարանում ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը, հայտարարելով առաջադրված մեղադրանքների հետ համաձայն լինելու մասին, խնդրել են արագացված դատական քննության կարգ կիրառել, ինչի դեմ մեղադրողը չի առարկել և Առաջին ատյանի դատարանը որոշել է դատական քննության արագացված կարգ կիրառել: Դատական նիստում գործը քննող դատավորը հայտարարել է նաև, որ ստացվել է տուժող «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ ամբաստանյալների՝ 860.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը հատուցելու պահանջով: Այնուհետև, ամբաստանյալներին պարզաբանելով քաղաքացիական պատասխանողների իրավունքները՝ գործը քննող դատավորը նրանց հարցրել է, թե արդյո՞ք ընդունում են հարուցված քաղաքացիական հայցը: Ամբաստանյալները պատասխանել են, որ համաձայն չեն հայցապահանջի հետ՝ չափը շատ լինելու պատճառով, ինչից հետո դատավորը հայտարարել է, որ ներկայացված քաղաքացիական հայցին կանդիդատնա, երբ դատական ակտ կայացնելու համար հեռանա խորհրդակցական սենյակ (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրման համառոտագրումը, քրեական գործի 8-րդ հատոր, թերթ 258, ինչպես նաև՝ դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործի 8-րդ հատոր, թերթ 265):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռով որոշվել է ամբաստանյալներ Ա.Հակոբյանից և Ա.Խոջայանից համապարտությամբ հոգուտ «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության բռնագանձել 780.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում: Դատարանը գտել է, որ հայցը «պետք է բավարարվի մասնակիորեն և ամբաստանյալներից հոգուտ «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության պետք է բռնագանձվի 780.000 (յոթ հարյուր ութսուն հազար) դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, նկատի ունենալով, որ հայցապահանջում նշված՝ ցուցապահարանի ապակին ջարդելու հետևանքով 80.000 դրամի չափով պատճառված վնասի պահանջը քննության է ենթակա քաղաքացիական դատավարության կարգով՝ նշված վնասն անմիջականորեն ամբաստանյալներին մեղսագրվող արարքների կատարման արդյունքում պատճառված չլինելու հիմքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթ 267-272):



8. Վերաքննիչ դատարանի որոշման նկարագրական-պատճառաբանական մասում առկա է հետևյալ ձևակերպումը. «Սույն քրեական գործով ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը մինչև դատաքննությունը սկսվելը հայտարարել են առաջադրված մեղադրանքների վերաբերյալ իրենց մեղավորության մասին և պաշտպանի հետ օրենքով սահմանված կարգով խորհրդակցելուց հետո կամովին հանդես են եկել դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությամբ:

Գատարանը, ընդունելով, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը առաջադրված մեղադրանքներում իրենց մեղավոր են ճանաչում, այսինքն՝ համաձայն են իրենց առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ, այդ թվում հանցագործությանը պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության, բավարարել է վերջիններիս միջնորդությունը:

Սակայն (...) քաղաքացիական հայցվոր «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերությանը պատճառված 860.000 /ութ հարյուր վաթսուց հազար/ ՀՀ դրամ գույքային վնասի չափի և դրա հատուցման հետ կապված հարցերի (քաղաքացիական հայցի) քննության փուլում ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը հայտարարել են, որ տուժողներից «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերությանը պատճառված գույքային վնասի չափի հետ համաձայն չեն, առարկում են վերջինիս կողմից հարուցված 860.000 ՀՀ դրամի չափով քաղաքացիական հայցի դեմ այն պատճառաբանությամբ, որ չափը շատ է:

Առաջին ատյանի դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ ամբաստանյալների մեղավորությունը իր մեջ ներառում է նաև հանցագործությամբ անմիջապես պատճառված վնասը (քաղաքացիական հայցը) և չպահպանելով դատական քննության արագացված կարգի կիրառումը կանոնակարգող իրավանորմերի պահանջները դատական քննությունը ընդհանուր կարգով անցկացնելու մասին որոշում չի կայացրել և դատական քննության արագացված կարգի կիրառմամբ շարունակել է «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության կողմից հարուցված քաղաքացիական հայցի քննությունը, որի արդյունքում ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Խոջայանի կողմից «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության կողմից հարուցված քաղաքացիական հայցը չընդունելու պայմաններում քրեական դատավարության նորմերի խախտմամբ, մասնակիորեն՝ 780.000 /յոթ հարյուր ութսուց հազար/ ՀՀ դրամի չափով բավարարել է «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության կողմից հարուցված քաղաքացիական հայցի հարցը: Այսինքն՝ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված և սույն որոշմամբ թվարկված պայմաններից մեկը, այն է՝ «Ամբաստանյալը կամ մեղադրյալն իր միջնորդության մեջ հայտարարել է առաջադրված մեղադրանքի հետ համաձայն լինելու և արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին»:

Վերոգրյալ իրավական դրույթների[ց] (...) հետևում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից անտեսվել են քննության արագացված կարգի պահպանման պայմանները, միջնորդություններ ներկայացնելու և արագացված կարգով դատաքննություն անցկացնելու կարգը սահմանած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>, 375<sup>2</sup>, 375<sup>3</sup>-րդ հոդվածների պահանջները» (տես Քրեական գործ, հատոր 9, թերթեր 31-42):

Գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք հիմք են դատավճիռը բեկանելու համար՝ Վերաքննիչ դատարանը որոշել է դատական ակտը բեկանել և գործն ուղարկել

նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, այն է՝ «Սույն գործի քննությունը իրականացնել ընդհանուր կարգով՝ ամբողջ ծավալով և քրեադատավարական նորմերի պահանջներին համապատասխան լուծել «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության կողմից հարուցված քաղաքացիական հայցի հարցը»:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է նաև հետևյալը.

«Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից բարձացված նյութական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկներին, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն գործով առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական խախտումները վերացնելուց հետո»:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից, խախտել է դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու պահանջը, անհիմն սահմանափակել է ամբաստանյալների իրավունքները:

10. Ի հիմնավորումն ասվածի՝ բողոք բերած անձը նշել է, որ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Խոջայանի վերաքննիչ բողոքները վերաբերել են նշանակված լրացուցիչ պատժին, համաներման ակտի կիրառման սահմանափակումներին, ռեցիդիվի սխալ գնահատմանը և քաղաքացիական հայցը չընդունելու դեպքում՝ դրա բավարարման իրավաչափությանը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով բողոքներում բարձրացված հարցերին, առաջ է քաշել Առաջին ատյանի դատարանի կողմից քաղաքացիական հայցը մասնակի կամ ամբողջությամբ բավարարելու հարցը, որի վերաբերյալ վերաքննիչ բողոք ներկայացված չի եղել:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ մեղադրական եզրակացության մեջ նշված՝ հանցագործությանը անմիջականորեն պատճառված գույքային վնասի չափը գերազանցող քաղաքացիական հայցի հետ ամբաստանյալների անհամաձայնությունը Վերաքննիչ դատարանը մեկնաբանել է որպես առաջադրված մեղադրանքի հետ անհամաձայնություն և դրա հիման վրա արագացված դատական քննություն չի կիրառել:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքների սահմաններից, իրականացրել է մեղադրանքի կողմի գործառույթ, իսկ օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանազանցմամբ որոշում կայացնելով՝ չի գործել որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը կամ ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ

կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով՝ ամբաստանյալի կողմից քաղաքացիական հայցը չընդունելու դեպքում դատարանի կողմից դատական քննության արագացված կարգ իրականացնելու հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այդ առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի կողմից քննության առնվող իրավական հարցը հետևյալն է. իրավասո՞ւ էր արդյոք Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգ կիրառել այն դեպքում, երբ ամբաստանյալները համաձայն չէին ներկայացված քաղաքացիական հայցի չափի հետ:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

«Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

«Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը:

Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը քաղաքացիական հայցը

թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը»:

16. Արագացված դատական քննություն կիրառելու հիմքերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքն ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալի հետ համաձայնվելն է: Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ»:

Վճռաբեկ դատարանը վերոհիշյալ որոշման մեջ ամրագրել է, որ «(...) դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու հիմք են՝

- 1) մեղադրողի համաձայնության բացակայությունը,
- 2) առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի մասնակի համաձայնությունը,
- 3) ամբաստանյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցագործության՝ առանձնապես ծանր լինելը,
- 4) ամբաստանյալի կամ մեղադրյալի կողմից միջնորդությունը ներկայացվել է ճնշման տակ, այսինքն՝ հարկադրաբար,
- 5) ամբաստանյալը կամ մեղադրյալը չի գիտակցում ներկայացված միջնորդության բնույթն ու հետևանքները»:

Վճռաբեկ դատարանը հիշյալ որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել, որ եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված պայմաններից որևէ մեկը չի պահպանվել, ապա դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին (տե՛ս Շողակաթ Ամիրխանյանի և Գառնիկ Ֆարմանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի ԵԿԳ-0209/01/10 որոշման 22-րդ, 26-27-րդ կետերը):

17. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում առկա եզրահանգումը, ինչպես նաև զարգացնելով *Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով ներկայացված քաղաքացիական հայցի առարկայի ծավալի մեջ ներառված գույքային վնասը համընկնում է մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ, ներկայացված քաղաքացիական հայցն ամբաստանյալի կողմից լրիվ կամ մասնակի չընդունելը նշանակում է, որ նա լրիվ կամ մասնակի համաձայն չէ իրեն առաջադրված մեղադրանքի հետ: Հետևաբար, նման դեպքերում դատարանը ամբաստանյալի կողմից հայցի հետ չհամաձայնվելը պետք է գնահատի որպես առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի լրիվ կամ մասնակի անհամաձայնություն և դրա հիման վրա մերժի դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ արագացված կարգով դատական քննության ժամանակ դատարանը պարզում է, որ ամբաստանյալը համաձայն չէ պատճառված վնասի բնույթի և չափի

վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ՝ դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը որոշել է դատական քննության արագացված կարգ կիրառել: Դատական նիստում գործը քննող դատավորը հայտարարել է, որ ստացվել է տուժողի հայցը՝ 860.000 ՀՀ դրամի չափով, այնուհետև, ամբաստանյալներին պարզաբանելով քաղաքացիական պատասխանողների իրավունքները՝ գործը քննող դատավորը նրանց հարցրել է, թե արդյոք ընդունում են հարուցված քաղաքացիական հայցը: Ամբաստանյալները պատասխանել են, որ համաձայն չեն հայցապահանջի հետ՝ չափը շատ լինելու պատճառով, ինչից հետո դատավորը հայտարարել է, որ ներկայացված քաղաքացիական հայցին կանդիդատնա, երբ դատական ակտ կայացնելու համար հեռանա խորհրդակցական սենյակ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանի դատավճռով որոշվել է տուժողի կողմից ներկայացված հայցը բավարարել մասնակիորեն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, որոշել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Այսպիսով ակնհայտն է, որ արագացված կարգով դատական քննության ժամանակ ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը հայտարարել են, որ «Ալֆա-Ֆարմ» ՓԲ ընկերության հարուցած քաղաքացիական հայցը չեն ընդունում՝ չափի հետ համաձայն չլինելու պատճառաբանությամբ: Այդ պայմաններում Առաջին ատյանի դատարանը չի պարզել, թե կոնկրետ որ չափն են ամբաստանյալները համարում անընդունելի, և արդյո՞ք պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ համաձայն չեն: Մինչդեռ այդ հանգամանքը պարզելով միայն Առաջին ատյանի դատարանը կարող էր հետևություն անել արագացված դատական քննությունը շարունակելու կամ ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու անհրաժեշտության մասին:

Տվյալ պարագայում, Առաջին ատյանի դատարանը իրավասու էր շարունակել արագացված դատական քննությունը և դատական ակտով լուծել նաև հարուցված քաղաքացիական հայցի հարցը միայն այն բանից հետո, երբ կպարզեր, որ ամբաստանյալներն ընդունում են պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրությունը, այսինքն՝ իրենց լիովին մեղավոր են ճանաչում առաջադրված մեղադրանքում: Իսկ մեղադրական եզրակացության մեջ մատնանշված վնասի չափը գերազանցող մասով դատարանը պետք է հայցը թողներ առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, առանց պարզելու, թե հարուցված հայցի պայմաններում արդյո՞ք ամբաստանյալները շարունակում են ընդունել իրենց առաջադրված մեղադրանքն ամբողջ ծավալով, այդ թվում պատճառված վնասի չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության մասով, քաղաքացիական հայցը չընդունելու մասին ամբաստանյալների կողմից արված հայտարարության պայմաններում, խախտելով քրեադատավարական օրենքի պահանջը, շարունակել է գործի քննությունը արագացված կարգով:

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները մեկնաբանելով սույն որոշման 15-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի հետևություններն Առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննության արագացված կարգի պայմանները խախտելու մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատական քննության արագացված կարգ կիրառել այն դեպքում, երբ ամբաստանյալները համաձայն չէին մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ համընկնող քաղաքացիական հայցի չափի հետ:

20. Սույն որոշման 15-19-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են բողոքաբերի պնդումներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքների սահմաններից և իրականացրել է մեղադրանքի կողմի գործառույթ, իսկ օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանազանցմամբ որոշում կայացնելով՝ չի գործել որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան (տե՛ս սույն որոշման 9-11-րդ կետերը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ իրավացիորեն նշել է, որ բողոքաբերների կողմից բարձրացված նյութական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկներին հնարավոր է անդրադառնալ միայն սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական խախտումները վերացնելուց հետո:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, իսկ հիշյալ դատական ակտը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Արթուր Վլադիմիրի Հակոբյանի և Արսեն Գևորգի Խոջայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*  
Դատավորներ՝ *ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ԵԿԴ/0219/01/11**

*Դատավոր՝* Հ.Ասատրյան

2012 թվականի նոյեմբերի 1-ին

ք.Երևանում

Ծանոթանալով Արթուր Վլադիմիրի Հակոբյանի և Արսեն Գևորգի Խոջայանի վերաբերյալ գործի նյութերին և Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի որոշմանը՝ սույն հատուկ կարծիքով հայտնում եմ իմ անհամաձայնությունը հիշյալ որոշման ինչպես եզրափակիչ մասի, այնպես էլ պատճառաբանական մասում առկա որոշ եզրահանգումների հետ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը վերաքննության կարգով բողոքարկել են միայն ամբաստանյալներ Ա.Հակոբյանը և Ա.Խոջայանը: Ընդ որում, ամբաստանյալներն իրենց վերաքննիչ բողոքներում Վերաքննիչ դատարանի առջև բարձրացրել են հետևյալ հարցերը.

- քաղաքացիական հայրը քննության առնելով և բավարարելով Առաջին ատյանի դատարանը չի խախտե՞լ արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները,

- իրենց նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ գույքի բռնագրավում նշանակելով Առաջին ատյանի դատարանը չի խախտե՞լ արդյոք պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները,

- իրենց նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը չկիրառելով Առաջին ատյանի դատարանն թույլ չի տվե՞լ արդյոք նյութական իրավունքի խախտում:

Ա.Հակոբյանը, ի լրումն նշվածի, իր վերաքննիչ բողոքում բարձրացրել է նաև այն հարցը, թե իր պարագայում, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության փաստն արձանագրելով, Առաջին ատյանի դատարանը սխալ չի մեկնաբանե՞լ արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի դրույթները և չի խախտե՞լ արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի այն պահանջը, որ անձի վիճակը բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի:

Ամբաստանյալների վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 4-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու մասին՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 14-ի դատավճիռը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում ըստ էության արձանագրել է, որ

ա) Առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375<sup>1</sup>-րդ, 375<sup>2</sup>-րդ և 375<sup>3</sup>-րդ հոդվածների պահանջների անտեսմամբ,

բ) Առաջին ատյանի դատարանը չի պահպանել քաղաքացիական հայցի հարուցման և լուծման կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ դրույթների պահանջները, քանի որ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական հայցվոր չի ճանաչվել, ներկայացված քաղաքացիական հայցը պատասխանողներին չի տրամադրվել:

Վերոգրյալ խախտումները դիտարկելով որպես քրեադատավարական օրենքի էական խախտումներ՝ Վերաքննիչ դատարանը որոշել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով, որ նոր քննությունը պետք է իրականացվի ընդհանուր կարգով:

Վճռարեկ դատարանի որոշմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ, պաշտպանի բողոքն ամբողջությամբ մերժվել է:

Համաձայնվելով Վերաքննիչ դատարանի այն հետևության հետ, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը քաղաքացիական հայցի հարցը լուծելիս չի պահպանել քրեադատավարական օրենքի պահանջները՝ չեն ցանկանում այն մանրամասնել, քանի որ Վերաքննիչ դատարանի այդ հետևությունը դատական ակտում պատշաճ կերպով հիմնավորված է:

Ընդհանուր առմամբ համաձայն են մաս Վճռարեկ դատարանի որոշման 17-րդ կետում շարադրված այն դիրքորոշմանը, որ այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, երբ ներկայացված քաղաքացիական հայցի առարկայի ծավալի մեջ ներառված գույքային վնասը համընկնում է մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ, ներկայացված քաղաքացիական հայցն ամբաստանյալի կողմից լրիվ կամ մասնակի չընդունելու դեպքում դատարանը չպետք է կիրառի դատական քննության արագացված կարգ:

Այդուհանդերձ, համաձայն չեն մրա հետ, որ Առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ կատարված լինելու հարցը Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա է դարձրել, ինչպես մաս համաձայն չեն այն կատեգորիկ հետևության հետ, որին դրա արդյունքում հանգել է Վերաքննիչ դատարանը, այն է՝ Առաջին ատյանի դատարանը սույն գործով իրավասու չէր դատական քննության արագացված կարգ կիրառել և քննությունը պետք է անցկացնել ընդհանուր կարգով:

Վճռարեկ դատարանն իր որոշման 19-րդ կետում նույնպիսի դիրքորոշում է հայտնել, որի հետ համաձայն չեն:

Ասվածը կփորձեն հիմնավորել հետևյալով.

Նախ, գործի նյութերից երևում է, որ տուժողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցի և ամբաստանյալների կողմից հափշտակությամբ անմիջականորեն պատճառված վնասի միջև առկա է գումարային տարբերություն (շուրջ 80.000 ՀՀ դրամի չափով): Այդ պայմաններում, երբ պարզաբանված չէ, թե Առաջին ատյանի դատարանում հայցի չափի հետ ամբաստանյալների անհամաձայնությունը պայմանավորված է եղել նշված տարբերությամբ, թե՛ վերջինները չեն ընդունել մաս գողացված իրերի հատուցմանն ուղղված 780.000 ՀՀ դրամի չափով քաղաքացիական հայցը, կարծում են, Վերաքննիչ դատարանը չէր կարող կատեգորիկ կերպով արձանագրել, որ Առաջին



ատյանի դատարանն իրավասու չէր կիրառել դատական քննության արագացված կարգ, և որ գործի նոր քննությունը պետք է անցկացվի ընդհանուր կարգով:

Բացի այդ, գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկել էին միայն ամբաստանյալները՝ վերը թվարկված հիմքերով: Այդ պայմաններում Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկելով նոր քննության՝ դատական քննության ընդհանուր կարգով, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քանի որ Առաջին ատյանի դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների խախտմամբ կատարված լինելու հարցը վերաքննիչ բողոքներում չի բարձրացվել: Կարծում եմ, որ Վերաքննիչ դատարանը դրանով վատթարացրել է ամբաստանյալների վիճակը, քանի որ ակնհայտ է, որ արագացված դատական քննության կարգով գործի քննությունը անձի համար պատժի նշանակման հարցում ավելի բարենպաստ է: Արդյունքում, պաշտպանության կողմի բողոքի հիման վրա քննելով գործը՝ Վերաքննիչ դատարանը, ին կարծիքով, վատթարացրել է ամբաստանյալների վիճակը, ինչը չի բխում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները Վերաքննիչ դատարանի կողմից չպահպանելու վերաբերյալ իմ կարծիքը հիմնված է Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10 որոշմամբ արտահայտված այն դիրքորոշման վրա, որ « (...) Այս իրավանդումից [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մաս], inter alia, բխում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում:

Նպատակային մեկնաբանման ենթարկելով դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պարունակում է դատավարության մասնակցին տրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորումները պարունակում են էական փաստարկումներ, որոնք վերաքննիչ բողոքում ներկայացված չեն: Ուստի Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը (տե՛ս Վլադիմիր Տոնոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10 որոշման 11-րդ, 13-րդ կետերը):

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361<sup>1</sup>-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, գտնում եմ, որ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Խոջայանի պաշտպան Գ.Մախասյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարվեր՝ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հուլիսի 4-ի որոշումը պետք է բեկանվեր և գործն ուղարկվեր նոր քննության՝ միայն քաղաքացիական հայցի մասով:

*Դատավոր՝ ստորագրություն*

49.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԼԳ/0093/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՄԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արսեն Կարենի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության Լոռու կայագործի զինվորական դատախազ Թ.Միրզաբեկյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2012 թվականի հունվարի 23-ին ՀՀ ՊՆ ՔԾ յոթերորդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90450412 քրեական գործը:

2012 թվականի ապրիլի 4-ին Արսեն Կարենի Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով:

2012 թվականի մայիսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանն դատական քննության արագացված կարգի կիրառմամբ 2012 թվականի հունիսի 21-ի դատավճռով ամբաստանյալ Արսեն Սկրտչյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել է ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել ամբաստանյալ Արսեն Սկրտչյանը և պաշտպան Նաիրա Պետրոսյանը՝ խնդրելով դատավճիռը բեկանել, փոփոխել և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոքը. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 21-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է, Արսեն Սկրտչյանի նկատմամբ նշանակված 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազության Լուռու կայագրի զինվորական դատախազ Թ.Միրզաբեկյանը վճարելի բողոք է ներկայացրել, որը Վճարելի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

8. Արսեն Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ ՊՆ 63853 գործառնախ 3-րդ ՀԳ-ի 9-րդ ՀՎ-ի 3-րդ դասակի 3-րդ ջոկի գնդացրորդ, կոչումով շարքային, 2012 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 09.<sup>00</sup>-ից, ընգրկված լինելով գործառնախ պահակային ծառայության վերակարգում որպես 1-ին պահակախմբի 3-րդ պահակակետի 2-րդ հերթափոխի ժամապահ, նույն օրը՝ ժամը 09.<sup>15</sup>-ի սահմաններում, առանց համապատասխան թույլտվության, ինքնազուխ թողել է իր պահակակետը և գնացել 2-րդ պահակակետի տարածք, մոտեցել ԳԱՁ 33081 մակնիշի ՊՆ 7082 Շ ավտոմեքենայի մոտ կանգնած 3-րդ ՀԳ-Ի 7-րդ ՀՎ-ի 3-րդ դասակի վարորդ, շարքային Արմեն Վաչագանի Բարսեղյանին, զրույցի բռնվել նրա հետ և երբ շարքային Ա.Բարսեղյանը ոտքը դրել է ավտոմեքենայի ոտնահենակին ու ցանկացել է բարձրանալ ավտոմեքենայի խցիկը, կատակելով, վախեցնելու նպատակով, ենթադրել, որ ինքնաձիգի վրա ամրացված է դատարկ փամփշտատուփ, խախտել է զենքի հետ վարվելու կանոններն ու ծառայությունն իրականացնելու համար իրեն ամրակցված ու իր մոտ գտնվող ԱԿ-74 տեսակի 105948 համարի ինքնաձիգով կատարել է լիցքավորման գործողություն, սեղմել ձգանն ու կրակել նրա ուղղությամբ՝ վերջինիս անգոյություն ստեղծելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 210):

9. ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 63853 գործառնախ հրամանատարը դեպի կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 2012 թվականի հունվարի 23-ին արձակել է թիվ 57 հրամանը, որով հանձնարարել է՝ «(...) մարմնական վնասվածք հասցնելու պատճառները պարզելու համար, կարգապահությունը բարձրացնելու և նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով անցկացնել ծառայողական քննություն և արդյունքները եզրակացության տեսքով ներկայացնել ինձ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 92):

ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 63853 գործառնախի հրամանատարի 2012 թվականի հունվարի 23-ի մեկ այլ թիվ 58 հրամանի համաձայն՝ «ՀՀ ՊՆ 63853 գործառնախի 3-րդ ՀԳ-ի 9-րդ ՀՎ-ի 3-րդ ՀԴ-ի 3-րդ ՀՋ-ի գնդացրորդ՝ շարքային Արսեն Կարենի Սկրտչյանը 2012 թվականի հունվարի 23-ին, ընդգրկված լինելով պահակային ծառայության մեջ, անգույշ է վարվել զենքի հետ՝ մարմնական վնասվածք հասցնելով 3-րդ ՀԳ-ի 7-րդ ՀՎ-ի 3-րդ ՀԴ-ի վարորդ՝ շարքային Արմեն Վաչագանի Բարսեղյանին: Մարմնական վնասվածք հասցնելու համար, կարգապահությունը բարձրացնելու և նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով հրամայում են՝

1. Հայտարարել «Կալանք-10 օր».

1) 3-րդ ՀԳ-ի 9-րդ ՀՎ-ի 3-րդ ՀԴ-ի 3-րդ ՀՋ-ի գնդացրորդ՝ շարքային Արսեն Կարենի Սկրտչյանին:

2. Հրամանի կատարման հսկողությունը ստանձնել գործառնախի շտաբի պետին:

3. Հրամանը հասցնել անձնակազմին իրենց վերաբերող մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 93):

10. 2012 թվականի ապրիլի 19-ին շարքային Արմեն Բարսեղյանը Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է ոչ պիտանի զինծառայությանը խաղաղ ժամանակ և պիտանի շարային ծառայությանը պատերազմի ժամանակ ու գործարկվել է պահեստագոր (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 264):

11. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու: (ՀՀ Վճռաբեկ դատարանի Հովհաննես Արտաշեսի Սահակյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԵՔԲԳ/0571/01/08 որոշում: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման օրենսդրական պայմանները ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել և այդ խնդրի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև Հազարապետ Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Սուսաննա Ներսիսյանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 12-ի թիվ ՎԲ 124/07, Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07, Գագիկ Ազատյանի վերաբերյալ քրեական գործով 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-195/07, Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ-2/0059/01/08, Դավիթ Հովհաննիսյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԳ/0078/01/09 և այլ որոշումներում):

(...)

Արսեն Սկրտչյանը գոջացել է կատարած արարքի համար, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական, տուժողը և ամբաստանյալը հաշտվել են և տուժող կողմը ամբաստանյալից որևէ պահանջ չի ներկայացրել, իսկ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ սույն գործով բացակայում են:

(...)

Վերաքննիչ բողոքին կցված «Շենավանի բժշկական ամբուլատորիա» ՓԲ ընկերության տեղեկանքների համաձայն՝ Արսեն Սկրտչյանի ծնողները՝ Կարեն և Արմինե

Սկրտչյանները, վատառողջ են: Վերաքննիչ դատարանն արձանագրում և որպես Արսեն Սկրտչյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում խնամքին վատառողջ ծնողների առկայությունը: Բացի այդ, վերաքննիչ դատարանը հաշվի է առնում, որ տուժող Արմեն Բարսեղյանը հաշտվել է Արսեն Սկրտչյանի հետ, տուժողը որևէ պահանջ չի ներկայացրել և չի առարկել վերաքննիչ բողոքի դեմ, ինչպես նաև այն, որ Արսեն Սկրտչյանն ավարտել է ծառայությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 103-104):

### **Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելով, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ և 397-րդ հոդվածների, ինչպես նաև Վճարելի դատարանի թիվ ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09 որոշումների պահանջները, խաթարել պատժի նպատակները, խախտել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը չափազանց մեղմ է, չի համապատասխանում հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանին և բնույթին, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներին, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներին: Հետևաբար, բողոք բերած անձը խնդրել է քեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 21-ի դատավճռին:

### **Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

13. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքը Վճարելի դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանա-

կանոններն չկիրառելու մասին որոշում կայացնելիս հաշվի առն<sup>6</sup> է արդյոք վերջինիս կողմից թույլ տրված՝ զեմքի հետ վարվելու կանոնների խախտման բնույթը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում զեմքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու համար, որը մարդու առողջությանն անգոյություն բերող պատճառով է ծանր վնաս կամ առաջացրել է ռազմական տեխնիկայի ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ մարդու առողջությանը ծանր կամ այլ վնաս պատճառելու, ռազմական տեխնիկայի ոչնչացման կամ այլ ծանր հետևանքների առաջացման նկատմամբ հանցավորը դրսևորում է անգոյություն: Արարքի հետևանքների նկատմամբ դրսևորված անգոյությունը մեղքի ձևին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Է.Ասատրյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) հանրոքեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անգոյությունը մեղքի (...) տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցավոր անփութության դեպքում անձը չի նախատեսում իր արարքի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորությունը, հետևաբար չի գիտակցում նաև իր կողմից տվյալ իրադրությունում թույլ տրված խախտման վտանգավորությունը: Մինչդեռ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը գիտակցում է, որ իր կողմից թույլ տրված խախտման արդյունքում կարող են վտանգավոր հետևանքներ առաջանալ, այսինքն՝ նա գիտակցում է իր արարքի վտանգավորությունը և, չնայած դրան՝ թույլ է տալիս նշված խախտումը, ինչը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին» (տե՛ս Էդմոն Գարսիսի Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 17-րդ կետը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում և համապատասխանաբար նաև *Է.Ասատրյանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանրոքեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անգոյությունը մեղքի տարատեսակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Հետևաբար, նշված հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել զեմքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվեցողության կանոնների խախտման, ինչպես նաև դրա արդյունքում առաջացած հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Դ.Հովհաննիսյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ (իրական) պատիժ կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

(...)

Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: (...) Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը: (...)» (տե՛ս Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0078/01/09 որոշման 11-12-րդ կետերը):

18. Սույն որոշման 16-րդ կետում շարադրված եզրահանգումը մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորված անգոյշ մեղքի տեսակը, ինչպես նաև նշված հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը, քանի որ առանց նշված հանգամանքների գնահատման հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձի և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին:

19. ՀՀ զինված ուժերի կայագորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 91-րդ հոդվածի համաձայն՝ «Պահակային ծառայության կատարումը համարվում է մարտական առաջադրանք և անձնակազմից պահանջվում է ճշտորեն պահպանել սույն Կանոնագրքի բոլոր դրույթները, ցուցաբերել բարձր զգոնություն, աննկուն վճռականություն և նախաձեռնություն: (...)»:

Կանոնագրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ «Օբյեկտների անմիջական պահպանման և պաշտպանության համար պահակախմբի կազմից նշանակվում են ժամապահներ:

Ժամապահ է կոչվում զինված պահակը, որը կատարում է իրեն հանձնարարված պահակակետը պահպանելու ու պաշտպանելու մարտական առաջադրանք: (...)»:

Կանոնագրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամապահը **պարտավոր է՝**

- աչալոջորեն պահպանել և պաշտպանել իր պահակակետը.

- ծառայությունը կատարել առույգ, ոչնչով չհրապուրվել, ձեռքից բաց չթողնել և ոչ մեկին չտալ զենքը, անգամ այն անձանց, որոնց ինքը ենթակա է.

(...)

- նույնիսկ իր կյանքին վտանգ սպառնալու դեպքում պահակակետը չլքել, քանի դեռ չի հերթափոխվել կամ հանվել (...):»

Կանոնագրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամապահին **արգելվում է՝** (...) փամփուշտն անհարկի մտցնել փամփշտանոց (...):»

Կանոնագրքի 186-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամապահը **պարտավոր է** առանց նախազուտացնելու զենք կիրառել իր կամ իր պահպանած օբյեկտի վրա բացահայտ հարձակման դեպքում»:

Մեջբերված կանոնագրքային դրույթների վերլուծությունից երևում է, որ դրանք սահմանում են պահակային ծառայություն իրականացնող ժամապահի պարտականությունները, որոնց թվում են նաև զենքի հետ վարվեցողության կանոնները:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Սկրտչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ընդերկված լինելով գործնասի պահակային ծառայության վերակարգում, որպես 1-ին պահակախմբի 3-րդ պահակակետի 2-րդ հերթափոխի ժամապահ, առանց համապատասխան թույլտվության, ինքնազուխ թողել է իր պահակակետը և գնացել 2-րդ պահակակետի տարածք, մոտեցել շարքային Արմեն Վաչագանի Բարսեղյանին, գրույցի բռնվել նրա հետ և կատակելով, վախեցնելու նպատակով, ենթադրել, որ ինքնաձիգի վրա ամրացված է դատարկ փամփշտատուփ, խախտել է զենքի հետ վարվելու կանոններն ու ծառայությունն իրականացնելու համար իրեն ամրակցված ու իր մոտ գտնվող ինքնաձիգով կատարել է լիցքավորման գործողություն, սեղմել ձգանն ու կրակել Ա.Բարսեղյանի ուղղությամբ՝ վերջինիս անզուտությամբ պատճառելով առողջության ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): 2012 թվականի ապրիլի 19-ին շարքային Արմեն Բարսեղյանը Կենտրոնական ռազմաթշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է ոչ պիտանի զինծառայությանը խաղաղ ժամանակ և պիտանի շարային ծառայությանը պատերազմի ժամանակ ու գորացրվել է պահեստագոր (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Ա.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ իր որոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նրանով, որ Արսեն Սկրտչյանը զոջացել է կատարած արարքի համար, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, նախկինում դատված չէ, բնութագրվում է դրական, տուժողը և ամբաստանյալը հաշտվել են, և տուժող կողմը ամբաստանյալին որևէ պահանջ չի ներկայացրել, իսկ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ սույն գործով բացակայում են: Որպես Ա.Սկրտչյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք Վերաքննիչ դատարանը դիտել է նրա խնամքին վատառողջ ծնողների առկայությունը, ինչպես նաև այն, որ տուժող Ա.Բարսեղյանը հաշտվել է ամբաստանյալ Ա.Սկրտչյանի հետ, տուժողը որևէ պահանջ չի ներկայացրել և չի առարկել վերաքննիչ բողոքի դեմ, ինչպես նաև այն, որ Արսեն Սկրտչյանն ավարտել է ծառայությունը» (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

21. Սույն որոշման 20-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝



Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս անտեսել է այն հանգամանքը, որ ամբաստանյալ Ա.Սկրտչյանը կոպիտ կերպով խախտել է ՀՀ զինված ուժերի կայագորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի մի շարք պահանջներ, որոնք վերաբերում են ժամապահի պարտականություններին, փամփշտանոց անհարկի փամփուշտ մտցնելուն, զենքը մարդկանց վրա պահելուն, զենքով կատակ անելուն և այլն: Նշված պահանջների խախտումը համարվում է կոպիտ, քանի որ այն առավել հավանական է դարձնում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Ա.Սկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս պատշաճ չի գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ հաշվի չի առել վերջինիս կողմից թույլ տրված՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման բնույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ա.Սկրտչյանի կատարած արարքի հետևանքով տուժող Ա.Բարսեղյանը ճանաչվել է խաղաղ ժամանակ զինծառայության համար ոչ պիտանի և գորացրվել է պահեստագոր: Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ, սույն գործի հանգամանքներից ելնելով, որպես Ա.Սկրտչյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք չի կարող գնահատվել այն, որ նա ավարտել է ծառայությունը: Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող որոշման կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք են:

22. Սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգման համատեքստում Վճարելի դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե զենքի հետ անզգույշ վարվելու և դրա հետևանքով մեկ այլ զինծառայողի մարմնական վնասվածք հասցնելու համար Ա.Սկրտչյանի նկատմամբ կալանքը որպես կարգապահական տույժ կիրառված լինելու պայմաններում նույն արարքի համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս չի՞ խախտվել արդյոք կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

23. Չինձառայողի նկատմամբ կալանքը որպես կարգապահական տույժ կիրառված լինելու պայմաններում նույն արարքի համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքին Վճարելի դատարանն անդրադարձել է *Դ.Բարսեղյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխա-

վորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում, «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

(...)

(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով իրավախախտումը որպես «քրեական» որակելու չափորոշիչներն են՝ ա) իրավախախտման դասակարգումն ըստ ազգային օրենսդրության, բ) իրավախախտման բնույթը, գ) նշանակված կամ հնարավոր պատժի խստության աստիճանը: Ընդ որում, իրավախախտումը «քրեական» որակելու համար բավարար է այդ չափորոշիչներից միայն մեկի, այլ ոչ թե բոլորի պարտադիր առկայությունը» (տե՛ս Դավիթ Բորիսի Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ-1/0043/01/ 11 որոշման 22-րդ և 24-րդ կետերը):

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 63853 գորամասի հրամանատարը դեպքի կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 2012 թվականի հունվարի 23-ին արձակել է թիվ 57 հրամանը, որով հանձնարարել է շարքային Արսեն Սկրտչյանի կողմից շարքային Արմեն Բարսեղյանին մարմնական վնասվածք պատճառելու դեպքի առթիվ ծառայողական քննություն անցկացնել: ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 63853 գորամասի հրամանատարի 2012 թվականի հունվարի 23-ի մեկ այլ՝ թիվ 58 հրամանի համաձայն՝ շարքային Արսեն Սկրտչյանին հայտարարվել է 10 օր ժամկետով կալանք (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

25. Սույն որոշման 24-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-րդ կետում և համապատասխանաբար նաև *Դ.Բաբայանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նոր քննության ժամանակ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք Ա.Սկրտչյանը կրել է ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 63853 գորամասի հրամանատարի թիվ 58 հրամանով նշանակված կարգապահական տույժը և դրանից հետո միայն անդրադառնալ այն հարցին, թե զենքի հետ անզգույշ վարվելու և դրա հետևանքով մեկ այլ զինծառայողի մարմնական վնասվածք հասցնելու համար Ա.Սկրտչյանի նկատմամբ կալանքը որպես կարգապահական տույժ կիրառված լինելու պայմաններում նույն արարքի համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս չի՞ խախտվել արդյոք կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը:

26. Հիմք ընդունելով սույն որոշման 14-25-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արսեն Կարենի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 2-րդ մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 21-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 14-ի որոշումը բեկանել և քրեական գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

50.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0066/11/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմող՝</i>	Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ մաս՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ բողոքաբեր Տիգրան Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը.

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ա.Երեմյանը 2012 թվականի մարտի 14-ին որոշում է կայացրել Տիգրան Հովհաննիսյանի կատարած հանցագործության վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբանությամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Նույն որոշմամբ Անուշ Լալաբեկյանի, Անուշ Ծատրյանի, Քրիստինե Գրիգորյանի, Լուսինե Ասլանյանի և մյուսների կողմից նախնական համաձայնությամբ կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ըստ քննչական ենթակայության՝ վերջիններիս արարքներին իրավական գնահատական տալու համար:

Վերոնշյալ որոշումը Տ.Հովհաննիսյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին (տես՝ նյութեր, թերթ 9):

ՀՀ գլխավոր դատախազության 2012 թվականի մարտի 29-ի թիվ 12-38-12 գրությամբ բողոքաբերը տեղեկացվել է, որ քննիչի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին 2012 թվականի մարտի 14-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, այն վերացնելու հիմքեր չկան:

2. Տ.Հովհաննիսյանը 2012 թվականի ապրիլի 16-ին բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ա.Երեմյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին 2012 թվականի մարտի 14-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Տ.Հովհաննիսյանի բողոքը մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման դեմ Տ.Հովհաննիսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ Տ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման դեմ Տ.Հովհաննիսյանը վճարելի բողոք է ներկայացրել, որը Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ուղարկվել:

### **Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվել է 2012 թվականի սեպտեմբերի 19-ին, Տ.Հովհաննիսյանն այն ստացել է 2012 թվականի սեպտեմբերի 27-ին: 2012 թվականի հոկտեմբերի 4-ին Տ.Հովհաննիսյանը փոստին է հանձնել Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ իր վերաքննիչ բողոքը, որը Վերաքննիչ դատարան մուտք է եղել 2012 թվականի հոկտեմբերի 8-ին (տես՝ նյութեր, թերթեր 82-86, 89, 95, 98):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման եզրափակիչ մասում նշված է. «որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ 10 օրվա ընթացքում» (տես՝ նյութեր, թերթ 86):

7. Տ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա գրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին...: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային

օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը...»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հինգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

(...)

Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը հաստատող նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը հրապարակվել է 2012 թվականի սեպտեմբերի 19-ին, որին մասնակցել է նաև վերաքննիչ բողոք բերած անձ Տիգրան Հովհաննիսյանը: Այսինքն՝ բողոքաբերի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի, 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

Բողոքարկվող որոշումը նշված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10<sup>1</sup>-րդ կետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր, հետևաբար այն գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, որի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2012 թվականի սեպտեմբերի 29-ն էր, որը ՀՀ Կառավարության համապատասխան որոշման համաձայն հայտարարվել էր աշխատանքային օր, սակայն բողոքը Տիգրան Հովհաննիսյանի կողմից ստորագրվել է 2012 թվականի հոկտեմբերի 4-ին և նույն օրն էլ հանձնվել է փոստին, հետևաբար բողոքը ժամկետանց է, և այն պետք է թողնել առանց քննության» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 117-118):

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների որոշումներն անհիմն են, կայացվել են առանց գործում առկա փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրության:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ չի մասնակցել Առաջին ատյանի դատարանի որոշման հրապարակմանը, քանի որ այդ ժամանակ գտնվել է ծառայության մեջ՝ Գորիսի վարչական տարածքում:

Բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման պատճենը ստացել է 2012 թվականի սեպտեմբերի 27-ին, ինչի պատճառով վերաքննիչ բողոքը ներկայացրել է նշված ամսաթվից հաշված տասնօրյա ժամկետի ընթացքում՝ 2012 թվականի հոկտեմբերի 4-ին:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի և Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումները:

**Վճարելի դատարանի սպառնադատությունները և եզրահանգումը**

10. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառնության իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի համատեքստում անձին դատական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկզբի վերաբերյալ անձին տեղեկացնելը.*

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման եզրափակիչ մասի ձևակերպումից երևո՞ւմ է արդյոք, որ Տ.Հովհաննիսյանը պատշաճ կերպով տեղեկացվել է նշված որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետի սկզբի վերաբերյալ:

12. ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ

միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ « (...) Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: (...)»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Մ. Դավթյանի* և *Ս. Մկրտչյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որին ուղիղ համեմատական է այդ իրավունքները և ազատությունները ճանաչելուն և պաշտպանելուն, ինչպես նաև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն ուղղված՝ պետության պոզիտիվ պարտականությունը:

(...)

(...) քրեադատավարական հարաբերություններում, ելնելով քրեական դատավարության հանրային բնույթից, դատավարության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իմանալ իր կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների որոշումների (...) դեմ բողոք ներկայացնելու իրավունքի մասին: Նշված իրավունքին համապատասխանում է քրեական վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը դատավարության յուրաքանչյուր մասնակցին պարզաբանելու նրա իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմինների որոշումների (...) դեմ բողոք ներկայացնելու իրավունքը:

(...) քրեական դատավարության ընթացքում դատավարության մասնակցի վերաբերյալ համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է դրանցում պարզաբանի նաև, թե որ մարմին, ինչ ժամկետում և ինչ կարգով կարող են բողոքարկվել այդ փաստաթղթերը: (...) վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարության մասնակցին վերոնշյալ պարզաբանումները չտրամադրելը հանգեցնում է վերջինիս իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման» (տե՛ս Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Մկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0004/11/12 որոշման 14-16-րդ կետերը):

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ



դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...):»:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 22.12.2000 թվականի թիվ 36 որոշմամբ պարզաբանվել է, որ բողոքարկման բաց թողած ժամկետների վերականգնման վերաբերյալ դիմումները քննության առնելիս պետք է մանրամասն հետազոտվեն ժամկետների բաց թողնման պատճառները: Եվ բոլոր այդ դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (հիվանդություն, անհաղթահարելի ուժ, դատական ակտերի կայացման մասին անտեղյակ լինելը ոչ իր մեղքով և այլն), ժամկետի բացթողումը պետք է ճանաչել հարգելի:

Դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանել է նաև, որ որպես կանոն բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ հանձնելու պատճառով:

Վերոշարադրյալ դրույթները վերլուծելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար *Ս. Դավթյանի* և *Ս. Սյրտչյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտ կայացնելիս առաջին ատյանի դատարանը պետք է դրա եզրափակիչ մասում պարզաբանի, թե որ պահից սկսած և ինչ ժամկետում կարող է այդ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ պարզաբանումներ չտալը հանգեցնում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման, քանի որ զուտ ձևական խոչընդոտներով (օրինակ՝ անձին դատական ակտի բողոքարկման ժամկետի սկզբի վերաբերյալ չտեղեկացնելով) սահմանափակվում է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու՝ անձին ընձեռված հնարավորությունը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը կայացվել է 2012 թվականի սեպտեմբերի 19-ին: Որոշման եզրափակիչ մասում նշված է, որ այն կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան 10 օրվա ընթացքում, սակայն նշված չէ, թե որ պահից է սկսվում բողոքարկման տասնօրյա ժամկետի ընթացքը: Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը Տ.Հովհաննիսյանն ստացել է 2012 թվականի սեպտեմբերի 27-ին և դրա դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 2012 թվականի հոկտեմբերի 4-ին: Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ Տ.Հովհաննիսյանի

վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնվել է առանց քննության (տե՛ս սույն որոշման 5-7-րդ կետերը):

15. Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տ.Հովհաննիսյանի բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է Տ.Հովհաննիսյանի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը և սահմանափակել է Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու նրա հնարավորությունը, քանի որ հաշվի չի առել որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման եզրափակիչ մասի ձևակերպումից չի երևում, որ Տ.Հովհաննիսյանը պատշաճ կերպով տեղեկացվել է նշված որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետի սկզբի վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտում:

*II. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը.*

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ե՞րբ է սկսվում առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկը. դատական ակտը միստերի դասի ի՞նչում հրապարակելու, թե այն շահագրգիռ անձին հանձնելու պահից:

17. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

Մեջբերված, ինչպես նաև ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչ է հանդիսանում նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական որոշումների

վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով:

18. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադատության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները:

Վճարելի դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ:

19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով կրկնելով դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած իրավական մոտեցումները, շեշտել է, որ «(...) «դատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը, վերջապես նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (...): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա (...):

Դիմումների, բողոքների կամ այլ գանգատների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և համապատասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (...)» (տե՛ս Mamikonyan v. Armenia, 2010 թվականի մարտի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, կետեր 25 և 27):

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ.Ոսկանյանի և այլոց* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Գ-]ործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածում, որում հստակ կանոնակարգված է, որ բողոքարկման ժամկետը հաշվարկվում է դատավարական ակտը հրապարակելու և ոչ թե այն ստանալու պահից: Դատական ակտերն օրենքով սահմանված կարգով հրապարակվում են դատական նիստերի դահլիճում, իսկ դատական ակտի ստանալու կարգն այլ է, ինչը բացառում է «հրապարակման պահից» և «ստանալու պահից» եզրույթների նույնացումը: (...)» (տե՛ս Ֆահրադ Ոսկանյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԿԳ/0022/11/12 որոշման 20-րդ կետը):

21. ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՄԳՈ-1052 որոշման մեջ արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «(...) ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, որչափս ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:**

(...)

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին

համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց հետևանքով՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը՝ օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով:

(...)

Վերոնշյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՄԳՌ-690 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրոյուն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության:

(...)

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա և տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից (...):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով /ex jure/ պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը»:

22. Ելնելով սույն որոշման 17-20-րդ կետերում շարադրված վերլուծությունից, ինչպես նաև սույն որոշման 21-րդ կետում մեջբերված՝ ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ֆ.Ոսկանյանի և այլոց* գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումն անհրաժեշտ է վերանայել: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի միասնական կիրառության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները, մասնավորապես՝ այդ ժամկետների սկիզբը հաշվելու վերաբերյալ կարգավորումները լիարժեք կերպով չեն երաշխավորում իրենց շահերին առնչվող դատական ակտերը վերադաս դատարան բողոքարկելու՝ դատավարության մասնակիցների իրավունքը:

23. ՀՀ քրեադատավարական օրենքն առաջին ատյանի դատարանի՝ անձին ազատությունից զրկելու մասին (կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին) գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման համար սահմանում է հնգօրյա, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս դատական ակտերի համար՝ տասնօրյա ժամկետ՝ բողոքարկման ժամկետի սկիզբ համարելով դատական ակտի հրապարակման պահը: Նման կարճ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելու օրենսդրի կամքով: Մյուս կողմից, սակայն, բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

24. Հիմք ընդունելով սույն որոշման 17-23-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական նիստերի դաիլիճում հրապարակելու պահից:

25. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկինում կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումների փոփոխությունը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրա-

կան գործառույթի իրացման անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում պետք է բխի օրենքի միատեսակ կիրառության ապահովման բովանդակությունից: Մասնավորապես, օրենքի միատեսակ կիրառությունն օրենքի իմաստի բացահայտումն է մեկնաբանման տարբեր հնարքների միջոցով, հետևաբար օրենքի յուրաքանչյուր փոփոխություն, որը հանգեցնում է օրենքի իմաստի փոփոխության, ենթադրում է նաև օրենքի միատեսակ կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխություն: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների փոփոխության հիմք կարող են հանդիսանալ իրավունքի զարգացումը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորումը, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային-իրավական ակտերի և ՀՀ Սահմանադրության պահանջների ներդրումը իրավակիրառ պրակտիկա, դրանց նորմերի և սկզբունքների անմիջական գործողությունն ապահովելը և այլն:

26. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշման 15-րդ կետում շարադրված եզրահանգումն այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Մ Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

51.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԳ-1/0007/06/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Ռ.ԲԵՋԱՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Նոյ Յուրիի Մուսայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 21-ի որոշման դեմ մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2012 թվականի հունվարի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20101012 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Նոյ Յուրիի Մուսայելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Մուսայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:



Նույն դատարանի 2012 թվականի ապրիլի 2-ի և հունիսի 2-ի որոշումներով մեղադրյալ Ն.Մուսայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է երկուական ամսով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և մեղադրյալ Ն.Մուսայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է մեկ ամսով:

3. Մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 31-ի որոշումը:

4. Վերոգրյալ որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և նշանակվել քննության դռնփակ դատական նիստում 2012 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 12-ին (տե՛ս նյութեր, թերթ 91):

6. Ըստ նյութերի՝ Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցագրերը դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ պաշտպան Ռ.Բեջանյանին ուղարկվել են 2012 թվականի օգոստոսի 15-ին (տե՛ս նյութեր, թերթեր 92-97):

7. 2012 թվականի օգոստոսի 16-ին պաշտպան Ռ.Բեջանյանը դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով բողոքի քննությունը հետաձգել և նշանակել մեկ այլ օր (տե՛ս նյութեր, թերթ 99):

8. Ըստ Վերաքննիչ դատարանի դատական նիստի արձանագրության՝ «Դատարանը որոշեց բավարարել պաշտպանի գրավոր միջնորդությունը և դատական նիստը հետաձգեց և վերանշանակեց 2012 թվականի օգոստոսի 21-ին, ժամը 14.00-ին» (տե՛ս նյութեր, թերթ 105):

9. 2012 թվականի օգոստոսի 21-ին կայանալիք նիստի մասին Ն.Մուսայելյանին և նրա պաշտպան Ռ.Բեջանյանին ծանուցելու մասին ապացույցներ գործի նյութերում չկան:

10. Վերաքննիչ դատարանում 2012 թվականի օգոստոսի 21-ին տեղի ունեցած դատական նիստին մեղադրյալ Ն.Մուսայելյանը և նրա պաշտպան Ռ.Բեջանյանը չեն մասնակցել (տե՛ս դատական նիստի արձանագրության համառոտագրում, նյութեր, թերթ 107):

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

11. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Ն.Մուսայելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդության քննության ընթացքում չի ներկայացվել վերջինիս կողմից հանցանքի կատարումը հիմնավորող որևէ ապացույց, ինչի արդյունքում վերջինիս կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է առանց ողջամիտ կասկածի առկայության:

12. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ պաշտպանության կողմը պատշաճ կերպով ծանուցված չի եղել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 21ի դատական նիստի տեղի և ժամանակի մասին, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանում Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումն անց է կացվել առանց իրենց մասնակցության:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 31-ի, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 21-ի որոշումները և Նոյ Մուսայելյանին ազատ արձակել կալանքից:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

14. Սույն գործով բողոքաբերն ըստ էության երկու հարց է բարձրացրել, որոնցից առաջինը վերաբերում է Ն.Մուսայելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմնավորվածությանն ու օրինականությանը, երկրորդը՝ Վերաքննիչ դատարանում նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին մեղադրյալին և նրա պաշտպանին չծանուցելուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հարցերից առաջինին հնարավոր է անդրադառնալ միայն երկրորդ հարցին պատասխանելուց հետո, ուստի Վճռաբեկ դատարանը քննության է առնում սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված երկրորդ հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն ապահովե՞լ է արդյոք անձի արդար դատաքննության իրավունքն այն պայմաններում, երբ պաշտպանին չի ծանուցել սույն գործով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «Պաշտպանը (...) իրավունք ունի մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննարկման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննարկմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

(...)

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրագել կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգման իրականացնելուն:

(...)»:

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են»:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ դատական քննությանը մասնակցելը կողմերի՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքն է, իսկ նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը: Գործի քննությանը մասնակցելու կողմերի իրավունքը, ի թիվս այլոց, դատարանն ապահովում է գործի քննության տեղի և ժամանակի մասին նրանց ծանուցելու միջոցով, ուստի կարևոր իրավական նշանակություն ունի այն, որ այդ ծանուցումը կրի պատշաճ բնույթ: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր է բողոքը քննելու օրվա և ժամի մասին նախապես իրագելել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմերին:

17. Ա.Ղարիբյանի գործով կայացված որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) արդար դատական քննություն իրականացնելու պահանջը ՀՀ ներպետական իրավունքի իմաստով ևս հավասարապես վերաբերելի է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառման, կալանքի ժամկետի երկարացման հարցերի քննարկման, ինչպես նաև վերաքննության կարգով դրանց օրինականության դատական ստուգման ընթացքում դատարանը համապատասխան որոշում է կայացնում քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունների, փաստերի կամ ապացույցների հետազոտման արդյունքում (...)»:

(...) նշված հարցերի քննարկման ընթացքում դատական քննությունը գրկված է միայն գործի հրապարակային քննության երաշխիքից: Այս պայմաններում (...) արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից առավել կարևոր է դառնում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքների ապահովումը դատարանի կողմից:

Հետևաբար, (...) ինչպես առաջին ատյանի դատարանը կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս, այնպես էլ վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի կողմից կայացրած որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով դատարանները, ի թիվս այլ գործողությունների, պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին ծանուցելու և վերջիններիս՝ դատական քննությանը մասնակցելու իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար:

(...) այն դեպքում, երբ մեղադրյալն ապահովված չէ պաշտպանով, ստորադաս դատարանները պետք է միջոցներ ձեռնարկեն դատական քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու համար՝ վերջինիս տրամադրելով ողջամիտ հնարավորություններ կայացնելու իր շահերն այնպիսի պայմաններում, որոնք նրա համար չեն ստեղծում անբարենպաստ վիճակ՝ ի համեմատ մրցակից կողմի: Վճռարեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը պայմանավորված է պաշտպանությունն անձամբ իրականացնող մեղադրյալի համար մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների իրավաչափ կենսագործման անհրաժեշտությամբ. եթե նշված դեպքերում մեղադրյալի մասնակցությունը չապահովվի, ապա այդ սկզբունքներն անհամաչափ կձևականացվեն և կառարկայագրկվեն» (տե՛ս Անալյա Սերժիկի Ղարիբյանի գործով ՀՀ վճռարեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11 որոշման 23-25-րդ կետերը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ն.Մուսայելյանի պաշտպան Ռ.Բեջանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում քննության է նշանակվել 2012 թվականի օգոստոսի 17-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Պաշտպան Ռ.Բեջանյանը դիմում է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով բողոքի քննությունը հետաձգել և նշանակել մեկ այլ օր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Պաշտպանի դիմումի հիման վրա՝ դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 2012 թվականի օգոստոսի 21-ին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

2012 թվականի օգոստոսի 21-ին նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին մեղադրյալը և նրա պաշտպանը չեն ծանուցվել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանում 2012 թվականի օգոստոսի 21-ին տեղի ունեցած դատական նիստին, որի արդյունքում պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժվել է, մեղադրյալ Ն.Մուսայելյանը և նրա պաշտպան Ռ.Բեջանյանը չեն մասնակցել (տե՛ս սույն որոշման 3-րդ և 10-րդ կետերը):

19. Սույն որոշման 18-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում և համապատասխանաբար նաև Ա.Ղարիբյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պաշտպանին պատշաճ կերպով չի ծանուցել սույն գործով նշանակված դատական նիստի տեղի և

ժամանակի մասին, ինչի արդյունքում խախտվել է անձի արդար դատական քննության իրավունքը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում:

21. Ինչ վերաբերում է բողոքարկի բարձրացրած առաջին հարցին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 19-րդ կետում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Նոյ Յուրիի Մուսայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

52.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԳ/0025/15/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝*

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝*

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝*

Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դիմողների ներկայացուցիչներ՝*

Լ.ՀԱԿՈՔՅԱՆԻ

Տ.ԵԳՈՐՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշման դեմ դիմողներ Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոմսիմյանի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանի և Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2012 թվականի փետրվարի 15-ին դիմողներ Ֆահրադ Ոսկանյանը, Սամվել Թամարյանը, Գառնիկ Աբազյանը, Սարիբեկ Հռոմսիմյանը, Դարիբ Սիտիչյանը, Ալբերտ Օվիյանը և Դեմենտի Թադևոսյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2011 թվականի դեկտեմբերի 21-ի որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ դիմողներ

Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոմսիմյանի, Գ.Միտիչյանի, Ա.Օվի-յանի և Գ.Թադևոսյանի բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասութ-յան առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման դեմ վերաքն-նիչ բողոք են բերել դիմողների ներկայացուցիչներ Լ.Հակոբյանը և Տ.Եգորյանը, որը Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի մայիսի 25-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել փաստաբան Լ.Հակոբյանը, որը Վճարելի դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ մերժվել է:

2. 2012 թվականի հունիսի 27-ին դիմողներ Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Միտիչյանի, Գ.Աբազյանի, Ս.Հռոմսիմյանի, Գ.Թադևոսյանի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանը և Տ.Եգորյանը միջնորդություն են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դա-տարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով հարգելի համարել որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու համար նախատեսված ժամկետի բացթողումը և վերականգնել այն:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչների միջնորդությունը մերժվել է:

3. Դիմողների ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 20-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշման դեմ վճարելի բողոք են բերել դիմողներ Ֆ.Ոսկանյանի, Ս.Թամարյանի, Գ.Աբազյանի և Ս.Հռոմսիմ-յանի ներկայացուցիչներ Լ.Հակոբյանը և Տ.Եգորյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ դիմողների ներ-կայացուցիչների վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներ-կայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Դիմողների ներկայացուցիչների՝ Առաջին ատյանի դատարան ներկայացրած միջնորդության մեջ նշված է՝ «Դատարանի (...) 20.04.2012 թվականի որոշումը (...) ստացել ենք (...) 02.05.2012թ: (...) Որոշման եզրափակիչ մասում նշվել է, որ որոշումը կա-րող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ 10 օրվա ընթացքում և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն թվականի 12-ը և 13-ը հանդիսանում էին ոչ աշխա-տանքային օրեր և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 173-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասե-րով՝ վերաքննիչ բողոքը հանձնել ենք փոստին 14.06.2012թ.» (տե՛ս նյութեր, թերթ 2-3):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա է հետևյալ ձևակեր-պումը. «(...) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասութ-յան դատարանի 2012 թվականի որոշումը կարող էր բողոքարկվել մինչև 2012 թվականի մայիսի 02-ը: Մինչդեռ, համաձայն թիվ 36 փոստային բաժանմունքի գրության որոշումը հանձնվել է փաստաբաններին 02.05.2012 թվականին:

Դատարանը փաստում է, որ ինչպես դիմողները, այնպես էլ նրանց ներկայացուցիչները տեղյակ են եղել որոշման կայացման օրվա մասին և չեն ներկայացել դատարան:

(...)

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ բողոքարկման ժամկետը հարգելի համարելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 16):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Դատարանը 20.07.2012թ. որոշմամբ փաստարկված գնահատական է տվել բողոքարկման համար նախատեսված ժամկետը բաց թողնելու վերաբերյալ բողոքի փաստարկներին, վերաքննիչ բողոքի հեղինակներն անհարգելի պատճառով են բաց թողել որոշման բողոքարկման ժամկետը, բացի այդ, ինչպես դիմողները, այնպես էլ նրանց ներկայացուցիչները տեղյակ են եղել որոշման կայացման օրվա մասին և չեն ներկայացել դատարան» (տե՛ս նյութեր, թերթ 66):

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, 379-րդ հոդվածի պահանջները:

Բողոքաբերները նշել են, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման համար նախատեսված ժամկետը չի կարող հաշվարկվել այնպես, որ տասնօրյա ժամկետն սկսի հոսել վերոնշյալ որոշումը դատական նիստերի դահլիճում հրապարակելու և ոչ թե այն ստանալու պահից: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածում առկա՝ «հրապարակելու պահից տասնօրյա ժամկետում» ձևակերպման իմաստով դատական ակտի հրապարակման պահ պետք է դիտարկել բողոք բերող անձի կողմից տվյալ դատական ակտն ստանալու և ոչ թե նիստերի դահլիճում այն հրապարակելու պահը, ինչը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայից, որի համաձայն՝ նշված դատարանի դատական ակտերի հրապարակման պահ է համարվում դրանք դիմողին հանձնելու օրը, հետևաբար Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, հրաժարվել է արդարադատություն իրականացնելուց:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալ՝ բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետը վերականգնելու և այդ համատեքստում անձին



դատական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

*1. Դատական ակտի բողոքարկման ժամկետի վերականգնումը.*

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն արդյո՞ք պատշաճ կերպով գնահատել է բոլոր այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնց պատճառով դիմողների ներկայացուցիչները բաց են թողել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման բողոքարկման ժամկետը:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոմիտեցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...)»:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշմամբ պարզաբանվել է, որ բողոքարկման բաց թողած ժամկետների վերականգնման վերաբերյալ դիմումները քննության առնելիս պետք է մանրամասն հետազոտվեն ժամկետների բաց թողնման պատճառները: Եվ բոլոր այդ դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (հիվանդություն, անհաղթահարելի ուժ, դատական ակտերի կայացման մասին անտեղյակ լինելը ոչ իր մեղքով և այլն), ժամկետի բացթողումը պետք է ճանաչել հարգելի:

Դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանել է նաև, որ որպես կանոն բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ հանձնելու պատճառով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն, եթե դատարանը կգտնի, որ ժամկետի բացթողումը հարգելի պատճառներ ունի: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեադատավարական օրենքը չի սահմանում ժամկետի բացթողման պատճառների գնահատման որևէ չափանիշ, հետևաբար Վճարելի դատարանը գտնում է, որ ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու յուրաքանչյուր

միջնորդության քննության ժամանակ դատարանը պետք է դատական պաշտպանության իրավունքի համատեքստում պատշաճ կերպով գնահատի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնց պատճառով անձը բաց է թողել բողոքարկման ժամկետը: Այլ խոսքով՝ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության ժամանակ դատարանը պետք է պարզի, թե արդյոք բողոքարկման ժամկետը բաց է թողնվել բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով, օրինակ՝ հիվանդության, անհաղթահարելի ուժի առկայության, կայացված դատական ակտի մասին ոչ իր մեղքով անտեղյակ լինելու, դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ուշ իրեն հանձնված լինելու պատճառով և այլն:

13. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դիրքորոշմանը համահունչ դիրքորոշում է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանը՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԳՌ-1052 որոշման մեջ արձանագրելով, որ «(...) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՍԳՌ-690 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճարելի բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության:

(...)

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա և տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից (...):»

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմողների ներկայացուցիչները միջնորդություն են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հարգելի համարել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու համար նախատեսված ժամկետի բացթողումը և վերականգնել այն (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Վերոնշյալ միջնորդության

մեջ դիմողների ներկայացուցիչները փաստարկել են, որ առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումն ստացել են 2012 թվականի մայիսի 2-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ սույն գործով դիմողների ներկայացուցիչներն Առաջին ատյանի դատարանի որոշումն ստացել են այնպիսի ժամկետում, երբ բողոքարկման համար մնացած ժամանակն ակնհայտորեն բավարար չի եղել՝ պատճառաբանված բողոք կազմելու և վերաքննիչ դատարան ուղարկելու համար:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմողների ներկայացուցիչների միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշումը կարող էր բողոքարկվել մինչև 2012 թվականի մայիսի 2-ը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի գնահատել բողոք այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնց պատճառով դիմողների ներկայացուցիչները բաց են թողել Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 20-ի որոշման բողոքարկման ժամկետը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը դիմողների ներկայացուցիչներն ստացել են այդ որոշումը բողոքարկելու համար նախատեսված ժամկետի վերջին օրը, ինչի պատճառով գրկվել են օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու, հետևաբար նաև դատական պաշտպանության իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ դիմողների ներկայացուցիչների վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Մասնաճանապարհային 19-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

16. Ինչ վերաբերում է այն հարցին, թե ե՞րբ է սկսվում առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկը. դատական ակտը միստերի դահլիճում հրապարակելու, թե՞ այն շահագրգիռ անձին հանձնելու պահից, ապա այդ կապակցությամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել *S.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ: Նշված դիրքորոշման համաձայն «(...) ՀՀ քրեադատավարական օրենքն առաջին ատյանի դատարանի՝ անձին ազատությունից գրկելու մասին (կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին) գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման համար սահմանում է հնգօրյա, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս դատական ակտերի համար՝ տասնօրյա ժամկետ՝ բողոքարկման ժամկետի սկիզբ համարելով դատական ակտի հրապարակման պահը:

Նման կարճ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելու օրենսդրի կամքով: Մյուս կողմից, սակայն, բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար, անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

(...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական նիստերի դահլիճում հրապարակելու պահից» (տե՛ս Տիգրան Վարագդատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշման 23-24-րդ կետերը):

17. Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված եզրահանգումն այն մասին, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անհրաժեշտ է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել: Դիմողներ Ֆահրադ Ոսկանյանի, Սամվել Թամարյանի, Գառնիկ Աբազյանի, Սարիբեկ Հռոռնսիմյանի ներկայացուցիչների վերաբերյալ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

53.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԱԲԳ/0174/01/11**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի և Ա.Միքայելյանի պաշտպան Կ.Մանուչարյանի վճռաբեկ բողոքները,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2008 թվականի հոկտեմբերի 13-ին ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83102208 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մարտի 11-ի որոշմամբ Արամ Միքայելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ, 38-205-րդ հոդվածի 2-րդ և 205-րդ հոդվածի 2-րդ մասերով: Նույն օրն Ա.Միքայելյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի մարտի 11-ի որոշմամբ Ա.Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2011 թվականի հուլիսի 8-ին Ա.Միքայելյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել Բերոռուսիայի Հանրապետությունում:

2011 թվականի հոկտեմբերի 17-ին Ա.Միքայելյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և ներկայացվել նախաքննության մարմնին:

2011 թվականի հոկտեմբերի 17-ին Ա.Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ, 38-205-րդ հոդվածի 2-րդ և 205-րդ հոդվածի 2-րդ մասերով:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Արայիկ Վաղարշակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասերով: Նույն օրն Ա.Վաղարշակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ Ա.Միքայելյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ, 38-205-րդ հոդվածի 2-րդ և 205-րդ հոդվածի 2-րդ մասերով:

2011 թվականի նոյեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 21-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ա.Միքայելյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում: Ա.Միքայելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել ազատազրկման 2 տարի ժամկետով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի 19.471.815 ՀՀ դրամից: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Միքայելյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 5 տարի 3 ամիս ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, բայց ոչ ավելի 19.471.815 ՀՀ դրամից:

Նույն դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ա.Վաղարշակյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում: Ա.Վաղարշակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի 800.000 ՀՀ դրամի չափով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Ա.Վաղարշակյանն ազատվել է պատժի կրումից:

Վճռվել է նաև ՀՀ գլխավոր դատախազության կողմից ամբաստանյալների դեմ ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն: Ա.Միքայելյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձվել է 19.471.815 ՀՀ դրամ: Քաղաքացիական հայցը մնացած մասով մերժվել է:

3. Մեղադրողի և Ա.Միքայելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 29-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի մայիսի 21-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը և ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպան Կ.Մանուչարյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ վճարելի բողոքները վարույթ են ընդունվել:

2012 թվականի նոյեմբերի 21-ին ամբաստանյալ Ա.Վաղարշակյանը և նրա պաշտպան Տ.Գասպարյանը ներկայացրել են վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճարելի բողոքը մերժել, իսկ ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել օրինական ուժի մեջ:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Նախաքննության մարմինն Ա.Միքայելյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «(...) նա, Արմեն Կոնջարովի կազմակերպմամբ և Արայիկ Վաղարշակյանի դրոշմությամբ, առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության, նյութական այլ օգուտներ քաղելու և հարկերից չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, 2009թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունում հաշվառելով անհատ ձեռնարկատեր և Արայիկ Վաղարշակյանի դրոշմությամբ իր ստորագրության դրոշմակնիքը, Ա/Ձ-ի կնիքն ու հաշվապահական փաստաթղթերը հանձնելով Արմեն Կոնջարովին, ինչպես նաև հետագայում Ա/Ձ-ի՝ «Արդշինինվեստբանկ» ԲԲ ընկերությունում գտնվող հաշվեհամարին փոխանցված գումարները կանխիկացնելով և Ա.Կոնջարովին հանձնելով՝ օժանդակել է նրան «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերությանն առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման «Արամ Միքայելյան» Ա/Ձ-ի անունից 267.685.500 դրամի ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր կազմելուն, որոնք Արմեն Կոնջարովը ներառելով «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերության հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում, չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 69.160.028 դրամի հարկերը վճարելուց, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է նույն գումարի չափով առանձնապես խոշոր չափի վնաս:

Այսինքն՝ կատարել է հանցագործություններ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասերով:

Բացի այդ, Արամ Միքայելյանը, Արմեն Կոնջարովի կազմակերպմամբ «Արամ Միքայելյան» Ա/Ձ-ով իրականացնելով նաև ձեռնարկատիրական գործունեություն, Արսեն Ղազարյանի օժանդակությամբ 2009թ. երրորդ և 2010թ. առաջին եռամսյակի ընթացքում «Արամ Միքայելյան» Ա/Ձ-ի գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու միջոցով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 19.471.815 դրամ հարկ վճարելուց:



Այսինքն՝ կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով»:

Նախաքննության մարմինն Ա.Վաղարշակյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «(...) նա, Արմեն Կոնջարովի կազմակերպմամբ համոզելու և նյութապես շահագրգռելու միջոցով Արամ Միքայելյանին դրդել է առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության, նյութական այլ օգուտներ քաղելու և հարկերից չարամտորեն խուսափելու դիտավորությամբ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունում 2009թ. սեպտեմբերի 18-ին որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու: Որից հետո Ա.Միքայելյանին համոզել է անհատ ձեռնարկատիրոջ կնիքը, Արամ Միքայելյանի ստորագրության դրոշմակնիքն ու հաշվապահական փաստաթղթերը հանձնել Արմեն Կոնջարովին, իսկ հետագայում նաև Արմեն Կոնջարովի մոտ գտնվող փաստաթղթերի օգտագործմամբ «Արդշինիվեստբանկ» ԲԲ ընկերության գլխամասից «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի ընթացիկ հաշվից ստացել է 8.130.318 դրամ և փոխանցելով Ա.Կոնջարովին՝ օժանդակել է նրան «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերությանն առանց ապրանքների մատակարարման «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի անունից 267.685.500 դրամի ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր կազմելուն և Արմեն Կոնջարովի կողմից դրանք «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերության հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ներառելու միջոցով 69.160.028 դրամի առանձնապես խոշոր չափի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելուն, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է նույն գումարի չափով առանձնապես խոշոր չափի վնաս:

Այսինքն՝ կատարել է հանցագործություններ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասերով» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 99-117):

6. Նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ա.Միքայելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իր ընկեր Ա.Վաղարշակյանն է առաջարկել առանց գործունեություն իրականացնելու գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր և այդ նպատակով ծանոթացրել է Ա.Կոնջարովի հետ: Ա.Վաղարշակյանն ասել է, որ այդ գործից ֆինանսական օգուտ կունենա, իսկ վտանգը կայանում է նրանում, որ հարկեր չի մոծելու: Իր ձերբակալման օրն է իմացել, որ գտնվում է հետախուզման մեջ և զարմացել է, քանի որ, երբ սկսելիս են եղել այդ գործը, Ա.Վաղարշակյանն ու Ա.Կոնջարովն իրեն ասել են, որ հարկեր չմոծելու համար հետախուզում չեն հայտարարի և եթե գործերն ավարտելուց հետո երեք տարի անընդմեջ բացակայի հանրապետությունից, ամեն ինչ բարեհաջող կավարտվի (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 52-53):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճիռը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Վերլուծելով և գնահատելով դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ, դատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում, որ Արմեն Կոնջարովի կազմակերպմամբ Արայիկ Վաղարշակյանը նյութապես շահագրգռելու միջոցով Արամ Միքայելյանին դրդել է կեղծ ձեռնարկատիրության: Այսպես՝ Ա.Վաղարշակյանի առաջարկությամբ առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության Արամ Միքայելյանը գրանցել է «Արամ Միքայելյան» Ա/Չ-ն, որի նպատակը նյութական օգուտ քաղելն է, այն է՝ Ա/Չ-ի հաշվեհամարին փոխանցված գումարները կանխիկացնելու և Ա.Կոնջարովին փոխանցելու դիմաց

կանխիկացված գումարից սկզբում 2, բայց հետագայում 1 տոկոս գումարի չափով եկամուտ են ստացել Ա.Միքայելյանը և Ա.Վաղարշակյանը: Ա/Չ-ն գրանցելուց և հետագա գործունեության ընթացքում Ա.Կոնջարովն Ա.Միքայելյանին և Ա.Վաղարշակյանին ներկայացրել է, որ իր կողմից Ա/Չ-ի անվամբ սկզբնական շրջանում կատարվելու է շինանյութի առևտուր, իսկ առնվազն 2009թ. դեկտեմբերից սկսած դրա փաստաթղթերով Վրաստանի Հանրապետությունից մշտապես ներկրվելու են ցիտրուսային մրգեր, գործունությունը լինելու է օրինական, իսկ դրանից առաջացող հարկերը վճարվելու են ամբողջությամբ: Դրանից հետո Ա.Միքայելյանն Ա.Կոնջարովի առաջարկությամբ պատրաստել է իր ստորագրության դրոշմակնիքը և այն Ա/Չ-ի կնիքի և հաշվապահական փաստաթղթերի հետ միասին փոխանցել է Ա.Կոնջարովին: Վերջինս «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերությանն առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի անունից 267.685.500 դրամի ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր է կազմել, որոնք ներառել է «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերության հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ու չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի 69.160.028 դրամի հարկերը վճարելուց, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է նույն գումարի չափով առանձնապես խոշոր չափի վնաս: «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի «Արդշինինվեստբանկ» ԲԲ ընկերությունում գտվող հաշվեհամարին Ա.Կոնջարովի՝ «Էքսպրես Մետալ» ՍՊԸ-ի փոխանցված գումարներից մուտքագրվելուց հետո կարճ ժամանակահատվածում՝ 16.10.2009-10.03.2010թթ. ընթացքում, Արամ Միքայելյանը կանխիկացրել ու Ա.Կոնջարովին է փոխանցել 266.758.847 դրամ գումար, իսկ Արայիկ Վաղարշակյանը նման եղանակով կանխիկացրել ու Ա.Կոնջարովին է փոխանցել 8.130.318 դրամ: Բացի այդ, «Արամ Միքայելյան» Ա/Չ-ով իրականացվել է նաև ձեռնարկատիրական գործունեություն և 2009թ. երրորդ ու 2010թ. առաջին եռամսյակների ընթացքում «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի գործունեության վերաբերյալ Արամ Միքայելյանի կողմից օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշիվներ և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու միջոցով՝ չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի 19.471.815 դրամ հարկ վճարելուց (...):

Տվյալ դեպքում Արայիկ Վաղարշակյանն Արամ Միքայելյանին կեղծ ձեռնարկատիրության դրդելիս, իսկ վերջինս այդ հանցանքը կատարելիս չեն գիտակցել և տվյալ իրադրությունում չէին կարող գիտակցել, որ Կոնջարովի կողմից «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերությանն առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման «Արամ Միքայելյան» Ա/Չ-ի անունից 267.685.500 դրամի ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր կկազմվեին, որոնք կներառվեին «Էքսպրես Մետալ» ՍՊ ընկերության հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում, ինչը հնարավորություն կտար Ա.Կոնջարովին չարամտորեն խուսափելու առանձնապես խոշոր չափերի 69.160.028 դրամի հարկերը վճարելուց և նույն գումարի չափով պետությանը վնաս պատճառելուց (...): Այսինքն՝ ամբաստանյալ Ա.Վաղարշակյանը և Արամ Միքայելյանն Արմեն Կոնջարովին ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություններ կատարելուն օժանդակելու դիտավորություն չեն ունեցել, և նրանց գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը (...):

Ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարված հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրանց անձը բնութագրող տվյալները, այն, որ ամբաստանյալները նախկինում դատված և որևէ կերպ արատավորված չեն եղել, (...) բնութագրվում են դրականորեն:

Որպես ամբաստանյալ Արամ Միքայելյանի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դատարանը դիտում է այն, որ վերջինս աշակցել է հանցագործությունը բացահայտելուն և հանցագործության մյուս մասնակցին հանցանքի կատարման մերկացնելուն:

Ամբաստանյալ Ա.Միքայելյանի պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի հայտնաբերել:

Որպես ամբաստանյալ Արայիկ Վաղարշակյանի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դատարանը դիտում է այն, որ նա տառապում է (...) հիվանդություններով, և նրա խնամքին է գտնվում թոշակառու մայրը:

Ամբաստանյալ Ա.Վաղարշակյանի պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի հայտնաբերել:

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Արայիկ Վաղարշակյանն ու Արամ Միքայելյանն իրենց կատարած հանցանքների համար ենթակա են պատժի: Պատժի նպատակներն ապահովելու նպատակով վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով պետք է նշանակվի պատիժ ազատազրկման ձևով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 80-88):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի, ուստի գտնում է, որ Դատարանի դատավճիռն օրինական է ու հիմնավորված և այն բեկանելու, իսկ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 21-30):

### **3. Վճռարեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները**

Վճռարեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, չեն կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, վերլուծության չեն ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված հանցակազմերի բոլոր հատկանիշները և քրեական գործով ձեռք բերված ապացույցների նկատմամբ ցուցաբերելով կանխակալ մոտեցում՝ կայացրել են գործի փաստական հանգամանքներից չբխող դատական ակտեր, ինչի արդյունքում հանցագործություն կատարած անձինք խուսափել են քրեական պատասխանատվությունից և պատժից:

Բողոք բերած անձը, շարադրելով և վերլուծելով մի շարք ապացույցներ, եզրակացություն է արել այն մասին, որ Ա.Միքայելյանը և Ա.Վաղարշակյանն ի սկզբանե տեղյակ են եղել Ա.Կոնջարովի գործողությունների անօրինական բնույթի մասին, իսկ այդ պայմաններում պարտադիր չէ, որ Ա.Կոնջարովի կողմից մանրամասնվեր, թե կոնկրետ

ինչ գործողություններ պետք է կատարվեն: Հետևաբար, անհիմն է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությունը, թե Ա.Վաղարշակյանն Ա.Միքայելյանին կեղծ ձեռնարկատիրության դրդելիս, իսկ վերջինս էլ այդ հանցանքը կատարելիս չեն գիտակցել և տվյալ իրադրությունում չէին կարող գիտակցել, որ Ա.Կոնջարովի կողմից առանց ապրանքների մատակարարման կեղծ հաշիվ-ապրանքագրեր կկազմվեն և կներառվեն «Էքսպրես Մետալ» ՍՊԸ-ի հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում:

Ըստ բողոքաբերի՝ ինչպես Ա.Վաղարշակյանը, այնպես էլ Ա.Միքայելյանը, առանց առևտրային գործունեություն իրականացնելու մտադրության անհատ ձեռնարկատեր հաշվառելիս, Ա.Միքայելյանի ստորագրության դրոշմակնիք պատրաստելիս և այն անհատ ձեռնարկատիրոջ կնիքի և հաշվապահական փաստաթղթերի հետ Ա.Կոնջարովին հանձնելիս, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ հաշվեհամարին փոխանցված գումարները կանխիկացնելիս և Ա.Կոնջարովին փոխանցելիս, կարող էին և պարտավոր էին նախատեսել իրենց գործողությունների հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, իսկ այդ պատճառակալ կապի բացակայության պայմաններում Ա.Կոնջարովի կազմակերպած հանցագործությունը չէր իրականացվի, հետևաբար հանցակցության սահմանազանցման մասին խոսք լինել չի կարող:

10. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ամբաստանյալներ Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի գործողությունները ցանկացած դեպքում չէին կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ նշված հոդվածը պատասխանատվություն է նախատեսում առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելու համար: Մինչդեռ Ա.Միքայելյանն Ա.Վաղարշակյանի դրոշմությամբ գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, որն «Անհատ Ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթների համաձայն՝ չի կարող համարվել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանն անտեսել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունն իրենից ներկայացնում է նյութական հանցակազմ, այսինքն՝ հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված գործողությունների արդյունքում պետք է խոշոր վնաս պատճառվի քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը: Դատարանը, ամբաստանյալների արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասից վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով, չի նշել նրանց գործողությունների հետևանքով քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը պատճառված վնասի չափը և անտեսելով, որ նյութական հանցակազմերում առաջացած հանցավոր հետևանքները բոլոր հանցակիցների համար ընդհանուր են՝ անհիմն մերժել է քաղաքացիական հայցը:

11. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի չի առնել կատարված հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը և սխալ գնահատելով գործում առկա՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ ամբաստանյալների նկատմամբ նշանակել է անհամաչափ պատիժներ, մասնավորապես՝ Ա.Վաղարշակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 1-ին

մասով դատապարտել է տուգանքի 800.000 ՀՀ դրամի չափով, իսկ Ա.Միքայելյանին նույն հոդվածով դատապարտել է ազատազրկման 2 տարի ժամկետով:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, Ա.Միքայելյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ, 38-205-րդ հոդվածի 2-րդ, 205-րդ հոդվածի 2-րդ մասերով, Ա.Վաղարշակյանին մեղավոր ճանաչել 38-189-րդ հոդվածի 3-րդ, 38-205-րդ հոդվածի 2-րդ մասերով և նրանց նկատմամբ նշանակել արդարացի պատիժներ, իսկ քաղաքացիական հայցն ամբողջությամբ բավարարել:

13. Ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպանը փաստարկել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ, մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ դրոյիչը հանդիսանում է հանցագործություն կատարելուն հակող անձ և ավելի վտանգավոր է, քան կատարողը, քանի որ նա է կատարողի մոտ առաջացնում հանցանք կատարելու դիտավորություն և վճռականություն: Դատարանը, հաստատված համարելով, որ Ա.Վաղարշակյանը դրդել է Ա.Միքայելյանին կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, նրա նկատմամբ որպես պատիժ է նշանակել տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Ա.Միքայելյանին դատապարտել է ազատազրկման 2 տարի ժամկետով:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշումը, Ա.Միքայելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել տուգանքի ձևով և Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ նրան ազատել պատժի կրումից:

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

15. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ հանցակցի սահմանագանցում (էքսցես) հասկացության ճիշտ մեկնաբանման և կիրառության առումով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով արգելված արարքների համար քրեական պատասխանատվության հարցում առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

#### **Հանցակցի սահմանագանցումը**

16. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրոյիչը և օժանդակողը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցակցի սահմանազանցում է համարվում անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ:

2. Հանցակցի սահմանազանցման համար մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում»:

Հանցակցության հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

«(...) հանցակցությանը բնորոշ են 3 հատկանիշ.

հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից

գործողությունների համատեղությունը

հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն քանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ մեղքով և միայն դիտավորյալ հանցագործություններում» (տե՛ս Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռ-աֆիկ Արայիկի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը):

17. Նախորդ կետում շարադրված իրավանորմների, ինչպես նաև *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշման վերլուծությունից հետևում է, որ հանցակցի քրեական պատասխանատվության հիմքում ընկած է ոչ միայն նրա և կատարողի արարքի միջև պատճառական կապի առկայությունը, այլ նաև նրա կողմից կատարողի արարքի և դրա հետևանքների նկատմամբ որոշակի գիտակցական-կամային վերաբերմունք դրսևորելը:

Այսպես՝ հանցակցության սուբյեկտիվ կողմը նախատեսում է մեղքի բացառապես դիտավորյալ ձև, ընդ որում, որոշակի հանցանքի կատարմանն այլ անձանց հետ համատեղ մասնակցելու դիտավորությունն արտահայտվում է միայն ուղղակի ձևով, իսկ հանցագործության վտանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող դիտավորյալ մեղքի տեսակը կարող է լինել և՛ ուղղակի, և՛ անուղղակի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ յուրաքանչյուր հանցակից պետք է՝

գիտակցի, որ համատեղ գործում է կատարողի կամ այլ հանցակցի հետ.

գիտակցի, որ իր արարքն անհրաժեշտ պայման է մյուս հանցակցի կողմից արարք կատարելու համար և ցանկանա համատեղ մասնակցել հանցագործությանը.

նյութական հանցակազմի դեպքում նախատեսի հանրորեն վտանգավոր հետևանքը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածն ամրագրում է հանցակցի սահմանագանցում (էքսցես) հասկացության քրեաիրավական բնութագիրը, ինչպես նաև սահմանագանցման դեպքում մյուս հանցակիցների պատասխանատվության կարգը: Հիշատակված իրավանորմի վերլուծությունից բխում է, որ հանցակցի սահմանագանցում ասելով պետք է հասկանալ մի հանցակցի կողմից այնպիսի արարքի կատարում, որը թեպետ մյուս հանցակիցների գործողությունների հետ գտնվում է օբյեկտիվ պատճառական կապի մեջ, բայց չի ներառվել նրանց ընդհանուր դիտավորության մեջ, բնութագրվում է առավել բարձր կամ ցածր հանրային վտանգավորությամբ, քան այն արարքը, որը նախապես որոշվել էր, և ենթակա է մեղսագրման միայն դա կատարողին:

Հանցակցի սահմանագանցումը լինում է երկու տեսակ՝ քանակական և որակական: Քանակական սահմանագանցման դեպքում կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն ընդգրկված էր նրանց դիտավորության մեջ, սակայն հասցված վնասն այլ է լինում, քան պայմանավորված էր: Որակական սահմանագանցումը բնութագրվում է նրանով, որ կատարողն իրականացնում է կանխորոշվածից բացի մեկ այլ հանցագործություն կամ իր բնույթով բոլորովին այլ հանցանք: Սահմանագանցման դեպքում մյուս հանցակիցները պատասխանատվություն են կրում միայն այն հանցագործությանը հանցակցելու համար, որն ընդգրկված է եղել նրանց դիտավորությամբ: Իսկ եթե հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված հանցանքը չի կատարվել՝ տեղի է ունեցել որակական սահմանագանցում, ապա հանցակիցները պետք է պատասխանատվության ենթարկվեն այլանավորված հանցագործության նախապատրաստության համար:

19. Սույն որոշման 16-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը համադրելով 18-րդ կետում առկա վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև հանցագործությանը երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցության դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է գիտակցի ոչ միայն իր, այլ նաև մյուս հանցակիցների վարքագծին վերաբերող հանգամանքները, այդուհանդերձ, դա չի նշանակում, որ հանցակիցը քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայի հատկանիշների ճշտությամբ պետք է բնութագրի այն հանցագործությունը, որի կատարմանը նա մասնակցում է: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության («Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը») օժանդակողը կարող է հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը հեշտացնելու նպատակով միջոցներ տրամադրել կատարողին, որպեսզի նա հնարավորություն ստանա չարամտորեն խուսափել հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց, սակայն օժանդակողը կարող է չիմանալ նշված հանցագործության կատարման կոնկրետ տեղը, ժամանակը, եղանակը կամ այն վնասի չափը, որը կարող է պատճառվել պետությանը:

Նման դեպքում օժանդակողը պատասխանատվության պետք է ենթարկվի փաստացի կատարված հանցագործությանը հանցակցելու համար:

Վճարելի դատարանը գտնում է, որ հանցակցի սահմանազանցման հարցը քննարկելիս իրավակիրառողը հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները պետք է գնահատի ոչ միայն առանձին-առանձին՝ երկու և ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու փաստը հաստատելու համար, այլև իրենց օրգանական ամբողջության մեջ, որպեսզի լիարժեք լուծի նշված անձանց պատասխանատվության և պատժի հարցը:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցակցի սահմանազանցում առկա չէ այն դեպքում, երբ հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն օրգանական ամբողջության մեջ գնահատելու արդյունքում կարգվի, որ՝

ա) միևնույն հանցանքը կատարող երկու կամ ավելի անձինք փոխադարձաբար տեղյակ են եղել, որ իրենց արարքները զտնվում են պատճառական կապի մեջ (համատեղ են) և ուղղված են միևնույն հանցագործության կատարմանը,

բ) յուրաքանչյուր հանցակցից նախատեսել է հանցագործության՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը:

## II. Կեղծ ձեռնարկատիրությունը

20. ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կեղծ ձեռնարկատիրությունը՝ առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծել[ն] [է], որի նպատակը վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ արգելված այնպիսի գործունեություն թաքցնելն է, որը խոշոր վնաս է պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելու, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելու և ներկայացնելու համար, որը խոշոր վնաս է պատճառել:

Մեջբերված իրավադրույթների համեմատական վերլուծությունից երևում է, որ դրանցով նախատեսված հանցակազմերն օբյեկտիվ կողմի հատկանիշներով տարբեր են: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելով, որը նպատակ է հետապնդել՝ (ա) վարկեր ստանալ, (բ) հարկերից խուսափել, (գ) գերավճարներ առաջացնել, (դ) նյութական այլ օգուտներ քաղել կամ (ե) արգելված գործունեությունը թաքցնել: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է կեղծ ձեռնարկատիրության ինքնուրույն տեսակ, որի օբյեկտիվ կողմը երկրնտրելի է, և դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ. (ա) առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրել, (բ) ծախսերի և եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմել և ներկայացնել:



21. ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերը նյութական են, դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանրության համար վտանգավոր հետևանքը՝ խոշոր վնաս պատճառելը: Այլ կերպ ասած՝ եթե վերը թվարկված գործողությունների արդյունքում քաղաքացուն, կազմակերպությանը կամ պետությանը խոշոր վնաս չի պատճառվել, ապա քրեական պատասխանատվությունն այդ հոդվածներով որպես ավարտված հանցագործություններ բացառվում է: Ընդ որում, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասում խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը), ապա նույն հոդվածի 2-րդ մասում՝ խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

22. Հիմք ընդունելով սույն որոշման 20-21-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող հանցակազմերի օբյեկտիվ կողմերի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել «ձեռնարկատիրական գործունեություն» և «առևտրային կազմակերպություն» հասկացությունների էությունը:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը:

2. Քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

(...)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

2. Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

(...)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների) բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները (...):

2. Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով:

3. Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

(...):

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված քաղաքացիաիրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ ձեռնարկատիրական գործունեությունն անձի կողմից իրականացվում է՝ նպատակ ունենալով շահույթ ստանալ գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից: Ընդ որում, անձը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել երկու եղանակով՝ (ա) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն ստեղծելով կամ դրա մասնակիցը դառնալով և (բ) առանց իրավաբանական անձ կազմավորելու, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ և 72-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ առևտրային կազմակերպությունները կարող են լինել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ձևով (տնտեսական ընկերակցություններ) և սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով (տնտեսական ընկերություններ):

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի իմաստով անհատ ձեռնարկատերը ֆիզիկական անձ է, որն իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

24. Ինչպես արդեն նշվեց սույն որոշման 20-րդ կետում, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեության իրականացման մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելու մեջ: Այսինքն՝ նշված հանցանքի կատարման մեջ անձին մեղավոր ճանաչելու համար առնվազն անհրաժեշտ է, որ նա ստեղծած լինի թվարկված առևտրային կազմակերպություններից մեկը:

Սինչդեռ, եթե անձն առանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման մտադրության գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր՝ նպատակ հետապնդելով վարկեր ստանալ, հարկերից խուսափել, գերավճարներ առաջացնել, նյութական այլ օգուտներ քաղել կամ արգելված գործունեությունը թաքցնել, և նույնիսկ եթե նշված գործունեության արդյունքում խոշոր վնաս է պատճառվել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը, անձը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթակա չէ:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմին, ապա այստեղ որևէ իրավական նշանակություն չունի, թե առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթերը տրամադրվել կամ ծախսերի և եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են առևտրային կազմակերպության, թե անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

*III. Ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումները*

25. Սույն գործով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալներ Ա.Միքայելյանին և Ա.Վաղարշակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում անպարտ ճանաչելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը 189-րդ հոդվածի 1-ին մասով վերադրակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

26. Սույն գործով ինչպես մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, այնպես էլ դատարանները հաստատված են համարել, որ Ա.Կոնջարովի կազմակերպմամբ և Ա.Վաղարշակյանի որոշությամբ Ա.Միքայելյանն առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր, որից հետո պատրաստել է իր ստորագրության դրոշմակնիքը և այն անհատ ձեռնարկատիրոջ կնիքի և հաշվապահական փաստաթղթերի հետ հանձնել է Ա.Կոնջարովին: Վերջինս «Արամ Միքայելյան» Ա/Ձ-ի անունից 267.685.500 ՀՀ դրամի ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր է կազմել, որոնք ներառել է «Էքսպրես Սետալ» ՍՊԸ-ի հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում: Այնուհետև, «Արամ Միքայելյան» Ա/Ձ-ի բանկային հաշվեհամարին «Էքսպրես Սետալ» ՍՊԸ-ի կողմից փոխանցված գումարներն Ա.Միքայելյանը և Ա.Վաղարշակյանը կարճ ժամանակահատվածում կանխիկացրել են, գումարի երկու տոկոսը վերցրել են իրենց, իսկ մնացածը փոխանցել Ա.Կոնջարովին: Նման եղանակով Ա.Միքայելյանը կանխիկացրել և Ա.Կոնջարովին է փոխանցել 266.758.847 ՀՀ դրամ, իսկ Ա.Վաղարշակյանը՝ 8.130.318 ՀՀ դրամ: Արդյունքում Ա.Կոնջարովը չարամտորեն խուսափել է 69.160.028 ՀՀ դրամի հարկերը վճարելուց, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է նույն գումարի չափով առանձնապես խոշոր չափի վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերը):

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ նախաքննության ընթացքում Ա.Միքայելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իր ընկեր Ա.Վաղարշակյանն է առաջարկել առանց գործունեություն իրականացնելու գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր և այդ նպատակով իրեն ծանոթացրել է Ա.Կոնջարովի հետ: Ա.Վաղարշակյանն ասել է, որ այդ գործից ֆինանսական օգուտ կունենա, իսկ վտանգը կայանում է նրանում, որ հարկեր չի մուծելու: Ա.Վաղարշակյանն ու Ա.Կոնջարովն իրեն ասել են, որ հարկեր չմուծելու համար հետախուզում չեն հայտարարի և եթե գործերն ավարտելուց հետո երեք տարի անընդմեջ բացակայի ՀՀ-ից, ամեն ինչ բարեհաջող կավարտվի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

27. Սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 26-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Ա.Միքայելյանն ու Ա.Վաղարշակյանն իրազեկված են եղել, որ իրենց և Ա.Կոնջարովի գործողությունները գտնվում են պատճառական կապի մեջ, համատեղ են և ուղղված են միևնույն հանցագործությունների կատարմանը, այն է՝ առանց ապրանքների մատակարարման կեղծ փաստաթղթեր տրամադրելուն և հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելուն: Ինչ վերաբերում է նշված հանցագործությունների՝ հանրության համար վտանգավոր հետևանքների նկատմամբ ամբաստանյալների կողմից դրսևորված վերաբերմունքին,

ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ և՛ Ա.Միքայելյանը, և՛ Ա.Վաղարշակյանը նախատեսել են իրենց գործողությունների արդյունքում պետությանը վնաս պատճառելու հավանականությունը և, առանց իմանալու վնասի կոնկրետ չափը, գիտակցաբար թույլ են տվել դրա առաջացումը:

Նման եզրահանգման Վճռաբեկ դատարանը գալիս է ինչպես Ա.Միքայելյանի՝ սույն որոշման 6-րդ կետում շարադրված նախաքննական ցուցմունքի, այնպես էլ հանցակցության օբյեկտիվ հատկանիշները կազմող՝ Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի գործողությունների ամբողջական գնահատման արդյունքում: Մասնավորապես, Ա.Միքայելյանը, որևէ մտադրություն չունենալով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, եկամուտ ստանալու մտադրությամբ, Ա.Կոնջարովի կազմակերպմամբ և Ա.Վաղարշակյանի որոշությամբ գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, որից հետո պատրաստել է իր ստորագրության դրոշմակնիքը և այն անհատ ձեռնարկատիրոջ կնիքի և հաշվապահական փաստաթղթերի հետ հանձնել է Ա.Կոնջարովին: Դրանից հետո, երբ Ա.Կոնջարովն անհատ ձեռնարկատիրոջ կնիքի, փաստաթղթերի, ինչպես նաև Ա.Միքայելյանի ստորագրության դրոշմակնիքի օգնությամբ, առանց ապրանքներ մատակարարելու, կեղծ հաշիվ-ապրանքագրեր է կազմել և ներառել «Էքսպրես Սետալ» ՍՊԸ-ի հաշվետվություններում և հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում, Ա.Միքայելյանը և Ա.Վաղարշակյանը շարունակել են իրենց հանցավոր գործունեությունը, այն է՝ կանխիկացրել են անհատ ձեռնարկատիրոջ բանկային հաշվեհամարին փոխանցված գումարները, գումարի երկու տոկոսը վերցրել են իրենց, իսկ մնացածը փոխանցել Ա.Կոնջարովին: Արդյունքում Ա.Կոնջարովը հնարավորություն է ստացել չարամտորեն խուսափել հարկերը վճարելուց և պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 69.160.028 ՀՀ դրամի վնաս:

28. Շարադրված հանգամանքների գնահատմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Միքայելյանի, Ա.Վաղարշակյանի և Ա.Կոնջարովի գործողություններն ունեցել են օբյեկտիվ պատճառական կապ և ընդգրկված են եղել նրանց ընդհանուր դիտավորության մեջ, հետևաբար Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, թե տեղի է ունեցել հանցակցի սահմանազանցում, Ա.Վաղարշակյանն Ա.Միքայելյանին կեղծ ձեռնարկատիրության դրդելիս, իսկ վերջինս այդ հանցանքը կատարելիս չեն գիտակցել և տվյալ իրադրությունում չէին կարող գիտակցել, որ Ա.Կոնջարովի կողմից ապրանքներ մատակարարելու վերաբերյալ կեղծ հաշիվ-ապրանքագրեր կկազմվեն, որոնք կներառվեն հաշվետվություններում, և նա չարամտորեն կխուսափի հարկերը վճարելուց (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), արհեստական է և չի բխում գործի փաստական տվյալներից:

Փաստորեն, խախտելով ապացույցների գնահատման կարգն ամրագրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի արարքների ճիշտ որակման համար էական նշանակություն ունեցող՝ վերը նշված հանգամանքները, ինչի արդյունքում անհիմն եզրահանգման է եկել նրանց գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմերի հատկանիշների բացակայության վերաբերյալ:

29. Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը, անտեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեության իրա-

կանացման մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելու մեջ, իսկ անհատ ձեռնարկատերը չի կարող համարվել առևտրային կազմակերպություն (տե՛ս սույն որոշման 23-24-րդ կետերը), Ա.Միքայելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ է կայացրել՝ առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար, իսկ Ա.Վաղարշակյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշված արարքը կատարելուն դրդելու համար:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը նյութական է, դրա օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանրության համար վտանգավոր հետևանքը՝ խոշոր վնաս պատճառելը, իսկ այդպիսի վնասի բացակայությունը բացառում է այդ հոդվածով քրեական պատասխանատվությունը որպես ավարտված հանցակազմ (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը), Ա.Միքայելյանին և Ա.Վաղարշակյանին մեղավոր է ճանաչել նշված հոդվածով՝ առանց կոնկրետացնելու, թե նրանց գործողությունների արդյունքում ինչպիսի վնաս է պատճառվել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը:

Վերաքննիչ դատարանն իր հերթին անհիմն եզրահանգման է եկել այն մասին, որ սույն գործով թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, դատավճիռն օրինական է և հիմնավորված, ուստի այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

30. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ իրավաչափ չեն ամբաստանյալներ Ա.Միքայելյանին և Ա.Վաղարշակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում անպարտ ճանաչելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքը 189-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Սույն գործով դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն զնահատել գործի փաստական հանգամանքները: Արդյունքում չեն կիրառվել քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք ենթակա էին կիրառման, և կիրառվել է այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

31. Վճարելի դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև բողոքաբերների այն փաստարկի հետ, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալների նկատմամբ նշանակել է անհամաչափ պատիժներ՝ անտեսելով այն հանգամանքը, որ Ա.Վաղարշակյանն է Ա.Միքայելյանին դրդել հանցանքի կատարմանը (տե՛ս սույն որոշման 11-րդ և 13-րդ կետերը): Ինչպես երևում է սույն գործով կայացված դատավճռի ուսումնասիրությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)՝ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով ամբաստանյալների պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, այդ թվում՝ այն, որ Ա.Միքայելյանն աջակցել է հանցագործության բացահայտմանը, առանց որևէ պատճառաբանության, հաշվի չառնելով կատարված հանցագործությանը հանցակիցներից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը, անհիմն եզրահանգման է եկել առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Միքայելյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել ազատազրկման ձևով,

իսկ Ա.Վաղարշակյանի նկատմամբ՝ տուգանքի ձևով: Արդյունքում Ա.Վաղարշակյանը ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի 800.000 ՀՀ դրամի չափով, իսկ Ա.Միքայելյանը նույն հոդվածով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների վերոգրյալ կոպիտ խախտումն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

32. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի մայիսի 21-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

54.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԷԴ/0063/13/12**

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

որոնքաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 27-ի որոշման դեմ դատախազ Ա.Ստեփանյանի վճռարեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի դատավճռով Հովհաննես Ներսեսի Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի ապրիլի 20-ից:

2. ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի 2012 թվականի մայիսի 23-ի որոշմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 8-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ՝ դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատվել է մեկ երրորդով:

3. 2012 թվականի մայիսի 25-ին դատապարտյալ Հ.Հովհաննիսյանը բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ մաս՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով իրեն Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատել պատժի կրումից:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի բողոքը բավարարվել է: ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի 2012 թվականի մայիսի 23-ի որոշումը վերացվել է, և Հ.Հովհաննիսյանը Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատվել է պատժի կրումից:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի օգոստոսի 27-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 27-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դատախազ Ա.Ստեփանյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Դատապարտյալ Հովհաննես Հովհաննիսյանի անձնական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս հանցագործությունը կատարել է մինչև 2011թ. մայիսի 1-ը, նախկինում դատապարտված չի եղել, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով ՀՀ քր. օր-ի 178 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 20.04.2010թ., հետևաբար վերջինիս նկատմամբ կիրառելի է ՀՀ ԱԺ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 26.05.2011թ. որոշման դրույթները:

(...) իրավացիորեն դատարանները Հ.Հովհաննիսյանի նկատմամբ չեն կիրառել ՀՀ ԱԺ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 26.05.2011թ. որոշման դրույթները, քանի որ Հ.Հովհաննիսյանը 20.04.2010թ. մինչև 20.02.2012թ. գտնվել է նախնական կալանքի տակ և հանդիսացել է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, հետևաբար մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, գտնվելով նախնական կալանքի տակ, անձը դեռևս չի համարվում պատիժ կրող, իսկ որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ պատժից պետք է ազատել (...) այն անձանց, որոնք դատապարտվել են առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման և սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան պատժի մեկ քառորդը:

Համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կատարելու մասին կարգադրության՝ ՀՀ քր. օր-ի 178 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով դատապարտված



Հովհաննես Ներսեսի Հովհաննիսյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. օգոստոսի 25-ի դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2012թ. փետրվարի 20-ին՝ պատժի սկիզբը 20.04.2010թ., որից հետո վերջինս ստացել է դատապարտյալի կարգավիճակ, իսկ դատապարտյալի կարգավիճակ ձեռք բերելու պահից նա համարվում է պատիժ կրող անձ:

(...) Նկատի ունենալով, որ կարգադրությունը ստանալու պահից դատապարտյալ Հ.Հովհաննիսյանը համարվում է պատիժ կրող անձ, հետևաբար նախնական կալանքի տակ գտնված ամբողջ ժամանակահատվածը պետք է դիտել Հ.Հովհաննիսյանի կողմից պատժի կրած մաս: Հաշվի առնելով, որ դատապարտյալը մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը կրել է պատժի մեկ քառորդից ավելին, հետևաբար նրա նկատմամբ կիրառելի է ՀՀ ԱԺ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 26.05.2011թ. որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի դրույթը (...)» (տե՛ս նյութեր, թերթ 40-41):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) վերաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, դատապարտյալ Հովհաննես Ներսեսի Հովհաննիսյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 25.08.2011թ. դատավճռով 3 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար վիճարկվող դատական ակտը բեկանելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 79-81):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել քրեական օրենքը, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը կիրառելի է միայն այն անձանց նկատմամբ, ում վերաբերյալ դատավճիռներն օրինական ուժի մեջ են մտել Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, և ովքեր այդ օրվա դրությամբ կրել են պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը: Մինչդեռ Հ.Հովհաննիսյանի վերաբերյալ դատավճիռը Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դեռևս օրինական ուժ չի ունեցել, և այն ի կատար ածելու մասին կարգադրություն քրեակատարողական հիմնարկ չի ուղարկվել:

Վերոգրյալից բողոքի հեղինակը եզրակացրել է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառելի չէր, այդ իսկ պատճառով քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է նույն ակտի 8-րդ կետի 3-րդ ենթակետը, և պատժի չկրած մասը կրճատվել է մեկ երրորդով:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Համաներման ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետը քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց նկատմամբ Համաներման ակտի կատարումը վերապահել է այդ հիմնարկների պետերին:

Հետևաբար, ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի բողոքի քննարկման արդյունքում համաներմում կիրառելու լիազորություն չեն ունեցել, սակայն կիրառել են, ինչը հանգեցրել է օրինականության սկզբունքի խախտման:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 27-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

##### *1. Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիությունը*

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառելի<sup>o</sup> է արդյոք Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

Համաներման ակտի կիրառման հարցին Վճարելի դատարանն անդրադարձել է Վ.Ավետիսյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

13. «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներմում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը նախատեսում է «Պատժից ազատել, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերի, դիտավորյալ հանցագործություն կատարելու համար նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած այն անձանց, որոնք դատապարտվել են առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման և

սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան պատժի մեկ քառորդը»:

Մեջբերված դրույթի վերլուծությունից երևում է, որ այն նախատեսում է պատժից ազատել առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված այն անձանց, որոնք Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան պատժի մեկ քառորդը: Այսինքն՝ նշված նորմը որպես համաներմանից օգտվելու պայման, ի թիվս այլնի, սահմանում է, որ անձը պետք է կրած լինի իր նկատմամբ նշանակված պատժի մեկ քառորդը կամ ավելին, մինչև Համաներման ակտն ուժի մեջ մտնելու պահը:

Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը որևէ իրավական պահանջ չի բովանդակում առ այն, որ Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անձի նկատմամբ պետք է կայացված լինի դատավճիռ, և այն արդեն իսկ պետք է լինի կատարման փուլում:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ (...):»:

ՀՀ քրեական դատապարտության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով (...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձը (...) պատիժը կրելու է ուղարկվում ոչ ուշ, քան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու և այն ի կատար ածելու կարգադրությունը ստանալու օրվանից հետո՝ քսանօրյա ժամկետում (...):»:

Վերոշարադրյալ դրույթներից բխում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձը պետք է պատիժ կրի, երբ նրա մեղավորությունն ապացուցված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, և նշված դատական ակտն ուղարկվել է կատարման: Այլ խոսքով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բացակայության պայմաններում անձը չի կարող համարվել պատիժ կրող:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատազրկման (...) ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից բխում է, որ այն դեպքում, երբ անձը մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը գտնվել է կալանքի տակ, ապա վերջինիս ժամկետը հաշվակցվում է անձի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժին: Այսինքն՝ քրեաիրավական օրենսդրության իմաստով մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո որևէ տարբերակում չի դրվում նախնական կալանքի և ազատազրկման ձևով նշանակված պատժի ժամկետի միջև, ավելին, կալանքի ամբողջ ժամանակահատվածը վերաձվում է պատժի՝ արդեն իսկ կրած մասի:

16. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը համադրելով սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատա-

րանն արձանագրում է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը վերաբերում է դատապարտյալի իրավական կարգավիճակ ունեցող անձանց, այսինքն՝ այն անձանց, ում վերաբերյալ առկա են օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռներ, և ովքեր կրում են իրենց նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառումն իրագործելի է բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճիռի առկայության պայմաններում՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության համար որևէ նշանակություն չունի, թե ազատագրկման ձևով նշանակված պատժի մեկ քառորդը դատապարտյալն ինչ ձևով է կրել՝ նախնական կալանքի տեսքով, թե օրինական ուժ ստացած դատական ակտի կատարման փուլում: Հետևաբար, Համաներման ակտի վերոնշյալ դրույթի կիրառելիությունը չի կարող բացառվել կամ սահմանափակվել այն պատճառաբանությամբ, որ անձն իր նկատմամբ նշանակված պատժի մեկ քառորդը կրել է նախնական կալանքի ձևով:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 25-ի դատավճռով Հ.Հովհաննիսյանը դատապարտվել է ազատագրկման 3 տարի 6 ամիս ժամկետով, նրա նկատմամբ նշանակված պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի ապրիլի 20-ից (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Համաներման ակտն ուժի մեջ մտնելու օրվա՝ 2011 թվականի մայիսի 26-ի դրությամբ Հ.Հովհաննիսյանն արդեն իսկ փաստացի գտնվել է անազատության մեջ՝ իր նկատմամբ նշանակված պատժի մեկ քառորդից ավելի ժամկետով, իսկ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո այդ ժամկետը վերածվել է Հ.Հովհաննիսյանի կողմից արդեն իսկ կրած պատժի:

18. Սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը կիրառելի է, այդ առումով ստորադաս դատարանների հետևությունները (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը) օրինական են և հիմնավորված:

*II. Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառման իրավասությամբ օժտված մարմինը*

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավասո՞ւ էր արդյոք Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Հ.Հովհաննիսյանին Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատել պատժի կրումից:

20. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 13-րդ կետը նախատեսում է՝

«Սույն որոշման կատարումը վերապահել՝

1) դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել,

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է (...).

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում (...):»:

Մեջբերված սահմանադրական և քրեադատավարական օրենսդրության դրույթների համատեքստում մեկնաբանելով Համաներման ակտի 13-րդ կետը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ելնելով անձի իրավական կարգավիճակից (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ)՝ այն հստակ սահմանում է Համաներման ակտի կիրառման իրավասություն ունեցող մարմինները:

Համաներման ակտի 13-րդ կետի իմաստով՝ դատարանների իրավասությանն է վերապահված այն անձանց նկատմամբ Համաներման կիրառումը, ում վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում և դեռևս չեն քննվել կամ քննվել են, սակայն դատական ակտերն օրինական ուժի մեջ չեն մտել, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ում հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց նկատմամբ համաներման կիրառման իրավասությունը վերապահված է համապատասխան հիմնարկի պետերին:

21. Ինչպես նշվել է սույն որոշման 16-րդ կետում, Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալներին, հետևաբար նշված դրույթը կիրառելու իրավասությամբ օժտված են քրեակատարողական հիմնարկների պետերը և ոչ թե դատարանները: Այլ խոսքով՝ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը պետք է լուծվի համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ նույն ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված իրավագործության սահմաններում:

22. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական (...) պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Մեջբերված սահմանադրական դրույթից բխում է, որ յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ իր իրավունքները կամ օրինական շահերը խախտվել են, ունի դատարանի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Այս առումով,

անկասկած, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող ցանկացած դատապարտյալ իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իր նկատմամբ Համաներման ակտի այս կամ այն դրույթը կիրառելու վերաբերյալ հիմնարկի պետի որոշման իրավաչափությունը: Այդ դեպքում բողոքը քննող դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք վիճարկվող որոշումը կայացվել է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջների խախտում արձանագրելու դեպքում դատարանն իրավասու չէ կատարել համապատասխան պաշտոնատար անձի լիազորությանը վերապահված գործողություններ, քանի որ նման իրավիճակը կհանգեցնի ՀՀ Մահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված օրինականության սկզբունքի խախտման, ինչն անթույլատրելի է: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոքի քննության արդյունքում արձանագրելով օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների խախտում՝ դատարանը պետք է համապատասխան իրավազորությամբ օժտված պաշտոնատար անձի համար սահմանի նշված խախտումները վերացնելու պարտականություն, ինչը մի կողմից կապահովի դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ վերականգնումը, մյուս կողմից չի հանգեցնի օրինականության սկզբունքի խախտման:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, դատապարտյալ Հ.Հովհաննիսյանի բողոքի քննության արդյունքում պարզելով, որ ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ Հ.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառվել է Համաներման ակտի ոչ այն դրույթը, որը ենթակա էր կիրառման, որոշում է կայացրել քրեակատարողական հիմնարկի պետի հիշատակված որոշումը վերացնելու և դատապարտյալ Հ.Հովհաննիսյանին Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ պատժից ազատելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

24. Սույն որոշման 20-22-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 23-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ թույլ տրված խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու փոխարեն, վերացրել է նշված որոշումը և դատապարտյալ Հ.Հովհաննիսյանին Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ ազատել պատժի կրումից, այսինքն՝ կիրառել է Համաներման ակտի այն դրույթը, որի կիրառումը վերապահված է քրեակատարողական հիմնարկի պետին: Նշված հանգամանքն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել: Դատապարտյալ Հովհաննես Ներսեսի Հովհաննիսյանին պատժից ազատելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 17-ի որոշումը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

55.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0112/11/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>մախազահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝</i>	Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշման դեմ դիմող Գևորգ Մեսրոպի Շոլյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական մախապատմությունը**

1. 2012 թվականի հուլիսի 19-ին Գևորգ Շոլյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Նազարյանի 2012 թվականի մայիսի 22-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի բողոքը մերժվել է:



2. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դիմող Գ.Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանը, որը վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Գ.Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանը:

Վճարելի դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

4. Դատական նիստի արձանագրման համառոտագրումից և լազերային սկավանակի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի օգոստոսի 3-ին հրապարակել է որոշման եզրափակիչ մասը (տե՛ս նյութեր, թերթ 20-23):

5. Նյութերում առկա ուղեկցական գրության պատճենից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 3-ի որոշումը դիմող Գ.Շղվյանին հանձնվել է 2012 թվականի օգոստոսի 6-ին (տե՛ս նյութեր, թերթ 28):

6. Դիմող Գ.Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանն Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 3-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն՝ ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2012 թվականի օգոստոսի 16-ին (տե՛ս նյութեր, թերթ 39):

7. Վերաքննիչ դատարանն Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Բողոքարկվող որոշումը (...) գործն ըստ էության չլուծող դատական ակտ է, որի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 3-ի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի վերջին օրը 2012 թվականի օգոստոսի 14-ն էր, սակայն բողոքն ուղարկվել է 2012 թվականի օգոստոսի 16-ին, հետևաբար բողոքը ժամկետանց է (...» (տե՛ս նյութեր, թերթ 40-41):

### **3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է, որ սույն գործով վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ինչի արդյունքում խախտվել է դիմող Գ.Շղվյանի արդար դատաքննության իրավունքը:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ 2012 թվականի օգոստոսի 3-ին Առաջին ատյանի դատարանի կողմից հրապարակվել է դատական ակտի միայն եզրափակիչ մասը, իսկ որոշման ամբողջական տեքստը դիմողին է հանձնվել 2012 թվականի օգոստոսի 6-ին, հետևաբար Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի ընթացքը պետք է հաշվվեր այդ օրվանից սկսած:

Ըստ բողոքաբերի՝ այս պայմաններում հիմնագուրկ է նաև Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, թե դիմողը չի օգտվել բողոքարկման ժամկետը վերականգնելու ընթացակարգից:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշումը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի համատեքստում անձին դատական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. դիմող Գ.Շղյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակե՞լ է այդպիսի Գ.Շղյանի դատական պաշտպանության իրավունքը:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...)»:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշմամբ պարզաբանվել է, որ բողոքարկման բաց թողած ժամկետների վերա-

կանգնման վերաբերյալ դիմումները քննության առնելիս պետք է մանրամասն հետազոտվեն ժամկետների բաց թողնման պատճառները: Եվ բոլոր այդ դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (հիվանդություն, անհաղթահարելի ուժ, դատական ակտերի կայացման մասին անտեղյակ լինելը ոչ իր մեղքով և այլն), ժամկետի բացթողումը պետք է ճանաչել հարգելի:

Դատարանների նախագահների խորհուրդը պարզաբանել է նաև, որ որպես կանոն բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ հանձնելու պատճառով:

Մեջբերված դրույթները Վճարելի դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեադատավարական օրենքն առաջին ատյանի դատարանի՝ անձին ազատությունից զրկելու մասին (կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին) գործն ըստ էության չլուծող որոշումների բողոքարկման համար սահմանում է հնգօրյա, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս դատական ակտերի համար՝ տասնօրյա ժամկետ՝ բողոքարկման ժամկետի սկիզբ համարելով դատական ակտի հրապարակման պահը: Նման կարճ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելու օրենսդրի կամքով: Մյուս կողմից, սակայն, բողոքարկման ժամկետների սկիզբը դատական ակտի հրապարակման պահից համարելու պայմաններում նման կարճ ժամկետները կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օրյակտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

(...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական միատերի դահլիճում հրապարակելու պահից» (տե՛ս Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 23-24-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից 2012 թվականի օգոստոսի 3-ին հրապարակվել է որոշման միայն եզրափակիչ մասը (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը), իսկ ամբողջական որոշումը դիմող Գ.Շողյանին է հանձնվել 2012 թվականի օգոստոսի 6-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Դիմող Գ.Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանը հիշատակված որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել 2012 թվականի օգոստոսի 16-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման հրապարակման պահից հաշվելով դատական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքը, որպես վերաքննիչ բողոք բերելու վերջին օր է դիտել 2012 թվականի օգոստոսի 14-ը և Ա.Գրիգորյանի բողոքը թողել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 12-րդ կետում և համապատասխանաբար նաև *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը Գ.Շղվյանի կողմից այն փաստացի ստանալու պահից՝ 2012 թվականի օգոստոսի 6-ից, հաշվելու պարագայում ստացվում է, որ Գ.Շղվյանի ներկայացուցիչ 2012 թվականի օգոստոսի 16-ի վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված տասնօրյա ժամկետի պահպանմամբ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Գ.Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ թողնելով առանց քննության՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Գ.Շղվյանի դատական պաշտպանության իրավունքը՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածների խախտում: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր՝ քննության ուղարկելու համար:

Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Գևորգ Մեսրոպի Շղվյանի ներկայացուցիչ Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*

56.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԱԶԴ/0138/06/12**

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

որոնքաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Դավիթ Գրիգորի Ալիխանյանի պաշտպան Ս.Սաֆարյանի վճռարեկ բողոքը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2012 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 90153012 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2012 թվականի օգոստոսի 14-ին Դավիթ Ալիխանյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2012 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ Դ.Ալիխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ Դ.Ալիխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2. 2012 թվականի սեպտեմբերի 5-ին մեղադրյալ Գ.Ալիխանյանի պաշտպան Ս.Սաֆարյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Գ.Ալիխանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինել գրավով՝ գրավի չափ սահմանելով 600.000 ՀՀ դրամը:

Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

3. Պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 19-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշման դեմ վճարել բողոք է բերել մեղադրյալ Գ.Ալիխանյանի պաշտպան Ս.Սաֆարյանը:

Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ վճարել բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

5. Գ.Ալիխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ ՊՆ թիվ 29500 գործնասի պարեկային ծառայության պարեկ, կոչումով ենթասպա, 2012թ. օգոստոսի 3-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Արմավիրի մարզի Ռ-Ռ բաժնի կողմից իրականացվող միջոցառման /Շրջայց/ ժամանակ՝ իր իշխանական դիրքը և գերակայությունը ցուցադրելու անձնական շահագրգռվածությունից դրդված, անցնելով պաշտոնական լիազորությունների սահմանը, ՀՀ ՊՆ թիվ 13516 գործնասի բուժկետի մոտակայքում ծեծի է ենթարկել նույն գործնասի ժամկետային զինծառայող, շարքային Սամվել Պարույրի Հայրապետյանին, որով ֆիզիկական ցավ է պատճառել նրան, խաթարվել է զինվորական ծառայության բնականոն ընթացքը, զինվորական ծառայության կրման կարգը ու գործնասի զինծառայողների բարոյաև հոգեբանական վիճակը, ռոտնահարվել է ռազմական ոստիկանի բարի համբավը՝ պատճառելով էական վնաս» (տե՛ս նյութեր, թերթ 53-54):

6. Մեղադրյալ Գ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին իր որոշումն Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Մինչդատական վարույթի նյութերով մեղադրյալի առնչությունը դեպքին հիմնավորված է, այսինքն՝ առկա է հիմնավոր կասկած, որ Դավիթ Ալիխանյանն առնչվում է մեղսագրվող արարքին (...):

Միջնորդությունը մերժելիս դատարանը հաշվի է առնում նաև այն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել» (տե՛ս նյութեր, թերթ 67-68):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «Առաջին ատյանի դատարանը, մերժելով պաշտպան Ս.Սաֆարյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Գ.Ալիխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ, ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ քրեա-

կան գործով վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը, քանի որ սահմանված մյուս խափանման միջոցներով տվյալ դեպքում հնարավոր չէ սպահովել օրենսդրության նշված պահանջը» (տե՛ս նյութեր, թերթ 95-103):

### **3. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Գ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի, թույլ են տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի պահանջների խախտում:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը շեշտել է, որ Առաջին ատյանի դատարանը որպես գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու միակ փաստարկ վկայակոչել է այն, որ մեղադրյալը, ազատության մեջ գտնվելով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, մինչդեռ նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը հիմք կտար նման եզրահանգում անելու: Ավելին, մեղսագրվող հանցանքի կատարումից հետո Գ.Ալիխանյանն ազատվել է աշխատանքից և գրկված է գորսմասի տարածք մուտք գործելու, տուժողի կամ վկաների վրա ներագրելու եղանակով գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունից:

9. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մեղադրյալ Գ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչելով թույլատրելի:

### **4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

10. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ իրավաչափ են արդյոք մեղադրյալ Գ.Ալիխանյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձեռքակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն օրենքով սահմանված կարգով և

(...) դեպքերում (...): Մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավը (...) հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից (...):»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա. Ճուղորյանի* և *Ա. Ավետիսյանի* գործերով կայացված որոշումներում:

12. *Ա. Ճուղորյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

[ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի] բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձու-



յուններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս Արամ Սեյրանի ճուղղությանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

Ա.Ավետիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը» (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 36-րդ կետը):

13. Ջարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ կալանքը գրավով փոխարինելը մերժելու մասին դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով և ոչ թե բավարարվել ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Դ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասին իր որոշումը պատճառաբանել է երկու հանգամանքով. առկա է հիմնավոր կասկած առ այն, որ Դ.Ալիխանյանը կատարել է իրեն վերագրվող հանցանքը և մնալով ազատության մեջ՝ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ պատճառաբանելով, որ Առաջին ատյանի դատարանն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված՝ սույն գործով ստորադաս

դատարանների եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը որևէ փաստական տվյալով չի հիմնավորել իր եզրահանգումն այն մասին, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնավորող փաստական տվյալներ գործի նյութերում չկան, դրա փոխարեն առկա են տվյալներ այն մասին, որ Գ.Ալիխանյանն իրեն վերագրվող արարքը կատարելուց հետո ազատվել է աշխատանքից ռազմական ոստիկանությունում, ինչն էականորեն նվազեցնում է նրա կողմից գործին մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու և ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու հավանականությունը:

16. Անդրադառնալով մեղադրյալ Գ.Ալիխանյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգմանն առ այն, որ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցանքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գևորգյանի գործով որոշման համաձայն՝ «(...) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է (...)» (տե՛ս Վահրամ Ռուդիկի Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշման 19-րդ կետը): Վ.Գևորգյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը համադրելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված՝ Ա.Ավետիսյանի գործով որոշման մեջ առկա այն դիրքորոշման հետ, որ «(...) գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, (...)» Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել կալանավորման պայմանի, այն է՝ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ եթե առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ անձը հանցանք է կատարել, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար՝ չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման թույլատրելիության հարցը: Հետևաբար, հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածը չի կարող հիմք հանդիսանալ անձին կալանքից գրավով ազատ արձակելն անթույլատրելի ճանաչելու համար:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Գ.Ալիխանյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն: Առաջին ատյանի դատարանը չպատճառաբանված որոշում է կայացրել մեղադրյալ Գ.Ալիխանյանին կալանքից գրավով ազատելու անթույլատրելիության վերաբերյալ, իսկ Վերաքննիչ դատարանը, իր հերթին, անհիմն եզրահանգման է եկել Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ:

Արդյունքում ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների էական խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով՝ հիմք է Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Դավիթ Գրիգորի Ալիխանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝* *ստորագրություն*  
*Դատավորներ՝* *ստորագրություններ*

57.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵԿԴ/0030/01/12**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ՝</i>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ՝</i>	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ պաշտպան՝</i>	Ա.ԱՎԱԳՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սուրեն Ռ-ոմիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Հակոբյանի պաշտպան Ա.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Քրեական գործը հարուցվել է 2011 թվականի հոկտեմբերի 26-ին:

2012 թվականի հունվարի 18-ին Սուրեն Ռ-ոմիկի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

2012 թվականի մարտի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 28-ի դատավճռով Սուրեն Ռ-ոմիկի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է՝

առաջին դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ,

երկրորդ դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով Ս.Հակոբյանի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ս.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամի չափով գույքի բռնագրավմամբ և 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանք:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ամբաստանյալ Ս.Հակոբյանի պաշտպան Ա.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 13-ին որոշում է կայացրել պաշտպանի բողոքը մերժելու և բողոքարկված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Հակոբյանի պաշտպան Ա.Ավագյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

5. Ս.Հակոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման համաձայն՝ «Սուրեն Հակոբյանը 2010թ. դեկտեմբեր ամսին, տեղեկանալով, որ Երևան քաղաքի բնակիչ Արմեն Սայադյանը մտադիր է վաճառել աճուրդային կարգով գնված, Երևան քաղաքի Սարյան 27-33 հասցեի բնակարանը, նպատակադրվել է այդ պատրվակով խարդախությամբ գումար վաստակել:

Ս.Հակոբյանը, 2010թ. դեկտեմբեր ամսին, ծանոթանալով Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ֆարաջուլլահ Ասադուլլահի Նաջաֆիի հետ և տեղեկանալով, որ վերջինս ցանկություն ունի ՀՀ-ում բնակարան գնել, նպատակադրվել է այդ առիթն օգտագործելով խարբության վերջինիս գումարները հափշտակել: Ս.Հակոբյանը հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Ֆ.Նաջաֆի[ի]ն հայտնել է, թե իբր 50.000 ԱՄՆ դոլարով կարող է նրան վաճառել Երևան քաղաքի Սարյան փողոցի 27 շենքի թիվ 33 բնակարանը, որի ձևակերպումները հնարավոր կլինի կազմակերպել 2 ամսվա ընթացքում, ինչին վերջինը համաձայնել է:

Դրանից հետո Ս.Հակոբյանը, չարաշահելով Ֆ.Նաջաֆիի վստահությունը, 2010թ. դեկտեմբերին 11-ին և 2011թ. մարտին Երևան քաղաքում գործող «Տաշիր» առևտրի կենտրոնի դիմաց Ֆ.Նաջաֆի[ի]ց մաս-մաս ստացել և խարդախությամբ հափշտակել է վերջինիս պատկանող առանձնապես խոշոր չափի՝ 18.679.500 ՀՀ դրամին համարժեք 50.000 ԱՄՆ դոլար գումարը:

Այսինքն՝ Սուրեն Ռոմիկի Հակոբյանը կատարել է ՀՀ քր.օր.-ի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն:

Այնուհետև 2011թ. մարտի վերջերին, երբ Ֆ.Նաջաթին պահանջել է ավարտել բնակարանի առուվաճառքի գործարքը, Ս.Հակոբյանը, ինքնությունը չպարզված անձնավորության հետ նախնական համաձայնության գալով, պատրաստել է իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող՝ Երևան քաղաքի Սարյան փողոցի 27 շենքի թիվ 33 բնակարանի նկատմամբ իր սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված վկայական, որը 2011թ. ապրիլ ամսին հանձնելով Ֆ.Նաջաթի[ի]ն՝ իրացրել է:

Այսինքն՝ Սուրեն Ռոմիկի Հակոբյանը կատարել է ՀՀ քր.օր.-ի 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն:

2011թ. հուլիս ամսին Ս.Հակոբյանը, ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ինտերնետային կայք-էջից տեղեկանալով, որ Երևան քաղաքի Հ.Էմին փողոցի 42 շենքի թիվ 9 բնակարանը աճուրդային կարգով վաճառվում է, նպատակադրվել է հիշյալ բնակարանը քաղաքացիներին վաճառելու պատրվակով գումարներ հափշտակել: Ս.Հակոբյանը հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, առանց իր կողմից պլանավորած խաբեության մասին տեղյակ պահելու, հիշյալ բնակարանը 30.000 ԱՄՆ դոլարով առաջարկել է իր ընկեր Կոլյա Շավարշի Սիմոնյանի ծանոթին՝ Գնել Թաթուլի Արզումանյանին: Վերջինս համաձայնել է, ապա Ս.Հակոբյանը, չարաշահելով Գ.Արզումանյանի վստահությունը, 2011թ. հուլիս ամսին, Երևան քաղաքի Տերյան փողոցում վերջինիցս ստացել ու խարդախությամբ հափշտակել է Գ.Արզումանյանին պատկանող առանձնապես խոշոր չափի՝ 11.004.300 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար գումարը:

Այսինքն՝ Սուրեն Ռոմիկի Հակոբյանը կատարել է ՀՀ քր.օր.-ի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն:

Այսպիսով, Սուրեն Ռոմիկի Հակոբյանը կատարել է ՀՀ քր.օր.-ի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություններ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 232-235):

6. Առաջին ատյանի դատարանում մեղադրողը միջնորդել է Ս.Հակոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 120-121):

7. Անդրադառնալով Համաներման ակտը Ս.Հակոբյանի նկատմամբ կիրառելու վերաբերյալ պաշտպանի խնդրանքին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) համաձայն նույն որոշման 15-րդ մասի, ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն են կատարել մինչև 01.05.2011թ.-ը, այնինչ ամբաստանյալը ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկրորդ դրվագ) նախատեսված հանցանքը կատարել է 2011թ. հուլիս ամսին: Համաձայն նույն որոշման 9-րդ մասի, համաներում չի կիրառվում մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե հանցագործություններից թեկուզ մեկի համար նույն որոշմամբ համաներում չի կիրառվում, հետևաբար ամբաստանյալ Սուրեն Հակոբյանի նկատմամբ ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշումը կիրառելի չէ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 46-50):

**3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ՝ Ս.Հակոբյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսդրության նորմերի էական խախտումներով:

9. Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով նախաքննության ընթացքում Ս.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու առանձին դրվագով խարդախություն կատարելու համար մեղադրանք առաջադրված չի եղել, սակայն Առաջին ատյանի դատարանը Ս.Հակոբյանի նկատմամբ պատիժ է նշանակել առանձին դրվագներով խարդախություն կատարելու համար:

10. Բողոք բերած անձը նշել է, որ իր պաշտպանյալի նկատմամբ պետք է կիրառվեին «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետև նաև՝ Համաներման ակտ) պահանջները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով Ս.Հակոբյանը ենթակա է պատժից ազատման, քանի որ նրա խնամքին է գտնվում 2011 թվականի մայիսի 7-ին ծնված երեխան, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատիժը ենթակա է կրճատման մեկ քառորդով:

Բողոքաբերը նշել է նաև, որ Ս.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ չպետք է կիրառվեր, ինչպես նաև նրա նկատմամբ չպետք է նշանակվեր լրացուցիչ պատիժ՝ գույքի բռնագրավում, քանի որ նա սեփականություն չունի, հետևաբար այդ պատժի կատարումն անհնար է:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է Ս.Հակոբյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 28-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը պատժի մասով բեկանել և փոփոխել:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով պատիժ նշանակելիս՝ Ս.Հակոբյանի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, իսկ լրացուցիչ պատիժը՝ 6.000.000 դրամի չափով անձնական գույքի բռնագրավումը՝ վերացնել:

Կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշումը, և Ս.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նշանակված պատժաչափը կրճատել մեկ քառորդով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ քրեական գործի վարույթը կարճել:

**4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

12. Սույն գործով բողոքաբերն ըստ էության երկու հարց է բարձրացրել, որոնցից առաջինը վերաբերում է Ս.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդ-

վածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու առանձին դրվագով պատիժ նշանակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորվածությանն ու օրինականությանը, երկրորդը՝ Ս.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատժին, մասնավորապես՝ Ս.Հակոբյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառմանը, նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն և նրա նկատմամբ լրացուցիչ պատիժ գույքի բռնագրավում չնշանակելուն:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հարցերից երկրորդին հնարավոր է անդրադառնալ միայն բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցին պատասխանելուց հետո: Ուստի, ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ Վճռարեկ դատարանը քննության է առնում սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված առաջին հարցը:

*1. Հանցագործությունների համակցությունը.*

13. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 28-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը:

14. Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն էր նախատեսում առանձնապես խոշոր չափերով, կազմակերպված խմբի կամ ՀՀ քրեական օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից կատարված խարդախության համար:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Հանցագործությունների համակցություն է համարվում սույն օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ մույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել»:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների կրկնակիություն է համարվում սույն օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը»:

Սեջրերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելն անձի կողմից առավել ծանրացնող հանգամանքներում կատարված երկու և ավելի խարդախությունը չէր կարող դիտվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրական համակցություն և ենթակա էր որակման ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի որևէ կետով:



15. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով խմբագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Հանցագործությունների համակցություն է համարվում սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել»:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով հանցագործությունների կրկնակիությունը սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել:

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգիրքը որպես հանցագործությունների բազմակիության տեսակ նախատեսում էր կրկնակիությունը և այն սահմանում որպես ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանքի կատարում:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո կրկնակիությունը՝ որպես հանցագործությունների բազմակիության տեսակ, վերացվեց, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով և հոդվածի միևնույն մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը դիտվեց որպես հանցագործությունների իրական համակցություն:

16. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում առանձնապես խոշոր չափերով և կազմակերպված խմբի կողմից կատարված խարդախության համար:

Մեջբերված քրեաիրավական դրույթը վերլուծելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված վերլուծության համատեքստում՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո անձի կողմից առավել ծանրացնող հանգամանքներում կատարված երկու և ավելի խարդախությունը պետք է դիտվի որպես ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրական համակցություն և առանձին դրվագներով որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի որևէ կետով:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքն այն օրենքն է, որը քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված՝ ոչ նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար:

18. Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված էր ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել քսանհինգ տարին (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթները գնահատելով սույն որոշման 14-րդ և 16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը կատարված առանձնապես խոշոր չափերով երկու խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով անձի նկատմամբ կարող էր նշանակվել առավելագույնը 8 տարի ժամկետով ազատազրկում: Իսկ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված առանձնապես խոշոր չափերով երկու խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ անձի նկատմամբ կարող է նշանակվել առավելագույնը 16 տարի ժամկետով ազատազրկում:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Հակոբյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման համաձայն՝ իրեն մեղսագրված խարդախություններից առաջինը Ս.Հակոբյանը կատարել է 2011 թվականի մարտ ամսին, իսկ երկրորդը՝ 2011 թվականի հուլիս ամսին:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ իրեն մեղսագրված խարդախություններից առաջինը Ս.Հակոբյանը կատարել է մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը, իսկ երկրորդը՝ դրանից հետո:

Ս.Հակոբյանին մեղսագրված երկու խարդախությունները նախաքննության ընթացքում որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և Ս.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու համար: Նույն մեղադրանքով գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանում մեղադրողը միջնորդել է մեղսագրված երկու դրվագով խարդախության համար Ս.Հակոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը բավարարել է մեղադրողի միջնորդությունը և Ս.Հակոբյանին մեղավոր է ճանաչել երկու դրվագով խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին

կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքով խմբագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հանդիսանում է Ս.Հակոբյանի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք, քանի որ դրանում սահմանված են նրա նկատմամբ պատժի նշանակման ոչ նպաստավոր պայմաններ: Այլ խոսքով, մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ և 21-րդ հոդվածների իմաստով՝ Ս.Հակոբյանի նկատմամբ կարող էր պատիժ նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առավելագույնը 8 տարի ժամկետով: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի իմաստով՝ Ս.Հակոբյանի նկատմամբ պատիժ կարող է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու առանձին դրվագով՝ առավելագույնը 16 տարի ժամկետով:

21. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը բավարարել է մեղադրողի միջնորդությունը, Ս.Հակոբյանին մեղավոր է ճանաչել երկու դրվագով խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նշված հոդվածներով պատիժ է նշանակել՝ դրանով իսկ հետադարձ ուժ տալով Ս.Հակոբյանի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին: Հետևաբար, Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որն արտահայտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ, և այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

22. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 20-21-րդ կետերում ամրագրված մոտեցումները կիրառելի չեն այն դեպքում, երբ անձին մեղագրված արարքներից մեկը կատարվել է նախքան «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելը, իսկ մնացած՝ մեկից ավելի դրվագներով արտահայտված արարքները կատարվել են վկայակոչված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ պայմանով, որ վերոնշյալ արարքներն ընդգրկված չեն եղել մեկ միասնական դիտավորության մեջ:

## *II. Դատարանում մեղադրանքը փոխելը.*

23. Սույն գործով Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե Առաջին ատյանի դատարանն իրավասո՞ւ էր արդյոք մեղադրողի միջնորդության հիման վրա փոփոխել Ս.Հակոբյանի մեղադրանքը և նրան մեղավոր ճանաչել երկու դրվագով խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

Մեջբերված դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ս. Պապյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է, մի կողմից, մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից, այն հանգամանքով, որ դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: (...)» (տես Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 23-րդ կետը):

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Մույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար: (...):

3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղադրվում է:

(...)»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ս. Նալբանդյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը,

օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմների գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ավելացվում կամ մեղադրանքի ծավալից հանվում են առանձին դրվագներ: Նման դեպքերում, եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով, պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին:

(...)

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված իրավական ռեժիմներով դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից պետք է կայացվի ինչպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու մասին որոշում, այնպես էլ կազմվի նոր մեղադրական եզրակացություն» (տե՛ս Մուրեն Կարոյի Նալբանդյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԳ-2/0144/01/09 որոշման 21-րդ և 25-րդ կետերը):

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Հակոբյանին մեղսագրված երկու խարդախությունները նախաքննության ընթացքում որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և Ս.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու համար: Նույն մեղադրանքով գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանում մեղադրողը միջնորդել է մեղսագրված երկու դրվագով խարդախության համար Ս.Հակոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանը բավարարել է մեղադրողի միջնորդությունը և Ս.Հակոբյանին մեղավոր է ճանաչել երկու դրվագով խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Վերաքննիչ դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

27. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները վերլուծելով սույն որոշման 24-25-րդ կետերում շարադրված և, համապատասխանաբար, *Մ. Պասյանի* և *Ս. Նալբանդյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատարանը՝ որպես արդարադատություն և ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմին, սահմանափակված է ամբաստանյալի նկատմամբ նախաքննության ընթաց-

քում առաջադրված մեղադրանքի ծավալով: Դատարանն իրավասու չէ ո՛չ սեփական նախաձեռնությամբ, ո՛չ դատախազի միջնորդության կամ որևէ այլ հիմքով խստացման առումով փոփոխել անձին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նման դեպքերում գործում է *Ս.Նալբանդյանի* գործով որոշման մեջ ձևավորված կանոնը, որի համաձայն՝ եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում նոր դրվագի վերաբերյալ կատարել քննություն, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում նոր դրվագի վերաբերյալ քննություն կատարել, ապա մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասով, պետք է որոշում կայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանն իրավասու չէր մեղադրողի միջնորդության հիման վրա փոփոխել Ս.Հակոբյանի մեղադրանքը և նրան մեղավոր ճանաչել երկու դրվագով խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քանի որ նման դեպքում դատարանը, փաստորեն, ինքնուրույն ձևակերպել է նոր մեղադրանք՝ դրանով իսկ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի խախտում: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողի միջնորդության հիման վրա Ս.Հակոբյանի մեղադրանքը փոփոխելով Առաջին աստիճանի դատարանը ոչ միայն նոր մեղադրանք է առաջադրել, այլև հետադարձության կարգով Ս.Հակոբյանի նկատմամբ կիրառել է նրա վիճակը վատթարացնող օրենքը (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը):

28. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 21-րդ և 27-րդ կետերում նշված՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են, ուստի, Ս.Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումն անհրաժեշտ է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

29. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից սույն գործով բարձրացված երկրորդ հարցին, այն է՝ Ս.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատժին, մասնավորապես՝ Ս.Հակոբյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառմանը, նրա նկատմամբ նշանակված պատժիժը պայմանականորեն չկիրառելուն և նրա նկատմամբ լրացուցիչ պատժ՝ գույքի բռնագրավում չնշանակելուն (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրան հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 21-րդ և 27-րդ կետերում արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սուրեն Ռոմիկի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝ ստորագրություն*  
*Դատավորներ՝ ստորագրություններ*



Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը  
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1  
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26  
Հեռ./Փաքս՝ (+374 10) 58 76 69  
[antares@antares.am](mailto:antares@antares.am)  
[www.antares.am](http://www.antares.am)